Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1674

2(09)
У-61

03 AUG 2009

2(09)
Մ-61 ակ.

ԿՐՕՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՄԵԾ ՍԻՍՏԻՄՆԵՐԻ ԲՆՈՅԹԸ.

Ծօչաւոդիայի Սէնատ—Անդրիւ Համիլտաարանի պրոֆէսսօր

Ը. ՄԷՆՋԻՍ.

Անգլիերէնից թարգմ. Ռ. Ա. Ա.
Մ. ՀԷՊՊՆԱԿԱՐԱՏ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Գրադարան
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ԱՆՎԱՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Յոյն. Ափիճեանցի

АЛЕКСАНДРОПОЛЬ
Типографія О. Аниняна

1904

(7)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Գրադարան
ՀԱՅԿ-ՍՍՀ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ԱՆՎԱՆ

28 JUN 2013

1674

Дозволено цензурою С.-Петербургъ, 10-го Апрѣля 1902 г.

ՀՀ ԱԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀԱԱՆ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
Ե. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ZUUՈ-Ասм ССР
18792-57

ՄԱՅՐ-ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

17-ՐԴ ԴԱՐՈՒՑԵՐՈՒ ՅԻՇԵՑՄԱՆԻՆ

Ֆշ-31.9

Յ Ա Ն Կ

Ա. ՄԱՍ.

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՋԽԱՐՀԻ ԿՐՕՆՔ.

		Էջեր.
I.	Ներածութիւն	1
II.	Կրօնի սկիզբը	18
III.	Երկրպագութեան առաջին առարկաները	29
IV.	Կրօնի սկզբնական զարգացումը.—Հաւատալիքները	56
V.	Կրօնի սկզբնական զարգացումը.—Ծէսերը	74
VI.	Ազգայնական կրօնը	90

Բ. ՄԱՍ.

ԱՐՈՒՆՉԻՆ ԱՋԳԱՑՆԱԿԱՆ ԿՐՕՆՆԵՐԸ.

VII.	Բաբելոն և Ասորիք	105
VIII.	Չինաստան	120
IX.	Հին Եգիպտոսի կրօնը	144

Գ. ՄԱՍ.

Ս Է Մ Ի Տ Ա Կ Ա Ն Խ Ո Մ Բ Ը.

X.	Սէմիտների կրօնը	185
XI.	Քանաանացիք և Փիւնիկեցիք	196
XII.	Իսրայէլը	206
XIII.	Իսլամը	249

Դ. ՄԱՍ.

Ա Ր Ի Ա Կ Ա Ն Խ Ո Հ Ո Մ Բ Ը.

XIV.	Արիականների կրօնը	282
XV.	Տեսութիւնները	296
XVI.	Յունաստան	320

XVII. Հռոմի կրօնը 361
XVIII. Հնդկաստանի կրօնը. Ա. Վէդանների կրօնը . . 385
XIX. — — Բ. Բրահմանիսմ . . . 404
XX. — — Գ. Բուդդհիսմ 424
XXI. Պարսկաստանը 459

Ե. ՄԱՍ.

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ.

XXII. Քրիստոնէութիւնը 494
XXIII. Վերջաբան 513

ԱՌԱՋԻՆ

I

Մեր նոր լեզուի գրականութեան, իսկապէս մեր ամսագիրների ու օրաթերթերի մէջ, կան, այո, պատմական ու լեզուաբանական հարցեր շօշափող գիտական յօդուածներ, նոյն իսկ առանձին հրատարակութիւններ։ Բայց աշքի ընկնող, զուտ գիտական, զարգացնող գործ չկայ, կամ գրեթէ չկայ։ Այս պատճառով մենք շատ քիչ ենք ծանօթ գիտական գրուածքներին, ճշմարիտ գիտնականի չափած-ձևած մտքերին, նրա արտայայտութեան եղանակին, նրա լեզուին, կարևոր բառը զգուշութեամբ իր տեղը գործածելուն և, որ գլխաւորն է, նրա անկողմնապահ վերաբերմանը։

Գիտութիւնը, գիտնականը ազգ կամ հայրենիք չէ ճանաչում. նա միմիայն սուրբ իրականութիւնն ունի նկատի։ Նա ընդունակ չէ փոփոխականութիւնների. նա իրերի ու փաստերի հետ գործ ունի։ Նրա իւրաքանչիւր բանաձևը, գիտական ճշմարտութիւնների բովից անցնելով, ոսկու պէս է դառնում ու այնպէս ներկայանում։ Իր արժանիքների նկատմամբ, ինչպէս հարկն է, գնահատելու համար, նրա գտուածքին ենթարկվելու պէտքն է զգում նոյն իսկ մեր ազգ հոգևոր աշխարհը իր ամենաբոնի արտայայտութեամբ։ Հետևապէս, մեզ համար շատ դիպուկ պէտք է լինի իմանալ, թէ սրուշ հարցի վերաբերմամբ,—այս պէտքում կրօնի պատմութեան—ինչ հայեացք ունի գիտութիւնը։

Հայերս այնքան հարուստ ենք կրօնական գրուածքներով,

որ, եթէ որ և է պարծենալիք էլ չունենայինք, միմիայն այդ ճիւղի գրականութիւնը բաւական կլինէր՝ մեզ լուսաւոր աշխարհի առաջ պարզերես անելու։ Այո, բրիստոնէական հաւատի, մանաւանդ մեր դաւանութեան էութիւնը նկարագրող ու նրա ոգին ցոլացնող կրօնական գրքեր շատ ունենք։ Բայց չունենք համաշխարհային կրօնների վարդապետութիւնը, որ կարողանար քրիստոնէականի տեղը որոշել նրանց միջև, գնահատելով նրանցից իւրաքանչիւրը գիտութեան՝ դրա համար ունեցած հանուր չափով։ Այս տեսակէտից անհ մեզ շատ կարևոր է այն հանգամանքը, որ *Մէնզիս* իր հեղինակաւոր ու հմուտ գրչով առաջներս է դնում համաշխարհային *Կրօնի պատմութիւնը*։

Թողնելով, որ կարդացողն ինքը գնահատի իմ ընտրութիւնը, ծանօթանալով գրքի բովանդակութեանը, ես համաձայնի կզարզեմ այստեղ իմ հայեացքը *մարդմանութեան լեզուի* մասին, ինչ չափով որ նա չօշափվում է այս գործում։

II

«Հարկաւոր է, որ լեզուի վրայ ուսումնասիրողը իրենց մտածութեան արդիւնքը եւ իրենց ճիգասղութիւնը յայտնեն միմեանց, որ այս հանդարտական փոխադարձ գործակցութեամբ լեզուի գործը առաջ երթայ»։

Մ. Նալբանդեանց.

1) *Մեր նոր լեզուի ինաշրջաններով ու նրա զարգացման պրօցէսով շահագրգռուածների հանդրապէս, և նրանով գրողների միջև մասնապէս՝ երկու գլխաւոր կարծիք է իշխում։ Մի կարգ մարդիկ այն համոզումով են առաջնորդվում, թէ մեր նոր լեզուն սերտ կապ պէտք է ունենայ հնի հետ. թէ նա չի կարող մի սկզբուն, քաղցրահնչիւն, գրաւիչ ու ճոխ լեզու լինել. եթէ տեղ-տեղ հեղեղված չլինի հնի չոլքերով, եթէ, իբրև նրա* quasi *հարազատ զաւակը, չածի նրա հունանու տակ, եթէ,*

վրջապէս, երբեմն-երբեմն նրա ինքնատիպ ձևերով չշպարվի ու իր էութեամբ չուտ-չուտ նրան չյիշեցնի։ Դրա հակառակ, միւսները այն կարծիքի են, թէ նոր լեզուն պէտք է զարգանայ՝ հնից բոլորովին անկախ, համաձայնելով մի ի նոյն ժամանակ, որ, հարկաւոր դէպքում, փոխառնակ օտար լեզուների դիմելու՝ կարող է և հնից փոխառութիւններ անել։

Այս հիման վրայ, վերջին հայեացքը գաւառցիների հետ այս տողերի գրողն էլ բաժանվում է առաջիններից, ընդունելով, որ, ինչքան էլ դուռ գրաբար ոճերն ու ձևերը բուռ ինքեան գեղեցիկ, վսեմ) լինեն, այսու ամենայնիւ, նրանք նոր ու կենդանի լեզուին խորթ են։ Եւ եթէ, հետևապէս, կարզացողը այս մարդմանութեան մէջ այդպիսի գրով աշխատասրատրած գրաբար ոճերի ու ձևերի հանդիպելու երբէք առիթը չունենայ, մեզ համոզված լինի, որ այդ ոչ թէ մարդմանողի՝ գրաբար ոճերի գեղեցկութեանն ու վսեմութեանը անտեղեակ լինելուց է առաջ գալիս,—ինչպէս կարող են ենթադրել առաջին հայեացքը գաւառցիները—, այլ այն հանգամանքից, որ նա նոր լեզուն պակաս հարուստ ու կենսունակ չէ համարում հնից, նրանում էլ ինքնուրոյն կեանքով ապրելու գրաւականը տեսնելով։*

2) Իսկ հին լեզուից անկախ զարգանալու համար՝ նոր լեզուն պէտք ունի թոյլ տալու իր վրայից հնութեան փոշին։ Այդ պատճառով այս տողերի գրողը այս մարդմանութեան մէջ ձգտել է՝ մաքրել լեզուն հնի տարրերից ու ձևերից, աշխատելով հանուր գործածական բառերի ու ձևերի կողմը բռնել, ինչքան այդ հնարաւոր է, լեզուի ոգուն ու պահանջներին գաւառնանած չլինելու համար։

---

*) «Ըմբռ, պարոննե՛ր,—ասում է Մ. Նալբանդեանց («Հանդէս գրականական և պատմական», 1890, եր. 346)—մաքուր սրտով և սուրբ խղճմտանքով ասում եմ ձեզ,... ձեզ վեր առէք այդ վսեմ ոճերից, և այդ բարձրաստիճան պատուանդաններից իջէք հասարակ ժողովրդի մէջ։ Հին լեզուի կարկատաններք այնքան յարմարութիւն ունեն նոր լեզուին, որքան թաշկ Ըմհանասին, որ մեքսաոս հինգհարիւր տուեց Ըմհանասի արձանի ձեռքը, խլելով նորա նիզակը»։

3) Միւս կողմից՝ ինչպէս բնութեան, այնպէս էլ լեզուի պեղեկութիւնը, ոչ թէ նրա միատեսակութեան, այլ պէսպիսութեան մէջ է։ Միատեսակութիւնը թէ բնութեան կազմային պանգուածի ու երևոյթների, և թէ լեզուի օրէնքների ու բառային ձևերի մէջ, առհասարակ ձանձրալի է։ Այս պատճառով շատ վատ են անում նրանք, ովքեր, բանանը դնելով լեզուի բառերի ու ձևերի վրայ, ուսկզբից ծայրերը սուր դանակով կտրում, դէն են դցում, կամ բոլոր բառերին էլ մի և նոյն վերջաւորութիւնը տալիս։ Այդպէս արեց Մինաս Չէրազ իր «Գրական փորձերի» մէջ, որոնք, բանաւոր հիմք չունենալով, փորձեր էլ մնացին։ Այս իմաստասիրութեան մէջ, այդպիսի դէպքերում, ձանձրալի միատեսակութիւնից խոյս տալու համար՝ *թէյն* վերջացող գոյականների յօդնակի սեռականում ու անորոշ սլաականում կարելի է հանդիպել *թեանց*-ի, երբ արդէն մի կամ մի քանի տեղ գրված են *թիւնները*։ Այդպիսի դէպքերում ու այդ նպատակով այս իմաստասիրութեան մէջ գոթ են ածված նաև գրաբարի բառային վերջաւորութիւնները, ֆլէկսիօններըե։

Մի և նոյն պատճառով թէ գուտ գրաբար և թէ աշխարհաբարացած գրաբար բառերից ոմն հատասարապէս ու փոփոխակի օգտվում եմ՝ մասամբ կրկնութիւններից խոյս տալու, մասամբ էլ ներդաշնակութիւն պահպանելու համար։

2 Փետրվարի 1902.
Վոլոգդա.

Լ. ր. Ն.

Ա. Մ Ա Ս.

ՆԱԽՆԱԿԱՆ ԱԶԹՍԲՀԻ ԿՐՕՆԸ

Ի ՆԱԽԱԲԱՆ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Այս փոքրիկ հատորը նուիրված է մի՝ համեմատաբար նոր պիտութեան։ Միմիայն վերջին քառորդամեակումն է, որ արևմտեան Եւրոպան սկսեց լուրջ կերպով ուշք դարձնել Ասիոյ մեծ կրօնների վրայ, և այս հին կրօնական սիստեմների ուսումնասիրութիւնը բերեց մարդուն այն պիտակցութեան, թէ աշխարհումս կայ ոչ թէ մի, այլ մի քանի, մինչ անգամ շատ կրօն, և որ այս կրօնների միջև կան շատ տարբեր ու նման բաներ։ Նախկին կարծիքը, իբր թէ միայն կրօնները ճանաչվում են բրիստոնէականի համեմատութեամբ՝ այժմ ղդալի կերպով հերքված է. միայն կողմից՝ բան հասկանալու նոր աշխարհներ են բացված նրանց համար, ովքեր չանձն են առնում ուսումնասիրել մարդկութեան կրօնները։ Հետազոտութեան նոր մեթոդների շնորհիւ Յունաստանի ու Հռոմի կրօնները այնպէս են ուսումնասիրված, ինչպէս չեն եղել ուսումնասիրված ոչ մի ժամանակ, և միայն բոլոր կրօնները, որոնց մասին առաջ ոչինչ չգիտէին, այժմ, շնորհիւ այն նոր միջոցի, որով նրանց հետազոտում են՝ պարզել են մեր առաջ իրանց պատմութիւնը։ Նոր պիտութիւնը, որ խօսում է երկրիս վրայ մարդու անց կացրած նախնական կեանքի մասին՝ լոյս է սրփ-

ռել նախնական շատ հաւատալիքների ու ծէսերի և կրօնական հին գաղափարների վրայ. Ներկայումս երկրագնդի զանազան մասներում բնակող վայրենի ցեղերի վերաբերմամբ միսիոնէրների և այլոց պատմածներին այժմ այնպիսի նշանակութիւն է տրւում, որպիսին առաջ մարդ անգամ չէին անցկացնում: Այսպիսով մենք գտնվում ենք մի այնպիսի դրութեան մէջ, որ շատ է տարբերվում մեր հայրերի դրութիւնից, որոնք ոչ աշխարհի կրօնը ուսումնասիրում էին, ինչպէս մի ամբողջ բան: Նրանց աչքում իրանց սեփական կրօնը ճշմարիտ կրօն էր, իսկ մնացածները՝ սուտ կրօններ: Կալ՛վին խօսում էր «մոլորութիւնների մի ահագին ճահճի» մասին, որի մէջ, արտաքոյ քրիստոնէութեան, խորասուզված է ողջ աշխարհը. նա կարիք չունէր խրվելու այդ մոլորութիւնների մէջ, նա կարող էր ուղղակի հանդէս գալ, բարոզելով ճշմարիտ վարդապետութիւնը: Մինչև մեր օրերը իրօք պահպանվում էր եկեղեցական հին հայրերի այն համոզումը, իբր թէ բոլոր կրօնները, բացի հրէութիւնից ու քրիստոնէութիւնից՝ դևերի երկրպագութիւն էին, իբր թէ նրանց մէջ խաղաւորում են դևերը. այլապէս, սակայն, չէր էլ կարող լինել, որովհետև բացի հրէութիւնից ու քրիստոնէութիւնից՝ ուրիշ կրօններ չկային չէին: Այսպիսի տպաւորութեանը վերջ տրվեց, և մենք պէտք է մեր նիւթի մասին դատենք այն միջոցների հիման վրայ, որ ունենք՝ նրա ուսումնասիրութեան համար:

Թէպէտ կրօնի պատութիւնը կամ կրօնագիտութիւնը դեռ նոր է ծնվել, բայց արդէն անցել է իր նախկին փուլը (фаза), ինչպէս երեում է նրա սկզբնական ու յետագայ անուններից: Սկզբում այլ և այլ կրօնների միասնական ուսումնասիրութիւնը կոչվում էր «Համեմատական կրօն»: Բանը կրօնական սիստեմների համեմատութեան մէջն էր: Պահանջվում էր փաստեր հաւաքել, կարգի բերել այդ սիստէմները՝ նրանց վերաբերմամբ ունեցած ամենաճշտագոյն տեղեկութիւնների համաձայն, ապա համեմատել, առաջ բերելով նրանց հանուր և միմեանց-

ից տարբերվող կողմերը: Այսպիսի մի աշխատութիւն մինչև օրս էլ բաւական անհրաժեշտ է: Նիւթ հաւաքելն ու այլ և այլ վարդապետութիւնների համեմատութիւնն ու տարբերութիւնը դեռ տալը դեռ երկար կզբաղեցնի շատ հետազօտողների: Այս դիտութիւնը, ինչպէս և այլ ամէն դիտութիւն՝ սկսվում է տեսակների դասակարգումից:

ԿՐՕՆԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՆՐԱԳԷՄ: Ողջ աշխարհի, իբրև մի ամբողջութիւն քննվող, կրօնների վերաբերմամբ մեր տեսած վերջին ժամանակի դրուագքները կոչվում էին «պատմութիւն»: Մենք ունենք Շանեպի դը-լա Սոսսէի «Կրօնի պատմութիւնը» և Տիլէի «Նախնեաց կրօնի համեմատական պատմութիւնը»: Կրօնի պատմութիւնը կարող է լինել երկու տեսակ: «Պատմութիւն» բառը կարող է գործածված լինել այն մարդի, ինչ մարդ գոյն է ածվում «բնական պատմութիւն» տէրմինի մէջ, այսինքն՝ կարող է նկատի ունենալ մարդկային կեանքի այս կամ հետ կապ ունեցող պատմութիւնը, ժամանակագրական յաջորդականութիւնից անկախ. կամ թէ այս խօսքը գոյն է ածվում, երբ մենք խօսում ենք, օրինակ Հռոմայեցոց պատմութեան մասին և այն ժամանակ նկատի է ունեցվում ողջ աշխարհի կրօնների նկարագրութիւնը ժամանակագրական կարգով: Թէ այս ու թէ միւս դէպքում «պատմութիւն» բառի գործածութիւնը այն է ցոյց տալիս, որ հետազօտութիւնը մտել է մի նոր փուլ և այժմ ունի մեծ նպատակ ունի, քան այն, որ ունէր առաջ, այն է՝ նիւթի դիզելը, նման կողմեր մատնացոյց անելը և զուգահեռականներ անցկացնելը, այսինքն՝ նիւթի մի այնպիսի համախմբում, որից պարզ երեար մի գործարանական (օրգանական) կապ: Այս է, անտարակոյս, այժմեայ կրօնագիտութեան խնդիրը: Ամեն մարդ, ով որքան և է շահագրգռվում է այս առարկայով՝ ձգտում է ուսումնասիրել աշխարհիս կրօնները ոչ իրրև առանձին սիստէմներ, որոնք թէև շատ նման կողմեր ունենան՝ այսու ամենայնիւ կարող են զարգանալ միմեանցից անկախ,—այլ ուսումնասիրել կրօնական

ախտէմները, կամ պահպանելով նրանց միջև, ինչպէս մի ամբողջի մասների։ Մեր գիտութիւնը ձգտում է ողջ աշխարհի կրօնները ներկայացնել, ինչպէս մի համաչխարհային կրօնի երևոյթներ։

Կրօնագիտութիւնը, այս ասպիճան խոր ներթափանցելով իր խնդրի մէջ՝ ենթարկվում է մի այն ուղղութեան, որ մեր ժամանակի իշխում է գիտութեան բոլոր ճիւղերի մէջ։ Ամեն գիտութիւն ձգտում է միօրինակութիւն սահմանել երևոյթների բազմօրինակութեան մէջ, որոնց կիզակէտը՝ շատութիւնը ի մի գումարելու օրէնքը, կամ, ասելի ճիշտ ձգտում է ցոյց տալ թէ ինչպէս միութիւնից առաջ է եկել պլուրալութիւնը։ Կրօնի գիտական հետազոտութեան մէջ պէտք է մտցնել այս ուղղութիւնը, որ յատուկ է ամեն գիտութեան։ Բայց եղ մեզ համար թողնել պէտք է լինի այն համոզումը, որ տեսնելի անկարգութեան մէջ կարգաւորութիւն է թագաւորում։ Մենք պէտք է հաւատանք, որ մարդկութեան կրօնական հաւատալիքներն ու ծէսերը քաոս չեն կամ լոկ մարդկային անհասկացողութեան մի անիմաստ երևոյթը, որի էութիւնը իսկապէս այն է, որ գոյութիւն է ունեցել բոլոր ժամանակներում և աշխարհի ամեն կողմերում,—այլ որ այդ հաւատալիքներն ու ծէսերը կազմում են մի տիեզերք (КОСМОСЪ), և կարող են գնահել, եթէ ծանենանք նրանց, ինչպէս հարկն է, իրրև մարդկային կեանքի մի այնպիսի կողմ, որից բանականութիւնը երբէք չէ բացակայել և որ զարգացել ու զարգանում է մինչև հիմա։ Կրօնագիտութեան ամենաակնառոր դրսևորները իրրև կերպով համոզված են սրանում. նրանք իրանց դրատածները անուանում են «պատմութիւն» և աշխատում են ցոյց տալ, որ ողջ աշխարհի կրօնները օրգանապէս կապված են միմեանց հետ և, ասենք թէ, մի և նոյն հզոր տարրեր երևոյթներն են։ Այս փոքրիկ հատորը ոչ միայն նկարագրելու է մեծ կրօնները իրանց գլխաւոր կողմերով, այլ և դրա հետ միասին ցոյց է տալու այն մի քանի արդիւնքները, որոնք բուն երևոյթին ձեռք

են բերվել՝ այս կրօնական սխտէմների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները պարզելու համար։

ԿՐՕՆԻ ՁԵՐԴՑՈՒՄԸ ԴԱՆԳ ՁԷ ԸՆԴՈՒՄ։ Մենք այն չենք ընդի, չանելով որոշ ենթադրութիւններ։ Մեր առաջին ու գլխաւոր ենթադրութիւնը այն է, որ կրօնը, ինչպէս և մարդկային կեանքի միւս կողմերը, զարգանալու է եղել էն գլխից և զարգանում է մինչև օրս, և որ կրօնի զարգացումը տեղի է ունեցել մարդկային առաջադիմութեան ամենօրեայ օրէնքներով։ Ամեն մարդ, ով ուսումնասիրում է այս առարկան, իր կողմից էլ մտնելու լինի սրան՝ պէտք է ընդունի այս դրութիւնը, կամ հրաժարվի առարկան իրրև մի ամբողջութիւն հասկանալու մտքից։ Հասկանալ մի բան՝ նշանակում է՝ գիտենալ թէ նա ինչպէս է դարձել այն, ինչ որ է, գիտէ պատմական երևոյթը կարող է հասկացվել միայն այն դէպքում, երբ նրա պատմութիւնը հետազոտված է մինչև իր ամեն ծուծը։ Սա անկասկած այսպէս է և՝ մարդկութեան կրօնի վերաբերմամբ։ Բարիայի ամեն գիտութիւն, որ չէ սկսում սկզբից՝ ոչնչից-չոչնչից, կլինի խաւն ի խաւուն ու անբաւարար։ Այս պատճառով մենք ընդունում ենք, իրրև մի հաստատ բան, մինչև չապացուցվի հակառակը՝ որ տիեզ սկզբից այս շրջանում, ինչպէս և մարդկային կեանքի միւս շրջաններում, զարգացումը առաջ է եղել գնալիս անընդհատ։ Գաղափարի գիտութեան միւս բոլոր ճիւղերում էլ անում է նոյն ենթադրութիւնը։ Բոլոր հիմնարկութիւնների պատմութիւնը առաջ է տարում իրրև մի անընդհատ շարունակվող ճիւղ այն ժամանակներից, երբ չկային մինչ անգամ բնաւորիր ու սովորականութիւն։ Այն եղանակները, որոնցով մարդիկ իրանց համար ապրելու միջոցներ էին ձեռք բերում, նոյնպէս յայտնի են հին ժամանակներից. և բնհատում չկայ զարգացման մէջ, սկսած կենդանական վիճակից մինչև չոգեշարժ արօրը։ Մեզ մի և նոյնը չէ կարելի ասել կրօնի վերաբերմամբ։ Մենք չենք կարող գնահել, մինչև չապացուցվի հակառակը, որ կրօնական գաղափարների

ու ծէսերի զարգացման գործում ամենահին ժամանակներից սկսած մինչև մեր օրերը ընդհատում չէ եղել, և որ ամենայ բարձրագոյն կրօնը մարդերի նախկին կրօնի մի մասն է։ Ճշմարիտ է, այս մասը շատ կէտերում շատ է հեռացել հնագոյն կրօնից, բայց նրանում չարունակ ապրում է այն, ինչ որ աւելի էականն էր նախնական հաւատալիքների մէջ. և այն, ինչ որ աւելի կենսականն էր կրօնական հնագոյն սկզբունքների մէջ՝ մինչև այժմ երկրպագութիւն է առաջ բերում։ Եթէ մենք ընդունելու լինենք այս հայեացքը, ապա մեզ համար կվերանան այն դժուարութիւններից շատերը, որոնք առաջ արգելք էին լինում այս առարկայի ուսումնասիրութեանը։ Եթէ, համաձայն այն նոր ուղղութեան՝ որ քսան երեսոլիին իշխում է ժամանակակից մտքի վրայ, հիմնարկութիւնների ու հաւատների վրայ չնայվի, իբրև մի անդրդուելի բանի, այլ իբրև մի այնպիսի բանի, որ զարգացել է նրանից, ինչ որ եղել է առաջ, և որ զարգացնում է այն բանի մէջ, ինչ որ լինելու է ապագայում՝ այն ժամանակ այս հիմնարկութիւններն ու հաւատները կդադարեն արհամարհանք, նախանձ կամ ատելութիւն շարժելուց։ Նայելով բոլոր կրօնների վրայ, իբրև առհասարակ կրօնի զարգացման բնաստիճանի՝ (стадія) մենք պատճառ չենք ունենայ նրանցից որ և է մէկը առարացնելու կամ անարժանապէս բարձրացնելու։ Կրօնի զարգացման աւելի հին բնաստիճանները կունենան մեզ համար այն առանձին շահագրգռումը, որ գրաւեցնում են մեզնում մեր նախնիների բնաւորութիւնները, թէպէտ և մենք ինքներս չդանկանանք բնակել նրանց մէջ։ Մենք չենք բաժանի կրօնները միակ ճշմարիտ կրօնի՝ քրիստոնէութեան, և սուտ կրօնների, որոնցով հասկանալու լինենք միւս բոլոր կրօնները. ոչ մի կրօն մենք չենք համարի սուտ մնապաշտութիւն, չենք ասի, թէ նրանցից այս կամ այն անհաճոյ է Աստծուն։ Բայց, զգալով որ մենք անկարող ենք լիւ հասկանալ մեր սեփական կրօնը, չհամեմատելով նրան միւսների հետ՝ կդնահատենք այս վերջին կրօնները աչքի

առաջ ունենալով այն դերը, որ նրանք խաղացել են մեծ շարժման մէջ, և արդէն այն տեսակէտից կնայենք ամենից առաջ և՛ մեր սեփական կրօնի վրայ, որովհետև, չունենալով պատմութիւն՝ կրօնները չէին կարող կատարելագործվել։ Նկատի ունենալով զարգացման այս սկզբունքը՝ մենք ամենակոպիտ բանի մէջ էլ կդտնենք լաւը և կտեսնենք, որ մինչ անգամ ամենաանկանական կրօնական սիստեմների վերջնական միտքը աւելի բարին ու ճշմարիտն է, քան չարն ու սուտը։

Այսպէս, ուրեմն, մենք ձեռնարկում ենք գործը, ընդունելով, որ կրօնը մի այնպիսի բան է, որ էն սկզբից ենթարկված է զարգացման, ինչպէս իրաւունքը, ինչպէս արուեստը և ամենալաւ մէթօդը, եթէ միայն հնարաւոր համարվի, կլինի այն, որ հետևենք նրա շարժմանը էն սկզբից։ Յաւակնութիւն չունենալով, թէ մեզ աջողվելու է ամէն բան պարզել, և չմոռնալով, որ հանդիպելու չենք այնպիսի կրօնական երևոյթների, որոնց տեղը դժուար է որոշել պատմութեան մէջ, մինչ անգամ հաւասարացած չլինելով, թէ դանելու ենք մի շաւիղ, որ տանելու է կրօնական զգացումների ու ծէսերի անչափելի անտառներով՝ մենք գոնէ կարող ենք յոյս ունենալ, որ մեզ համար աչքերն կդառնայ այն ուղղութիւնը, որով հանուր առմամբ գնալիս է եղել կրօնի զարգացումը։

ԿՐՕՆԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՐՈՉՈՒՄԸ։ Բայց այս հետազոտութիւնը սկսելուց առաջ մենք հանդիպում ենք այս հարցին. ինչ է այն, որ մեր ենթադրութեամբ զարգացել է այս կերպով։ Որևէ բանի բնափոխութեան (эволюція) պրօցէսը ճանաչելու համար՝ անհրաժեշտ է որոշել, թէ ինչն է եղել զարգանալիս. որովհետև հէնց բնափոխութեան գաղափարին է վերաբերում այն, որ յառաջիկայ էտապիներն չէ փոխվում նրա զարգացման չափով. այլ որ զարգացման սկիզբ ու պատուղը (արտադրութիւնը) միևնոյն էտապիներն են, և տարբերվում են միմիանցից միմիայն նրանով, որ մէկը դեռ ևս գտնվում է հա-

տակ առնելու վիճակում, մինչդեռ մեան արդէն չափահաս է։ Դրօնի պատմութիւն կազմողը լրջութեամբ չէր լինի վերաբերված իր գործին, դնելով նրա մի ծայրին վայրենուն, իսկ միւսում՝ բրիտանեայ մտածողին, եթէ կարելի լինէր հաստատել, որ չկայ ոչինչ հանուր բան վայրենու և բրիտանէի դրօնի միջև և որ պատուղը էն սկզբից՝ էապէս սերմից տարբերվող մի բան լինէր։ Այս պատճառով անհրաժեշտ է ամենից առաջ որոշել, թէ ինչ բանի պատմութիւնն ենք ուզում ձեռնարկել կամ ուրիշ խօսքով՝ ինչ ենք հասկանում դրօն ասելով։ Զգէտ է մոռանանք, որ զարգացող առարկայի կատարեալ բացատրութիւնը կարելի է տալ միմիայն կատարեալ զարգացման հասնելուց յետոյ։ Հասկին առնելու միջոցին առարկան արտայայտում է թէ ինչ է իրրը, նոյնպէս և այն, որ ինչպէս նրա բարձրագոյն յայտնութիւնները պրտնդում են նրա բնութեան մէջ։ Աչխարհը դեռ ևս լիովին չէ պարզել իր համար, բայց դեռ չարունակ պարզում է, թէ ինչ է դրօնը։ Այս պատճառով այս բնաստիճանում առաջարկված ամէն որոշում պէտք է տարրական կամ ժամանակաւոր բնոյթ ունենայ։ Ես առաջարկում եմ դրօնի ինչութիւնը ընդունել առայժմ բարձրագոյն *զօրութիւնների* (ուժերի) երկրպագութիւն։ Առաջին տեսակէտից առարկայի համար սա կարող է մի շատ անկատար որոշում թվալ, բայց եթէ քննենք, թէ ինչ է բովանդակվում այս որոշման մէջ, այն ժամանակ նա այնքան պակասաւոր չի թվայ մեզ։ Նախ և առաջ նրանում պարունակված է հաւատի տարրը։ Մէ որ չի երկրպագի բարձրագոյն զօրութիւններին, եթէ հաւատալու չլինի այդպիսի զօրութիւնների գոյութեանը։ Սա մի մեաւոր գործօն է։ Սա չէ նշանակում թէ դրօնի զարգացման առաջին աստիճանների վրայ մեաւոր գործօնը տարբերվում է միւս գործօններից, ինչպէս քիմականութիւնը վայրենի մարդու աչքին չէ երևում իբրև ինչուն տարր։ Բայց մի ինչ որ մեաւոր բան, մի որոշ համոզմունք պարտաւորապէս գտնվում է մինչ անգամ նախնական կրօնների մէջ։ Եթէ չլինէր բարձրագոյն զօրութիւնների հաւատը, այն ժամանակ ներկայ կրօնը չէր կարող պահպանվել։ Եթէ չարունակվէին էլ կրօնի յոկ արտաքին արտայայտութիւնները, այն ժամանակ մի այնպիսի կրօն գտանողի համար կանհետանար նրա անկատարելութիւնը, և արդիւնքը կլինէր յոկ իմացող կամ կեղծ կրօնը, այսինքն՝ մի այնպիսի կրօն, որ զուրկ է ուրիշ ամէն կրօնի հիմնական նշաններից մէկից։ Սա ճիշտ է ամէն բնաստիճանի նկատմամբ։ Ապա, երկրպագութիւնը տրվում է իսկապէս «բարձրագոյն» զօրութիւններին։ Կրօնը վերաբերվում է յարկանքով ոչ թէ այն էակներին, որոնց մարդիկ համարում են իրանց հետ մի գծի վրայ կամ իրանցից ցած կանգնած, այլ՝ այնպիսի էակների, որոնք որևէ կողմով բարձր են մարդկից, և որոնց՝ դրանք տրամադիր են մօտենալու ակնածութեամբ։ Եթէ երկրպագութիւնը ըստ երևոյթին ուղղված է այն բանին, զէպի որը երկրպագողը արհամարհանք է զգում և որին նա մի բոպէից յետոյ զէն է պղելու անփոյթութեամբ, այն ժամանակ նոյնպէս բացակայում է հիմնական պայմաններից մէկը, և այնպիսի երկրպագութիւնը չէ համապատասխանում կրօնի հասկացողութեանը։ Անշուշտ, այսպիսի երկրպագութեան մէջ էլ կարող է կրօնական տարր ծածկված լինել. վայրենին, որի մտածողութիւնը կապակցաւոր չէ, երկրպագելով առարկային՝ կարող է մի բոպէ նրան իրանից բարձր համարել, իսկ յետոյ՝ ստոր. բայց այսպիսի երկրպագութեան արդիւնքը մի փոքր պակաս բան կլինի, բան կրօնը։ Երրորդ՝ որպեսզի բարձրագոյն զօրութիւններին երկրպագութիւն է տրվում։ Այսինքն կրօնը ոչ միայն բարձրագոյն զօրութիւնների գոյութեան մի հաւատ է, այլ և միևնոյն ժամանակ նրանց հետ յարաբերութիւն ունենալու մի սահմանադրութիւն է, մի իրական գործունէութիւն, որ անընդհատ ուղղված է այդ զօրութիւններին։ Սա ոչ միայն մտածողութիւն է, այլ և՝ գործունէութիւն. սա էլ նոյնպէս մի էական նշան է։ Եթէ դադարում է երկրպագութիւնը, ապա

պաշտպանում է և կրօնը. սակայն չի կարելի այս դրութիւնը չափազանց նեղ մտքով ըմբռնել, որովհետև երկրպագութեան տեսնելի գաղարումը կարող է լինել մի փոխանցում դէպի մի այլ, գուցէ բարձրագոյն ձևի երկրպագութիւն. բայց կրօն չկայ այնտեղ, ուր բացի բարձրագոյն զօրութիւններին հաւատալուց՝ չկայ ոչինչ կերպով նրանց հետ լաւ յարաբերութիւն պահպանելու մի ձգտում։

ՄԻԱՅ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՓՆՈՒԹԻՒՆԸ։ Վերև ասվածը հնարաւորութիւն կտայ մեզ դատողութիւն անելու կրօնի այն մի քանի որոշումների մասին, որոնք առաջարկված են աշխարհին վերջին տարիներս։ Զգաստանալով այն որոշումներին, որ տվել են փիլիսոփաները մեր առարկայի գիտական հետազոտութիւնը սկսելուց առաջ և սահմանափակվելով նրանցով, որոնք առաջարկված են ի շահեկանութիւն մեր դիտութեան՝ կանենանք, որ շատերը կրօնը համարում են մի մտաւոր գործունէութիւն*)։ Այսպէս, Մաքս Միւլլէր**) ասում է, թէ՝ «Կրօնը մարդի այն ընդունակութիւնն է կամ տրամադրութիւնը, որ բանականութիւնից ու խելքից անկախ, մինչ անգամ նրանց հակառակ՝ մարդուն հնարաւորութիւն է տալիս ճանաչելու անհունը զանազան անուններով, այլ և այլ ձևերով։ Առանց այս ընդունակութեան՝ ոչ մի կրօն չէր կարող լինել»։ Այս որոշման դէմ կարելի է անել մի քանի ծանրակշիռ առարկութիւն։ Այս որոշումը ենթադրում է որ կայ միայն մէկ ճանապարհ, որով մարդիկ կարող են հասնել բարձրագոյն զօրութիւնների հաւատին. նրանք գալիս են դէպի մի այսպիսի հաւատ, գտնելով որևէ իրանցից բարձր և իրանց համար անհասկանալի բան, այսինքն՝ գալիս են մտաւոր պրօցէսի օգնութեամբ։ Կարելի է հասկանալ նրանում, որ այդ բոլորի մէջ հիասթափութիւնը միակ կամ բոլոր մարդերի համար հանդիպարհն է, որով նրանք հասնում են աստուածների հաւատին։ Բայց սրանից՝ Միւլլէր, աչքաթող անելով իր որոշման մէջ կրօնի գործական կողմը, երկրպագութեան տարրը՝ հէնց դրանով անխուսափելի առարկութիւն է անել տալիս իր դէմ։ Հաւատն ու երկրպագութիւնը կրօնի անխզելի կերպով կապված կողմերն են. առանց այս երկու կողմերի՝ կրօնը չի կարող կատարելապէս գործունեայ լինել։ Միևնոյն առարկութիւնն անելու է և՝ կրօնի այն որոշման դէմ, որ առաջարկում է Հէրբէրտ Սպենսէր։ Սպենսէր կրօնի հիմը տեսնում է այն զօրութեան անիմանալիութեան մէջ, որ մեզ համար յայտնվում է աշխարհում։ Նրա կարծիքով՝ բոլոր կրօններին յատուկ է այն բանի մի հանուր հաւատը, թէ կայ մի բան, որ վեր է հասկացողութիւնից։ Նա պնդում է, որ պայմանական ու սահմանափակ առարկաների մասին մեր ունեցած բոլոր պիտակցութեանը զուգընթաց է անկախութեան և անպայմանութեան զգացմունքը, և ըստ էնքեան ոչ թէ մի բացատական հասկացողութիւն է, և ոչ միայն լոկ սահմանների բացատում, այլ՝ դրական հասկացողութիւն։ Անպայմանը այն է, որին իբրև յայտարար ծառայում են մեր բոլոր մտքերն ու զգացմունքները, բայց որ մենք երբէք հնարաւորութիւն չենք ունենայ ըմբռնելու, և որի վերաբերմամբ միայն այն կարող ենք պնդել, որ նա գոյութիւն ունի։ Այս որոշումը, նախընթացի պէս՝ կրօնը դուրս է բերում մարդկային գիտութեան անհատարելութիւնից և հանդէս է բերում նրան աւելի իբրև բացատական, քան դրական մի երևոյթ։ Այստեղ էլ նոյնպէս կարելի է առարկել, որ այս որոշումը կրօնը դնում է աւելի մտաւոր, քան գործական հողի վրայ, և նկատի չէ առնում երկրպագութեան տարրը։

*) Թէզէտ և Տայլօր որոշում է կրօնը, իբրև «հոգևոր էակների մի հաւատ», բայց նրան չի կարելի մեղադրել նրանում, որ կրօնին չափազանց մտաւոր նշանակութիւն է տալիս։ Նա «հաւատ» բառը լայն մտքով է գործ ածում, մտցնելով նրանում հակացողութիւն ու այդ հաւատին վերաբերեալ ծէսերը։ «Հոգևոր» հակացողութեան մէջ Տայլօր մտցնում է իր հոգևոր գործունէութեան (անիմիսմի) տեսութիւնը, և այսպիսով այս հակացողութեան արտայայտութիւնը անպէտք է դարձրեր նրանց գործունէութեան համար, որոնք չեն ընդունում այս տեսութիւնը։

**) Մաքս Միւլլէր վախճանվեց 1900 թ. հոկտեմբերին։

Հայ թարգմանող։

Ուրիշ դիտնականներ կրօնը բացատրում էին իբրև մարդկային մտքի փորձառութիւնից արդիւնք, ինչպէս հետեւեալ այն շարժման, որ ստիպում է մարդկերին հետազօտել երեւոյթների պատճառները և յատկապէս ձգտել գտնելու բոլոր երեւոյթների նախապատճառը: Այստեղ մենք մօտենում ենք այն բանին, ինչ որ անկասկած կրօնի անփոփոխելի նշանը պէտք է համարվի: Կրօնը միշտ ստանձնում է բացատրել աշխարհը և միութիւն մտցնել մարդու բանականութեան մէջ, վճռելով նրան յուզող հարցերը և վերագրելով նրան մի որոշ տեսակէտ, որտեղից նա աշխարհի ու կեանքի բոլոր կողմերի համար կարող է գծել իրանց որոշ տեղը: Բայց սա ամենաքիչը՝ չէ բացատրում մեզ, թէ ինչ բան է հենց կրօնը: Այս մտատանջութիւնը, այս մարդասիրութիւնը բացատրում կրօնական բնոյթ չունին. նրանք աւելի փիլիսոփայութեանն են վերաբերում: Մարդը էն սկզբից երկրպագում էր նրան, որ ոչինչ կապ չունէր գիտութեան հետ: Հետամուտ բնաւորութիւնը ստիպել նրան որոնել երկրի նախապատճառը. կրօնի մէջ նա տեսնում էր մի այնպիսի բան, որ խոստանում էր բացատրել նրան աշխարհի էութիւնը, բացատրել նոյն իսկ իրան: Բայց հարցասիրութիւնից մի աւելի բան, երբ նա գտաւ այս սկզբնապատճառը, ստիպեց նրան նայել այդ սկզբնապատճառի վրայ, իբրև աստուածութեան, երկրպագել ու գոհ բերել նրան: Սակայն որոնք են երկրպագութեան հիմերը: Ընդհակառակ, միշտ իբրև նրա հիմերից մէկը՝ երեւում է հրաշքը. բայց չկայ արդեօք բացի հրաշքից՝ դարձեալ մի ուրիշ բան: Գրօնի ոչ մի որոշում չի կարող կատարեալ համարվել, եթէ այդ որոշման մէջ մտած չէ և՛ երկրպագութեան հասկացողութիւնը. որովհետև երկրպագութիւնը կրօնի էական կողմն է: Գրօնը բնորոշելու համար անհրաժեշտ է ոչ միայն նրա մտաւոր, այլև բարոյական յատկութիւնը: Ի՞նչ է բուն բնութեան կրօնը բարոյական մարդով: Մենք կարող ենք մատնացոյց անել երկրպագութեան այնպիսի արտայայտութիւններ, որոնց մէջ ձգտում են երեան գալ ամենատեսակ

բարոյական յատկութիւններ: Նրանց մէջ մտնում են ամենատարակ կրքեր՝ հպարտութիւն, բարկութիւն ու վրէժ, ինչպէս և երկիւղ, բաղց, զղջում: Բայց եթէ կրօնը ինչպէս արատների արտայայտութեան, այնպէս էլ զգացմունքի գործ է, այն ժամանակ երկրպագութեան, ոչ բոլոր արտայայտութիւնները կարող են վերաբերվել նրան (կրօնին), և դեռ էլի մի բան է անհրաժեշտ մեր որոշումը լրացնելու համար:

ԱԻԵԼԻՒ ԿԱՏԱՐԵԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ: Ասելացնենք, ուրեմն, այն, ինչ որ պահանջում է, և կասենք որ կրօնը *անբերդոյթ զօրութիւնների երկրպագութիւնն է, որ առաջ է գալիս անգոհունակութեան զգացմունքից:* Սա յիշեցնում է ընթերցողին Ջէյերմախէրի որոշումը թէ «Գրօնը՝ անոսհման կախում ունենալու մի զգացում է»: Այս որոշման դէմ միշտ առարկել են, թէ սա կրօնը դուրս է բերում իբրև սոսկ մի զգացում, մի տրամադրութիւն, բայց որ, չնայելով դրան՝ սա հաւատ ու գործողութիւն է: Սակայն Ջէյերմախէրի արտայայտած ճըշմարտութիւնը գործի նկատմամբ էական նշանակութիւն ունէր: Աստուածներին հաւատալը և նրանց պաշտամունքը կուլտը*) կրօն չեն առանց անգոհունակութեան զգացումի: Այս երեք տարրերը, միասին վեր առած, կազմում են կրօնը՝ բազարակրմութեան ինչպէս սոսկնագոյն, այնպէս էլ բարձրագոյն աստիճանների վրայ:

Պէտք է գոյութիւն ունենայ մի հաւատ, թէ այն էակը, որին ուղղված է երկրպագութիւնը՝ ընդունակ է բաւարարութիւն տալու երկրպագողի պէտքերին: Մարդիկ ոչ կապօթեն, ոչ էլ գոհեր կբերեն այն էակներին, որոնց անընդունակ են համարում իրանց օգնելու կամ անզօր՝ իրանց բարիք կամ չարիք պատճառելու: Ամէն կուլտ ենթադրում է, թէ այն էակը, որին նա ուղղված է՝ մի այնպիսի ուժ է, որ կարող է անել երկրպագողի օգտին այն, ինչ որ նա չէ կարող անել ինքն իր համար: Չէնց

*) Հին ազգերի ծէսերն ու աստուածապաշտութիւնը:

Հայ թարգմ.

ինքն իրան օգնել կամ իր սեփական պէտքերին բաւարարութիւն տալ չկարողանալն է, որ ուղղում է մարդու քայլերը դէպի մի այնպիսի աստուածութիւն, որ ունի այն ուժը, ինչ որ չունի երկրպագողը։ Եթէ նա կարողանար ինքն իրան օգնել՝ նրան հարկաւոր չէր լինի կրօնը. եթէ նրա կեանքը կատարեալ երջանիկ լինէր կամ ուրիշ ոչինչ չունենալ ցանկանալու, կամ թէ բոլորովին թշուառ ու անօգնական լինէր, այնպէս որ անկարելի լինէր ոչնչ յոյս դնել՝ այն ժամանակ մարդը չէր դիմի բարձրագոյն զօրութիւններին. բայց որովհետև մարդու կեանքը բարու և չարի մի խառնուրդ է, և պարունակում է իր մէջ այնպիսի ուրախութիւններ, որոնցով մարդը չի կարող ապահովել իրան, և այնպիսի վտանգներ, որոնցից չի կարող զգուշանալ սեփական ուժերով, և որովհետև նրանում,—թէ ինչպէս մենք այժմ վճռելու չենք—գտնվել է բարձրագոյն զօրութիւնների գոյութեան հաւատը, զօրութիւնների, որոնք, եթէ կամենան, կարող են պաշտպանել ու երջանկացնել նրան՝ այս պատճառով նրանում երևան է գալիս մի կրօն և նա յարաբերութիւններ է հաստատում բարձրագոյն զօրութիւնների հետ։ Այսպիսով կրօնը, մինչ անգամ իր ամենացին ձևի մէջ, անպատճառ մի սոսկ էգօիսմի (ինքնասիրութեան) արտայայտութիւն չէ։ Թէպէտ բարձրագոյն զօրութիւններին նուէրներ (պատարագներ) են մատուցանում այն յոյսով, թէ այդ նուէրները հաճելի կլինեն նրանց, և թէպէտ նրանցից այնպիսի բարիքներ են ընդունում, որոնք շատ կարևոր են երկրպագողին՝ սակայն այս զօրութիւնները ըստ ինքեան անպատճառ որևէ ստոր բան չեն, ինչպէս և հէնց այսպիսի արտայայտութիւնները մարդերի, երկու բարեկամների, կամ ծնողների ու որդիների միջև։ Մինչ անգամ վայրենին, որ բոլորովին օտարացած է ապրում, որ պատերազմ է մղում ամենի դէմ և որ միմիայն տան ու կրակի պէտքն է զգում, չի դիմի իր խնդրվածքներով աստուածութեանը, եթէ ոչինչ մտերմութիւն չէ տածում դէպի նրան կամ եթէ նրա մտերմական զգացումը դէպի աստուածութիւնը չի գօրանայ խնդրված ողորմութիւնը ստանալու դէպքում։ Հէնց որ զարթնում է մտերմութեան այս զգացմունքը, արդէն կրօնը զօրութիւն ունի, մարդը կենդանի յարաբերութեան մէջ է մտել բարձրագոյն զօրութեան հետ, որին, անշուշտ, երևակայում է իրրև իր պէս մի բան, բայց մանաւանդ համարում է իրանից բարձր։

Ուրեմն, տես թէ ինչն ենք համարում մենք կրօնի էութիւնը—բարձրագոյն զօրութիւնների երկրպագութիւն, որ առաջ է գալիս սեփական անօգնականութեան զգացումից և տես թէ ինչ բանի պատմութիւն ենք մենք պատրաստում դրել, եթէպէտ և ամենահանուր կողմերով։ Նոյն իսկ անունից կարելի է իմանալ, թէ զարգացումը ինչ ճանապարհով է ընթանալու։ Ըստ այսմ կիսովին մարդկային պէտքերի բնոյթը, այնքան փոխվելու է և կրօնը։ Մարդկային պէտքերի աստիճանաբար բարձրանալն ու բարդվելը բազմակրթութեան շարժման համեմատ՝ հանդէս է գալիս իրրև մի մղիչ ուժ և՛ կրօնի զարգացման համար։ Իրանք Աստուածութիւնները, նրանց անցեալ պատմութիւնը և ներկայ բնոյթը, նրանց մատուցվող գոհերը և նրանցից խնդրվող բարերարութիւնները, այս բոլորը հասակ է առնում այն չափով, ինչ չափով որ հասակ է առնում ինքը մարդը և կոպիտից անցնում է դէպի նուրբը, հասկից դէպի կարգ ու կանոնը։ Գրօնը իր զարգացման ստորնագոյն աստիճանի վրայ, գուցէ, մի անձնական գործ է վարձու և նրա աստուածութեան միջև և վերաբերում է լոկ անհատական նիւթական պէտքերին։ Եւ՛ի բարձր աստիճանի վրայ (բայց ոչ միշտ և մինչ անգամ ոչ սովորաբար) կրօնը ընտանիքի, ցեղի (племя) կամ ցեղերի կապակցութեան մի գործ է և բոլոր այդպիսի ընդարձակման դէպքում ընդարձակվում են և՛ կրօնական խնդիրները, դառնալով հետզհետէ պակաս անձնական. կրօնը դառնում է մի հանուր կուլտ, և նրա նպատակները ստանում են հասարակական բնաւորութիւն։

Թափառականի պէտերը այլ են, նստակեաց երկրագործի պէտերը՝ այլ, դիւզացու պէտերը տարբերւում են բաբառացու պէտերից, իսկ լապլանդացու պէտերը՝ նրդրի պէտերից, և այս տարբերութիւնները ցոյանում են աստուածութիւններին պատկերացնելու և այն ձէսերի վրայ, որոնք կատարվում են նրանց պատւին։ Երբ մի որոշ ազգի մէջ սկսում է ծաղկել արուեստը, այն ժամանակ աստուածները կարիք են զգում ենթարկվելու նոր ճաշակների։ Երբ հասարակութիւնը աւելի մարդասէր է դառնում, կրօնական խիստ ու արիւնահեղ ձէսերը, երկար և երկար ժամանակ պահպանուելով նրանց ուժը աւելի անկիրթ ու վիրագրգիռ մարդկերի միջև՝ կորցնում են իրանց ներգործութիւնը հասարակական պիտակցութեան գործում և կամ պէտք է փոխվեն, կամ ոչնչանան։ Իսկ երբ սկսվում է մարդկային անձնական արժանապատուութեան մի նոր պիտակցութիւն, և մարդիկ սկսում են զգալ իրանց անձնական կեանքի բարձր արժէքը և պատասխանատուութիւնը, այն ժամանակ հասարակական հին կրօնը սառն ու հետաւոր է երևում, և մարդիկ որոնում են մի այնպիսի կրօն, որ ունենար աւելի անձնական, աւելի մտերմական բնոյթ։

Ասացինք արդէն, *կրօնի զարգացումը ձեռք ձեռքի տված առաջ է գնում* հաղարակերթութեան *շարժման հետ*, համաձայն այն բանի, թէ մի յայտնի ժողովուրդ ինչպիսի բարբարոսկերթութեան տէր է, այնպիսի էլ կրօն ունի։ Ջուր կաշխատէինք մենք որոնել մի համապատասխանութիւն նախնական բարբերի ու սովորութիւնների և վաղ կրօնի միջև։ Ըստ երևոյթին, յաճախ հակառակն է տեղի ունենում։ Կրօնը, կամ աւելի ճիշտ՝ կրօնական հաստատութիւնն ու ձէսերը, յաճախ բարբարոսները, մնում են մնում և դեռ երկար ժամանակ պիտանում են բանականութեան ու խղճի կողմից պատասխանատուութեան յետոյ։ Այս նրանից է առաջ գալիս, որ մարդը կեանքի մէջ աւելի կրօնին է նշանակութիւն տալիս և ակամայ է փոխում այն ձէսերը, որոնց մէջ սառած խմորված են իր զգացումները։

(0242-035)

Սակայն կրօնը պէտք ցոլացնի այն համայնքի իդէաները, որ պատանում է նրան. այն պէտքերը, որոնք համայնքի կոմիկ զգացվում են մի որոշ ժամանակ, պէտք լինի նրա ազօթքի բովանդակութիւնը. գոհարիստութիւնները պէտք լինին այնպիսիք, ինչպիսին որ նրանց լինայ են տալիս համայնական զգացումները, աստուածները, համայնքի անհատութիւնը պահպանելու համար՝ ժամանակի ընթացքում պէտք կերպարանափոխվին և կենդանի յարաբերութեան մէջ դնվին իրանց ժողովրդի հետ։ Եւ, ինչ ուղիղ է այն, որ հանուր առմամբ քաղաքակրթութիւնը առաջ է գնացել, ինչպես պնդում է Տայլօր, մարդը սկսել է զարգանալ աստիճանաբար և, չնայելով անկման ժամանակաշրջաններին՝ հանուր առմամբ չէ դադարել զարգանալուց,—ապա միևնոյնը կարելի է ասել և՝ կրօնի վերաբերմամբ։ Նա էլ է սկսվել կոպիտ ձևերից և աստիճանաբար կատարելագործվել։ Կրօնը խոսքս քաղաքակրթութեան ներքին կոմն է, և նրա մէջ արտայայտվում է մարդկային կեանքի հիմնական ոգին այլ և այլ ժամանակներում ու այլ և այլ ժողովուրդների մէջ։ Ո՛րևէ յայտնի ժողովրդի կրօնը նրա բնաւորութեան ամենաճիշտ արտայայտութիւնն է և աւելի ճիշտ է ցոլացնում իր մէջ նրա դրութիւնը, նրա նպատակներն ու քաղաքականութիւնը։ Ո՛րևէ որոշ ժամանակի կրօնը ցոյց է տալիս թէ ինչն է եղել այդ ժամանակ մարդկային ձգտումների ու ապտինումների առարկան, երբ թաղամել էին հին յայտերը, իսկ նորերը նոր էին ծնվել։ Այս պատճառով ողջ աշխարհի պատմութեան ուսումնասիրութիւնը՝ համաշխարհային պատմութեան նպատակ ունի ուսումնասիրութիւնն է. դա այն ցանկութիւնների ու ապրումների ուսումնասիրութիւնն է, որոնցից ամբողջ պատմութեան ընթացքում մարդիկ ոչ միայն չեն ամաչել, այլև որոնցով հպարտացել են, թէ պատրաստ էին դատանելու։ Դժուար է երևակայել ուսումնասիրութեան սրանից աւելի մի գրաւիչ առարկայ։ Ոչինչ [illegible] ատարկան լուսին ուսումնա-

[illegible] ՀԱԱԿ-ՍՍՀ

պրելու համար այնքան շատ բան է պահանջվում, որ միայն շատ բշերը կարող են բաւարարութիւն տալ այդ պահանջներին։ Նա, որ ուզում է կարդին վերաբերվել կրօնի պատմութիւնը, պէտք է լաւ ծանօթ լինի քաղաքակրթութեան պատմութիւնը հանրապէս. նա պէտք է հետազօտի նախնական կեանքի ու մտքի ընդարձակ շրջանը, որ նոր է յայտնագործվել մեզ համար, պէտք է լինի, ինչպէս իր տանը՝ բոլոր դարերում, բոլոր ժողովուրդների մէջ, պատմութեան էն սկզբից։ Այնպիսի ժամանակում, ինչպիսին մերն է, երբ տարէց տարի նոր լոյս է սփռվում մեր առարկայի բոլոր կողմերի վրայ, ոչ մի գրուածք չի կարող լինել կատարեալ կամ աւելի քան մի փորձ։ Իւրաքանչիւր բայլափոխում պէտք կլինի ուսումնասիրողին մատնացոյց անել աւելի կատարեալ ապրիւրները։

ԱՐ ԳԼՈՒԽ

ԿՐՕՆԻ ՍԿԻԶԲԸ

ՔՂՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԾԱԳՐՈՒՄԸ։ Ազգագիրները (էթնոլօգները) պնդում են, որ բոլոր մարդաբնակ երկրներում մի ժամանակ բնակիլիս են եղել վայրենիներ. և ամեն տեղ բարի դարը նախընթաց է եղել մեսալի դարին։ Աշխարհում տեղի ունեցած ամեն բարաքակրթութիւնից առաջ տեղի է ունեցել՝ անձանների, ապա ցցաշէն բնակարաններում բնակողների մի մութ շրջան։ Այս հին մարդերի վերաբերմամբ չի կարող դոյութիւն ունենալ ժամանակագրութիւն կամ որևէ ճիշտ տեղեկութիւն. նրանք ապրում էին որսորդութեամբ, ունէին քարէ գէնք, բնակում էին այնպիսի կենդանիների միջև, որոնք այժմ անհետացած են։ Թէ ինչպէս մարդը, որ սկզբում բոլորովին անօգնական էր, սկսեց ինքը այլ և այլ միջոցներով բաւարարութիւն տալ իր պէտքերին, ինչպէս նա սովորեց կրակի գործածութիւնը, ինչպէս կատարելագործեց

իր գէնքը և ձեռք բերեց զանազան գործիքներ, ինչպէս սովորեց ընտելացնել որոշ կենդանիներին, որոնց նա երբեմն որսում էր, և, փոխանակ ողջ աշխարհում թափառելու՝ սկսեց նստակեաց կեանք վարել ու մշակել հողը, ինչպէս առաջ եկաւ ընտանեկան կեանքը և հայրն ու մայրը սկսեցին խնամել իրանց որդիները,—այս բոլորը մի ընդարձակ պատմութիւն է, որը չօշափելու տեղը չէ այստեղ։ Անշուշտ քիչ չի լինի չարչարված նախնական մարդը՝ որպէսզի կարողացած լինէր ճանապարհ բաց անել իր համար մի այսպիսի կեանքից, որով ապրում են անասունները՝ դէպի այնպիսին, որի մէջ կարողանար զարգանալ նրա սեփական բնութիւնը։

ՔՂՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԸՍՏԻՃԱՆԱԲԱՐ Է ԸՆԱՑ ԵԿԵԼ ՎԱՅՐԵՆԻ ԴՐՈՒԹԻՒՆԻՑ։ Այժմ համարեա ոչ ոք այն կարծիքի չէ, թէ մարդը սկզբում ունեցել է հասկացողութիւն ու մարդկայնութիւն, և յետ իր անկման ու իր նախնական վիճակը թողնելու չնորհիւ է պարձել վայրենի։ Կարելի է թոյլ տալ մարդկութեան մէջ անկման որոշ մօմենտներ, սակայն հանուր առմամբ այժմ այն համոզումն է իշխում, թէ քաղաքակրթութիւնը աստիճանաբար զարգանալու արդիւնքն է և այն բանի պտուղը, ինչ որ մարդը առել է իր իշխանութեան տակ, երկար պատերազմելով իրան շրջապատողների դէմ։ Այս զարգացումը բոլոր երկրներում հաւասարապէս չէ եղել։ Մի բանի երկրներում աւելի արագ է եղել առաջ գալիս, քան միւսներում, և նրա առաջխաղացումը աւելի յաճախ պայմանաւորվելիս է եղել արտաքին ազդեցութեամբ, քան ներքին ձգտմամբ՝ առանց կողմնակի օժանդակութեան. երբ մի ժողովուրդ չփվելիս է եղել միւսի հետ՝ այն ժամանակ առաջ են եկել գալիս նոր-նոր գաղափարներ կեանքի ուրիշ ուղղութիւնների հնարաւորութեան մասին։ Եղել են երկրներ, որտեղ հասարակ ոչինչ զարգացում տեղի չէ ունեցել։ Մինչև օրս կան այնպիսի ժողովուրդներ, որոնք դեռ ևս նախնական վիճակի մէջ են։ Սակայն բոլոր վայրենի ցեղերը գտնվում են այս

պրոբլեման մէջ։ Աստրալական բուշմէնները, անդամանեան կղզեցիները և ուրիշները այն աստիճան զուրկ են ամենահասարակ արհեստների մասին հասկացողութիւն ունենալուց և այն աստիճան կոպիտ, որ նրանց վրայ պէտք է լինում նայել, ինչպէս այնպիսի ժողովուրդների, որոնք երբեմն աւելի բարձր աստիճանի վրայ են եղել գտնուելիս ու յետոյ ընկել են։ Բայց երկրագնդի բոլոր մասներում մնացել են շատ այլեսի վայրենի ցեղեր, որոնք չեն ընկել այդպէս և մինչև հիմա էլ գտնւում են այն վիճակում, որի մէջ գտնւում էին ողջ աշխարհի բնակիչները բարբարակրթութեան սկզբում։ Գան այնպիսի ժողովուրդներ, որոնց մէջ բարբարակրթութիւնը այնպէս էլ չէ առաջ եկել, ինչպէս առաջ է եկել Քինաստանում կամ Պերուում։ Այս ժողովուրդները մեզ ցոյց են տալիս թէ ինչպիսի մարդիկ են եղել բոլոր բարբարակրթված ազգերի նախնիքը, իսկ սա հաստատում է այն եզրակացութիւնը, թէ ամեն բարբարակրթված ազգի մէջ մենք գտնում ենք մի շարք երևոյթներ, հաւատալիքներ, աւանդութիւններ, որոնք չեն բացատրվում մեզ յայտնի ազգերի կացութեամբը, այնուհետև չեն ցոյց տալիս բարբարակրթութեան արդիւնքները, այլ երևում են իբրև մնացորդներ նախկին կեանքի, որ իսպառ չէ ոչնչացել բարբարակրթութեամբ,—թէ այս սովորոյթները, հաւատալիքները ու աւանդութիւնները իսկապէս կարող են համեմատվել այն սովորոյթների, հաւատալիքների ու աւանդութիւնների հետ, որոնց մենք հանդիպում ենք վայրենի ժողովուրդների մէջ։ Այստեղից եզրակացվում է այն, որ բարբարակրթութիւնը առաջ է եկել վայրենի պրոբլեմից, որ, ինչպէս ասում է Տայլօր՝ «Վայրենի պրոբլեմը յատուկ է նախնական մարդկութեանը, և այս պրոբլեմից աստիճանաբար զարգացել է մի աւելի բարձր կենսակրթութիւն*) (կուլտուրայ), չնայելով այն պատճառների, որոնք ներգործում են, մինչև հիմա էլ»։

*) Կենսակրթութիւն բառը առաջ գործ է ածել Գ. Խատիսեան «Ցաւակի» մէջ։

Այս պատճառով, բարբարակրթութեան պատմութիւնը ձեռակերպելու համար՝ անհրաժեշտ է դառնալ այն բանին, ինչ որ մեզ յայտնի է մարդերի երկրիս վրայ վարած սկզբնական կեանքի մասին, և հարց տալ թէ ինչպիսի օրէնքների, հիմնարկութիւնների, պիտութիւնների ու արուեստների սկզբնաւորութիւններ կարող ենք գտնել մենք վայրենիների մէջ։ Այնպիսի գրքեր, ինչպիսին են Մէնի «Հին օրէնքը», Տայլօրի «Նախնական կենսակրթութիւնը», Լէբբօկի «Քարբարակրթութեան ծագումը» ցոյց են տալիս թէ որքան բեղմնաւոր է այս մեթօդը և թէ նա յոյսի ինչպիսի հեղեղներ է սփռում համայնքի պատմութեան վրայ։

Բայց այն, ինչ որ ուղիղ է քարբարակրթութեան վերաբերմամբ հանրապէս, ուղիղ կլինի և՝ կրօնի, ինչպէս քարբարակրթութեան պլխաւորագոյն սաղմերից մէկի, վերաբերմամբ... Ո՛չ մի նոր կրօն չէ պատահաւորում մի բոլորովին կուսական հողի վրայ, որտեղ առաջ չեն եղել եւ կրպագնիս սրեէ աստուածների։ (Որովհետև, ենթադրելով հակառակը՝ մենք նոյնպէս պէտք է ենթադրենք որ աշխարհում եղել են անկրօն ժողովուրդներ, մի բան որ մենք հերքում ենք)։ Նոր կրօնը միշտ հարկաւորապէս ստիպուած է եղել յարմարվել ամենից առաջ այն կրօնին, որ իշխելիս է եղել իրանից առաջ, և ընդունել նախկին սիստեմից, ինչ որ հնարաւոր է եղել։ Այս պատճառով մենք պէտք է սպասենք որ մեծ կրօնների մէջ գտնելու ենք այնպիսի կողմեր, որոնք յատուկ չեն նրանց, այլ կամայ-ակամայ առնուած են իրենց անբարբարակրթ նախորդներից։ Ինչպէս յետոյ կտեսնենք՝ այս երևոյթը իրաւ նկատվում է բոլոր մեծ կրօնների մէջ։ Նրանք բոլորն էլ լի են նախկին կայսրութեան մնացորդներով։ Հին կրօնական մտապատկերները տակս լինէ, մեծանում են մի որոշ երկրի հետ և չեն կարողանում արմատախիլ լինել, ինչպիսի փոփոխութիւններ էլ տեղի ունենային բարձրագոյն աստուածութիւնների մէջն։ Մնասաչառական սովորոյթները ժողովրդի մէջ

ուժ են պաշտպանում՝ նրան այն ճշմարտությունը բարոզելուց էլ երկար ժամանակ չեղող, որին չեն կարող համաձայնել այս սովորույթները։ Երկար ժամանակ բերնե բերան են անցնում աստուածների պատմությունները, որոնք ոչինչ հանուր կապ չունեն այս աստուածների բնույթի հետ, ինչպէս որ հատկանում է նոր վարդապետությունը, և սա մատնացույց է անում մի այնպիսի էպոխայ (эпоха), երբ աստուածությունից այնքան շատ բան չէր սպասվում։ Լանգլ «Առասպել, ծիսակատարություն ու կրօն» գրուածքի մէջ կարծացողը կգտնի նիւթի մի գեղեցիկ հաւաքածու, որ ցոյց է տալիս թէ ինչպէս հին կրօնի ժողովրդական տարրերը շարունակ ապրում են նոր կրօնի մէջ, թէպէտ և նորանում բոլորովին անտեղի լինելին։ Չկայ ոչ մի մեծ կրօն, որին չյարմարվէր այս աստուածությունը։

Իսկ եթէ մեծ կրօններից իւրաքանչիւրը հիմնվում է այն սկզբնական կրօնի վրայ, որ մի ժամանակ իշխելիս է եղել մի որոշ երկրում՝ ապա ուրեմն, ըստ երևոյթին, մեծ կրօնները հասկանալու համար մենք պէտք է ուսումնասիրենք այն նախնական կրօնական հասկացողությունները, որոնց փոխարինելու է եկած ապագայ մեծ կրօններից իւրաքանչիւրը։ Հեշտ չէր լինի առանձին, խմբերի բաժանելով՝ ուսումնասիրել վայրենիների հաւատալիքները, որոնք նախընթաց են եղել տաս կամ տասերկու մեծ կրօններից իւրաքանչիւրին։ Բայց ինչպէս կտեսնենք, մենք սրա կարիքը ունենալու չենք։ Վայրենիների կրօնների միջև ընդհանրական մեծ նմանություն կայ, և մենք կարող ենք համարձակ խոսել ոչ թէ նախնական ժողովուրդների կրօնների, այլ կրօնի մասին։ Հետևեալ գլխում փորձ կանենք նկարագրելու այս կրօնը։ Սակայն մենք կարող ենք նայն իսկ այստեղ ասել որ յայտնի կողմերը եթէ ոչ միշտ, ապա սովորաբար հանդիպում են նախնական կրօնի մէջ, և որ այս կողմերը գործնական նպատակների համար՝ կարող են համարվել նախնական աշխարհի կրօնը, որ ամեն տեղ նախընթաց է եղած կրօնական մեծ սիստեմներին։ Սա, այնպէս ասած,

մի աստառ է, որ ծածկել է ողջ նախնական աշխարհը, և այս աստառից, հսկայական ծառերի պէս, աճել են մեծ կրօնները, որոնք ստանում էին ու ստանում են իրանց սնունդը նրանից և չեն կարող մերժել այդ։ Մեծ կրօնները իրանց հիմնական վարդապետություններից մի քանիսի մէջ զարմանալի նմանություն են ցոյց տալիս։ Հինաստանն ու Եգիպտոսը նման են միմեանց յայտնի վարդապետությունների կողմից, որ մենք գտնում ենք և հնդկների կրօնի մէջ, միևնոյն վարդապետությունները հանդիպում են թէ արխական թէ սեմիտ կրօնների միջև։ Եթէ այս իսկ վարդապետությունները գտնվեն վայրենիների կրօնների մէջ՝ այն ժամանակ կունենք հարց կծագի, արդեօք բոլոր մեծ կրօնները այս ապրիւրից են փոխ առել ու զարդացել, կամ գուցէ այս իրողությունը կարելի լինէր տալ որևէ այլ բացատրություն։ Անկարելի է, որ մենք չենք կարող առաջ դնել մեր առարկան ուսումնասիրելու միջոցին, մինչև որ չկազմենք մեզ համար մի հանուր հասկացողություն վայրենիների կրօնի մասին և նրա վերաբերմամբ չգանք որոշ եզրակացությունների։

Իբրև այս առարկայի առաջաբան՝ հարկաւոր է մի քանի խօսք ասել *նախնական ժողովուրդների հոգևոր սովորույթների* մասին։ Մենք չենք կարող յոյս դնել այս ժողովուրդների մասին հասկանալու վրայ, եթէ չհասկանանք թէ նրանք ինչպէս են հասել նմանօրինակ մտքերին, ինչպէս են ընդհանացել մտածելուն։ Վայրենու մասին մենք կարող ենք ասել, որ բոլորովին նման է մի երեխայի, որ դեռևս չի սովորել կարդին մտածել, կանոնաւորապէս ճանաչել իրերը։ Նա մտաւորապէս անում է ամենատեսակ փորձեր, ընկնում է ամենատեսակ մոլորությունների ու վարանումների մէջ. և եթէ դրանցից ազատվելու համար՝ երեխային հարկաւոր են տարիներ, ապա վայրենուն միևնոյն նպատակի համար հարկաւոր են հազարամեակներ։ Նա չգիտէ գոնեպան առարկաների, իր և սորնագոյն կենդանիների կամ կենդանու կամ գէշի միջև

եղած տարբերութիւնը։ Նա չգիտէ, թէ առարկաները իրանից
ինչ հեռաւորութեան վրայ են գտնւում, չգիտէ թէ ինչն է
նրանց շարժում ու տիպում ներգործել, չգիտէ ինչու արևն ու
լուսինը անցնում են երկինքը ծայրէ ծայր, ինչու է փչում
քամին։ Նա չի կարող ասել՝ ինչու առարկաները այս կամ
այն արտաքին տեսքն ունին, ինչու, օրինակ ճաղարը պոչ
չունի, ինչու երկինքը առաւօտները կարմրած է լինում, ին-
չու մի քանի քար մարդու ձև ունին։ Նա ձգտում է պատճառ
այս բոլորը և շարունակ հարցեր է տալիս իրան, և այդ հար-
ցեր տալու միջոցին բաւականանում է համարեա իւրաքանչիւր
պատասխանով, ընդունում է ձեռքն ընկած առաջին բացա-
տրութիւնը. և այն ժամանակ, երբ երեխան բաւական չուտ
կըմբռնէր, որ իրան տրված է սուտ բացատրութիւն՝ վայրե-
նին այնքան տգետ է, որ չէ կարողանում հասկանալ ամե-
նաանմիտ բացատրութեան սուտութիւնը, լրջութեամբ ընդու-
նում է բացատրութիւնը և շարունակ օգտվում է նրանից։
Նրա հասկացողութիւնների մէջ ոչինչ ամբողջութիւն չկայ և
ամբողջութեան այս բացակայութիւնը չէ չնորհում նրան։ Նա
առարկաները խմբերի չէ բաժանում՝ դասերի ու կարգերի
համեմատ, այլ իւրաքանչիւր առարկայ հետազօտում է ինքն
րստ ինքեան, այն էլ՝ ինչպէս պատահի, կապ չպահպանելով
նրա և միւս առարկաների միջև։ Նա հասկացողութիւն չունի
այն բանի մասին, թէ ինչն է կարելի, ինչը անկա-
րելի, այս խօսքերը նրա համար նշանակութիւն էլ չունին,
քանի որ նա չէ ըմբռնել երևոյթները կատարող ոչինչ
օրէնքներ։ Այսպիսով նրա երևակայութիւնը ոչինչ բանով չէ
զսպված. նա հէնց շարունակ հանդիպում է այլևայլ օտարո-
տի տեսութիւնների և նրանց ստուգելու համար քննադատա-
կան ընդունակութիւն չունենալով՝ կրկնում է այդ տեսութիւն-
ները և հաւատում նրանց։ Երեխայական հէքեաթները, որոնց
մէջ ոչինչ անկարելի բան չկայ, որոնց մէջ մարդը կարող է
այցելել արևին ու քամիներին իրանց բնակարաններում, որոնց

մէջ կենդանիները խօսում են մարդկային լեզուով, իսկ վհուկը
կամ կախարդ կինը պիտի ամեն բան, ինչ որ պատահում է
աշխարհումս, և երևակը շրջում է հարկաւոր բոլէին, որոց
մէջ իմաստառում են ոչխարները և ինչ ուզէր՝ կարող է դառնալ, իսկ
հերոսը պէսպէս փորձութիւններ է տանում՝ անթիւ վտանգ-
ներից խուսափելու համար,—այս բոլորը վայրենու աչքում ան-
պատճառ, չհաւատալու զրոյցներ չեն, այլ բոլորովին իրական
ճշմարտութիւն և լուրջ գործ։ Վայրենիների կեանքին տե-
ղեակ մարդիկ ասում են, որ նա ապրում է առասպելների
տեսիլքով շրջանում,—մի այնպիսի շրջանում, երբ կախար-
դական հէքեաթներում պատմվող երևոյթները հանուր հաւատ
են առաջ բերում և համարվում մի հանուր փորձի արդիւնք,
այնպէս որ եթէ հէքեաթին տրված է իրան տագ եկող մի ձի,
—նա ապրում է և նրան հաւատում են իբրև մի այնպիսի
ճշմարիտ պատմուածքի, որ իրաւ եղել է։

Մենք պէտք է առանձնապէս ուշք դարձնենք վայրենու
երևակայութեան մի կողմի վրայ։ Վայրենին բոլոր առարկա-
ները *շնչաւոր* է համարում, ընդունելով որ նրանք էլ ապրում
են նոյնպիսի կեանքով, ինչպէս և ինքը։ Իր սեփական կեան-
քի մասին նա մի առանձին բարձր մտապատկեր չունի և չէ
կարողանում հասկանալ, ինչպէս հարկն է, թէ մինչև որ աս-
տիճան խիստ է որոշվում իրան յատուկ հոգևոր աշխարհը
այն ամէն բանից, ինչ որ իրան շրջապատում է. նա կարծում
է թէ միւս էակները նման են իրան, և ոչ միայն կենդանի-
ները, այլ և բոյսերը, ամեն բան, ինչպէս շարժվում է ու ան-
շարժ է, մինչ անգամ ժայռերն ու բարերը։ Նա ինքը ապրում
է և կարծում է թէ իր շուրջը եղած ամէն բան էլ ապրում
է։ Նա երևակայում է որ իրան շրջապատող ամէն բան նման
է իրան, ունի հէնց նոյնպիսի զգացումներ ու էրբեր, նոյնպէս
գործում է, և, եթէ նրան ասում են թէ առարկաներն էլ են
խօսում միմեանց հետ՝ ապա դա անհաւատալի չէ թվում նրան։
Այսպէս, ուրեմն, վայրենին ապրում է հասկացողութիւնների

անսահման խառնամիդրուժների աշխարհում, որտեղ ո՛ օրէնքներ կան, ո՛չ իրերի դասաւորութիւններ, չկան միջոցներ ո՛չ ապագան կանխակելու, ո՛չ նրանց ազդակութիւն տալու, որտեղ երևակայութեան հնարած ամէն մի բանի նա կարող է հաւատալ։ Վայրենիների հոգևոր աշխարհը համեմատել են ողջ աշխարհի գառնուցանների հետ, որ (աշխարհը) փոխարկվելը լուսնում է դարձել։ Սակայն մենք պիտում ենք այն աշխարհը՝ առանց սարսափի, պիտենալով որ դուրկ չէ բանականութիւնից, այլ որ նրանում բանականութիւնը դեռևս ջանք է դրած գնում մանկու իր իրաւունքների մէջ։ Այս դրութեանը անհրաժեշտ է պիմանալ։ Դա մասամբ բուն բնական մի փորձ է, որ անկու է իւրաքանչիւր երեխայ, մի փորձ, աստիճանաբար աշխարհածանօթութիւն է ձեռք բերվում։

Այս համաշխարհային տեսանելի խառնափնդորման մէջ այսուամենայնիւ կայ մի որոշ ամբողջութիւն։ Կարելի կլինէր ապասել որ վայրենու մտածողութեան եղանակները աշխարհիս այլևայլ մասներում ներդործելով միմեանցից անկախ՝ հետևանքը այն կլինի, որ կղարթեցնի անսահման քանակութեամբ յիմար ու սէտպէս հայացքներ բնութեան, իրերի և մարդուս այն դերի մասին, որ նա ունի տիեզերքում։ Սակայն մենք այս չենք տեսնում։ Անա թէ ինչ է ասում Լանգ ողջ աշխարհում միևնոյն գրոյցների տարածվելու մասին. «Վայրենիների հոգեկան վիճակի միատեսակ լինելը և միևնոյն երևոյթները բացատրելու համար՝ միատեսակ հոգեկան ուժերի բացատրութիւնը նրանից է առաջ գալիս, որ շատ առասպելական մտապատկեր համաշխարհային տարածականութիւն է ունենում, և ոչ թէ այդ առասպելները միմեանցից առնված և ուրիշին հատորդված լինելուց, ո՛չ էլ նրանից, որ մարդկութիւնը միութիւն է ունեցել»։ Տայլօր հաստատում է, որ երևակայութեան՝ կանոնաւորապէս կրկնվող և ողջ աշխարհում տարածված առասպելները մատնացոյց են անում մարդկային երևակայութեան կանոնաւորութիւնն ու ամբողջութիւնը։ Ինչ իր՝ «Անքաղաքակիրթ ժողովուրդների կրօնները» (Révill. «Religions des peuples non—civilisés») անունով դրքի մէջ նկատում է որ վայրենիների կրօնների բնոյթը ամէն տեղ նոյնն է, և որ լոկ ձևերն են փոխվում։

ԿՐՕՆԸ ԸՍՏ ԻՆՔԵԱՆ ՎԱՅՐԵՆԻՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԵՓՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՄԷԿՆ Է։ Ամենքը համաձայն են, որ կրօնը՝ աստուածներին, հաւատան ու նրանց երկրպագելը յատուկ են վայրենի դրութեան մէջ գտնվող մարդերին. անկրօն ցեղերի մասին մի քանի ուղղութիւնների պատմածները կամ թիւրիմացութիւններ են կամ անբաւարար են համարվում խախտելու այն համաձայնութիւնը, թէ կրօնը մի այնպիսի յատկութիւն է, որ յատուկ է վայրենի դրութեանը։

Սակայն ինչպէս է մուտք գործել կրօնը վայրենիների մէջ։ Ի՞նչպէս է պատահել որ մտածողութեան այս եղանակը տարածվել է ամէն տեղ այնպիսի մարդերի միջև, որոնք այն պէս շատ են մօտ մարդկային ամենաստոր մակերեսին, և զուրկ են այն ամէն բանից, ինչ որ ձեռք է բերված ապագայում։

Սա վերագրվում էր այն բանին, որ մարդը սկզբից կրօնի տէր է եղած, ինչպէս մի *բնածին* բանի, որ նա իր մարում պահել էր արդէն մի պատրաստ հասկացողութիւն այն բանի մասին, թէ ինչ պէտք էր անել այդ ուղղութեամբ և ինչպէս պէտք էր անել։ Իրաւ, չի կարելի չխոստովանել որ մարդը առաջնորդվելիս է եղել նախքին բնազդով. բայց այս բնազդով նա պարտական չէր մարդկային բնութեան դլխաւոր յատկութիւններից դուրս գտնվող ոչնչ առանձին ուժի, այլ՝ նոյն խոկ մարդկային օգու ուղղութեանը։ Մենք չենք կարող մանել այն փիլիսոփայական հարցի քննութեան մէջ, թէ ինչով է պայմանաւորված կրօնի ծագումը մարդու հոգու մէջ։ Ըստ երևոյթին՝ այսպիսի մի անհրաժեշտութիւն է հոգեբանական անհրաժեշտութիւնը։ Մարդը իր գոյութեան բոլոր աստիճանների վրայ տեսել է որ իրանից դուրս գտնված և իր ղգացումների ու ցանկութիւնների աշխարհները կռվում են միմեանց դէմ։ Այդ

նրանում ապրում է և այն համոզումը, որ այս երկու աշխարհները որոշ կերպով կարող են նորոգաշնակվել միմիանց հետ, և որ կայ մի այնպիսի ուժ, որ կարող է այս երկու անհամաձայն կատարելությունների իրարանցման մեջ, որի շնորհիւ նոյնացնելով իրան նրա հետ՝ նա նոյնպէս կարող է խոյս տալ այս երկնամելիքից։ Եթէ այս այսպէս է, այն ժամանակ բարձրագոյն զօրութիւն որոնելու այս կարիքը պէտք է առաջ գար այն ժամանակներից, երբ գարնել է մարդկային վիճակութիւնը։ Վայրենին իհարկէ միշտ հակասութիւն էր տեսնում այն բանի միջև, ինչ որ տալիս էր նրան կեանքը, այսինքն՝ ձգտումներով ու ծրագիրներով (պլաններով) լի ներքին մարդու և արտաքին բնութեան միջև, որ մերժում էր կատարեալ նրա ցանկութիւնները և բանդում էր նրա ծրագիրները,—այն բնութեան, որի առաջ նա իրան այնպէս թոյլ ու անօգնական էր զգում։ Եւ եթէ նա կամենում էր ապրել արքան և է տանել կերպով, նրանում ակամայ առաջ էր գալիս մի հատատ այնպիսի բանի, որ կապ ունէր թէ արտաքին ու թէ իր սրտի աշխարհի հետ, հատատ մի էակի, որ կարեկցում էր նրա ցանկութիւններին և կարող էր նրանց իրագործել արտաքին կեանքում։

Ողջ նախնական աշխարհը այսպիսի մի հատատ էր դառնում։ Սա առաջին ու ամենաէական նմանութիւնն է այն աստիճանի վրայ գտնվող մարդկերի մտածութեան մէջ, որի վրայով մի անգամ անցել է իւրաքանչիւր ժողովուրդ. բոլոր մարդիկ այս աստիճանի վրայ հատատում են աստուածներին։ Վայրենիների կեանքի այս կողմին մենք չենք պատայ կրօն անունը տալ, թէպէտ և վայրենին դիմելիս լինէր իր աստուածներին ատոր ու նիւթական կարիքներից դրդված, թէպէտ և նրա աստուածութիւնը մի այնպիսի աստուածութիւն լինէր, որ կարողանար յարուցանել մեզանում յոկ յարգանքի հակառակ զգացումներ, թէպէտ վայրենու՝ իր աստծու հետ ունեցած յարաբերութիւնը մեր աչքում մի շատ անարժան

բան լինէր կամ թէպէտ նա ձգտելիս լինէր խաղաղեցնել այն բազմաթիւ ոգիները, որոնք նրա կարծիքով թափառում էին իր շուրջը, և գեռևս չհամարձակվէր որոշ յարաբերութիւնների մէջ մտնել մի էակի հետ, որին նա աստուածութիւն է համարում։ Որտեղ իր անօգնականութեան գիտակցութիւնը ստիպում է մարդուն յարաբերութիւնների մէջ մտնել բարձրագոյն զօրութեան հետ՝ այնտեղ մեր հայեցողութեամբ առաջ է գալիս կրօնը։ Եւ թէ այս երեւոյթը հանուր է վայրենի դրութեան մէջ գտնված բոլոր մարդերին, ապա կրօնը յատուկ է բոլոր ժողովուրդների նախնիներին. կարելի չեղաւ կրօն հնարել այն ժամանակ, երբ քուրմեր լոյս ընկան ու կամեցան նրան գործիք շինել՝ իրանց նպատակներին հասնելու համար. այս կամ այն քուրմերի երևան գալուց շատ առաջ կար կրօնը, նա մի ժառանգութիւն է, որ մնացել է ողջ մարդկութեանը այն ժամանակներից, երբ մարդու միտքը առաջին ճիգն էր արել աշխարհը ճանաչելու համար։

III ԳԼՈՒԽ

ԵՐԿՐԱԳՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

Այժմ մենք պէտք է փորձենք առաջ բերել վայրենիների կրօնի ամենագլխաւոր կողմերը։ Այս փորձը շատ հեշտ փորձ չէ, որովհետև վայրենիների կրօնը՝ պէսպէս ու զարմանալի բոսեր պարունակող մի ահագին թաւ անտառ է։ Այս կրօնը հանդամանօրէն նկարագրված է մեծ գրքերում, բայց եթէ մենք կամենանք համառօտակի ամփոփել՝ այն ժամանակ մեզ կարող են ասել, թէ բաց ենք թողնում էական կողմերը։ Վայրենիներից ոչ ոք չունի մի այնպիսի բան, որին կարելի լինի սիստեմ անունը տալ, և վայրենիների այս և այլ խմբերը նման չեն միմիանց։ Մենք առաջիկայ նպատակի համար մենք պէտք է վայրենիներին վերագրենք այնպիսի ցեղեր, որոնք մարդ-

կային զարգացման սանդուխքի վրայ բռնում են տարբեր աստիճաններ, և աշխարհագրական ամենատեսակ պայմաններում՝ սառն ու տաք կլիմայում բնակվող ցեղեր, կոպիտ ու նրբացած ցեղեր. և, իհարկէ, այս բոլոր ցեղերը կունենան պէսպէս հատկացողութիւններ ու սէտքեր, ուստի և՝ այլևայլ կրօններ։ Այնպիսի գրքեր կարդալուց յետոյ, ինչպիսիք են Փրէյզերի «Ոսկի ճնտը» կամ Վայցի ու Գերլանտի «Բնական ժողովուրդների մարդաբանութիւնը՝» հակվում ենք դէպի այն համոզումը, թէ վայրենիների կրօնն համառօտակի դուրս բերելը մի անյուսալի ինդիր է։

Ցայսօրի նիւթերի հաւաքածուն, որտեղ առաջ են բերվում նախնական կրօնի այլևայլ կողմերը՝ ուսումնասիրողի համար մի այնպիսի ձեռնարկ է, որի համար չի կարելի չնորհակալ լինել, ինչպէս հարկն է։ Խօսելով նրա մասին մենք նկատի չունենք վայրենիների կրօնը իր բոլոր մանրամասնութիւններով, այլ միայն նրա այն կողմերը, որոնք զարգացել ու պահպանվել են աւելի վսեմ կրօնների մէջ։ Ցիշելով այն ինչ որ ասվեց վայրենիների մտքի միակերպութեան մասին՝ իր ձևերի պէսպիսութեան մէջ, և ուշք դարձնելով այդ մտքի այն կողմերի վրայ, որոնք կենսական են թվում, բայց ոչ այն բանի վրայ, ինչ որ սոսկ հարցասիրական ու օտարօտի են թվում, մենք էարող ենք յոյս ունենալ, որ մեր ինդիրը յուծվելու է աջող կերպով։ Այս կլիսում հարց կառնք մեզ թէ վայրենիները ինչպիսի էակներ են պաշտում։ Մենք կտեսնենք որ վայրենիների աստուածութիւնները բաժանվում են մի քանի դասերի. և օգտակար կլինի մատնացոյց անել մի քանի մեծ վէճեր, որոնք յարուցվել են այն հարցի առիթով, թէ մարդիկ աստուածութիւնների այդ դասերից առաջ արին էին երկրպագում։ Մարդերի պաշտման առարկաները բազմաթիվութեան տարբեր աստիճանների վրայ կարող են բաժանվել չորս դասակարգի, այն է՝

1) Բնութեան երևոյթներ՝ ա) խաչոր և բ) մանր երևոյթներ։

2) Նախնիների ոգիները և այլ ոգիները։

3) Առարկաներ, որոնց վերաբերմամբ ենթադրվում է, թէ մէջները ոգիներ են բնակվում (Ֆէտիշների երկրպագութիւն)։

4) Բարձրագոյն էակ։

1) ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ։ Գժվար չէ հասկանալը, թէ ինչու նախնական մարդը դիմում էր բնութեան մեծ տարրերին, իբրև այնպիսի էակների, որոնք կարող են օգնել իրան, և որոնց հետ այս պատճառով նա պարտաւոր է յարաբերութիւններ հաստատել։ Ո՛րքան մարդիկ պակաս են բազաբակրթված, որքան նրանք պակաս են պաշտպանված վատ եղանակի դէմ, այնքան նրանց գոյութիւնն ու բարեկեցութիւնը կախում ունի արևի, քամիների ու անձրևի ներգործութիւնից։ Եթէ, նախնական մարդ ընդունակութիւնների համաձայն՝ վայրենին այս էակները իրան պատկերացնում է իբրև կենդանի էակներ, ինչպէս ինքն է, և մի զգացումներով ու ցանկութիւններով իր սեփական զգացումների ու ցանկութիւնների պէս՝ այն ժամանակ նա անպատճառ կհամոզվի յարաբերութեան մէջ մտնել նրանց հետ։ Այդպիսի յարաբերութիւնների համար բաւական է այն պարզ համոզումը, թէ դրանք կենդանի էակներ են, որոնք ունեն նմանապիսի զգացումներ, ինչպիսին և՝ ինքը։ Ուսելիքի ու տարութեան պէտք ունենալով՝ նա սկսում է մտածել այնպիսի էակների մասին, որոնք նրա համոզմամբ, այն պատճառով ուժ ունէին, որ տան իրան այս բարիքները, մտածում էր անձրևի մասին, որ ինչպէս ինքը նկատել էր, ոռոգում է հողին ածել, արևի մասին, որի ջերմութիւնը նրան լաւ յայտնի էր։ Փոթորիկը ներկայանում էր նրան իբրև մի այնպիսի ուժ, որ ընդունակ էր վերջ դնել երկարատև երաշտին. հողմերը կարող են կոտրատել ծառերը, դամաբեկնում են խոնաւ հողը, բերում են անձրև։ Ամենքի վրայ տարածվում է երկինքը, իսկ երկիրը ամեն բան պահպանում է ու արտադրում, նրանից է առաջ գալիս ամեն

կեանք։ Լուսինն էլ, ինչպէս և արեը, օգտակար ուժ է և մինչ անգամ մի քանի կլիմաներում աւելի բարիք է անում, քան արեը։ Կրակը անկասկած, կենդանի էակ է, որից շատ բան է կախված. միևնոյնը կարելի է ասել մեծ լճերի, ովկիանոսի մասին։ Ան՞ թէ ինչն է անուանում Ռիւվիլ բնաւորեան խոշոր ուժերը աստուածացնելը՝ զանազանելու համար մարդերը աստուածացնելուց, որի մասին շուտով խօսելու ենք։

Մենք չենք մանում առասպելարանութեան առարկան՝ այսինքն՝ չենք շօշափում ոչ այն անուններըը, որ մարդիկ շատ կանուխ էին սկսել տալ պաշտօղ բնական մեծ առարկաներին, ոչ այդ առարկաներին վերագրված բնոյթները, ոչ նրանց մասին եղած զրոյցները։ Առասպելներ ստեղծելու այս պրօցէսը ընկած է շատ կանուխ և առաջ է եկել ամէն տեղ։ Բայց ամենից առաջ պաշտում էր ինքը՝ կենդանի համարվող բնական էակը և ոչ ոքին կամ այն անձնաւորութիւնը, որ ենթադրվում էր թէ բնակում է նրա մէջ։ Մեծ կրօնների մէջ շատ բան կայ, որ վկայում է սրա մասին։ Լուսնեմագը իսկապէս երկինքն է, յունական Հելիոս աստուածը՝ իսկապէս արեը, իսկ Սէլէնա աստուածուհին՝ իսկապէս լուսինը։ Հինաստանում մինչև հիմա պաշտում է ինքը երկինքը։ Վեդական աստուածները ինչպէս կտեսնենք, սկզբում տարրեր և նոյն իսկ բնաւեան երևոյթներ էին։ Պարելի է վայրենիների կեանքից էլ բերել օրինակներ, որոնք հաստատում են իրերի այս սկզբնական դրութիւնը, թէպէտ առասպելաբանութիւնը համարեա ամէն տեղ խառնամիգորում է առաջ բերել նրա մէջ։ Մինկօպների երկրագործում են արեին, ինչպէս մի բարերար աստծու, և լուսնին, ինչպէս աւելի սուր աստուածուհեան։ Նապէսների համար արեը ներկայանում է իրրև մի բարձրագոյն աստուածութիւն. հիւսիսային ամերիկացիների ցեղերի մեծ մասի գլխաւոր աստուածութիւնը երկինքն է՝ նրա տարածութեան մէջ փչող բաւու հետ միասին, այն, որ Էսկիմոսը անուանում է «մեծ ոգի» կամ փչում։ Շանկիները միևնոյն ժամանակ կո-

չում էին անուն արեին ու լուսնին, իրրև աթաշի։ Որոշ կերմանացիների գլխաւոր աստուածութիւններից մէկն էր։ Մարդակերը ամեն առաւօտ—երեկոյ երկրպագում է արեին ու ասում. «Երբ դու ծագում ես, ես էլ եմ վեր կենում. երբ դու մայր ես մտնում, ես էլ գնում եմ հանգստանալու»։ Օբրանների աշքում կրակը մի աստուածային էակ է, նրանք հարկաւոր են համարում պահպանել այն և թոյլ չտալ իրանից, որ նրա հետ վարվեն իրանց ուզածի պէս։ Աչխարհի իւրաքանչիւր կողմում երկիրը երբեմն համարվում էր մի մեծ աստուածութիւն, որին մարդիկ իր (երկիր) էին անուանում և նրա պատուին կատարում էին յայտնի ծէսեր։ Էսքիլէսի «Պրոմէթէոսի» մէջ հերոսը այսպէս է դիմում այն էակներին, որոնց հին սերունդի աստուածներ է համարում և որոնցից ապաստում է, որ իր հետ միասին յուզվելու են Զևսի միջամտութեան դէմ.

Քեզ, երկնային եթեր, ձեզ, ո՛վ
Թեաւոր հոսքեր, գետեր ու երկիր,
Ընդհանուր նախամայր, և կոհակներ՝
Նման ծիծաղի՝ ալմուկ բազմաձայն,—
Ձեզ բոլորիդ, բոլորիդ վկայ եմ կանչում.
Տեսէք, թէ ինչեր է կրում աստուածն աստծուց...

ՊԱՇՏՄԱՆ ԻՐ ԲՆԱԿԱՆ ՄԱՍՆԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ հանդիսանում են գետերն ու ալբիւրները, ծառերն ու ծառաստանները, հացն ու պտուղները, ժայռերն ու բարերը, նոյնպէս և կենդանիները։ Այստեղ էլ մենք նկատի պէտք է ունենանք նախնական մանգու այն սովորութիւնը, որ բոլոր առարկաները համարում է հնջաւոր և իր պէս։ Այն մարդը, որ այսպէս էր վերաբերվում առարկաներին՝ պէտք չունէր ենթադրելու թէ ալբիւրին այցելում է յատկաժամարոը, իսկ կաղնու մէջ բնակում է անտառային յատկաժամարոը-անտառի ոգին (дріада), նրա համար, որ պատ թէ ալբիւրը կամ կաղնին իրաւունք ունեն իր վրայ, և նրանց բարեհաճութիւնը ձեռք բերելու համար՝

զոհեր բերի նրանց։ Նեղոսն ու Գանգէսը այն պատճառով չէին դարձել սրբազան գետեր, որ նրանց յարմարեցված էր իրանց ոգու նման մի առասպելաբանական էակ, նրանք արդէն սրբազան էակներ էին։ Իւրաքանչիւր երկիր հարուստ է այնպիսի անուններով, որոնք արտայայտում են առաջին ժամանակների յարաբերութիւնը որոշ տեղերի՝ ինչպէս սրբավայրերի հետ. լեռը, ծառաստունկը, յայտնի ծառը, ժայռատ բարանձաւը, կանաչ բլուրը—այս բոլորը մի ժամանակ պաշտման առարկաներ են եղած։ Բրիտանիան լի է սրբազան ջրհորներով, որոնց երբեմն դիմում էին ազօթքներով ու զոհաբերութիւններով։ Չկայ մի այնպիսի կենդանի, որ մի ժամանակ պաշտած չլինէր։ Նախնական կեանքի մի բնորոշ գիծը նոյնպէս բնութեանը երկրպագելն է ոչ թէ առանձին առարկաների, այլ նրա կենդանի պրօցէսների մէջ։ Այն բազմաթիւ հարցասիրական ձէսերի միջոցով, որոնցից մի քանիսը դեռևս պահպանվել են տեղական սովորոյթների մէջ, նախնական մարդը յարաբերութեան մէջ է եկել մաած բնութեան հետ նրա աճման, անկման և վերակենդանութեան շրջաններում։ Նա խաղկցում ու նմանվում էր նրան և այսպիսով աշխատում էր ապահովել իրան նրա բարերարութիւններով, որոնք, ինչպէս նա տեսնում էր, շահագրգռում էին մի այնպիսի ուժով, որը նա ճանաչել էր նրա պրօցէսների մէջ և ընդունակ էր համարում օգնելու իրան։

2) ՆԵԽԵԻՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ։ Գրան հետևում է մի բոլորովին այլ տեսակ էակների խումբ։ Գանելով արտաքին աշխարհում մի շարք այնպիսի առարկաներ, որոնց մարդը կարող էր իրան ստուգաբանութիւններ չլինել՝ նա իր ընտանեկան կեանքում հանդիպում էր բոլորովին այլ տեսակ էակների, որոնց մասին ոչինչ չէր կարողանում իմանալ արտաքին աշխարհից։ Մեռած նախնիների պաշտելը հին ժամանակ տարածված էր համարեա ամէն տեղ և պատահում է վայրենիների մեծ մասի մէջ։ Զարգացման տարբեր աստիճա-

նի վրայ մարդը լիովին չէ հասկանում մահուանն անխուսափելիութիւնը։ Նա՝ մարդը պատկերացնում է իրրև բան, մտածելով որ բնաւ ժամանակին էլ ոչին բոլորովին թողնում է մարմինը և անցնում մեծ-մեծ տարածութիւններ, իսկ ուղևորութիւնը վերջացնելուց յետոյ նորից վերադառնում մարմնիր։ Տեսիլքները նրա աչքում նոյն կարգի երևոյթներ են։ Տեսնելով բարեկամին, որ, ինչպէս նա յետոյ իմանալու է, այդ ժամանակ հեռու էր՝ կարծում է բարեկամի ոգին այցելել է իրան։ Այսպէս է ծագում նրա մտքում այն ոգու հասկացողութիւնը, որ ընդունակ է ազատվելու մարմնից և գոյութիւն ունենալու նրանից դուրս։ Այս ոգին կրում է այլևայլ անուններ—սուներ, պատկեր, սկրտ, շունչ, հոգի։ Երբ ոգին հեռանում է մարմնից կամ բոլորովին, կամ կրկին վերադառնալու պայմանով, այն ժամանակ մարդը մեռնում է։ Բայց ոգին չէ մեռնում։ Նա դուրս է եկել և լինում է մի որևէ ուրիշ տեղ։ Չնին նայելով ոգին նման է մարմնին, բայց կազմված է մի նուրբ ու թեթև նիւթից, կարող է շարժվել ու անցնել ամենափոքրիկ բացուածքներովը, հանել անախորժ ձայներ ու այլևայլ կերպերով յայտնել մարդկերին իր ներկայութիւնը։ Հնագոյն ժամանակներում, անից հեռացած ոգու վրայ վայրենին նայում է, ինչպէս թշնամու, և ամեն տեսակ միջոցներ է գործ դնում, որպէսզի հնարաւորութիւն չտայ ոգուն վերադառնալու և մարդուն անհանգստացնելու (յարլէկներ, տեսիլքներ, աղուեսակապիկներ)։ Ցայտնի չէ, թէ երկիւղի զգացումից թէ ազատ դրդումներից սկսված՝ շատ բան անվում է մեռելների ոգիներին հաճոյանալու համար և նրանց բարեկեցութեանը նպաստելու այն տեսակետում, ուր նրանք հեռացել գնացել են։ Այդ մեռելներին թաղելու և այրելու միջոցին ենթադրվում է, որ իրանց նոր բնակարաններում նրանց կարող են հարկաւորվել այն բաները, ինչ որ նրանք գործ էին ածում այս աշխարհում, այս պատճառով այդ առարկաները էլ հետները են գնում, նրանց կողքին գետեղում են կերակուրն

ու զորձիքը,սպանում են սպասաւորներին, որոնց հոգիները դիրեզմանի միւս կողմն էլ ծառայելու են նրանց, մինչ ա-ն գամ կինը յօժար կամքով կամ բռնութեամբ հրաժարվում է իր երկրաւոր կեանքից՝ իր ամուսնուն ուղեկցելու համար։ Յետոյ մեռելների մօտ թերում են պարենիք ու խմելիք, դիմում են նրանց աղօթքներով, նրանց բնական անեծքում՝ նրանց չհաշտակելու համար պահվում են այլևայլ բաներ։

Նախնական աշխարհի հանուր հաւատալիքն այն էր, որ անձնաւորութիւնը շարունակում է իր գոյութիւնը մարմնի մահից յետոյ. իսկ սա անունդ էր մատակարարում կրօնին, որ ուելի էր տարածված հնումը, քան նրանից աստուածների երկրպագութիւնը։ Մի քանի դէպքերում, ճշմարիտ է, ոգին թերևս նամի էին համարում, և այն ժամանակ նրան երկրպագելը այնքան էլ հանուր կապ չունէր կրօնի հետ, որ ձգտում է յարաբերութեան մէջ լինել բարձրագոյն զօրութիւնների հետ, բայց խոյս չէ տալիս նրանցից։ Վայրենին յոյս չէ տածում նրանից բարիք ստանալու ոգուց և չէ աշխատում հոգորպակցութիւն ունենալ նրա հետ։ Սակայն շատ դէպքերում, հանապազ կեանքի շարունակութեանը գերեզմանի միւս կողմը՝ իշխում են ուրիշ զգացումներ. դէպի մեռած ազգականը տածվում է մի բնական սէր. նախնին հանդէս է գալիս իբրև ընտանիքի ներկայացուցիչ, և անձնաւորութիւնը պէտք է տորդրուի նրան մինչ անգամ մի որոշ աստիճանի գոհ բերի իրան. հանգուցեալի ոգին պահպանողն է ընտանեկան աւանդութեան, որ սրբազան պէտք լինի ապրողի համար։ Մինչ անգամ այն դէպքերում, երբ բուն երևոյթին սոսկ երկիւղ է յայտնվում, դարձեալ մինչև մի աստիճան նկրպործում են և՝ այս վերջին զգացումները։

ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՓԻՏԻՇՆԵՐԻՆ (ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ)։ Նախնական մարդիկ ունեն դարձեալ ուրիշ տեսակի աստուածութիւններ։ Մեր քննած բոլոր դէպքերում աստուածութիւնը որոշ մարով բարձր է կանգնած իր երկրպագուից։ Մարդը պաշտում է արևը, ոգին կամ կենդանին նրանց որևէ բարձր յատկութեան համար, որով նրանք նոյն իսկ իրան գերազանցում. նրանք որոշ հանգամանքում բարձր են իրանից։ Բայց մի քանի վայրենիների մէջ, գլխաւորապէս հարաւային Աֆրիկայում, կրօնի այս բնորոշ գիծը մասամբ անհետանում է, և առարկաները երկրպագութիւն են ստանում ոչ թէ անմիջապէս իրանց մէջ պարունակված յատկութիւնների համար, որոնք նրանց արժանի են անում պաշտելու, այլ այն ոգու համար, որ կապված է ենթադրվում յայտնի առարկայի հետ։ Վայրենին յարգում է քարերը, ծառերը, ոստերը, կեղևի փշուրները, արմատները, սերմը, թռչունի մպկիները, առաջները, մորթերը, փետուրները, մարդու ձեռքով շինված բաները, ամենատեսակ առարկաները և նայում է նրանց վրայ, ինչպէս իրանց մէջ ոգի պարունակող իրերի։ Ամէն բան, ինչ որ հատուածում է երևակայութեանը՝ վայրենին, ինչպէս մի անսովոր բան՝ դասում է այն առարկաների շարքը, որոնց մէջ իր կարծիքով ուրիշ այժ կայ ծածկված։ Այս այժը, կրկնում ենք, կապված չէ առարկայի բնական յատկութիւնների հետ, այլ երևան է գալիս առարկայի մէջ բուն դրած ոգու շնորհիւ որ սակայն, դարձեալ կարող է բոլորովին թողնել առարկան։ Ընտրելով այս աստուածութիւնը և ուղղելով նրան իր երկրպագութիւնը՝ մարդը կարող է վարվել նրա հետ, ինչպէս կամենայ։ Այսպիսի մի աստուածութեան նա սխրագործութիւններ է յատկացնում. բայց եթէ իր ցանկութիւնը չէ կատարվում՝ այն ժամանակ դէն է գցում աստուածութիւնը, ինչպէս մի անօգուտ բան, և դաղարում է նրան երկրպագելուց. նա յանդիմանութիւնների կրակ է թափում նրա գլխին և մինչ անգամ ծեծում է, որպէս զի ստիպի նրան աւելի լաւ ծառայել իրան։ Սա մի այնպիսի աստուածութիւն է, որ մարդու տրամադրութեան տակ է գտնվում, ծառայում է՝ նրա ցանկութիւնները կատարելու համար. մարդը պահում է սեփական աստուածներ՝ իր գի-

տաւորութիւնները գլուխ բերելու համար։

«Ֆէտիշիսմ» բառը, որով յայտնի է նմանօրինակ մի կուռ պօրտուգալական լեզուի ծնունդ է, նա դուրս է գալիս «feitiço» բառից, այսինքն շինծու, արուեստական. և այս անունը, որ կցվում է յատուկներին ու թալիսմաններին, որ այն ժամանակ կրում էին կալմոլիկները՝ XVIII-րդ դարի ծովագնացները յարմարեցրել են այն աստուածութիւններին, որոնց աստուածացրել էին նէգրները Աֆրիկայի արևմտեան եզերքում։ Դը—Բրօս՝ անցեալ տարի ֆրանսացի պետնականը գործածական արեց ֆէտիշիսմ բառը՝ վայրենի ժողովուրդների կրօնները ցոյց տալու համար։ Այս բառը առիթ դարձաւ մի խառնափնդորման առաջ գալու, որովհետև Կօնտ ու միւս գրողները սկսեցին ֆէտիշիսմ բառով հասկանալ երկնային մարմինների ու բնութեան մեծ երևոյթների երկրպագութիւնը։ Աւելի լաւ է սահմանափակել դրա նշանակութիւնը, ինչպէս արված է վերևը, և կցել այնպիսի առարկաների կուռքին, որոնց երկրպագում են ոչ թէ նրանց յատուկ ուժի կամ առաւելութիւնների համար, այլ այն պատճառով, որ նրանցից իւրաքանչիւրը ոգու բնակարան է համարվում։

Կարող է սա կրօն կոչվել։ Այս բառի բուն մտքով—ոչ։ Մենք պէտք է յիշենք, որ վայրենին պաշտում է ոչ թէ այս կամ այն առարկան, այլ՝ նրա հետ կապված ոգին. բայց սա էլ չի խանգարի մեզ սնդիկու, որ ֆէտիշների երկրպագուն աւելի կրօն որոնելու ետևից է ընկած, քան թէ կրօնի տէր է։

ԲԸՐԶՐԱԳՈՑՆ ԷՍԿԸ։ Պէտք է արդեօք ասել, որ աստուածութիւնների այս երեք դասակարգին հարկաւոր է աւելացնել դարձեալ մի դասակարգ, այն է, որ բացի բնութեան երևոյթներից ու ոգիներից՝ նախնական մարդը պաշտում էր նաև մի բարձրագոյն էակ։ Նախնական կրօնների մեծ մասի մէջ կայ մի գլխաւոր աստուածութիւն, որին ստորագրված են միւս բոլոր աստուածութիւնները։ Բայց եթէ մենք այս կրօնների բարձրագոյն աստուածներին սկսենք քննել մեկ-մեկ

միտից յետոյ, այն ժամանակ կտեսնենք, տեսնելով որ նրանք այնքան քիչ են նման, միմեանց որ պժուար թէ կարողանային ըստ ինքեան մի որոշ դասակարգութիւն լինել։ Նրանցից շատերը բնական աստուածներ են, որոնք աւելի երկար են ապրել, քան ուրիշ բնական աստուածութիւններ և դրաւում են մի առանձնացած գրութիւն։ Հիւսիսային—Ամերիկայի հնդիկները, ինչպէս տեսանք, երկրպագում են մեծ ոգի երկրին իր շնչառութեան հետ, որին սպասաւորում են արևը, լուսինն ու բնութեան երևոյթները։ Ուրիշ շատ դէպքերում բարձրագոյն աստուածութիւնը երկինքն է. շատ ժողովուրդներ իրրև բարձրագոյն աստուածութիւն՝ ընդունում են արևը։ Ֆիննների գլխաւոր աստուած Ուկկո երկնքի ու անձրևի աստուածն է։ Լիտվացիների Պէրկուն անունով աստուածը կապ ունի որոտման հետ։ Միւս կողմից՝ կան դէպքեր, երբ բարձրագոյն աստուածութիւնը բոլորովին տարբերվում է բնական աստուածութիւնից։ Մարդակերները պաշտում են արևն ու լուսինը և երկրպագում բնութեան ուրիշ մանների ոգիներին, բայց նրանք հետզհետէ են և այս բոլորից բարձր կանգնած բարի ոգուն։ Խաղաղ ովկիանոսի կղզիների բարձրագոյն էակը Նոր—Զէլանդիայում Տանգարոա է կոչվում, և նրա մասին խօսում են բնակչանցօրէն՝ իրրև անեղի ու արարչի մասին։ Այստեղ մենք կարող ենք նկատել, որ կայ քրիստոնեական ազդեցութիւն։ Ունկուլունկուլու—զուլուների Հին—Հատաքմալը, ըստ երևոյթին, նախապատճառի դեր է խաղում. բայց աւելի մօտիկից նայելով՝ կտեսնենք, որ դա մարդ է, առաջին մարդը, հանուր նախնին. իմացականութիւնը, ըստ երևոյթին, այս պատասխանից հետզ չէ գնում։ Հիւսիսային—Ամերիկայի ցեղերի մէջ հաղուագէպ երևոյթ չէ, իրրև բարձրագոյն աստուածութեան՝ հանդիպել սրեվ կենդանու՝ նապաստակի, մչկահատ կան կամ կախվող կապիկ կօայոտային։ Շատ յաճախ վայրենիների կրօնների մէջ կարելի է հանդիպել մի հետաքրքիր անորոշ աստուածութեան, որ միւսների վերաբերմամբ գտնվում է

յեան չարքերում, սակաւ է մասնակցում գործերի հանուր ընթացքին և քիչ երկրպագութիւն ստանում։ Նայելով վայրենիների բարձրագոյն էակներին՝ ինչպէս նրանք կան, բարձրագոյն էակի հաւատը չի կարող դուրս բերվել մեռածների ոգիներից ոչ մէկից, որոնց չնորհիւ առաջ են եկել միւս աստուածները։ Վերջը մենք կտեսնենք, թէ ինչպէս բազմաթիւ աստուածների միջից բնազդ առաջ է բշվում մէկը, իսկ մնացածները կորցնում են իրանց նշանակութիւնը։ Վայրենիների բարձրագոյն աստուածները, ըստ երևոյթին, մէկ ազբիւրից չեն առաջ եկել, այլ հասել են իրանց բարձր դիրքին շատ տարբեր աշխարհներից, որոնք խոնարհում են մարդկային մարի այն յատկութեանը, որով մարդ, մինչ անգամ հաւատալով շատ աստուածների՝ նրանցից մէկին առաջին տեղն է տալիս և բարձր է համարում միւսներից։

ԸՆԱՆ Ի՛ՆՉՊԻՍԻ ԸՍՏՈՒԱԾՆԵՐԻ ԷԻՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹ։ Եթէ նախնական մարդը պաշտել է բնութեան առարկաներն ու մեռած նախնիների կամ հերոսների ոգիները, և եթէ այժմ գոյութիւն ունեցող ժողովուրդներից ամեն մի յետ մնացածները, որոնք գտնվում են մարդկային կեանքի նոյն աստիճանի վրայ, որի վրայ գտնվում էին նախնական ժողովուրդները, իրանց աստուածներ են համարում արտաքին առարկաների մէջ բնակող ոգիներին,—ապա այս հաւատներից մէր պէտք է համարվի հիմնաւոր։ Պրօնի իւրաքանչիւր տեսակի մասին պնդում էին թէ իսկապէս այս տեսակն է միւսներից վաղ առաջ եկել։

1. ԱՄԵՆԻՑ ԸՆԱՆ ՖԷՏԻՇՆԵՐԻՆ ՊԱՀՑԵԼՆ Է ԸՆԱՆ ԵԿԵԼ։ Մինչև վերջին ժամանակները մարդիկ այն կարծիքին էին թէ ամենից առաջ սկսվել է ֆէտիշիզմը։ Սկզբում վայրենին սկսում էր պաշտել ծրէ պատահական առարկայ,—ինչպէս նկարագրեցինք,—յետոյ ընտրում էր աւելի բարձր, վեհ առարկաներ՝ ծառեր ու լեռներ, գետեր ու լճեր, իսկ յետոյ արեգն ու աստղերը։ Վերջապէս, նրա բարձրագոյն ֆէտիշը դարձաւ երկինքը, իսկ զարգացման մի փոքր աւելի բարձր

աստիճանի վրայ, երբ կարողացաւ ըմբռնել ոգիների գոյութիւնը՝ նա իր ֆէտիշը չինեց ոգին, և այդպիսով վերջ ի վերջոյ առաջ եկաւ միաստուածութիւնը։

Այս հայեացքը այն պատճառով է ճշմարտանման թվում, որ սա կրօնը սկսում է նրա յայտնի ձևերի տարրներից և այսպիսով գաղնում է կրօնի աստիճանական զարգացման մի ապացոյց։ Սակայն այս հայեացքը դրա հետ միասին առաջ է բերում շատ լուրջ տարակուսանքներ. որովհետև ինչու վայրենին իր համար աստուածութիւն կչինի ձեռնափայտը կամ քարը և կվերագրի նրանց գերբնական զօրութիւն։ Մի է բան ասել նրան աստուածութեան մասին, թէ նա պէտք է ձեռնափայտը աստուած անուանի, կամ գերբնական զօրութիւնների մասին, այնպէս որ նա կարողանայ հրաշքներ սպասել ձեռնափայտից։ Ձեռնափայտի մէջ չկայ մի այնպիսի բան, որ կարողանար այդպիսի մարդու ներշնչել, ուստի ամենևին հաւանական չէ, որ վայրենին իր համար այս կերպով աստուածութիւններ ստեղծէր, և որ այս կերպով առաջ գար հրաշալի զօրութիւնների հաւատը։ Աւելի շատ է հաւանական, թ հարկէ, որ նա առածու մասին ուրիշ կերպով է հասկացողութիւն ձեռք բերել և այդ հասկացողութիւնը յարմարեցրել է գործին իր թոյլ ըմբռնողութեամբ, քան թէ այն, որ աստուածութեան մասին ունեցած հասկացողութիւնը ամենից առաջ դուրս է բերված այնպիսի պահասաւոր ձևերից, իսկ յետոյ յարմարեցրած այս հասկացողութեանը աւելի սաղ եկող առարկաներին։ Պրօնն ու բաղաքակրթութիւնը առաջ են գնում ձեռք ձեռքի տված, և եթէ քաղաքակրթութիւնը կարող է ընդունել (աշքի ընկնող մարդաբաններն էլ են հաստատում, որ մի քանի աւստրալիական և արևմտեան ափրիկեան ցեղեր արտայայտում են իրանց կորցրած բարձր բաղաքակրթութեան նշաններ), ապա կրօնն էլ կարող իջնել աւելի ցած աստիճանի վրայ։ Մաոր աստիճանի զարգացման վրայ կանգնած ժողովուրդը կրօնական զգացմունքները կարող է առնել քաղաքա-

կրթված ժողովրդից և հասկանալ նրանց իր սեփական պարզամբ այլներին՝ սարսրացնել նրանց։ Իսկ հանուր առմամբ կրոնը այսուամենայնիւ կարող է առաջ գնալ, թէպէտ և յայտնի ժողովուրդների մէջ յետ գնալու շրջաններ էլ լինէին։ Թէ այս ու թէ միւս պատճառներով ներկայումս հետզհետէ աւելի է հաստատւում այն կարծիքը, թէ ֆէտիշիզմը չէր կարող կրօնի սկզբնական ձևը լինել, և որ կրօնի բարձրագոյն ասպիճանները չեն կարող առաջ եկած լինել այս կրօնից։ Այն ժողովուրդները, որոնց մէջ նկատւում է ֆէտիշիզմը, աչքի են ընկնում կրօնի այլասերման աչքերև նշաններով, իսկ այլասերումը երևում է նրանում, որ մեծ աստուածութիւնները կամ աստուածութիւնները տկարացել ու խամրացել են, և այսպիսով առաջ եկած դատարկութիւնը լցվել է մանր աստուածութիւններով ու ոգիներով։ Երկրպագութիւնը մեծ էակներից, ցեղի բնական աստուածներից, որոնց դեռևս հաւատում են անորոշ կերպով,—փոխանցվում է բազմաթիւ մանր էակների, և բարի աստուածութիւններից անցնում դէպի չարերը։

2. ԷՆ ՍԿԶԲՈՒՄ ԱՌԱՋ Է ԵԿԵԼ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԿԱՄ ՄԱՐԴԿԱՑԻՆԻ ՆՄԱՆ ՈԳԻՆԵՐԻ ԵԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ։ Ոգիների կուլտը արդեօք կրօնի սկզբնական ձևը չէ։ Այս կարծիքը հաստատելով պաշտպանում էին Հէրբերտ Սպենսէր ու Տայլոր։ Սպենսէրի ասելով՝ «Սկզբնական կրօնական ձևը՝ մեռած նախնիների գուշը չարժեին է»։ Հէց որ մարդիկ ընդունակ եղան այսպէս դատելու, վճռեցին որ այն կեանքը, որ նրանք նկատել էին կենդանիների ու բոյսերի մէջ, արևի, լուսնի, ու բնութեան միւս մասների մէջ, նրանից է առաջ գալիս, որ նրանց մէջ բնակում են մեռած մարդկերի հոգիները։ Խորին յարգանքով վերաբերվելով Սպենսէրի բացատրութեան այն դեղեցիկ եղանակին, որով նա նկարագրում է մարդկերի ընկերական հաւատալիքները ոգիների մասին՝ չի կարելի համաձայնել նրա այն հայեացքի հետ, որ նա ունի հին Հնդկաստանի կամ Յունաստանի աստուածների վերաբերմամբ, իբրև նախնիների պաշտածների վրայ։ Մենք ակամայ մի անհատատարմութիւն ենք տածում դէպի այն տեսութիւնը, իբր թէ Լուսնըմասը, Ինդրան, արևը, արբազան լեռը և բոլոր աստղերը անխտիր այն պատճառով են յարգվում, որ նրանցից իւրաքանչիւրը պարունակում է իր մէջ մարդկային ոգի. տեսնենք, ապայն, արդեօք մի այլ տեսութիւն աւելի հաստատակերպով չէ բացատրում այս աստուածներին։

Տայլոր էլ ամէն կրօն ոգիների կուլտից է դուրս բերում, բայց ուրիշ կերպով։ Նրան է պատկանում անիմիսմի աւելի հասկանալի սիստէմը, գոծ ածելով այս խօսքը ոգիների կուլտի մէջ աւելի նեղ մտքով։ Հիմնվելով ոգիների վարդապետութեան վրայ, որին նախնական մարդը հասել է վերև դոյդ տված ճանապարհով՝ Տայլոր ապացուցանում է, որ երբ արդէն առաջ եկաւ այս հասկացողութիւնը, ապա նա ուրիշ առարկաների էլ այնպէս է յարվում, ինչպէս մարդերին։ Մարդը, չկարողանալով իրան պարզ որոշել ուրիշ էակներից՝ հեշտ կարող է գալ այն եզրակացութեան, թէ այդ էակները նոյնպիսի հոգի ունին, ինչպիսին՝ ինքը. այսպիսով ենթադրվում է որ հոգին բնակում է բնութեան իւրաքանչիւր մասում, և ամէն բան, ինչ որ առաջ է գալիս բնութեան մէջ՝ բացատրվում է հոգիների ներգործութեամբ։ Այսպէս, Տայլորի ասելով՝ համոզում է առաջ եկել բնութեան հանուր շնչաւորութեան մէջ, որ բնագծում է նախնական միտքը։ «Ի՞նչպէս մարդկային մարմինը՝ նրանում բնակող ոգու կամ հոգու շնորհիւ կենդանի ու ներգործող էր համարվում, այնպէս էլ բնութեան բոլոր երևոյթները ուրիշ ոգիների գործ էին թվում»։ Այս աստիճանի վրայ հոգին ներկայանում է իբրև մի անհատական էութիւն, որ բնակում է մարմնի մէջ, նրա կեանքն ու գործունէութիւնը սերտ ունին միայն մարմնի հետ կապված, իսկ այստեղից հեշտ կարելի էր մի քայլ անել դէպի այն ոգիների հաւատը, որոնք կապված չեն ոչ մի մարմնի հետ։ Ոգի-

նները ազատ չարժվում են՝ պահապան հրեշտակների, դևերի, վհուկների ու ամենատեսակ էակների պես, որոնցով հին երևակայությունն չնորհիւ լի էր աշխարհը։

Մինչև հիմա քննել ենք ոգիների երեք դասակարգերը. նախնիների հոգիները, բնության կեանքի այլևայլ կողմերի հետ կապված ոգիները և անկախ գոյություն ունեցող ոգիները։ Կարող են արդեօք այս տեսությամբ բացատրված լինել բնական բարձր աստուածությունները այնպէս, ինչպէս մանր որդիները, որոնցով լի են բնության այլևայլ մասները։ Տայլօր այս հարցին դրական պատասխան է տալիս. նա յայտարարում է որ «Բարձրագոյն աստուածությունները բազմաստուածության մէջ մտնում են մարդկության անխմիման հանուր սիստէմի կազմը»։ Նա ընդունում է, որ թէ մեծ ու թէ փոքր աստուածները, քիչ բացատրությամբ, կան իրարանչիւր նախնական կրօնի սիստէմի մէջ։ Բայց նա ընդունում է որ նրանք գոյությամբ ու ծագմամբ միատեսակ չեն։ «Տարբերությունը ամենի դիրքի մէջ է քան էության»։ Մեծ աստուածները փոքր ոգիների մէջ նոյն դերն են խաղում, ինչ որ իշխանաւորները ու ու թագաւորները՝ մարդերի մէջ։ Արևը, երկինքը, աստղերը—կենդանի էակներ են, որովհետև նրանց մէջ կայ ոգի, ինչպէս մարդու մէջ՝ հոգի, ինչպէս և աղբիւրն ունի ոգի, որ բնակում է նրա մէջ։ Այսպիսով ոգիների վարդապետության մէջ տեսնում են իրարանչիւր նախնական կրօնի սկիզբը։ Սակայն, Տայլօր խոստովանում է, որ հնարաւորությունն չկայ՝ ձեռակերպելու այն պրօցէսը, որի օժանդակությամբ ոգիների վարդապետությունները առաջ է եկել մեծ աստուածների հաւատը։

Այս հայեացքի թուլությունը նրանում է, որ պարունակում է իր մէջ մի այսպիսի հերքում, թէ բնության մեծ ուժերին կարող էին երկրպագել այն մասնաւոր պրօցէսը վերջանալուց առաջ, որ մարդուն բերել էր հետևեալ համոզման, թէ այդ ուժերը ունեն հոգի ու ոգի։ Բայց ինչպէս էր նայում

այս ուժերի վրայ նախնական մարդը մինչև այս պրօցէսի վերջանալը։ Արդեօք նրանք հէնց այն տպաւորությունների պատճառով չէին նրան երկրպագության արժանի թվում, որ անում էին նրա վրայ այդպէս զգայումների վրայ։ Հարկաւոր էր արդեօք, որ նա առաջ ըմբռներ այն հատատը թէ նրանք այն պատճառով են հոգի կրում իրանց մէջ, որ ցանկանան նրանցով զուարճանալ ու հետները յարաբերության մէջ մտնել։

ԱՆԻՄԻՄ։ Այստեղ պէտք է նկատել, որ անխմիմ բառը կրօններ ուսումնասիրելիս աւելի յայն մտքով է գործ ածվում, քան Տայլօրի գրուածքի մէջ։ Յայտնի է որ շատ մեծ կրօններ առաջ են եկել ոգիների սկզբնական կուլտից և այդ ասպիճանից անցել են աստուածությունների երկրպագության։ Աստուածությունը ոգուց նրանով է տարբերվում, որ որոշ անձնական բնոյթ ունի, մինչդեռ ոգիները բուռ խրճան անորոշ, անճանաչելի մի խումբ են, նրանով, որ աստուածությունը ունի յայտնի որոշ երկրպագուներ, մինչդեռ ոգուն ծառայում են միայն նրանք, ովքեր կարիք ունեն նրա հետ յարաբերություն ունենալու. նրանով, հետևապէս, որ աստուածությունը կանոնաւոր կուլտ ունի, մինչդեռ ոգուն երկրպագում են միայն յայտնի դէպքերում և նրանով, որ աստուածությանը ծառայում են սիրոյ և հաւատարմության զգացումից, բայց ոչ երկիւղից, ինչպէս ծառայում են ոգիներին։ Ուրիշ գրողներ պնդում են, թէ կրօնը սկսում է այն ժամանակներից—բայց ոչ վաղ,—երբ լոյս են ընկնում աստուածությունները. իսկ մինչև այն իրրև անհասանելի էակների դիմելու ձևեր՝ ներկայանում են կախարդությունն ու երդվեցնելը (заклинаніе), և միայն աստուածների երևան գալու հետ գալիս է կուլտը, երբ պիտակցարար են ցանկանում յարաբերության մեջ մտնել այն էակների հետ, որոնք որոշ, կանոնաւոր յարաբերության մէջ են գտնվում մարդուս հետ։ Անխմիմ բառը ամենից լաւ է հատկացնում աստուածներին որպէս երկրպագու-

թիւնը։ Ուրոյն մարդկային հոգուն հատատութիւն է դուրս բերել, թէ չէ դուրս բերել նախնական մարդը իր ոգիների բազմութեան հատատը, որոնցով իրանց շրջապատված էին համարում,—յամենայն դէպս կատած չկայ, որ նա իրան շրջապատված էր համարում ոգիներով։ Այս մարդ անիմիսմը, անտարակոյս, գոնէ մեքանի մեծ կրօնների սկիզբն է։

3. Ի՛Ն ՍԿԻԶԲԸ ԸՌԱՋ Է ԵԿԵԼ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵՆՔ ԵՐԵՒՈՒԹԹՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ։ Ռէվիլ ենթադրում է որ առաջին աստուածները էին ծառերը, գետերը և ուրիշ դրանց նման էակներ, և որ բնութեան մեծ ուժերի պաշտումը յետոյ է տեղի ունեցել, ինչպէս նոյն սկզբունքի ընդարձակումը։ Մաքս Միւլլէր ըստ երևոյթին համաձայն է այս հայեացքի հետ, ասելով թէ մարդը կիսաշօշափելի առարկաները պաշտելուց, որոնք նրան ավել են կիսաստուածներ՝ անցել է դէպի անշօշափելի առարկաների պաշտումը, որոնք ավել են նրան աստուածներ՝ բառի խիստական իմաստով։ Գերմանացիները սովորաբար այն համոզման են, որ Էն սկզբում առաջ է եկե բնութեան մեծ երևոյթների երկրպագութիւնը և որ ծառն ու գետը յետոյ են սրբացել, երբ մարդիկ սկսել են նրանց վրայ նայել իբրև փորրիկ կենդանի էակների, որոնք նոյնպէս արժանի են երկրպագութեան, որքան և խոշորները։ Անգլիացի պիտնականները ենթադրում են, թէ սրբութիւնը այդ առարկաներին հազորդվել է, ասես թէ, ցածից. երբ մարդը սկսել է հատատալ ոգիներին, այն ժամանակ եզրակացել է, որ այս առարկաների մէջ էլ կան ոգիներ և սկսել է պաշտել նրանց մէջ բնակած ոգիներին։ Ըստ երևոյթին, այս (տեսակները) չեն դուրս գալիս միմեանց։ Ֆրանսացի պրոֆեսորը կարծում են, թէ բնութեան մանր երևոյթների երկրպագութիւնը առաջ է եկել ըստ ինքեան, որովհետև մարդն ինքը, լինելով կէս-կենդանի՝ կենդանիների վրայ նայում էր իբրև իր ախոյեաններին, ծառերին իբրև իր քաղցը յագեցնելու համար պատուղ բերողների և այլն. իսկ ոգիները կցուած էին այս էակներին այն ժամանակ, երբ յայտնվեց մարդի անիմիսատական մեծ չարժումը, որին այս պրոֆեսորը հատատում են և հարկէ, շատ վաղեմի շրջանում։

Է՛Ն ՍԿԶԲՈՒՄ ԸՌԱՋ Է ԵԿԵԼ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵԾ ԵՐԵՒՈՒԹԹՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ։ Վերջը մենք հասնում ենք այն աստուածների պաշտպարպին, որոնց մասին խոսել ենք սկզբումը—այն է՝ բնութեան ուժերին։ Շատ ականատես գրողներ հաստատում են, որ նրանց երկրպագելը իւրաքանչիւր կրօնի սկզբնական ձևն է։ Այս առարկայի վերաբերմամբ մենք առաջ կբերենք երկու ամենապլեատար մէօրիա (տեսութիւն) այն է՝ Մաքս Միւլլերինն ու Էդուարդ Հարտմանինը։

Մաքս Միւլլէր խիստ կարուկ կերպով է խոսում այն հայեացքի դէմ, թէ կրօնի սկզբնական ձևը փէտիշիսմն է եղել, և ենթադրում է, որ պատահական առարկաներ պաշտելը չէր կարող մի ժամանակ կրօնի համատարած աստիճանը լինել, ներկայացնելով ըստ ինքեան, սրա հակառակ, պարագլատական զարգացում և մի բոլորովին ոչ պատատատրական երեւոյթ։ Նա մեզ չէ ասում թէ ինչպիսի կրօն է եղել մարդկութեան սկզբնական կրօնը։ Այն դրատոր վատատակը, որի մէջ նա չփվում է այս հարցի հետ՝ վերաբերում է գլխատորապէս հնդկիների հատատին, որի սկզբնական աստիճանները նա համարում է կրօնի աճման տիպական ընթատանքնանները հանրատպէս։ Սակայն նա չէ ասում թէ արիականների այս կրօնը ինչ տեսակի կրօնից է առաջ եկել—որ ամենից լաւ պահպանվել է հնդկատանում, կամ թէ ինչպիսի կրօն էր այդ կրօնը վեսական օրհներգների հանդէս գալուց առաջ։ Սակայն մենք կարող ենք եզրակացնել, թէ նա սրա վերաբերմամբ ինչ կարծիքի է՝ նրա այն համատօտ չահնկան նկարագրից, որի մէջ նկարագրում է թէ ինչպէս է առաջ եկել մարդու հոգեբանական զարգացումը, որ արտայատվում է երկրպագելի առարկաների ընտրութեան և առարկայի մի դատակարգից միւսին անցնելու մէջ։ Սկզբում երևում են չօշա-

փիլի առարկաները, որոնց վերաբերմամբ սակայն Մաքս Միլլէր չէ ընդունում, որ մարդկութիւնը երբ և է պաշտած լինի նրանց իբրև մի ամբողջութիւն, այսինքն՝ այնպիսի առարկաներ, ինչպէս են՝ քարեր, պաղտակուրներ, ոսկրներ։ Երկրորդ՝ կիսաչօշափելի առարկաներ, ինչպէս՝ ծառեր, լեռներ, գետեր, ծով, երկիր, և այս առարկաները ստիպւում են դառնում այն բանի ծագմանը, որ մենք կարող ենք ունենալ *կիսաստուածները*։ Երրորդ՝ անչօշափելի առարկաներ, ինչպէս՝ երկինքը, աստղեր, արև, արշալոյս, լուսին. նրանց մէջ կարելի է նկատել *աստուածութիւնների* սաղմը։ Այս բոլոր աստիճաններից իրարանցիւրի վրայ մարդը ոչ թէ որևէ վախճանական բան է որոնում, այլ՝ անվախճանը, ամենից առաջ նա նախապատում է մի բան որ իրանից բարձր դանվող բան. նա երկրպագութեան մի տեսակ առարկաներից անցնում է դէպի միւսները ոչ թէ հէնց այդ առարկաների պատճառով, այլ այն, որ նրանք քան երևոյթին խօսում են նրա հետ մի՝ թէպէտև իրանց մէջ չգտնվող անվախճան բանի մասին. անվախճանի այս զգացումը, մինչ անգամ նուազ և անհամապատասխան հատատների միջև, մարդու մէջ առաջ եկող կրօնի հատիկն է։ Երբ իր երկար ուղևորութիւնից յետոյ նա իր հայեացքն ուղղում է դէպի բնութեան մեծ ուժերը՝ նրանք իրան մի տեսակ մեծ ու վսեմ բաներ են թվում։ Նա նրանց տալիս է բարձր անուններ. նրանց անուանում է *դևեր**), այսինքն՝ փայլողներ, *աստուածները*, այսինքն՝ կենդանի էրեր, և վերջապէս, *ամենատները*, այսինքն՝ անմահներ։ Սկզբում սրանք լոկ նկարագրական մականուններ էին, որոնք տրվում էին բնութեան դասակարգերի բաժանված տեսնելի մեծ երևոյթներին։ Այս անուանները արտայայտում էին, հրճուանք ու զարմանք, որ մարդուս անչափահաս սրտին զգում էր իրան ապշեցրած էակների դիմացը։ Սակայն տալով նրանց նմանօրինակ անուններ՝ մարդ ակամայ մարմնացնում էր նրանց. վերագրում էր նրանց մարդկային յատկութիւններ այնպէս որ նրանք դարձան որոշ, վսեմ, կենդանի անձնաւորութիւններ։ Նրա պաշտած բոլոր նախընթաց առարկաներից աւելի նրանք էին դրդում մարդու ձգտումը դէպի անսահմանը։ Այսպէս էր զարգանում հին արիականը, անցնելով «տեսնելիից դէպի անտեսանելին, շօշափելի փայլուն առարկութիւններից, ինչպէս տեսնելի գետը, լսվող որոտը, արևը,—դէպի գիտերը, որոնց ոչ կարելի է դիպչել, ոչ տեսնել, ոչ լսել։.. Այս ճանապարհը գծել էր ինքը բնութիւնը»։

Այս նշանաւոր տեսութիւնը, եթէ մարդ մօտիկից նայելու լինի՝ բաւական խառնաշփոթ է երևում։ Նա չէ բացատրում կրօնի նախատիպերը, անելով այս լոկ եղրակացութեամբ, միևնոյն ժամանակ գալով այդ եղրակացութեանը երկու՝ միմեանց հակասող ճանապարհներով. որովհետև, մի կողմից Մաքս Միլլէր թվում է շօշափելի առարկաները, ասելով թէ նրանցից մարդը անցել է բարձր առարկաների երկրպագութեանը, իսկ միւս կողմից ժխտում է կրօնի սկզբնական ձևի ֆէտիշիսմ լինելը։ Նա ասում է, թէ դևերից առաջ եկել են ուրիշ աստուածներ, բայց ոչինչ չէ հաղորդում մեզ այդ աստուածների մասին՝ բացի նրանից, որ դրանք աստուածութիւններ չէին բառի բուն մտքով. դրանք լոկ կիսաստուածներ էին կամ բոլորովին աստուածութիւններ չէին։ Ոգիների երկրպագութիւնը նա բոլորովին անուշադիր է թողնում, նրա կարծիքով կրօնը անմիմեմից չէ սկսվել։ Իսկ երբ նա խօսում է մեզ հետ կրօնի սկզբնաւորութեան մասին՝ դրան է նրա հայեացքը։ Արիական կրօնի սկիզբը նա անուանում է տիպական—միւս կրօնները, օրինակ, Հինաստանինն ու Եգիպտոսինը, երևի միևնոյն կերպով են սկսվել,—այսինքն՝ առաջ են եկել այն տպաւորութեան շնորհիւ, որ արել են մարդու վրայ բնութեան մեծ երևոյթները, որոնք նկատել են նրա վրայ միաժամանակ, նրա՝ անվախճանի նախապատ-

*) Այս հանուր անունով յայտնի են Հինաստանի երեք աստուածութիւնների, այն է՝ Վիշնուի, Վիշնուի և Բրահմայի անունները։

ման հետ միասին, որին նրանք աւելի էին համապատասխանում, քան մինչ այդ իրան հանդիսացող միւս բոլոր առարկաները։ Այսպիսով կրօնը իր ծագմամբ պարտական է արտաքուստ առացված ճաշակապիտական տպաւորութիւններին, որոնք յարմարւում են ներքին զեղարուեստական ու մասաւոր պէտքերին։ Նշանակում է՝ այս պէտքերը, որոնք հարկադրել են մարդուն՝ աստուած ճանաչել երկրի ու երկնքի մեծ ուժերը՝ ոչ թէ կենդանական կամ նիւթական կարգից էին, այլ վերաբերում էին նրա բնութեան հոգեսր կողմին։ Նրանք, ովքեր իրանց համար նմանօրինակ մի կրօն են ստեղծել՝ երևի բարձր են եղել կանգնած վայրենի զոյութեան հարբուսասարող պէտքերից ու հոգսերից. նրանք այլևս օրն ի բուն զբաղված չէին իրանց անունդը հայթայթելով, այնքան ազատ ժամանակ չունէին, որ զուարճանային երևնային լուսատուներով և վերլուծէին այն տպաւորութիւնները, որ արել էին նրանց վրայ ջրերն ու սրտոը։ Նրանք մինչ անգամ բաւական ուժ ունէին վերացուցանելու, որպէս զի կազմակերպէին այդպիսի մեծ էակների մի ամբողջ դասակարգ, տալին նրանց մի հանուր անուն, և ոչ միայն մի, այլ մի քանի կատարելագործվող հանուր անուններ, որոնցից իւրաքանչիւր յետագայ անունը մասնացոյց անէր մարի սասակիկ խորհրդութիւն, քան նախընթացը։ Այսպէս էին մտածում նրանք այն համաշխարհային ուժերի էութեան մասին, որոնք քննում էին իրան մի գաղտնարկութիւն։ Սա ակներև է, որ կրօնի սկիզբը չէ։ Սա համեմատաբար արդէն մի բարձր բազաքակրթութեան կրօն է. քաղաքակրթութեան, նոյնպէս և կրօնի այդ աստիճանին պէտք է նախընթաց լինէին աւելի ցած աստիճանները։ Մինչ անգամ երկնային մարմինները, չատ պիտանի կանոնների կարծիքով, պաշտվում էին մարդերի կողմից, որոնք նայում էին նրանց վրայ ոչ միայն զեղարուեստական հիացմամբ ու հոգևոր զմայլմամբ, այլ և աւելի ստիպողական, նիւթական պէտքերի պատճառով։

Էդուարդ Հարտման հանդիսանում է իրրև նրանց ներկայացուցիչ, որոնք Մաքս Միւլլերի պէս՝ կրօնի սկիզբը համարում են երկնային զօրութիւններ պաշտելը, բայց նրանք այս կէտը վերաբերում են ամենաառաջին աստիճաններին։ Հարտմանի փիլիսոփայութեանը չհամաձայնող պրոդները մերժում են նրա՝ կրօնի քննութիւնը, որովհետև նա կրօնի, այլ պետականութեան վրայ նայում է ոչ այնպէս, ինչպէս մարդկային բնութեան սկզբնական ու անբաժան տարրի, այլ՝ ինչպէս այնպիսի բանի, որ ձեռք է բերել մարդը իր զգացման միջոցին. նա կարծում է, որ կրօնի սկզբնական շարժառիթը (մօտիվը) պարունակված էր երջանկութեան ինքնասիրական ցանկութեան մէջ, երջանկութեան, որ մարդու կրօնի այս աստիճանի վրայ հանդէս էր բերում նրա բոլոր վարմունքը։ Այն հանգամանքը, որ Հարտման կրօնի սկզբնաւորութիւնը բացատրում է բնութեան ուժերը պաշտելովը, աչքի է ընկնում զարմանալի թարմութեամբ ու ուժով և, նկարագրելով այն՝ մենք կարող ենք այստեղից դուրս բերել այնպիսի յատկութիւններ, որոնք բղխում են այս գրողի փիլիսոփայական սիստէմից։

Այն առաջի կրօնի առարկան, որ զոյութիւն է ունեցել աշխարհումս՝ էին երկնային զօրութիւնները։ Երկրպագութեան առարկաները յայտնի են մարդուն կրօնի սկզբնաւորութիւնից առաջ. նախնական մարդ իլլիւզիաները (զգացական մոլորութիւնները) կանգ էին առել երկնային ուժերի վրայ մինչև նրանց պաշտելը. խելքը դէպի արտաքին առարկան փոխադրել է կենդանի ու ներգործող էակի բնոյթը, որ այդ ժամանակներից էլ մնում է իրրև մի այդպիսի առարկայ։ Այս կերպարանափոխութիւնը առաջ է եկել բանաստեղծական երևակայութեամբ, և ոչ լոկ տրամաբանութեամբ ու չհասէա պատճառներից։ Սակայն կրօնը միայն այն ժամանակն է սկսվում, երբ մարդը սկսում է պաշտել այդ էակները։ Իսկ դէպի այդ նրան բերում են նիւթական կարիքները։ Կրօնը

սկիզբն է առնում այն էակի մեջ, որ մինչ այդ չի կրօն է ունեցել, ոչ բարոյականութիւն։ Փոփոխութիւնը առաջ է գալիս կերակրի պէտքն զգալուց, որովհետև այդ դուա—էգօիստ նախնական մարդը տեսել է որ բնութեան ուժերը կարող են օգնել կամ արգելք հանդիսանալ իր համար միտնդ ճարելու գործում. արևը կարող է նպաստել բոյսերի աճման կամ այրել նրանց, իսկ փոթորիկը կարող է վերակենդանացնել։ Նրա երջանկութիւնը կախված է այդ ուժերից, և նա աշխատում է յարաբերութիւն հաստատել նրանց հետ։ Նա աշխատում է իր համար դաշնակից գտնել երկնային ուժերի միջև, որոնք կարող են օժանդակել նրա նպատակների իրագործմանը կամ խանգարել նրան. նա յայտնում է այդ ուժերին իր ցանկութիւնները, դիմելով նրանց՝ նա նուէրներ է մատուցանում։ Նա երկրպագում է երկնային ուժերին և այսպիսով սկսվում է կրօնը։ Թէպետ այդ ուժերը առաջ էլ յայտնի էին, բայց երկրպագութիւնը որոշ դիրք է տալիս նրանց և իրականութիւն, որ նրանք առաջ չունէին։ Հարտման այդ ուժերի բոլոր տեսակ-տեսակ կուլտերը, որոնք իշխում էին երկրի զանազան մասներում՝ հակված է տանելու դէպի միևնոյն սկզբնական կետրոնը, և միևնոյն ժամանակ նա պընդում է, որ մինչ անգամ եթէ այս կուլտի ամենատեսակ ձևերը չկարողանային մէկ սկզբնաւորութեան վերածվել՝ այնուամենայնիւ այդ կուլտը այս կերպով պէտք է սկսվէր ամէն տեղ, ուր բնակում էին բնութեամբ միատեսակ մարդիկ. զարգացման նմանօրինակ ընթացքի հոգեբանական անհրաժեշտութիւնը բացատրում է միևնոյն կրօնի երևան գալը այլ և այլ երկրներում և միմեանց ոչ-նման ժողովուրդների միջև։

Հետևաբար, այս գրողի կարծիքով, սկզբնական կրօնը՝ երկնային ուժերը պաշտելն էր։ Ընդունելով որ բնատեսեան ոգիների կուլտը առաջ է եկել նոյն կերպով, որ մատնացոյց են անում անգլիացի մարդաբանները՝ Հարտման հերքում է այն միտքը, թէ անիմիզմը կարող է կրօն լինել ըստ ինքեան՝

առանց կապ ունենալու աւելի վսեմ հատատների հետ։ Նա նոյնպէս հերքում է թէ ֆէտիշիզմը կարող էր երբ և է մի սկզբնական կրօնական երևոյթ լինել, կամ որ մարդիկ կրօնի բացակայութիւնից կարող էին անցնել դէպի փէտիշիզմը։ Ո՛րտեղ էլ երևան գար ֆէտիշիզմը, ամեն տեղ անկման կրօն է։ Ամեն կրօն ողջ աշխարհում առաջ է եկել բնութեան երկրպագութիւնից, որ առաջ գալով մի կամ մի քանի կենտրոններում՝ տարածվել է ողջ երկրումը և պարզ կամ պղտոր կերպով յայտնվել բոլոր երկրի կրօններում։

Կրօնի ծագման վրայ ունեցած այսպիսի հայեացքի հետևում ամսմամբ համաձայն են և Օտտո Փլէյդէրէր և այլ գիտնական գրողներ։ Այս գիտնականները ասում են, որ կրօնը առաջ է եկել ոչ թէ ոգիների հատատից, այլ այն տպաւորութիւններից, որ արել են մարդու վրայ բնութեան ուժերը։ Բայց սա անխուսափելի կերպով զուտ էգօիզմից չէ բխում, ինչպէս ասում է Հարտման. այս գիտնականները ենթադրում են որ նախնական կրօնները չի կարելի կաշառման մի փորձ համարել։ Այն գրգռումները, որոնք ստիպում էին մարդուն երկնային ուժերը պաշտել՝ անշուշտ առաջ է եկել ուրիշ պէտքերից, բայց ոչ լոկ կերակրի պէտքից։ Մտաւոր ծարաւը, այն աշխարհի բնութիւնը իմանալու ցանկութիւնը, որի մէջ ապրում է մարդը ու յարվել է բարձրագոյն էակին, սրբան դա հնաւանդ է. գեղարուեստական կարիքը, իր երևակայութեան մէջ լցուած առարկաների հետ գործ ունենալու ցանկութիւնը, բարոյական պէտքը, բոլորովին մեկուսացած պերը չբռնելու ցանկութիւնը, այլ սրանք հեղինակութեան առարտրվելը, սրանք պարտականութիւն զգալը,—այս բոլորը, թէպէտև շատ աւելի պղտոր կերպով, աւելի ինչպէս նախազգացումներ՝ քան ինչպէս պարզ գիտակցութիւն՝ մտել է երկնային ուժերի նախնական երկրպագութեան մէջ։ Այս կարծիքը Հարտմանի հայեացքի վերաբերմամբ այն առաւելութիւնն ունի, որ կրօնի զարգացումը նկարագրում է ոչ սկզբից իրրև մի ան-

ընդհատ զարգացում, և ոչ մէկ հէնց առաջին բայլից ներկայացնում է այն իբրև մի ինչ-որ բացառապէս էպօխտական բան, ասելով մէկ սէրն ու բարեպաշտութիւնը մտել են կրօնը միայն հետաւոր ատիճանների վրայ։ Եթէ մարդու բնութիւնը ըստ էութեան կրօնական է՝ ապա ամէն բան, ինչից որ կազմված է կրօնը՝ նոյն իսկ սկզբից յատուկ պէտք է լինէր մարդուն, թէպէտև անգիտակից ու նախնական ձևով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ։ Մենք հետևցինք ատուածների այլ և այլ տեսակները, որոնց երկրպագում էին նախնական մարդիկ—ֆէտիշները, ոգիները, բնութեան ուժերը։ Մենք տեսանք որ հանուր խոստովանութեամբ ֆէտիշիզմը կրօնի սկզբնական ձևը չէր, այլ երևան է եկել իբրև կրօնի բարձր ձևերի անկման արդիւնք, ձևերի, որոնք ընկել էին անբարեյաջող պայմաններում։ Իսկ ինչ վերաբերում է ատուածութիւնների միւս երկու տեսակներին՝ ապա չի կարելի ժխտել որ ատուածները նոյն իսկ սկզբից ձևակերպվելիս են եղել այս երկու եղանակով։ Ընտանեկան ոգիների երկրպագութիւնը որ հանդիպում է նախնական աշխարհում՝ չի կարող դուրս բերվել բնութիւնը պաշտելուց այլ դուրս է եկել նախնական մարդու մէջ առաջ եկած հետաքրքրութիւնից, վերը յիշված ընտանեկան փոքձերի շնորհիւ։ Միւս կողմից՝ չի կարելի ապացուցել կամ մինչ անգամ պնդել ոգիների և է հետաքրքրութեամբ, որ բնութեան խոշոր երևոյթների երկրպագութիւնը կարող է դուրս բերվել ոգիների հետաքրքրութիւնից. մենք կարող ենք հաստատել ու հետաքրքրութիւնից, որ այդ երկրպագութիւնը առաջ է եկել այն տպաւորութիւններից, որ երևոյթներն ու ուժերը արել են նախնական մարդու վրայ։ Բնական մեր առարկաները պաշտելը նոյնպէս շատ հասկանալի է, մինչ անգամ առանց Տայլորի՝ ոգիների տեսութեան։ Ի՞նչ աւելի բնական բան կարող է լինել, քան այն, որ վայրենին պաշտում է կայծին կամ ջրվէժը, քան նրա այն համոզումը, թէ նա շրջապատված է անտեսանելի էակներով։ Այսպիսով մենք պարտ ենք այն եզրակացնելու, որ դուրս ձգելով մահուան ու ոգիների բնակարանի վարդապետութիւնը՝ բնութեան երկրպագութեան վրայ մենք պէտք է նայենք, իբրև կրօնական հիմնական ձևի։

Սակայն մենք պէտք է զգուշանանք նախնական մարդուն՝ իրանց ատուածների մասին ունեցած հասկացողութիւններին ճշտութեան կամ անպրպտելիութեան նման յատկութիւններ վերագրելուց։ Մինչ անգամ ամենազարգացած կրօններում պահպանվում է միմիանց հակասող հետաքրքրներ պաշտպանելու բնդունակութիւնը. ևս առաջ այս բանը պատահում էր այն մարդկերի միջև, որոնք ապրում էին ուրև է ճիշտ մտքի յայտնվելուց առաջ։ Վայրենին կարող էր ունենալ բազմաթիւ, շատ պէս պէս ատուածներ, որոնք նրա պատկերացմամբ կազմում էին մի բոլորովին երջանիկ ընտանիք։ Ընդունելով մի նոր ատուածութիւն՝ վայրենին չէր հրաժարվում հներից ոչ մէկից. նա որոնում էր մէկ ատուած, բայց պատրաստ չէր կարողանում կանգ առնել մէկի վրայ, երբ կային այնքան էակներ, որոնք յատկութիւն ունէին այդ դիրքը ձեռք բերելու։ Նա իր ատուածները ստեղծում էր ոչ թէ ոչնչից, այլ իր փորձի ու տպաւորութիւնների մեծ պէսպիսութիւնից, և նրանք սկսում էին ներդործել միմեանց վրայ անվերջ կերպով բազմատեսակ միջոցներով։ Մէկ ատուածը բռնում էր առաջին տեղը մի դէպքում, միւսը՝ միւս դէպքում. մի առարկայ մէկ դէպքում պաշտվում էր մէկ պատճառով, միւս դէպքում՝ միւս պատճառով. նոր ատուածները ժամանակի ընթացքում դառնում էին հին ատուածներ, և նրանց մասին այլևս չէին մտածում, մինչդեռ նախկին օրերի մոռացված ատուածները յարութիւն էին առնում յիշողութեան մէջ ու կրկին պաշտվում։ Անվերջ փոփոխութիւնները, զարգացման ու անկման անվերջ կրկնութիւնները լցնում էին մարդկութեան նախապատմական կեանքի ահագին շրջաններն ու տարածութիւնները, որոնք համարեա նոյնքան անսահման էին ու անըմբռնելի, որքան և ովկիանոսի տարածութիւնը։

ԻՆ ԳԼՈՒԽ.

ԿՐՕՆԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՋԵՐԳԱՅՈՒՄԸ.—ՀԱԻԱՏԱԼԻՔՆԵՐ.

Մենք տեսանք մեր ինչպիսի նախերից էր առկծում նախնական մարդը իր աստուածները։ Տարբերվելով իրանց ծագմամբ՝ աստուածները էն սկզբից տարբերվում էին և՛ իրանց զարգացման եղանակներով։ Բնական մեծ աստուածները առաջ էին բերում մի տեսակի կրօն, բնական փոքր աստուածները՝ միւս տեսակի, ընտանիքի մեռած անդամների մասին մտածմունքը՝ երրորդ տեսակի։ Բայց այս տարբեր կրօնները չէին կարող կողք-կողքի զարգանալ՝ չազդելով միմեանց վրայ։ Այլևայլ կուլտերը ամենասկզբից սկսել էին խառնվել միմեանց հետ. առաջ էին եկել այնպիսի կրօններ, որոնք այլևայլ կուլտերի կոմբինացիաներն էին։ Քննենք, արդեօք, այս կուլտերը սկզբից՝ զատ-զատ։

1. *ՄԵՌ ԸՆՏՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՄԱԿԸ։* Քննելով այնպիսի կուլտերը այն կարգով, որին մենք հետևում էինք, ամենից առաջ կանգ առնենք բնութեան մեծ երևոյթների պաշտման վրայ, որի առարկաներն են՝ երկինքը, արևը և այլ երկնաւոր մարմինները, արշալոյսն ու վերջալոյսը, ապա՝ եղանակի երևոյթները՝ անձրևը, մրրիկը, որոտն ու փայլակը։ Անհրաժեշտ է բոլորովին պարզ գիտակցել, որ սկզբումը պաշտվում էր ինքն առարկան, որ մտածութեան նախնական չափով կենդանի էր համարվում։ Մարդը դիմում էր աղօթքով ու նուէրներ մատուցանում իրան երկնքին, իրան ծագող կամ մայր մտնող արևին, իրան փոխ-որկին, և յաճախ, ինչպէս վայրենիների, այնպէս էլ մեծ կրօնների մէջ միևնոյնն է լինում մինչև օրս էլ։*

Բայց մարդը չէր կարող կանգ առնել սրա վրայ, նրա երևակայութիւնը լռոյլ չէր տալիս այդ։ Փոփոխութիւնների մի մասի երևակայութիւնը աւելի գործունեայ էր, քան միւսները, բայց ոչ մի տեղ բոլորովին անգործ չէր, ուստի և տեղի ունեցաւ այն, որ մարդը մի տեղ մեծ՝ միւս տեղ փոքր չափով սկսեց բարձր կանգնել բնութեան ուժերի ուղիղ ու պարզ պաշտութից։ Նախկին պարզութեան համեմատութեամբ առաջին լուծոր բայլը դէպի առաջ արված էր այն ժամանակ, երբ մարդը սկսեց անուններ տալ բնութեան երևոյթներին։ Անունը արդէն մի որոշ ուժ է. նա մի ինչ-որ աւելի բան է նշանակում, քան իսկ անուանում կամ ապրանքադրոշմ (ярлыкъ), նախնական բոլոր անունները իրանց մէջ մի ինչ-որ աւելի բան են պարունակում. նրանք բերում են իրանց հետ իրանց ընկերակցութիւնները (accoциація), և այսպիսով մարդը սկսում է այն անունով հասկացվող առարկային վերագրել նոր բնոյթ ու նոր ուժեր։ Մարդիկ սկսում են քննել անունը ու նրանից եզրակացութիւն անել պաշտվող էակի բնութեան նկատմամբ և սկսում են բոլորովին այսպէս մտածել իրանց աստուածութեան մասին։ Մինչ անգամ առարկաները իսկ «վայլող» կամ «ապրող» հանուր խորագրով դասերի՝ ու տեսակների բաժանելը, ինչպէս անում էին նախնական արհամանները՝ մի անկախ դիրք է տալիս նրանց և դրդում է երևակայութիւնը առաջ գնալ ու նրանց նշանները նկարագրելիս։ Զգեցով անուններ պտնել այն էակներին, որոնց երկրպագում է մարդը, որոնց մասին այնքան շատ է մտածում՝ անուանում է նրանց իրան մօտ եկած կենդանի էակների անուններով, և այսպիսով աւելի շատ է մօտեցնում իրան և միևնոյն ժամանակ նրան այնպէս է թվում թէ աւելի շատ բան պիտի նրանց մասին։ Օրինակ լուսինը եղջիւրներ ունի, արևմուտքում լուսինը կով է։ Երկինքը տարածված է ամենքի գլուխների.

ուրեմն՝ երկինքը հայր է։ Եւ որովհետև մարդը գիտէ այն ամեն բանը, ինչ որ վերաբերում է կովին ու հօրը՝ ուստի այս աստուածութիւնները նրա աչքում դառնում են աւելի իրական, ուժալ, ստանում են անկախ գոյութիւն։ Բայց, միւս կողմից, աստուածութեան մէջ մարդու համար մի ինչ-որ աւելի բան կայ, բան այն, որ կար սոսկ առարկայի մէջ։ Նա լոկ երկինքը, լոկ լուսինը չէ պաշտում այլ նրանց երկրպագում է այն աւելորդ բանների հետ միասին, որ առեղծել է իր սեփական երեւակայութիւնը։

Ժամանակի ընթացքում այս աւելորդութիւնները հետզհետէ չատացան։ Կենդանի անձնաւորութիւնները իրան աստուածութիւն ճանաչելով՝ նախնական մարդը չարունակ ու սիրով հիւսում էր նրանց պատմութիւններն ու յարաբերութիւնները։ Եթէ լուսինը կով է՝ ուրեմն, արեը՝ երկնքի չուրջը պտտող մի եզն է։ Սա այն սկզբունքի մի օրինակն է, որ մենք տեսնում ենք դեռ նախկին շատ կրօնների մէջ և որ կարեոր է յիշել, այն է, թէ բնութեան ուժերը սկզբում նոյնանում են կենդանիների հետ։ Բնական աստուածութիւնների՝ կենդանիներին նմանվելու (զօոմօրֆիական) շրջանը՝ մարդուն նմանվելու (անտրոպոմօրֆիական) շրջանից առաջ է եղած և դեռևս պահպանվել է այժմեայ շատ՝ վայրենի ցեղերի մէջն։

Իսկ երբ սկսում են աստուածները մարդու նմանութեամբ պատկերացնել՝ նրանց զարգացման մէջ մի կարուկ քայլ է անում դէպի առաջ։ Եթէ երկինքը մեզ հայր ընդունենք՝ ապա դժուար չէ սրանից այն կողմը առաջ գնալ։ Երկիրը կլինի նրան համապատասխան մայրը (մի պատկերացում, որ հանդիպում է ոչ աշխարհում). իսկ բոլոր մարդիկ կհամարվեն նրանց որդիքը։ Եթէ արեին արական սեռի անուն է տրւում (թէպէտ յաճախ արեը իգական սեռի էլ է լինում), ապա նա սերտողութիւններ պէտք է անի՝ այս բնորոշ կողմը ձեռք բերելու համար։ Եթէ վոլծորիկը արական սեռի աստուածութիւն է, այն ժամանակ նա կամ պիտոր է լինելու կամ որսորդ։ Այսպիսով աստուածութիւնը անձնական բնաւորութիւն է ձեռք բերում և զարգանում ինքնուրոյն կերպով. այն, ինչ-որ պատմվում է նրա մասին, թ տարիք, կապ ունի այն առարկայի հետ, որ սկիզբն է տրել աստուածութեանը կամ այն երեոյթի որ հետ, որ միացած է նրան. բայց աստուածութիւնը հետզհետէ անջատվում է բնական առարկայից և ձեռք է բերում իր սեփական պատմութիւնը։ Եթէ զանազան ազգեր աստծու մասին զանազան պատմութիւններ ունեն՝ այդ նրանից է որ այդ զանազան ազգերը իրանց յատուկ բարքերն ու մտապատկերն ունեն. մի բանի դէպքում աստուածները մնում են իրրև մաքուր ու վսեմ էակներ, ուրիշ դէպքերում նրանց չուրջը խմբվում են վայրենի ու անհամեստ առասպելներ. այս առասպելները միանում են աստուածների անձնաւորութիւնների հետ և դեռևս երկար ժամանակ կապված են մնում նրանց հետ մինչ անգամ այն ժամանակ, երբ այս աստուածները աւելի վսեմ ու պաքակիրեմ բնաւորութիւն են ձեռք բերում այն ժողովրդի բարոյական զարգացման շնորհիւ, որ ընդունում է նրանց։ Մենք շատ օրինակներում կը տեսնենք թէ ինչպէս բնական աստուածութիւնները կերպարանաւորվել՝ դաղափներ ու մարդիկ են դառել, և նրանց մասին առասպելներ ու զրոյցներ են հիւսվել։ Սա բնական աստուածութիւնների սովորական զարգացումն է. սա այն պրօցէսն է, որին նրանք ենթարկվելու են, քանի որ զարգանում են։

ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ։ Պէտք է մատնացոյց անել և բնութեան խոշոր առարկաների կուլտերի մի այլ հանուր կողմը։ Իւրաքանչիւր աստուածութիւն ունի իր սեփական պատմութիւնը և զարգացել է առանձին կերպով, երբ մարդիկ կենդրոնացրել են նրա վրայ իրանց ուշքը։ Բայց որովհետև աստուածութիւնները զարգանում են մէկը միւսից յետոյ կամ որովհետև երկու երկրում զարգացած աստուածները ապագայում միանում են, ուստի պատահում է որ աստուածներ

շատ են լինում, և նրանցից ոչ մէկը անպատճառ ծայրագոյն աստուած չէ լինում։ Ի՞նչ անի աստուածների երկրպագուն։ Ամենաթեթև համեմատութիւնը կատարի մեզ ընդունել որ կուտի իւրաքանչիւր արարողութեան մէջ մարդը իր ուշքը միայն մէկ առարկայի վրայ է ուղղում։ Սա կրօնի նոյն իսկ էութեան բնորոշ կողմն է. ինչպէս երեխան չի կարող միաժամանակ մի քանի անձնաւորութիւնների վերաբերվել, որպէս իր հօրը. ինչպէս ծառան չի կարող միակերպ անձնատուր լինել մի քանի տէրերի՝ այնպէս էլ մարդ բնաւէս ձգտում է ունենալ մէկ աստուած։ Նա դիմում է նրան, որին աւելի բարձր է համարում, ով ըստ երեւոյթին ամենից լաւ կարող է օգնել իրան, մինչդեռ չի կարող երկու դերագոյն էակ լինել, այլ՝ մէկը միայն։ Սակայն նախնական աշխարհում մարդու դրութիւնը չէ թոյլ տալիս նրան հաւատարիմ լինել այս կրօնական բնազդին։ Որովհետև նա աշխարհը այսօր այսպէս է տեսնում, վաղը՝ այնպէս, ուստի և, ընդունելով իբրև աստուածութեան ներկայացուցիչ էակ՝ չի կարող շարունակ աչքի առաջ տեսնել միևնոյն աստուածը։ Բայց մէթէ չի կարող նա երկրպագել մի այլ աստուածութեան՝ առաջինը աչքից ծածկելուց ու մոռացվելուց յետոյ։ Ճիշտ էլ որ նա երէկ երկնքին էր երկրպագում՝ մէթէ այսօր չի կարող պաշտել արևը, փոթորիկը կամ ծովը։ Եւ շատ էլ որ նախորդ սերունդը այս էակներից մէկին էր առաջին տեղը տվել՝ մէթէ նոր սերունդը չի կարող ընդունել մի այլը՝ իբրև ծայրագոյն էակ։ Նախկին ուժը չէ դադարում սակայն աստուածութիւն լինելուց, բայց այդ աստուածութիւնը անմիջապէս մարդու հոգևոր աչքի առաջ չէ գտնվում։ Նա դեռևս աստուածութիւն է, սակայն մի քանի ժամանակից յետոյ մարդը չի կարող դիմել նրան և տալ առաջին տեղը։ Այսպիսով անխուսափելի տրամաբանութիւնը մարդուն այն տեղն է հասցնում, որ եթէ նա իր աստուածները բնութիւնից է առնում՝ ապա բազմաթիւ այպիսի աստուածներ է ունենում։ Տեսնելով իր համար մի նոր

աստուածութիւն՝ նա չէ մերժում նախկինը. նա դեռ այնքան չէ զարգացել, որ գայ այն եզրակացութեան՝ թէ կարող է գոյութիւն ունենալ միայն մէկ աստուած։ Երկրպագելով աստուածութեանը՝ մարդուն այնպէս է թվում, որպէս թէ միմիայն այս մէկ աստուածութիւնը կայ. բայց նրա զգացումը այլ և այլ ժամանակ յարվում է մի ամբողջ շարք տարբեր առարկաների, և նա այնքան ուժ չունի որ ազատվի այսպիսի փոփոխամտութիւնից։ Ուրիշ աստուած՝ նոյնպէս աստուած է. այն բոլոր աստուածներին, որոնց մարդը առաջ երկրպագում էր՝ դէպի եկած ժամանակ, դարձեալ կարող է երկրպագել։ Նա նոյպէս չի կարող հրաժարվել աստուած ընդունելուց այն աստուածներին, որոնց ուրիշներն են աստուած ընդունում. նրանց աչքում, եթէ ոչ իր աչքում՝ դրանք ստոյգ աստուածներ են. նրանք էլ նոյն դասակարգի էակներ են, ինչ դասակարգի իր աստուածն է։ Եւ այսպիսով նախնական մարդը դառնում է բազմաստուածեան։ Բազմաստուածութիւնը մի բարդ երեւոյթ է. սա՝ իրարից առաջ եկող մի ամբողջ շարք կուտերի կուտակումն է։

Սակայն, բազմաստուածութեան մէջ հնարաւոր են շատ պէս-պէս կրօնական դրութիւններ։ Մարդիկ կարող են զգալ որ այն բոլոր աստուածները, որոնց գոյութեանը իրանք հաւատում են՝ ակնկալութիւն ունին իրանցից, և կարող են նրանց՝ իրանց բոլորի երկրպագու համարել, իրանց զգացման և հին ընկերակցութիւնների համեմատ՝ պիտի երթան այս, երթան այն աստուածութեանը, կամ որոշելով թէ ոքանչ և ինչպիսի դէպքերում պէտք է օգնութեան կանչել այդ աստուածութիւններից իւրաքանչիւրին, կամ նրա է ուրիշ միջոցով բաւարարութիւն տալով նրանց պէս-պէս պահանջներին. կամ թէ, միւս կողմից՝ հաւատալով շատ աստուածների գոյութեանը՝ մարդիկ կարող են սահմանափակվել, մէկին երկրպագութիւն տալով։ Մարդը գիտէ որ աստուածներ շատ կան. սակայն աստ է, թէ միայն մէկի հետ գործ ունի։ Կրօնական

գործերի այսպիսի դրությունը շատ յաճախ էր պատահում հին ժամանակը։ Մարդիկ հաւատում էին աստուածների մի ամբողջ շրջանի, բայց նրանցից մէկին էր բռնում առաջին տեղը և պաշտվում, ինչպէս մի գերագոյն աստուածութիւն։ Սա կոչվում է կաուէնօտէիսմ, այսինքն՝ որոշ ժամանակ միմիայն մէկ աստծու երկրպագելը։ Այս անունը հնարել է Մաքս Միւլլէրը, որ դէնօտէիսմ է անուանում այն դրութիւնը, որով մէկ պէտ շատ աստուածների գոյութիւնն է ընդունվում, սակայն միայն մէկին է պաշտում։ Ահա այս տարբեր դրութիւնների օրինակները.

ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ լեզուն հետեւեալն է.

Երամաղդ հայրըդ, շրեզ ու վհատէա,
Եւ դու, արեգակ՝ ամենատես, ամենագէտ.
Եւ դու՝ երկիր, և դուք, գետեր,
Որ պատժում էք երդմնազանց վատեր,
Վկայ եղէք, պահեցէք անուտ երդում մեր։ *)

ԿԱՏԷՆՕՏԷԻՄ։ Վէտական բանաստեղծները, ինչպէս կը տեսնենք, խօսում են մէկ աստուածութեան մասին, որին, իբրև գերագոյն աստուածութեան, դիմում են յայտնի ժամանակ և տալիս են ամենաբարձր ատրոպուիները (атрибуты), մարներովը անց չկացնելով սակայն մերժել միւս աստուածների աստուածայնութիւնը։

Այստեղ պէտք է մատնացոյց անել դարձեալ մի կրօնական դրութիւն, այն է՝ դուալիսմը**)։ Ամէն դուալիսմ ծածկված չէ բնապաշտութեան մէջ. սակայն նա կարող է պատահել մի այնպիսի երկրում, որտեղ աշքարաս կուի մէջ են գտնվում միմեանց դէմ բնութեան բարերար ու վնասակար ուժերը։ Որովհետև մարդը բնութեան բարերար ազդեցու-

*) Այս հատուածը ևս յանդերի եմ վերածել Փիլիպպոս Վարդանեանի «Հոմերի Իլիականը» թարգմանական երկից, էջ 61.

**) Այն երկու՝ բարի ու չար գոյացութեան կրօնա-փիլիսոփայական վարդապետութիւնը, որոնք կռվում են բնութեան ու մարդու կեանքի մէջ։

Հ. Թ.

թիւնները այնպէս է բացատրում, իբր թէ նրանք բարի աստուածութեան օրինութիւնն են՝ այս պատճառով բնական կլինի, եթէ աւերիչ ու վնասակար ազդեցութիւնները բացատրի իբրև կենդանի ու դրա հետ միասին չար ուժի յայտնութիւն։ Բարի աստծուն չնորհակալութիւն արտայայտելուն այս դէպքում հետևում է չար աստծուն հակառակ գնալու կամ նրա դէմը չարժելու ճիգը. եթէ այդ երկուսը իրանց նշանակութեամբ մօտաւորապէս միատեսակ են՝ այն ժամանակ ազդեցութիւն են ունենում ու երկրպագութիւն ստանում։ Բայց հանուր առմամբ մենք կարող ենք ասել որ բնութեան մեծ երեոյթների երկրպագութիւնը վսեմացնող բնոյթ ունի։ Այդ երկրպագութիւնը մարդուն մօտեցնում, յարաբերութեան մէջ է դնում իրօք մեծ ուժերի հետ և ստիպում է նրան մինչ անգամ ֆիզիքական մտքով նայել վեր, և ոչ թէ՝ վար։ Որտեղ բնութեան ուժերը խիստ են, որտեղ արևը կիզիչ է, որտեղ ծովը մրրկալից է՝ այնտեղ զգաստութիւնն ու անձնազոհութիւնը, որ առաջ է գալիս այս ուժերի կուլտից, եթէ նա ծայրայեղութեան չէ հասցնվում, կարող է կազդուրիչ ազդեցութիւն ունենալ. սակայն մի քանի բացառութեամբ՝ բնութեան աստուածները բարի ու լուսաւոր աստուածութիւններ են։

2. ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՆՐ ԵՐԵՒՈՑԹՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ։ Բնութեան մեծ ուժերի կուլտը համաշխարհային բնոյթ ունի։ Նա կարող է առաջ գալ ամէն տեղ, թափառական ցեղերը նրան իրանց հետ մի տեղից միւսն են փոխադրում. բոլոր երկրներում կարելի է դիմել երկնքին, արևին ու քամիներին։ Սրա նկատմամբ բնութեան մանր երեոյթների երկրպագութիւնը այլ բնոյթ ունի. կենդանուն երկրպագում են միայն այն երկրում, որտեղ նա հանդիպում է, և ծառը, աղբիւրը, քարը կարելի է պաշտել միմիայն մի որոշ տեղում։ Նախնական ժամանակներում աշխարհը լի էր այսպիսի տեղական կուլտերով, և նրանց բազմաթիւ մնացորդները հանդիպում են մինչ

անգամ այն երկրներում, որտեղ շատ վաղուց խափանված է եղել իրանց տեղումը ընդունված ու տեզական լեգենդների նախկին կրօնը, որ չնայելով հասարակական կրօնի փոփոխմանը՝ կապված է մի որոշ երկրի հետ, և երբ անհետանում է հին կրօնը՝ տեզական կրօնը իր համար ապաստարան է գտնում նորի մէջ։

Բնութեան մանր երևոյթների կուլտի մէջ, որ իր ցանցերը սփռել էր ողջ նախնական աշխարհովը՝ պարզ ցոյանում էր նախնական համայնքի բնոյթը. մանր համայնքները ունեն իրանց տեզական մանր կուլտերը—իւրաքանչիւր կլան,*) հարևան իւրաքանչիւր կրաալ'**) ունի իր տեզանը, իր աստուածը և սահմանափակվում է իր սեփական սրբազան առարկաներով։ Կրօնը մի օղակ է, որ մարդկերի մանր խմբերի անդամներին կապում է, իսկ ուրիշ խմբերի անդամներից հեռացնում։ Մենք կբերենք այս կուլտի պարզացման մի քանի օրինակը։

ա) ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՈՒԼՏԸ։ Նախնական մարդուն հարկաւորում էր զգուշանալ կենդանիներից ուժով ու խօրամանկութեամբ, և նա լաւ էր ճանաչում նրանց։ Նա յարգում էր նրանց՝ այն յատկութիւնների համար, որոնցով գերազանցում էին իրան. նապաստակին՝ նրա արագաշնայութեան, կուղբին՝ արուեստագիտութեան, աղուէսին՝ խորամանկութեան համար։ Բայց նա երկրպագում էր ոչ թէ մի որոշ տեսակի որոշ անձնաւորութեանը, այլ՝ նոյն իսկ տեսակին, ինչպէս մի ամբողջ քանի, որի տիպական ներկայացուցիչներն էին, երևի, մեծ նապաստակը կամ մեծ աղուէսը, որոնք առասպելապէս նոյն տեսակի էին և որոնք գերազանցօրէն ունեն իրանց մէջ այդ տեսակի բնորոշ յատկութիւնները։ Ըստ երևոյթին ողջ աշխարհում, զարգացման ամենաառաջին աստիճանի վրայ՝ մարդիկ

*) Կլան—տոհմ, ցեղական խումբ։

**) Քաֆիրների և հօտաէտօտների դիւղ՝ փեթականման խրճիթներով և հարևան պարսպով։

համարելիս են եղել իրանց՝ ոմանք մի կենդանուց առաջ եկած, ոմանք՝ միւսից։ Այս հատատալիքից ցեղերը առացել են իրանց անունները, և ցեղի իւրաքանչիւր անդամը գանազան դէպքերով է եղել նկարելիս իր մարմնի վրայ իր նախահայր կենդանու պատկերը։ Օրինակ. Քէխուաններն բաժանվում են կոկորդիլոսի, ձկան, կապկի, գոմէշի, փղի, առիւծի և այլն տոհմերի։ Թաւամաղ կամ լեոպարդի նախահայրը այն ցեղի «տօտէմն»*) է, որ սրբազան կենդանի է համարում այս կենդանուն և չէ ուտում նրա միսը։ Այն բոլոր մարդիկ, որոնք ունեն միևնոյն «տօտէմը», համարում են իրանց՝ միևնոյն նախահօրից առաջ եկած արիւնակից ազգականներ։ «Տօտէմը» կարող է և բոյս լինել, և այս դէպքում ցեղի ոչ մի անդամը ոչ կբաղի այդ բոյսը և ոչ կուտէ։

Տօտէմիսմը այժմ էլ կայ աշխարհի զանազան մասերում։ Այժմ նրա կլասիկական երկիրը, եթէ ուզում էք՝ հիւսիսային Ամերիկան է։ Բայց սա համայնքի ու կրօնի մի այնպիսի շրջան է, որ երբեմն ունեցել են բոլոր ժողովուրդները։ Այսօրից առաջ է գալիս երկու գլխաւոր հետևանք, որոնց մենք շարունակ հանդիպելու ենք մեզ կրօններն ուսումնասիրելիս։ Առաջին՝ կենդանիների կուլտը—յաճախակի տեղի ունեցող մի երևոյթ է, որի նշանակութիւնը լիովին պարզված չէ։ Մարթ Էննան ցոյց է տվել, որ գրեթէ ամենաշատ տարածված կուլտի կենդանիներից շատերը վերագրվելու են համայնքի զարգացման տօտէմիստական նախնական աստիճանին։ Երկրորդ՝ տօտէմիսմը բացատրում է այն հայեացքը, որ գոյութիւն ունէր նախնական աշխարհում բնութեան ու կրօնական ընկերութեան վրայ։ Նոր ժամանակներում մարդիկ, հատատալով

*) «Տօտէմ» նշանակում է կլանի դրուագը (գերքը), այլ և այն կենդանու անունն է, որին կլանը վերաբերվում է մանաւագիտական կուլտով։ Թիտական մբաքով տէտէմ ասելով գան (պարտաւորապէս՝ դասը, և ոչ անհատը) է հատկացվում։ Տօտէմի դերում հանդիպում են քամուն, արևին, անձրևին, սրտին, ջրին, երկաթին, մինչ անգամ առանձին կենդանիների կամ բոյսերի մասներին։

միևնոյն վարդապետութեանը՝ միմիանց վրայ նայում են իբրև եղբայրների։ Հաւատը, այսինքն՝ մտաւոր կամ հոգևոր կապանքները կապում են նրանց։ Հին կրօնական միութիւնը ուրիշ տեսակ էր։ Հին ժամանակները մարդիկ այն պատճառով էին միմիանց եղբայր համարում, որ մէկ արիւնից էին, առաջ էին գալիս միևնոյն նախահօրից։ Ս. Գրքում բոլոր հրէաները Աբրահամի սերունդներ են, եղոմացիք՝ Եսաւի սերունդները։ Սա հին ժամանակներում եղբայրութեան անհրաժեշտ պայմանն է համարված. միմիայն նրանք կարող էին միանալ հանուր կուլտի մէջ, ովքեր մէկ արիւնից էին։ Սա այն տեսութեան վաղեմի ստիճանն է, երբ մարդիկ այն պատճառով են հետևում մէկ կուլտի, որ առաջ են գալիս մէկ կենդանուց և երկրպագում միևնոյն կենդանուն։

բ) ԾԱՌԵՐԸ, ՂԵԲԻՒՐՆԵՐԸ, ՔԱՐԵՐԸ։ Այս երեք առարկաներից իւրաքանչիւրի կուլտը ըստ ինքեան հետազօտութեան մի ընդարձակ ասպարէզ է և մենք կարող ենք միայն մատնացոյց անել այս կուլտերի վերաբերմամբ եղած գլխաւոր հայեացքները։ Մանհարտ ու Փրէզէր ծառերի կուլտի մնացորդները ուսումնասիրել են երոպական գլուղացիների տեղական սովորոյթների մէջ։ Նախնական մարդը ըստ երևոյթին ծառերը պաշտելիս է եղել իբրև զարմանալի կենդանի էակներ. բայց շուտով նա գլխի ընկաւ որ ծառը ունի ոտի, որի բնակարանը կամ մարմինը ինքը ծառն էր և որ ունէր տարբեր տարբեր ուժեր,—ինչպէս օրինակ, կարող էր անձրև կամ պղտորութիւն առաջ բերել բոյսերի ու կենդանիների մէջ։ Ծառի ոտքից՝ վերջը կազմակերպվեց ծառի աստուածը, որ կարող էր թողնել սրբազան ծառը կամ որ գլուխ էր կանգնած շատ ծառերի վրայ։ Այս հատատալիքների մասին են խօսում մրցանակ (Maypole) տանալու և պսակներ բաղելու (Harwest) համար կայմը բարձրանալու՝ արագ կերպով վերացող սովորութիւնները։

Ղրիւրին ոկզբում կարող էին երկրպագել նոյն իսկ

նրա սիրուցը, իսկ յետոյ դրան կարող էր աւելանալ յատկութիւնը։ Ղրիւրների երկրպագութիւնը այսպէս էր լինում. նրանց մէջ գտնում էին թանկագին իրեր կամ նուէրներ էին կախում շրջապատող ծառերից, խնդրելով աստուածութիւնից նրան է բարերարութիւն։ Գետերն ու լճերն էլ սրբազան էին համարվում։ Քարերի, բայց ոչ արուեստական կերպով յղկված, այլ այն ձևով սրբազան համարվող քարերի պաշտումը, ինչ ձևով որ նրանք գտնվել էին՝ շատ տարածված էր նախնական մարդերի մէջ. սակայն այս առարկայի մասին մինչև հիմա շատ քիչ բան է յայտնի։ Մէքքայի Քաաբը և Եփեսոսի Անահտի տաճարում եղած քարը այս կուլտի առանձին կարևոր օրինակներն են. սակայն ենթադրում են որ նմանօրինակ կուլտի առարկաները՝ կանգնած քարերն կամ մենդիրներն էին, որոնք հանդիպում են ողջ Եւրոպայում, Նոյնպէս և Ասիայի Տարաւում ու արևմուտքում։ Պալէստինէում այսպիսի քարեր չկային, թէպէտ նրանք հանդիպում են դրացի երկրներում, և Կոնդէր (Conder) այս բանը վերագրում էր այն ուղղափառ թագաւորների հառնդին, որոնք, ինչպէս ս. Գրքից յայտնի է՝ կործանել էին իրանց հոդի վրայ կռապաշտական բոլոր արձանները։

Չի կարելի ուշք չդարձնել այս հանուր կողմի, այն է՝ նրանց տեղական բնոյթի վրայ։ Սա մի որոշ դրոշմ է դնում նախնական մարդու իւրաքանչիւր կրօնի վրայ։ Սրբազան ծառի աստուածութեանը կարելի է երկրպագել միայն այն տեղում, որտեղ կանգնած է ծառը, և նա, ով իր ցանկութիւնների կատարումը ստանալու համար ադրիւրին է դիմում, պէտք է ադրիւրը գնայ։ Այսպիսի կրօնի մէջ աստուածութիւնը իր բնակութիւնը հաստատած ունի մի որոշ կէտում. սա ոչ թէ շարժական՝ այլ որոշ տեղի հետ կապված մի աստուածութիւն է։ Նրա բնակարանին յարակից է մի պատմութիւն կամ պատմութիւնների մի շարք, նրա սրբավայրում կատարվում են այս կամ այն ծէսերը. և այսպէս շարունակվում են ամբողջ

պարեր։ Մի յայտնի տեղի հետ կապված աստուածութիւնը պաշտւում է այն ժողովրդի կողմից, որ բնակում է այդ տեղի շուրջը։ Աստուածութիւնը կունենայ իր սեփական ժողովուրդը, կապրի նրա միջև, և միմիայն այս ժողովուրդը կերկրպագի նրան։ Այսպիսով երկրիս երեսը բաժանւում է աստուածութիւնների մի ամբողջ շարքի միջև, անհնչիւն իւրաքանչիւրը որևէ փոքրիկ թագաւորի նման բաղմում է իր պալատում իր սեփական ժողովրդի միջև։ Փոխադրվելով իր հայրենիքից հեռաւոր տեղեր՝ մարդը երեսի վրայ է թողնում մի աստուածութեան կարասածքները և գտնում է միւսի կարասածքները. բայց որովհետև աստուածութիւնը կարելի է երկրպագել միմիայն նրա սեփական սրբավայրում, այս պատճառով մարդը, թողնելով իր հայրենիքը՝ թողնում է և՛ իր կրօնը, և ստիպված է կամ ուրիշ աստուածների ծառայել, կամ դադարեցնել կրօնական որևէ պարտաւորութիւն կատարելը։ Այսպիսով աստիճանին կից հասկացողութիւնները ընդհարւում ու համաձայնութեան են գալիս նախնական շատ երկրներում այն կարծիքի հետ, որոնք միացած են տեղական սրբավայրերին։ Սրբավայրի շուրջը բնակողները արենակից ազգականներ են, տեղական աստուածութիւնն էլ նրանց ցեղապետն ու կենդանի դրսեն է համարւում։ Կրօնը, ըստ այսմ, ունի թէ ցեղական ու թէ տեղական բնոյթ։ Մարդու ոգեորութիւնը (յափշտակութիւնը) կրօնական ծէսերի ժամանակ բորբոքւում է միմիայն նրա ցեղակից եղբայրների համար, նրանց համար որոնց մէջ հաստատ է հէնց նոյն աստուածային նախնու արիւնը. սրանով նա կատարում է իր պարտաւորութիւնը իր կրանի վերաբերմամբ, ձգտում է իր կրանի բարեկեցութիւնեան։ Ուրիշ ծագում ունեցող մարդկերի հետ նա կրօնական կապեր չունի, նրանք ուրիշ արիւնի, ուրիշ կարգի մարդիկ են։ Նրա կրօնական պարտաւորութիւնն այն է, որ սիրի իր ցեղակից դրացուն կամ ընկերոջը և ատի իր թշնամուն, այսինքն՝ ուրիշ ցեղի պատկանող մարդու։ Իսկ միւս

կողմից՝ որովհետև կրօնը մի որոշ տեղի մօտենալն ու որոշ ծէսեր կատարելն է՝ ապա, կատարելով այդ ծէսերը և թողնելով իր Աստծուն՝ մարդն իր կրօնից էլ է անջատւում։ Սրբավայրին վերաբերւում են շատ լաւերին յարգանքով, յաճախ՝ ահ ու դողով, սակայն նրանից մի որոշ տարածութիւն հետու՝ տեղի է ունենում փոխոխութիւն, սրբավայրից հեռանալու ժամանակ կրօնը փոխւում ու երեսի վրայ է թողնւում։ Հանուր առմամբ՝ այսպիսի մի կրօն աւելի զրզռող էր ու զօրեղ, քան բնութեան մեծ ուժերի երկրպագութիւնը, և աւելի էր հիւսված համայնական կեանքի հետ. բայց սրա հետ միասին նա ամենամեծ խոչնդոտներ էր յարուցանում առաջադիմութեան հանդէպ, առհմանափակելով մարդու աչքն ու մտերմութիւնը նրա ցեղով ու երկրով և դցելով այն մի յատուկ պահպանողականութեան մէջ։

3) ՑԵՏՄԱՀԵԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ։ Այն հաւատը, թէ մարդու ոգին չէ աշնչանում մարմնի մահուլը, այլ մի տեսակ շարունակում է իր գոյութիւնը առանց մարմնի՝ առաջ է բերել մի ամբողջ շարք տեսութիւններ. այն հասկացողութիւնները, որ ձեռք է բերել նախնական մարդը ոգիների ու հանդերձեալ կեանքի վերաբերմամբ՝ այն հին կրօնի մտքերից մէկն են, որոնց իրրև ժառանգներ հանդիպ են գալիս կրօնական մեծ սիստէմները։ Թաղման սովորոյթները նախապատմական ժամանակներում, երբ այլ և այլ աստիճաններ դեռևս էին գերեզմանում մեռած հերոսի կամ հօր մարմնի հետ միասին, այն զանազան նուէրները, որ բերում էին նրա թաղման կամ այրելու միջոցին ու նրա յիշատակին կատարվող խնջոյքների ժամանակ, ցոյց են տալիս որ մեռածների հոգիները, նախկին մարդերի կարծիքով, գերեզմանի միւս կողմն էլ այնպիսի կեանք էին վարում, ինչպիսին և այստեղ, թէպէտ նրանք կատարեալ գոյութիւն չունէին և քիչ ուժ ունէին. Հոմերոս նրանց «վատուժ» է անուանում։ Այդ հոգիները ուտելիքի ու ըմպելիքի կարիք էին զգում, և մարդիկ այնպէս էին

համարում թէ կերակրի ամենանուրբ մասը նրանց է հասնում։ Արիւն խմելը կենդանացնում էր նրանց, և նրանք կարող էին զանազան բաւականութիւններ ունենալ։ Այս հաւատալիքը, ինչպէս կասկածներ, տարբերվում է անդրկերեզմանային կեանքի բոլոր նորագոյն վարդապետութիւններից։ Վայրենին մարմնի յարութեանը չէ, որ հաւատում է։ Նա լաւ գիտէ որ մարմինը չէ վեր կենում գերեզմանից. բայց այն էլ գիտէ, որ ոգին առանց մարմնի կարող է գոյութիւն ունենալ, շարժվել և կատարել մի շարք այնպիսի գործեր, որպիսիք մարդը կատարում էր կենդանութեան ժամանակ։ Չի էլ կարելի ասել որ վայրենին հաւատում էր հոգու անմահութեանը։ Այս տէրմինը գոյց է տալիս ազատ, ոչնչով չհաշկանդված գոյութիւնը մահից յետոյ. իսկ վայրենու աչքում ոգին մահից յետոյ լոկ մի պլոտը, անկայուն գոյութիւն ունի, նա աշխարհում կապուած է որոշ կէտերի հետ, որոնք նրան առաջ էլ ծանօթ էին. նա շատ բան չի կարող անել. նա ապրում է, առնելով բաղմաթիւ չափաւորութիւններ ու սահմանափակութիւններ։ Չի էլ կարելի ասել որ նախնական մարդիկ հաւատային լինէին ըստ գործո հաւատացմանը գերեզմանի միւս կողմում։ Տեղ-տեղ նախնական ժամանակներում մենք հանդիպում ենք այս հաւատալիքին սակայն սովորաբար այնպէս էր կարծվում, որ անդրկերեզմանային կեանքը պակաս էր կատարվում աստուածների ձեռքով, քան՝ երկրաւոր կեանքը. մահը, ինչպէս մարդուն խլում է բնաւորիցից, այնպէս էլ խլում է աստուածութիւնից, և մեռելները մնում են մէն-մենակ։

Այսպիսի հասկացողութիւն ունի նախնական մարդը հանրապէս անդրկերեզմանային կեանքի մասին. բայց երեւակայութիւնը շատ վաղ է սկսում զբաղվել այս հարցով, և այս կեանքի զանազան կողմերը զանազան տեղերում այլ և այլ կերպով ու աւելի կենդանի գոյներով են ներկվում։ Ննջեցեալների բնակութեան տեղը, նրանց պարապմունքը, զուարճութիւնները նկարագրվում են զանազան կերպով. նրանց բնական

աշխարհը պատկերացվում է իբրև նրանց ծանօթ մի երկիր՝ իդէալական կողմերի յաւելվածով. նրանք մօտաւորապէս անում են էլի այն, ինչ-որ անում էին երկրիս վրայ. որսի են գնում կամ ինջոյրներ սարքում, նաւագում են երաժշտական գործիքների վրայ կամ զրոյց անում։ Ուրիշ դէպքերում են-թադրվում է դատավայրի գոյութիւնը, որտեղ հոգին ներկայանում է՝ դատվելու, և այն ժամանակ, իհարկէ, ոգիների աշխարհը բաժանվում է երկու և աւելի մասների՝ իր մէջ գետեղելու փրկվածներին ու դատապարտվածներին։ Երանելիների ու դատապարտվածների բնակութեան տեղերի մանրամասն նկարագրութիւնը, որ բրիստոնէութեան բացառիկ սեփականութիւն չէ ամենևին, նախնական աշխարհում երևան է գալիս աւելի մեծ զարգացման ժամանակ։ Տայլօր ասում է թէ դժոխքի հասկացողութիւնը բոլորովին անծանօթ է վայրենուն։ Թէև այն վարդապետութիւնը, որ խօսում է հոգիների՝ բոյսերի կամ կենդանիների մէջ փոխանցվելու մասին՝ զարդացել է հոյն իսկ նախնական ժամանակներում։

ՄԵՌ ԿՐՕՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՅՍ ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐԻՑ։

Հաւատալիքների մասին ունեցած այս պէս պէս մտքերի զարգացումը առաջ է եկել նախնական ժամանակներում, և սրա մասին մեր բոլոր ասելիքը համարեա այս է միայն։ Վայրենիների կրօնի տարբեր տարրերը, որ մենք այնպէս համառօտակի ենք նկատել, իրար վրայ են կուտակվում անվերջ կօմբինացիաներով. այնպէս չէ պատահում, որ նրանցից մէկը կամ միւսը ուրիշ կապ չունենայ միւսների հետ։ Չկայ մի այնպիսի ֆետիշիսմ, որ չվերէր իր վրայ մեծ աստուածների նախնական հաւատի հետքերը. չկայ մի այնպիսի հաւատալիք մեծ աստուածների վերաբերմամբ, որին կցված չլինէր սառնապատ ոգիների հաւատը։ Նախնական իւրաքանչիւր կրօնի վերաբերմամբ անհրաժեշտ է, որ մարդ հաշիւ տայ իրան թէ ինչպիսի հիմնական տարրեր ունի, և ինչպէս նախնական աշխարհի տարբեր հաւատալիքները,—այն հաւատալիքները, որոնք առաջ

ա՛ն գալիս այսպիսի պէս պէս ապրիւրներից,—հանդիպում ու միանում են իրար հետ։

Մինոյն հարցերը պէտք է տանք մեզ, երբ խօսքը մեծ կրօններից որևէ մէկին է վերաբերում։ Մեր նկատի ունեցած տատալիքները այն նիւթերն են, որոնցից առաջ են եկել և այս կրօնները։ Նրանք ոչ բնութիւնը կառավարող մեծ առաջնորդների հաւատալիքն են առաջ բերել, ոչ մարդու գործերի մէջ խառնվող սուրնագոյն աստուածների հաւատալիքը։ Նրանք ոչ էլ անդրգերեզմանային կեանքի հաւատն են առաջ բերել, նրանք չեն որոշել թէ տարուայ ո՛ր եղանակներն են համապատասխան եղանակներ, նրանք չեն սրբացրել այն վայրերը, որոնց միշտ զուգընկեց է եղել աստուածների երկրպագութիւնը։ Այս բոլորը նախապատմական ծագում ունեցող հատատալիքներ են, և մեծ կրօնները չեն ամենից առաջ նրանց առաջ մղողը, այլ շրջապատել են նրանց նոր հեղինակութեամբ և իրրև ձէս են սահմանել այն, ինչ որ ունի վաղ էր զարգացել՝ առանց ո՛րևէ սահմանի, լոկ սովորութեան անգիտակից աշխատութեամբ։ Կրօնների մեծ հիմնադիրներից ոչ մէկը չէ՛ հանդիպել աշխարհում մի կրօնի, իրրև մի նոր բանի, այլ միայն հին կրօնին աւելացրել է նոր ձևեր ու նոր պատուիրաններ։

Պարելի է ասել որ եղել այսպէս տարրեր են այն տարրերը, որոնցից առաջ են եկել նախնական կրօնները իրրև միամրոցութիւն՝ ապա ուրեմն կրօնները ամենից առաջ սկիզբն են առել իլիւզիաներից*)։ Սա, անտարակոյս, որոշ մտքով ճիշտ է։ Նախնական մարդու կողմից իլիւզիա էր՝ ենթադրել, որ բնութեան ուժերը շնչաւոր էակներ են, որոնք կարող են նրան դաշնակից լինել և պատասխանել նրա խնդրուածքներին. իլիւզիա էր այնպէս մտածելը, թէ ծառի կամ քարի մէջ ոգի

*) Այն զգայական մոլորութիւնը, որի մէջ բոլոր անասնելի բաները իրակա-նի աշխ են ընդունում—Ջնորք, պատրանք։

կայ, որ մարդկային հոգիները իրանք իրանց կարող են թափառել երկրիս վրայ, երևի վրայ թողնելով իրանց մարմինները։ Բայց այս իլիւզիաները վերջ ի վերջոյ այն ժամանակվայ կրօնական ոգու արտաքին ու թերի արտայայտութիւնն էին։ Որովհետև միշտ պէտք է արտայայտվի այնպիսի տերմիններով, որոնք համապատասխան են մի որոշ ժամանակում գոյութիւն ունեցող հասկացողութեանը. և եթէ աշխարհը լոկ թերի հասկացողութիւն է ստացել, այն ժամանակ հասկացողութեան թերութիւնները անխուսափելի կերպով ցոլանում են կրօնական հաւատալիքների վրայ։ Սակայն միւս կողմից՝ կրօնը բոլ ինչեան ունի մեծ բան է, քան հասկացողութիւնը. կրօնը միևնոյն ժամանակ մի հաւատ է ու հաղորդակցութիւն, և նրա այս երկու կողմերը կարող են լինել խոր և ուժեղ, մինչ անգամ եթէ այս ձևերը առաջ բերող հասկացողութիւնը շատ մոտում սխալական է։ Իսկ եթէ պարզվում է որ հասկացողութեան այն ձևերը, որոնց մէջ դրվել է կրօնը, սխալական են՝ այն ժամանակ կրօնը կարող է թողնել այս ձևերը և ընդունել նորերը, ինչպէս ծառը չորացած տերևների փոխարէն հագնում է նորերը։

Սակայն ուժեղ չի լինի, եթէ մտածենք որ մինչ անգամ իլիւզիա հասկացողութեան՝ նախնական կրօնը լոկ իլիւզիա էր։ Բանասաեղծական ընդունակութիւնը, մի այնպիսի ընդունակութիւնն է, որ առիթում է մեզնից գոյը գանել այն, ինչ որ մենք պիտի ենք մեր ներսը և հաստատել որ ոչ տակաւին ենք՝ առանց ո՛րևէ սահմանի, լոկ սովորութեան անգիտակից աշխատութեամբ։ Կրօնների մեծ հիմնադիրներից ոչ մէկը չէ՛ հանդիպել աշխարհում մի կրօնի, իրրև մի նոր բանի, այլ միայն հին կրօնին աւելացրել է նոր ձևեր ու նոր պատուիրաններ։

Պարելի է ասել որ եթէ այսպէս տարրեր են այն տարրերը, որոնցից առաջ են եկել նախնական կրօնները իրրև միամրոցութիւն՝ ապա ուրեմն կրօնները ամենից առաջ սկիզբն են առել իլիւզիաներից*)։ Սա, անտարակոյս, որոշ մտքով ճիշտ է։ Նախնական մարդու կողմից իլիւզիա էր՝ ենթադրել, որ բնութեան ուժերը շնչաւոր էակներ են, որոնք կարող են նրան դաշնակից լինել և պատասխանել նրա խնդրուածքներին. իլիւզիա էր այնպէս մտածելը, թէ ծառի կամ քարի մէջ ոգի

բերութիւն ունենալ, որ զօրեղ է նոյն իսկ Լրանից։

Այս արտայայտութիւններն էին նրա կրօնի կենդանի ու զարգացող տարրերը և ոչ թէ արտաքին անյաջող արտայայտութիւնները, որոնցով համակվել էր պղպատմը։

Ը. ՖԼՈՒԽ

ԿՐՕՆԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ։—ԾԷՍԵՐԸ։ Կարևոր է յիշել, որ հատատը նախնական կրօններում այժմեանից ամենի փոքր նշանակութիւն ունէր. մարդու կրօնը՝ կրօնական ծէսերը կատարելն էր, և ոչ թէ հատատալիքները կամ աստուածութեան նկատմամբ ունեցած մտախոհութիւնը։ Բացի դրանից՝ կուլտը կրօնի մի այնպիսի տարրն է որ ամէն ժամանակներում ու բոլոր երկրներում շատ դանդաղ է զարգանում։ Մինչ անգամ գաղափարի ծագման ու հատատալիքների փոփոխութեան շրջաններում մենք յաճախ տեսնում ենք որ առաջին ժամանակների կուլտը, պարզ լինելի հետ ձևերն է պահպանում, ասես թէ փոփոխութիւնների չէ էլ ենթարկվում։ Մարդիկ ամեն սիրով իրանց հատատալիքներն են փոխում, քան սովորոյթները, մանաւանդ հատատի հետ կապ ունեցող սովորոյթները։ Եթէ սա մի սովորական երևոյթ է, ապա ամենի նախնական աշխարհին է վերաբերում, քան ներկային։ Այս կամ այն սրբավայրի կրօնը՝ աստուածութեան մասին գոյութիւն ունեցող սրոշ պատմվածքը և նրան պատկերացնող առարկայի առաջը կամ մերձակայքում կատարվող սրոշ գործողութիւններն էր։ Սակայն, եթէ մարդ ծէսեր էր կատարում կամ մասնակցում այդ ծէսերին՝ պարտաւորական չէր համարվում հատատալ այդ աստուածին։ Անձնական հատատալիքների մասին ոչ ոք նրան բան չէր հարցնում. բաւական էր որ նա մասնակցում էր կուլտի քահանայապօրծութիւններին՝ արդէն նրան կրօնական մարդ էին համարում, եթէ միայն նա բանը այնտեղը չէր հասցնում որ ծաղրէր իր ժամանակի հանրային կրօնը։

Իսկ կրօնը կազմող արարողութիւնները բարդ կամ դժուար արարողութիւններ չէին։ Նախնական ժամանակներում, աստուածութեան մօտենալու համար՝ մանր ծիսակատարութիւններ չէին պահանջվում. ամեն մարդ կարող էր ծէսեր կատարել, որովհետև ծէսերը սահմանվում էին ոչ թէ դեռևս գոյութիւն չունեցող սրևէ օրէնքներով, այլ՝ սովորութեամբ ու հասարակական կարծիքով։ Թէ ինչպէս պէտք է ծառայել աստուածութեանը՝ այդ նրա շուրջը բնակող իր ժողովուրդը գիտէ. միւսները չգիտէին։ Ասորեստանի գաղթականները ստիպված էին մարդ ուղարկել մի հրէայի եռևից, որ նա սովորեցնէր նրանց՝ երկրպագել Պալէստինէի աստծուն, երբ նրանք բնակութիւն հաստատեցին Նրա երկրում, և չգիտէին թէ ինչպէս պէտք էր ծառայել Նրան (Երկր. թագ. Ժէ. 24)։ Դրանից շատ ժամանակ անց՝ կրօնական ծիսարանը դառնում է մի զաղտնիք, որ յայտնի է լինում միմիայն սրբավայրի պահապան քուրմին կամ սակաւաթիւ ընծայվածներին։

Նախնական կրօնի անփոփոխ բնորոշ կողմը *զոհաբերութիւնն* է։ Չէնց ամեն տեղ, ուր որ երկրպագում են աստուածներին՝ սրևէ եղանակով նուէրներ են մատուցվում կամ զոհաբերութիւններ անվում։ Այսպիսով հնումը գնել վերաբերվում էին աստուածութեան հետ ունեցած յարաբերութիւնները, եթէ դրանք առժամապէս տկարանում կամ անհետանում էին, կամ թէ ամրապնդվում էր նրա հետ ունեցած կապը։ Զոհաբերութիւնն ու կուլտը հին աշխարհում նոյնանիշ տերմիններ էին։ Նուէրի բնոյթն ու մատուցանելու եղանակը շատ սէս սէս են, սակայն միշտ սրևէ կերպով զոհաբերութիւն է տեղի ունենում։ Զանազան աստուածութիւններ իրարից տարբերում են և՛ զանազան նուէրներ. ծառի արմատն է ջրվում, կամ թէ ոտներից կախվում են պատերազմների կամ որսերի աւարները. ձիերը ծալն են ձգում։ Բայց նախնական զոհաբերութեան նկատմամբ կարելի է հաստատել որ բաղ-

կանում է այնպիսի ուսկիրից ու բմպելիքից, ինչպիսին գործ են ածում մարդիկ։ Դաշտային պատուհներն ասէր՝ թէ հօտերի անդրանիկները, զոհ են բերվում սրբազան քարի մօտ, կիսվում է զոհը աստուածուհեան ասջև կամ մատուցվում ու թողնվում է նրա մօտ, կամ թէ ապաթխում են դէպի նրան, որ իջնի երկնքից և գայ այն հնուսւոր երկրից, ուր որ մեկնել էր,—այդ բոլոր դէպքերում զոհարերութիւնը միշտ բաղկանում է կերակրի մէջ գործ ածվող նիւթերից։ Ուրիշ դէպքերում բուն երեսոյթին ենթադրվում է, որ աստուած կանում է նուէրները, ինչպէս օրինակ, երբ կրակին երկրպագում ու զոհեր են բերում, որ նա կիզում է, կամ թէ երբ երկրի ճեղքը փակվում է, կլանելով զոհը, սակայն շատ դէպքերում ենթադրվում է, որ աստուածուհիները զուարճանում զոհարերութեան հոտով կամ նուրբ էութիւնով, իսկ մնացածը թողնում է մարդուն։ Այս պատճառով զոհաբերութիւնը սովորաբար կատարվում է հազիհազ։ Զոհը մատուցվում է աստուածուհեանը ողջ-ողջ, բայց երկրպագուները նրան օգնում են ուտելում։ Աստուածուհիները սահնում է զոհի հանդէպ մասը, որ վեր է բարձրանում իր կողմը, մինչդեռ ուրիշ նիւթերն մասը ուտվում է ցածումը։ Իւրաքանչիւր զոհաբերութիւն միանգամայն և սնունդ է)։ Եթէ այս այսպէս է, ապա անկարդ է մեզ բննել մի ամբողջ շարք սնոսւթիւններ, որոնք երբեմն աշխարհիս էին գրաւում իրանց կողմը և վերաբերում էին զոհարերութեան սկզբնական նշանակութեանն ու նպատակին։ Վաղեմի արտայայտութիւնները յաճախ հաստատում են այն հայեացքը, թէ ասացին անդամները զոհարերութիւնը, աստուածուհիներից անհրաժեշտ օգնութիւնը սահնալու համար, նրան կաշառելու պէս մի բան է նշած։ «Do ut des», «Տալիս եմ, որ առա»։ «Ես քեզ իւղ,*

*) Տարբեր հաստատում է որ «աստուածուհիներին զոհ բերելը կենակցութեան թէ ասորին ու թէ բարձր աստիճաններին վրայ՝ ասոր դէպքերից յայտնում, գնա դրանից էլ ասվի՝ կերակուր ու արբագան խնճոյքներ տալն է»։

*ուղարկիր մեզ կովեր»։ «Նուէրներով համոզում են աստուածներն ու մեծամեծ թագաւորները»։ Բայց մեծ նախնական զոհաբերութիւնը լոկ մի շահագրգիռ գործողութիւն էր, որի մէջ մարդը, իր ազօթքով դիմելով աստուածուհեանը՝ ընծաներ էր տալիս նրան, ինչպէս սովոր էր անել երկրաւոր իշխանութիւններին դիմելիս, որպէսզի իր օգտին տրամադրի աստծուն և ստիպի նրան կատարել իր խնդիրը։ Մինչ անգամ եթէ այս այսպէս էլ լինէր, եթէ զոհը բերվելիս լինէր ուղղակի ու համարեա մինչ անգամ այն բացարձակ դիտաւորութեամբ, որ փոխարէնը լաւ վարձատրութիւն ստացվէր,—այստեղ նոյնպէս բաւական էր որ զոհը ստանում է կերակրի կերպարանք, նա հէնց դրանով բարձր է կանգնում կաշառման ամենաստոր ձևից։ Մյլ է մարդու ձեռքը վող դնելը, այլ է նրան ճաշի հրաւիրելը, մինչ անգամ եթէ երկու դէպքումն էլ նպատակը մէկ է. իսկ եթէ այս հրաւէրները կրկնվում են յաճախ ու բաց կերպով՝ այն ժամանակ երկու կողմերի միջև պէտք է լինի բարոյական, և և այլ անբարոյական յարաբերութիւններ։

Ո՛րտեղ զոհաբերութիւնը կատարվում է կերակրով՝ այնտեղ աշխատում են յարաբերութիւններ հաստատել. երկրպագուի ու երկրպագելի առարկայի միջև կայ մի որոշ համակրութիւն. նրանք միմեանց վերաբերմամբ ոչ թէ կաշառողի ու կաշառվողի կամ գնողի ու վաճառողի՝ այլ պատրոնի ու հովանաւորեալի, հայրուորդիական յարաբերութեան մէջ են գտնվում։

Սակայն, ենթադրելով որ նախնական զոհաբերութիւնը շատ դէպքերում մի հոգևոր էր, մի ծէս՝ ընկերվարական տարրով, որ մի որոշ յարաբերութեան մէջ էր գնում աստծուն ու նրա երկրպագուին՝ շահագրգիռ է իմանալ թէ ինչ նպատակ ունէր այդ հոգևոր, ինչպիսի շարժառիթից է առաջ գալիս։ Երբեմն դա լոսո երևոյթին նկատի է ունեցել զօրացնել աստուածուհիները, ասելի կարող դարձնել նրան, որ նա կարողանար կատարել այն, ինչ որ իրան խնդրում են։ Վէդական օրհներգների մէջ անվիճելի կերպով պատա-

հում է նմանօրինակ չարժառիթ։ Նախնական մարին, անտարակոյս, յատուկ է այն հասկացողութիւնը, թէ ոչ միայն մարդս է աստուածութեան կարիքն ղգում, այլ և աստուածութիւնը կախումն ունի մարդուց և կարող է խրախուսվել, կարող է օգտվել մարդկային օգնութիւնից։ Այս ծէսերի մէջ, որոնք չեն կարող բոլորովին ճշտօրէն զոհաբերութիւն կոչվել՝ տեսնում ենք որ մարդիկ աշխատում են հատանութիւն տալ այն բանին, ինչ որ անում են աստուածութիւնները և մասնակցել նրանց արածներին, իրանք կատարելով հէնց այնպիսի գործեր։ Այս բանին կարող են օրինակ լինել մի քանի դէպքերում հեթանոսութեան ժամանակները վառվող կրակները, որոնք կապ ունէին արևի հետ, և ուրիշ շատ ծէսեր։

Սակայն նախնական ժամանակներում զոհ բերելու գլխաւոր չարժառիթը այս չէ։ Զոհաբերութիւնը միշտ ոչ միայն աստուածութեանը մատուցվող մի իր է եղել, այլ և մի գործ, որի մէջ մասնակցութիւն է ունեցել մարդը. եթէ սա հոգեհաց էր, այն ժամանակ այդ հոգեհացից աստուածութիւնը բաժին էր հանում իր երկրպագուներին։ Հինաստանում, ընտանեկան հանդէսներում հրաւիրվում են նախնիքը (նախահայրերը), կամ թէ նրանց համար տեղ է պահվում, և նրանց՝ հոգեհացի բաժինը դրվում է իրաց առջևը։ Հոմէրոսի Եղիականում պատմվում է մի հանդիսաւոր կրօնական արարողութիւն. աղօթքներից յետոյ զենում էին զոհեր, նրանցից կըտրատում էին համով պատառները, որ երկրպագուները խորովում էին կրակի վրայ, և ուտում կշտանալու չափ. դրանից յետոյ՝

Փառաբանում էին աստծուն արէայիք*) ողջ օրը,
Բարձր ձայնով Ապոլլոնին երգարանում տպաւորը,
Փառք տալով նետընկէցին, որ հրճվում էր՝ ականջ դնելով։
(Имада, I, 457—474).

*) Այդպէս է անուանում Հոմէրոս առհասարակ բոլոր յոյներին։
Հ. Թ.

Երբեմն արիւնը թափվում է աստուածութեան համար, և պանաղան զոհաբերութիւնների ժամանակ առանձին մեր են առնում իրրև Նրա բաժին որոշ մասներ, իսկ մնացածը ուտում են քահանաները։ Ուրիշ առաջ եղած զոհաբերութիւնների ժամանակ քահանաներ չեն եղել. զոհողները զոհը բերելուց յետոյ աշնչացնում էին այն, և սա նոյնքան մի ուրախ զուարթ երեույթ էր, որքան և խնջոյքը։ Սա մանաւանդ պարզ կերպով արտայայտում էր սէմիտների զոհաբերութիւնների մէջ, ինչպէս շատ համոզիչ կերպով ցոյց տվեց Ռօբէրտսոն Սմիտ։ Հին սէմիտ սովորութիւնների մէջ զոհաբերութիւնը մի հաղորդակցական արարողութեան բնոյթ ունէր, որի մէջ աստուածութիւնն ու նրա մարդկային ընտանիքը, ուտելով միանգամայն միևնոյն զոհը՝ հռչակում ու վերանորոգում էին իրանց միութիւնը միմիանց հետ։ Ուրիշ ժողովուրդների սրա նկատմամբ կարող էին մանրամասնութիւնների մէջ որոշվել սէմիտներից, բայց հաներազէս կարելի է ասել որ նախնական զոհաբերութիւնը մի արարողութիւն էր, որ կատարում էր ոչ թէ ուրոյն անձնաւորութիւնը, այլ՝ ցեղը, և բոլոր արիւնակից ազգակցական ցեղերը մասնակցում էին զոհ բերելուն այն աստուածութեանը, որ լինելով նրանց հանուր նախնին՝ ասես թէ պրես էր կանգնած նրանց խնջոյքին և հետները մասնակցում։ Երբեմն տօտէմիստների կրօնների զոհ է բերվում մի կենդանական «տօտէմ», և կրնի բոլոր անդամները ուտում են իրանց նախնին (այսպիսի հանդիսաւոր դէպքերում միայն կարող էր ուտվել կենդանական «տօտէմը») և այսպիսով վերանորոգում են իրանց ընկերական ու եղբայրական կապը։ Զոհաբերութեան շնորհիւ զաշն է կապվում, որտեղ իրրև դաշնակից կողմեր հանդիսանում են աստուածութիւնն ու ժողովրդի բոլոր անդամները։

Այս նախնական հասկացողութիւններին անտարակոյս կցվում են ուրիշ հասկացողութիւններ։ Զոհաբերութեան բնոյթը, որ իշխում էր ցեղի յարաբերութիւնները աստուա-

ծուլության հետ վերաբերվելու համար՝ միշտ միևնույնը չէր. նա կախված էր հանգամանքներից։ Սովորաբար զոհաբերությունը նախնական ժամանակներում մի ուրախալի անցք էր, սակայն դաժան աստուածության առաջ կատարվում էին դաժան ծէսեր։ Մարդակերությունն էլ նույնպէս մի նախնական զոհաբերություն էր և ըստ ինքեան, անկասկած, ամենազօրեղ միջոցն էր՝ աստուածության կապը ցեղի անդամների հետ ամրապնդելու համար։

Եթէ մենք ձեակերպենք սրն է առանձին ժողովրդի զոհաբերության պատմությունը՝ կտեսնենք որ զոհաբերության հետ կապված են երկու հակառակ ուղղություններ։ Մի կողմից ցանկություն է երևում մեղմացնելու զործերի դրությունը, խույս տալու խիստ ծէսերից, բաւականանալու կենդանու զոհ բերելովը,—թէպէտ սովորաբար մարդկային զոհ էր պահանջվում,—բայ թողնելու մարդուն սրն է թեթև վնասով կամ նախկին սովորությունների հակառակ՝ թոյլ տալու չքաւոր մարդկանց թեթևագին զոհ բերելու,—և ահա ծիսական կողմը դառնում է քաղաքակիրթ և յարմարվում է մաղասէր ժամանակների էսօրվին։ Միւս կողմից՝ ցանկություն է յայտնվում մեծացնելու զոհի արժէքը և զոհի արժէքով ու տանջանքներով չափելու զոհաբերության արժէքը։ Ըստաբին թշուառությունների շրջաններում զոհաբերությանը աւելի մեծ նշանակություն է տրվում, քաոսիս կատարվում են բոլոր ծիսականությունները, ոչինչ չէ խնայվում՝ ժողովրդին նորից աստուածության վրայ աշխատացնելու համար. հնացած մտքի սովորույթները կրկին վերանորոգվում են, ծիսականությունները բարդվում են, մտցնվում են զոհաբերության նոր եղանակներ։ Զոհաբերության նախկին ընկերվարական իմաստը շատ է յետ մնում. նա՝ զոհաբերությունը դառնում է պիտաշարժություն կամ փրկարար զոհ, պաշտպանվում է այն համոզումը, թէ սրան արժէքաւոր է զոհաբերությունը կամ սրան շքեղ ու զարհուրելի է նրա հետ միացած ծիսական

կողմը՝ այնքան ճշմարիտ է։

Աղօթքը՝ զոհաբերության սովորական ընկերն է. երկրպագուն նրանով բացատրում է զոհաբերության պատճառը, խնդրում է աստծուն ընդունել իր զոհը և հասցնել անհրաժեշտ օգնությունը։ Նախնական աստիճանի վրայ եղած մարդիկ ապրում են խիստ կարիք եղած ժամանակ և յաճախ քաոս երևույթին ձգտում են հրապուրել աստուածությանն ուշքը, որը կարող է շրջված լինել ուրիշ կողմ։ Այսպիսի աղօթքների մէջ պարունակված խնդրուածքները ամենանախնական յատկությունն ունեն։ Նրանց մէջ խնդրում են կերակրի, որսորդության կամ ձկնորսության աջողության մասին, ձեռքերի ուժի, անձրևի, բերքի առատության, որդիների և այլն մասին։ Նրանց մէջ լսելի է սակրոզական կարիք, նրանք մատնացույց են անում այն պահանջները, որ անում է երկրպագուն աստուածությանը, նրանց մէջ յիշվում են թէ նոյնժամանակ և թէ նախկին զոհաբերությունները. նրանք փառաբանում են աստուածության կարողությունն ու անցեալ գործերը և երդվեցնում են նրան իր ժողովրդի հետ (նոյնպէս և այդ ժողովրդի թշնամիների հետ) ունեցած յարաբերությամբ՝ երկրպագուի խնդիրը կատարելու։ Երբ կանոնը անփոփոխ է դառնում, այն ժամանակ սակրոզական կարիքի նշույլը անհետանում է աղօթքի մէջ. չլինելով այլևս լոկ ծայրայեղ կարիքից առաջ եկող մի պատահական երևույթ, այլ դառնալով կանոնաւորապէս որոշ ժամանակում կատարվող կուլտի սովորականությունն՝ աղօթքը ձգտում է ձուլվել որոշ կազապարների մէջ, դառնալ մշտական ու սահմանալ աստուածպաշտական բնույթ։ Փաքր առ փոքր նոյն իսկ աղօթքի խօսքերը սկսում են դառնալ սրբազան խօսքեր և քիչ թէ շատ կախումն են ունենում նրանից զոհաբերության ազդոզականությունը։ Դա մի երևույթ է, որին չի կարող դիմադրել աստուածությունը, դա մի կախարդանք է, որ իր մէջ պարունակում է ցանկալի հետևանքին հասնելու ուժը։

կան աշխարհում ոչ տաճարներ կային, ոչ կուռքեր, ոչ քուրմեր։ Բնութեան երկրպագութիւնը՝ կրօնական ծէսեր կատարելու համար որոշ տեղ պարտադրաբար չէ պահանջում։ Երբ ուրև է առարկայ սրբանում է՝ այն ժամանակ նրան երկրպագում են իր տեղում. նուէրները բերվում են ծառին կամ ապրիւրին, իսկ եթէ աստուածութիւնները երկրիս վրայ բնակող են համարվում՝ այն ժամանակ բլուրների գագաթները դառնում են այն վայրերը, որտեղ մարդը աւելի մօտ է դրանց։ Բարձրադիր վայրերը սրբավայրեր են համարվում բոլոր երկրներում։ Ծառաստանները ու մեկուսացած անկիւնները նոյնպէս սրբազան են։ Երբ մարդը պատրաստում էր մտնում վայրենի գազանների դէմ՝ նա սարսափով էր նայում այն տեղերին, որտեղ գտնվում էին նրանց որջերն ու ապաստարանները. այսպէս է առաջ եկել մարդու մէջ առաջին անգամ այն խորհրդաւորութեան զգացումը, որով ժամանակակից մարդիկ նայում են այդ վայրերին, որտեղ նրանք կտրված են մարդերի հետ ունենալիք բոլոր յարաբերութիւններից։ Երբ անցաւ այս սկզբնական բնաստիճանը, և երբ ծառաստանի վրայ սկսեցին նայել, ինչպէս աստուածութեան բնակավայրի՝ այն ժամանակ նա գարձաւ մի վայր, որին մարդիկ կարող էին մօտենալ միայն վախը նախապատրաստութիւններով։ Մենք այստեղ կարող ենք բացատրել մի հանգամանք, որ նշանաւոր դեր էր խաղում նախնական կրօնի մէջ, բայց որ կապված չէր նրա ուրև է որոշ կարգի հետ, այն է՝ տաբուի հասկացողութիւնը։ Տաբուն մի պօլինէզիական*) տէրմին է. դա ցոյց է տալիս այն ամէն բանը, ինչ որ մարդը չպէտք գործածի, կամ ինչին որ չպէտք է դիպչի, որովհետև աստուածութեանն է պատկանում։ Այն տեսլին, որ

*) Պօլինէզիա կոչվում է Ովսաբալիայի այն բոլոր կղզիները, որոնք ոչ Ներքին և ոչ արտաքին օվկիանների կղզիներին չեն պատկանում։ Այնտեղ յատկանական գարան է թագաւորում։

պատկանում է աստծուն՝ մարդու ուշ չպէտք է դիպչի. այն կենդանին, որ նուիրված է աստծուն՝ չպէտք է գործածվի իբրև կերակուր. իշխանաւորը որ պատկերացնում է աստուածութիւնը՝ յարգանք է պահանջում դէպի ինքը խոսքով ու գործով։ Սրանք են ահա տաբուի այն օրինակները, որոնց մէջ անձեռնմխելի առարկան կամ անձը պատկանում է բարի աստուածութեանը, և որոնց մէջ տաբուն ճշտութեամբ համապատասխանում է սրբութեան հասկացողութեանը։ Բայց աւելի յաճախ վայրենիների մէջ պատահում են առարկային վերաբերող տաբուի օրինակներ՝ չնորհիւ այն յարաբերութեան, որ նա ունի չար ուժի հետ։ Վայրենին ամէն կողմից շրջապատված է նմանօրինակ արգելքներով. իւրաքանչիւր քայլափոխում նա կարող է երկիւղ կրել իրան արգելված ուրև է բանի դիպչելուց, և բերել իր գլխին՝ չնախատեսված պատիժներ։ Նախնական աստուածութիւնների բնաւորութիւնը չէ ընդունում նրանց հետ *կռապաշտութեան* միացումը. կարիք չկայ պատկերացնելու այն էակը, որ աներևի ներկայ է և որ կարող է վտանգաւորել ու պաշտպել իր յատուկ անձով։ Աստուածութիւնը արդէն յետագայ ստիճանի վրայ սկսել էր կերպարանաւորվել և մտաւորապէս անջատվել իր հիմունքից, և այն ժամանակ ձևակերպութիւնների պահանջ էր զգացվել երևակայութեանը օգնելու համար։ Նախնական կրօնի մէջ սրբացվող բաները կուռքեր չեն։ Դրանք բնական բաներ են, ոչ մէկ արուեստական. դրանք ոչ մէկ աստուածութեան պատկերներն են, այլ՝ նոյն իսկ աստուածութիւնը կամ դէմ այն, ինչի մէջ որ բնակում է աստուածութեան ոգին կամ ինչի հետ որ աստուածութիւնը միանում է կուլտի նպատակների համար։ Այնուհետև նախնական ժամանակներին ծանօթ չեն բուրմերը, չկայ մի առանձին դասակարգ, որին յանձնված լինի բացատրել զոհաբերութիւններ անելը։ Զոհաբերութեան վրայ անժամանակ իշխող հայեացքին բոլորովին համապատասխան չէ այն ենթադրութիւնը, թէ զոհերը կարող էին մա-

տուցանել լիազորութիւն ունեցող անձերը։ Դա ուղղակի մարդու գործն էր, որով նա նոյնանում էր իր առուստածութեան ու ցեղի հետ. իսկ սա կարող էր կատարվել միայն անձնական ծառայութեամբ։ Մենք յաճախ տեսնում ենք որ գոհաբերութիւնները անում են թագաւորները ու իշխանաւորները։ Թագաւորը կամ իշխանաւորը անում է այս, ինչպէս իր կրքանի բնական գլուխ. մէկը պէտք է անի իր վրայ քահանայագործութեան միջոցին կատարվող գլխաւոր գերը։ Որովհետև կրօնը բաղաբակրթութեան գլխաւոր կողմն է, և տէրութեան առաջին պարտքն է՝ բարի յարաբերութիւններ պահպանել աստուածների հետ, այս պատճառով այդպիսի դէպքում տէրութեան գլուխը ամենաբնական ներկայացուցիչն է հանդիսանում։ Տան գլխաւորն էլ գոհեր է մատուցանում իր տան կողմից, և այն՝ ոչ միայն անային ոգիներին, այլ և այն դէպքերում, երբ խօսք անգամ չկայ նախնիների կուլտի մասին։ Նախնական սովորոյթը միատեսակ կանոն չէ սահմանել այն բանի վերաբերմամբ, թէ ում ձեռքով պէտք է կատարվի գոհաբերութիւնը։

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ։ Միւս կողմից, սակայն, մենք տեսնում ենք նախնական ժամանակներում որոշ դասակարգի մարդկերի երեան գալը կրօնական արտօնութիւններով ու սուրբ օգնականութեամբ։ Մինչդեռ աստուածների սովորական կուլտը ուրոյն դասակարգի սպասարկութիւն չէ պահանջում՝ մենք տեսնում ենք ամէն տեղ առանձին գիտութեամբ ու առանձին ընդունակութիւններով օժտված մի մարդ, որին դիմում են մարդիկ կուլտի սահմաններից դուրս գտնվող կարիքները պէտք գալու համար։ Իւրաքանչիւր նախնական կրօն պարունակում է իր մէջ կախարդութեան, այսինքն՝ այնպիսի գործողութիւնների մի որոշ մասը, որոնցով հնարաւոր է համարվում ներգործել արտաքին եղելութիւնների վրայ կամ գուշակել այդպիսիքը։ Նախնական մարդը գալոց բաների մասին իր ունեցած հասկացողութիւնների մէջ չէ սահմանափակված միայն ճիշտ տեղեկութիւններով բնական օրէնքների կամ պատճառի ու հետևանքի միջև եղած կապի մասին, և նա երեակայում է որ բնութեան վրայ կարելի է ներգործել այլ և այլ միջոցներով։ Նա նմանվում է այն բաներին, ինչ որ երեոյթների պատճառներ է համարում, կարծելով թէ նրանց հետևելու է ինքը երեոյթը, կամ դիմում է այն ուժերին, որոնք կարող են ազդել ոգիների վրայ և դրդել կամ ստիպել նրանց որ կատարեն իր ցանկութիւնը, կամ թէ որոշ գործողութիւններ կատարել այն առարկաների վրայ, որոնց մէջ ենթադրում է թէ նրան է ուժ կայ ծածկված, յուսալով մի որոշ եղանակով հասնելու ցանկալի հետևանքի։ Կախարդութիւնը այսպիսով կապված է և՛ ոգիների կուլտի, և՛ առանձին առարկաների էուլտի հետ, այսինքն՝ և՛ անիմիզմի, և՛ ֆէտիշիզմի։ Սովորաբար ցեղի մէջ կայ մի անձ, որ գիտէ այս բաները և կարող է անել այս գործողութիւնները։ Դա կարող է լինել իշխանաւոր կամ թագաւոր. կարելի է բերել շատ օրինակներ, որոնց մէջ իշխանաւորին վերագրում է անձրի բերելու ուժ կամ թէ մի որոշ անձ՝ բժիշկ, կախարդ, հմայող, պատգամաւոր, մի խօսքով՝ ինչ անուն էլ տան նրան։ Նա աւելի մեծ իշխանութիւն ունի ոգիների վրայ, քան միւս մարդիկ, և կարող է ստիպել ոգիներին՝ անել այն, ինչ որ ինքն ուզում է։ Նա կարող է բժշկել հիւանդութիւնները, գուշակել ապագան, մի առարկայ մի ուրիշ առարկայ դարձնել, կամ մարդուն դարձնել մի ստորնադոյն կենդանի՝ ծառ, կամ մի օրէնք բան. նա կորոշ է ինքն էլ փոխվել ու դառնալ, ինչ որ կամենայ։ Այսպիսի հետևանքներ առաջ բերելու համար նա զործ է ածում յայտնի նիւթեր. նա ճանաչում է խոտերը, ունի քարեր կամ ուրիշ առարկաներ, որոնք մի առանձին ուժ ունեն. նա շփման էլ է դիմում, մարմնի վնասված մասները օրինակելուն և ուրիշ սէս սէս արուեստների։ Շատ յաճախ նա ներշնչուած է համարվում։ Սրանչելի հետևանքները առաջվում են նրանում բնակող ոգու միջոցով. առանց ոգու՝ նա

տակար կլիներ։ Թէպէտ տարբեր ցեղերի մէջ մանրամասները շատ տարբեր են՝ սակայն կախարդի արուեստին տեսքը նախնական կրօնի իւրաքանչիւր ձևի անհրաժեշտ սուիականութիւնն է։ Ցաճախ նա հանդիսանում է իբրև մի քաղաքական մեծ նշանակութիւն ունեցող անձնաւորութիւն. որովհետև ենթադրւում է որ կախարդը աւելի մօտ յարաբերութիւն ունի հոգեոր էակների հետ, քան ոմ և է, ուստի նա ունի այնպիսի իշխանութիւն, որ շատերին սոսկալի երկիւղ է ազդում, և որի հետ մինչ անգամ իշխանաւորը պէտք է վերջացնի իր հաշիւները։

Մարդու նախնական կեանքում չեն կարող լինել բազմաթիւ *աղօթքան ժամանակները*, որովհետև չկայ ժամանակի մի որոշ դասաւորութիւն, չկայ հասկացողութիւն կանոնաւորութեան մասին, այլ ամէն բան կախուած է նրանից, թէ ինչպիսի կարիք կամ պահանջ կղայ։ Սակայն այն ժամանակներից, երբ սկսեցին պարապել երկրագործութեամբ՝ ուշադրութիւնը պէտք է դառնար տարւայ եղանակները կրկնելու վրայ, և դէթ պէտք է պահվէին ժամանակի չափերը, կախուած պահպանելով լուսնից։ Ամառային ու ձմեռային արևադարձը, գիշերահաւասարները, լուսնի ծնունդները—սրանք բոլորը նախնական երկրագործի համար այնպիսի շրջաններ էին, որոնք ուշադրութիւն էին պահանջում. և շատ կանուխ ժամանակներում սովորութիւն դարձան տարեկան որոշ տօնախմբութիւններ, որոնք ամենապարզ ու ամենաառաջին օրացոյցի մէջ էպոխաներ էին դառնում և առիթ էին հանդիսանում ցեղական ժողովների ու այն կրօնական որոշ ծէսերը կատարելու համար, որ մենք արդէն նկարագրել ենք։ Կրօնական յայտնութեան պահանջը, որ առաջ էր գալիս երկու տօնախմբութիւնների միջև եղած ժամանակի ընդմիջումը՝ բաւականութիւն է ստանում ուխտագրութեամբ. այսինքն՝ աստուածային օգնութիւնը խնդրւում է հէնց այն միջոցին, սակայն պատշաճաւոր երկրպագութիւնը յետաձգում է մարդը այն ժամանակուան, երբ լրանում է զոհարերութեան ժամանակամիջոցը։

ՆԱԽՆԱԿԱՆ ԿՐՕՆԻ ԲՆՈՒԹԸ։ Մենք արդէն նախնական կրօնի զլխաւոր ծէսերի ու սովորութիւնների համառօտ տեսութիւնը. բայց այս գլուխը վերջացնելուց առաջ՝ պէտք է մի քանի նկատողութիւն անենք այն բանի վերաբերմամբ, թէ կեանքում ինչպիսի դիրք էր բռնում կրօնը հին ժամանակները, ինչպէսև ազդ ու բնոյթ ունէր նա։ Առաջին՝ ինչպէս մենք արդէն վերը նկատել ենք, կրօնը այն ժամանակները համայնական ծառայութեան ամենակարևոր ճիւղն էր։ Ամէն մի անսովոր հոգեոր երևոյթ պէտք է ներկայացվէր աստուածութեան առաջև, ոչ մի նշանաւոր քայլ չէր կարելի անել՝ առանց նրա հետ խորհրդակցելու. և տէրութեան պետի գլխաւոր պարտականութիւնն էր լաւ յարաբերութիւններ պահպանել աստծու և ցեղի միջև ու դիմել աստուածութեանը օգնութեան ու հովանաւորութեան համար, որի մէջ պէտք էր զգում ցեղը։ Հոգալով սրա մասին՝ իշխանաւորը գործում էր իր ցեղակիցների շահերի համար. որևէ իշխանաւոր չկար՝ այնտեղ այս գործերը զանց չէին անում ուրիշները և նրան հետևում էին յօժարութեամբ հանուր ուժերով։ Աստուած նրանց տէրն էր, նրանց հայրը, և նրանք միշտ պարտաւոր էին հաշիւ տեսնել նրա հետ։ Աստծու այսպէս նոյնացումը իր երկրպագունների շահերի հետ այնպէս սերտ է, որ վերջիններին ոչինչ տարակոյսներ չեն վրդովում այն բանի վերաբերմամբ արդեօք իրանց հետ է աստուածութիւնը թէ՝ ոչ։ Եթէ նրանք նրա բարեկամութիւնը ձեռքից չթողնելու համար պահպանում են սովորական կանոնները, աստուածութիւնը պէտք է որ նրանց հետ լինի. նրանք չեն էլ երևակայում որ նա կարող է օտարանալ իրանցից։ Սա մի սովորական բան է նախնական կրօնի համար—այնպէս համարել թէ աստուածութիւնը անբաժան է իր ժողովրդից (սովորաբար աստուածութիւնը չունի էլ ուրիշ ժողովուրդ, որից կարողանայ անբաժան լինել) և օգնում է նրան հակառակորդների դէմ պատերազմելիս։ Պասկած անբնա-

րը այս բանում և երեսը իր ցեղից դարձրած աստուածուհին իր կողմը գրաւելու համար արած վիրաւորը զոհերը երեում են սրդին կրօնի յետագայ աստիճանի վրայ։ Բայց եղէ կրօնը այսպիսով իրրև մի համայնական գործ է ներկայանում, ցեղն ու նրան վերաբերող ամէն բանի գործ՝ հապա ինչպիսի տեղ է տրւում նրանում ուրոյն անձնաւորութեանը։ Անձնական հոգսերն ու կարիքները կարող են աղօթքների և ուխտերի առարկան դառնալ, բայց կրօնը հանուր առմամբ գործ ունի ցեղի, և ոչ անձնաւորութեան հետ, կամ թէ անձնաւորութեան՝ ինչպէս ցեղի անդամի հետ։ Ամէն մարդ պարտաւոր է մասնակցել աստուածութեան հետ ունեցած հանուր յարաբերութիւններին, հակառակ դէպքում նա կկտրւի իր ցեղից։ Ցեղական կուլտը քիչ է մխիթարում նրան իր սեփական վշտերի մէջ, և անձնական տրամութիւններն ու անաջողութիւնները քիչ են ուշադրութեան առնւում նախնական կրօնի կողմից։ Որովհետև ցեղը չէ կասկածում իր աստծու յաւ տրամադրութեանը և նրա վրայ նայում է, ինչպէս մի հաւատարիմ դաշնակցի, որին հեշտ չէ իրանից հեռացնելը, ապա ուրեմն հին կրօնը ունի վստահելի և ուրախ բնոյթ, և խիստ է որոշւում ժամանակակից հաւատի կասկածանքներից ու տառապանքներից։ Կուլտի ծիսակատարութիւնները համարւում են հանդէսներ, որտեղ ցեղի անդամները ուրախանում ու զուարճանում են իրանց աստուածութեան առաջ։ Խնջոյքի զուարճութիւններին աւելացւում են այլևս պարն ու երգեցողութիւնը, և յաճախ զուարճութիւնը կատաղութեան է հասնում. աստուածութեան երկրպագուները պարում են խելագարւելու չափ, նրանք զրում են ինչպէս աստուած տիրում է վրաները և սրբազան ներշնչմամբ այնպիսի բաներ են անում, որ ուրիշ անգամ երազել անգամ չէին կարող։

ՆԱԽՆԱԿԱՆ ԿՐՕՆՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ Ինչպէս է ներգործել այս սկզբնական կրօնը բարոյականութեան վրայ։ Երբան էր պայմանաւորւում նրանով չհաւատութիւնը։ Այս հար-

ցը ունի երկու կողմ։ Առաջին՝ աշխարհի կրօնը իր երեխայական վիճակում մեծ ազդեցութիւն ունէր անձնական բնաւորութեան աւելորդութիւնը սահմանափակելու վրայ։ Որովհետև աստուածութիւնը ցեղի արիւնակից աստուածութիւն էր, ուստի ցեղի սովորութիւնները սրբագործւած էին աստուածութեան ձեռքով. նա ցեղի բարեկեցութիւնից բարձր շահ չունի, նա նոյնանում է ցեղի բոլոր ձեռնարկութիւնների հետ, մասնակցում է ցեղի պատերազմին։ Այս պատճառով աստուածութեան կուլտը խստիւ պահանջում էր ցեղի անձնուիրութիւնը և նրա սովորոյթները պահպանելը. այս կուլտի չեզորիւ մարդը մոռանում էր իր սեփական շահերը, երբ գործը վերաբերում էր ցեղի շահերին և չէր վարանում զոհել իր անձը հանուր գործին։ Բայց միւս կողմից՝ նախնական կրօնը մի չափազանց պահպանողական ուժ էր. նա ողջ կեանքը սատրագրում էր ցեղի սովորոյթներին և խափանում էր բարոյական վարվեցողութեան անմիջականութիւնները և անկախութիւնները։ Նրա կողմից հրամայված պարտաւորութիւնները պայմանական կարգի էին. մարդը իր ցեղից դուրս՝ պարտաւորութիւններ չունէր, իր ցեղակիցներին էլ կրօնը պատւիրում էր վերաբերվել նրան որոշ կանոններով, և ոչ թէ զգացմունքի բերմամբ։ Նայելով զգացմունքի ձգտմանը՝ նախնական կրօնը մի յաւ զսպող (չհօլա) էր այն բարոյականութեան, որի էութիւնը կարգապահութեան ու համայնքին ստրատրվելն էր. բայց նա չէր հասնում այն բարձր բարոյականութեանը, որի օրէնքները գրված են սրտերում և որի նպատակն է աւելի մեծ ծառայութիւններ մատուցանել, քան այն ծառայութիւնները, որոնք վերագրվում են սովորոյթներին։ Բնութեան բարձր ուժերի, բարի ու լուսաւոր, երկնային ուժերի կուլտը, որ ձգտում էր դուրս գալ տեղի ու ազգայնութեան սահմաններից՝ նախատեսմանված էր առաջ բերելու աւելի մեծաղգի բարոյականութիւն, քան ցեղական կուլտը և այս ձգտումը անտարակոյս մութ կերպով զգում էր նախ-

նական մարդը այն ժամանակից շատ առաջ, երբ նրա համար հնարաւոր եղաւ հետևել այս ձգտմանը։

ԳԼՈՒԽ

ԱԶԳՍՏՆԱԿԱՆ ԿՐՕՆԸ

Այժմ մի կողմ թողնենք վայրենի ու բարբարոս ցեղերի հաւատալիքները ու ծէսերը և դառնանք հզօր տէրութիւնների կրօնին։ Այն հեղուցը, որ մեր առարկայի այս երկու մասերը բաժանում է միմեանցից՝ ահա է որ լայն է, և շատ դէպքերում չկայ մի կամուրջ, որի վրայով՝ ուսումնասիրողը կարողանար մի կողմից միւսն անցնել։ Ճանապարհ հարկաւորւում է նախ բացել՝ առանց ուղղակի ապացոյցների, որ մեծ կրօնական սիստէմները կառուցված են այն նիւթից, որ, ինչպէս տեսանք, դիզված է նախապատմական ժամանակներում։ Բայց այս նախադրութիւնը այնքան ծանրակշիռ է, որ չի կարելի վրան կանգ առնել. ուրիշ դէպքերում մենք կարող ենք բոլորովին պարզ տեսնել, ինչպէս պետութեան կրօնը, անդադար զարգանալով՝ առաջ է եկել ցեղի կրօնից. իսկ այն դէպքերում, երբ այս հնարաւոր չէ այնպէս լրիւ բացատրել, մենք այսուամենայնիւ կարող ենք նախադրել, որ սոցիալական հետևանքներին մարդիկ հասել են, հէնց այդպիսի ճանապարհով։ Այս պատճառով մենք կանգ ենք առնում այս կէտի վրայ և հարց ենք տալիս մեզ, թէ ինչպիսի բնոյթ ունի այս փոխանցումը, որին մենք հասել ենք, ուրիշ խօսքով՝ ինչումն է կայանում նախնական ու յաջորդ կրօնների միջև եղած տարբերութիւնը։ Տարբերութիւն, հասկանալի է, որ չկայ բնականական չէ. նա չի նշանակում չէ, որ պետութեան կրօնը մարդկութեան ամենի մեծ բռնութիւն է դատապարտում, քան ցեղի կրօնը. կայ ոչ միայն քանակական, այլև որակական տարբերութիւն։ Այս հարցը հե-

տաքրքրելու համար՝ յարմար կլինի քննել գոյութիւն ունեցող կրօնների դասակարգութիւններից (սիֆիկացիաներից) մի քանիսը, քանի որ այս դասակարգութիւնների մեծամասնութիւնը, թէպէտ և այլ և այլ հիմքերի վրայ, նախնական աշխարհի կրօններին տեղ է տալիս մի առանձին ստորոգութեան (kategorija) մէջ, անջատում է նրանց՝ մեզ յայտնի պատմական կրօններից։

ՀԻՆ ԴԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ կրօնները բաժանվում էին ճշմարիտ ու սուտ կրօնների։ Այսպիսի բաժանումը արգելում է մեզ ընդունել մեր սկզբունքը, որով մենք նայում ենք զանազան կրօնների վրայ, ինչպէս հանրապէտ կրօնի զարգացման բնաշրջանների, այս պատճառով էլ այդ բոլոր կրօնները համարում ենք համեմատաբար ճշմարիտ։

Մի ուրիշ բաժանում, որ տվել է իր բաժին օգուտը,— կրօնները բնական ու յայտնութեամբ շնորհված կրօնների բաժանելն է։ Բնական կրօն ասելով սովորաբար հասկացվում էր այն կրօնը, որին մարդկային միտքը կարող էր հասնել առանց դերբնական օգնութեան։ Բայց այսպիսի մի որոշում չի կարող յարմարվել այն կրօնական սիստէմներից ոչ մէկին, որոնք երբ և է իշխել են երկրում. բոլոր գոյութիւն ունեցած կրօնները սովորութեան ու դարաւոր աւանդութեան գործ էին, և ոչ թէ բանականութեան։ Այս պատճառով «բնական կրօն» տէրմինը պիտանի չէ մեզ դասակարգման համար, որովհետև մեզ յայտնի կրօններից ոչ մէկը, որ մենք մտադիր ենք ուսումնասիրել, չէ պատասխանում այս անունին։ Անհրաժեշտ է նոյնպէս մեր գրվածքի սկզբում մի գրվածքում գործ ածել «յայտնութեամբ ստացված կրօն» տէրմինը։ Զատ կրօններ յատկանութիւն ունեն ասելու թէ իրանք հետևանք են յայտնութեան, սակայն քչերն են մի այդպիսի սպրէտենզիա յայտնում ուղղակի իրանց ծագման միջոցին։ Այս անուանումը ոչինչ չէ ասում մեզ կրօնի սկզբնական բնոյթի մասին. դրանից մենք միայն այն կարող ենք եզրակացնել, որ սրանք կրօ-

նի զոյութեան մի որոշ շրջանում նրա կոմից պրէտէնզիա է յայտնված հղել իր սկիզբը գերբնական լինելու մասին։ Եթէ մենք համախմբենք բոլոր «յայտնութեամբ ստացված կրօնները», կըտեսնենք որ խումբը մտած կրօններից ոչ մէկը ոչընչով նման չէ միւսին, բացի միայն այն պատահական հանգամանքից, որ նրանցից իւրաքանչիւրը իր սկիզբը յայտնութեանն է վերագրում։ Բացի դրանից՝ գիտութիւնը չի կարող լռոյլ տալ որ յայտնութիւնը փաստ լինի մի քանի կրօնների համար միաժամանակ, այլ պէտք է ուսումնասիրել ու աշխատել բացատրել նրանցից իւրաքանչիւրը՝ առանց այդպիսի ենթադրութեան։

«Բնական» կրօն տէրմինը բացի նոր յիշված նշանակութիւնից՝ ունի սակայն և՝ այլ նշանակութիւններ, և այդ նշանակութիւններից մի քանիսը մենք կարող ենք աւելի բաւարար համարել։ Ենթադրում են կրօնները բաժանել «բնական» ու «դրական» (իսկական) կրօնների, կամ այնպիսի կրօնների, որոնք առաջ են եկել ու զարգացել ըստ ինքեան, և այնպիսիների, որոնք հիմնվել են։ Նախկին կրօնները պարտական չեն եղել ականաւոր մարդերի անձնական գործունէութեանը (իսկ եթէ և եղել է այդպէս, ինչպէս որ մասամբ, պէտք է և լինէր՝ ապա նրանց անձնաւորութիւններն ու պատերազմը մոռացութեան են տրված), այլ անպիտակից զարգացման գործ էին և այն ուժերի արտայայտութը, որոնք կարող են կոչվել բնական ուժեր, որովհետև գործում էին նախնական աշխարհի բոլոր կողմերում։ Այս կրօնները ոչ մի հիմնադրի հեղինակութիւն չեն առաջ բերում, այլ սովորութիւնից ու աւանդութիւնից են ծագել։ Ցեղապետ սիստեմներից մի քանիսը, սրա հակառակ, կրում են իրանց հիմնադիրների անունները, և այնպէս է կարծվում, թէ նրանք լոյս են ընկել մի որոշ ժամանակում ու որոշ տեղում։ Նրանց սկիզբը որոշված է, և նրանք ունեն հաւատալիքների ու ծէսերի մի որոշ գումար, որոնք պատկանում են իրանց սկզբնական կազմութեան և կշիռ ունեն հաւատացողների բոլոր յաջորդող սերունդների աչքում։

Այս դասաբաշխումը սկզբում շատ բան խոսացող մի դասաբաշխում է թվում, սակայն դժուար է սրան ուրիշ գործի յարմարեցնել. մի քանի կրօն աննկատելի կերպով ասպրութեան շրջանից անցնում են օրէնքի շրջանը, և շատ կրօնների յատուկ են երկու տարրերն էլ, այն էլ այնքան բարձր աստիճանի, որ դժուար է մի հաւասարակշռութիւն պահպանել նրանց միջև։ Մենք գալիս ենք այն եզրակացութեանը, որ նախնական ու յաջորդ կրօնի միջև եղած իսկական տարբերութիւնը՝ այս բոլոր դասաբաշխութիւնների մատնանիշ արածից աւելի կենսական տարբերութիւն է։ Յաջորդ սիստէմների հեղինակութիւնն ու դրական բնոյթը՝ նրանց առաջ բերած փոփոխութիւնների նշանն է. սակայն ինքը փոփոխութիւնը աւելի խորն է արմատացած։ Կրօնի բարձր ձևը պարտական է այն մեծ բայլափոխին, որ արել է քաղաքակրթութիւնը. սա այն նշաններից մէկն է, թէ համայնքը հասել է զարգացման նոր բնաստիճանի։

ԸՋԳՑՆԱԿԱՆ ԿՐՕՆԻ ԾԱԳՈՒՄԸ։ Մարդկային առաջադիմութիւնը մի ահագին քայլ է անում, մինչդեռ բարբարոս ցեղերի մի խումբ միանում է՝ ազգ կազմելու համար։ Ո՛րևէ առաջնորդի զօրեղ ձեռքի կամ ուրևէ մեծ կարիքի ճնշման տակ ցեղերը հրաժարվում են զատ-զատ ապրելուց, որ միանգամայն ըստ ինքեան համայնքի ցեղական կազմութեան թուլութիւնն ու ուժն է ցոյց տալիս, ընտրում են իրանց համար ուրիշ ամրացած տեղ իրրև կենարան, ենթարկվում են հանուր վարչութեանը և, դեռևս յիշելով իրանց ցեղական աւանդութիւնները ու սովորոյթները՝ սովորում են գործել, ինչպէս մի համայնքի անդամներ, որ աւելի ընդարձակ է, քան ցեղը։ Սա է, իսկապէս ասած, քաղաքակրթութեան սկիզբը։ Սովորութեան տեղը բռնում է օրէնքը. պետութիւնը առնում է իր վրայ յանցանքները պատժելը, և անձնական

վրէժխնդրութիւնը դառնում է անտեղի. պետութիւնը յանձն է առնում պաշտպանել Լեոյլերին. այսպիսով առաջ է գալիս մարդասիրական զգացում և դրվում է ապահովութեան սկիզբը, որի շնորհիւ կարող են ծագել ու ծաղկել արուեստներն ու գիտութիւնները։

Երբ այս տեղի է ունենում, այն ժամանակ երևան է գալիս այլևս կրօնի մի նոր տիպ։ Այն միջոցին, երբ իրաքանչիւր ցեղ կարողանում է երկար ժամանակ պահպանել իր աստուածները—դուրէ, ամէն զօրեղ ցեղի աստուածութիւնը ամէն բարձր դիրք է ստանում, բան միւսները—նրա կուլտը դառնում է այն համայնքի կենտրոնական կրօնը, որի շուրջը միւս կուլտերը դասաւորվում են իրանց աստիճանների համեմատ, մինչև նրանց բոլորին ընդգրկող, բայց նոր բնոյթ ստացող մի սիստէմի երևան գալը։ Այսպիսով առաջ է գալիս ազգայնական կրօնը։ Այս պրոցէսի մանրամասնները յամենայն դէպս մեր նկատողութիւնից դուրս են։ Դուրէ, միայն հարկաւոր տարիներ անցնելուց յետոյ այն ժամանակներից, երբ ազգայնական կրօնը սկսել է գործել՝ մենք սկսում ենք մտածել նրա մասին. միայն պրոլեման արուեստը մի որոշ կատարելագործութեան հասնելուց յետոյ՝ նա-կրօնը նկարագրվում է և սահմանվում են նրա օրէնքները. իսկ այս ժամանակամիջոցում անհետանում է նրա սկզբնաւորութեան մասին ունեցած ամէն ճիշտ յիշողութիւն, և դրա փոխարէն՝ նրա ծագումը բացատրվում է մի ամբողջ շարք լեգենդներով։ Սակայն թէպէտ նրա ծագումը, ինչպէս և բոլոր ծագումները, մութն է, այսուամենայնիւ ազգայնական կրօնը աշխարհիս առաջին է։ Նա ունի իր պատմութիւնը. նրա հիմնադիրը հաստատում է այն մեծ մարդը, որ ցեղերը միացրել է իրար՝ կամ որ առաջինն է մտածել սրել նրանց՝ կուլտի վեհ ձևը. նրա հիմնարկութիւնը վերագրվում է ամենապլխաւոր աստուածութեան ներշնչմանը. նրա արբանեակ սահմանադրութիւնները արձանագրված են ի աստուածային օրէնքների ուժ են

ձևով բերում, աստուածութեան կամքը մի ինչ որ լիովին պարզ ու որոշ ձևերով արտայայտված բան է։

Մենք չենք պնդում թէ մեր նկարագրութիւնը յարմարվում է բոլոր ազգայնական կրօններին, մի ազգի կեանքի բնոյթն ու պայմանները տարբերվում են միւսի կեանքի բնոյթից ու պայմաններից, և մենք կարիք չունենք ենթադրելու թէ նրանք բոլորն էլ իրանց պետութեան կուլտը մշակել են միևնոյն եղանակով։ Մի քանի կրօն ազգայնական են դարձել առանց յատկութեան շնորհիւ, բան զարգացման պատճառով. և նրանից մի բանիսը, որոնք իրաւ կարող են ազգայնական կոչվել՝ երբեք չեն հասել ոչ մի ազգայնական օրգանիզացիայի։ Մեր նկարագրած պրոցէսը կարող է սակայն համարվել տիպական պրոցէս՝ ազգայնական կրօնի ցեղական կրօններից ծագելու նկատմամբ և ցոյց է տալիս թէ ինչը կարելի է համարել իրական ու էական տարբերութիւն մեր քննած շրջանի ու այն շրջանի միջև, որին այժմ դիմում ենք։ Նախապատմական ու պատմական կրօնների միջև եղած միւս բոլոր տարբերութիւնները կարող են վերածվել այս մէկ տարբերութեան։ Գեռ ևս ազգի կրօնը իր վարդապետութիւնն ու ծիսական կողմը այնպէս կարգի չէր բերել՝ որ առանձին ծիսական կրօնի անուն, գեռ նա յատկութիւն չէր յայտնել իրան յայտնութիւն տրված լինելու մասին, գեռ պրոբլիմների մէջ նրան մի որոշ ու սրբազան բնոյթ չէր տրված՝ երբ արդէն տրված էր կարևոր բայլը, առաջ էր եկել կրօնական դիտակցութեան մի նոր ձև։ Մարդիկ սկսեցին հաւատալ ոչ միայն ցեղական լինել և ազգայնական աստծուն կամ աստուածներին, և ահա երևան եկաւ ազգայնական կրօնը։

Ցեղական կուլտից ազգայնական կուլտին անցնելը՝ կրօնի ամբողջ պատմութեան մէջ ամենանշանաւոր փոխանցումներից մէկն է։ Այս ժամանակ կրօնի բնոյթի մէջ առաջ եկած փոփոխութիւնը կարող է վերածվել հետևեալ դրութիւնների։

1. Մարդիկ ստանում են իրանց նախկին աստծուց մի

աւելի մեծ աստուածութիւն։ Դրանից առաջ մարդիկ հաւատում էին ցեղի աստուածութեանը, որ միակն էր շատ աստուածութիւնների միջև, ինչպէս նրա ցեղը միակն էր շատերի միջև, այդ ժամանակ իւրաքանչիւր ցեղ ունէր իր սեփական աստուածը. բայց այժմ մարդը ճանաչում և ընդունում է մի աստուածութիւն, որ բարձր է միւս ցեղական աստուածութիւններից, ինչպէս այն ֆետիշը, որին հպատակվելու համար ցեղեր են միացել՝ բարձր է ցեղային առաջնորդներից։ Աստուածութիւնը երկրպագուից կանգնում է մի հեռաւոր աստիճանի վրայ. այն մօտիկութիւնը, որ կայ երկուսի միջև՝ փոքրանում է, և կրօնը դառնում է խորին ջերմեռանդութեան ու պաշտամունքի ընդունակ։ Թէպէտ ցեղային աստուածների կուլտը դեռ ևս պահպանվում է, սակայն եկել ազգայնական նորածին գիտակցութիւնը զօրեղ է՝ այն ժամանակ կրօնի ցեղական ձևից աւելի՝ ազգայնական ձևը կորոշի առանձին անձնաւորութեան կրօնական դիտումները։

2. ՆՈՐ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿԱՊԸ։ *Ընկերվարական ազդեցութեան բնոյթը, որ արտայայտվում է կրօնով՝ բոլորովին փոխվում է։ Ցեղական կրօնի մէջ՝ երկրպագութիւնների ու աստուածութեան՝ և իրար միջև եղած կապը արհեստական կապ է. աստուածութիւնը ուղղակի նրանց հանուր ցեղապետն է, և նրա արիւնը հոսում է բոլոր համացեղների երակներովը։ Նմանօրինակ կրօնի սահմանած ընկերվարական կապը սահմանափակվում է ցեղի անդամներով. մարդու ցեղակիցները իր եղբայրներն են, իսկ մնացած բոլոր մարդիկ՝ նրա թշնամիները. նրանց հետ նա, ինչպէս և իր աստուածութիւնը, գտնվում է թշնամական յարաբերութեան մէջ։ Ընկերվարական պարտաւորութիւնները արհեստական ազգականութեան մի գործ են և վերաբերում են միմիայն իրար ազգական անձնաւորութիւններին։ Երբ մարդիկ հասնում են ազգայնական կրօնին՝ այն ժամանակ ակներև կերպով պէտք է առաջ գան և՛ ուրիշ տեսակի ընկերավարական պարտաւորութիւններ։ Ցեղային աստուածութիւնը արհեստական ազգական է ազգ կազմող ցեղերից միայն մէկի. աստուածութեան ու միւս ցեղերի միջև լինելիք կապը մի այլ բնոյթ ունեցող կապ պէտք է լինի։ Նա—աստուածութիւնը յայտնել է նրանց աստուածներին կամ նրանք յօժար կամքով նրան իրանց գլխաւոր աստուածութիւն են ճանաչել. յամենայն դէպս ոչ թէ արհեստի կապերն են նրանց կապում նրա հետ, այլ մի աւելի գաղափարական կապ՝ թագաւորի ու իր նպատակների կամ պատրոնի ու հովանաւորեալի միջև եղած կապի նման մի կապ։ Այժմ նրանք կրօնական կապով այնպիսի մարդերի հետ են կապված, որոնք նրանց արհեստակից ազգականները չեն։ Ազգայնական կրօնը չի կարող ազգականութեան սիստէմի կողմից նկատմամբ (մատրիարխիայի) հետ միասին լինել և դրա փոխանակ՝ նա, ասես թէ, հեռացնում է աստուածութիւնը աշխարհից և բարձրացնում նրան աշխարհի վրայ, ուստի և հարցնում է աւելի հոգևոր, իսկ արհեստակից ազգական չեղող մարդերի վերաբերմամբ ունեցած պարտաւորութիւնները ստանում են փոքր աւելի զուտ բարոյական բնոյթ։*

3. ԼԱՒԱԳՈՅՆ ԸՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ։ *Ազգի նոր աստուածութիւնը, որ բարձր է կանգնած աշխարհից՝ միևնոյն ժամանակ մի բարձր ու կատարեալ բնաւորութեան տէր էակ է։ Նա պատկանում է բոլոր ցեղերին և նրանցից ոչ մէկի բացառական մտերիմը չէ. նա թագաւորի պէս, բարձր է կանգնած ցեղային նախանձաւորութիւնից, և նրա չհերից մէկին է՝ պիմադրել ամենի բռնութեանը և արդար լինել դէպի ամենը։ Նրան կարող են դիմել նրանք, ովքեր հալածել են և ովքեր աշխարհում օգնական չունեն. այսպիսով աստուածութիւնը հակված է արդարութեան ու հայրական բարութեան իղէալ դառնալու և պատասխանելու վերնագոյն աշխարհի այն գաղափարներին, որոնք առաջ են եկած ստորնագոյն աշխարհում, որի ժամանակ գտնելու է ճնշել բռնութիւնները և յաւետ անել անաչառ արդարադատութիւնը։*

Այս ուղղութիւնների մէջ ազգի կրօնը աշխատում է բարձր կանգնել ցեղի կրօնից։ Ցեղային կուլտերը կարող են շարունակվել համարեա հէնց այսպէս, ցեղային աստուածներին դեռ ևս կարող են երկրպագել, ցեղային հակառակորդութիւնները ու ընդհարումները պէտք է դնան իրանց կարգով, ուշք չդարձնելով նոր միացումների վրայ և նախնական կրօնի բոլոր անպարագրութիւնները դեռ ևս, երկար ժամանակ կարող են ապրել. սակայն այնուամենայնիւ երևան է եկել մի նոր կրօնական ուժ, որ ժամանակի ընթացքում ստեղծում է մի բոլորովին նոր սիստէմ։ Այս պատճառով դասակարգման իսկական սկզբունքը պէտք է դուրս բերվի ցեղական ու ազգայնական կրօնների միջև եղած տարբերացումից, քանի որ այս տարբերացումը առիւծ կենսական է և քանի որ նրանից կարող են դուրս բերվել մեր յիշած միւս բոլոր դասակարգումները։

Այսպէս նկարագրված փոխանցումը տեղ է գտել շատ տարբեր շրջաններում՝ աշխարհի այլ և այլ մասներում. նա սկսվել է շատ հին ժամանակներից և ծագել է մինչ անգամ նոր ժամանակները, մինչդեռ երկրագնդի զանազան մասներում եղած խիստ շատ ցեղեր դեռ ևս չեն հասել նրան։ Սա մի այնպիսի անցք է, որի մանրամասնները ձեռակերպելը անհնարին անկարելի է. շատ դէպքերում այդ մանրամասները անցյորդ են, և մի ապարդիւն գործ կլինէր՝ եթէ նկարագրէինք թէ ինչպէս նախնական կրօնները հանդիպում էին միմեանց, միանում կամ մնում բաժան-բաժան և ինչպէս համախառնվում, մի դէպքում ազգայնական կրօնի ծագման պատճառ էին դառնում, իսկ ուրիշ շատ դէպքերում չէին ունենում նմանօրինակ հետևանքներ։ Մանաւանդ պրիմիտիվական պրիմիտիվ ցեղերի մասին վերաբերող շատ բան կարելի է դնել, շատ բան էլ մինչև հիմա յայտնագործված չէ։ Հետևեալ գլուխներում մենք հանդիպելու ենք ազգայնական կրօնի կազմութեան պէս-պէս օրինակների։

ԵՒՆՔԻՆԵՐԻ ԿՐՕՆԸ։ Սակայն մենք կթողնենք այժմ մեր

նկարագրած փոխանցման օրինակը՝ առնված այն տեղերից, որոնք հետու են կանգնած պատմութեան մեծ շարժումներից, և տալիս են պարզ ու անհերքելի վկայութիւններ։ Նոր աշխարհի իսպանացոց յայտնագործած երկու բաղաքակրթված մեծ պետութիւններից Մէքսիկան տալիս է այն կուլտի օրինակը, որ կազմված է շատ տարրերից և բարձր բարոյական վարդապետութեան ու փառաւոր ծիսարանի հետ պահպանում է կոպտութեան ու վայրենի կատաղութեան մի զարմանալի բանակութիւն։ Իսկ Պէրուում մենք գտնում ենք մի սիրաշահող կրօն, որ փոխարինել է դեռ ևս այդ երկրում չմոռացված վայրենի կուլտերին և, չնայելով «եանքիների արբայական կոմմենտարիաների» վրայ, որոնք գրված են XVII-րդ դարի սկզբում Գարչիլասօ դը լա Վէգա անունով հանրու ձեռքով՝ մենք կարող ենք նկարագրել Պէրուի կրօնը հանքինների կրօնական վերանորոգութիւնից (реформація) առաջ ու յետոյ։

«Մինչև հանքինները, պատմում է մեզ այս գրողը, իւրաքանչիւր գաւառ, իւրաքանչիւր ցեղ և իւրաքանչիւր տուն ունէր իր սեփական՝ իւրարից տարբերվող աստուածները, քանի որ բնակիչները մտածում էին, թէ իրանց մասին չի կարող հոգալ օտարազգի աստուածութիւնը, այլ միայն իր սեփականը»։ Նրանք երկրպագում էին ամենատեսակ աստուածութիւնների, որոնցից յիշվում են՝ խոտերը, բոյսերը, ծաղիկները, ամենատեսակ ծառերը, բարձր բլուրները, մեծ ժայռերն ու նրանց միջի ճեղքերը. պաշտում էին բարանձաւները, խիճերը, զմրուխտները։ Նրանք երկրպագում էին և՝ կենդանիներին՝ վագրին, առիւծին, արջին՝ նրանց յափշտակիչ լինելու համար, կապիկին՝ նրա խորամանկութեան համար. պէրուցիները չէին սպանում նրանց, այլ տարածվում էին նրանց առաջից գնալին և մինչ անգամ պատառոտել էին տալիս իրանց, այդ կենդանիները իրանց սեփական նախնիքը համարելով։ Այսպէս էին վերաբերվում նրանք ամենատեսակ կենդանիների. չկար ոչ մի կենդանի, ինչքան էլ նա պատառ ու

զգուելի լինէր, որի վրայ նրանք չնայէին, իբրև աստծու։ Սրա հակառակ, ուրիշ հնդիկներ երկրպագում էին իրանց օգուտ տվող առարկաներին, ինչպէս օրինակ՝ մեծ ալբիւրներին ու գետերին, ոմանք պաշտում էին երկիրը և նրան մայր անուանում, որովհետև նա բերք էր տալիս, ոմանք՝ ծովը, անուանելով այն՝ Մամա—կօխա (Մայր—կօխա). յիշատակվում են այլևս մի ամբողջ շարք պաշտվող առարկաներ։ Նրանք զոհ էին բերում կենդանիներ ու սիմինդր (եղիպատացորեն), այլև էրիվների ու կանանց և ոչ միայն պատերազմում առած գերիներին, այլև իրանց սեփական որդիքը և նրանց, արիւնով օծում էին կուռքը։ (Երկրագնտի ուրիշ մասներում սա մի սիմբոլական գործողութիւն է, որ ցոյց է տալիս թէ կուռքն ու նրա երկրպագուները միևնոյն կանքն են վարում)։ Միրանի ցեղ աւելի վայրենի էին, քան միւսները և գործադրում էին մարդակերութիւնը (կաննիբալիսմ) աւելի ընդարձակ կերպով։ Նրանց չէին պակասում նաև կախարդներն ու կախարդուհիները։

Այս բոլորը փոխեցին եանբիները։ Սա մի արքայական ընտանիք էր, որի ծագման և իշխանութեան հաստիկու մասին պատմում են պէս-պէս լեգենդաներ. նրանք արևին էին երկրպագում և իրանց արևի որդիք համարում ու անուանում։ Նրանք ասում էին թէ արևը—իրանց հայրը—ուզարկել է իրանց նախնիքներին՝ սովորեցնելու ցեղերին զանազան բաներ, որոնց գիտենալը նրանց շատ կարևոր էր, այն է՝ գաշտերը մշակել, անասուններին բուծանել, ապրել խաղաղութեամբ, յարգել ուրիշների կանանց ու աղջիկներին և չունենալ մի կնոջից աւելի։ Ասում էին թէ եանբիները ուրիշներից լաւ գիտէին աստուածութիւն ընտրելը, և նրանք յայտարարել են որ մարդիկ պէտք է երկրպագեն արևին, որ լոյս, ջերմութիւն ու հասակ է տալիս. նրանք պէտք է հնարհակալ լինեն նրա բարերարութիւնների համար, և նա կվարձատրի նրանց, եթէ հնազանդ լինեն նրան։ Սրանից յետոյ հնդիկնե-

րը արևը ընդունեցին իբրև իրանց աստուածութիւն, «որ ոչ հայր ունէր, ոչ՝ եղբայրներ». նրանք սկսեցին լուսինը համարել նրա բոյրն ու կինը, բայց չերկրպագեցին նրան։ Բայց սրանից՝ մենք կիմանանք որ եանբիները ընդունում էին այլևս մի աստուածութիւն և նրան անուանում էին «Պահակամակ», այսինքն՝ աշխարհի հոգի։ Այս էակը տիել էր աշխարհին սկզբնաւորութիւն և պահպանում է նրան, բայց նրանք տաճարներ չէին կառուցանում այս աստուածութեանը, զոհեր չէին բերում. նրանք նրան երկրպագում էին իրանց սրտերում, ինչպէս մի անձնաւոր աստծու։

Նայելով իսպանական մի քանի գրողների նկարագրութեանը՝ եանբիների կրօնը զգալի կերպով տարբերվում է մի այսպիսի վարդապետութիւնից։ Բայց աստծուց՝ պաշտվում էին շատ առարկաներ. բազմաթիւ ազօթքներ ուղղվում էին արարչին, արևին, որոտին։ Պաշտվում էին նաև շատ սրբազան առարկաններ, ինչպէս նախնիների զմռսած մարմինները և պահպան կուռքեր։ Եանբիները պարապում էին ամէն տեսակ կախարդութեամբ և, որ ամենաւատթարն է՝ զոհ էին բերվում պատանիներն ու մատաղահաս աղջիկները մինչ անգամ եանբիների ներկայութեամբ և համայնական հանդէսների առիթով։ Ակներև է որ եանբիների ռէֆորմացիան կատարեալ չէր. եթէ նա կանգ առած չլիներ իսպանացիների երեսովը՝ ապա հնարաւոր է նոր կրօնի մարդով ապրեցութիւնը դեռ ևս շատ բան ունէր կատարելու։ Սակայն արդէն այն բանում, ինչ որ մենք տեսնում ենք, կարելի է բաւարար չափով նշմարել այն սկզբունքի հաստատութիւնը թէ կրօնը անհամեմատ աւելի է վսեմանում, երբ երևան է գալիս ազգայնական կուլտը։ Եանբիները անտարակոյս պլուս էին կանգնած մի ցեղի որ նուաճել էր ուրիշ ցեղեր և ստիպեցին նրան ընդունել իրանց կրօնը։ Ցաղթված մանր կուլտերը միանգամից չմեռան, այլ շարունակեցին իրանց գոյութիւնը կենտրոնական կուլտի հետ։ Սակայն վերջինը արտայայտում էր ազգայնական ոգի

ու ապրայնական յոյսեր. և որովհետև նատակեաց կեանքը նպաստում է մտաւոր զարգացմանը և համայնականութեան զարգացմանը՝ այս պատճառով կենտրոնական կուլտը հետզհետէ վանում էր մնացածները, իսկ ինքը փոքր առ փոքր մաքրվում էր անպաշտութիւններից ու յետամնաց տարրերից և դառնում խելացի ու վսեմ։

Այժմ տեղի կլինի նշանակել ուսումնասիրութեան յետագայ ընթացքը, որին մենք հետևելու ենք այս գրքում։ Որովհետև մեր նպատակն այն է որ, թէև ոչ լրիւ, ձեակերպենք կրօնի զարգացումը աշխարհում, իբրև մի ամբողջ բանի զարգացում՝ այս պատճառով մեզ կհարկաւորվի առնմանափակվել կրօնի պատմութեան այն մասնակով, որոնք դնվում են այս զարգացման առնմաններում կամ ակնարկ ծառայում են այն սկզբունքների լուսաբանութեանը, որոնցով կատարվել է այս զարգացումը։ Մենք ոչ մի դէպքում նպատակ չունենք ձեակերպել երկրագնդի բոլոր կրօնները և չենք ձգտում կազմելու հարցասիրական երևոյթների մի լիակատար հաւաքածու, որոնցով այնպէս առատ է ուսումնասիրութեան այս ընդարձակ ասպարէզը։ Եթէ մենք մէջ բերենք հանրինների կրօնի նախընթաց համառօտ նկարագիրը, ապա այդ արել ենք ոչ թէ սրեև էական անհրաժեշտութեան պէտք զգալով, այլ այն պատճառով որ նա (համառ. նկար.) շատ կոպիտով ներկայացնում է այն պրօցէսի շատ յարմարվող մի օրինակը, որ այնպէս յաճախ առաջ է գալիս կրօնի զարգացման ժամանակ և որի համաձայն՝ չկազմակերպված ձևեր, բազմաթիվ կլաններ ու ցեղեր, եթէ ազգութիւն է կազմվում՝ անկի են տալիս մի պետական վսեմ կրօնի։ Ուղիղ այսպէս էլ այն մեծ կրօնները, որոնց մասին խօսելու ենք, իհարկէ, լոկ մի թոյլ կապ ունեն համաշխարհային կրօնական առաջխաղացման (պրօցէսի) կենտրոնական ընթացքի հետ։ Ո՛չ մի դրուագ, սրբան էլ նա հարևանցի վերաբերվելիս լինէր մեր առարկային՝ չէր կարող գլուխ գալ առանց Հինաստանի կամ Եգիպտոսի կրօնի նկարագրութեան. սակայն դուրէ այս կրօններից ոչ մէկը մի էական նշանակութիւն չէ ունեցել մարդկութեան կրօնական գիտակցութիւնը հարստացնելու համար։ Բաբելոնի կրօնը, որի հետ կապ ունի այն կրօններից իւրաքանչիւրը, որոնց մասին նոր ահա յիշատակութիւն եղաւ՝ նոյնպէս զարգացել է առանձին ու միւսներից անկախ և հետու է մեզանից իբ ժամանակով ու իբ պատմական կապով։ Նման այն մեծ ու մեկուսացած լեռների հին ձևաւորութեանը (փօրմասիօն), որոնցից իւրաքանչիւրը գտնվում է մեզնից հեռացած մի մայր-ցամաքի վրայ՝ այս կրօնները հրապուրում են մեզ ոչ թէ այն պատճառով որ կարող ենք նրանցից, այլ այն՝ որ նրանք բուն բնութեան շահեկան են։

Նկարագրելով այս մեծ սիստէմները՝ մենք հասնելու ենք այն սիստէմներին, որոնք ըստ ժամանակին ունեցել են մինչև հիմա ձեռք բերված վարդապետութիւններից դէպի ունեցած վսեմը։ Այստեղ էլ պէտք է ուշը դարձնել երկու խոշոր ցեղերի կամ ժողովրդական խմբերի վրայ, որոնցից իւրաքանչիւրը աչքի է ընկնում զարմանալի ձիրքերով և իւրաքանչիւրը յայտնապէս նպաստել է կրօնի զարգացմանը։ Դրանք ժողովուրդների սեմիտ ու հնդկրոպական ընտանիքն են։ Դրանցից իւրաքանչիւրի մէջ մենք գտնում ենք մի քանի վատ նկարագրված կրօն։ Դիմելով սկզբումը սեմիտ խմբին,— խոստովանենք էլ հետը հաշտելով,—քանի որ մեր առարկայի այս մասը ունի է հեռացած մեզնից՝ մենք հարց ենք տալու մեզ. կայ արդեօք մի որևէ հանուր տարր նրանում պարունակված զանազան կրօնների միջև, կայ այսպիսի սեմիտ կրօն, որի վրայ կարելի լինէր նայել, իբրև մի սկզբնաւորութեան, որից անխտիր առաջ են եկել բոլոր սեմիտ կրօնները, և որ ավել է նրան մի հանուր բնոյթ. իսկ յետոյ քննելու ենք սեմիտ կրօններից իւրաքանչիւրը առանձին։ Ապա կանցնենք բաբելացիների հանուր հատատակիչներին ու արիական նշանաւոր ժողովուրդների կրօններին։ Վերջին դլուխներում մենք

կպատնանք քրիստոնէութեանը և ցոյց կտանք զարդացման այն բնոյթը, որը կարող էր սովորեցնել մեզ՝ տեսնելու մեր ուսումնասիրութիւնը բոլոր մարդկութեան կրօնի մէջ։

Բ. Մ Ա Ս.

ՍԻՍԱՆՑԻՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԿՐՕՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ

ՌԱՌԵԼՈՆ ԵՒ ԱՍՈՐԻՔ

Բաբելոնի կրօնը, որից Ասորիքի կրօնը սկզբունքով չէ զատանում՝ չի կարող մէկ գծի վրայ կանգնել միւսների հետ՝ առանց մի թեթև անդրադարձութեան։ Ժամանակի հետաքրքրութեան նկատմամբ նա ունի իր առաւելութիւնը մինչ անգամ Չինաստանի ու Եգիպտոսի կրօնների դիմաց. այդ վերջին մեծ կրօնների պէս՝ նա էլ, իր առաջին աստիճանի վրայ, ինքնուրոյն զարգացումն է ցոյց տալիս փակված երկրում ու փակված ժողովրդի մէջ, որտեղ ըստ երեւոյթին առաջ է եկել նա՝ կոպիտ սկզբունքներից բոլորովին անկախ։ Սովորաբար այդ կրօնը միացնում էին սէմիտ կրօններին. բայց նա իր ետևը ունէր կրօնի մի երկար շրջան, երբ սէմիտները Սարգոնի*) օրով, Ք. Ծ. մօտ 3750 տարի առաջ, նուաճեցին Բաբելոնը, և երբէք լիովին սէմիտ կրօնը չդարձաւ, այլ մինչև վերջը պահպանեց մի բոլորովին ուրիշ բնոյթի կողմերից շատերը։ Սակայն հէնց այն ժամանակից, երբ նա մասամբ սէմիտ բնոյթ ընդունեց՝ առաջին անգամ իր ազդեցութիւնը երևեցաւ

*) Ասորիքի թագաւոր։

արևմտեան Ասիայում, ապա Եւրոպայի ափերում ուչ—սէմիտ ժողովուրդն երիմիջև։ Հրէաները վաղ ղգացին իրանց վրայ բարելոնեան գաղափարների ազդեցութիւնը. Աբրահամը ինչպէս կարդում ենք, երևեցաւ Քանանում Քաղդէացոց Ուռհայից. մարդաբէներին յայտնի էր այն ամէնը. ինչ որ վերաբերում էր Բաբելոնի առևտրին, և բաբելացոց վինուտների ոտնաձայնը շատ անգամ է լսվել Պալէստինէում մինչ անգամ մեծ գերութիւնից առաջ, որի ժամանակ Իսրայէլը բարելացուց գերեվի մօտ նստած՝ լաց էր լինում, յիշելով Սիօնը։ Մենք այն էլ ենք տեսնում որ Յունաստանումն էլ Փիւնիկիայի միջոցով շատ վաղուց յայտնի էին դարձել այն գաղափարները, որ առաջ էին եկել Բաբելոնում։ Նոր յայտնագործութիւնները անհնարին են անում, որ Միջագետքի կրօնին, աշխարհիս մեծ կրօնների շարքում առաջինն կրօնի տեղը տալու փոխարէն, մի այլ տեղ տրվի։ Միջագետքի ու Եգիպտոսի միջև եղած այն հին կապը, որ մինչև այժմ ուչ լիե ճշտութեամբ էր յայտնի, այլ լոկ ենթադրվում էր՝ փոքր առ փոքր պարզվում է և հաստատէ աւելի հաւանական է դառնում որ այս երկրներից առաջինը բոլոր հին քաղաքակրթութիւնների աղբիւրը պէտք է համարվի։ Եգիպտական պանթէօնը շատ կողմերով սաստիկ նման է Բաբելոնի պանթէօնին, և եգիպտական տաճարներից շատերը իրանց ծագման հետքերը Տիգրիսի ու Եփրատի երկրներից են կրում։ Ձինաստանում հանդիպող նմանութիւնները այնքան էլ որոշ չեն, բայց շատ կարևոր են։ Այսպիսով Բաբելոնում մենք ուչ լիե երեք առանձին կրօններից մէկի հետ գործ ունենք, այլ՝ միւս երկուսի մօր հետ։ Եթէ ըստ Լօքկայերի՝ Եգիպտոսը աստղարաշխութիւնը Բաբելոնից է առել տաճարների չինութեան հետ միասին Ք. Ծ. 5000 տարուց էլ առաջ՝ այն ժամանակ բարելացիների կրօնի սկզբնաւորութիւնը խոր հնութեան մէջ պէտք է որոնել։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՈՒ ԳՐՈՂՈՒԹԻՒՆԸ։ Մինչև սէմիտների նստաճումը՝ Բաբելոնում բնակող ժողովուրդները էին՝ արկադիները*) հիւսիսում և սումերիացիները հարաւում. այս ժողովուրդները ազգակից չէին սէմիտներին ուչ արիւնով, ոչ լեզուով. նրանք սովորաբար կոչվում են թուրանցիներ և գուցէ ազգակից էին չինացիներին։ Սէմիտների գալուց էլ առաջ նրանք ունէին գրականութիւն և նրանց բնիւադրութիւնը (որ փոխարինել էր եգիպտականին նման՝ հնագոյն գաղափարագրական դրութեանը) խափանված չէր յաղթող ժողովրդի կողմից և ամբողջ հազարամեակներ գործադրութեան մէջ էր գտնվում իբրև մի սրբազան դրութիւն։ Նրանք մի որոշ գարգացման հասցրին նաև բանդակագործութիւնը. նրանց երկրում հանդիպում են կոփածոյ գործեր այնպիսի քարից, որ բերված էր Սինայի պարանոցից, այն էլ այնպիսի ոճով, որ հին ժամանակներում տիրում էր Եգիպտոսում։

Հին Բաբելոնի վերաբերմամբ ունեցած տեղեկութիւնները բաղկում էին յոյն և լատին գրողների տգրատիկ տեղեկութիւններից, բայց վերջին յիսնամեակում յայտնագործվել էին նոր աղբիւրներ, որոնք վերջապէս լուսաբանեցին առարկան մի նոր ու աւելի պայծառ լոյսով։ Յայտնագործվեցին ապիւսաների ապիւսակներից շինված ընդարձակ մատենադարաններ, որոնք գտված էին Բաբելոնի ու Ասորիքի քաղաքների աւերակների տակ, և այս հին գրականութեան աստիճանաբար ընթերցումն ու կարգի բերվելը այնքան արագ է լինում, որքան մէկ այդպիսի աշխատանք կարող էր առաջ գնալ այնպիսի ընդունակ ու գործին անձնատուր եղած ուսումնականների ձեռքով, որոնք նուիրված էին այս գործին։ Գործին մօտիկից ծանօթ անձնաւորութիւններ յայտարարում են որ մինչև այժմ դեռ անկարելի է գրել քաղդէացոց կրօնի ստոյգ պատմութիւնը։ Ներկայումս մեր տրամադրութեան տակ գտնված բնագիրները հին չեն Ը-րդ դարից նախ քան Ք. Ծ., և գե-

*) Աքկադը հարաւային Միջագետքի մի երկիրն է, որտեղ բնակում էր աքկադերէն խօսող մի առանձին կենսակերպական ժողովուրդ։
Դա իսկապէս այն երկիրն է, որտեղ գտնվում էր Բաբելոն քաղաքը։
Հ. Թ.

պէտ, ինչպէս յայտնի է, նրանք պարունակում են իրանց մէջը հետաքրքիր ժամանակի շատ ապացոյցներ էլ, սակայն մինչև այժմ այդ ժամանակի նկատմամբ մենք ստանում ենք շատ կցկտուր տեղեկութիւններ, որոնք թոյլ են տալիս այն ստուգման կատարելի մէկնութիւններ, որ դժուար թէ այդ հանգամանքների վրայ կարելի լինի մի ամուր հիմք դնել պատմութեան համար: Գիտենալով որ այս գլուխը մի այսպիսի պատճառանքով չոր ու ցամաք է դուրս գալու այն առանձին փաստերի մի առ մի թուելուց, որոնք տալիս թէ կարողանան տեղաւորվել մի հանուր պատկերի մէջ՝ մենք այս պատճառով սկսում ենք բացատրել այն արդիւնքները, որ կարող են հաստատուն արդիւնք համարվել: Ամեն յետագայ ժամանակների կրօնի մէջ մնացած մի քանի կողմեր, ըստ երևոյթին, լոյս են սփռում նրա նախկին դրութեան վրայ: Փորձենք և մի դատարկել այն, ինչ որ կարող ենք գիտենալ նրա դրութեան մասին բարեկացոց՝ սէմիտների իշխանութեան տակ ընկնելուց առաջ:

1. ՈԳԻՆԵՐԻ ԿՈՒԼՏԸ: Շինացիների պէս՝ բարեկացիք հաւատում էին որ աշխարհս լի է ամենատեսակ ոգիների մի հսկ բազմութեամբ. բնութեան իւրաքանչիւր շարժողութեան մէջ նրանք տեսնում էին «գի»ի կամ ոգու ներգործութիւնը: Այս ոգիները մի յայտնի ասպիճան կարող էին գնահատել. թէպէտ նրանց բնոյթը որոշ չէր, բայց ենթադրվում էր որ յայտնի կախարդանքներն ու երգուեցումները դորութիւն ունեն նրանց վրայ, ուստի և անտեսանելի աշխարհի հետ ունեցած հաղորդակցութիւնը կախարդութեան կերպարանք ստացաւ: Սրբազան գրականութեան ամենահին հատուածները բաղկացած են այնպիսի կախարդանքներից, որոնք մեծ ուժի տէր էին համարվում և բացատրութիւն չէին կազմում կանոնից, եթէ նկատի է դործածել այստեղ մի այսպիսի բառ, սրա հակառակ, նոր երգուեցումներն ու կախարդանքները շարունակ մատեան էին մտցնվում նաև այն ժամանակ, երբ յայտնվեցին

աւելի բարձր հոգևոր էակներ, և նրանց դիմելու համար պրոնվեցին աւելի վսեմ եղանակներ: Բոլոր հիւանդութիւնները ու չհաւատութիւնները առանձնապէս ոգիների ներգործութեանն էին վերագրվում, և հիւանդները բնապէս ապաքինում էին կախարդին, որ նա հալածէր իրանց տանջող ոգիները: Ոգիներից մի քանիսը զօրաւոր էին միւսներից, և հզօրագոյն ոգին կանչվում էր՝ լծոյլին վռնտելու համար: Երկնքի ու երկրի ոգիները կանչվում էին ժանտախտի դէմն երդուեցնելու համար, այն դէմն, որ ուղարկում է աչքացաւը, սրտացաւը, դլխացաւը կամ մարմնի որ և է ուրիշ մասի հիւանդութիւնը: Ոգիների բռնանալապետութեան այս հատուածը և նրանց հետ վարվելու այս եղանակը կոչվում է շամանիսմ*) և բիչ է բարձրը կանգնած այն ժողովրդների անիմիսմից, որոնք զարգացման ամենաստոր աստիճանի վրայ են գտնվում: Այդ հատուածը արժանի չէ կրօն կոչվելու, որովհետև դրա միակ շարժառիթը երկիւղն է, և նրանում դեռ ևս բարեկամական յարաբերութիւններ չեն ձեռք բերված անտեսանելի զօրութեան հետ:

2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ: Ոգիների հետ այսպէս վարվելուց մի աստիճան բարձր է կանգնած կենդանիների պաշտումը, որի վրայ Սէյս նայում է, ինչպէս բարեկացոց կրօնի սկզբնական ձևի, այնպէս համարելով իբր թէ կենդանիներ պաշտելը բացատրում է նրա այլ և այլ կողմերը: Եգիպտոսի ու Յունաստանի աստուածների պէս՝ բարեկացոց շատ աստուածութիւններ կենդանիները ընդունել են իբրև իրանց խորհրդանշան (էմբլէմա). այդ երևում է թէ նրանց ձեռակերպելուց ու թէ նրանց լեգենդներից: Թևաւոր եղներն ու արծուագլուխ մարդիկ բարեկացոց արուեստի մէջ երևում են իբրև աստուածների՝ կենդանիներից դէպի կիսամարդիկ, ապա և լրիւ մարդիկ փոխանցվելու աստիճանի միևնոյն փոխանցումը, որ, ինչպէս մեզ յայտնի է,

*) Շամիկների հաւատներից մէկի ձևափոխութիւնը, որ ընդունում են մարդակերները և ուրիշ ժողովուրդներ, այն է՝ երկրպագութիւն դերագոյն էակի, որ բնակում է արևի վրայ և ուրիշ շատ երկրորդական աստուածութիւնների:

առաջ է եկել և՛ Եգիպտոսում։ Իբրև միջնորդ շրջան՝ Բաբելոնում երևում է այն աստուածութեան պատկերը, որ նստած է՝ սկզբումը հետը նայնացած կենդանու մէջբին։ Ասորոց Դագոնի*) գլուխն ու ուսերը ծածկած էին ձկան ընկիով. մենք հիմա նրանց մօտ տեսնում ենք մարդակերպ աստուածներ ու աստուածուհիներ, սակայն ընկերով. հանդիպում ենք նրանց մօտ ընտաւոր դրակոնների**), մարդու գլխով ու ընկերով ահագին եղների՝ իբրև պահապան աստուածութիւններ, որոնք հալածում են չար ոգիները, որ դրանք պալատը չմտնեն։ Աստուածների հետ կապ ունէին նաև հետևեալ կենդանիները՝ յամայրը (антилопъ), օձը՝ իբրև նենգութեան ու չարութեան մարմնացում, այծը, խոզը, ցիները։ Սրանից մենք տեսնում ենք որ զօսմոգոնիայից դէպի աւելի ուսմ անտրոպոմորֆիզմը փոխանցումը,—որը (վերջինը) ապագայում յոյները արուեստի շնորհիւ հասցրել էին իր բարձրագոյն սահմանները,—սկսվել է Բաբելոնում։

Բոլոր նախնական կրօնների պէս՝ Բաբելոնի կրօնը բռնված էր բազմաթիւ մանր կուլտերի։ Հանուր կրօն չկար, այլ իւրաքանչիւր վայր իր աստուածը կամ աստուածներն ունէր և իր սեփական սրբազան սովորութիւնները։ Հիմք կայ կարծելու որ Եգիպտոսում զործերի այսպիսի դրութիւնը արմատացած է եղել համայնքի սկզբնական տոտէմիստական կազմութեան մէջ. միևնոյնը կարող է ճիշտ լինել և՛ Բաբելոնի վերաբերմամբ։ Եթէ նախնական ժամանակները իւրաքանչիւր ցեղ ունեցել է իր առանձին սրբազան կենդանին, և այս կենդանիները ժամանակի ընթացքում աստուածների են փոխվել՝ ապա երբ ցեղերը աւելի նստակեաց ու կազմակերպված են դարձել՝ իւրաքանչիւր աստուածութիւն հասատաւելիս է եղել մի որոշ տեղում ու մի որոշ քաղաքում, և սրբյան մեծանալիս

*) Ձկնատպիների գլխաւոր աստուածութիւնը, որ մի ձուկ է՝ մարդու ձեռքերով ու գլխով։

**) Ասատպելական թեւաւոր կենդանի՝ կոկորդիլոսի իրանով ու օձի ոտներով։

Հ. Թ.

են եղել մանր իշխանութիւնները կամ պետութիւնները՝ աստուածութիւնները էլ հետներն են մեծանալիս եղել։ Յամենայն դէպս Բաբելոնի աստուածները անտարակոյս պատկանում էին այլ և այլ քաղաքների և թէպէտ աւելի ուշ փորձեր արվեցին նրանց բոլորին կապելու իմ մի բաբելական պետական կրօն և սահմանելու նրանց՝ միմեանց հետ ունենալիք յարաբերութիւնները՝ սակայն այդ փորձերը շատ քիչ աջողութիւն ունեցան։ Այսպէս, ինչպէս և ամէն տեղ, առանձին աստուածները աւելի վաղ յայտնվեցին, քան այն սիստէմը, որ ձգտում էր նրանց կապել միասին։

Մեծ աստուածները։ Բաբելոնի մեծ աստուածները պատկանում էին տարերքին ու երկնային մարմիններին։ Նրանք տէրեր չեն, հրամայողներ չեն, մարդկային բնաւորութիւններից առնված բնաւորութիւններ չեն, ինչպէս սեմիտների աստուածները. նրանք այրեր ու հայրեր չեն, այլ՝ ստեղծողներ ու համաշխարհային ուժեր։ Մի այլ նշանը, որ նրանց որոշում է սեմիտ աստուածներից, այն է, որ սկզբում նրանք կին չեն ունեցել։ Նրանց կանայքը սեմիտ անուններ ունեն. իսկ սա ցոյց է տալիս որ սեմիտների երևան գալուց առաջ՝ աստուածները զոյգ-զոյգ չեն եղել ապրելիս, և որ դա նուաճողների մի նորամուծութիւն է։ Այդ նուաճողները ուղղակի աստուածներին կին էլ էին յատկացնում, կցելով նրանց անուններին իգական վերջաւորութիւններ. այսպէս՝ Բէլ ստացաւ մի Բէլտանոյշ, Անու՝ Անույշ։ Այս բանը չէր կարող պատահել ազգակցական միջի, որովհետև նրանց մեջ իգական վերջաւորութիւն չունէր։

Մի համառօտ տեսութեամբ յիշենք *գլխաւոր աստուածները*։ Հնագոյն աստուածներից մէկն էր *Էա*՝ Էրիդայից-մի քաղաքից որ հին ժամանակները գտնվում էր Պարսից ծոցի ծայրին։ Նա խորութեան աստուածն է, այն պատճառով արդեօք որ համարվում էր ծովով ուրիշ աշխարհից եկած, թէ այն՝ որ կապված է Բաբելոնում և ուրիշ տեղերում տարած-

ված այն հաւատալիքի հետ, թէ բոլոր առարկաները սկզբում առաջ են եկել անդունդից։ Ասանդուխեան աւելի ուշ կազմակերպված ձևերում նրա անունը երևում է արդէն ինչպէս Օհանննէս, և նա ներկայանում է իբրև մի երկակենցաղ էակ՝ կէս—ձուկ, կէս—մարդ, որը գալիս է գալիս խորքից և մարդերին արուեստներ ու գիտութիւններ է սովորեցնում։ Կային և նրա անունը կրող աշխատութիւններ, որովհետև նա մինչև նոյն ժամանակ գրող էր։ *Անա* երկինքը էրէխի աստուածն էր ստորին Եփրատի վրայ։ Շինացիների պէս՝ էրէխի բնակիչները երկինքը հասարակ էին դերագոյն աստուածութիւն ու արարիչ և աշխարհիս մէջ ամէն բանի կառավարիչ։ Սակայն Բաբելոնում այս հասկացողութիւնը ստացել է աւելի հոգևոր բնոյթ, քան Շինաստանում. սկզբում մենք լսում ենք որ այս բնակարանը ջրհեղեղի ժամանակ աստուածների ապաստարան է եղել դարձած, բայց յետոյ նրա վրայ նայում են, ինչպէս մի էակի, որ բարձր է կանգնած երկնքից ու բոլոր ստեղծված էակներից, մինչ անգամ բոլոր աստուածներից բարձր։ Երրորդ մեծ աստուածը Բէլ է՝ Նիպուրից, ոչ թէ Բաբելոնի վերջին Բէլն, այլ աւելի հինը, որ նոյնանիշ է աքկադիացոց *Մուլ—լիլլի* աստիճանիայ աշխարհի սիրոջ հետ։ Այս կրօնի հնագոյն աստուածները ծովն, երկրի ու երկնքի աստուածներ են։ Որովհետև նրանք պատկանում են երկրի այլ և այլ տեղերին՝ այս պատճառով հազիւ թէ կարելի լինի նրանց անուանել երեքութիւն։ Եւ եթէ յաճախ երեքութիւն են կազմում էրիդայի էա, նրա կին՝ *Դամկինա* երկրի աստուածուհին, և արևի աստուած *Դումուզի* նրանց զաւակը։ (Այսպիսով Բաբելոնում երևան է գալիս երկնքի ու երկրի ամուսնութեան հին առասպելը, բայց աւելին կազմելով վերոյիշեալ կանոնից, որի համաձայն՝ աստուածները ամուրի էակներ են)։ Բայց սա աչքի չէ ընկնում։ Էայի որդին, որ *Մերի—Դուգգա* կամ *Մէրոդախ* է կոչվում՝ նոյնպէս նոյնանիշ է եգիպտական Ռաիրիսի հետ. նրանց սիմբոլը միևնոյնն է, նրանցից իւրա-

ժանչիւրը արևի աստուած է, իւրաքանչիւրը ունի բոյր, որ միևնոյն ժամանակ իր կինն է. Մէրոդախինը՝ Խասար Ռաիրիսինը՝ Իդիդա։ Ակրոպոլում գլխաւոր աստուածութիւնը կրակի աստուածն էր, որ երբեմն կոչվում էր Սաուշ. Կալմայում երկրպագում էին Նէրգալին՝ մահի աստծուն, «հզօրին», որի դահը դրված էր դեամի տակը։ Կալման բարելացիների սիրած խաղման վայրն էր։ Ադիմ'օն քամու աստուածն էր, Մաամու՝ մրրկինը։ Ընդունված էր այլևս դրական Տիամատ, որի դէմ մեծ աստուածները պատերազմ էին մղում։

Արեգին ու Լուսնին երկրպագում էին ամէն տեղ. իւրաքանչիւր քաղաք ունէր իր սեփական արևի—աստուածը (արև ներկայացնող աստուածը) և իր սեփական լուսնի—աստուածութիւնը։ Այն առաւելութիւնը, որ սովորաբար վերագրվում էին լուսնին՝ պատճառում էր հին Բաբելոնում, որտեղ լուսնի աստուածը համարվում էր արևի աստծու հայրը և գերագոյն էակը։ Քաղդէացիների Ուռհայում լուսինը գլխաւոր աստուածութիւն էր։ Քաղաքներ էլ կային, ինչպէս Լարսա ու Սիպպարա, որտեղ գլխաւոր աստուածը արևն էր. և յետագայ ժամանակի մեծ աստուածներից շատերը սկզբում արևի աստուածութիւններ են եղել։ Աստղերն էլ էին պաշտվում։ Քաղդէացիների աստղագիտութիւնը առած էր գրեթէ վերջին բաբելական տաճարի անբաժան մասն էր «զիգուռատը» կամ դիտանոցը։ Բաբելոնում առաջին անգամը սկսեցին նկատել երեքութիւնները այնպէս կատարեալ որ նրանց գլխաւոր առանցքը ուղղված լինէր իսկապէս ցանկացած կողմը։ Բաբելական տաճարներից շատերը այնպէս էին շինված որ արևը նրանց արևմտեան մասը լուսաւորում էր գարնան դիշերահաւասարի օրը, երբ սկսվում էր գեամի հեղեղումը, որից զգալի կերպով կախված էր երկրի բարեկեցութիւնը։ Այսպիսով տաճարը մի չատ ճիշտ աստղագիտական դործիք էր, և նրա շինութիւնը կատարող ու մեջը աստուածպաշտութիւն կատարող քուրմերը գիտակ և ուսում-

նական մարդիկ էին։ Երկնային մարմինների հետ կապ ունեցող կրոնը, լինելա լիովին չէ գոհացնում աստրին կարգի պէտքերը և շատ քիչ էներգիա է ցոյց տալիս անապաշտպանելիան դէմ կռիւ մղելու գործում՝ հակված է քրմապետին կազմակերպելու կողմը, որ ողջ երկրի լուսաւորութեան ու բարքերի կենտրոնն է։ Սա լիովին յարմարվում է Բաբելոնին։ Այս հին աստղաբաշխներին աշխարհս պարտական է կենդանակամարի (զոդիակոսի) նշաններով, որոնք սահմանված են մոտ ութ հինգերորդ հազարամեակից նախ քան Ք. Ծ., և որոնք հաստատում են, թէ ինչ վաղ է սկսել մարդը քննել գիշերային երկնքում այն էակները, որոնք երկրի վրայ աստուածութիւններ էին համարում, այնպէս որ երկրպագում էր նրան երկնքում ու երկրում։ Զարգացման կարգադրումը նոյնպէս արկածիացիների գործն է. հաւատալի չէ սակայն, թէ այդ կարգաւորումը կապ ունի լուսնի փոփոխման կամ եօթնօրեայ ժամանակամիջոցի հետ՝ եօթը մոլորակների թուով։ Եօթը մի սրբազան թիւ է Բաբելոնում. մենք տեսնում ենք որ շատ բան է եկել կապված այդ թուի հետ։

ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ։ Փորձելով ասել թէ բաբելական կրօնի այն բաղադրիչ մասերը, որոնք առաջ են եկել սէմիտ ազգերութիւնից առաջ՝ մենք հասանք առասպելներին։ Աստուածութիւնների ու հերոսների մասին յերիւրված վիպասանութիւնները՝ նորագիւտ գրականութեան ամենաշահեկան ու ամենայայտնի մասերն են։ Մենք արդէն չփոխեցինք մի քանի հաստատների, ինչպէս օրինակ՝ երկակենցաղ առածու պատմութեան հետ, որ ամէն օր գալիս ծովից, խօսեցինք այն բանի մասին, որ լուսինը համարվում էր արևի հայրը, էայի ու Դաւկինայի բնաւանեկան յարաբերութիւնների և նրանց որդու՝ արևի՝ մասին։ Վերջին երկու-սմունքը ակներև կերպով համաձայն չեն միմիանց։ Բայց էայի ու Դաւկինայի որդու մասին պատմվածը ունէր յետագայ նշանաւոր զարգացումը։ Նրա անունն է Դուզու կամ Թամմուզու, և նա

այն Թամմուզն է, որի մասին խօսվում է Ս. Գրքում։ Նա համարվում է արևի գարնան աստուածը, որի վրայ մահացնող կերպով ներգործում է ամառային խորշակը և որ յաւիտ ամսում մեռնում է։ Երկրի վրայ երևեցած տամիւզիութիւնը՝ նրա մահի պատճառով լափված արդյունքն է։ Նրա բնակութեան տեղը Եդեմն է, որովհետև Եդեմը վերաբերում է բաբելոնեան լէգենդային, որի համաձայն՝ նա գտնվում է Էրիդայի մօտ։ Այնտեղ աճում է աստուածների սերած՝ համաշխարհային մեծ ծառը. նա բարձրանում է երկրի միջակէտից և անվում է նոյն իսկ երան՝ էայի լցրած ազբիւրներով։ Սա մայրն (ծառ) է (իգդրասիլը՝ հայերն (ծառ), ինչպէս կտեսնենք միևնոյն գերն է խաղում հիւսիսային տեսութիւնների մէջ). երբեմն նա հանդիպում է մի շատ պայմանաւոր կերպով՝ կողերից բերրութիւնների կերպարանքով, որոնք ձեռքերին մի—մի պտուղ ունեն բռնած։ Այս ծառի մէջ ուսումնականները տեսնում են միանգամայն ծառ կենացը և ծառ գիտութիւնը, որոնց մենք ծանօթ ենք Ս. Գրքից։ Բաբելոնեան բրմերի գիտութիւնը մատչելի չէր ամենքին, բայց նամանդով պահպանվում էր, և միմիայն ընծայվածներին էր մատչելի։

Թամմուզից մենք բնականաբար անցնում ենք Իսաարին, որ հին Բաբելոնի սակաւաթիւ աստուածութիւններից մէկն է և նրանցից ամենի նշանաւորը։ Իսաար սկզբում երկրի աստուածուհին էր, և միևնոյն ժամանակ արև աստծու մայրն ու քոյրը, որովհետև պատճառ կայ կարծելու, որ նա սկզբում նոյնանիշ է եղած Դաւկինայի հետ։ *Իսաարի նշմարն* առասպելը նկարագրում է թէ նա ինչպէս է իջել աստուածների խնդրութիւնը այն ջրի համար, որ պէտք է նորից կեանք տար իր փեսայու Թամմուզին։ Այն քերթուածը, որի մէջ պահվել է այս գրոյցը, նկարագրում է «Իսաարի բնակարանները, որտեղ լոյս չեն տեսնում», իսկ յետոյ պատմում է թէ ինչպէս գժոխքի խնդրուն Նէրկիգալու կամ Ալլատի հրամանով՝ շնայելով Իսաարի ընդիմութեանը՝ փոքր առ փոքր դրկում են

նրան իր բոլոր գարդերից, և Նամտարամին, իբրև ժանտախտի ոգու՝ հրամայում են նեղել նրան ամենատեսակ հիւանդութիւններով։ Իստարի՝ անդնդում անհետանալու հետևանքն այն է լինում, որ մարդերի ու առօրեական կենդանիների միջև դադարում են, և կոչվում է ինքը Էա, որպէսզի վերջ տայ դրծերի այս անբնական դրութեանը։ Մուրհանդակ են ուղարկում աստիճանական գաւառները՝ Իստարին ազատելու և Թամմուզի աշխարհը վերադարձնելու համար։ Սակայն այս Աստուածուհին լոկ այս լէգենդայով չէ, որ յայտնի է. նա երևան է գալիս այլ և այլ դէմքերով ու այլ և այլ բազդի է հանդիպել։ Իստար ինքն է Թամմուզին էրէխից հրապուրում՝ նրան ոչնչացնելու համար։ Խորին հնութեան մէջ Իստար երևան է գալիս նաև իբրև երեկոյեան աստղ, իբրև լուսնի փայլուն արբանեակը։ Նրա հիմնական բնոյթը ըստ երևոյթին յայտնի է անում նրանում սիրոյ աստուածուհուն։ Նրանից է կախուած պտղաբերութիւնը. նա իջնում է գետնի տակը՝ իր տարփածուն փնտռելու։ Նոյն բնոյթն է պահպանում նա Փիւնիկէում ու Ասորիքում Աստարտայի սէմիտացրած պատկերում, և նրա կուլտը աչքի է ընկնում իր անպարկեշտութեամբ։ Սակայն գոյութիւն ունէր նաև պատերազմական Իստար՝ մի դաժան աստուածուհի, որին ծառայում էին ամազոնականները*), և որին կարելի է նոյնացնել յունական Արեմիտայի (Անահտի) հետ, ինչպէս սիրոյ աստուածուհի Իստար նոյնանում է Աֆրոդիտէի (Փիլիսթացին) հետ։

Իստարի լէգենդայից էլ հին են բաբելոնեան դրոյցների մի քանի մասները աշխարհի ստեղծագործութեան մասին։

*) Այս անունն է տալիս հին աստունքը բացառապէս կանանցից բաղկացած մի ժողովրդի, որ չէր կորոշնում տնեղ ազամարդերի ներկայութիւնը, պատերազմ էր գնում իր թագուհու առաջնորդութեամբ և կազմում մէկ առանձին պատերազմիկ պետութիւն։ Սերունդ պահպանելու համար ամազոնականները յարաբերութեան մէջ էին մտնում դրացի ժողովուրդների հետ, ուղարկելով նրանց արու զաւակները, իսկ աղջիկները ջողնում էին իրանց մօտ—նրանց՝ պատերազմի մարզելու համար, և

Այսպիսի մի քանի դրոյցներ կան։ Նրանցից մէկի մէջ հին աստուած Էա սկզբնական քաոսում բնակեցնում է բազմաթիւ տարօրինակ հրէշներ։ Միւսի մէջ պատմվում է աստուածների ծնունդը աշխարհն դասաւորելու հետ միասին. ինքը քաոսը կերպարանաւորվում է իգական սեռի մի հրէշի կերպարանքով, չարութեան դրսեվնի կերպարանքով, և աստուածութիւնը հարկադրված է լինում պատերազմ մղել այս մութ ու չար ուժի դէմ և լոյս մոգնել մարդաբնակ աշխարհը փրկել այդ աշխարհը այս ուժի ձեռքից։ Իհարկէ, ճշմարիտ է որ բաբելոնեան լէգենդաները արարչութեան մասին աւարտված լէգենդաներ չեն և համաձայն չեն միմեանց, և որ ս. Գրքի՝ աշխարհի ստեղծագործութեան մասին պատմածը մարդ վեհ դասաւորութեանն է վերաբերում։ Բաբելոնեան աստուածը ջրհեղեղի ու տապանի մասին աւելի է նման ս. Գրքի պատմածին. այս երկու աստուածները չեն կարող անկախ լինել միմեանցից. բայց թէ նրանցից ո՞րին է պատկանում առաջնութիւնը՝ դա մի այնպիսի հարց է, որ կարելի է դեռ չկարողանայ լճռվել ներկայումս։

ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆԸ։ Բաբելոնեան ու ասորական կրօնը, որի մասին մենք մի փոքր բան պիտանք ս. Գրքից՝ զօրեղ պետութիւնների մի հոյակապ կուլտ է. նա մուտքից է իր համեստ ծագումը և բռնական խոշոր և ուսումնական ընկերութիւնների ղեկավարութեամբ շատ բան է վաստակել խորութեան ու մաքրութեան նկատմամբ։ Նրա արտաքին հոյակապութեան մասին բաւական վկայում են յուշարձանները։ Բաբելոնի Բէլ Մէրօդախի տաճարը աշխարհի հրաշալիքներից մէկն էր։ Լինելով պետութեան գլխաւոր բաղաքի աստուա-

այրում էին նրանց ազ ծիծը, որ նա չխանգարէր ուղիղ լարելուն։ Այստեղից առաջ է եկել «ամազոնականներ» անունը, որ նշանակում է անծիծ։ Ամազոնականները բնակում էին Սև ծովի ափերում. Թէրմօդոնտ գետի մօտ, որ հիմա կոչվում է Նեյլ—Իրմակ։ Այստեղից էին նրանք Ասիա արշաւում։ Ինչպէս աւանդութիւնը պատմում է, նրանք են շինել Եփեսոս, Զմիւռնիա և ուրիշ քաղաքներ . . .

Հ. Թ.

ծումխին՝ Մէրօդախը բոլոր աստուածներից մեծն էր և յարգում էր ու դրւատւում, իբրև միապետներից մեծի բարեկամ ու հովանաւորող։ Նրա օրով Նէբօ մարդարէ էր և իմաստութեան աստուած։ Ինչ որ Մէրոդախն էր Բաբելոնում, նոյնն էր Նաւր Նաորիբում. իսկապէս սա այն միակ աստուածն էր, որ բացառապէս պատկանում էր Նաորիբին։ Մենք ունենք առաջներս այն կանոնի մի ապշեցնող օրինակը, որ կրօնի մէջ, արտաքին չհեղուխման աճելու հետ, նա ձեռք է բերում նոյնպէս մի ներքին մեծ նշանակութիւն ու հոգեոր բնոյթ։ Աստուածները դարձել են մի բարոյական ուժ, նրանք իրաւ հոգում են մարդերի մասին՝ ոչ միայն լծապատուրի, որ նրանց երկրպագուների մասին։ Մէրօդախ հռչակված է իր դիմաբրտութեամբ. նա ոչ միայն ուղեկցում է լծապատուրին պատերազմներ գնալիս, որոնք այնպէս տապտուկ կերպով լուծում են արձանագրութիւնների մէջ, այլ և բժշկում է հիւանդներին, մխիթարում է մեղքերի մէջ տառապողներին, դուրս է կոչում կնանրը մահից և իր վերին օդհանութեամբ ընդունում է իր պիմասրտութեանը յանձնված հոգին։ Գալով մենք այժմ անցնում ենք կրօնի հնագոյն շրջանի սահմաններից և շրխում նրա սկիմիտ շրջանի հետ։ Յետագայ պրակտիկութեան ապաշխարական օրհներգները մի սուր հակապրութիւն են այն մոգական երդուեցումների դէմ, որոնք Բաբելոնեան արքայական պրակտիկութեան ծուծն են։ Նրանց մէջ պարունակվող խոստովանութիւնները աչքի չեն ընկնում մի առանձին հոգեոր բնաւորութեամբ. ապօրինին ուելի իր ամենջանքներն է ողբում, քան իր մեղքերը։ Իրաւ, նա ուելի իր ամենջանքներից է դուրս բերում այն եղրակացութիւնը, որ մեղանչել է, որ կարելի է գնացել է մի այնպիսի տեղ, ուր չպէտք է գնար, կերել է այն, ինչ որ չպէտք է ուտէր՝ քան լծ ընդունում է որ ամենջանքի է դատապարտվել իր խոստովանած մեղքերի համար։ Չի կարելի այս ապաշխարական օրհներգները համեմատել ս.

ս. Գրքի ապաշխարական օրհներգների հետ։ Սակայն այս օրհներգները այն բանն են մատնացոյց անում, լծ Բաբելոնում առաջ է եկել կրօնը և՛ առանձին անձնաւորութեան համար։ Աստուածների կարիքը ոչ միայն պետութիւնն է զգում պաշտօնապէս, աստուածներին ոչ միայն պետական նպատակների համար են որոնում՝ այլ և որոնում է ուրոյն անձնաւորութիւնը։ Մարդիկ հաւատում են որ աստուածները անձնական չարչարանքների էլ են ուշադրութեան առնում. մեռնողի բարեկամներն էլ հաւատում են որ աստուածները հոգալու են նրա մասին և ընդունելու նրա հոգին։

Մեր՝ այս երկրների կրօնների մասին ունեցած տեղեկութիւնները շատ լծերի են, այնպէս որ իրաւունք չունենք նրանցից երկար ու բարակ եղրակացութիւններ անելու։ Մեզ մի ապահան յայտնի է լծ ինչ էր բաբելացիների նախասէմիտ կրօնը. և մենք այն էլ ենք տեսնում որ սէմիտ տիպը երբէք կատարելապէս չէ իշխել այս երկրում. Բելի ու Նաւրի նման աստուածութիւնը, որ մարդերի հրամայողի բնոյթն ունէր՝ երբէք չէ անջատվել ոգիների հին խմբից և չէ խափանել նրանց ազատարկութիւնը։ Պէտք է յիշել, որ այստեղ, ինչպէս և Եգիպտոսում՝ մարդու ու հոգեոր կեանքի հասնելու փորձերը կատարեալ աջողութիւն չունեցան։ Բաբելոնն ու Նաորիբը երբէք այնքան մօտ չեն եկել միաստուածութեանը, որքան Եգիպտոսը՝ Ք. Ծ. երեք հազարամեակ առաջ։ Բաբելոնի վերջին լծապատուր Նաբոնիդ բոլոր աստուածները հաւաքից իր մայրաքաղաքը և ուզում էր նրանցից մի համակարգութիւն կազմակերպել, գլուխ ունենալով Մէրօդախին. բայց այս բանը ուելի կրօնական տարաձայնութիւններ առաջ բերից, քան խաղաղութիւն, որովհետև ստորնադաս աստուածութիւնները խորտակէս վիրաւորված էին նրանցից, որ իրանց պատկերները հեռացված էին իրանց սովորական սրբավայրերից և քան երեսյին մերժելու էին պետութեանը՝ նոր պայմաններում օգնութիւն հասցնելը։ Բաբելոնի կրօնը կատր-կատ-

լինելով՝ տեղական այնքան անկախ կուլտերի էր բաժանվել, որ նրանցից որևէ միացում չէր էլ կարելի ենթադրել։ Ամենամեծ բանը, որ առաջացել էր դրանից, այն էր, որ մի մեծ աստուածուհիուն պաշտվում էր մեկ քաղաքում, միսը՝ միս քաղաքում, առանալով փոքր ինչ վեհությունն ու տիեզերական յատկությունը։ Բարձրագոյն հատատի հասած ժողովուրդներին Բաբելոնի կրոնը շատ աստուածների կուռապաշտական կուլտ էր թվում։ Սակայն սա մի շատ խիստ դատողություն է։ Այս կրոնը կեանք էլ է ունեցել իր մեջ և տորին աստիճանից դեպի բարձրն է գնացել. իմանալով ոգիների հետ ունեցած իր երկչոտ յարաբերությունը՝ նա գործել էր այնպիսի աստուածների մատուցվող մի ապաստարկություն, որոնք մարդկային համակրնների իդեալական գլուխն էին և առանձին մարդերի բարեկամները։ Սա, ինչպես սովոր էին կարծել, լոկ աստղապաշտության և այլ գուշակությունների մի սիստեմ չէր։ Բայց երբ Բաբելոնն ու Ասորիքը գտարերային ինքնուրույն իմացություններ լինելուց և պարսկական գաւառներ դարձան՝ այն ժամանակ Բել պէտք է ստորանար, իսկ Նէբո ստացաւ ստորադրական դրության և այլևս չբարձրացան։ Աշխարհը արդեն էլ չէր զգում նրանց պէտքը։ Միայն մի երկրում չէր, որ աշխարհը հասել էր այս աստուածությունների կրոնից բարձր կրոնի։

XIII ԳԼՈՒԽ

ՀԻՆԱՍՏԱՆ.

Հինգլիք միշտ մի առանձին աշխարհ են եղել կազմելիս՝ միս ժողովուրդներից գտած. այստ ամենայնիվ նրանք ստեղծել են մի բազմակրոնություն, որ շատ կոմիերով կարող է մի գծի վրայ դրվել Հնդկաստանի ու Արևմուտքի բազմակրոնության հետ։ Այն ժողովուրդը, որ պատրաստել է վառօդը, չինել է թուղթը և տպել է գրքեր, Եւրոպայի՝ այդ բանին հասնելուց շատ առաջ, կարող էր բնական իրան առաջին ազգը համարել աշխարհում։ Սակայն այս ժողովրդի քաղաքակրթությունը Հինաստանի սահմաններից դուրս ազդեցություն չէ ունեցել աշխարհիս վրայ և չէ հասել մարդկային ոգու բարձր աստիճաններին։ Ինչպես չինական պարիսպը առանձնացնում է չինացիներին ուրիշ ժողովուրդներից՝ այնպես էլ նրանց հոգևոր սովորությունները արգելք են հանդիսանում տարերկրացիների հետ մարերի ազատ փոխանակում առնելուն։ Իրաւ Մոնղոլական ցեղը, որից նրանք առաջ են եկել՝ մաճառների (վինգերցի) ու ֆիննների պէս՝ շատ կէտերում այնպէս է որոշվում ուրիշ ցեղերից, որ մի քանի մարդաբաններ ենթադրում են իրը թէ մոնղոլները բոլորովին առանձին ծագում ունեն։ Լինելով բնութեամբ մատաղատ (հեզաբարոյ) ու դրական մարդիկ, ճիշտ ու պզոյշ գործական ասպարէզներում, վերին աստիճան նմանվող ու արդիւնաբերող ժողովուրդ՝ չինացիք զարմանալի կերպով զուրկ են երեւակայութիւնից և տրամադիր չեն փիլիսոփայութեան։ Նրանց ողջ բնութիւնը արտայայտված է իրանց՝ ֆիլիսթիաններից*) զուրկ միաժանկ լեզուի մէջ, որ պատկանում է մարդկային խօսքի հնագոյն ձեւերին և վատ է յարմարեցրված վերացական կամ բանաստեղծական գաղափարներ արտայայտելուն։

Ներկայումս Հինաստանում երեք կրօն կայ, բոլորն էլ պետութեան կողմից ճանաչված և երկրի ամէն կողմերում հետեւողներ ունեցող, այն է՝ կօնֆուցիականութիւն, տաօականութիւն ու բուդդհայականութիւն։ Մեր նպատակի համար ամենակարեորը այս կրօններից առաջինը քննելն է, որովհետև տաօականութիւնը որ սկզբում փիլիսոփայութիւն էր՝ այսօր դարձել է կախարդական սիստեմի մէջ, իսկ բուդդհայական-

*) Բառերի վերջաւորութեան փոփոխութիւն։
Հ. Թ.

նավթիւնը դրսից էր Հինաստան բերված, և նրա մասին կխոսվի ուրիշ տեղում։ Կոնֆուցիականութիւնը, առաջ գալով ուղղակի Հինաստանի պետական հին կրօնից՝ ներկայացնում է ժողովրդի ոգու բնական զարգացումը։ Հինական լեզուի պէս՝ պետական կրօնը շատ հին ծագում ունի և իր մէջ պարունակում է՝ սկզբում շատ արագ, բայց վաղ կանգ առած զարգացման նշաններ։

ՀԻՆԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ։ Լէգենդան բարձրանում է դէպի մի շատ խոր հնութիւն և մութ գծերով պատմում է չինացիների՝ արեմուտքից գալը (ուսումնականները այս բանը ընդունված փաստ են համարում) և այն հին տիրապետողների մասին, որոնք օրինակ են դարձել իրանց բոլոր յաջորդներին, վարվել են ժողովրդի հետ, ինչպէս իրանց որդիների, և հնարել են նրանց համար արուեստներ, որոնցից ամենից ազգի կախում ունի Հինաստանի կեանքը։ Իսկական պատմութիւնը սկսվում է Ք. Ծ. մօտ 2000 տարի առաջ, թէպէտ դրութեան արուեստը գոյութիւն ունէր Հինաստանում արդէն 1000 տարի առաջ։ Այժմ մի քանի ուսումնականների արած հետազօտութիւնները ըստ երեոյթին բերում են այն եզրակացութեան, որ Հինաստանը գոնէ բազաբակրթութեան սերմերն ու մի քանի կրօնական գաղափարներ Միջագետքից է առացել։ Հինական կրօնի բաբելոնեանի հետ նմանութիւն ունեցող մի քանի կողմերը ցոյց են տրվել վերջին ղիւտը։ Այնպէսի աշխատասիրութեան մէջ, ինչպիսին մերն է, և դիտութեան ժամանակակից դրութեան մէջ՝ չինական կրօնը հարկաւորվում է քննել առանձին։ Հինաստանի պատմութեան սկսված ժամանակ ժողովրդի բնոյթը, բարքերը, հիմնարկութիւնները արդէն հաստատված էին։ Հինացիք երեում են իբրև բազաբակրթիչ ժողովուրդ, ունեն կազմակերպված կրօն, թէպէտ մենք չենք կարող ասել թէ նրանք ինչպէս են հասել այդ աստիճանին։ Հին թագաւորները բարեպաշտ մարդիկ են, արուեստներ հնարող ու քազաբակրթութեան հիմնական կանոններ սահմանող. բայց թագաւորները հետզհետէ վատթարանում էին ու իրանց ժողովրդից չէին սիրվում։ Ծ. դարում, Ք. Ծ. առաջ Հինաստանում հաստատվել էր Հօսի հարստութիւնը, որ տվել է երկրին նրա լաւագոյն վարիչներից մի քանիսը, բայց չուտով այս հարստութիւնը կորցրեց իր նշանակութիւնը. երկիրը բաժանվեց մի շարք առանձին աւատական կալուածատիրութիւնների, որոնց վրայ կենդրոնական վարչութիւնը վաղեց իր ունեցած բոլոր դօրութիւնը, և Զ-րդ դարում մենք տեսնում ենք Կոնֆուցիոսին՝ մէկ անկախ պետութիւնից մեռնում անցնելիս։ Գ-րդ դարում, Ք. Ծ. առաջ այս շփոթը առաջ բերեց Հօսի հարստութեան անկումը Տէյնի հարստութեան ձեռքով։ Այս տան չորրորդ վարիչ Չի—Խօանգ—Տի՝ Հինաստանի ամենահզօր իշխողներից մէկը, առացաւ համաշխարհային հրամայողի տիտղոսը։ Նա Հինաստանի իշխանները բշեց սահմանից, սկսեց մեծ պարսպի շինութիւնը և ջանջանեց աւատական կալուածատիրի ուժը։ Սակայն բանից երեեցաւ որ աւատական սիստէմը դեռ ևս վայելում էր ժողովրդի համակրանքը, և որպէսզի դէպի հնութիւնը տածած յարգանքը դիւրաւորապէս հիմնրված էր կրօնական գրքերի վրայ, ուստի հրամանատարը հրամայեց ոչնչացնել նրանց և մեծ խստութեամբ պահանջում էր կատարել այս կարգադրութիւնը։ Բայց Ք. Ծ. առաջ 206 թ. Տէյնի հարստութեանը փոխարինող Խանի հարստութիւնը հին գրականութիւնը հանեց թագստի տեղերից, որտեղ պահվում էին գրքերի պատճէնները։ Այս մօմէնտից սկսած՝ Հինաստանի պատմութիւնը չէ վերաբերում մեզ անմիջապէս։

ԿՂԲԻՒՐՆԵՐԸ։ Այն գրքերը, որոնք այդպէս պատահարված ու կրկին վերադարձված են աշխարհին՝ տեղեկութիւններ են տալիս մեզ հին Հինաստանի ու նրա կրօնի մասին։ Հինաստանը ս. Գիրք չունի, չունի մի այնպիսի գիրք, որ կրօնի ներկայացուցիչները պահում են իբրև մի հիմք, որի վրայ հիմնվում է նրանց սիստէմը. չինական բուրմները, եթէ

կան,—պրակտիկական յարգանքներն են, նրանք ուսումնասիրում ու պահպանում են դասական հեղինակների գրուածքները: Իսկ դասական հեղինակները կապված են Կոնֆուցիոսի անուան հետ, որ հաւաքել ու հրատարակել է այդ գրուածքները, իրեն էլ դասական գրողներից մէկն էր: Այս գրքերը վերաբերում նրանց: Ոչ մի ժողովուրդ չէ ենթարկվել գրքի կամ մի շարք գրքերի այդպիսի մի զօրեղ ազդեցութեան, ինչպէս չինացիք: Ուսումնականների դասը, որ Չինաստանում միակ արիստոկրատիա (արիստոկրատիա) կազմողն է՝ իր բոլոր կրթութիւնը սահանում է Կոնֆուցիոսին վերագրված գրքերից. բայց այս պրակտիկութիւնը որքազորվում է ոչ թէ աստուածային հեղինակութեամբ, այլ՝ աւանդութեամբ:

Չինաստանի ամենանշանաւոր պրակտիկութիւնը բաղկացած է դասական հինգ հեղինակ գործերից ու չորս գրքից: Առաջիններն Կոնֆուցիոսի հրատարակածներն են, վերջիններն՝ այս իմաստունի աշակերտների կամ սրա շրջապատի հռչակաւոր ուսուցիչ Մէնցիոսի, որ ապրում էր նրանից մօտաւորապէս հարիւր տարի յետոյ: Ամենասրբազան գրքերը՝ դասական հինգ հեղինակների գրուածքներն են համարվում: Դրանք հետևեալներն են:

1) Ին—կինգ, կամ փոփոխութիւնների գիրք: Սա բնադրական (միստիք) բնոյթ ունեցող մի գիրք է. բաղկացած է Ք. Ծ. առաջ, ԺԲ. դարի իմաստուններին պատկանող մի շարք մեկնութիւններից, խորհրդաւոր ծագում ունեցող՝ ուղիղ գծով իջնող գէմքերի (փիգուր) շարքից: Սա ամենայարգված գիրքն է, քանի որ ամբողջ հաւարածուի մէջ ամենաբնիկ հատկանալին է: Դա ազատ էր տրված Չի—Խուանգ—Տիու արգելքներից:

2) Շու—կինգ, կամ պատմութեան գիրք, որ պարունակում է իր մէջ հին իմաստունների ճառերն ու վարդապետների (մագուսների) ճառերը՝ սկսած Ք. Ծ. առաջ, ԻԴ. դարից մինչև Ը—ը:

3) Շի—կինգ, կամ բանաստեղծութեան գիրք, բաղկացած 300 երգից, որ ընտրել է Կոնֆուցիոս տասնապատիկ մեծ բանաստեղծութիւնից: Այս երգերից շատերը շատ հին են:

4) Լի—կի, կամ ծիսացուցակ: Այս գիրքը, ըստ աւանդութեան՝ կազմել է հերցոգ Չօ ԺԲ. դարում Ք. Ծ. առաջ և Չինաստանի պետական հին կրօնի տեղեկութիւնների պլատոր ապրիւրն է: Նրա մէջ պարունակված են ոչ միայն կրօնական արարողութիւնների՝ այլ և ընկերվարական ու ընտանեկան պարտաւորութիւնների նկատմամբ հրահանգներ. սա ժամանակակից չինացու վարք ու բարքի մի ձեռնարկն է:

5) Չուն—Ցիու, գարուն ու աշուն, որ պարունակում է իր մէջ Լոյի իշխանութեան տարեգրութիւնները, որի իշխանական տեղից առաջ է եկել Կոնֆուցիոսը՝ Ք. Ծ. առաջ, 721—480 թ.: Սրանք շատ չոր ու ցամաք ժամանակագրութիւններ են, և եթէ մենք կարողանանք հասկանալ Մէնցիոսի պնդումը թէ, պրկով այդ ժամանակագրութիւնները՝ Կոնֆուցիոս (որովհետև գրանք նրա սեփական աշխատութիւններն են) մեծ ազդեցութիւն ունեցաւ իր ժամանակակիցների մարերի վրայ՝ այն ժամանակ չինական կրօնից ու բարքերից շատ բան մեզ համար աւելի պարզ կլինէր, բան թէ որ գժբաղդարար կարող ենք ասել այժմ:

Այս դասական հինգ հեղինակների գործերի վրայ երեմն աւելանում է վեցերորդը՝ *Յսաոյս—Կինգ* կամ որպիսական սիրոյ գիրքը, որ Կոնֆուցիոսի՝ այս նիւթի մասին իր մէկ աշակերտի հետ ունեցած խօսակցութիւնն է:

Դժուար է ասել թէ այս հին գրքերում պարունակվածներից սրն է պատկանում Կոնֆուցիոսին: Ոմանք ենթադրում են թէ նա շատ բիչ բան է փոխել գրանց մէջ ու բիչ բան աւելացրել իրանից, և թէ իսկապէս նա ինքն է այդ գրքերին պարտական այն ամէն բանով, թէ որ սովորեցրել է: Ոմանք

էլ ասում են թէ Կոնֆուցիոս ստիպել է այդ հին դրքերին՝ հռչակել իր վարդապետութիւնը ու բաց է թողել նրանց միջից այն ամէնը, ինչ որ համաձայն չէ իր վարդապետութեան. և իրրև այս հայհոյերի ապացոյց՝ մատնացոյց են անում այն փաստը, որ թէպէտ այս դրքերը, ինչպէս որ կան այժմ, մարուր Կոնֆուցիականութիւն են սովորեցնում, սակայն Կոնֆուցիոսի հետ միաժամանակ առաջ եկաւ Չինաստանում մի այլ՝ և ուրիշ ոգի ունեցող կրօն, որ անշուշտ արևմ. հիմք պէտք է ունենար հին սիստեմի մէջ: Հետաքրքրական է համարվում այն բանը, թէ Կոնֆուցիոս չէ հոգացել հին կրօնի բոլոր կողմերը մեզ հասցնելու մասին, այլ միայն այն կողմերին է հասցրել, ինչ որ ինքն է հաւանել: Սակայն այն, ինչ որ տրվել է մեզ հին կրօնից՝ բաւ երևոյթին, պատապատած չէ. և դժուար թէ կարելի լինէր կասկածել այն բանի մասին, թէ այն, ինչ որ բաւ Կոնֆուցիոսի աւելի լաւն էր, և որ նրա չնորհիւ մնացել էր Չինաստանի հետևեալ կրօնը՝ եղել է հին կրօնի ամենանշանաւոր ու ամենակարևոր մասը:

II. Գաւառական երկրորդական հեղինակութիւնները պարունակում են իրանց մէջ չորս գիրք:

1) ԼԻՆ-ԻՒ, ուսուցչի՝ կարգի բերված պրոյցները, կամ թէ, ինչպէս անուանում է այս գիրքը դօքտ. Լէգ, *կոնֆուցիական անալէկտները**): Այս գրքից մենք տեղեկութիւններ ենք քաղում իմաստունի մասին. երևի նրա աշակերտների աշակերտներն են կազմել այս գիրքը:

2) ՏՇ-ԽԷՕ, կամ մեծ վարդապետութիւն. և

3) ՉՈՒՆԳ-ՅՈՒՆԳ, կամ հասարակ մարդերի ուսում, մեր աշխատութիւններ որոնց մէջ իմաստունի վարդապետութեանը աւելի գրական ձև է արվում:

4) ՄԵՆԳ-ՏՍԷ պարունակում է իր մէջ Մէնգիոսի վարդապետութիւնը:

*) Գրոյի գրուածքներից քաղվածներ հաւաքածու:

Հ. Թ.

ՉԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆԸ: Կոնֆուցիոս ոչինչ չէ փոխել իր երկիր կրօնական ծէսերից և երբէք այս նկատմամբ իրան յեղափոխիչ (ռէֆորմատոր) չէ համարել: Չինաստանի կրօնը պէտաւոր կէտերում միևնոյն է, ինչ որ էր մինչև Կոնֆուցիոսի երևան գալը, և այն ինչ որ կոչվում է կոնֆուցիականութիւն՝ ուղղակի այս հին սիստէմն է: Նրան կրցված՝ Կոնֆուցիոսի վարդապետութիւնը ոչինչ չէ փոխել նրա կազմի մէջ: Նա արդէն լաւ զարգացած էր, երբ մենք առաջին անգամ հանդիպեցինք նրան և, որ մանաւանդ զարմանալի է՝ արդէն տպաւորել էր բոլոր վայրենի ու ոչ-չափաւոր (ոչ-ապոլոնեան) տարրերից: Առասպելաբանութիւնը բացակայում է. դժուար է կարելի որոշել երկնքի ու երկրի ամառնանութեան համաչխարհային լէգենդան, սակայն չէ երևում աստուածների նախնական պատմութիւնների շարքը: Պահպանվել է միայն մարդկային գոհարերութիւնների մէկ հին օրինակը. չկան արդեն և է վայրենի կամ կոշտ բնոյթ ունեցող ծէսեր: Ամէն բան վայելուչ է, լի արժանապատութեամբ ու բարեկարգութեամբ: Աստուածները երկրպագութեան արժանի էակներ են, նրանք չեն պահանջում անմիտ պաշտամունք: Կրօնի ոչ մի մասում պատշաճաւորութիւնը խանգարող կամ հաւատացողի մէջ կասկածներ առաջ բերող ոչինչ չկայ: Աշխարհում եղած կրօններից ոչ մէկի մէջ մենք չենք գտնում այսպիսի մի օրինակելի կարգ ու կանոն:

Միւս կողմից՝ այս կրօնը աչքի չէ ընկնում բարձր զարգացմամբ: Նրա հաւատալիքները չափազանց հին են և ներկայացնում են իրրև մարդ այնպիսի բնաստիճան, որի վրայ կանգ չի առել ոչ մի ազգայնական կրօն: Զարգացած սիստէմների յատուկ կազմակերպութիւնը բոլորովին բացակայում է. ոչ կաւերներ կան, ոչ քրմական դասակարգ, ոչ ս. Գիրք, ոչ աստուածարանութիւն. գլխաւոր վարդապետութիւնները այնպէս խառն են ու անորոշ, որ ուսումնականները հակառակ իմաստներով են մեկնում նրանց: Սա մի այնպիսի

կրօն է, որի մէջ, ինչպէս և նախնական աստիճանի վրայ, ամէն բան արտաքին գործողութիւնների մէջ, և որ կանոնաւորւում է ոչ թէ կարգին օրինքագրքով, այլ՝ սովորութեամբ ու աւանդութեամբ։ Սրանք բոլորը այնպիսի նշաններ են, որոնք վկայում են կրօնի՝ շատ հեռաւոր ժամանակներում կազմակերպված լինելու և նրա զարգացման շատ կանուխ կանգ առած լինելու մասին, որ (կանգ առնելը) առաջ է եկել առասպելաբանութեան ու հաւատի վարդապետութեան, բռնութեան, ծիսական կոպիտ ու սրբազան պրակտիկութեան սովորական զարգացումից առաջ։ Այս նշանները միևնոյն ժամանակ մատնացոյց են անում մի գործել պատճառի ներգործութիւնը, որ, երբ կրօնը զարգացել է իր պլխաւոր կողմերով՝ կարողացել է ճնշել հնագոյն հաւատալիքներն ու ծէսերը և ստիպել է ազգին պլխովին անձնատուր լինել մի ասլի նոր կրօնի։ Թէ ինչպէս է պատահել այն՝ մենք միայն ենթադրել կարող ենք, սակայն ի հարկէ սա չէր կարող առաջ գալ ոչ մի դէպքում, եթէ նոր հաւատի ու ազգային բնաւորութիւնը բոլորովին չյարմարէին միմեանց։ Այսպիսի մի նոր տեսակին կրօն չէր կարող առաջ գալ և այսպէս անհետ խլացնել հաւատի հնագոյն ձևերը, չէր կարող գոյութիւն պահպանել այսքան երկար ժամանակ, եթէ չարաչարէր ժողովրդի ոգին ամենագոհացուցիչ ու անպայման կերպով։

ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒԺԵՐԸ չինական կրօնում երեք դասի են բաժանվում։ Չին չինացին, ինչպէս և նրա՝ մեղ ժամանակակից սերունդը, պաշտում էր՝

1) Երկինքը.

2) Այլ և այլ ոգիներ.

3) Նախնիների հոգիները.

I. ԵՐԿԻՆՔԸ (Տիան)—չինաց պլխաւոր աստուածութիւնն է. ասլի ճիշդ խօսելով՝ մենք պէտք է ասենք որ սա միևնոյն ժամանակ միակ աստուածն է, որովհետև Չինաստանում հօմ պերապոյն աստուած չկայ. Երկինքը ընդունում է բարձրագոյն էակին ուղղված ամէն երկրպագութիւն։ Երկինք—աստուածութիւն ասելով՝ հասկացվում է պարզ երկնակամարը, բարեկամ, ամենատես կապոյտ երկինքը, և ոչ թէ անձրևաբեր ու մըրկաբեր երկինքը։ Երկինքը, որ բարձր է ամէն ապտակից ու փոթորկից, որի վրայ՝ օդում ու երկրիս վրայ եղած բոլոր էակները նայում են իրրև մի ասլի բարձր բանի և որին պաշտում են՝ համարվում է մի կենդանի էակ։ Սա ոչ թէ մի առանձին ոգի է, ոչ թէ պոլիթեիզմով հասկացվող մի ուժ է, որ պաշտվում է, այլ ինքը Երկինքն է,—այն սկզբնական ուժի կենդանի Երկինքն է, որ դեռևս տարբերութիւն չէ դնում նիւթի ու ոգու միջև,—այն կենդանի Երկինքն է, որ տարածվում է ամենրիս գլխին, ամէն բան պիտէ, ամէն բան հրամայում է, ամենքին կառավարում։

Այս երկնքին ուրիշ անուններ էլ են տալիս, մինչ անգամ հնագոյն ս. Գրքերում, ինչպէս՝ Տի՝ Պառավարիչ, կամ Շանդ-ալ՝ Ծայրագոյն Պառավարիչ։ Արդեօք չինացիք այս կառավարիչը նոյն էլն համարում, ինչ որ Երկինքը կամ նրա մէջ կամ նրա վրայ բնակող մի անձնաւորութիւն։ Ենթադրում էին որ այս երկու հաւատները նոյնանիշ չեն, որ հնագոյն չինացիք երկրպագում էին Ծայրագոյն Պառավարչին, այսլևս՝ միակ աստուած Տիան, իսկ յետոյ պատմիցին մի այսպիսի մարդու մօնոթեիզմից և սկսցին պաշտել նիւթական՝ երկինքը։ Նախկին կաթոլիկ միսիոներները պնդում էին որ չինական Շանդ-ալն նոյնն է, ինչ որ բրիտանէական «Աստուածը» և ոչ թէ Երկինքն է, այլ՝ մի ուրիշ էակ, աշխարհի պերապոյն ուժը։ Չինացիք սակայն հերքում էին թէ երբէք այդպիսի խորութիւն*) չեն արել, ասելով թէ չեն կարողանում հասկանալ նրանց աստուածները։ «Երկինք» ու

*) Ընդունելով որ չինացիք սկզբում պաշտում էին հէնց երկնակամարը՝ այդ աստւմ է, թէ նրանք դեռևս պատմութեան արշալոյսը բացվելուց առաջ անցել են մտածութեան այն նախնական եղանակը, որի համաձայն՝ բնութեան մէջ իրարանչիւր առարկայ շնչաւորված է, և գտնել էին զուտ էէիաններ (աստուածհաններ) ո-

«Ծայրագոյն Կառավարիչ» անուններդ չինագիր գործ են ա-ծում անխտիր. նկատված է որ Կոնֆուցիոս անձնական ձև չէ գործածում, այլ միայն երկնքի մասին է խոսում. «երկինքը», նկատում է նա, երբ վրան տրամաբանություն է գալիս, «գիտում է ինձ»: Այսպիսով մենք ունենք այստեղ բնությանն ուժերին երկրպագելու նախնական եղանակը:

Գերագոյն ուժը առաջնորդում է ամենքին և թէ բնական ու թէ բարոյական (մորալ) երևոյթների միջավայրում կառավարողն է: Եւ այս երկու միջավայրերը միմեանցից անջատ են համարվում: Իր բոլոր փոփոխությունների մէջ բնությունը արտայայտում է իր կառավարչի ոգին, իսկ մարդի գործողությունների եղանակը համարվում է արտաքին գործ, մի այնպիսի երևոյթ որ նման է բնությանն շարժողությանը. այս երկու աշխարհները համարվում են մէկ սիստէմի մասներ, որոնք ուղղակի ազդում են միմեանց վրայ: Քանի որ Երկինքը կառավարում է եղանակն ու մարդկային գործողությունները, որովհետև «ամէն օր երկինքը մեր գործերի վկան է հանդիսանում ու ներկայ է այն տեղերում, որտեղ մենք գտնվում ենք», ապա ուրեմն նախախնամությանն այս երկու գործառնությունները սերտ կապված են միմեանց հետ և իսկապէս միևնոյն գործն են: Երկինքը բնականաբար յայտնում է իր կամքը: Չինական կրօնի նշանաւոր կողմերից մէկն էլ այն է, որ նա չգիտէ ոչ յայտնություն, ոչ հրաշքներ և ոչ աստուածային միջամտություն: Ներանում կայ ճակատագրի հաւատ՝ Մինգ. ամէն մարդ իր Մինգն ունի. բայց նա յայտնի է դառնում միայն այն ժամանակ, երբ կատարվում է: «Երեսը պարզ է յայտնում Երկինքը իր Մինգը» հարցնում են Կոնֆուցիոսին. նա պատասխանում է. «Ո՛չ, Երկինքը չէ խոսում. Նրա կամքը միմիայն անցքերի դասաւորության մէջ է յայտնվում, և

բոլոր հաւատում են գերագոյն հոգևոր էակին: Էջ կարծում է որ Կոնֆուցիոս իր կրօնական աշխարհայեցողությամբ սուր է կանգնած իր ժամանակակիցներից: Նա այն էլ է այնպես համարում, որ ոգիների ու նախնիների կուլտը մի աստուած ճանաչելու նախնական հաւատի՝ յետագայ ժամանակի աղաւաղումն ու նուազացումն է:

ձև այլապէս»: Մարդը արտաքին երևոյթներից իմանում է թէ Երկինքը ինչպէս է արտայայտված դէպի ինքը: Եթէ սարսափելի անձրև է գալիս կամ երկարատև երաշտ է լինում, ապա դա ցոյց է տալիս որ Երկնքի ու երկրի միջև եղած ներդաշնակությունը խանգարված է: Այս տարաձայնությունը յարգելը կայսրի գործն է: Միմիայն նա ունի իրաւունք երկնքին զոհ բերելու. նա ամենամօտ յարաբերության մէջ է գտնվում Երկնքի հետ, որ նրա տան նախնին է համարվում. և երբ Երկինքը յայտնապէս անբաւական է, այն ժամանակ կայսրն է մտում վերականգնել ներդաշնակությունը, ապրելու կառավարելով իր հպատակներին կամ զոհաբերություններ անելով: Արտակարգ դէպքերում, եթէ երկինքը աչքարաց դարձած է կայսրի դէմ՝ այն ժամանակ այն եղրակացության է գալիս բերվում, որ նա այլևս կայսր չպէտք է լինի: Այն ժամանակ ժողովուրդը իրաւունք ունի զահընկեց անելու նրան և զահ բարձրացնելու մի նոր կառավարիչ, որի շնորհիւ կարող է, ինչպէս հարկն է, անհրաժեշտ զոհն կատարել Երկնքի հետ: Չինաստանում միշտ այն համոզումն են ունեցել և այժմ էլ ունեն, որ կարելի է միանալ թէ երբ է Երկինքը մերժում կառավարչին, և թէ ժողովուրդը պէտք է ի կատար ածի նրա վճիռը:

2 ՈԳԻՆԵՐԸ: «Ոգիներին» երկրպագությունը տալը չինացու կրօնական կարևորագոյն պարտաւորություններից մէկն է: Սակայն ոգիները բաւական անորոշ էակներ են. նրանց մասին սովորաբար յոգնակի թիւով են խոսում, և նրանց զոհեր էլին մատուցվում, ինչպէս մի ամբողջ խմբի, որի միջոցին ոչ մի առանձին ոգու անուն չէր յիշվում: Ոգիները կապ ունեն բնական առարկաների հետ, բնությանն իւրաքանչիւր մասը իր ոգին ունի: Արևը, լուսինը, հինգ մոլորակները, թուխպերը, անձրևը, քամին, հինգ մեծ լեռները, նոյնպէս և ամէն մի փոքր լիս, գետերը, իւրաքանչիւր գետաս, և ուրիշ հազարա-

ւոր առարկաներ—ամենքն ունեն իրանց ոգիները*)։ Ոգիները չեն համարվում շուրս կոտրը ազատ սյացություններ, այլ դասակարգված են ի մի և կազմում են մի դասակարգություն, և այս հանգամանքը ֆունկցիոնալ է բնական առարկաների հետ նրանց ունեցած կապը։ Նրանց մասին խոսում են իբրև այնպիսի էակների, որոնց կարելի է դիմել, ինչպես մի ամբողջ ընկերության։ Միմիայն ֆետիշը կարող է զոհ բերել իր սեփական երկրի ոգուն և լեռների ու գետերի ոգիներին։ Մենք կանանեք որ երկրի կուլտն ու ոգիների կուլտը գոյություն ունեն միմիանցից զատ-զատ։ Առաջինը՝ կայսրության հետ կապված կուլտն է. միմիայն կայսրը իրաւունք ունի նրա ներկայացուցիչը լինելու. վերջինը՝ մանր ֆետիշությունների պաշտօնական կուլտն է։ Առաւոտածություններն երկու տեսակները կապված չեն միատեսակ համակարգության համար. ոգիները, ֆէտիշեան Զանդ-ավուն են առաջարկված, սակայն նրա առաջնահերթները չեն։ Չի կարելի չենթադրել, որ այս երկու կուլտերը սկզբում առաջ են եկել զարգացման տարբեր շրջաններից և երբէք ի մի չեն ձուլվել։ Արևի երկրպագությունը վերաբերում է բնության բարձր ուժերի երկրպագությանը, ոգիների երկրպագությունը՝ առարկաներին։ Վերջին կուլտը անհամառաական բնույթ ունի. սա անկասկած ոգիների կուլտն է, մինչդեռ երկրորդը՝ բնության մէջ գոյություն ունեցող առարկայի իսկ կուլտն է։ Եզարակացության մէջ կնկատենք որ բոլոր ոգիները բարի ոգիներ են համարվում. չնայած հաւատի մէջ հազիւ թէ հանդիպեն որևէ չար ոգիներ։

3. ՆԱԽՆԻՆԵՐԸ։ Նախնիների կուլտը առնչվում էր ուրոյն անձնաւորությունների համար։ Ուրոյն անձնաւորությունը չէ մտնում Զանդ-ավուն, ինչպես և չէ մտնում երկրիս վրայ կայսրին. նրա գործունեայ կրօնը ուղղված է իր նախնիներին։ Չինացին հաւատում էր որ հոգու կեանքը շարունակվում է մահից յետոյ և հանդիսաւոր կերպով կոչում էր անում հոգուն որ վերադառնայ իր՝ երեսի վրայ թողած մարմինը։ Դժուար թէ կարելի լինի չինացիների հաւատը անձնական անմահության հաւատ անուանել. ավելի հաւանական է ասել թէ դա մի մտածություն է ուրոյն անձնաւորության մասին։ Ուրոյն անձը չէ մտածում իր ապագայ կեանքի մասին, դրա մասին մտածին էլ չէ ազդում նրա վրայ. ապագայ հատուցումներին ու պատիժներին հաւատալու համարեա ոչինչ հետք չկայ։ Չինաստանը ոչ դժոխք ունի, ոչ դրախտ։ Ոչ թէ ապագան, այլ անցեալն է ազդում ներկայի վրայ, ընտանիքի մեռած անդամները կեն ևս նրա (ընտանիքի) հետ կապված են համարվում և դառնում են նրա պահապան—ոգիները։ Իւրաքանչյուր տան մէջ կայ նախնիների մի սենեակ, որտեղ նրանց երկրպագությունն ու զոհեր են մատուցվում. այս կուլտի շատ մանրամասնները առանձին յիշեցնում են մեզ հռոմայեցոց՝ իրանց ընտանեկան հերոսներին պաշտելը։ Այս սենեակում դրված են մանր տախտակներ, որոնք նախնիներին են պատկանում. ենթադրվում է որ նրանք նստում են նրանց վրայ, ճիշտ, ինչպես հարկն է, կկանչեն նրանց՝ իրանց ընտանիքի հետ լինելու։ Նրանց հրաւիրում են ներկայ լինելու ընտանեկան ամէն նշանաւոր անցքի։ Այս կուլտը կատարվում է մարդու և կնոջ մանակցությամբ, այնպէս որ այն կատարելու համար ամուսնությունը անհրաժեշտ է, ուստի և վաղաժամ ամուսնությունը մի կրօնական պարտաւորություն է։

Ընտանեկան զոհաբերությունը ինչպէս և Չինաստանի բոլոր զոհաբերությունները, խնջույքի բնույթ ունի, որտեղ ընտանիքի կենդանի անդամները ուտում-խմում են հրաւիրված ոգիների հետ միասին։ Իլլուզիային ուժ տալու համար՝ երբեմն թոռանը հագցնում էին մեռած նահապետի զգեստը, և նա պատկերացնում էր հանգէսի պետը անձը։

*) Եաչօնակէն «Չին-ուօ» կրօնը, որ մի խաղաղ երկրպագություն է անթիւ ոգիներին՝ առանց զոհաբերությունների և որևէ բարոյական վարդապետության՝ կցված է Չինաստանի կրօնի այս կողմի հետ. միևնոյնը վերաբերում է և Կոնֆուցի կրօնին։

Չեն լինի մեզ հետ մեր սուրբ մեռելներ,
Ի դէմս նոցա կը դան ուրիշներ.
Հիւրերին պատուով նստեցնել պէտք է—
Կերէք, խմեցէք, ինչքան ձեզ պէտք է,
Գլուխներիս վերայ նոյնպէս տեղ ունեն
Մեր տէրերը, և պայծառ օրեր
Ամենաարարիք մեզ միշտ կուզարկեն։
(Շի-Կինգ, գիրք բանաստեղծութեան*.)

Մխիթարի ընտանիքի անդամներին չէ, որ երկրպագութիւն է տրւում։ Կայսրը, իբրև համայնքի ներկայացուցիչ՝ գոհ է բերում իր սեփական ան բոլոր նախնիներին, այլ և իր գահի բոլոր նախարհներին, դառաւոր հանդիսանալով այն ամենի վրայ, որքեր ունեցել են այդ պաշտօնը իրանից առաջ։ Հին Չինաստանում կար՝ մշակված ծիսական կողմը, և գոհարհրութիւնները չատ էին տեղ ունենում։ Տարվայ եղանակների ամէն փոփոխութիւն, բնութեան մէջ տեղի ունեցող ամէն նախազուշակութիւն, համայնական կամ մասնական կեանքի մէջ ամէն կարևոր բայլ պահանջում էր գոհով սրբագործում։ Ժողովրդի ոգու պէս՝ գոհարհրութիւնները բնայից չունէին, այլ լոկ չնորհակալութեան ու հաւատարմութեան արտայայտութիւն էին։ Ձգնաւորական կեանքը (ասկետիսմը) տեղ չունի այս կրօնի մէջ։ Նրա մէջ ամէն բան պարզ է ու պայծառ։ Գոհարհրութիւն անել կամեցողը պատրաստւում է արժանաւոր կերպով կատարելու իր գոհը՝ ազօթքով ու առանձնակեցութեամբ. բայց այս խոհեմ միջոցի դէմաց տեղ չկայ հոգու տառապանք, և այս դէպքի վերաբերող ազօթքների մէջ ոչ անձի նուաստացում կայ, ոչ պղծում, այլ՝ լոկ խնդրուածքներ ու չնորհակալութիւններ։ Խնդրուածքները վերաբերում են երկրաւոր բարիքներին ու աջողութեանը. գոհարհրութիւնները՝ այդ բարիքներն ու աջողութիւնը երկնային զօրութիւններից առնելու միջոցներն են։ Գոհ են բերւում պղատորակէս կենդանիներ, այլև պատուներ, և դէպքի կարևորութեան մեծանալու հետ՝ մեծանում է և նուէրների պլանութիւնն ու արժէքը։ Մեծ գոհարհրութիւնների կից տեղ են ունենում նուագածութիւններ, որ չատ ախորժ են լինում երկնային զօրութիւններին։

*) Թարգմ. В. Шиллеръ-ի, որից առել է ռուս թարգմանողուհին։
Հ. Թ.

Չինաստանում կրօնը կեանքից անջատված չէ։ Չկայ մանաւանդ պատակարգ, որ հոգալիս լինի կրօնի մասին. ամէն մարդ հոգում է իր համար պարտադիր համարված գոհարհրութիւնների մասին. սա մարդու պարտաւորութիւնների, բուն բնութեան հատկանշալի մի բնական մասն է։ Որովհետև չկայ ս. Գիրք, ուստի և չկայ կրօնական վարդապետութիւն, եղածն էլ բաւական մութ է ու անորոշ։ Սակայն ծիսական կողմը աւանդութիւնը մանրամասն կերպով է մշակել, և ձևերը պահպանելը մարդու պարտաւորութիւն է. կրօնը այնպիսի գործողութիւնների մի շարք է, որոնք պէտք է կատարվեն ճիշտ ու պատշաճաւոր կերպով, և պատշաճաւոր անձը պէտք է գոհ բերի պատշաճաւոր ձևին, այն էլ պատշաճաւոր կերպով։

ԿՕՆՖՈՒՑԻՈՍ չէր ձգտում փոխել իր հայրենիքի կրօնը. նա մինչ անգամ կրօնական հարցերի մասին խօսել չէր սիրում և ջերմեռանդութեամբ կատարում էր Չինաստանում եղած ժամանակ իշխող կրօնի պատուէրները։ Նրա դրոյցները պլխաւորապէս այն բանին էին վերաբերում, որ մենք կարող ենք անուանել աշխարհային գործ. դժուար բացատրելու հանգամանք է, թէ ինչու չինական կրօնը, որ նա լաւով էր անփոփոխ, կրում է նրա անունը։ Այս կապը առաջ է եկել այն բանի շնորհիւ, որ՝ 1) կառավարութեան ու բարոյականութեան վերաբերող վարդապետութիւնը, որ չինական կրօնի հիմքն էր, նա դրել է պարզ ու անպաճոյճ կերպով, մի բան՝ որ իրանից առաջ ոչ ոք չէ արել. և այսպիսով լինելով անդիտակցարար, արել է մի բան՝ այս կրօնին մի որոշ վար-

դասեատուվիւն տալու համար. 2) նա հատաքիլ ու հրատարակել է այնպիսի գրքեր, որոնք այս կրօնի միակ գրական փաստաթղթերն են և որոնք այն ժամանակներից գործել են Չինաստանում իշխող դասակարգերի ուսումնասիրութեան առարկան։ Ընդունելով այս գրքերը Կօնֆուցիոսի ձեռքից՝ չինացիք բնաւէս սկսեցին նայել նրա գործ, ինչպէս իրանց հատատի մարգարէի։

ՆՐԱ ԿԵԱՆՔԸ։ Կունգ-Ֆուտսէ (այսինքն՝ ուսուցիչ Կօնգ. այս անունը եզուիտներն են յատնացրել) ապրել է լաւ է յայտնի մեզ, բան կրօնների միւս հիմնադիրների մեծամասնութեան անունները։ Նա ապրել է 73 տարի՝ շրջապատված գմայլված աշակերտներով, որոնք յիշել են, ինչ որ տեսել են նրանում և ինչ որ լսել են նրա բերանից. և այս աւանդութիւնները պահել են Լուն-Իւի՝ ուսուցչի՝ կարգի բերված պրոյցների մէջ, այն գրաւոր վաստակի մէջ, որ, ինչպէս արդէն տեսել, կազմել են երկրորդ սերնդի աշակերտները։ Այն գերբնական տարրը, որ ուրիշ դէպքերում այնպէս արագութեամբ էր համակերպում այդպիսի յարգելի անձնաւորութեան շուրջը՝ այստեղ բոլորովին բացակայում է. Չինաստանում մենք չենք տեսնում նրա զարգացումը։ Կարելի է, եթէ կամենաք, գտնել փորր ինչ հակամիտութիւն՝ գաղափարականացնելու իմաստունի բարոյական մեծութիւնը, սակայն այնպիսի տեղեր էլ կան, որտեղ ակներև չի կարելի տեսնել մի այնպիսի ձգտում, ամբողջ գրուածքի թէ անկողմնապահութեամբ ու թէ սաստիկ անպաճոյճ լինելով՝ գիրքը յարգանք է ներշնչում, ինչպէս մի անխարդախ փաստաթուղթ։ Մենք այնպէս ենք տեսնում իմաստունին, ինչպէս պատկերացնում ենք մեզ աւելի ժամանակակից Կանտին կամ Ուլֆորդսֆորտին. մենք լսում ենք նրա կարծիքը բազմաթիւ պէտքէս հարցերի մասին, տեսնում ենք ինչպէս էր պահում նա իրան պետական գործերում և իր հարկերոյթի մասնաւոր տեղաննների վրայ, ինչպէս էր վերաբերվում թագաւորներին ու հասարակ մարդկերին. մենք ծա-

ծաղում ենք նրա կատակների վրայ և նրա հետ միասին հոգոց ենք հանում, նրա զրկանքները յիշելով։

Նա ծնվել է 551 թ. Ք. Ծ. առաջ և հասարակութեան լաւ չդնահատեց է եկել, բայց մեծացել է ապրատութեան մէջ և իր առաջապիմութեամբ պարտական էր իր արած ծառայութիւններին։ Նրա հակումները վաղ են զարթել. երեխայութեան ժամանակ նա, խաղալով՝ արարողութիւնների ձևերն էր անում. 13 տարեկան հասակում, ինչպէս ինքն է ասում, նա ասվորելու հակում է զգացել, և նրա ուսումնասիրութեան առարկանին էին պատմութիւնն ու բանաստեղծութիւնը, արարողութիւնները ու մուզիկը։ Նրանում վաղ էին առաջ եկել ժողովուրդ կառավարելու ճշմարիտ եղանակի վրայ ունեցած այն հայեացքները, որոնց նա հետևում էր վերջերը և յափշտակութեան բոլոր թափով հաստատած էր որ իր սիստէմի ընդունելութիւնը բերելու է իր հետ համայնքի բարօրութիւնը։ Կօնֆուցիոս շատ վաղուց էր ձգտում դէպի հասարակական գործունէութիւնը. բայց նրա համար հեշտ չէր հասնել այդ բանին այն անհանգիստ դարում, ուր շպրտել էր նրան ճակատագիրը։ Յայտնի կարճ ժամանակաշրջանների բնթացքում նա ունեցել է մի բանի պաշտօն, և զարմանալի բաներ են պատմվում նրա կառավարութեան օրով տիրող բարքերի բարեփոխութեան մասին։ Ամենքը ատանում էին, ինչի որ արժանի էին. չկար գողութիւն, չկար մի դէպք, որտեղ հարկաւորվէր գործադրել պատժի օրէնքները, բանի որ չկային յանցաւորներ։ Բայց ինչ սիստէմ էր այն սիստէմը, որ այսպիսի արդիւնքներ էր տալիս։ Սա բացատրվում է այն խորհուրդներով, որ նա տալիս էր իրան դիմող այլ և այլ վարիչների։ Նա հաստատում էր որ օրինակի ուժով կարելի է հասնել ամէն բանի, ինչ որ ցանկանում է վարիչը։ Կարելի է խոյս տալ պատիժներից, կարելի է չծանրաբեռնել վարչութիւնը սարսափելի ճնշումներով, բայց այն վարիչը, որ ինքն «ուղղվել է» չուտով իր ժողովուրդն էլ

«կուզի»։ Թագաւորի առաջին գործն է՝ պատշաճաւոր իմաստ տալ անուններին, այսինքն յաւ կառավարութիւնը միայն այնտեղ գոյութիւն ունի, որտեղ թագաւորը իրաւ թագաւոր է, մինիստրը իրաւ մինիստր, հայրը իսկական հայր, և որդին՝ իսկական որդի։ Պատարեակ կարգ ու կանոնը նրանից է երևում, որ իւրաքանչիւր պաշտօնատար իր պիրքին վերաբերող պարտաւորութիւնները կատարում է, ինչպէս հարկն է. պէտք է մի կարգին իշխանութիւն լինի, որի մէջ ամէն մարդ հասկանալիս լինի իր դերը և կատարելիս։ Փոզովուզը ի բնէ բարի է ու հեզ, ասում էր Կոնֆուցիոս, և եթէ յաւ կառավարիներ նրան՝ նա վատ չի վարվի. մինչ անգամ եթէ դրա համար նրան պարգևներ խոստանան։ Այսպիսով դէպի աւանդութիւնն ու հեղինակութիւնը տաժան յարգանքի վրայ,—որ բոլոր մարդիկ սիրով կատարեն, եթէ, ինչպէս հարկն է, ուզենք նրանց դէպի այդ բանը—հաստատված կլինեն պետութեան սիւները։

ՆՐԱ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ։ Ահա այն ճշմարտութիւնը, որ ամենալուրջ կերպով բարոզում էր Կոնֆուցիոս։ Նա սակաւ էր խօսում երկնքի մասին և ուշիշ որոշ բան չէր ասում ոգիների մասին. իր կեանքի վերջը նա յայտնեց որ շատ տարի կայ արդէն, ինչ ինքը չէ ապօթել։ Նա ջանասիրութեամբ յաճախում էր բոլոր կրօնական արարողութիւններին և հին կարգերը պահպանելու կողմն էր կանգնած. բայց նրա այս ուղղութիւնը ուշիշ խորհրդաւորութիւն կամ իմացականութիւն չունէր իր մէջ, այլ զուտ գործական էր։ Նա իր վրայ նայում էր, ինչպէս առաքինութեան ուսուցչի և ոչ ինչպէս կրօնի քարոզչի. նրա նշանաբանն էր «պատշաճաւորութիւնը» այսինքն՝ վարվելակերպութեան սովորական կանոնները պարտաւորաշաճ կերպով կատարելը։ Սակայն նրա վարդապետութեան մէջ գաղափարական տարր էլ կար։ Նա հրապարակում է մի այնպիսի տեսութիւն, որի արտաքին արտայայտիչը հանդիսանում է այդ չինական կրօնը, որ տիեզերքը իր բոլոր մասներով, բնութեան ու մարդերի միջև՝ ըստ ինքեան մի կարգաւորութիւն է որ այս կարգաւորութիւնը երևան է գալիս և՛ արտաքին բնութեան օրէնքների, և՛ հասարակութեան կազմի մէջ նրա պէսպէս դրութիւններով ու դասակարգերով, և՛ կրօնի ծիսական կողմի մէջ. և որ մարդու բոլոր պարտաւորութիւնը իսկապէս այս կարգաւորութիւնը հասկանալն ու նրան հնազանդվելն է։ Կոնֆուցիոսի տեսութեամբ՝ պետութիւնը ամէն ինչ է, իսկ անձնաւորութիւնը՝ ոչինչ. այդ տեսութեան մէջ անցեալի գօսացած ձեռքը բոլորովին փչրում է ներկան և ամէն ինքնուրոյնութիւն, ամէն առաջադիմութիւն մահի են դատապարտվում՝ երևան գալուց էլ առաջ։ Գրքոյը ազատվել է երկիւղից, բայց դեռ չէ հասել սէր ներշնչելու աստիճանին։ Ամենից աւելի սրան սազում է մնայնի սպասարկութիւնը, որովհետև միւս երկրպագութիւնները հեռաւոր ու սառը բաներ են. սակայն այս ընտանեկան կուլտը մի գործող գիմադրութիւն էր առաջադիմութեան համար։ Քրիստոնեական այն հեղինակաւոր խօսքը, որ արդարացնում է անհատական վճիռն ու նորամուծութիւնը,—հրամայելով մարդուն՝ իր հոգումունքը վերդասել հօրումօրից,—չինական ականջներին մի սոսկալի անբարեպաշտութիւն կթվար։

Կոնֆուցիոսի մահից յետոյ նրան մի տաճար կանգնեցրին, և ուսուցչին երկրպագութիւն տալը կցվել էր պետական կրօնին։ Այն փորձը, որ Կոնֆուցիոսի միևնույն համարեա երեք դար յետոյ արել էր Չի-Խօանդ-Տի կայսրը՝ նրա յիշատակը ջնջելու և նրա անուան հետ կապ ունեցող գրքերը ոչնչացնելու համար,—անաջող անցաւ, թէպէտ և սկսված էր մեծ յամառութեամբ։ Մենցիոսի (371—288 թ. Ք. Ծ. առաջ) վարդապետութիւնը, որ Կոնֆուցիոսի աշակերտներից ամենաաշքի ընկնողն էր, ոչինչ նոր բան չէ աւելացրել նրա վարդապետութեանը։ Պէտք է սակայն ուշը դարձնել այն երկու հոսանքների վրայ, որոնք նկատի ունէին կոնֆուցիականութենից մի փոքր խոր ու բաղմակողմ բան տալ, և որոնց Չի-

հաստանը պատրաստ է երկու լրացուցիչ կրօնով՝ տացիսմով ու բուդդհիսմով։

ՏԱՑԻՍՄԸ իր հիմնադիրը համարում է Լաօ-տսէ փիլիսոփային. բայց Լաօ ոչինչ յարաբերութիւն չունէր այս կրօնի հիմնուելու հետ։ Սա Կոնֆուցիոսի հետ միաժամանակ ապրող մի մտածող էր, թէպէտ նրանից կէս դարով մեծ։ Կոնֆուցիոս, ինչպէս մենք կարդում ենք Անալէկտներում՝ հանդիպել է նրան ու խօսել նրա մասին մեծ յարգանքով։ Պահպանվել է նրա Տաօ-տէ-կինգ անունով երկը, և թէպէտ բչերը են հասկանում այն՝ սակայն նա մի հանուր հասկացողութիւն է տալիս նրա հայեացքների մասին։ Կոնֆուցիոսի պէս՝ Լաօ հիմնւում է գոյութիւն ունեցող սիստէմի վրայ. նա մեծ վկայութիւններ է բերում հին գրուածքներից, և կան զուտ բիք առացուածներ, որոնք հանուր են երկու իմաստուններին և անտարակոյս քաղած հնագոյն գրուներից ու աւանդութիւններից։ Ի՛նչպէս նրա կրտսեր ժամանակակից. այնպէս էլ Լաօյի վարդապետութիւնը բոլոր երևոյթին այնքան կրօնին չէ վերաբերում, որքան բարոյականութեանն ու քաղաքականութեանը։ Բայց բնազանցական միտքը, որ Կոնֆուցիոսի վարդապետութեան մէջ աւելի զօրութեամբ էր հասկացւում, քան եղբակացւում՝ Լաօյի վարդապետութեան մէջ առաջին տեղն է բռնում։ Լաօյի սիստէմը ըստ ինքեան մի փիլիսոփայութիւն է, որ պիսատրապէս գործական շրջաւայրին է յարմարեցված։ Տաօ, որ այն սիստէմի առաջնորդող գաղափարն է, որից ըստացել են իրանց անունը թէ ինքը սիստէմը և թէ նրանից առաջ եկած կրօնը՝ մեկնւում է տարբեր կերպով՝ իբրև բանականութիւն, բնութիւն, ճանապարհ. վերջինը աւելի մօտիկն է, թէև ոչ մի դէպքում գաղափարը լրիւ չէ հայտնում։ Սա անձնաւորութիւն չէ, այլ բոլոր անձնաւորութիւններից, բոլոր էակներից առաջ եղած մի բան է։ Դա եղել է երկնքից առաջ. դրանից է առաջ գալիս ամէն բան և ամէն բան դրան է վերադառնում։ Սա մի արմատական սկզբունք է, իբրև սկիզբը, այն է, ինչով որ նրանք չարժւում են առանց շտապելու կամ կռվելու, առանց պատուասիրութեան ու յուզմունքների։ Լինելով սկզբում անկախ ու անզարգացած՝ այս հասկացողութիւնը տալիս է մի փոքր պարզ արտայայտութիւն. մարդիկ կարող են ճանաչել այն, և ամէն բարութեան, ամէն աջողութեան գաղտնիքը թէ պետութեան ու թէ ուրոյն անձնաւորութեան համար՝ Տաօ գիտենալն է ու նրանում ապրելը։ Սա մարդուն ամէն կանոններից ու պայմանաւորութիւններից վեր է դասում։ Տանը, լինելով մէն-մենակ՝ նա բարձր է ողջ աշխարհից. նա իր ընդունակութիւնները չէ վատնում բազմաթիւ արտաքին առարկաներ ուսումնասիրելու վրայ, այլ ներդործում է անմիջապէս ներքին դրդմամբ։ Այս սկզբունքով առաջնորդվելուց փիլիսոփան չպէտք է հասարակութիւնը վերադառնալու է աւելի պարզ բարքերի և մինչ անգամ Ռուսսոյինի պէս երևակայում էր թէ մարդը կարող է մի կողմ դնել այն նիւթական գործերը, որոնց մասին այնքան շատ է մտածում, և բաւականանալ նրանով, որ կտկտի ապրել իմաստութեամբ և իմաստնագոյնների ղեկավարութեամբ։

Լաօյի բարոյական սկզբունքները չափազանց զարմանալի կերպով բարձր են և ցոյց են տալիս Կոնֆուցիոսի սաւը վարդապետութիւնից մի փոքր խոր հայեացքով։ Լաօ այս ասկի կանոնն էր սովորեցնում. «Վիրաւորանքին պատասխանիր բարութեամբ», ասում էր նա։ Երբ Կոնֆուցիոսին հարցրին սրա մասին, չհամաձանեց Լաօյին, այլ յայտնեց թէ բարութիւնը պէտք է փոխարինել բարութեամբ, իսկ վիրաւորանքը՝ արդարութեամբ, թէ անձնական բարոյականութիւնը չպէտք է բարձր կանգնի քաղաքականից։ «Մի ցանկանար վրէժխնդիր լինել վիրաւորանքի դէմ» սովորեցնում է Լաօ. նա դարձեալ ասում է. «Ով յաղթում է ուրիշներին՝ զօրեղ է. ով իրան է յաղթում՝ հզօր է»։ «Ով գիտէ թէ երբ է իր ունեցածը բաւական՝ հաւատաւոր է»։ «Աշխարհում ամենաթոյլ բանները՝ ամենազօր բանները իրենց են առարկում»։ Պարզների վերքը

աոօսականների գործնական ձեռնարկը, որ Քինասանում ամէն տեղ կարդացւում է, պարունակում է իր մէջ բարոյական վսեմ գաղափարը և լուրջ ուսումնասիրութիւն է պահանջում։ Ինքնակրթութեան խնդիրը ձևակերպւում է իբրև հատատ ու արիութիւն, մինչև մահը տևող մշտական ճիգեր ու անխոնջ աշխատութիւն պահանջող։ Եթէ մենք աոօխմը չգանենք ինչպէս նրա փիլիսոփայութեամբ, այնպէս էլ նրա բնագրական վարդապետութեամբ՝ այն ժամանակ նրան պէտք է մի բարձր տեղ տանք մարդուն ճշմարտութեան ճանապարհի վրայ կանգնեցնող փորձերի մէջ։ Իսկ իբրև կրօն՝ նա ոչինչ բանի պիտանի չէ և դոյզն է տալիս էլ ինչքան քիչ նշանակութիւն ունեն փիլիսոփայութիւնն ու բարոյական վարդապետութիւնը՝ առանց նրանց պահպանող կրօնական յենակէտի։ Ցայտուն սկզբում կրօն չէր և դժուար էլ կարողանար կրօն դառնալ, որովհետև չէր առաջարկում իր սեփական կրօնական առարկաները, որոնք կարողանային պահպանել մի կրօնական դպրոցում, և կօնֆուցիականութեան պէս՝ չէր ինկնում պետական սիստեմի վրայ։ Լաո իր դիտաւոր անձը համարում կրօնը նրա վարդապետութեան վրայ չէ հիմնված. նա մեծ մասամբ յարված է նրա ամենակարևոր դրութիւններից մի քանիսին։ Նա սկսել է աշխարհում դեր խաղալ իմաստունի մակից հինգ դարից ոչ վաղ, և սրանով մասամբ պարտական է վերջինիս կայարին, որ ընդհանրապէս տրամադրված դէպի Կօնֆուցիոս մասամբ էլ Լաոյի սիստեմի այն առանձին դրութիւններն առաջ բշող բարոյիչներին, դրութիւններ, որոնք կարող էին դործադրութիւն գտնել ժողովրդի մէջ։ Երբ այս կրօնը յայտնեցաւ, այն ժամանակ նա ոչ էլ փիլիսոփայութեան, այլ մոգութեան սիստեմ էր։ Լաո խոսում էր անմահութեան մասին, ինչպէս այն մարդկերի վիճակի, որոնք ապրում են Տաոյի Տամաձայն։ Ընդհ հարատևութեան օրով (220 տարի Ք. Ծ. առաջ) տաոյիսմը կախարդական կղզիներ է սրնում, որոնց մէջ կարելի լինէր գտնել անմահական խոտը. մեր Լաոյի առաջին

դարում տաոյիսմի գլխաւորը ձեռք է բերում մի դեղահատ, որ վերանորոգիչ է նրա պատանեութիւնը։ Միևնոյն դարում երբ Քինասանում առաջ եկաւ բուդդհիսմը, տաոյիսմը առնում է նրանից կրօնի արտաքին կողմը, տաճարները, վանքերն ու սոսուածպաշտութիւնը, և առաջ է գալիս արդէն իբրև մի եկեղեցի։

Առանց պատճառի չէր, ինչպէս ասում են, որ Քինասանի վարիչները կամեցան մտցնել իրանց մէջ *բուդդհիսմը* կամ թէ այս կրօնը ինքն է տարածվել այդ երկրում մեր Լաոյի առաջին դարում։ Ո՛չ-հօնֆուցիականութիւնը, ոչ տաոյիսմը կրօն չեն՝ այս բառի լրիւ մարդով, չեն նկատւում իբրև ոկզբունքներ, որոնք նշանչէին մարդու բարձրագոյն էակների հետ ունեցած յարաբերութիւնների միջոցով։ Առաջինը ուրիշ բան չէ, բայց եթէ՝ կանոններ մի հաւաքածու. երկրորդը դուշումների մի շարք է, թէ ինչպէս պէտք է ազատվել խորհրդաւոր ուժերի բարերարութիւններից կամ չից։ Իսկ բուդդհիսմը, հակառակ, ինչպէս այդ կտեսնենք Հնդկաստանի հետ ուսումնասիրելիս, շարժում է դէպի ոչ—էգոիստական դրդումները, պնդում է անձնական կեանքի հանդիսաւոր պատասխանատուութեան վրայ, նրանով բարձրացնելով մարդկային անձնաւորութեան նշանակութիւնը։ Բուդդհիսմը Քինասանում ունի շրիղ ձևով է երևալ, բան Հնդկաստանում. նա ունի մի յատկանշական ու փառաւոր սոսուածութիւն, որ մարմնացնում է գթութիւնը և որ երբեմն ձևակերպւում է ծնկան վրայ երևոյթ գրկած մի կնոջ պէս։ Բուդդհիսմին սրված այս ունկածը, դուէ, Պարսկաստանից լինի առնված. Քինասանում այս կնոջը Ամիտա են անուանում, իսկ Պարսկաստանում մենք ունենք Անահիտը՝ ջրերի սոսուածուհին։ Գթութեան սոսուածութեան հատատին կցված է նաև գրաքոթի հատատը, որտեղ սոսուածութիւնը ընդունում է հատատայողներին։ Այսպիսով երևան է եկել մի ժողովրդական կուլտ, որը չէ ավել նախնական կրօններից ոչ մէկը։

Ինչպէս էլ լինի, ճիշտ է որ Հինաստանում չկայ մի կրօն՝ այդ անուանը արժանի։ Այնտեղ կարելի է տեսնել այն տարօրինակ երեւոյթը, որ կողք-կողքի գոյութիւն ունեն երեք կրօն, որոնք բոլորն էլ պաշտպանութիւնն են գտնում պետութեան կողմից և կենցաղավարվում են առանց տարաձայնութեան, միևնոյն ժամանակ և մարդը կարող է միանգամայն պատկանել բոլոր երեք կրօններին։ Այս չէր կարող լինել, եթէ երեքից մէկը մեկը զօրեղ կերպով դրգռէր հայրենասիրական զգացումը կամ լիովին արտայայտէր ազգի դաղափարը։

ԻՄ. ԳԼՈՒԽ

ՀԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԿՐՕՆԸ

Եգիպտոսը Հինաստանից վաղ քաղաքակրթված մի երկիր է, և եգիպտական քաղաքակրթութիւնը ունի մեծ տեղականութիւն ունի մեզ համար, որովհետև արեմտեան ազգերը մասամբ նրանից են առացել իրանց արուեստների ու գիտութեանց սերմերը։ Մինչ անգամ հին մարդկերին, ամէն բան, ինչ որ եգիպտական էր, յարգելի ու խորհրդաւոր էր թվում, և մի ինչ որ խորհրդաւորութեամբ այժմ էլ առգրաված է նեղոսեան երկրի օդը։ Մենք յայտնագործել ենք գետի աիւներները և սովորել ենք կարդալ եգիպտական արձանագրութիւնները. բայց սֆինքսը*) ուրիշ հանելուկներ էլ ունի,—դեռևս չլուծված հանելուկներ։ Հին ժամանակները կարծում էին թէ նրանք եկել են նեղոսին Աբիսինիայից. այժմ սկսում է հաստատվել այն կարծիքը, որ նրանք շատ հեռաւոր շրջանում կապված են եղել սէմիտ ցեղի նախնիների հետ. կարծվում է որ նրանց լեզուի մէջ կան այդպիսի հետաւոր ազգակցութեան

*) Մարդակերպ հրէշ, որի մարմինը, բայց յոյների, առիւծի էր, գլուխն ու կուրծքը՝ օրիորդի, պոչը՝ շան և այլն։

նշաններ։ Ի՛նչպէս, ուժով և երբ են նրանք ազգութիւն դարձել։ Այս մէ որ չէ կարող ասել. Քրիստոսից չորս հազար տարի առաջ նրանք արդէն բոլորովին կազմակերպված ազգութիւն էին՝ լինամբով կազմակերպված հասարակական կեանքով, լայն ու հարուստ բաղաքակրթութեամբ։ Վերջապէս՝ ինչ բան է Եգիպտոսի կրօնը։ Ինչեր էին բուն հնութեան երկրի սկզբնական աստուածները, ինչ յարաբերութեան մէջ էին գտնվում միմեանց հետ՝ նրա մէջ յարգված աստուածները։ Այս հարցին դեռևս չի կարելի լրիւ պատասխան տալ։ Մինչ անգամ, եթէ աջողվի ապացուցել,—դէպի որը բաւ երեւոյթին հակված է մեծ գործը,—որ եգիպտական քաղաքակրթութիւնը սկզբում առաջ է եկել Միջագետքից, այսուամենայնիւ շատ բան կմնայ մութ ու կասկածելի։ Ամենանշանաւոր եգիպտաբանները խոստովանում են որ դեռ չի կարելի գրել եգիպտական կրօնի պատմութիւնը։ Նրանք, ովքեր փորձել են կազմել նրա համառօտ նկարագրութիւնը՝ խիստ տարբերվում են միմեանցից, որովհետև ամենք իրրև ելակէտ ընդունում են միաստուածութիւնը, ամենք՝ կենդանիների կուլտը։ Մեր մատնացոյց արած վարկեան շրջանում կրօնը արդէն լիովին կազմակերպված է երեում և կարգաւորեալ սիստեմով, որի պատանեկան պատերազմը, եթէ երբ և է գոյութիւն է ունեցել, արդէն վաղուց վերջացել է։ Այս կրօնի մէջ ամենանշանաւորը այն է, որ սա ընդգրկում է այնպիսի տարրեր, որոնք առաջին հայեացքից ոչինչ հանուր բան չունեն իրանց մէջ և մինչ անգամ բոլորովին անհամաձայն են երեում միմեանց։ Մենք չենք էլ փորձի եգիպտական կրօնը կապել իրրև մի ամբողջութիւն, այլ կրաւականանանք, քննելով մէկը միւսի ետևից այն պէս-պէս տարրերը, որոնք համարեա թէ վերաբերում են նրանում իրար կողքի հանդիսանում են նրանց կրօններին։ Ընդարձակ, մենք մի բան կպատ այլ և այլ կրօններին։ Ընդարձակ, մենք մի բան կմանանք այն յարաբերութիւնների մասին, որոնց մէջ գտնվել են այդ առարկաները միմեանց հետ, սակայն դուցէ հնարաւորութիւն չենք ունենայ ընդունելու ոչ մէկը այն սիստէմնե-

բից, որոնց մէջ փորձում էին միայնակ նրանց՝ եգիպտական բուրմերն ու յոյն փիլիսոփաները։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՈՒ ԴՐՈՒԱՆՈՒԹԻՒՆԸ։ Առաջին բանը, որ պէտք է յիշել հին Եգիպտոսի պատմութիւնը հասկանալու համար՝ այդ այն է, որ երկիրը բաժանված էր մի քանի շարք պատառների կամ նոմների. կատարեալ հիմք կայ ենթադրելու որ նոմները սկզբում միմեանցից անկախ են եղել։ Ստորին նոմներից վերին Եգիպտոսում, այսինքն՝ Նեղոսի երկայնքով 20-ի չափ կար, հարաւում եղած էլեփանտինից մինչև հիւսիսի Մէմփիսը. և մօտ այնքան էլ՝ Սաորին Եգիպտոսում, այսինքն՝ երկրի ամենի տափարակ մասում, Մէմփիսից մինչև ծովը։ Առաջին հարիւրամեակը հիմնով Մէնա կամ Մինէս թագաւորը, եթէ միայն նա ոչ թէ առասպելական, այլ մի պատմական անձ էր՝ կրէտական Մինոսի, հնդկան Մանուի կամ պէրսի Մաննի պէս՝ ապրում էր ոչ ուշ քան Ք. ծ. 3200 տարի առաջ և, ըստ աւանդութեան, միացրել էր իր իշխանութեան տակ Վերին ու Սորին Եգիպտոսը։ Սակայն թէպէտ նրանք միացան մի կառավարչի իշխանութեան տակ, այնուամենայնիւ նոմերը երբէք չէին մոռանում իրանց անկախութիւնը և չէին դադարում իրրև միապետութեան մէջ առանձին թագաւորութիւններ դոյութիւն ունենալուց, որոնցից իւրաքանչիւրն ունէր իր զօրքը, իր վարիչը, իր՝ հարկահաւաքութեան սիստէմը, իր կուռքը։ Բարձրագոյն իշխանութիւնը երբեմն մէկ նոմի մէջ էր գտնում, երբեմն՝ միւսի։ Առաջին երկու հարիւրամեակները պատկանում էին Արիդոսի նոմին. հետևեալ հարիւրամեակները, որոնցից մեզ մնացել են հնագոյն յիշատակարանները, այնպէս որ այս հարիւրամեակից սկսվում է Եգիպտոսի իսկական պատմութիւնը՝ Մէմփիսը իրանց ամենանիշան էին չինել։ Մեզ յայտնի՝ տասերկուերորդ հարիւրամեակը, որին սակայն եգիպտական պատմութեան մէջ հետևից հինգհարիւրամեայ բացը՝ (ընդհատումը) իր մայրաքաղաքը չինել էր Թէբէն։ Թէբէն էլ 18 և 19-րդ հարիւրամեակների ամենանիշան էր, որոնք եկել էին Տվիւնեից՝ տարաշխարհիկ տիրապետութիւնից յետոյ. այս հարիւրամեակների օրով Եգիպտոսը իր զօրութեան ամենաբարձր կէտին էր հասել։ Ռամզէս Բ. և նրա յաջորդ՝ Ելից դրքի փարաւոնները պատկանում են 19-րդ հարիւրամեակը։

Ցուշարձանները կարող են վկայել մեզ այլևայլ դարաշրջանների Եգիպտոսի արուեստի ման հոյակապութեան մասին. այս արուեստները, տաճարները, մահարձանները այնպիսի մի հզօրութեան են համապատասխանում, որ այնպէս էր հանգրում թէ ողջ աշխարհը իր տերերի տակն է, թէ ինքը ամենամեծ ստուածների երկրաւոր յայտնութիւնն է։ Գրականութիւնը գտնվում է մեր ճանաչման նոյն բարձր մակերեսի վրայ, որի վրայ են և միւս արուեստները, և պրշութիւնը (ПИСЬМО) գրած է ածվում համայնական կեանքի բոլոր ճիւղերի մէջ։ Այս՝ ողջ աշխարհը գրականութիւններից ամենահինը գրված է հին տաճարների ու մահարձանների անապին մակերեսների վրայ և խառնիխուռն դիզված անապին մասսաներով պապիրուսի գալարան ձրարներում, որոնցից շատերը դեռ կարօտ են հետազօտութեան։ Զանազան նշանագրեր վերծանելու և եգիպտական հին լեզուն վերականգնելու պատմութիւնը գիտական աշխարհի ամենահետաքրքիր յայտնաբերներից մէկն է։ Մեր եգիպտական գրչութեան վերաբերմամբ միմիայն մի նկատողութիւն կանենք, այն է՝ որ նա ցոյց է տալիս եգիպտական ժողովրդի զարմանալի պահպանողականութիւնը, նրանց բնաւորութեան յատկանիշը, որ սուր կերպով արտայայտվում է հինգ նրանց կրօնի մէջ։ Հին եգիպտացիք դէն չէին գցում հին սովորոյթը, եթէ նոր էր մտնում մի նոր, մինչ անգամ շատ լաւ սովորոյթ։ Մեռածները զօրածածութեան մէջ մնալուց երկար ժամանակ էր անցել, բայց եգիպտացին այլևայլ նպատակների, մանաւանդ կրօնի հետ յարաբերութիւն ունեցող նպատակների համար՝ դեռևս քարեզէն զօրծիքներ էր գործածում։ Պայծրարի գո-

նակները, որոնք գտնվել են մումիաներ պարունակող արկղներում, զմռսելու ժամանակ են եղել գործածվելիս և մի հնացած սովորույթի պահպանելն են ցույց տալիս։ Միևնույնը կարելի է ասել և' գրի մասին։ Եգիպտական հնագոյն գիրը սեպագիրն էր կամ պատկերագիրը։ Այս սիստէմի գրուածքը բառական հնչիւններ չունի, այլ պատկերացնում է այն գաղափարները, որ կան գրողի գլխումը. սա մի գրութիւն է՝ առանց բառերի. ըստ մեզ՝ սա մի անյարմար և կարգացողին ահագին դժուարութիւններ պատճառող սիստէմ է։ Զատ հին ժամանակներում հնարված է եղել այսպէս կոչված՝ մեհենական հիերատիք գրութիւնը, որի մէջ նշանագրերը ոչ թէ իրերն են արտայայտում, այլ՝ հնչիւնները, թէպէտ իրանք նշանագրերն էլ առնված են ասկի վաղ հնարված ծաղկագրից։ Այսպիսի որբագան վիճակումն է հասել մեզ եգիպտական գրականութեան մեծ մասը. սակայն մենք այստեղ էլ ենք տեսնում որ նոր սիստէմը հինը գործածութիւնից չէ հանել։ Մանաւանդ թէ կրօնական բովանդակութիւն ունեցող արձանագրութիւններից ու փաստաթղթերի մէջ գործը պարզվում է հին ու նոր սիստէմով. իւրաքանչիւր հատած երկու անգամ է գրվում, նախ՝ սեպագրով, այսինքն՝ հին ու որբագան ձևով, ապա՝ մեհենական գրութեամբ—նոր, հեշտ կարդացվող ձևով։ Այլ և այլ եկրպտղելի առարկաների նկատմամբ մենք, եթէ կամենանք, կտեսնենք հնից ու որբագնից չհրաժարվելու միևնոյն ցանկութիւնը, հինը նորի հետ միասին շարունակելու միևնոյն ձգտումը։

1. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՈՒԼՏԸ

Սկսենք եգիպտական կրօնի ըստ երևոյթին ամենահնուագ ռացիօնալ տարրից։ Քրիստոնէական էռայից առաջ ու յետոյ եղած էպօխաներում, երբ բազմաթիւ յոյն ու լատին գրողներ խօսում են մեզ հետ Եգիպտոսի մասին՝ տեսնում ենք որ

երկրի կրօնը նկարագրվում է իբրև իր մէջ բացառապէս կենդանիների կուլտ պարունակող մի կրօն։ Այս հանգամանքը՝ գրողների միջև բաւական զարմանք է առաջ բերել։ Հէրօդոտոս պնդում է որ եգիպտացիք բոլոր կենդանիները որբագան էին համարում, և բերում է նրանցից այնպիսիների յուցակը, որոնց ասկի էին երկրպագում։ Նրա ասելով՝ ջրաձին (հիպոպոտամը) որբագան կենդանի էր Պապրեմիսում, կոկորդիլոսը՝ Թէբէյում, իսկ մի բանի կենդանի որբագան են համարվում ողջ երկրում։ Նա շատ բան է պատմում այն բանի մասին, թէ ինչպէս են կերակրում ու կրթում որբագան կենդանիներին, ինչպիսի յարգանքներ են տրվում նրանց իրանց մահից յետոյ։ Լուկիան ասում է. «Եգիպտոսում տաճարը մի մեծ ու միևնոյն ժամանակ հոյակապ շենք է՝ թանկագին բարերով, ոսկով ու արձանագրութիւններով զարդարված. բայց եթէ դուք մտնէք այնտեղ ու նայէք աստուածութեանը՝ ապա կտեսնէք մի կապիկ կամ իբիս, այծ կամ կատու»։ Միևնոյնն են հաստատում Կլէմէնտ Ալէքսանդրիացին ու Ձէյդ՝ այն հեռմայեցին, որ յարձակվել է բրիստոնէութեան դէմ նրա առաջին շրջանում։ Այսպէս ուրեմն, Եգիպտոսի ժողովրդական կրօնի գլխաւոր առարկաները՝ քրիստոնէութիւնից եթէ առաջ ու եթէ յետ՝ կենդանիներն են եղել։ Սրբագան տեսակի (ВИДЪ) ներկայացուցիչը նստած էր, սոդում կամ ցատրում էր տաճարում, և այս շրջանում (ОКРУГЪ) այդ կենդանին կերակրի մէջ չէր գործածվում։ Այն շրջանում, որտեղ սրբագան կենդանին կատուն էր՝ բոլոր կատուները անձեռնմխելի էին. կատուին տրուած ամէն վիրաւորանք գոլ էր գցում ժողովրդի մէջ, և եթէ մէկը, թէպէտ և երկրի սովորոյթներին անծանօթ օտարական լինէր, սպանում էր կատուն՝ ապա այդ բանի համար կեանքովն էր պատասխանատու։ Դրացի շրջանում արդէն ոչ թէ կատուն էր յարգվում, այլ՝ մի ուրիշ կենդանի. և այս տեղական կրօնական խտրութիւնները կարող էին պատերազմ առաջ բերել շրջանների միջև։ Բավնով իր 15-րդ

երկիթարանութիան մէջ պատմում է երկու դրացի գաւառների միջև ծագած մի հին կրօնական պատերազմ։ Այդ գաւառներից իւրաքանչիւրը առում ու վիրաւորում էր միւս գաւառում յարգվող կենդանուն։ Սրանով է բացատրվում, թէ ինչու իսրայէլացիները չէին կարող գոհ բերել Եհովային Եգիպտոսում։ Նրանք հարկադրված էին քաշվել անապատը, հեռանալ եգիպտական հողից, որպէսզի կարողանային գոհ բերել այն կենդանիները, որոնք սրբազան էին համարվում Եգիպտոսում։

Երկրպագութիւն տալ սրբազան կենդանուն իր գաւառում, որի ժամանակ յայտնի տեսակի ներկայացուցիչը բնակում է տաճարում, իսկ մնացածները յարգանք ու հոգատարութիւն են վայելում ամբողջ գաւառում,—ահա զոհերի նօրմալ պրութիւնը։ Երբեմն մի առանձին կենդանի սրբազան է դառնում Եգիպտոսում հանրապէս, ինչպէս Մէմֆիսի Ապիս եզը, Հէլիօպոլի Մնեւիս եզը կամ Մէնդէսի այծը։ Այս վերջիններս, թէպէտ և սկզբում տեղական աստուածութիւններ էին, կարող էին ունեցած շատ տեղ երկրպագութիւն առանալ, եթէ այն գաւառը, որին նրանք պատկանում էին՝ ունեցած մեծ իշխանութիւն ձեռք բերէր։ Ամէն տեսակի ու մեծութեան կենդանի պաշտվում էր Եգիպտոսում։ Բացի մեր յիշած խոշոր կենդանիներից՝ որոշ տեղերում երկրպագում էին կապկին, շանը, ատագարնակ մկանը, այլ և օձերին, գորտերին ու այլևայլ ձիներին։ Ո՛չ մի դէպքում չի կարելի չյիշել այսպիսի սիարար բղէզը.*) որբազան էին նոյնպէս որոշ ծառերն ու թփերը, զարմանալի է սակայն, որ արմաւենին բացառութիւն էր։

Կենդանիների կուլտ եգիպտական նկարագիրը առնված է շատ հին աղբիւրներից և կրօնի հին շրջանին է վերաբե-

*) Բարիկ կամ փայտաներկ կուշտ չինուած սրբազան փիղուրներ, որոնք առաջին տարածուած էին հին եգիպտոսում և գործ էին ածվում իբրև թալիսմաններ, կնիքներ ու շքապրանքներ։

րում։ Եգիպտոսի ամենի հետաքրքիր էպօխաների կրօնը բոլորովին ուրիշ տեսակ էր. յուշարձանների վրայ արձանագրուած տօրինքն ու բաները ոչինչ չեն ասում կենդանիների կուլտի մասին։ Բայց սրա պատճառը այն էր արդեօք, որ մի այսպիսի երկրպագութիւն ծագած չէր նրանց օրով։ Այս բանը նոյն կերպով չի կարելի հաստատել։ Գուցէ այս կուլտը նրանց լաւ էր յայտնի, բայց նրանք չհաւատացած չէին նրանով կամ լաւ չէին կամենում այն խրախուսել։ Խօսք չկայ որ եգիպտացիք կենդանիների կուլտը ուշ ժամանակների նորամուծութիւն չէին համարում։ Եգիպտական քուրմ Մանեթօն, որ գրում էր Գ. դարում Ք. Ծ. առաջ՝ ասում է որ կենդանիների կուլտը մտցրված էր երկրորդ հարստութեան երկրորդ թագաւորի օրով։ Միևնոյն է, եթէ մենք ասենք թէ այն հին տաճարի Ապուր թագաւորի օրով։ Մանեթօնին ժամանակակից բաները կամենում էին որ կենդանիների կուլտը իրանց երկրի սկզբնական կրօնի ազգատումը համարվէր, բայց չէին կարողանում որոշել նրա երևան գալու ժամանակը և նրա սկիզբը վերագրելին պատմութեան առասպելական շրջանին։ Այսպիսով Մանեթօնի պատմութիւնը ապացուցում է որ կենդանիների կուլտը գրաւոր յիշատակարաններից վաղ է առաջ եկել։

Բայց մենք ունենք հինգ այս տեսակի ուրիշ վկայութիւններ։ Ժիրմինների վրայ բանդակված եգիպտական աստուածութիւնների նկարը անկասկածելի կերպով վկայում է որ այս մեծ էակները սկզբում կապ են ունեցել կենդանական թագաւորութեան ներկայացուցիչների հետ։ Եգիպտական մեծ աստուածները ժիրմինների վրայ երեք կերպով են նկարվում։ Վերջնական ձևը՝ մարդկային ձև է, աստուածութիւնը ներկայանում է ամբողջ մարդու կամ մեծ մասով, բայց որովհետև բոլոր աստուածութիւնների մարդկային բոլոր տիպերը նկարված են մի-մի պայմանական ամբողջ և մի-մի պայմանական մեծ օրինակով, այս պատճառով գլուխը կցված է մի սիմբոլ՝ ցոյց

տալու համար թէ ինչպիսի աստուածութիւն է նկատի ունեցուած։ Գաթօր (Гаоръ) կին է՝ պսակը կովի եղջիւրներով և այլն։ Բայց այս սիմբոլների հնագոյն ձևը այն է, որով աստուածները նկարուում են շատ անգամ մարդկային կերպարանքով, շատ անգամ էլ կենդանիների նման։ Հօր երեսում է բազէի գլուխ ունեցող մարդու կերպարանքով, Գաթօր՝ կովի գլուխ ու եղջիւրներ ունեցող կնոջ կերպարանքով, Բաստ՝ կատուի գլխով մի կին է, և Ոզիրիս՝ եզան կամ ի-բիսի գլխով, Խնումի ոչխարի գլուխ ունի, Ամոն՝ երբեմն ոչխարի, երբեմն բազէի գլուխ։ Հանդիպում են նաև աստուածութիւններ՝ մարդկային մարմնով և առասպելական կենդանիների, ինչպէս օրինակ՝ փիւնիկի գլխով։ Բայց այս կիսամարդկա-կիսակենդանային կերպարանքների հետ միասին կան դարձեալ աստուածութիւնների աւելի պարզ սիմբոլներ. նրանք նկարուում են կենդանիների կերպարանքով։ Միայն 12-րդ հարստութեան ժամանակները մի փոխանցում է կատարուում դէպի աւելի վսեմ ձևերը, բայց հէնց որ մի քայլ է արուել աստուածութիւնները կիսամարդկային կերպարանքով պատկերացնելու համար՝ նրանց հին նկարները չեն անհետացել, այլ շարունակել են իրանց գոյութիւնը նորերի հետ միասին։ Այսպէս, մեհեանի բարի վրայ գտնում ենք Հօրի երկու պատկերը. մէկի վրայ նա ներկայացուած է բազէգլուխ մարդու կերպարանքով, միւսի վրայ՝ պարզապէս բազէի նմանութեամբ. ուրիշ աստուածների այդպիսի կրկնակի նկարներն էլ են հանդիպում։ Եթէ եգիպտական աստուածները այսպէս էին հասկացուում ու կերպ նկարուում հնագոյն ժամանակները, ապա յոյն ու հռոմայեցի գրողների նկարագրած կենդանիների կուլտը անհետ վերջին շրջանի պիտի չէ եղել, այլ իր արմատը հաստատած է ունեցել հեռաւոր անցեալում։ Եգիպտոսի սկզբնական աստուածները կենդանիներ էին։ Կարող է պատահել, որ Եգիպտոսի պատմութեան վաղեմի շրջանների կենդանիների կուլտը վերանորոգուած կուլտ լինի եղած, ինչ-

պիսին յաճախ լինում է անկման էպոխաներում մի այն տեսակի երկրպագութիւն, որ զգալի կերպով անհետացել է, տեղի տալով մի աւելի հոգևոր հաւատի։ Սրա մասին միմիայն ապացուցանում է պատագէտը կարող է դատել, բայց յամենայն դէպս կենդանիների կուլտը Եգիպտոսում լոսո ինքեան մի նոր բան չէ, այլ մի շատ հին երևոյթ է եղած։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՈՒԼՏԸ ԲՑԱՏՐՈՂ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Ի՞նչ էր նշանակում այս կուլտը և մենք ինչպէս պէտք է ընդունենք, Իրանը եգիպտացիք և իրանց ուշքը Եգիպտոսի վրայ դարձնող հին գրողները այս կուլտը բացատրել են պէս-պէս տեսութիւններով. և մինչև այժմ խնդրի վերաբերմամբ գոյութիւն ունեն պէս-պէս տեսութիւններ։ Մենք կարող ենք միասին թուել միմիայն նրանցից ամենապլսաւորները։ 1) Գաղաններին երկրպագում էին նրանց յատկութիւնների համար, ինչպէս լինում էր ըստ երևոյթին և՛ Գէբոում եանրինների տիրապետութիւնից առաջ (տես գլուխ VI), նրանցից իւրաքանչիւրը յարգուում էր իր աստուածային ծագման կամ այն առաքինութեան համար, որ պարզ կերպով պարունակված էր նրանում։ Այսպէս շունը պաշտուում էր իր արթուն հսկողութեան և հաւատարմութեան համար. բակլն՝ իր օգտակար ծառայութեան. կովը իբրև մի մեծ բարի մայր. բզէզները՝ իրանց ցեղի ամման այն զարմանալի եղանակի համար, որով կանբը այնպէս ապշեցուցիչ կերպով վերանորոգուում է աւերումից։ 2) Գաղաններին ուղղակի իրանց պատճառով չէ, որ երկրպագում են. նրանք լոկ այն աստուածութիւնների խորհրդանշաններն են, որոնց հետ կապված են, և պաշտուում է ոչ թէ կենդանին, այլ՝ աստուածութիւնը։ Սա կարող է բոլորովին ճիշտ լինել յետագայ ժամանակների նկատմամբ, սակայն ոչ մի դէպքում գոհացնող կերպով չէ բացատրում կուլտի սկզբնաւորութիւնը. որովհետև ինչպէս պէտք է հնարված լինի և ով է առաջինը կարողացել որ չնագայլը լինէր Անուբիսի

խորհրդանշանը, կատուն՝ Բաստ աստուածուհու, կոկորդիլոսը՝ Սեբակի և այլն։ 3) Այս կուլտի սկզբնաւորութիւնը պէտք է առասպելական ու quasi-պատմական բացատրութիւններ են տրվում, ինչպէս օր., թէ մարդիկ իրրև իրանց օրինակ պատերազմի մէջ՝ վայրագ գեհազան աստուածներ են ընտրել կամ թէ նրանք հին ժողովուրդ՝ ցանկանալով իր հպատակներին բարձր-բարձր պահել՝ իւրաքանչիւր գաւառի հրամայել է տարբեր կենդանի պաշտել։ Իրրև հին ժամանակների մի լեգենդա՝ պատմում է, թէ երբ աստուածները, խափանելով երկրի վրայ՝ այլևայլ կենդանիների ձևեր էին առնում, այս պատճառով էլ աստուածները դեռևս կենդանիների մէջ են պահում։ Աստուածները յաճախում են գազանների մէջ, որպէսզի մօտ լինեն կենդանիներին ու տեսնեն թէ ինչ են անում նրանք։ Սակայն մարդիկ իմացան այս բանը և նրանց պաշտում են իրանց ունեցած պատկերով։ 4) Աստուածները չեն կարող ներկայ լինել աշխարհում և չեն կարող, ինչպէս հարկն է, պաշտվել, եթէ չունենան մէջները բնակելու մարմին,—սա Եգիպտական հոգեբանութեան դրութիւնն է, և որովհետև աստուածները շատ նման կլինէին միմեանց, եթէ պահվէին մարդկային մարմիններին մէջ՝ այս պատճառով նրանք ընտրել են պէտքէս կենդանիների մարմինները։

Կենդանիների կուլտի այս տեսութիւնները, ասինքն է, յետագայ ժամանակների գիւտեր են, որոնք պէտք է բացատրեն գործերի այն դրութիւնը, որի իսկական ծագումը յայտնի չէ եղել։ Մատաղ-բուրմները չէին կարող հաշտեցնել կենդանիների այն կուլտի հետ, որ առաջ էր եկել տաճարներում շարդարարներով այն իրանց մարերում մի որոշ վարպետութեամբ։ Եթէ այս երևոյթը սիմբոլական համարենք՝ նշանակում էր մինչև մի որոշ ասպիճան պէտք է խոյս տային նրա կողմնակութիւնից։ Բայց նրանք, ովքեր կենդանիների կուլտի վերաբերմամբ այնպիսի տեսութիւնների էին դիմում՝ չէին կարող այս դիտողները լինել։ Մենք կարող ենք հաստատած լինել, որ նրբացած ու կենսակրթական ժողովուրդը չէ հնարել կենդանիների կուլտը։ Ո՛չ մի ժողովուրդ, սկզբնական չդարձնելով այդ կուլտի անհրաժեշտ կողմերի վրայ՝ այնպէս չմտածութիւն չէ մտերմացել նրա հետ, ինչպէս եգիպտացիք։ Իսկ երբ մտերմացել էին այն շահասիրական գաղափարի համար, որով նմանութիւն էին գտնում չայտնի կենդանիների ու չայտնի աստուածների միջև։ Եւ որովհետև նրանց հասկացողութեամբ կենդանիները աստուածներն են յիշեցնում, այս պատճառով բնապաշտական հայեացքներ էին արտայայտում այն բանի մասին, թէ աստուածութիւնը ծպտել է կենդանիների նմանութեամբ։

Այս սիստեմը իրաւ չէր կարող ծագել եգիպտացոց քաղաքակրթութեան չհասց, և չէր կարող իր գոյութիւնը շարունակել բաղաքակրթված ժողովրդի մէջ, եթէ սրբագործված չլինէր անյիշատակ հնութեամբ։ Այսպիսի մի կուլտ կարող էր շարունակվել այսպիսի մի ժողովրդի մէջ լոկ իբրև մի գաղտնիք, իբրև մի բան, որի ծագումը չայտնի չէ եղել։

Մօտ ժամանակներում ուսումնականների մարդաբանական շիջան առաջ էր բերել կենդանիների եգիպտական կուլտի մի նոր մեկնութիւնը և այս մեկնութիւնը արագութեամբ տարածվում է։ Պրօնական գործերի դրութիւնը Եգիպտոսում, Խվիտոլի ու Պիտօրայի ասելով՝ շատ նման է հատարակութեան վերը նկարագրված տօտէմիստական դրութեանը։ Այստեղ ինչպէս և Պէրսում, հանքիներից առաջ կամ այժմեայ հիւսիս-ամերիկեան հնդիկների մէջ՝ մենք ունենք մի ամրողջ շարք համայնքներ, և նրանցից իւրաքանչիւրն ունի իր առանձին սրբազան կենդանին, որին նա չէ զոհաձուում կերակրի մէջ, այլ պաշտում է ու պաշտպանում։ Եգիպտական ծիսականութիւնների մէջ տեղ-տեղ կարելի է նկատել իրերի տօտէմիական կարգի ուրիշ հետքեր, սակայն եթէ մինչ անգամ հատեմատութիւնը չտարածվէր նոր ատա յիշված երևոյթների այն կողմը, այն ժամանակ այսուամենայնիւ հիմք կունենայինք ենթադրելու թէ շրջաններում սկզբում բնակված են եղել մի

ամբողջ շարք աստէմիստական կանոններ, որոնք մինչ անգամ միանալով, մի ժողովուրդ կազմելով՝ պահպանել են իրանց նախնական առանձին աստղալիննները։ Այս դէպքում գաւառների սրբազան կենդանիները կարող են ընկել, իբրև «այն կրօնների աստվածներ, որոնք առաջինն են հաստատվել յայտնի տեղերում»։ Եթէ այս այսպէս է, ապա կրօնի յետագայ զարգացումը չէ փոխել ցեղական կեանքի այս յարգելի էմբրիմները։

2. ՄԵԾ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

Բոլորովին այլ տեսակի աստուածներ ենք ճանաչում մենք յիշատակարաններում ու գրքերում։ Այս կրօնի գլխաւոր գործն է՝ բացատրել թէ ինչպէս սրբազան կենդանու, այն է՝ կատուի, իբիսի կամ կօկօրդիլոսի հետ միասին եգիպտական տաճարում պաշտվում էր մի էակ՝ երկնքի ու երկրի աստուածուհին, որի բնութիւնը լոյսն է, ճշմարիտ ու բարի աստուածուհին, որ միշտ լցնում է երկրպագուի հոգին ազնիւ պաշտամունքով և տանում է նրան դէպի աստուածութեան (մէէիմ) վսեմ ճշմարտութիւնները։ Եգիպտական այս մեծ աստուածները ամենահնադարեան ժամանակներից, որոնց մասին մենք որքան և է տեղեկութիւններ ունենք, նկարվում էին, ինչպէս տեսանք, կենդանիների նմանութեամբ։ Այն ժամանակներից, ինչպէս մեզ յայտնի է, Գամօր ներկայանում է կովի կերպարանքով, Հօրն՝ բազէի, Անուբիս՝ շնագայլի պատկերով։ Արդէօք կենդանիների կուլտը գերազոյն աստուածների կուլտից է առաջ եկել աստիճանաբար իջման (տէգրադացիայի) պրօցէսով։ Մենք տեսանք, թէ ինչպէս դժվար է այսպիսի մի կարծիք պաշտպանելը։ Եթէ այսպէս է, բարձր կուլտը սորից չէ առաջ եկել արդէօք զարգացման պրօցէսի միջոցով։ Այս էլ նոյնպէս դժվար կլինէր ապացուցանել, որովհետև Եգիպտոսի մեծ աստուածները կենդանիներ չեն, թէպէտ և վսեմացած են ու շնչաւորված, այլ ուրիշ կարգի էակներ. սրբանք են՝ երկինքը, արևը, լուսինը, արշալոյսը։ Եւ որովհետև մեր առաջին գլուխներում մենք բերինք այնպիսի պատճառներ, որոնցով բնութիւնն մեծ ուժերի կուլտը նախնական մարդու հասկացողութեամբ մի սկզբնական բան է և բացատրում է առանց կրօնի աստղնագոյն ձևերից դուրս բերվելու՝ այս պատճառով այդ պէտք է ենթադրենք Եգիպտոսի վերաբերմամբ էլ։ Մինչ անգամ եթէ մեծ աստուածներից մի քանիսը առնված են Միջագետքից՝ սա քիչ է օգնում մեզ հասկանալու նրանց պատմութիւնը, իրանց՝ Եգիպտոսում երևալուց յետոյ։ Մենք ստիպված ենք ընդունել երկու այնպիսի կրօն, որոնք բնութեամբ տարբեր են ու ծագմամբ անկախ, որոնք սկզբում են կռիւ-կռիվ և ձգտում են համաձայնութեան կայացնել միմեանց հետ. և դրանց երկուսի միանալը մի այնպիսի պրօցէս է եգիպտական կրօնի մէջ, որ առաջ է եկել մեզ յայտնի շրջանից առաջ։ Սա մի նախապատմական պրօցէս է։

Առաջ կարծում էին թէ եգիպտական բնութեան աստուածութիւնների հետ շատ քիչ առասպելական տարր կայ կապված. յայտնի էր լոկ գլխաւոր կռմերով նրանց արարքների պատմութիւնը. նրանց մեծամասնութիւնը պատմութիւն չունէր, բացի մի քանի ֆրազներից, որ նախնական միտքը յարմարեցնում էր բնական մեծ երևոյթներին՝ նրանց մասին, իբրև կենդանի ու գործունեայ էակների, մի հայեացք արտայայտելու համար։ Բայց որքան շատ արձանագրութիւններ են կարդացվում, այնքան շատ ենք ճանաչում մենք աստուածային առասպելները և գուցէ նրանցից աւելի շատ հաւաքվի ապագայ հետազօտութիւնների շնորհիւ։ Այս տարբեր առասպելները յօրինված են սակայն մէկ օրինակով։ Եգիպտական մեծ աստուածները պարզ ու իմանալի էակներ են և Յունաստանի աստուածների պէս՝ իրենք կազմակերպված սիստէմ չեն եղել, այլ մնացել են իբրև առանձին հարստութիւններ կամ իբրև ընտանիքներ և շատ նման են միմեանց։ Համարեա նրանք բոլորը

արևի աստուածներ են, կամ վաղորդեան ու երեկոյեան աստուածներ, և նրանց պատմութիւնները չեն կարող խիստ տարբերվել միմեանցից, բայց նրանք պատկանում են երկրի այլևայլ գաւառներին. այս է ահա նրանց միջև եղած տարբերութիւնը և նրանց միմեանցից զատողը։

ՄԵՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐՆ ԷԼ. ՏԵՂԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ։ Ինութեան, ինչպէս և կենդանական աստուածութիւնը պաշտւում էր իր գաւառում, որտեղ նա ապրում էր իր սեփական երկրպագուների համայնքի մէջ. ուրիշ գաւառներում նա չէր ընդունւում, եթէ չկային դրա համար առանձին պատճառներ։ Բայց Եգիպտոսի մեզ յայտնի շրջաններից ամենահետաքրքիր շրջանում այս պարզ սկզբնական կարգը արդէն շատ փոփոխութիւնների է ենթարկվել։ Իւրաքանչիւր գաւառ ունի իր սեփական մասնաւորական աստուածութիւնը։ Սէտ Օքսիրնխի աստուածութիւնն է, Նէյտ՝ Սայիսի աստուածութիւնը, բայց իւրաքանչիւր գաւառում մէկից աւելի աստուածութիւն է պաշտւում։ Սովորաբար նրանք երեք-երեք են եղել. շատ տեղ իններ են եղել, բայց իններ կամ թիւ է, և նրանք կարող էին մէկ-երկուսով աւելի կամ պակաս լինել։ Համեմատելով տիրապետողի աստիճանին՝ գաւառի աստուածութիւնը իր ազդեցութիւնը իր սահմաններից էլ դուրս էր տարածում և անջատում էր ուրիշ աստուածների տաճարները, այնպէս որ շատ տեղերում նա տակաւ մէկ իր տանն էր։ Թա, ինչպէս տեսանք, ունէր տաճարներ գէմֆ, այսինքն՝ նրա անձնաւորութեան տաճարները պահպանում էին հինից նոյն թուով այլևայլ գաւառներում։ Սակայն եթէ մի աստուածութիւն այսպիսով կարող էր բաժանվել շատ աստուածութիւնների՝ ապա կարող էր և հակառակը տեղի ունենալ. երկու կամ աւելի աստուած, իրանց անունների հասարակ կերպով միանալուց՝ ձևւում էին մի նոր աստուած էին դառնում։ Մենք ունենք Թա-Թաթենէն, Ամոն-Թա, Պտա-Սոկար-Ոզիրիս և մի քանի էլ աւելի բարդ աստուածութիւններ։

Այսպիսով մի մշտական հակում կար նոր աստուածութիւններ առնելու. մինչ անցած եղած աստուածութիւնները միացնելու փորձերը լոկ նրանց թիւն էին մեծացնում։ Աստուածներ դասակարգելու սիստեմի ոչ մի փորձ յաջողութիւն չէ ունեցել. տեղական աստուածութիւնները չէին կարող իսպառ անհետանալ. գաւառները մինչև վերջը պահպանում էին իրանց առանձին աստուածները և կրօնական հատատութիւնները։ Եգիպտոսում ամենատարած կրօնական կազմակերպութիւն չէ եղել. մէկ բառի մի բանի դէպքերում կարող էր մի գաւառի կրօնից անցնել միւս գաւառի կրօնը, բայց երբէք ամբողջ Եգիպտոսի համար մի ծայրագոյն բառ չէ եղել. ինչքան էլ յարգւորը ցանկանար երկրի բոլոր կուլտերը մէկ սիստեմի վերածել։ Եգիպտական մեծ աստուածների այսպիսի տեղական բնոյթը այս մեծ էակների իմաստութեան ապրիւրն էր և միշտ խանգարում էր նրանց զարդացմանը։

Ամէն գաւառ առաջ կանոնով երեք աստուած ունէր, որոնք, միասին վեր առած, մէկ ընտանիք էին—գլխաւոր աստուածը կին ունէր, իսկ երրորդը նրանց որդին էր։ Մենք կարող ենք այս երեքութիւններից մի քանիսի անուանները յիշել.

Ամէն—Մուտ—Խոնսու՝ երեքութիւն . . . Թէբէի.
Պտա—Սէխէտ—Իմհոտէպ . . . . . Մէմֆիսի.
Ոզիրիս—Իզիդա—Հոր . . . . . Աբիդոսի (Փիլէ)
Սէբակ—Գամէօտ—Խոնսու . . . . . Ոմբոսի.
Գար-պտա—Գամէօր—Գար-սէմ-տա . . . . Էդֆուի։

Որդին հոր յաջորդն է, և նրա ճակատագիրն է՝ իր հերթին ամուսնանալ մօրը և արտադրել իրան, այսինքն՝ իր սեփական յաջորդը. և այսպիսով, թէպէտ շարունակ մեռնելով՝ նա շարունակ վերածնվում է։ Մայրը, արևի աստուածութիւն չերևնալով՝ չէ մեռնում։ Եթէ յիշենք որ աստուածները գործ ունեն արևի հետ՝ ապա այսպիսի բաներ չպէտք է անախորժ կերպով ազդեցնեն մեզ, և մենք չպէտք է զարմանանք այն յաճախակի կրկնվող հանգամանքի վրայ, որ աստուածութիւնը

Ծնում է իրան կամ արտադրում իր սեփական անդամները։

ԸՌՃՊԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ։ Մի քանի խօսք կասենք հանրապէս եգիպտական առասպելարանութեան մասին՝ գլխաւոր աստուածութիւնների մասին խօսելուց առաջ։ Ո՛չ մի բանի սկզբնաւորութեան վերաբերմամբ սովորական պատմութիւնների մէջ պակասութիւն չկայ. ասւում է, օրինակ, թէ գլխաւոր աստուածութիւնը առաջ է եկել սկզբնական հաւկիթից, կամ թէ աստուածների ամբողջ ընտանիքը Սէբի ու Մաաթի որդիքն են. Սէբ՝ երկիրը, Եգիպտոսում արական սեռի էր, իսկ Նուա՝ երկինքը՝ իգական սեռի և բոլոր բանների նախնածնողներն են եղել։ Բայց դրանից՝ մէկ աստծուց աւելին համարւում էր երկրաւոր լծակատը և իրան երկրպագող արբայական տան հիմնադիրը։ «Ռա» օրերի մասին, օրինակ, խօսում են, իբրև մի օսկեդարի մասին, երբ իշխում էին կատարեալ ճշմարտութիւնն ու կատարեալ երջանկութիւնը։ Կարելի է ցոյց տալ շատ պատմութիւններ, որոնք ձգտում են բացատրել բնութեան ծրևէ կողմը կամ հասարակական հիմնարկութիւն, մեկնում են որոշ տեղերի ու կենդանիների անունները կամ բացատրում այն հինգ օրերի գոյութիւնը, որոնք աւելանում են Եգիպտոսում լուսնական տասներկու ամիսներին՝ պատշաճաւոր արեգակնային տարի կազմելու համար։ Աստուածների շատ հին պատմութիւններ մոգական ներգործութիւն են անում, եթէ պատմում են որոշ դէպքերում. մէկը յաւէ լծոյնի դէմ, բայց պէտք է պատմի որոշ կերպով, որպէսզի ունենայ ցանկալի էֆֆէկտը։ Աստուածների հին խառպակ լծակատութեանը վերաբերող այս առասպելներին հետևում են նուազ չրջանների պատմութիւնները, երբ հին աստուածները տկարացել են ու թշնամիներ ձեռք բերել, երբ աստուածներն ու մարդիկ այլևս գլխաւոր աստուածութեանը չեն եղել սորտադրվելիս, երբ աստուածների միջև պատերազմ է բռնկվել, որ դեռևս չէ վերջացել և շարունակ վերանորոգվում է. կամ երբ հին աստուածները ստորադրվել են այն

աստուածութեան թշնամիների իշխանութեանը, և նրա յաջորդը պրկադրված է եղել լոյս ընկնել՝ նրա փոխարէն վրէժխնդիր լինելու։ Այս առասպելներից մի քանիսի մէջ երևան են գալիս նաև նախնական ու վայրենի կողմեր, որոնք ցոյց են տալիս, որ նրանք առաջ են եղել հասարակութեան բիրտ պրութեան էջ եղած ժամանակ։ Բայց այս առասպելները մարդերին են վերաբերում, ոչ թէ կենդանիներին, ինչպէս կարելի էր ըստասել եգիպտական առասպելարանութիւնից, և այս մարդիկ նշուշտ արևային հերոսներ են։ Այդ առասպելի մէջ խօսվում է երբեմն այս, երբեմն միւս աստուածութեան հետ միանալու մասին, օրական (և ոչ տարեկան) արևի պրութեան մասին, նրա հոյակապ ու բարերար լծակատութեան, նրա մուտքի, նրա՝ խաւարի զօրութեան դէմ մղած պատերազմի, նրա մահի ու յարութեան, կամ այն վրէժխնդրութեան մասին, որ նրա յաջորդը ձեռնարկել է նրա պատճառով։

ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ Եգիպտական կրօնի պատմութեան մէջ այսպիսի աստուածների մի խումբ հետևում է միւսին, իբրև իշխող հարստութիւն, նայելով թէ պետութեան մայրաքաղաքն ո՛ր նոր գաւառն էր փոխադրվում։ Այսպիսի կրօնական փոփոխութիւններ կարող էին առաջ գալ առանց մեծ դիցումների։ Սակայն հին հաստատված կարգերը ոչնչացնելու փորձը կատարի ընդհմութիւն էր առաջ բերել, իսկ նոր աստուածութիւն աւելացնելը, մինչ անգամ իբրև արդէն տաճարում գտնվված աստուածութիւնների վրայ մի ծայրագոյն աստուածութիւն՝ ապատ լծոյլ էր տրվում։ Մեզ յայտնի հնագոյն ժամանակներում Հելիօպօլիսի Ռա եգիպտական գլխաւոր աստուածութիւնն էր. Թինիական (արիստոկան) Ոզիրիս նոյնպէս մեծ աստուածութիւն է, բայց Ոզիրիսի կուլտը բնորոշող մեծ զարդացումը վերաբերում է յետագայ շրջանին։ Մէմֆիսեան Պտա բէմ. դուրս գալիս ամենահին հարստութեան ժամանակ։ Դրանից շատ ժամանակ անց՝ փառաբանվում է Ամոն, որ առաջին տեղն էր բռնում Եգիպտոսում,

Երբ հրեայն յոյներն ու հռոմայեցիք։ Մենք կարող ենք տալ այն աստուածաբնությունների խմբերի ոչ շատ կարճ նկարագիրը, որոնց դլուխ էին կանգնած այս աստուածները։

ՌԱ։ Դա նշանակում է արև. նրա բնավայրն է Հելիոպոլիս կամ Օն, որտեղ բնակում էր Յովսէփի տէրը՝ Բետափրէս կամ «Ռա քուրմը»։ Հելիոպոլիս «Կոճղոցի տունն» է, իսկ կոճղոցը՝ արևի պատկերը։ Նա՝ արևը նախ մի բարի ու հինաւուրց թագաւոր է, ապա դառնում է մարդկի. պէտք է լինում նրան՝ մենամարտել Ապէպ օձի՝ խաւարի դրաիօնի հետ, որին խոցում է իր ոլաքներով։ Իսկ երբ Ռա տեղի է տալիս դատում, այն ժամանակ նրան պաշտպանում է Թոթ՝ արհեստների երկնքի աստուածուհին, իսկ Հոր՝ միշտ պատանի ու միշտ յաղթող թագաւոր արևը վրէժխնդիր է լինում նրա փոխարէն*)։ Բայց Ռա թէ վերերկրեայ ու թէ աստրերկրեայ աշխարհի աստուածուհին է։ 22-րդ հարստութեան Պիանխի թագաւորը մտաւ Ռայի Հելիոպոլսում կանգնող մեծ տաճարը և թափանցեց նրա ամենահետաւոր սենեակը, իսկ յետոյ կրկին ներեց այն (սենեակը)։ Տեղեկութիւն կայ այն բանի մասին թէ նա ինչ տեսաւ այնտեղ։ Նա նայեց «իր հայր Ռային» և տեսաւ երկու մակոյկ, որոնք սահմանված էին աստծու ամենօրեայ ուղևորութեան համար։ Ռա իր մակոյկով ճանապարհորդում է երկնքով, իսկ գիշերը շրջում է աստրերկրեայ աշխարհով, որի վրայ նոյնպէս իշխում է։

Հոյակ աստծու ուղևորութիւնը խաւարի աշխարհով՝ մի բնական է, որ յետագայ ժամանակներում մշակված է ամենատեսակ մանրամասներով՝ Ոզիրիսից անբաժան. բայց այդ ուղևորութիւնը եգիպտացոց կրօնական որոշ մտապատկերնե-

*) Եգիպտական կրօնում Հոր անունը կրող մի քանի աստուածութիւն կայ. այս Հորը, որ բոլորի մէջ ամենն է՝ ի մի էր ձուլվում արևի առաջին աստուած Ռայի հետ, Ռա—Գարմախիս կրկնակի անունի մէջ, մի էակի որին բարձրագոյն աստրագիտքներ են վերագրվում։ Այս աստծու սիմբոլը մարդու գլուխ ունեցող հանգստացող ագիւծն է,—մի պատկեր, որ հարկաւորվում է նաև եգիպտական թագաւորները պատկերացնելու համար։

րից ամենաառաջիններից մի մասն է, և Ռայի «Ամենաառաջ» ովր կամ աստրերկրեայ աշխարհում արած ուղևորութիւնը նկարագրվում է շատ հանգամանօրէն։ Նրան ուղեկցում են շատ դէմքեր և դիրեկտոր դէմքերին հանդիպելուց առաջ՝ նա հարկադրված է լինում երկար ու ձիգ գիշերը յաղթել շատ խոչընդոտների։ Միևնոյն մարդկերի հոգիներն էլ է տանում նա աստրերկրեայ դատաւորների մի դատի տեղեկութեան չնորհելու, եթէ նրանք ձիգ են եղել տալիս այդ տեղեկութիւնը ձեռք բերելու՝ վտանգաւոր նաւարկութեան միջոցին կարող են ապաւինել Ռայի մօտ։ Նա նրանց յանձնարարում է մշակել դաշտերը աստրերկրեայ հարթավայրերում և նրանք ուրախանում են, երբ նա հետևել պիչերները որոշել ժամերն երեում է։

ՈԶԻՐԻՍ՝ արևոտեան արևի աստուածը, ըստ աւանդութեան նոյնպէս մի մարդկային էակ էր՝ աստուածային պատիների արժանացած։ (Նոյն անունը կրող՝ աստրերկրեայ աշխարհի աստուածը և մեռելների դատաւորը,—մեզ դէմքին է. նրա մասին մենք վերջը կխօսենք)։ Սա եգիպտական աստուածներից ամենաշահագրգիռն է. սրա մասին պատմված առասպելը պատահում է մինչ անգամ Պլուտարքոսի գրված բում նրա այն բնազանցական մեկնութիւնների հետ միասին, որոնք առաջարկված էին հին ժամանակներում. սա միևնոյն ժամանակ մի այնպիսի աստուածութիւն է, որի մէջ ամենից աւելի պարզ կերպով է արտայայտված եգիպտական կրօնի բարեկամների հետ ունեցած նմանութիւնը։ Վերոյիշեալ առասպելի նոյելով՝ նա ծնվել է միաժամանակ մեզ շրջ աստուածութիւնների հետ Սէթ և Նեփ յարդելի ծնողներից և էն սկզբից Հզիսէ իրան կին ու քոյր էր արել. նրա եղբայր Սէթ նոյնպէս միաժամանակ է ծնվել նրա հետ և ապրում է հետը, լինելով նրա մշտական թշնամին։ Ո՛չ մեկը չի կարող վերջնապէս յաղթել միսին և նրանց կռի մասին շատ բաներ են պատմվում։ Սովորաբար՝ եգիպտական աստուածները լուսաւոր ու բարի էակներ են, և միայն որոշ

դէպքում է հրեան գալիս տաւարիմը։ Ոգիրիս բարի ուժ է իմէ բարոյականի նկատմամբ և իմէ բնութեան արտաքին երեւոյթների շրջանում, մինչդեռ Սէտ այն բոլոր բաների մարմնացումն է, ինչ որ եգիպտացին համարում էր չար, այն է՝ խաւարի, անապատի, հարաւային խորշակի, տկարութեան ու խարտեաշ մազերի։ Սէտ դրսից մտցրած ու սէմիտ աշխարհակալներին պատկանող աստուածութիւն չէր, բայց այդ աշխարհակալները նրան աւելի յարմար գտան աստուածութեան վերաբերմամբ իրանց ունեցած հասկացողութիւններին, քան եգիպտական միւս աստուածները՝ և կամեցել են նրան չինել ծայրագոյն աստուած, որ սակայն չէ աջողել նրանց։ Այն գրոյցը, որ պատում է այն բանի մասին, իմէ ինչպէս Ոգիրիս յօշոտված էր մաս-մաս և ինչպէս Իզիդա որոնում էր նրա սիրելի նշխարները, որ նա իմացել էր 14 դանազան տեղեր, որտեղ և գտել էր յետոյ,—այս գրոյցը հանդիսանում է և՛ ուրիշ երկրներում ուրիշ անունների հետ կապված։ Հօր հանդիսանում է իբրև հօր կողմից վրէժխնդիր։ Այսպէս մենք այս աստուածութիւնը ունենք երեք աստիճանի վրայ,—Հօր՝ մի մանուկ է՝ մօր բազուկների վրայ հանգստացած, Հօր՝ վրէժխնդիր և Հօր՝ իր հօր յաջորդը, լրիւ արեւային աստուածութիւն։

Աստուածների այս ընտանիքը մեզ աւելի մարդկային ու կենդանի է իմում, քան Ռայի ընտանիքը կամ եգիպտական աստուածութիւնների մի այլ խումբ։ Մի առանձին պարզութեամբ տեսնում ենք մենք այս դէպքում այն սկզբունքի ազդեցութիւնը, որով լոյսի ու խաւարի հակադրութիւնը, որ ներկայացված է՝ ի դէմս աստուածների՝ բարոյական բարիքի ու չարիքի է վերածվում, այնպէս որ լոյսի աստուածը դառնում է ճշմարտութեան մեծ պաշտպանը և բարերարութիւններ չռայլող։ Եգիպտական կրօնի բարի աստուածը բացի դրանից՝ հետը ունի մի աստուածուհի, որ մի աւելի բան է, քան արու աստուածութեան դժգոյն ցոլացումը, ինչպէս կարելի է

ասել եգիպտական աստուածուհիների մեծամասնութեան մասին։ Այն, ինչ որ պատմվում է լէգէնդայում նոյնպէս մի այնպիսի ողբերգական անհատութիւն է տալիս աստուածային բնոյթներին, որպիսին սովորաբար չունեն եգիպտական երջանիկ ու երանելի աստուածները։

ՊՏԱ Մէմֆիսի աստուածութիւնն է, և նրա տաճարում գտնվում է Ապիս եզան սրբավայրը, որին (Ապիսին) անուանում են «Պտայի երկրորդ կեանքը»։ Երբ այս երկու աստուածութիւնները իրար կողքի էին ապրում՝ նրանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ անհրաժեշտ էր մի որևէ տեսութիւն և եղը դարձաւ անտեսանելի աստուածութեան երկրաւոր ներկայացուցիչը։ Նրանցից իւրաքանչիւրը ունէր նախապատմական ժամանակների մի կուլտ և մենք զուր կսկծէինք նրանց սկզբնական յարաբերութիւնների վերաբերմամբ տեսութիւններ ստեղծել։ Ի՞նչ վերաբերում է Պտային՝ նրա անունը «կառուցանող» է նշանակում, և յոյները նրան անուանում էին իրանց Հեփեստոսի անունով՝ արուեստաւոր։ Յետագայ ժամանակ նրան սկսեցին նոյնացնել արեի հետ և անուանել «յարդեի», «Ոսկէ», «Կարմիր» և «պեղատեսիլ». բայց առաջ նա ըստ երեւոյթին վերաբերմունք ունէր դէպի երկրաւոր տապը, տարրային ջերմութիւնը, որ ամէն կեանքի սկիզբն է։ Ռայի ու Ոգիրիսի պէս՝ նա էլ աստրերկրեայ աշխարհի մի աստուածութիւն է, որի մօտ մարդիկ գնում են մեռնելուց յետոյ։ Նրա մասին ասում են իմ բաց է անում մեռելների բերանը, այսինքն՝ ականջ է դնում նրանց ու պատում։ Սակայն բարձրագոյն աշխարհում էլ նա յարաբերութիւններ ունի ճշմարտութեան հետ. նրան «Արշինի տէր» են անուանում և այս անուանումը միացնում է նրան այն չափերի ու սահմանների հետ, որոնք Եգիպտոսում շատ մեծ նշանակութիւն են ունեցել։ Նրա որդի *Իմհոտէպ* խապաղարար է. յոյները այս աստծուն իմհամի էին համարում և անուանում էին Ասկլէպիոս։ Այս երեքութեան աստուածուհին *Սէխմէտ* էր, որ Բաստ անու-

նով պաշտված էր Բաբաստում, և որի նշանը կատուն էր։ Պատ, ինչպէս կտեսնենք, Ողերիսից կամ Իսայից մի պակաս արուշ դէմք է, և սիրուվելամբ է միանում ուրիշ աստուածներին։ Պատ—Սօխարի ու Պատ—Սօխար—Ողերիս ունկի յաճախ են պատահում, բան սոսկ Պատ։

Ամա հին լիազարուվեան, այսինքն՝ առաջին վեց հարատեւվիւնների պլխաւոր աստուածները։ Երբ մենք հասնում ենք 12-րդ մեծ հարատեւվեանը՝ արձանագրուվիւնների մէջ բայ մնացած՝ Ք. Ծ. 2500 և 2000 լմ. լ. ի միջև, այն ժամանակ լվում է մեզ որ այս աստուածները ապօտացել են, և ծայրագոյն աստուածներ գարձել են նոր աստուածուվիւնները, այն է՝ Թէրվի ու նրա պրացի շրջանների տեղական աստուածները։ Նրանցից ամենանշանաւորները լվէրլական լիազարար Ամ՚օնի պատմուվիւնն է, լվելա սկզբում հէնց այդպիսի նշանակուվիւն ունէին Կօսլաի երկրագործական աստուածուվիւն Խէմ, և Գէլմօնաթիսի Մոնթա աստուածները։ Ամօն՝ ծածկված, այսինքն՝ բնուվեան ծածկված ուժը, սակաւ է մենակ պատահում, ինչպէս և Պատ. սովորաբար նա միացած է ուրիշ արևի աստծու հետ, պլխաւորապէս Ռայի հետ։ Երկրագործուվեան աստուածները ստիճանաբար պլուս են խնամարհեցնում արևի աստուածների առաջև, որոնք փոքր առ փոքր իւրացնում են ողջ եգիպտական կուլտը. պիւրակեան կոչտ ձևացումները՝ պղպաբերուվեան պզպտիարի հետ միացած՝ յետին դծի վրայ են կանգնում արքայական տաճարների կրօնի առաջևը, որ պլխաւորապէս ուղղված է լոյսի աստծուն։

ՀՆԱԳՈՑՆ ԿՐՕՆԸ ՄԻԱՑՈՒԾՈՒՆ ԷՐ ՈՐԴԵՕՔ։ Մենք եգիպտական պլխաւոր աստուածներից լիշեցինք միայն մի քանիսի անունները նրանց անվիճ բանակուվիւնից։ Սրանք այն լիազարներից ու քաղաքային բուրմերից սերված աստուածներ են, որոնք անչուշտ ժողովրդի կրօնական բարձրուվիւնն էին ցանկանում։ Նրանցից յարգված աստուածները կարող էին

հասնել նրանց մի այդպիսի նպատակի։ Կարելի է ենթադրել որ եգիպտական կրօնի լուսաւոր աստուածների կուլտը բռնկած էր եգիպտական մտքերը շրջելու դէպի լիէլիմը։ Այս պրուվիւնը լուսաբանելու համար առաջ ենք բերում մի շարք օրհնեգրների քաղուածք, որոնք մնացել են մեզ համար 18-րդ հարատեւվիւնից (1590 լմ. Ք. Ծ. առաջ), որ հատանական է՝ ամենի հին է։

Դ Է Պ Ի Հ Օ Ր Ը

«Աստուածների ընդունում են համաշխարհային հրամայպին... նա աշխարհը գառում է իր ուղածի պէս. նրան են առարգրված երկինքն ու երկիրը։ Նա մարդկերին տալիս է իր հրամանները լվ ներկայ, լվ անցեալ ու լվ ապագայ սերունդներին՝ եգիպտացիներին ու տարաշխարհիներին։ Նա է կառավարում արևային լուսատուի պատյորը, քամիները, ջրերը, բոլոր բոյսերի ծառը և բոլոր բոյսերը։ Լինելով բոլոր սերմերի աստուածուվիւնը՝ նա է տալիս բոլոր խոտերը և երկրի պտղաբերուվիւնը։ Նա է դուրս կանչում պղպարիրուվիւնը և այն պարկեում ողջ երկրին։ Բոլոր մարդիկ հիացածեն, բոլոր սրտերը կակղած և ուրախ, ամենքը խոնարհում են նրա առաջ։ Ամէն որ գովարանում է նրա բարուվիւնը, նրա բնչուվիւնը ընդգրկում է մեր սրտերը, մեծ է նրա սէրը բոլոր սրտերում»։

Դ Է Պ Ի Տ Է Գ Ո Ւ Ց Կ Ա Մ Պ Տ Ռ

«Նրան ենք պարտական մենք որ ձեռքերով աշխատում ենք, ոտքերով մեն գալիս, աչքով տեսնում, ականջով լսում, ունգներով շնչում, որով անվհեր գառնում, որ ձեռքերս ուժ ունենք, որ բոլոր աստուածներն ու մարդիկ և բոլոր կենդանիները զրծում են մարմնով ու բերանով, որ ունենք բանականուվիւն ու խօսելու կարողուվիւն, մի խօսքով որ ամէն բան կայ սրտներում և լեզուներիս վրայ»։

ԴԻՊԻ ՊՏՈ ՏԱՆԻՆ

«Ո՞, փառաբանում ենք ստեղծուն, որ բարձրացել է երկինքը և նուաճ կուրծքը ծածկել է իր շրջանով (кругъ), որ ստեղծել է աստուածներն ու մարդիկ՝ իրանց բոլոր սերունդներով, որ ստեղծել է բոլոր երկրներն ու ցամաքները և մեծ ծովը իր անունով, որ նշանակում է՝ «լիազ լինի երկիրը»։

ԴԻՊԻ ԱՄՈՆ ՌԱ

«Փա՛ռք քեզ՝ ամէն բան ստեղծողիդ, օրէնքի տիրոջդ, աստուածների հօրդ, մարդերի ու կենդանիների արարչիդ, սերմերի տիրոջդ, դաշտային պաղանների կուրը ստեղծողիդ... Միակ, որ նմանը չունես... միակ լիազաւոր, միակդ աստուածների մէջ, որ կրում ես շատ անուններ, որոնց թիւ չկայ»։

Պայ մի սիրուն օրհներգ՝ ուղղված Նեղոսին, որ նոյնպէս ներկայանում է իբրև գլխաւոր աստուածութիւն ու կառավարիչ, որ կերակրում ու պահպանում է բոլոր էակները։ Այս և սրանց նման ուրիշ օրհներգներից արված էին կարևոր եզրակացութիւններ եգիպտական հնագոյն կրօնի բնոյթի վերաբերմամբ. այսինքն՝ որ այս օրհներգներ գրողները պէտք է ծանօթ լինէին միակ ճշմարիտ աստծուն և գիմելիս լինէին նրան այս տարբեր անուններով, այնպէս որ եգիպտական կրօնի իսկական սկզբնաւորութիւնը կարելի է համարել նախնական մօնօթէիսմը։

Գան իրաւ մի քանի գրուածքներ, որոնք մինչ անգամ վերոյիշեալներից զօրեղ կերպով են ցոյց տալիս որ եգիպտական կրօնը առաջ է եկել այն հաւատից, որ ընդունում է մի գերագոյն աստուածութիւն։ Լը Պաժ—Ռընուֆ առաջ բերված կտորների հետ ցոյց է տալիս Թուրանեան պապիրուսի մի տեղը, որի մէջ խօսքերը դրվում են ամենակարող աստծու

բերանը, որ ինքնագոյ է, ստեղծել է երկինքն ու երկիրը, ջրերը, կեանքի շնչառութիւնը, կրակը, աստուածները, մարդիկ, կենդանիները, անասունները, սողունները, թռչունները և այլն։ Այս էակը առում է հետեւեալը.

«Ես երկնքի ու երկրի արարիչն եմ... Բոլոր աստուածներին ես եմ տվել մէջները գանվող հոգին։ Երբ աչքերս բաց եմ անում՝ լուսանում է, երբ փակում եմ՝ մթնում է։ Առաւօտը ես խէպէրան եմ, միջօրէին՝ Ռան, երեկոյին՝ Տումը»։

Թը Լա-Ռաժէ հաստատում է թէ եգիպտական կրօնը, որ առաջ միաստուածեան էր, պարունակում էր իր մէջ գերագոյն աստծու ամենու հաւատը և նրա ստորոգելիքները իբրև արարչի ու մարդերի օրէնստուի՝ չեզմից այս գրութիւնից և սկսեց հետզհետէ մօտենալ բազմաստուածութեանը։ 5000 տարուց աւելի է անցել արդէն այն ժամանակներից, երբ Նեղոսի հովտում սկսվեց աստուածութեան մէկութիւնն ու հոգու անմահութիւնը փառաբանող մի օրհներգ. իսկ վերջին շրջաններում մենք տեսնում ենք Եգիպտոսը՝ ամենաանդուստ բազմաստուածութեան վիճակում»։

Լը-Պաժ-Ռընուֆի ասելով՝ եգիպտական կրօնի վսեմ կողմի հնութիւնը կարող է ապացուցվել. սակայն մենք ստիպված չենք՝ գալու այն եզրակացութեան, որ եգիպտական կրօնը հանուր առմամբ ուրիշ բան չէ, բայց եթէ՝ յետադիմութիւն ու անկում։ Եթէ սկզբում Եգիպտոսում գոյութիւն ունեցող միաստուածութեան վրայ մենք պէտք է նայէինք իբրև վերուստ տրված մի պարգեի՝ որը պահպանելու համար մարդիկ անընդունակ գտնվեցին՝ ապա այս կրօնի սկզբնաւորութիւնը շատ տխուր պէտք է լիներ։ Սակայն թէպէտ միաստուածութիւնը Եգիպտոսում այնպէս վաղ երևան եկաւ, բայց անհրաժեշտութիւն չկայ ենթադրելու թէ նա չէր ձեռք բերված մարդկային ջանքերով։ Մեր բոլոր գիտեցածից երևում է որ սա մարի ուշ թէ սկզբնական, այլ հաստնացած պատուղն էր, և ձեռք էր բերված երկար զարգացումից յետոյ։ Մարդ-

կային մարդ համար, որի հիմքը աստծու առևծածներն են՝ անկարելի է սեփական ջանքերով հասնել նրա անեռանելի կատարելիության ու աստուածայնությունը ըմբռնելու հատատին: Մարդ այսպիսի երևույթների սկզբունքները հանդիպում են վայրենիների մեջ, և եգիպտացիք, նայելով իրենց ինչպես բազաբակրթությունը բերած սկզբունքից զարգանալով առաջ էր գնում մինչև յուրին ժամանակների հայտնությունը՝ իրանց փակված հոգում ուրիշ ամեն ազգից լավ կարող էին մշակել մի այնպես հայեցք այն աստուածության վրայ, որի առևծածներին նրանք հրկրպագում էին:

Աստուած, որ իր լուսատու երկնքից կառավարում էր այն մեծ միապետությունը, որի կառավարիչը իրան հատատարը չունէր աշխարհս երեսին, որի երկրատուր բնակարանը մի անհուն չրեզ տաճար էր, որ միացրել էր իր իշխանության տակ երկար ժամանակ իշխանացած վայրերը և տարածել էր իր ազդեցությունը հեռատար երկրներում, երբ ծագում էին Եգիպտոսի զօրքերը—այսպիսի մի էակ իր երկրպագուների, քուրմերի ու բարեսոհմիկ անձերի միջոցով արժանացել էր ամենաբարձր գովեստների, նրանցից պաշտվում էր և նրանց շնորհիւ բարձրացել էր երկնքի ու երկրի միւս բոլոր զօրությունները, և փառաւորվել, իբրև ամեն բան ստեղծող ու կառավարող:

Այսպիսով նկատելի է մի մեծ միտք մեջ դէպի մոնոթեիզմը, սակայն լոկ մարդաբնական, ազգատարած մարդ. երկրի պայմանները խանգարում էին նրա իրագործումը իբրև հանուր հատատի կամ իբրև ներգործող սիստեմի իրագործում: Մինչ անգամ այս հին մտածողների մարդ ամենաբարձր գործչների միջոցին, երբ նրանք բուն երևույթին խոսում են համաշխարհային ու վերազգի աստծու մասին՝ նրանց մտքերի հիմքը տեղական աստուածությունն է, մի էակ, որ իր համար տաճար ունի մի որոշ տեղում, որի սիմբոլը մի որոշ կենդանի է, որի հետ կապված է տեղական լեգենդան, և որ

վայելում է ժողովրդական առանձնաշնորհ կուլտը: Սրանք են այն փաստերը, որոնք խափանում են եգիպտական մոնոթեիզմը մարդ գործչը և կրկին այն վերադարձնում երկրին: Այս պատճառով դժուար է գտնել Եգիպտոսում հանրապէս զուտ մոնոթեիզմ՝ հատատ աստուած, որից զատ ուրիշ աստուածություն չկայ: Առաջ բերված բազաւածքներից վերջինը ամենից տեղի է մօտ մի այսպիսի մոնոթեիզմի. սակայն այս հատվածի վերջին տողը մի կերպով չի կարող մոնոթեիզմական կոչվել:

Աչառել կարելի է յիշել 18-րդ հարստության վերջը կրօնական բարեփոխություն անելու մի փորձ, որ ձգտում էր եգիպտական բոլոր կուլտերը կենտրոնացնել մի առարկայի վրայ: Ընտրված աստուածությունը սակայն նիւթական աստուածություն էր՝ արեգակն լուսատու Առէն,—և թէպէտ եգիպտական բոլոր աստուածները հակումն էին ցոյց տալու արևի աստուածություն դառնալու՝ այստեղ մի քանի արեգակն աստուածներ անշուշտ միւսներից յաւն էին, և Առէն նրանցից լաւը չէր: Խուէն—Առէն Լաւատուրը, կամ «արեգակն լուսատուի փառքը», արքայական ֆանատիկը, որ արել էր այս միացման փորձը, երկար ժամանակ աշխատում էր իրագործել իր միտքը, բայց նրա փորձը անաջող է եղել, և նրա մահից յետոյ նոր կրօնից հրաժարվեցին մինչ անգամ իր սեփական ընտանիքի անդամները: Այն, ինչ որ ցանկանում էր հաստատել Խուն—էն—Առէն՝ զուրկ ունի ներկայ մոնոթեիզմին էր նմանում, բան այն ամենը, ինչ որ կար Եգիպտոսում: Նա հայածում էր միւս աստուածներին և կամենում էր երկրում մէկ աստուած հաստատել, բայց եգիպտացիք չէին կարողանում հանձնել այսպիսի մի բացառականություն: Եգիպտացին շատ աստուածների էր հաւատում և, երկրպագելով ջերմեռանդության մէկ առածն՝ ոչ մի դէպքում չէր մերժում ուրիշ տեղերի ուրիշ աստուածների գոյությունը կամ կարողությունը: Մինչ անգամ տարաշխարհիկ աստուածները

նրա աչքում ճշմարիտ ու հզօր էակներ էին, իւրաքանչիւրը իր սեփական հոգի վրայ: Մի ատաուած, որ դանվում է երկրպագուի աչքի առաջ՝ բարձրանում է միւսներից, և նրա մասին այնպէս են խօսում, որպէս թէ կարիք չկայ միւս ատաուածները ուշադրութեան առնելու. բայց երկրպագուն դեռ հնարաւոր էլ չէ համարում կասկածել ուրիշ ատաուածների գոյութեան մասին և իրան ազատ չէ զգում նրանց երկրպագելու պարտաւորութիւնից, եթէ դէպք լինէր այցելելու նրանց երկիրը:

ՍԻՆԿՐԷՏԻՄԸ: Օրհներգները ատաուածների վերաբերմամբ պարունակում են իրանց մէջ մի քանի իմացական դրութիւն, և մենք կարող ենք համառօտակի յիշել նրանց: Ինչպէս տեսանք՝ սինկրէտիսմը (հակառակ կուսակցութիւնների միանալը) շատ նշանաւոր տեղ է բռնում եղիպտական մարի մէջ և մտնում է նրա մարմինն ու արիւնը: Մրի է բազարի ինաստաուածութեան մէջ մեծ ատաուածները մի կերպ կարող են արբունիք կազմել, որտեղ մէկը կամ երկուսը կառավարում են միւսներին. բայց անթիւ հատուածների մէջ մենք ատաուածների յարաբերութիւնները ուրիշ կերպ ենք տեսնում կարգաւորված, այնպէս որ նրանք միացած, մէկ ամբողջութիւն են: Դա «երևում է» իբրև Տում. ատաուածութիւնը մի տեղ մէկ անունով կամ մի դէմքով է յայտնի, իսկ միւս տեղ՝ ուրիշ անունով ու դէմքով: Երկու ատաուածութեանց անունների միացումից կազմվում է մի նոր ատաուածութիւն. և յաճախ ժամանակներում այս կրկին, երբեմն կամ էլ աւելի բարդ անուններով ատաուածները դառնում են նշանաւոր ատաուածներ: Դա—գարմախիս ու Ամոնռա ապա յին ատաուածներ են և շատ վկայութիւններ են խոսել իրանց մասին:

Սինկրէտիսմից մինչև պանթէիսմը (բնապաշտութիւն) մի փոքրիկ բայլ կայ: Բաւական է որ ատաուածները դրկվեն իրանց միմեանցից անջատող անհատական բնաւորութիւնից, և ամեն ատաուածներից մէկը, աւելի մեծանալով և ուժեղանալով կարող է կլանել մնացած բոլորին, եթէ միայն նրանք նրա ձեռքն են: Այն դրութեամբ, որ զանազան ատաուածներ ունէին Եգիպտոսում, նրանք չէին կարող անհետանալ, որով տեղի հետ նրանց ունեցած կապը նրանցում կեանք էր պահպանում. բայց նրանք այնքան էին նման միմեանց, որ նրանցից մէկը կարող էր միւսի ձևը համարվել և նրանց բազմութիւնը՝ նրանցից մէկի ձևը: Այն ատաուածութիւնը, որ աւելի էր առաջ գնացել միւսներին կլանելու գործում, Ռա—է, Թէբէի՝ արևի մեծ ատաուածը: Ռային ուղղված ապօթքը պատկերացնում է այս ատածուն իրրև յաւիտենական և ինքն իրան ծնող ու 75 տոհմաւորում երգարանում է այն 75 կերպարանքը, որ այս ատաուածը ընդունում է իր վրայ. սրանք ատաուածների և աշխարհի բոլոր մեծ տարրերի ու մասների կերպարանքներն են: Առանձին ատաուածութիւնները անկախ իշխող լինելու վիճակից զրկվում են Ռայի տեսակների ասպիճանին, և այսպիսով եղիպտական պանթէօնում հաստատվում է մէկ իր տեսակի միութիւն: Բայց Ռա այն ատաճան գործել չէ որ ընդունի այս ձևերից յատկապէն և իրրև եղակի Տատաւոր՝ կառավարի սեփական իշխանութեամբ իր ուզածի պէս: Նա ատաուած է, բայց ոչ անկախ ատաուած. իր պատճառած հիացմամբ նա պարտական է ոչ թէ թէխոմին, այլ՝ պանթէխոմին: Եգիպտոսում մէկը չէ կարող կառավարել շատերին. Ռայի՝ իրրև գերագոյն ու անկախ ատածու մարդու փառաբանութիւնը չէ խանգարում այլ և այլ էակների պաշտամունքը զանազան քաղաքներում: Մէկ ատաուածութիւնը գոյութիւն ունի միմիայն բուրմների, և ոչ ժողովրդի համար. և նրան հատատալը մինչ անգամ փորձել չէ տալիս արմատախիլ անելու կենդանիների երկրպագութիւնը կամ ատաուածապաշտութիւնը միմիայն նրա վրայ կենդրոնացնելու: Այսպիսի փորձերի բացակայութեան մէջ մենք տեսնում ենք մի վճիռ, որ դատապարտում է այն կրօնը, որ մարդ ամենաստոր կենդանին է տեսել, որպէսզի ժամանակի ընթաց-

բում ոչ թէ լաւանայ, այլ վատթարանայ ու անհետանայ, մըշտական տուրը չմոռնալով աշխարհային կրօնի զարգացման մէջ։

ԿՈՒԼՏ։ Եգիպտական հոյակապ տաճարը ունէր աստուածութիւնը մի գեղեցիկ բնակավայր յատկացնելը, բան այն բանին յարմարեցնելը, որ աստուածապաշտութեան միջոցին ժողովրդի հոգ բաղմութիւն պրաւի։ Տաճարը համայնքի համար մի ժողովատեղ էր (որովհետև եգիպտական քաղաքում շուկայ չկար) և մի ամրոց յարձակման դէպքում (որովհետև քաղաքները ամրացրած չէին)։ Բայց այն ժամանակը, երբ տաճարի գաւիթները բաց էին ժողովրդի համար՝ տաճարում այնպիսի տեղ էլ կար, որտեղ կարող էին միմիայն բուրմունքը ծխանոցել, որտեղ գտնվում էր սրբազան տապանակ՝ (աստուածութեան սիմբօլը), և որտեղ կատարվում էին գոհաբերութիւնները։ Պաստիներները զարդարում էին տաճարի շուրջը ոչ թէ նրանց հրկիզազերելու նպատակով, այլ ուխտապրութեան նուէրներ էին և նպատակ ունէին աստուածութեան անօրինութեանը ծածկել այն մարմինը, որի մէջ նա կարող էր մտնել իր յանկութեամբ։ Կոճղը արևի մէկ այսպիսի նշանն է կամ մարմնացումը։ Որոշ օրերում սրբազան ատաղձներն ու կենդանիները ծածկարի պէս պատեցնում էին տաճարապատակական կալուածքներովը կամ նաւարկում էին տաճարապատակական լճով, կամ շրջեցնում էին մինչ անգամ ողջ նահանգովը՝ գաշտօրայքի ու ժողովրդի բնակարանների միջով. և այսպիսի դէպքերում ներկայացումներ էին տալիս, որոնք նշանագի կերպով պատկերացնում էին աստուածութեան պատմութեան գլխաւոր երևոյթները։ Այսպիսով մանաւանդ անձը ծանօթանում էր աստուածութեանը. մեծ էր լինում հանդէսը, և ուրախութիւնը պատճառակէտին էր հասնում, երբ աստուածային հովանաւորներն ու նահանգի բարերարները, որոնք սովորաբար կենում էին իրանց հոյակապ առանձնութեան մէջ, առաջ էին անցնում՝ կարճ ժամանակով իրանց հաւատարիմ համայնքի հետ միախառնուելու համար։ Աստուածների կուլտը Եգիպտոսում, ինչպէս և հին ժամանակի բոլոր ժողովուրդների մէջ, պետական գործ էր, և ոչ անձնական։ Սա հասարակական ծառայութեան մի գլխաւոր ճիւղն է. պետութիւնը գտնում է աստուածների անմիջական կառավարութեան տակ. երբէք ոչ մի տեղ սրանից աւելի մի անպայման աստուածապետութիւն (թէօկրատիա) չէ եղած։ Թագաւորը աստծու զաւակն է,—մի հասկացողութիւն, որ յաճախ ամենանիւթական մտքով է ընդունվում,—և, պատկանելով այսպիսով վերմարդկային սերունդի՝ որանով դառնում է երկրպագութեան առարկայ և մինչ անգամ ինքը գոհեր է բերում իրան։ Թագաւորի գլխաւոր հոգացողութիւններից մէկը՝ աստուածութեան համար մի շքեղ բնակարան շինելն է. ինքը թագաւորը գոհաբերութիւններ է անում ամենանշանաւոր պէսպերում։ Աստուածութիւնը իր սրբազան տապանակի մէջ հետևում է ժողովրդին պատերազմի գնալիս և կռվում է նրա հետ միասին, այնպէս որ իւրաքանչիւր պատերազմ սրբազան է համարվում։ Քուրմերը հասարակական պաշտօնեաներ են և յաճախ անպատիժ ազդեցութիւն ունեն։ Թագաւորը հաստատում է նրանց իրանց պաշտօններում. նրանք պատմում են հասարակական բեմից, ինչպէս մենք կարող ենք տեսնել ծննդոց պրոմը. վարդապետութեան կամ արուեստի հետ կապ ունեցող բոլոր պաշտօնները նրանց ձեռքումն են պահվում։ Այսպիսի հաստատութիւնների մէջ կրօնը պժուար թէ կարողանայ ապատ զարգանալ. այստեղ դեռ հեռու է այն ժամանակը, երբ մարդկի կոկսեն կամաւոր կապեր հաստատել իրանց սեփական հոգևոր նպատակների համար։ Սակայն աշխարհիկ հիերատացին անշուշտ ունէր իր սեփական մասնաւորութիւնը, և նրա մասնակցութիւնը հասարակական մեծ պաշտամունքների մէջ ունէր իր նշանակութիւնը։ Թէպէտ և պետական աստուածները համարեա ամենքը բարի են՝ բայց շատ էին երկրպագում նաև Սէտին շար ուժին. թէ մասնաւոր դրութիւնների մէջ և թէ հասարակական փաստաթղթե-

բում նրան դիմում էին այն ամենքը, ովքեր արևէ պատճառով երկիւղ էին կրում նրանից: Ամենքը պարտաւոր էին մեղմաբար ու յարգանքով վարվել կենդանիների այն տեսակների հետ, որոնք սրբազան էին համարվում Սէտի նահանգում, նոյնպէս և ուրիշ սրբազան կենդանիների: Մասամբ էին հաւատում կախարդութեանը. շատ դէպքերում հարկաւորվում էր հագիւ տեսնել ծածկված ուժերի հետ. հիւանդութիւնը վերագրվում էր շար ոգիների արարքին և բժշկվում այնպիսի անձերի երդուեցմամբ, որոնք, ինչպէս հարկն է, դաստիարակված ու կրթված էին այդպիսի արուեստների մէջ: Օրագոյցը լի էր բազմատար ու անթոյր օրերով, առանձին ձեռնարկութիւնների համար յարմարաւոր ու անյարմար օրերով. հմայականներին ու կախարդանքներին հաւատացող հանրաւարած մի բան էր: Այսպիսի երեւոյթների մենք կարող ենք հանդիպել ժողովրդի մէջ, մինչ անգամ եղել ազգի կրօնական միտքը հասած է բարձրագոյն աստիճանների:

3. ԱՆԴՐԴԵՐԱԶՄԱՆԱՑԻՆ ԿԵԱՆՔԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ: Հին եղիպտոսի վերաբերմամբ մեր ունեցած տեղեկութիւնների մեծագոյն մասը բաղված է դամբարաններից: Ո՛չ մի ժողովուրդ երբէք այնպէս հոգ չէ տարել մեռելների վրայ, ինչպէս եղիպտացիք, և այնպէս շատ չէ մտածել միւս աշխարհի մասին: Կենդանի մարդը պէտք է պատրաստվէր՝ մեռնելուց յետոյ գոյութիւն ունենալու համար, իսկ մեռածը իր՝ այս աշխարհում թողած սերունդներից պահանջում էր մի բարդ կուլտ: Պրօնի այս մասում զարգացումը ամենագօրեղն էր, և նրա այս մասը իր վերջնական ձեւում ամէն բանից էլ լաւ է յայտնի:

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՈՒԵԼԸ: Անդրկերեզմանային աշխոյժ վարդապետութիւնը եղիպտացիների մէջ սկսվել է այն հաւատից, որ հանուր է բոլոր նախնական ժողովուրդներին և նկարագրված է վերեր: Մարմնի մեռած ժամանակը հոգին դեռևս չարունակ ապրում է. յետոյ նա վերադառնում է դէպի մարմինը, այս պատճառով չհաղորդված է այն բանով, թէ ինչպէս են վարվում մարմնի հետ: Մեռելների հոգատարութիւնը կենդանիների առաջին պարտաւորութիւնն է. այս պատճառով մարդը պէտք է ամուսնանայ որ սերունդ ունենայ, որը մահից յետոյ կվերարերվի նրան պատշաճաւոր ուշադրութեամբ: Մարմնի հետ թաղվում են զանազան իրեր՝ որպէսզի ոգին օգտվի նրանցից, դրա հետ միասին ժամանակ առ ժամանակ նրան յետոյ էլ նուէրներ են տրվում: Սա ուրիշ բան չէ՝ բայց եթէ նախնական հաւատ. բայց եղիպտացիք աւելի լիովին գործադրութիւն տվին նրան, քան որևէ ուրիշ ժողովուրդ: Նրանք աշխատում էին մարմինը անոյծելի անել, զմռսելով և վերահաստատելով նրա բոլոր գործարանները, որ ոգին կարողանար կատարել կենսական բոլոր գործառնութիւնները: Մումիան տեղաւորում էին, որքան կարելի էր, այնպիսի տեղ, որ ոչինչ բան չանհանգստացնէր նրան մինչև դարերի ապառումը. դերեզմանը յաւիտենական 'ընակարան էին անուանում: Մինչ անգամ տուրքեր էին սահմանված՝ բոլոր ապագայ ժամանակների համար մեռելներին պատկանող նուէրները ապահովելու նպատակով:

Պրօնի այս կողմը այնպէս էր մշակված եղիպտոսում որ չէր կարող չսանձել այնտեղ մի իր տեսակի բնոյթ: Մի ամբողջ շարք անունների կան այն բանի համար, ինչ որ կենդանի է մնում մարդու մահից յետոյ. ասում էին թէ՝ այս նրա սիրտն է, նրա հոգին, նրա սուտերը, նրա լուսաւոր մասը. յետագայ վարդապետութեան մէջ այս բոլորը կապված է և դառնում է մէկ տեսութեան մասները. մարդու բոլոր այլ և այլ մասները, որոնք մահի պատճառով ցրվել էին, պէտք է նորից միանան՝ նրա անձնաւորութիւնը կատարեալ համարվելուց առաջ: Իսկ գլխաւոր անունն է «Կա», մարդու պատկերը, կամ ինչպէս ասկլինը, ոգին՝ նրա անմարմին գոյքը, որ արկածաւոր ուղեորութիւններ է անում, և սրին նուէրներ են տրվում: «Կան» կիրակրի պէտք է գրում, և նրան կանոնաւորապէս

տրվում են այն ամէն բաները, ինչ որ կարող են նրան հարկաւորվել. նրան պէտք են ձեռնարկ և ուսում, և սա տրվում է նրան, պատկերներ նկարելով ու արձանագրութիւններ քանդակելով մահարձանի պատերի վրայ կամ այն տապանի մէջ, որտեղ ամփոփված է մումիան. մինչ անդամ այսպիսով նրա այն պէտքը, որ նա զգում է հասարակութեան ու ասուածապաշտութեան մէջ՝ կարող է այս և է աստիճան գոհացում ստանալ: Եգիպտոսը բացառութիւն չէ այդ հաւատի նկատմամբ, թէ հարստութեան ու դիրքի արտօնութիւնները շարունակվում են մահից յետոյ, և թէ հարուստը աւելի շատ բան կարող է անել իր յաւիտենական երանութեան համար, քան աղքատը: Թագաւորի մումիան պահված է բուրգի մէջ, որտեղից ոչ մի տեղ փոխադրվելու չէ. բարձր դասակարգի եգիպտացին՝ ժայռում դուրս փորված կամ «մաստաբ» կոչված մի սիրուն շինութեան մէջ ամրած շիրիմում. իսկ շրաւորը պէտք է բաւականանայ զմռսման հասարակ եղանակով և յաւագոյն դէպքում՝ կղմինդրի շիրիմով. ոչ մի քարմ նրա վրայ չի տօթի:

2. ՀՈԳԻՆ ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ: Պատմութեան սկզբնական առաջ՝ մեռելների վերաբերող այս հանուր հասւատները ու ծէսերը արդէն կապված էին Եգիպտոսում արևի աստուածութեանը երկրպագութիւն տալու հետ. սա մի առհասին կարևորութիւն ունեցող բայլ է, որ անասելի կերպով շատ բան է աւելացրել պաշտօնի (զոհացմունքի դրդման աստիճանի զարգացումը) և նմանօրինակ կրօնի բարոյական (մօրալ) ուժին:

Միլտօն «Լիկիդ»ում ասում է.

So sinks de daystar in the ocean bed:
And yet anon repairs bis droopind bead.
And tricks bis beams, and with new-spangledore
Flames in the forelead of the morning sky:

So Licidas sank low, but mounted high*).

Բայց ինչ որ Միլտօնի համար մի բանաստեղծական ցնծութ էր, այն հին եգիպտացու համար հաւատ էր: Եթէ աստղը էր, այն հին եգիպտացու համար հաւատ էր: Եթէ աստղը նրա աստուածութիւնն էր, ապա նա իր պատանիութեան ժամանակ Ուորդսվորթի հետ չէ ասել.

Our fate how different from thine, blest star, in this,
That no fo-morrow sholl our beams restore**),

այլ համապատասխան էր որ նրա աստծու պատմութիւնը, որ եղել էր արեմտեան հորիզոնի տակը և խաւարի մէջ, շրջան անցնելուց յետոյ նորից լոյս աշխարհ էր եկել ու զմայլեցրել էր՝ մի անկասկածելի ցուցումն էր, թէ ինչ բանի պէտք է սպասէր նա իր մահից յետոյ: Մումիան կապում էր Նեղոսի վրայով և թաղում արեմտեան երկրում, որ և աստղերկրեայ աշխարհն էր՝ մահկանից լինելու մեռելների հանգրստուն ու յաջորդ պանդխտութիւններին: Որովհետև այս վայրում չեղապալ կայ, այս պատճառով մեռելը յանձնարարվում է չեղապալի պրսկ ունեցող Անուբիս աստուածութեան հովանաւորութեանը, որ հոգու նոր ճանապարհի համար մի կոճակ բաց անում և տանում մեռելը աստուածների մօտ: Աստղերկրեայ աշխարհը լնամբով այլ և այլ մասների է բաժանված, և այնտեղ բնակող չարի ու թշնամութիւնների պատկերները շատ պէսպէս են: Մեռս կողմից՝ նրանում տեղափոխված է և այն մեծ երանութիւնը, որ կարող է ձեռք բերել ննջեցեալը, եթէ նա իրը և իրանից յետոյ մնացած բարեկամները սրա համար պատշաճաւոր միջոցներ են ձեռք առնում: Երկրաւոր կեանքը կրկնվում է այնտեղ իր լրիւ

*) «Այսպէս է յերեկվայ աստղը աստղերի ամիկանոսի ծոց, և առկայն յանկած նորից երևում է նրա գեղացրած գլուխը, որ պարզարված է մեռելի կայծակնաման փայլով, և փայլատակում է վաղորդեան երկնքի ճակատին. այսպէս Լիկիդ ցած էր իջնում, բայց վեր էր բարձրանում»:

**) Ի՜նչպէս գերազանց է մեր ճակատագիրը քանից, որ չունենայ յուսառու, այն մարդ, որ ոչ մի «էգուց» վերանորոգելու չէ մեր ճառագայթները:

պրոպումներով ու բանականութիւններով, բայց ազատ է երկիւղից ու աւերումից։

Այն մեհեանների վարդապետութիւնը, որոնք արեւի աստծուն ուղեկցում են աստրերկրեայ աշխարհը և ապրում նրա հովանաւորութեան տակ՝ շատ հին ծագումն ունի. մենք տեսանք այս վարդապետութեան վաղեմի ձևերից մէկը՝ Ռա աստծուց անբաժան։ Բայց իր ամենալայն տարածմանը այս վարդապետութիւնը հասել է՝ Ողիրիսից անբաժան։ Եգիպտոսի բոլոր ժողովրդի համար Ողիրիս աստրերկրեայ աշխարհի հրամայողն էր, և մեհեանները նրա հետ էին լինում։ Ննջեցեալների՝ Ողիրիսի հետ նոյնանալը կատարեալ նոյնացում էր. ննջեցեալը դառնում է Ողիրիս, ստանում է աստուածութեան անունը, և արձանագրութիւնների մէջ կոչվում «այս ինչ Ողիրիսը»։ Իզիդա նրա բոյրն է, Հօր՝ նրա պաշտպանը, Ենիրուս՝ նրա մանեակին ու ուղեցոյցը։ Մանեակցելով աստուածութեան հշտութիւններին՝ հոգուն վերապահված է մանեակից լինել նրա յաղթանակին ու կենդանանալուն։

3. ՄԵՒԵՆՆԵՐԻ ԳԻՐՔԸ եգիպտական գրականութեան ամենանշանաւոր արձանն է, գլխների մի հաւաքածու, որոնցից շատերը շատ հին են, որոնք խօսում են ինչպէս հոգին ճանապարհորդում է աստրերկրեայ աշխարհով։ Այս գիրքը *Թաղման ծիսարան* էլ է կոչվում, կամ աւելի ճիշտ՝ «Ուղեկցնացութեան յայտնութիւնը»։ Սա հոգու ուղեկիցն է աստրերկրեայ աշխարհում և պարունակում է այն բանաձևերի նկարագրութիւնը, որ հոգին պէտք է ունենայ իր տրամադրութեան տակ, որպէսզի յաղթահարէ այս վայրի բոլոր վտանգները և հեշտ անցնի նրա վրայով։ Թէ ինչպէս է վերականգնում անձնաւորութիւնը, այսինքն՝ ինչպէս նրա զանազան մասները նորից կապվում միանում են, ինչպէս է հանգուցեալը ճանաչում իրան հանդիպող ոգիներին, ինչպէս է պատահում որ նրա առաջը բացվում են դռները,—գրանք են ամէն այլ և այլ գլխների նիւթերը. հոգու ուղևորութեան ամ-

պութիւնը կախված է այս նիւթերին ծանօթ լինելուց։ Գլխների մէջ պարունակված խօսքերը սոսկ խրատներ չեն, այլ պիտի ուժ ունեն խոչընդոտները աշնչացնելու և դռները բանալու։ Այս պատճառով կարևոր է որ մարդ ուսումնասիրի այդ նիւթերը նոյն իսկ կենդանութեան ժամանակ և նրա յիշողութեան գործը հեշտացնելու համար՝ պապիրուսի կամ նուրբ կտաւի վրայ գրված մի քանի գլուխներ գալարուն դրութեների մէջ պահվում էին մի արկղում մումիայի հետ կամ գրվում էին շիրմի որմերի վրայ։ Այսպիսով եգիպտական ոչ մի աշխատութիւն չէր պահվում այնքան պատճէններով, ինչքան ծիսարանը, սակայն մի ծրարում պահում են նրա գլխներից մի քանիսը, միւսում՝ միւսները։

Անձնաւորութեան բուրգը՝ մեհենալուց յետոյ բացատրէս հմայութիւններից է կախված արդիօք։ Կախված է դա այն բանից, թէ քանի այդպիսի բանաձև նա կարող է յիշել կամ նրանցից որքան են արտատրել նրա համար ազգականները։ Մեծ մարդու մէջ տարակուսանքներ չեն առաջ գալիս այն բանում, որ մինչ անգամ իր բոլոր հասկացողութիւններով միասին՝ նա ինքը կարող է անարժան համարել իրան անմահների հետ ապրելուն։ *Մեռելների գիրքը* մեծ մասամբ գրված է նախնական աստիճանի վրայ, երբ մարդ չէ կասկածում իր աստուածութեան պիտութեանը և հաւատացած է որ յաղթելու է ամէն բան, ինչ որ չէնամական է, ունենալով պատրաստի որոշ պիտութիւններ, բայց ոչ մարդու սիրտ։ Սակայն մի քանի գլուխներում աւելի անցած ձայնանիշներ (նօտեր) են տալում։ Մի բանաձև կայ՝ Ողիրիսի սրտից բիծը լուանալով վայր բերելու մասին, և եթէ արտաբերելը մաքրութեան համար գանազան միջոցներ կան՝ ապա կան և միջոցներ այն բանի համար, որ մոռացութեան տրվելին նրա մեղքերը։ 125-րդ մեծ գլխում մեռելը ոտք է դնում երկու ճշմարտութիւնների բնակարանը և ազատվում իր մեղքերից՝ աստուածների երեսը տեսնելուց յետոյ։ Այստեղ նա կանգնած է

42 դատաւորների առջև (համեմատիր եգիպտական նահանգների հետ), որոնք կոչւում են ճշմարտութեան տաճարներ, որոնցից իւրաքանչիւրը դատում է մի որոշ մերր, և նրանցից իւրաքանչիւրին նա պէտք է յայտնի որ, ապրելով երկրի վրայ՝ չէ գործել այդ մեղքը։ Մեռելը պէտք է ասի «Ես չեմ գողացել, կեղծաւորութիւն չեմ արել, չեմ դաւաճանել տաճարներին պատկանած իրեր, չեմ մանկակից դատարկութիւնների, և չեմ հայհոյել տաճարներին, չեմ խլել սրբազան կենդանիների բերքը, չեմ վիրաւորել տաճարներին, չեմ գրպարտել ծառային իր տիրոջ առաջ և այլն։ Թեև մի որոշ դիծ չէ անցկացրած բարոյական ու ծխական կամ պայմանական յանցանքների միջև. բարոյական պարտաւորութիւնները արտայայտած են բացասական ձևով և հանդիսանում իրրև սրան կապանքներ, բայց ոչ իրրև ներչնչում։ Սակայն այստեղ մի մեծ քայլ է արված դէպի առաջ, ցոյց տալով որ տաճարային օրէնքը հետևում է ոչ միայն կրօնական, այլև հասարակական գործերին և մինչ անգամ ուրոյն անձնաւորութիւնների մարերին։ Տաճարները մարդերից ոչ միայն զոհարերութիւններ են պահանջում ու յարգանք դէպի սրբազան կենդանիները, այլև իրանց պարտաւորութիւնների կատարումը, իրրև բարեպաշտների ու պրայիների պարտաւորութիւններ, պահանջում են որ նրանց բերանը չպղծվի և սրտերը մաքուր մնան։ Այս մեծագոյն է, եթե մենք ասենք՝ մարդու արդարացումը կախված է այն բանից, եթե նրա հոգին ինչ դրութեան մէջ է մահուան րոպէին։ Նրա սիրտը կշռված է, այդ ժամանակ ճշմարտութիւնը դրված է կշռի միւս թաթում, և եթե սիրտը չատ ծանր գտրս գայ, ապա նա այլևս չի կարող ապրել. իսկ եթե կշռիլը աջով է վերջանում, ապա մարդը արդարացած է և ուղարկվում է Աաուի դաշտերը՝ Ոսիրիսի երանելիների վայրը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի այս վարդապետութիւնը տաճարային վարդապետութեան պէս՝ որ մի ժամանակ ծագած էր եգիպտացիների մէջ, ըստ երևոյթին պէտք է բերէր դէպի մի մաքուր հոգևոր կրօն, որից ըստ երևոյթին անապաշտութիւնը վիճակված էր անհետանալ։ Բայց ոչ այդ և ոչ միւս դէպքում այս հետևանքը չտեսնվեց։ Եգիպտական կրօնի ամենավերջին պատմութիւնը ցոյց է տալիս կախարդական տարրի զօրանալը և քրմական դասակարգի բարձրանալը, որ իրագործել էր իրան կրօնական բոլոր գործառնութիւնները, մինչ որ երբէք չէին անում նախկին բարքերը, որոնք սերտ կապված էին ժողովրդի պետական կեանքի հետ։ Վարդապետութիւնը հետզհետէ դառնում է բազմաստուածեան ու մոլեռն, խորհուրդներն ու սիմբոլները հետզհետէ աւելանում են, և այս բոլորը նպաստում է քրմերի ազդեցութեանը նրանց ապագայ ու անսահման յաւիտենականութիւնների վրայ։ Իսկ միւս կողմից՝ ժողովրդական կրօնը հետզհետէ ընդունում է իր մէջ այնպիսի տարրեր, ինչպէս՝ կախարդութիւնը, հմայակաները հօրօսկոպները*). և թէպէտև բարոյականութիւնը չէ բնկնում այն բարձր մակերևոյթից, որին նա հասել էր լուսաւոր տաճարների տիրապետութեան ժամանակից՝ սակայն ժողովրդի ոգին թուլացել էր հետևիլ կրօնական զարգացման և հաշիւ հայրենասիրութեան, որի ժամանակ առաջ չկատարվելը բանի գնում՝ անհնարին էր դառնում։ Գժուար է ասելը, թէ Եգիպտոսի կրօնից խնայելս ինչն էր շարունակ ապրում միւս երկրներում, որոնք գանվում էին նրա ազդեցութեան տակ։ Եգիպտոսի կրօնական արուեստը, միևնոյն ժամանակ և նրանում անխուսափելի կերպով մարմնացած գաղափարների որոշ ցոյցաւոր, թափանցիկ անշուշտ հետևից վրայ՝ Փիւնիկեում.

*) Տաճարում մարդու բաղդը գուշակելը նրա ծնվելու ժամանակ։

Հ. Թ.

և, ինչպէս կանոններ, կրօնականի վերաբերմամբ Յունաստանը շատ բանով պարտական է Փիւնիկէին։ Նրանից շատ առաջ, երբ Իլիդա ու Սերապիս մտցրված էին Հռոմում իրանց ե-գիպտական ձևով, Ոզիրիսի լէգենդան նոր անուններով ծաղկում էր Յունաստանում, և անդրդեզեմանային կեանքի յուսական վարդապետութիւնը, ինչպէս նա մէկնվում էր միստէրիաներում*), մի քանի պիտականների կարծիքով,—եգիպտական ծագումն ունեն։ Յոյներին ու հռոմայեցիներին այս կրօնը թվում էր խորհրդաւորութեամբ լի մի կրօն և յաճախ տարակուսանքի մէջ էր գցում նրանց. նոր աշխարհի համար նա բան բնական ներկայացնում է իբրև մի այնպիսի կրօնի մի մեծ օրինակ, որ չէ կատարել այն, ինչ որ խոստանում էր, և որի բարոյական դեղեցիկ ձգտումները խեղդվել էին անապաշտութիւնների ձեռքից, որի ծաղիկը նրա ուժերից վեր էր։

*) Հոգևոր ողբերգութիւն, որի բովանդակութիւնը առնված էր հին կտակարանից։

Հ. Թ.

Գ. ՄԱՍ

ՍԷՄԻՏ ԽՈՒՄԲԸ

Ա. ԳԼՈՒԽ

ՍԷՄԻՏՆԵՐԻ ԿՐՕՆԸ

Ժամանակակից ուսումնականը սէմիտ կամ սէմիտ (սէմական) ժողովուրդ ասելով՝ հասկանում է արաբները, հրէաները, բանաանացիք ու փիւնիկեցիք, ասորիները կամ արամէացիք, վերջին բաբելացիք ու ասորեստանցիք։ Այս ցուցակը տարբերվում է այն ցուցակից, որին մենք հանդիպում ենք Ծննդոց գրքի 10-րդ գլխում, որտեղ հրէաներից առաջ Քանաանում բնակող ցեղերը տեղ են բռնում մարդկային ընտանիքի մի ուրիշ, աւելի ցած ստորաբաժանման մէջ։ Ծննդոց գրքում իրբև ստորաբաժանման սկզբունք հատանաբար երևան է գալիս աշխարհագրական դրացիութիւնը. իսկ բաժանման ժամանակակից սկզբունքը լեզուի նմանութիւնն է։ Վերոյիշեալ ժողովուրդները խոսել կամ դեռևս խոսում են մարդկային խոսքի մէկ տեսակին պատկանող լեզուներով։ Լեզուի նմանութեանը նայելով՝ արիևի նմանութեան մասին եղրակացութիւն անելը շատ ծանրակշիռ նշանակութիւն ունի, այնպէս որ սէմիտ բարբառներով խոսող ժողովուրդները համարվում են մի ցեղի պատկանող և նախնական ժամանակներում իրար կողքի բնակող ժողովուրդներ։ Թէ որտեղ պէտք է փնտռել սէմիտ ցեղի օրօրոցը՝ այդ հարցին ներկայումս պիտականների մեծամաս-

նավթինը պատասխանում է, Բաբիան ցույց տալով։ Այդ երկրից սէմիտները ցրվել են ամեն կողմ, այնպէս որ սէմիտ լեզուներով ու սովորոյթներով լցվել են բոլոր տարածութիւնները հարաւային Բաբիայից մինչև հիւսիսային Սորիա, Իրանեան լեռներից մինչև Միջերկրական ծովը, և Եփրիկայի հիւսիսային եզերքներովը։ Այս ցեղը հաստատուն պետութիւններ չէ հիմնել և մեծ ընդունակութիւններ չէ ցոյց տվել արուեստի կամ գրական ոճի մէջ. իսկ ինչ վերաբերում է կրօնին՝ նա աչքառնին տվել է անասելի զօրեղ զարկեր, որոնք ուժգնապէս պէտք է ներգործեն մարդկութեան վրայ, բանի որ կլուի Մարդարէի անունը կամ կը բարդվի Քրիստոսի վարդապետութիւնը։

Եթէ մեր յիշած ժողովուրդները, որոնք վերջը հետացել էին միմեանցից, առաջ են եկել մէկ տեղից, որտեղ առաջ տարերքից են եղել միասին՝ ապա մենք պէտք է հետաքրքիր համարենք որ իրանց ցրվելուց առաջ՝ նրանք ունեցել են մի հանուր կրօն, և որ այդ կրօնը եղել է այն հետաքի հիմքը, որ զարգացել է տասնեակ ժողովուրդներից իւրաքանչիւրի մէջ։ Այս պատճառով իրրև առաջին պարտք մենք մեզ առաջարկում ենք հետեւեալ հարցը. ինչ կրօն է եղել սէմիտների հանուր կրօնը։ Սրա պատասխանը նշանաւոր չափով պահում ենք վաղամեռիկ պրօֆէսսոր Ռօբերտսոն Սմիթի դասախօսութիւնների մէջ։ Նրա միտքը, որի մէջ դրայի կերպով միացած են խորին էրուդիցիան (շատ կարդացած լինելը) ու համարձակ վարկածները, այն ամենանշանաւոր տարրերից մէկն է, որ մտել է ոչ միայն սէմիտ կրօնը, այլ հանրապէս նախնական կրօնի նախնական պատմութիւնը։ Հեղինակը դասախօսութիւնները շահապրգռված էր նախապատմական մարդու և նախնական հիմնարկութիւնների ուսումնասիրութեամբ, և նրա գրքի մէջ շատ բան վերաբերում է կրօնի զարգացման մի այնպիսի ժամանակաշրջանի, որ աւելի կանուխ էր, քան սէմիտ տիպի կազմակերպութիւնը։ Այն հարցում, թէ սէմիտ կրօնի տիպը

տիպիր*) բնոյթը ինչով է տարբերվում ուրիշ կրօններից՝ Սմիթ մեր դիտաւոր հետեւակութիւնն է։

Սէմիտ ժողովուրդները հնդիրոպացիներից, կամ որոնց հետ մենք համեմատելու ենք նրանց՝ տարբերվում են մեծ ընդունակութիւններով և երեւակայութեան համապատասխան սպրուտութեամբ։ Սէմիտը նեղ պատկերների տէր է, բայց նա այդ պատկերները գործական կերպով ու լուսին է գործադրում։ Նրա մտքերի դասաւորութիւնը դիտաւորապէս գործական է, և միմիայն գործական միտումները կարող են դրդել նրան՝ իրան փիլիսոփայութեան տալու. բայց դէպի կոսմոգոնիաները նա բնական հակում չունի։ Այնինչ հետեւում է, որ նրա սեփական կրօնական հայեացքները ներկայացնում են իրան աւելի իրրև փաստեր, քան գաղափարներ, և այս փաստերի հետ էլ է հարկաւորվում հաշիւ տեսնել, ինչպէս կեանքի միւս սովորական փաստերի, իսկ նրանցից խոյս տալը անկարելի է։ Այսպիսով նրա կրօնական համոզումները ծայրայեղութեան են հասնում՝ մինչ անգամ խոշոր ու ծանր գոհերի գնով։ Սէմիտի կրօնը պակաս փափկանկատումներ (համպրօմիս) ու հաճոյքներ է թոյլ տալիս, քան արիականինը. սա մի աւելի գործական յատկութիւն ունեցող գործ է։ Այս պատճառով սէմիտների մէջ կրօնի ազդեցութիւնը կեանքի և մարդու գործողութիւնների եղանակի վրայ շատ զօրեղ է. նրանց միջև էութիւնը մեծ, իսկ ձեը փոքր նշանակութիւն ունի, բան արևէ մի ուրիշ տեղ։

Եթէ մենք սկսենք զարգացող սէմիտ կրօնի մի հանուր տիպ փնտռել, արդեօք աւելի դրաեղ կարող ենք գտնել։ Բաբելոնում չենք կարող գտնել, իհարկէ, ինչպէս տեսանք, բաբելական կրօնը աւելի հին բազաքակրթութեան է պատկանում, քան սէմիտները։ Չենք կը փնտռենք այս տիպը Փիւնի-

*) Տիպական (տեսակին վերաբերեալ) նշաններ, որոնցով որոշվում են մի տեսի այլեայլ տեսակները։

Հ. Թ.

կէի բաղաքային կեանքումն էլ։ Մենք այն դանում ենք արաբական թերակղզու առանձնութեան մէջ, այն տեղ, որ այժմ սէմիտ ցեղի օրօրոցն է համարվում. և որտեղ կեանքը մինչև օրս էլ քիչ է փոխվել՝ համեմատած այն բանի հետ, ինչ որ էր նա Աբրահամի օրերը։ Այնտեղ դեռևս գոյութիւն ունի համայնքի այն տիպը, որի հետ Վէհտաւէնի ու Սմիթի կարծիքով կապված է եղել սէմիտների ամենահին կրօնը։ Դա այն խոպատական կանոնների համայնքն է, որոնք ոչինչ կենտրոնական հեղինակութիւն չեն ճանաչում, խոտաւոր չունեն և դեռ ազգութիւն չեն։ Սա ընկերվարական զարգացման մի այնպիսի աստիճանն է, որ բոլոր հին ժողովուրդների մէջ նախնեաց է լինում ազգութեան ու խոպատրութեան ծագմանը։ Այս բնաստիճանը հրէաների համար անցել գնացել էր այն ժամանակ, երբ մենք նրանց առաջին անգամ ենք հանդիպում։ Նրանց դրացի մոլաբացիք ու բանաանացիք արդէն անցել են այդ բնաստիճանը։ Բայց այս բոլոր ժողովուրդները առաջ են եկել համայնքի մի այնպիսի դրութիւնից, որի ժամանակ մի մեծ ու բարեկարգ համայնք չէ եղած, այլ եղել է լոկ մանր ու անհանգիստ ցեղերի մի բազմութիւն. չէ եղած մի կենտրոնական հեղինակութիւն՝ արդարադատութիւն մրցունելու համար, իսկ սպանութեան վրէժխնդրութիւնը սպանվածի կրնային ընկերներին էր վերապահված։

Իսկ կլանի կրօնը, որի գաղափարները որոշում են յուրաքանչիւր սէմիտ սիսաէմների բնոյթը՝ կարող է կարճ կերպով այսպէս դուրս բերվել։ Իւրաքանչիւր կլան ունի իր սեփական աստուածը, որ յամենայն դէպս նրա արիւնակից հայրն է ու նախնին. ուստի և աստուածութիւնը պատկանում է մի որոշ և ոչ ուրիշ կլանի։ Այս մտքով ուղիղ է, որ սէմիտները լոկ բուն մօնոթէիստներ են եղած. բայց սա ուղիղ է նաև բոլոր նախնական ատէմիստական կամ կլանային համայնքների վերաբերմամբ։ Մարդը ծնվում է համայնքում, ունենալով այսպիսի մի աստուածային առաջնորդ և կարող է երկրպագել միմիայն այս մէկ աստուածութեանը։ Եթէ նրան վռնտեն կլանից՝ այն ժամանակ նրան կարած կլինեն աստուածութիւնից, և նա այլապէս չի կարող մուտք ունենալ մի այլ կլանում, բայց եթէ, ընդունելով նրանում իրեն մի սարերվրեայ հովանաւորեալ (կլիենէտ)։ Միւս կողմից՝ աստուած իր կլանային երկրպագուների հետ միացնող օղակը շատ ամուր է։ Աստուածութիւնը, երբ նրա հետ խորհուրդ են անում ու զոհեր բերում,—որոնցով կլանի անդամների կապը վերանորոգվում է աստուծու և միմեանց հետ՝ մասնակցում է նրանց բոլոր ձեռնարկութիւններին։ Նրանց գործարները իր գործարներն են. եթէ նրանցից մէկը անարգված է լինում կամ սպանված, աստուածութիւնը միանում է նրանց՝ վրէժխնդիր լինելու. նրանց համար կրօնական պարտաւորութիւնը՝ միմեանց հատարիմ լինելն է և ցեղական այն սովորոյթների պահպանումն է, որոնց իր հաստատութիւնն է տալիս աստուածութիւնը։

Այսպիսով սէմիտները ապրած կլան, այնպէս էլ աստուած ունեն, և այդ աստուածները մի առանձին կերպով չեն զանազանվում միմեանցից։ Միևնոյն ժամանակ, մինչդեռ կլանները գտնվում են մշտական կռւի մէջ՝ մի աստուածութիւն առանձին կերպով չի կարող առաջ քաշվել։ Բայց երբ մի կլան յաղթում է միւսներին՝ կարող է բարձրանալ մի ծայրագոյն աստուածութիւն, որ իշխում է ամենի վրայ, ինչպէս իշխողը իր մերձաւորների ու նրանց գաւառների։ Բայց աստուածութեան այս ձևի մէջ արդէն արտայայտված է սէմիտ կրօնի ոգին։ Սէմիտի աստուածութիւնը բնութեան ուժը չէ, որ բոլոր մարդկերին յայտնվում է միևնոյն կերպարանքով, այլ մի առանձին կլանի անդամը, մի անձ, որի վարքերամբ կլանին պատկանողը բնական առարկելիութեան նոյն գրութիւնն է պահպանում, ինչ որ իր հօր կամ իշխանաւորի վերաբերմամբ։ Աստուածութիւնը իր անունը առնում է ոչ թէ բնութեան երևոյթից, այլ նայելով մարդկային յարաբերութիւններին։ Նա կամ «Բահալ» է, այսինքն՝ պարոն

կամ պետ, կամ «Աստն» տէր, յետագայում նա «Մէլէր» է, այսինքն՝ թագաւոր։ «Էլ»ը, որ նշանակում է Տէր՝ մի ուրիշ սեմական տէրմին է և, ինչպէս մեր լեզուով «աստուած» կոչվում է ամեն աստուածային էակի։ Այս աստուածութիւնները ինչպէս տեսնում ենք, ամենքն էլ արական սեռի աստուածութիւններ են. սակայն չի կարելի ենթադրել թէ սեմիտները աստուածուհիներ չեն ունեցել, որովհետև նրանք էին աստուածուհիները Բաբելոն մտցրել, որտեղ առաջ չկային։ Նախնի ժամանակներում, ինչպէս ականատես պեղումներից մի բանիսը կատարում են, շատ սեմիտներ աստուածուհի ունէին, բայց աստուած չունէին։ Համայնքի մայրապետական (матріархальное) դրութիւնը, երբ միմիայն մայրն էր կառավարում ընտանիքը, նախնեաց էր նահապետական դրութեան, և ապրիսով աստուածուհու թագաւորութիւնը, նախընթաց էր աստծու թագաւորութեան։ Իւրաքանչիւր համայնք ունէր իր սեփական Ալ-լահը՝ «Ծիրանի»ն, ինչպէս նրան անուանում են Արաբիայում, մի խիստ ու պահանջող տիրուհի, որին շատ է չհամեմատ յետագայ ժամանակի անվայելուչ աստուածուհիների հետ. սեմիտների բոլոր երկրներում կարելի է գտնել այդ տիրուհու նախկին իշխանութեան հետքերը։ Երբ առաջին տեղը բռնեցին արական սեռի աստուածները, էգական աստուածութիւնը դարձաւ մի պակաս որոշ կերպարանք և վերջապէս դարձաւ արական աստուածութեան պատճէնը, համարեա կորցնելով իր սեփական բնաւորութիւնը։ Առասպելաբանութիւնը չէր կարող շատ առաջ գնալ աստուածների այսպիսի սահմանափակ շրջանների միջից։ Աստուածութեան պատմութիւնը զուգադիպում է ցեղի պատմութեան. աստուածները այն աստիճան կախումն ունեն իրանց յարգողներից, որ չեն կարողանում բռնկեցման մի համայնք գտնել կամ պատմութիւններ յեղուրկ իրանց գործունէութիւնից։

Ահա սեմիտ աստուածների բնական պատմութեան մի կողմը, բայց այս պատմութիւնը ունի և մի այլ կողմ։ Ընդ

երկրները, որտեղ հէնց սկզբից բնակում էին սեմիտները՝ լի էին սրբազան վայրերով. և մենք պէտք է ուշադրութիւն անենք, որ կրանի աստուածութիւնն էլ այն երկրի մի որոշ մասի աստուածութիւն է, որ համարվում է նրա բնակարը, որի վրայ նայում են, իբրև նրա սեփականութիւն, միևնոյն ժամանակ այս երկրի պատարերութիւնը վերագրվում է նրա գործունէութիւն։ Ս. Գրքում կարդում ենք սրբազան ծառերի, սրբազան ջրհորների, սրբազան քարերի ու պարիսպների և այն բարերի ու սիրեների մասին, որոնց յարակից են պատարերութիւններ։ Մեր սեմիտ երկրներում էլ կային սրբազան գետեր ու բարձունքներ։ Սեմիտները իրանց բաժինն ունէին այն ժամանակութեան մէջ, որ ողջ աշխարհը սասկել էր նախնական ժամանակներից, ունէին նախապատմական կրթնական վայրեր ու աստրկաններ, և Քանաանը լի էր բազմութիւն ուղիղ արձանացրած բարերով։ Այս ցեղի համար բնութիւնն էլ սկզբում շնչաւորված էր. աշխարհս լի էր ոգիներով։ Ոգու ձայնը նրանց լսելի էր լինում ծառի ճիւղերի ճայթման մէջ, խորհուրդի համար նրանք պեղում էին առուներ։ Արտեղ էլ բնութեան մէջ որևէ խորհրդաւոր բան պատահէր՝ ամեն տեղ ենթադրվում էր ոգու ներկայութեանը, իսկ աստուածները՝ նրանց կարծիքով ոգիները բնակում էին անտառներում, որտեղ սկզբում պահվում էին վայրենի գազանների արջերը, և այդ վայրերին մօտենում էին երկիւղով։ Սեմիտների զանազան ճիւղերը երկար ժամանակ պահպանում էին այս սնապաշտութիւններից շատերը. սակայն նրանց պէտք է արգելացնել այն բանում, որ մեզ մատուր ոգիների այս աշխարհը փոխարինել են աստուածների խմբերով, իսկ աստուածներին յարակից կախարդութիւնը՝ այդ վերջիններին ուղղած կրօնական ծէսերով։ Ոգին կամ ջինը, որ բնակում էր մեծ անտառում և կանոնաւոր կուլտ չունէր, բայց ամենքի երկիւղի առարկան էր, որին հարկաւորվում էր ի գուլպ շարժել ու գոռալ խորհրդաւոր արուեստներով,—տեղի էր տալիս

կանային աստուածուհիներ, որ բնակուհին էր հաստատել միևնոյն տեղում և կանոնաւոր երկրպագուհին էր առանում իր կյանքի անդամներից. բարը գտնել էր մի աստուածուհիան սեմրօլը, որին ինդրում էին և որ համաձայնել էր նայնանալ նրանց հետ կյանքի համար սահմանված ևյսերի համար: Ասպիսով կյանային աստուածները գտնել էին տեղական աստուածներ, նայելով իրէ կյանները ինչպես էին ձրդուում հաստատվել որոշ տեղերում, և իւրաքանչիւր սրբազան վայր պրսում էր այն կյանի աստուածուհիները, որ բնակում էր այդ վայրի շուրջը: Սկսեցին կարծել, իրէ իւրաքանչիւր աստուածուհիան գանվում է այնտեղում, որտեղ արևէ մի նշանաւոր դէպքում արտայայտվում էր նրա կարողուհիները, և ով կամենում էր դիմել այս աստուածուհիանը, պէտք է այնտեղ գնար: Կարագ էր պատահել, որ աստուածուհիները իր գօրուհիները յայտնէր մի ուրիշ տեղ իր այն երկրպագուներից մէկի առաջը, որոնք պանդխտուհիան մէջ էին՝ ինչպես Եհովա երևեցաւ Յակոբին Բէթէլում: Այն ժամանակ այդ տեղն էլ էին սուրբ համարում և այնպես էին կարծում իրէ գոյէ այն տեղ հնարաւոր լինի յարաբերուհիան մէջ մտնել աստուածուհիան հետ. այնտեղ առաջ քաշվեց այն, ինչ որ վերաբերում էր կուռքին, այնպէս որ աստուածուհիան հետ ունենալիք յարաբերուհիւնները կարող էին առաջ գալ պատշաճաւոր կերպով, ինչպես պատմվում է Յակոբի մասին: Ժամանակով այն էլ սկսեցին ենթադրել, իրէ իւրաքանչիւր աստուած իր համար իրան պատկանող երկիրն ունի, որտեղ և՛ միայն հնարաւոր է երկրպագել նրան. այսպիսով երկիրը բաժան-բաժան է արված մի ամբողջ շարք աստուածուհիւնների միջև. տեսնում ենք, օրինակ, որ Նէէման, որ ցանկանում էր Եհովային երկրպագել իր մօտ Ասորիքում՝ երկու ջորիով հող է տանում Եհովային, որպէսզի Ասորիքում Իսրայէլի աստծուն պատկանող մի կտոր հող ձեռք բերի:

Մնում է յիշել մի հանգամանք, որից մի պզալի տար-

բերուհին է առաջ գալիս սէմիտների ու արիականների միջև: Իրրև արիական կրօնի հետևող՝ հանդէս է գալիս բնաւանիքը. օջախը նրա սեղանն է, իսկ բնաւանեական կուլտի աստուածները՝ բնաւանիքի մեռած նախնիքը: Սէմիտների կրօնում այս կուլտը չկայ, օջախը սեղանի տեղը չէ բռնում. կրօնական համայնքը ոչ իրէ բնաւանիքն է առաջ բերում, այլ՝ կյանը: Նախնիների կուլտը իրէ երբեմն գործադրած էլ լինեն սէմիտները, ինչպէս հիմ կայ ենթադրելու (արաբները ուշով կապում էին մեռած զօրավարի գերեզմանին), ապա շատ վաղ է կորցրել ամեն գործնական նշանակուհիուն: Թէպէտ հետագայ սէմիտները հաւատում էին մեռելների գոյուհիան շարունակուհիանը՝ բայց նրանց համարում էին ինչպիսիյ բոլորովին զուրկ էակներ, «երկրի մէջ գրված առուներ», և չէին երկրպագում նրանց: Անդրպետեղմանային աշխարհը այս պատճառով շատ չնչին տեղ էր բռնում սէմիտների մարի մէջ: Կրօնը սահմանափակված էր այս կեանքով. այնպէս էր համարվում, որ մեռելուց յետոյ մինչ անգամ վերջ է տրվում կրօնին: Մարդը պէտք է վայելէ աստուածուհիան ընկերակցուհիւնը այս կեանքում. մեռելուց յետոյ նա չի կարող մասնակցել զոհաբերուհիանը, չի կարող ոչ ծառայել աստուածուհիանը, ոչ շնորհակալուհիւն անել նրան:

Առածներից տեսնում կարելի է հասկանալ սէմիտների զոհաբերուհիան բնոյթը: Զոհաբերուհիւնը տեղի է ունենում ոչ իրէ բնաւանիքում, այլ՝ այն տեղում, ուր մարդիկ կարծում են իրէ բնակում է աստուածուհիւնը, կամ որտեղ գտնվում է նրան ձեռնտու սեմրօլը: Սովորաբար դա ուղիղ արձանացրած մի մծղօլիտ (միատեղաղ քար) է, որպիսիք պատահում են աշխարհիս բոլոր մասներում, և զոհաբերուհիան միջոցին գլխաւոր գործողուհիւնը՝ այս քարը նոր մորմած զոհի արիւնով արդկին էր: Ցայսիսով արիւնը մօտեցնելով քսում էին աստուածուհիանը, իսկ կյանի անդամները կարող էին

միևնոյն ժամանակ ձեռքը պիպզնել բարին*). այս գործողությունը նշանակում էր, թէ ասուածն ու ցեղի անդամները, հպվելով արիւնին՝ խոստովանում էին իրանց՝ մէկ արիւնի պատկանող և վերանորոգում էին այն կապը, որ իրանց կապում էր իրար հետ։ Նախնական սէմիտ զոհաբերութեան միւս նշանը այն է, որ կենդանին մորթելու և արիւնին հլուվելու արարողութեան հետ տեղի էր ունենում խնջոյք, որի մէջ աստուածութիւնը համարվում էր այնտեղ և եթէ սեղան նուաճ այդ ժամանակ. նրա բաժինը դրվում էր բարի կամ զոհարանի վրայ։ Երբ սկսեցին կարծել թէ սա բնակում է բարձրում, այն ժամանակ նրա բաժինը կիզվում էր, որպէսզի զոհի հոտը կամ ուրիշ նորը էութիւնը կարողանար բարձրանալ նրա կողմը։ Հին կտակարանի պատմական հին դրքերում կարելի է գտնել զոհերի շատ օրինակներ, որոնք բերվում էին թէ համայնական կապ արտայայտելու և թէ հանդէսներ սարքելու համար. իսկ հին Իսրայէլի համար կենդանին մորթելու իւրաքանչիւր դէպք մի զոհաբերութիւն էր, և իւրաքանչիւր զոհաբերութիւն՝ մի խնճոյք։ Ժողովուրդը պարում է և ուրախութիւն անում իր աստուածութեան առջեւ, որի բարեհաճութեանը նոր ևս համոզվել է մի անդամ էլ իր աշքի առաջ կատարված հաղթութեան արարողութեամբ։ Այն ձեռնարկութիւնը, որ մտածել են նրանք այսպիսի ժամանակ, նախ բացատրվում է աստուածութեան հաճութեամբ, այնպէս որ ժողովուրդը համարձակ կարող է ձեռնամուխ լինել նրան. ցեղի հատկական (կօրպօրատիվ) ոգին զօրանում է այս ցեղի առաջնորդի հետ ունեցած չարաչար վերանորոգելու շնորհիւ. բոլոր ամուսինները անցնում են. կրօնական արարողութիւնը աստուածութեան երկրպագուներին պարտութիւն է տալիս ու անմիջապէս երջանկացնում, մինչ անդամ նրանց հակում է կատարի հրճուանքով։

Սակայն այս անհոգ երջանկութիւնը, կրօնական արարողութիւնների հետ միացած՝ լոկ սէմիտների մի յատուկ բան չէ, այլ բնորոշ է հանրապէս նախնական աշխարհի կրօնի համար։ Միմիայն այս ցեղին չէ յատուկ և այն, որ նա (ցեղը) չէ դիմում անձնատուրութեանը, իբրև անձնատուրութեան մէջ անհատը է ցեղի մի անդամը, այնպէս որ անձնական վշտերն ու ձգտումները քիչ են կարեկցութիւն շարժում։ Ծիսաւոր դէմքը անհատի է աստուածութեան ներկայութեամբ։ Կրօնը իր էութեամբ մի ուրախ բան է. մեղքի մասին դեռևս չեն մտածում, և եթէ զոհերը վատ են դնում՝ ապա ցեղը չէ կասկածում, որ պատշաճաւոր զոհաբերութիւնները ներից ու խոստումներից յետոյ աստուած կարձակել կրկին նրա վրայ և կվերականգնի նրա բարեկեցութիւնը։ Այս բոլորը բացատրվում է սէմիտին չէ վերաբերում, այլ՝ ամէն նախնական կրօնի։ Մանաւանդ սէմիտներին պատկանում է,—կրկնենք այս գլխի սկզբում ասածը,—այն, որ նրանք երկրպագում են այն աստուածներին, որոնց յարաբերութիւնները դէպի իրանց երկրպագուները ամուսնութեան են համայնքի մէջ գոյութիւն ունեցող ձևերից։ Աստուած իրան յարգողների շրջանում հանդիսանում է իբրև հայր, տէր, ըմբիշ։ Նա պատկանում է նրանց սեռին, նա կրանի անդամներից ամենամեծն ու ամենազօրաւորն է. նա նրանց է պատկանում և ուրիշ ոչ ոքի։ Սա էէ, ինչպէս պրօֆ. Ռօբերտսոն Սմիթն է ենթադրում՝ բնում է տօտեմիստական գաղափարներից, էէ չէ բնում՝ յամենայն դէպս բերում է մարդուն դէպի մի բացատական ու անհատանելի կրօն, որի հետ կատակ անել չէ կարելի։ Աստուածութիւնը, լինելով մարդու ազգը և նրա կրանի անդամ՝ նրանից ունի հնազանդութիւն է պահանջվում, բան մնում նախնիքը։ Նա ատրվայ ու օրվայ եղանակների համեմատ չէ վոխվում, և նրա յանկութիւնների ու պահանջների

*) Այս միևնոյն սովորոյթը կայ և Պալեստի հայերի ու զրացիների մէջ։ Ննջեցեալի տապրը սերնդում գտնող հոգևոր հայրերը ձուքները թևքից կերպով գիպցնում են մատուցարանին, որ այդ միջոցին մէկը պատերնում է նրանց միջև։ Հանգստարանում գերեզմանի օրհնելիս էլ գերեզմանատարին են ձեռքը գիպցնում։

Հ. Թ.

վերաբերմամբ կասկածներ չեն կարող լինել։ Սէմիտ կրօնը, մինչ անգամ այս առումիանի վրայ, ունի շատ ուժեղ բնոյթ և բարեյաջող հանգամանքներում հեշտ կարող է առանձնապէս տիրապետող նշանակութիւն ու ազդեցութիւն։

ԺԱ ԳԼՈՒԽ

ՔԱՆԱՆԱՑԻՔ ԵՒ ՓԻՆԻԿԵՑԻՔ

Երբ Իսրայէլի որդիքը անցան Յորդանանը և հաստատուեցին Պալէստինէում՝ տեսան որ այս երկրում բնակած է մի ցեղ, որ խօսում է իրանց հետ մօտաւոր լեզուով և ունի է քաղաքակրթուած։ Ճետագայ ժամանակի իսրայէլացիք բանասացիների վրայ մի այնպիսի արհամարհանքով էին նայում, որով ցոյց էին տալիս թէ նրանց ունէի սակաւ ցեղի պատկանող էին համարում. սակայն իրօք այդ երկու ժողովուրդների միջև այդպիսի տարբերութիւն չկար։ Նրանք պատկանում էին մէկ ցեղի և ունէին շատ հանուր գաղափարներ ու սովորոյթներ։ Երևում էր որ նրանց կրօնների միջև մեծ նմանութիւն կար. եթէ ոչ՝ Իսրայէլը այնպէս երկար ժամանակ ու այնպիսի խիստ փորձանքի չէր հանդիպի՝ նուաճուած ժողովրդի ծէսերն ընդունելու համար։

Միմիայն իսրայէլացիք չեն, որ նեղս են խուժել քանասացիների երկիրը ու հաստատուել այնտեղ։ Այս երկիրը երեք ազգ են նեղս խուժել՝ փիւնիկեցիք, փղշտացիք և արթայեցիք, և խուժելու միջոցին առաջիններն ու վերջիններն սէմիտներ են եղել, մուսկ երկրորդներն էլ։ Փղշտացիների կրօնը, որոնք Միջերկրական ծովի հարաւ-արևելեան անկիւնում էին հաստատուել՝ սէմիտ կրօնն էր, որից յայտնի են՝ ձուկ-աստուածուհին Դագօն, Էկրօնեան Բահալ և Աշտօրէտ, հաւանաբար Ասկալօնեան։ Փղշտացիք վերջ ի վերջոյ կորցրին իրանց բացառական բնոյթը և այլևս անկախ ժողովուրդ չէին։ Մենք այլևս պէտք չունինք նրանց յիշելու։ Փիւնիկեցիք, որոնք բնակել էին Սորիայի հիւսիսային եղերքում, որտեղ հանդիպում էին միմեանց դէմ արևելք ու արևմուտք տանող առևտրական մեծ ճանապարհները, և որտեղ կարող էին լաւ նաւամատոյցներ կառուցանել՝ դարձան վաճառական ժողովուրդ և գործունեայ յարաբերութիւններ էին պահպանում արևելքի մեծ իշխանութիւնների, Եգիպտոսի ու կղզիների և արևմտեան Եւրոպայի հեռաւոր եղերքների հետ։ Լինելով հին աշխարհի ուղեորներ՝ նրանք իրանց կողմից Եւրոպային տուել են Ասիայի ոչ միայն անուշեղէնքներն ու գործարանները, այլև պատկերներն ու սովորոյթները, և աշխարհին մի անհրաժեշտ ծառայութիւն են մատուցել, դէպի մի նոր կեանք դարձնելով արևելեան ժողովուրդների ներհոգ ուժերը։

Մի համառօտ գլուխ կնուիրենք բանասացիներին ու Փիւնիկեցիների կրօնին ոչ թէ այն պատճառով, որ այս ժողովուրդները ըստինքեան մի մեծ նշանակութիւն են ունեցել, որովհետև նրանցից ոչ մէկի մէջ ոչինչ ինքնուրոյն ու կեանքի համար նախատեսմանուած բան չկար, այլ այն պատճառով, որ նրանց կրօնը լոյս է սփռում ուրիշ կրօնների վրայ, որոնց վերապահուած էր մի մեծ ապագայ։ Պատերազմ մղելով քանասացոց կրօնի դէմ՝ Իսրայէլի կրօնը առաջին անգամը ցոյց տուեց իր իսկական բնոյթը և պէտք է կազմակերպուէր այս բնոյթի համեմատ։ Թէ Իսրայէլը ու թէ Յուդաստանը շատ բան են առել Փիւնիկէից (ինչպէս արտաքին պաշտամունքին վերաբերող գործերում, այնպէս էլ առևտրական գործերում։

ՔԱՆԱՆԱՑԻՆԵՐԻ ԿՐՕՆԸ քաջ յայտնի է մեզ Հին Ուխտից։ Սա մի բոլորովին սէմիտ սիստեմ է՝ ունենալով իր զարգացման մէջ մի քանի առանձնայատկութիւններ, ինչպէս արդէն տեսանք մեր՝ մասամբ Բաբելոնին վերաբերեալ գլխում։ Տեղական համայնքն ընդունում է մի անտեսանելի ա-

ռաջնորդ, որին հանդիպում է սրբական վայրում, որի վրայ նայում է, իբրև ծայրագոյն սերոջ, որի բարեհաճությանը չէ կասկածում և որին ծառայում է զոհաբերություններով և յայտնի շրջաններում ուրախությունի կենդանի արտայայտություններով: Աստուածությունը կոչվում է Բահալ: Սա առանձին մի յատուկ անուն չէ, այլ մականուն. սա նշանակում է պարոն, տէր, և Բահալը իրրև աւելուած՝ կարող է ունենալ իր յատուկ անունը. այսպէս, եղել է Բահալ Պէօր՝ Պէօրի իշխան, և ուրիշ շատերը: Բահալների մասին խօսում էին յարնակի ձուլ. Գատաւորաց գրքում (Բ. 11) և Ա. Գրքի ուրիշ տեղերում մենք կարդում ենք, որ իսրայէլացիք հաղածում էին Բահալներին, այսինքն՝ բանաձնացող աստուածներին: Իւրաքանչիւր վայր ունի իր սեփական Բահալը, որին երկրպագում են տեղական սրբավայրում: Սրբավայրը գտնվում է մի բարձր տեղ՝ բաղարից կամ պիւղից դուրս, մի բնական կամ արհեստական բարձրության վրայ. սրանք հին կռապրտնի «բարձր տեղերն» են. լինելով սկզբում բանաձնացող կուռքի կենտրոն՝ նրանք իսրայէլացոց համար էլ երկրպագության տեղ դարձան: Կուռքի պատկանելիքները այս սրբավայրում շատ պարզ բաներ են: Ուղիղ արձանացրած բարը աստուածությունն է ներկայացնում. սա նրա արձանը չէ, քանի որ բարը ամենևին կոփված չէ և նման չէ մարդկային փիլուրի: Ենթադրվում էր, որ աստուածությունը գալիս է բարի մօտ, որտեղ և հանդիպում է իր յարգողներին. սկզբում կրօնի հնագոյն ժամանակներում էլ այս բարը իրրև զոհարան էր ծառայում, որա վրայ սկզբում զրվում էին շայրված նաւթները կամ լծափրում էր զոհի արիւնը: Բայց բանաձնացողների սրբավայրում կար դարձեալ մի պատկանելիք՝ առանց զոհարանի և ուղիղ կանգնած քարի կամ մասէբի (массеба): Գետնի մէջ անկված ծառի մի լծանձր կոճղ, զուրկ իր ճիւղերի մնացորդներով պատկերացնում էր մի իսկական աստուածությունի՝ Բահալի անփոփոխ արբանեակը: Սա քանաանական

Աշէրա է, որ Վոլգատի մէջ անկանոն կերպով «ծառաստուն» է թարգմանվել: Ցոսիսի տեղերում Աշէրա հանդէս է գալիս իրրև մի ծառ, որ աստուածուհի է ներկայացնում. կասկածելի է, սակայն, արդեօք սա աստուածուհու իրան յատուկ անունն է: Ճամենայն դէպս, Աշէրա, ինչպէս և Բահալ, ոչվել սրեվ պատմական աստուածությունի անունն է, այլ՝ մի անուն, որ կրվում է աստուածուհուն երկրի բոլոր տեղերում:

Կուռքի պատկանելիքների մէջ պարզ կերպով արտայայտվոյ բանաձնացող կրօնի բնոյթը: Մենք տեսանք, որ երբ սէմիտները նուաճեցին Քարեթոնը, այն ժամանակ երկրի բազմաթիւ աստուածներին տեղապատասխան աստուածուհիներ, կրկնով աստուածության անունին իգական ձև: Քանաանում մենք տեսնում ենք որ սէմիտ կուռքը դարձված է դէպի մի զոյգ աստուած. իւրաքանչիւր սրբավայրում կայ մի աստուած ու մի աստուածուհի: Թէպէտ այս բանը չի կարելի սէմիտ կրօնի մի հանուր սխալ համարել—այսպէս՝ Փիւնիկէի, Մոաբի մեծ աստուածները, Իսրայէլի աստծու պէս՝ անզուգ էակներ են,—բայց մենք պէտք է ընդունենք, որ աստծուն ու աստուածուհուն տրված այդ երկրպագությունը շատ էր տարածված սէմիտ ժողովուրդների միջև: Քանաանում այս բանը հասկանալը դժուար չէ: Ցատեղ մեր աչքն է մի երկրագործ համայնքի կուռքը. և ինչպէս Բահալ, մշակելի հողի տէրն է, որ պտղաբերում է նրա հողը, իրաւունք ունի աստանալու երախայրիքը, այնպէս էլ Աշէրա պտղաբեր մայրն (матрона*) է, հասակի (աճման) ներկայացուցիչը: Չին ուխտը կասկածելու տեղիք չէ տալիս այն կուռքի տեսակի վերաբերմամբ, որ գործադրության է դանում այս սրբավայրերում: Հանդէսները կապ ունէին երկրագործի օրացոյցի հետ. Բահալին մատուցանում էին ցորենի, գինու և ձէթի երախայրիքները՝ հանուր հանդիսաւորության համար և ուրախության համար: Իսկ նրա ամուսնու-

*) Հռոմայեցի պատիւ կին, մայր:

հին պատմում է այնպիսի ծէսերով, որոնք ամենաճիշտ կերպով ցոյց են տալիս նրա անձնատուրացրած սկզբունքը: Կրօնի այս կողմի համար արբամայրը ունի իգական սպասուհիների մի ամբողջ խումբ: Այսպիսով պալէոմոնէի դիւցական կուլտը ցոյց է տալիս մեզ արևմտեան Ասիայի կրօնի մի կողմը,—այն կրօնի, որ ընդարձակ տարածականութիւն է ստացել, ինչպէս մեզ յայտնի է, ուրիշ աղբիւրներից: Սէմիտ կրօնը ընդունում է մէկ իգական աստուածուհի, որին պաշտում են անպարկեշտ ծէսերով, և որի կուլտը փոխադրված էր արևմուտք՝ արևելքի միւս արտագրյալների հետ միասին: Մենք այս աստուածուհուն հանդիպում ենք Բահաղիտ, Միլիտտա, Աստարտա անուններով. յոյները սրան անուանում են Աֆրոդիտէ, և սրա դղուկի կուլտը մուտք է գործել յունական այլևայլ բազաքները:

Իսրայէլացոց համար Քանաանի կուլտը մի մեծ փորձանք էր, բայց նրանք քիչ-քիչ նրանից վեր կանգնեցին: *Փիւնիկեցիք* էլ սկսեցին ընդունել ասիական շատ վտիտ աստուածներ, որոնց մասին մենք մի քանի խօսք ենք ասելու: Փիւնիկեցիների կրօնը, ինչպէս նրանց արուեստը, ինքնուրոյն կրօն չէր. նա սկսվել է սովորական սէմիտ հասկացողութիւններից, որոնք անցել էին նրանց՝ ասորիքի հնագոյն բնակիչներից, և ապա լրացել է փոխառութիւններ անելով այն բազմաթիւ այլ և այլ երկրներից, որոնց հետ նրանք առևտուր էին անում: Նրանց փոխառութիւնները այնպէս բազմատեսակ էին, որ անհնարին է մի պարզ մատնատակեր կազմել նրանց աստուածների ողջ սիստէմի մասին: Մի քաղաքում ընդունվում է աստուածների մի խումբ, միւսում՝ միւսը, և միևնոյն աստուածութիւնը այլ և այլ տեղերում տարբեր, մինչ անգամ հակառակ բնաւորութիւն ունի: Մեր անել կարողացածը այն է միայն, որ ասանձին ուշք դարձնենք այն սակաւաթիւ գծերի վրայ, որոնք հանուր առմամբ բնորոշում են փիւնիկեան կրօնը և հնարաւորութիւն են տվել նրան՝ ազդելու ուրիշ ժողովուրդների կուլտի վրայ:

Փիւնիկեցիք շատ լուրջ կերպով էին հոգում պետութիւնն ու կրօնը պահպանելու մասին: Նրանց բազաքային համայնքների ամբողջ շարքում՝ Սիդոնում, Տիւրոսում, Կարթագինէում, մենք տեսնում ենք, որ նրանք սաստիկ անձնուէրութիւն են տածում դէպի պետութիւնը և զգալի կերպով գոհվում են իրանց քաղքերի ազատութեան սակ: Սէմիտների կրօնը, որքան գարգանում է, այնքան հակվում է հետզհետէ մութ ու դժուարիմանալի դառնալու. չարունակելով իրանց ասածուն ու աստուածուհուն երկրպագելը՝ փիւնիկեցիք իրանց երկրպագութիւնը աստիճանաբար կենտրոնացնում են մէկ աստուածային դէմքի վրայ և սկսում են նայել վրան միշտ աւելի հեռուից ու աւելի մեծ բարեպաշտութեամբ: Երկրպագութեան կեանքի ազատ ու անձարձակ Բահաղներն ու Աշէրաները պիտանի չեն առևտրական մեծ բազաքի սահմանին. այնտեղ մի աւելի արժանաւոր դէմք է պահանջվում: Եւ այսպիսով Բահաղների խումբանին աւելանում է *Մօլօք* կամ *Լմազատը*՝ մի աւելի բարձր էակ, և որ աւելի չքեղ կուլտ է պահանջում: Սկզբում «Մօլօքն» էլ յատուկ անուն չունէր. կան զանազան Մօլօքներ կամ բարձրագոյն աստուածութիւններ, որոնք Բահաղներից վեր են կանգնում և նրանցից ոմանք ունեն առանձին անուններ, ինչպէս օրինակ՝ Մէլկարտ՝ «բազաքի Լմազատը»: Աստուածութիւնների այս տեսակը հանդիպում է ոչ միայն փիւնիկեցոց, այլ և մի քանի ուրիշ ասորական ժողովուրդների մէջ, և այն գրեթէ նոյն ժամանակում: Սիդոնի ու Տիւրոսի Մօլօքը մի այնպիսի բնոյթ ունեցող էակ է, ինչպիսին և մօլարացոց, ամմոնացոց ու իսրայէլացոց գլխաւոր աստուածները են: Նա գործ ունի ոչ միայն երկրագործական կեանքի օրհնութիւնների, այլ և պետութեան ու կառավարութեան հետ: Նա պետութեան հիմնագիրն է. ծովագնացութիւն ու ծիրանի ներկարուեստն է. առաջին Լմազատն է. երբ ժողովրդի մի մասը գալիս է՝ նա ճանապարհ է ընկնում նրա հանդիպելու համար և ինքն է առաջ-

նորդում պակքը. նա անասուն կառավարիչն, է որին ոչ ոք չի համարձակի չհնազանդել. մեծութիւնը, զօրութիւնը, պետութեան վատահութիւնը նրանումն են մարմնանում: Եւ ինչպէս բարձրագոյն աստուածութիւնը զօրեղ է երկրպագութեան առածուց, այնպէս էլ նա անառիկ կերպով տարբերւում է նրանից իր բնոյթով: Սիզոնի ու Ֆիւրոսի կիսաւոր աստուածները չունեն իրանց մէջ ոչինչ փափկասիրական կամ քնքշացած բան:

Սրանք պաշտան ու զարհուրելի էակներ են, որոնց չի կարելի անպատուութեամբ մօտենալ: Սրանք պահպանում են կեանքի աղբիւրների սկզբնական նշանակութիւնը, բայց հէնց իրանք էլ կեանքի աւերիչներ են հանդիսանում: Լինելով մարտաւ ու սուրբ՝ սրանք մաքրութիւն ու սրբութիւն են պահանջում բոլոր իրանց մօտեցողներից: Սրանց քուրմերը անպսակ են, քրմուհիները կոյս են: Սրանց պահանջած զոհերը Բահաղների պահանջներից բոլորովին տարբեր են,—աւելի լմանկապին ու աւելի սոսկալի զոհեր: Մարդկային զոհաբերութիւնները ըստ երեւոյթին սրանց կուլտի սովորական կողմերն էին. երբ իսրայէլացիք դիմում են փիւնիկեան աստուածների կուլտին կամ փիւնիկեան ձէռների նման ձէռներ են կառուցում, մենք լսում ենք մէկ ինչպէս սրանք «սահպում են իրանց որդիներին անցնել կրակի միջով», այսինքն՝ կիզում են նրանց իբրև զոհեր: Իբրև զոհ՝ Մօլօք այն էր պահանջում, ինչ որ աւելի լմանկապին է, կամ այն, որ ամենամեծ տարուայն է յարուցանում իր երկրպագուների մէջ: Անդրանիկ երեխան մինչ անգամ չի կարող ազատուել նրանից:

Ահա մէկ ինչն է պարզ մեզ համար փիւնիկեան աստուածների ծագման վերաբերմամբ: Սրանք պուտ ռէմիա աստուածութիւններն են՝ ձեւակերպուած մարդկային վարիչների օրինակով, որոնցից առնուած են և իրանց առարզելիքները: Երբ պետութիւնը մի որոշ կազմակերպութիւն է առանում, ուրիշ կողմերով գեռ լաւիւս քաղաքակրթուած չլինելով՝ այն ժամանակ

նրա կրօնը հակուած է մի դաժան ու խիստ կրօն դառնալու. սրա համար շատ օրինակներ կարելի է բերել կրօնի պատմութիւնից, և մենք նրանցից մէկը առաջներս ունենք: Փիւնիկեան աստուածները իրանց բնաւորութեամբ իսկ նպատակ են նախնական ձէռների պահպանութեանը. ռէմիաները, ինչպէս տեսանք, կրօնի գործում չափազանց ռէալ են ու գործական, և աստուածութիւնը, որ ներկայացած էր նոյնպիսի նուէրներ, ինչպիսիք սովորաբար մատուցւում էին Սիզոնի կամ Ֆիւրոսի երկրպագութեան: Ասպիսով զաժան ու զարհուրելի կրօնը գտնվում է վայրենի դրութեան մէջ. նա բաւականութիւն է առանում բնական զգացմունքները ոտնակոխ անելուց՝ և աստուածութեան հրամանով սոսկալի տեսարաններ սարքելուց:

ՓԻՒՆԻԿԷԻ ԱՍՏՂԱՑԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Չնայած սրութեան չկայ փիւնիկեան կրօնի մնացած երեւոյթները մէկ սիստէմի վերածելու: Պատմական շրջանում աստուածները բացի համայնքների վարիչների բնոյթից՝ ուրիշ բնոյթ էլ ունեն: Նրանք կապված են երկնային լուսաւորների հետ: Գլխաւոր աստուածը, ինչպիսի անուն էլ կրէր նա՝ Էլ, Բահաղ, Մօլօք, Ռիմմոն կամ Ադոնիս,—միշտ արեւն է: Արեւային աստուածութիւնը կարող էր առնուած լինել Եգիպտոսից կամ Բաբելոնից, բայց չկայ մի պատճառ, թէ ինչու փիւնիկեցիք չէին կարող սկզբում ունենալ արեւային աստուած, որի բնոյթը տարածուած լինէր ուրիշ աստուածութիւնների վրայ: Եւ վերոյիշեալ հակման պէս՝ արեի աստուածութիւնը ամուսնուհի ունի: Իբրև նրա ամուսնուհի՝ երբեմն հանդէս է գալիս երկիրը, և այսպիսի դէպքում մենք ունենք մի այնպիսի զգայական ու անբարոյական կուլտ, ինչպիսին ունեն քանանացիք: Երբեմն նրա ամուսնուհին լուսինն է. նրա անունն Աստարտա կամ Աշտորէտ է, և նա շատ է տարբերւում բանաստեղծական Աշէրայից. այլ և այլ անունների հետ՝ բնոյթներն էլ տարբեր են: Աշտորէտ, սկզբնական սէմիտ աստուածուհու

պէս՝ մի իսկական մայր է. նա պատկերացնում է հագնված, մի այնպիսի դիրքով, որ համակված է արժանապատուվելամբ և բազաբային դաժան Մօլօքին ասղով մի ընկերուհի է հանդիսանում: Նրա կուլտը մեզ նկարագրել է Երեմիա, որի ժամանակ երուսաղեմացի մայրերը նրա (Աշտօրէթի) համար կարկանդակներ էին թխում, թափում էին առաջը իրան մատուցված ըմպելիքները և նրա առջևը, ինչպէս «երկնքի թագուհու», խունկ էին ծխում. այս բոլորը տեղի էր ունենում իրանց ամուսինների գիտութեամբ ու միջոցով, այնպէս որ այս կուլտը իր մէջ ոչինչ բարոյական բան չունէր: Այս դաժան աստուածուհին չէ կարելի նոյնացնել բաբելոնեան Խաստարի հետ, թէպէտև դրանց անունները նման են: Խաստար լուսնային աստուածուհի չէ, ինչպէս Աշտօրէթ. Բաբելոնում լուսինը արական սեռի է, երկու աստուածուհիների ընտրեալներն իսկ հակառակ են միմեանց: Սիդոնիան Աստարտա ու բանաստանական Աչէրա իգական աստուածութիւնների երկու մրցող տիպերն են հանդիսանում, որոնցից իւրաքանչիւրը ներս ցոլանում էր Յունաստանում,—վերջինը՝ Աֆրոդիտէի ստորնադոյն ձևերով, իսկ առաջինը՝ այնպիսի դաժան կուսական աստուածուհիների նմանութեամբ, ինչպէս էին Արտէմիտա ու Աթինա:

Չի կարելի ուշը չդարձնել նոյնպէս Փիւնիկիում գոյութիւն ունեցած մի կուլտի, այն է՝ Գաբիրների կուլտի: Շատ բազաբներում կային Գաբիրների տաճարներ. բայց նրանց երկրպագութիւնը կատարվում էր ծածուկ և քիչ էր յայտնի մինչ անգամ հին ժամանակ: Այստամենայնիւ մենք գիտենք որ հօթ կաբիրներ կային, և այս թիւը ըստ երևոյթին կապվում է ոչ թէ հօթ մոլորակների, այլ սկզբնական աստղաբաշխութեան երկնային հօթը միջավայրի հետ: Նրանք ունեն Էշմուն անունով մի առաջնորդ ուժերորդ կամ բարձր միջավայրի աստուածութիւն: Գաբիրները բարոյական բնաւորութիւն ունեցող էակներ են. նրանք ոչ միայն հզօր են ու արարչական ուժի տէր, այլ և իրրև Սիդիկի, այսինքն՝ ճշմարտութեան որդիք են հանդիսանում. նրանք խորհուրդներ էլ են տալիս: Այստեղ երևան է գալիս փիւնիկեցիների հակումը դէպի աստուածութեան տեսական բարձրացումը. սակայն այդ հակումը աննշան չափով է երևան գալիս, և ոչ այս ուղղութեան մէջ, ոչ նրանց կրօնի բարոյականութեան նկատմամբ մի նշանաւոր զարգացման համար չէր տեղ տրամադրված: Աստուածներին ծառայելը այնպէս սերտ կերպով էր նոյնանում պետութեան ծառայելու հետ,—որովհետև կամ թագաւորն ու բուրմն էին մի ամբողջութիւն, ինչպէս լինում էր երբայեցոց մէջ՝ պետութիւնից յետոյ, կամ ոչինչ չէր կարող կատարվել առանց բուրմերի,—որ մի կրօնական ինքնուրոյն զարգացում մարդ անգամ չէր կարելի անցկացնել: Աստուածպետութեան մէջ կրօնը չի կարող զարգանալ, գիտէ չի կարող բացարձակ կերպով զարգացող ճանաչվել. թէ մարգարէն ու թէ վերանորոգիչը ընդիմութեան են հանդիպում այն ամէն բանի կողմից, ինչ որ ապիցութիւն ունի:

Թէ որքան շատ բանով էր պարտական Իսրայէլը *փիւնիկեան արուեստին*—դա անմիջապէս յայտնի է: Սողոմոնի արքայական շինութիւնը Տիւրոսի մշակներն էին մատակարարել, երբ Սողոմոն ամուսնացաւ եգիպտական թագուհուն և պէտք է հոգ տանէր մի ինչ որ ճոխութեան վրայ: Այս շինութեան մի մասը արքայական տաճարն էր, որ կառուցված էր դրացի պետութեան մէջ իշխող գաղափարների համաձայն: Դրանից մի կամ երկու դար յետոյ յոյները իրանց արքայական տաճարները ստանում էին միևնոյն ապրիւրից. այստեղից է առաջ գալիս և այն, որ Սողոմոնի ու յունական տաճարի հիմքի մակարդակը շատ նման են: Երկուսն էլ վերջ ի վերջոյ կարող են վերածվել այն օրինակի, որ փիւնիկեցիք տուել են Եգիպտոսից: Բայց նրանք, ովքեր Փիւնիկէից են ստացել տաճարի ձևը՝ ուրիշ շատ բան էլ են ներքաշել: Սողոմոնի տաճարի սրահում կանգնած էին երկու մեծ անագապատ սիւներ

(բրօնձի) սիւն, որոնք կոչւում էին Յաքին ու Բօազ. սրանք լոկ արեւի առաջու սիմբօլներն էին, որոնք կանգնած էին փիւնիկեան իւրաքանչիւր տաճարի մուտքում, որտեղ երկրպագում էին այս աստծուն: Իսրայէլի քահանաները տպաւորւում էին ինչպէս Տիւրոսի ու Սիդոնի քուրմերը. նրանք զոհ էին բերում հէնց նոյն կենդանիները, սաանում էին միևնոյն բաժինը՝ կերակրի մէջ գործածելու համար: Երբ այսքան աղտոտքին բան առնված է ուրիշից՝ ապա զարմանալի չէ, որ փիւնիկեան աստուածներին երբեմն երկրպագում էին Երուսաղէմում:

XII ԳԼՈՒԽ

ԻՍՐԱԷԼԸ

Պրօնապիտութեան համար ահագին նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ այնպէս լաւ է յայտնի մեզ Հին Ուխտը: Այս վերջը մարդկութեան նախնական կրօնի հետ կապ ունեցող փաստերի ու պատմութիւնների մի յամենամանկապին շտեմարան է. սա մեր առարկայի հնագոյն մասի ուսումնասիրութեան համար մի լաւագոյն ձեռնարկ է: Մեր՝ ինչպէս ասինները վերաբերում, այնպէս էլ նախնական կուլտի մասին խօսող պլսում մենք առաջնութեամբ ենք հանել այս ապրիւրից և կարող ենք մէջ բերել այս պլսները՝ իբրև Իսրայէլի կրօնի սկզբնական բնաւորութեանները նկարագրող պլսներ: Սակայն այժմ մենք պարտ ենք ունենալու պլսաւորապէս Հին Ուխտի կրօնի հետ, և, ինչպէս տարել ենք ուրիշ դէպքերում, պէտք է փորձենք գոյց տալ թէ ինչպիսի բնոյթ է ունեցել այս կրօնը, և ինչպէս սրա բնոյթը որոշել է իր պատմութիւնը: Այն պատմութիւնը, որ մենք մտադիր ենք արձանագրել այս պլսում նոյնպէս շահեկան է, ինչպէս և միւս կրօննե-

րինը, որոնց մասին խօսել ենք մեր դրքում,—եթէ մենք անպատմ մենք հրաժարվենք այն մասնագիտական շահից, որ նա ունի մեզ համար. որպէսզի կարելի լինէր ձեռք բերել, այն կրօնը, դէպի որը ձգտում էին բոլոր ժողովուրդները և որ պլսաւոր նախապատրաստութիւնն էր քրիստոնէութեան համար՝ հրէաները մուտքը մեծ զարգացում պէտք է ձեռք բերէին և տակային մի արտաքին պատմութեան, որ լի էր սրբութեան ու կենդանի շահեկանութեամբ:

Այս դէպքում սակայն մենք պէտք է սկսենք կրկնել այն, ինչ որ այս դրքի շատ պլսների ներածական պրակների խոշտանգութեան էին ու կլինեն, այն է՝ որ այս կրօնի բնաւորութեան նկատմամբ եղած աւանդական գաղափարները շրջկրվելու կարիք ունեն, և որ սրա սրբազան դրքերը՝ այնպէս, ինչպէս որ կան այժմ, կրօնի իսկական պատմութիւնը չեն ներկայացնում: Հին Ուխտի դրականութիւնը զգալի կերպով նմանվում է այն բանին, որ լսա երևոյթի սրբազան գրքի ամէն խմբի նախապատմական ճակատագիրն է: Նրա մէջ հին նիւթերը շփոթված են նորերի հետ, գրքերից շատերը սրբագրվել են եղած հրաժարակիչների ձեռքով և այնպիսի փոփոխութիւնների են ենթարկվել, որ կրիտիկական հանգամանքները հետազօտութիւններ են հարկաւոր, որպէս զի պատմաբանը կարողանայ օգտվել նրանցից: Կարդացողը, կազմելով իր առաջին տպաւորութիւնները այս դրքերի միմեանց հետ ունեցած յարաբերութեան և ամբողջի նշանակութեան մասին՝ բնազդ առաջնորդվում է այն դասաւորութեամբ, որի մէջ նա նրանց գտնում է. բայց այն կարգը, որով հրէաների սրբազան գրքերը դասաւորված են Հին Ուխտի մէջ՝ սահմանված է եղել հրէաների պատմութեան վերջին շրջանում մի առանձին տեսակէտով և շատ կէտերում բոլորովին անբնական է ու մոլորութեան մէջ է գցում: Պարսկաստանի սրբազան գրքերն էլ պէտք է նախապէս դասաւորու կերպով ուսումնասիրվեն, որպէսզի յետոյ պատմաբանը հնարաւո-

լինել ունենայ բազում նրանց միջից մի այնպիսի բան, որ կարողանայ ընդունիլ իրրև մի արժանահաւատ բան: Միևնոյնը կարելի է ասել և Մահմէտի ասածների նկատմամբ: Այն մարդիկ, որոնք կամենում են սրբազան գրքերի մի հաւաքածու կազմել՝ պէտք է նկատի ունենան այն նպատակը, որի համար գրքերը տրւում են համայնքին, և դասաւորեն նրանց այն կարգով, որով ամենից լաւ կարող են ծառայել այս նպատակին. նրանք չեն հարցնում, թէ ինչպէս պէտք է դասաւորել այդ գրքերը, որ կարողանան մի ճշմարիտ պատմական յաջորդականութիւն ցոյց տալ—այս ձգտումը չատ աչք է առաջ գալիս,—այլ հարցնում են թէ նրանք ինչպէս են կարող աւելի լաւ ծառայել համայրի պէտքերին: Այս պատճառով սրբազան հաւաքածուների մէջ գրքերի կարգը որոշւում է երբեմն այս, երբեմն այն զուտ գործական միտումներով, և ոչ պիտանական պատմաբանի պահանջներով: Այժմ մենք կը փորձենք տալ Իսրայէլի կրօնի համառօտ նկարագիրը, ինչպէս որ նա պատկերանում է Նորտոյն կրիտիկական հետազօտութիւնների լոյսով:

Իսրայէլը սկզբում բաղկացած էր մի քանի ցեղերի խմբից, որոնք կապված էին միմեանց հետ այն մեծ փրկութեան մասին ունեցած յիշողութեամբ, որ նրանք ազատել են ձեռք բերել միասին և այն պատերազմների, որոնց մէջ կրւել են միասին: Ընտելացած լինելով հովուական պատկեանքին՝ նրանք դէպի տարվեցին հեթպատացիների ձեռքով և ենթարկվեցին ուժից վեր աշխատանքի, բայց չեռոյ փախուստ ալին մի այնպիսի առաջնորդի հրամանատարութեան տակ, որ կարողացաւ գրգռել նրանց՝ հերոսական ճիգեր գործ դնելու, յիշեցնելով նրանց իրանց կրօնական աւանդութիւնները: Նրա առաջնորդութեամբ նրանք, թողնելով Եգիպտոսը՝ այցելեցին Սինայի թերակղզին և ուղևորվեցին դէպի Սինայից հիւսիս գտնվող երկրները, մինչև որ նուաճեցին Յորդանանի արևելեան կողմն ընկած երկիրը (տէրրիտօրիա), որտեղ և

հաստատվեցին նրանցից մի քանիսը, մինչդեռ միւսները անցան Յորդանանը և բնակեցին քանաանացոց ցեղերի միջև, որ գտան այնտեղ:

Ժողովուրդն ու կրօնը միաժամանակ լոյս աշխարհ եկան: Թէպէտ ցեղերը պահպանեցին իրանց առանձին աստուածներն ու կրօնական ծէսերը, և առանձին ընտանիքները ունէին իրանց սեփական ընտանեկան կուլտը՝ բայց այն կապը, որ նրանցից մի առանձին ժողովուրդ էր կազմակերպել և դաստիարակել հանուր գործունէութեան ընդունակ՝ այս հնագոյն կապերից զօրիկ էր. այն Աստուածը, որ Մովսէս նրանց առաջնորդ էր հռչակել՝ զարթեցրել էր նրանցում մինչև այն ժամանակ անծանօթ ինքնուրոյնն ու ուժը: Նրա անունը Յահէ էր. նրան բնաւորական նշանակութիւն է վերագրվում, և ասում են որ այդ անունը ցոյց է տալիս իրր թէ այս աստուածութիւնը աւելի իրական կերպով գոյութիւն ունի, քան ուրիշ որ և է աստուածութիւն: Սա կասկածելի է, տոյգը այն է միայն, որ Յահէ Մովսէսին խոստացել էր ցեղերի հետ միասին լինել, և որ նրանք ընդունել էին նրան իրրև իրանց աստուածութիւն: Ետոյա—եթէ սկսենք գործ ածել այդ անունի աւելի սովորական ձևը,—գուցէ ցեղերից ամենապօրեկի աստուածն էր. նա հատնարար մրրիկների ու որոտման հետ կապ ունեցող բնական աստուածն էր, և նրա բնակութեան տեղն էր Սինա լեռն: Այստեղ էին գալիս հաւաքվում ցեղերը՝ նրան հանդիսաւոր կերպով զիմաւորելու համար. իսկ միջոցը նրան հանդիսաւոր կերպով զիմաւորելու համար. իսկ միջոցը նա նկատվում էր այս տեղից դուրս գնացած, երբ պատրաստվում էր որևէ մեծ գործ կատարելու իր ժողովրդի համար: Նրա մասին խօսում էին, իրրև մի լակի, որին չէր կարելի տեսնել, քանի որ բնակում է ամպերի ու մշուշների մէջ: Նրա ձայնը լսելի է լինում մրրկի ու փոթորկի մէջ. նա համակված է մի աննահանջելի էնէրգիայով, որը արտայայտում է ճակատամարտում և զարթեցնում է իր ժողովրդի մէջ, երբ պատերազմում նրա առաջն է դուրս գալիս: Բայց նա

խորհրդի աստուածն էլ է և ամենահոգեպաշտության է յանձն առնում իր ժողովրդի բարոյական ու ընկերվարական կեանքում։ Նրա՝ մարդերի մէջ ունեցած ներկայացուցիչները նրա նկարագրութիւնով խոպոպեցնում են այն վէճերը, որոնք տեղի են ունենում նրանց առաջը, և ծանր դէպքերում վճռողական խորհուրդներ են տալիս։ Մի այնպիսի առաջնորդութիւն չարունակվում է մչտապէս, այնպէս որ Եհովա իր ժողովրդի նիստուկացի վերահսկողն է համարվում և առանձին դործերում նրա իսկական օգնականն ու պատիարակը հանդիսանում, որպիսի դործերում խառնվում է ոչ միայն աստուածութիւն, այլև և նրա լծկանների հետ ընդհարումներ ունեցած ժամանակ։

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԾԻՍԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐԶ ԷՐ։ Այս բոլորի մէջ մենք ունենք այն զարգացման մի շատ յարմարվող օրինակը, որ առաջ է գալիս կրօնի հետ, երբ, ինչպէս տեսանք նախընթաց գլուխներից մէկում՝ նա, որ առաջ զուտ ցեղական էր, այժմ դառնում է ազգայնական։ Սակայն այդ ազգայնական կրօնը Իսրայէլի մէջ երեան գալու միջոցին միանգամից չէ արտայայտում մի աւելի վսեմ Կուլտ և մարդու ուշքը չէ դրաւում իր վրայ ձևի աւելի մեծ շքեղութեամբ ու տպաւորութեամբ։ Անպատեհ կուլտը և այն, որով Իսրայէլը կառավարվում էր առաջին անդամ Քանաանում եղած միջոցին՝ բոլորովին այլ բնոյթ ունէր։ Նրա գլխաւոր կողմերը և գլխաւոր սկզբունքները քիչ էին տարբերվում մեր՝ այս դրքի նախընթաց գլուխներում նկարագրածներից։ Նա աւելի ազգութեանների հետ էր համակերպվում, քան կանոնների, և նրա բնորոշ նշանը այն էր, որ նա մի այնպիսի հանգստ տոնհայ էր, որի աստուածութեան էլ էր ներկայ իր յարգողների հետ, և այս միաբանական կերպարանքով այն էր տառապում թէ դեռևս չարունակվում է ցեղի անդամներին՝ իրանց աստծու և միմեանց հետ կապող բարի համերաշխութեանը։ Մոլարացներից ու ամմոնացներից Իսրայէլացիք

տարբերվում էին աւելի իրանց Աստծու անձնաւորութեամբ, քան թե մշակված կուլտով կամ բոլոր պատարագով։

ՉՓՈԻՄՆ ՔԱՆԱԱՆԱՑՈՑ ԿՐՕՆԻ ՀԵՏ։ Քանաանում մատր գործելուց յետոյ Իսրայէլը այնպիսի դրութեան մէջ էր դրտնվում, որ իրաւ կարելի է զարմանալ թէ ինչպէս է պատահել որ ազգայնական բնոյթն ու ազգայնական կրօնը չեն ձուլվել շրջապատող ազգարնակութեան կեանքի միևնոյն կողմերի հետ։ Բերելով իրանց հետ սակաւ զգացմունքներ և անպատեհ նուազ փորձառութիւններ՝ իսրայէլացիք նկատեցին որ իրանք ընկել են մի բոլորովին կազմակերպված քաղաքակրթութեան ու համեմատաբար մշակված կուլտ ունեցող ժողովրդի մէջ։ Քանաանացի ցեղերը խոսում էին միևնոյն լեզուով և պատկանում էին միևնոյն ցեղին, բայց մի աւելի բարձր՝ երկրագործական ու բարգաթային կեանք էին վարում։ Նրանց կուլտը սկզբունքով միևնոյնն էր, ինչոր Իսրայէլինը, սակայն աւելի վսեմ կազմակերպութեան ունէր։ Երկիրը լի էր սրբատեղի վայրերով, որոնցից Իսրայէլը չէր կարողանում հրաժարվել և որոնք ազօթելու և հետաւոր ուխտագնացութեան կենտրոններն էին։ Քանաանացիների կուլտը նկարագրված էր նախընթաց գլխում. երեի կարգացողը յիշում է Բահալը ձեռնոց ուղիղ անկած բարը, և ծառի կոճղը (աշէրա), երեք շրկար աստուածուհին ձեռնոց մի կենդանի ծառ։ Եթէ այս բոլորը կամ սրա մեծ մասը մի նոր բան էր իսրայէլացիների համար՝ ապա հէնց մի այսպիսի նոր բան էր թվում նրանց և՛ սրբազան տաբին, որի համաձայն Քանաանում դաստատվում էին երկրագործութեան շրջանները։ Մանր տեղերը կառուցն ունէին լուսնի ծնունդից կամ հօթնօրեայ շրջանի կրկնվելուց (կասկածելի է որ շաբաթը պատկանելիս լինի անպատառում, որովհետև նա կապ ունի երկրագործութեան հետ և դժուար թէ յարակից լինէր հովուական կեանքին), մի քիչ խաշոր հանդէսները դաստատվում էին տարվայ էպոխնե-

բին նայելով, ինչպէս են հունձն ու այգեկութը։ Երկրագործական յարակից կուլտը հնումը աչքի էր ընկնում ազմկալի ու կատաղի բնոյթով. և սրանով երկրագործում են անմիջապէս բերքի հետ կապ ունեցող առաւածներին՝ այնտեղ կուլտը հակված է բնորոշելու սեռային նշաններով։

ՀՈՒԼԴԵԼՈՒ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։ Իսրայէլացիների համար բնական պէտք է լինէր առնել քանաանացոց կրօնից, ինչ որ կարելի էր։ Նրանք չէին կարող չնկատել երկրի հին-աւուրց սրբավայրերը, իրաւ մի օտարոտի բան կլինէր, եթէ նրանք երկրագործ ազգալով՝ չընդունէին երկրագործական սոններ. և եթէ նրանց համար մի բնական բան էր Բահաղին երկրի տէր ու պտղաբերութիւն ընձեռող համարելը՝ ապա և բերքի համար կատարվող զոհացողական ապօրէքով նրանք իսկապէս նրան էին դիմում։ Նրանք չէին կարող իրանց՝ Եհովայի կուլտը յղացնել աւելի պահանջոտ ու ապրատ, քան իրանց դրացիների՝ Բահաղին ուղղված կուլտը. այս պատճառով նրանք էլ կանգնեցին աշէրաներ և դործածեցին կանդուն բարեր ու Եհովայի պատկերները։ Նրանցից մէկը, որ աչքի ընկնում էր Եղկիա՝ օձի կերպարանք ունէր. ուրիշ տեղերում Եհովա պաշտվում էր հզան կերպարանքով։ Ո՛րտեղ դրանում էր Եհովայի պատկերը՝ այնտեղ նրա հետ կարող էին խօսակցել, վիճակ դցելով կամ ուրիշ միջոցներով։

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ։ Բայց Եհովայի կուլտից չէ առաջ եկել մի աւելի զարգացած կուլտ, որ այս կերպով ուղղված լինէր Եհովային՝ Քանաանում հաստատվելուց յետոյ. այս պատճառով էլ, ինչպէս տարին է, չէ պատահական նրա ոգին, և նրանք, որոնք խորին կերպով էին հաւատում ազգային Աստծուն՝ զգում էին որ սա նրան ծառայելու մի սխալ ճանապարհն է։ Եթէ սրա հետ միասին Իսրայէլացիք, որոնք ապրում էին ցրված ու միմեանցից հեռաւոր տարածութիւնների վրայ, երկրի վաղեմի բնակիչների միջև, բանաձացոց ծիսական կոմպը ընդունելում այնքան հեռու գնացին՝ ապա կարելի էր երկիւղ կրել չլինի թէ Իսրայէլը մոռանայ այն հաւատը, որ իրան մի ազգ է շինել, և այն ժամանակ կորցնի իր բնոյթն էլ, ազգայնութիւնն էլ։ Այստեղից է առնում իր սկիզբը այն պայքարը, որ Իսրայէլի ազգ պատմութեան ընթացքում, մինչև նոյն իսկ գերութիւնը չարունակվում էր նրանց միջև, ովքեր միութեան Եհովային էին ընդունում և ցանկանում էին տեսնել նրա կրօնի հիմունքը անպայման պահպանված իր բոլոր մաքրութեամբ, և այն շատերի միջև, ովքեր նայելով հաշակելով իրանց իրրև Եհովայի հետևորդներ՝ դժբախտութիւն չէին համարում նրան երկրագործ լը, ինչպէս երկրագործում են ուրիշ առաւածութիւնների, և մինչ անգամ նրա հետ միասին ուրիշ առաւածների պիտիլը։ Իսրայէլի պատմութիւնների մէջ այս պայքարը այնպէս է պատկերացվում, որպէս թէ ժամանակ առ ժամանակ Իսրայէլը բոլորովին հետևանալիս է եղել իր սեփական կրօնից և ազգ ժողովրդով երես է եղել դարձնելիս Եհովայի ծառայութեան ու սկսելիս է եղել ծառայել Բահաղներին։ Սակայն այս դէպքերն անպամ ցոյց են տալիս որ Իսրայէլը Եհովային երբէք այն աստիճան չէ մոռանում, որ չկարողանար նորից նրան դառնալ։ Եհովային ուղղած կոչը սովորաբար լինում էր իրրև մի պատերազմական կոչ։ Այն ժողովուրդը, որ մոռացել էր իր զօրութեան ճշմարիտ աղբիւրը, որի պատճառով էլ լրված էր հոգեպէս ու թշնամիների որս դարձել՝ մէկ այնպիսի մարդու կոզմից, որի մէջ պայծառ վառվում էր Եհովայի ոգին, հրաւիրվում էր հետևելու իրան՝ իր թշնամիների դէմ պատերազմելու։ Եհովայի ոգին, որ այսպիսով նորից տեղական էր եղած իր ժողովրդի սրտերում՝ միշտ ցոյց էր տալիս իր ազդեցութիւնը։ Քաջութեան ու պատերազմական հանդգն ոգին մի տեղից միւսը, մի ցեղից միւսն էր հեղեղվում, և չուտով գումարվում էր մի զօր, որ պատերազմում էր նախկին արիասրտութեամբ ու թօթափում հարստահարողի լուծը։ Այսպիսի հետևանքներ ունեցող կրօնը երբէք

չէր կարող ազգի սրտի մէջ մի ուժ չլինել. մինչ անգամ եթէ յակոբեանների յետոյ նորից ցրուած ցեղերը քսան երեսփոխանով, կորցնում էին իրանց միջև ունեցած կապը և ամեն խառն էին ընկղմւում չջնջապատող քանանական կեանքի հեղեղի մէջ, բան երբ և իցէ՝ նրանցում չէր կարող մեռնել այն հաւատը, որ կապած էր իրանց պատմութեան բոլոր վսեմ մանրամասների հետ և իրանց բոլոր յակոբեանների պատմութիւնը էր հանդիսացնում:

ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ: Սակայն Իսրայէլի կրօնի պատմութեան մէջ մի խոշոր քայլ էր արված դէպի առաջ, երբ միապետները փոխարինեց պատասխանների կամ հերոսներին, որոնք լոյս էին ընծեռում ժամանակի այս և այն շրջաններում ու երկրի զանազան կողմերում՝ հրաւէր կարդալու Իսրայէլին, որ յանուն Եհովայի պատերազմէր իր ազատութեան համար: Սա մի այնպիսի քայլ էր, որը ջերմ կերպով ողջունում էին ազգային հաւատի բոլոր նախանձախնդիրները. առաջին երկու թագաւորների օրով միապետութիւնը ոչնորում էր նրանց կրօնական աւիւնը: Եհովայի կրօնը դարձել էր միանգամայն պետական կրօն, և արքունիքում սոսմանիկ էր մի ուժեղ վսեմ կուռք: Ցեղերի՝ միապետի իշխանութեան տակ հաստատ կերպով միանալը ցոյց էր տալիս, որ Իսրայէլը կարծրամիտ ուժեղ մեծ ուժ ունէր, և մի գար անցնելուց յետոյ Եհովայի ժողովուրդը մի նշանաւոր ուժ էր ձեռք բերել, որի համբաւը տարածվել էր երկրի բոլոր ծայրերը: Բաժան-բաժան եղած խմբերի փոխարէն՝ իսրայէլացիք այժմ հանդիսանում էին իրրև այն միակ ժողովուրդը, որ պետականում էր իր մեծ անցեալը և յոյս էր տածում դէպի մի ուրիշ մեծ ապագայ: Ո՛րքան նրանք արագ էին անցնում բարբարոսութիւններից դէպի բազաքակրթութիւնը՝ այնքան բարձրանում էր և՛ Եհովան: Նրա ուժը կրկնք կասկածի տակ չէր ընկնում, սակայն այժմ նա ձեռք էր բերել այնպես արքայական կարողութեան բոլոր առարկելիքները—նա դարձել է մեծ առաւած, մեծ թագաւոր, արդար դատաւոր, մեծամասն բանակաց, և նրա բոլոր գործերը արանձնական են: Նա Իսրայէլին ժողովուրդ էր ընտրել իր համար և մի ամբողջ շարք սերտագործութիւններով առաջնորդել էր նրան, պահպանել ու մեծ ազգ չինել: Նրա ժողովուրդը մի առանձին դիրք ունէր աշխարհում. ունենալով մի այսպիսի Աստուած՝ նա միշտ պէտք է բարձրանար, և նրա իր ժողովրդի համար անելիքը շատ ու սահման չունէր:

ԴՐՕՆՔ 21Ի ԿԵՆՏՐՈՆԱՆՈՒՄ: Մենք սակայն չպէտք է նկատենք, որ Եհովայի բարձրանալը և արքայական պատասխանում նրա կուլտի հիմնվելը մի ուրիշ անանիկակ կամ խոշոր փոփոխութիւն էր առաջ բերել ազգ ժողովրդի կրօնական կարգերում: Քանի որ միապետին ծառայում էին Գիբէոնում կամ Երուսաղէմում, դեռ մարդիկ մեծ արքայարանին էլ էին այցելում Բէթէլում, Դանում ու Բերսաբէում (Беершеба) և արքայան վայրերը յարգվում էին ազգ երկրում: Ուղիղ է, պատմում էին որ դրանք նահապետների ձեռքով էին հիմնված՝ Աստծուն երկրպագելու համար, այնպէս որ նրանց այցելու երկիւղը ասելով էր: Բայց կուլտի և Եհովայի կուլտը այս տեղերում շարունակ ձեռք-ձեռքի տված էին առաջ գնում, և ւսօր չկայ, որ նրանցից իւրաքանչիւրը ազգում էր միւսի վրայ: Զոհարերութիւնը առաջնորդվում էր մէկից ասելի սկզբունքով. մի կողմից դա մի հանուր ճաշկերոյթ էր, որին առատաձեռնութիւնն էլ էր ներկայ, և որովհետև այնպէս էին համարում թէ Եհովան երկնքումն է, այս պատճառով ինջոյրից նրան հասնելիք մասը կիսվում էր, որպէսզի այդ մասը կարողանար բարձրանալ դէպի նրան ծխոյին միջով: Իսկ երկրագործները բնական ցանկութիւն էին ըզգում ուրախութեամբ ու պտուղներով մատուցանելու Աստծուն այն նուէրների մի կամ առաջին ու լաւագոյն մասը, որ նա իրրև երկրի տէր՝ ուղարկում էր իրանց: Գալը չարժելու կամ վերկագործութեան պատճառը տեղ չունի այս ժամանակի սովորական զոհարերութիւնների մէջ: Քանի որ Եհովայի պա-

հանջների մէջ գլխաւորին ասած բանը չկար՝ նա աւելի էլ սոսկալի զոհեր էր պահանջում։ Ինչպէս Աբրահամի՝ Իսահակին զոհ բերելու պատմուածքից տեսնում ենք, այնպէս էլին ենթադրում, թէ Եհովա կարող է մարդկային զոհեր պահանջել, և այսպիսի զոհաբերութիւնների օրինակներ հանդիպում են Ս. Գրքում (հին ու նոր կտակարաններում)։ Յեփթայեին վճռում է մահուան դատապարտել իր աղջկան. պատերազմից յետոյ աւարի լաւագոյն մասը տրւում է Եհովային, և Սամուէլ նրա առաջը յօշոտում է Հագագին։ Բայց սրանք արտակարգ դէպքերից են, և սովորական կուլտը ուրախ բնոյթ ունի ու պանագան զուարճութիւնների դուռն է բաց անում։ Ոչ երկրում չկար մի սիրապետող որոշ ծիսականութիւն, միութիւն մտցնելու փորձն էլ շատ ուշ է արւել։ Ամէն մարդ, հիմնուելով Մանոհ ու Գէդէոնի մասին տարածւած պատմութիւնների վրայ՝ գիտէր թէ ինչպէս պէտք էր զոհ բերել. քահանայի ներկայութիւնը այս միջոցին բոլորովին պարտաւորական չէր։ Քահանաների պարտաւորութիւնները յաճախ կապ ունէին զոհաբերութեանը չվերաբերող գործերի հետ, և երբեմն նրանք յանձն էին առնում շատ համեստ գործեր։ Եղիա մի քանի օրնականներով ուխտի տապանակի պահապանն էր, որ Եհովայի ներկայութեան նշանն էր։ Մի երիտասարդ քահանայ Միքիայի (Михой) կողմից հրաւիրւած էր՝ տասն 10 արծաթով պահելու նրա կուռքերի հաւաքածուն։ Սակայն բուրմերի ամենամեծ պարտաւորութիւնը, որից գլխաւորապէս կախւած էր նրանց աղբիւրութիւնը՝ Եհովայից խորհուրդ հարցնելն ու նրա կամքը յայտարարելն էր։ Խորհուրդը հարցնւում էր մի սրբազան առարկայով, որ բուրմի հոգացողութեան տակ էր գտնւում, և այդ ուժը ունեցող զանազան առարկաների անուններ են տալիս (Եփօդ ու Թէրափիմ—աստուածութեան պատկերներ. Ուրիմ ու Թումիմ—այսպիսի դէպքերում գործ ածւող վիճակահանութիւնները)։ Քուրմը գործում էր նաև իրրև դատաւոր այն գործերում, որոնք նրա վճռին էին վերապահւած

այդ ժամանակ կարող էր պատրաստել ժողովրդի անպիր օրէնքը և բարոյականութեան կանոններ տալ։ Քրմական այս օրէնքը կամ «Թօռը» (тора) հրէաների օրէնսդրութեան սկիզբն է, և հնագոյն օրինագրքերի մարդասէր (հուման) ու կանուխ օրէնսդրութիւններից մենք տեսնում ենք որ այս կարեւոր պարտաւորութիւնը կատարւում էր արժանավայել կերպով։ Այսպիսով Եհովա գործում էր իբրև իր ժողովրդի կենդանի օրէնսդուն՝ գրաւոր օրէնքից շատ առաջ։ Ունենալով զօրականի հզօր հրամայողի, հարուստ շնորհներ տվողի բնորոշ նշանները՝ նա էին սկզբից իր ժողովրդի նիստուկացի վրայ հսկող է հանդիսանում, նա զսպում է նրա ձայրայեղութիւնները և նրան իբրև դէպի մի աւելի լաւ կեանք տանելու ցանկութիւն ունեցող է հանդիսանում։ Այս փաստը շատ կարեւոր նշանակութիւն կունենայ, երբ ժողովրդի միտքը զարգանայ և ձգտի աւելի պարզ հասկանալու նրա էութիւնն ու բնոյթը։

ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ։ Իսրայէլը, հին ժամանակվայ միւս ժողովուրդների պէս, իրրև բուրմերի յաւելուած՝ ունէր պաշտօնով կրօնի հետ կապւած այլեւս մարդերի մի դասակարգ, որոնք աստուածութեան դէնքն էին ոչ թէ իրանց դիրքով, այլ՝ իրանց անձնական մասնագիտական ձիրքով։ Հին ժամանակները Եհովայի ներշնչումը տեղի էր ունենում մի քանի դաժան ձեւերով։ Չնմեռանդ երկրպագուների խուժանները երգ ու պարով մի գմայլեցուցիչ յափշտակութիւն էին առաջ բերում. և այդ դրութեան մէջ նրանք աստուածութեան գործիքն էին համարւում։ Այս մարդիկ ապրում էին համայնքներով և մի քանի դար շարունակ հանդիպում էին երուսաղէմում։ Պային այսպիսի թէ Եհովայի ու թէ Բահալի մարգարէներ, այնպէս որ այս երեւոյթը բացառապէս իսրայէլական չէ։ Այն, ինչ որ յայտնի է մեզ նրանց վերաբերմամբ, միշտ մի վսեմ մտապատկեր չէ առաջ բերում նրանց մասին։ Երբեմն նրանք կախարդների հնարներն են գործ դնում և, մարգարէանալով՝ ամենքը միեւնոյն բանն են ասում. երբեմն նրանք պատրաստ

են գուշակում այն, ինչ որ Մոպատան է ուզում լսել:

Իսրայէլի խոշոր մարգարէութիւնը առաջ է եկել նմանօրինակ պէրճանքներից: Իսրայէլը ընտելացել էր Եհովայի կամքի յայտնութիւնը լսելու մի այնպիսի անձի միջոցով, որ նեղչլնշված էր նրա հոգով, և նրանից մէջ, որոնք առաջ էին գալիս այդ նպատակի համար՝ ժամանակ առ ժամանակ երևան էին գալիս մեծ հոգի ու բնաւորութեան կորով ունեցող մարդիկ: «Ցեսանող» անունը այս տեսակի մարգարէութիւն է, ցոյց տալիս: Ցեսանողը մի այնպիսի անձն է, որին Եհովա իր մտադրութիւնները անձամբ է յայտնում, զուտ առանց մարգարէի կողմից դրած դրված պրևի ջանքի: Նա հոգով է և սրտ տալոտան վիճակում տեսիլներ է տեսնում. նա այն էլ է լսում, ինչ որ ուրիշները չեն լսում. թէ այս տեսիլները ու թէ յայտնութիւնները ապագային են վերաբերում: Նրան ամենակութիւն է անվում այն բանի մասին, ինչ որ կատարվելու է. ակնարկութիւններ են անվում պետութեանը կամ միապետութեանը վերաբերող բաների մասին. Իսրայէլի ճակատագիրը մարգարէին արված յայտնութիւնների գլխաւոր բովանդակութիւնն է: Սամուէլի տեսիլքը պրկից նրան միապետութեան մոգնելու Սաուղի իշխանութեան տակ: Երբ մարգարէն յայտարարից թագաւորութեան երկպառակվելը. և նրա մարգարէութիւնը գոր չանցաւ: Եղիա գուշակեց Ամրու տան անկումը, իսկ Եղիսէ տեսաւ այս գուշակութեան կատարումը: Մեզ յայտնի մարգարէները հասարակական գործերում մի-մի մեծ ուժ էին և կրօնական ծանօթութիւններում կարող էին որևէ ազգային պատմութեան ընթացքը: Ճանաչ մարգարէն կանգնած է մէն-մենակ, զինազրող ուժ հանդիսանալով արքունիքին և քոռ երեցներին՝ ազգին, և այսուամենայնիւ նրա խօսքերը յաճախ իրականանում են. Եհովայի խօսքը չի կարող դատարկ ձայն լինել: Երբեմն ժողովուրդներից շատերը նոր երեցներին կարևորում են մարգարէին, և նա խօսում է իրրև համայնքի ամենալուրջ մասի ներկայացուցիչը,—այն

մասի, որ ամենից աւելի է հաւատարիմ Եհովային. և այս պէտքում պատճառ գտնում է, որ մարգարէի խօսքերը կատարվում են: Իսկ եթէ մենք մարգարէների մասին խօսենք իրրև մի ամրողջ համայնքի՝ ապա կտեսնենք որ ճիշտ չի լինի. մարգարէները մի կուսակցութիւն չեն, որ միշտ գործում է միահամուռ ուժով, ոչ էլ մի է, որտեղ ամենքը հետևում են գաղափարակին: Մեծ ձայներ լսել է լինում գուցէ գործ կամ կէս գործ մի անգամ. և այս ձայները իսրայէլացոց կրօնի ճշգրիտ ուսումնութիւնն են և գործադրում են այդ կրօնը: Եղիայի օրով մենք Իսրայէլի մէջ մի պարզակրօնային շարժում ենք նկատում. մի ամրողջ շարք մարդիկ միմիայն ասելութիւն են տածում դէպի տարեկրեայ կուլտերը, որոնք գործադրվում են արքունիքում և ամենքը սրտանց ցանկանում են հին լաւ բարքերի վերանորոգումը և միաձայն Եհովայի մարտը կուլտը: Եւ երբ Եղիա խօսում է, այս ձգտումն է արտայայտում, նա պահանջում է որ ամէն բան կրօնով ճանաչվի. սչնչ պետական շահեր մի րոպէ անգամ չպէտք է կարևն Եհովայի մարտը հաւատի ճանապարհը, որ պէտք է վճռի ամէն բան. ամէն բան, ինչ որ խափանութիւն է լինում այսպիսի բաղարականութեան՝ կորստի է դատապարտված: Սա լայն մտքով հրէական մարգարէութեան հիմնական տօնն է (ձայնը):

Իսկ երբ մենք հանդում ենք կանոնական մարգարէներին՝ դգում ենք որ նրանց վարդապետութեան մէջ աւելի շատ բան կայ պարունակված, բան այն յայտարարութիւնը, թէ ամէն բան պէտք է դիջել կրօնի պահանջներին: Նրանց մտաւոր աշխարհում մեծ փոփոխութիւն է տեղի ունեցել. այս մարդերի մտքերի մէջ նոր կրօն է ծագել: Նրանք այս չեն ասում, չեն նկատում, սակայն այս այսպէս է:

ՀԻՆ ԿՐՕՆԻ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԸ: Իսրայէլի հին կրօնը միապետութեան օրով բաւի բան նշանակութեամբ ազգային բնոյթ ունի: Ցեղերի խմբի միջից Իսրայէլը ազգ

դալձաւ և սկսեց իրան միակ ամբողջ ցեղը համարել։ Նա ունի իր ազգային պատմութիւնը, իր ազգային վարիչները, ինչպէս և ուրիշ ազգերը։ Ձի կարելի ժխտել, որ ազգայնական մտքով իսրայէլացիք պարծենալու կողմեր ունէին. նրանց հաստակի և ուժի արագ զարգացումը, որ մի քանի դար շարունակ բարօրութեան մէջ էր պահել իրանց՝ չէր կարողացել նուազեցնել այս հպարտութիւնը։ Այժմ, ունենալով իրանց թագաւորը՝ նրանք ունեն և՛ սեփական աստուածը։ Եհովա՝ Իսրայէլի աստուածն է. Իսրայէլը՝ Եհովայի ժողովուրդն է, սրանում նրանք ամենքը համաձայն էին։ Եհովային իրանց աստուած ընդունելը՝ նրանց չէր խանգարում հաւատալ ուրիշ աստուածների գոյութեանը. Խէմոշ մոաբացիների աստուածն էր, որ բաւական նման էր Եհովային, Բահաղը բանաանացիների հին աստուածն էր։ Խօսք չկայ, որ Եհովա աւելի մեծ ու զօրեղ աստուած էր, և իսրայէլացին, գնել Քանաանում, պարտաւոր էր երկրպագել նրան. սակայն մեծ դժբախտութիւն չէր նրա համար, եթէ դէպը եղած ժամանակ երկրպագէր ուրիշ աստուածների էլ։ Գիւղում նա կարող էր մանակցել Բահաղի կուլտին ուղիղ այնպէս էլ թագաւորը՝ ոչինչ մեծ բան արած չէր լինի, եթէ իր մայրաքաղաքում, բացի Եհովայի պատկերից, իր կանանց աստուածների բաղիններն էլ կանգնեցնէր, և եթէ նրա հպատակներից շատերը մասնակցում էին այս կողմնակի կուլտերին՝ ասած դա լոկ մի բնական արված բան էր։ Այսպիսով մի քանի թագաւորութիւնների մէջ բազմաթիւ աստուածներ էին հաւաքված այլ և այլ երկիրներից։

Եհովա սակայն Իսրայէլի մանապետական աստուածն էր. սրանում տարակոյս չէր կարող լինել. Իսրայէլը մանապետապէս աւանդ էր տրված նրան, նա էլ իր հերթին աւանդ էր տրված Իսրայէլին, որ բոլոր կրիտիկական դէպքերում պէտք է դիմէր նրա օգնութեանը։ Եհովա ուրիշ ժողովուրդ չունէր. նա ամբողջապէս կապված էր իր Իսրայէլի հետ. նա պատասխանատու էր, թէկուզ հէնց իր պատուի համար, օգնութեան հասնել այս ժողովրդին, երբ սա նրա կարիքն էր զգում։ Նա երբէք չէր կարող թոյլ տալ որ Իսրայէլը ուրիշ օրհասական վիրաւորանք կրէր, ինչպէս օրինակ, տարապրում դէպի ծառը երկիր։ Կրօնական համոզումը թոյլ չէր տալիս մտքով անգամ անցկացնել թէ կարող է մի այդպիսի բան պատահել. Իսրայէլը որ կորչի, էլ ճնշին է պէտք նրա կրօնը։ Այս պատճառով շատ մեծ ամբարշտութիւն կլինէր, եթէ մարդ կասկածէր թէ Իսրայէլը կարող էր անապահով լինել այն կողմից, որ Եհովա պահպանում է իր սեփական երկիրն ու իր սեփական ժողովուրդը, և որ նա ազատ է պահելու նրան ամեն օրհասական թշուառութիւնից։ Եթէ, միւս կողմից, ինչպէս շատ յաճախ է պատահել, Իսրայէլը ստիպէ է ունեցել զրկանք ու վիրաւորանք կրելու ուրիշ ժողովուրդներից՝ ասել կասկած չէր կարող լինել, որ Եհովա ինչանակէր իր համար այս փաստը և, երբ հարկաւորվեր, կանօրինէր ամեն բան, ինչպէս հարկն է։ Կարող էր անցնել մի առժամանակ, որ նա պատշաճաւոր կերպով ուշք չդարձնէր այս դէպքի վրայ. նա կարող էր ոտասել ու վճռոտապէս չմիջամտել այս գործում, մինչև որ դարձեալ մի բանի նմանօրինակ դէպքեր տեղի չունենային. սակայն կպայ ժամանակ, «տիրոջ օրը» կպայ հարկաւոր ժամին և ահա Իսրայէլին վիրաւորողների ու ճանապարհից հանողների հետ կվարվի նրանց յանցանքների համեմատ, և Իսրայէլը շատ կվստաւորվի կատարեալ ազատութեամբ ու խաղաղութեամբ։

ՄԱՐԳԱՐԷՆԵՐԻ ԿՐՕՏԻԿԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ՀԻՆ ԿՐՕՆԸ. Մարգարէները, որոնց վրայ Եհովայի բարոյական ընոյթը աւելի լոր տպաւորութիւն էր արել, քան ժողովրդի, ազգայնական մեծամեծ վտանգների ու թշուառութիւնների ճնշման տակ՝ այն ժամանակ տարածված հայեացքներից այնքան տարբեր հայեացքներ էին կազմել Աստծու և նրա ճանապարհների մասին, որ սկզբում շատ անհայրենասէր

ու մինչ անգամ ամբարիշտ լինելան։ Իրանց նախաահաւելման շնորհիւ նրանք յայտնապէս տեսնում էին այն սոսկալի ազէտները, որ գալու էին իրանց ժողովրդի գլխին։ Ամեն դաշտում է որ Իսրայէլին կերտվելիւն է վիճակված. եւ այդ միեւնոյն բանի մասին յայտարարում է Տարաւային իմաստասիրելման[8] մէջ և ասում է՝ ժողովրդի մնացորդը միայն կվերադառնայ։ Նրանք չեն տարակուսում որ իրանց ժողովրդին մի բաղարական կշռաւորելիւն է սպասում, և աշխատում են մի պատճառ գտնել այսպիսի մի զարհուրելի երեւոյթի համար, որը անհնարին է հաշտեցնել կրօնական սովորական հասկացողութիւնների հետ։ Նրանք այս բանը բացատրում են Եհովայի բնաւորութեան մասին ունեցած հայեցուածքով, որ աւելի բարձր է ժողովրդի հայեցուածքից։ Եհովա պատժում է ժողովրդին նրա անօրէնութեան համար, ասում են նրանք. նա այնպէս արդարացած է, որ պէտք է պատժի մեղքի համար, և իր սիրած Իսրայէլ ժողովրդի մեղքը աւելի խիստ պէտք է պատժի, քան ուրիշ ժողովրդներինը։ Ի՞նչպէս էրիկը պարտաւոր է պատժի ենթարկել իր՝ ճանապարհից շեղված կնոջը, նրան նորից կարեկցելուց առաջ՝ տէնց մի այդպիսի ընտանեկան վիրաւորանքի պատճառով մարդարէ դարձած Ովսիա պնդում է թէ Եհովա չէ կարող խիստ չվարվել Իսրայէլի հետ։ Սպասնացող կշռաւորելիւնների այս պատճառն վերաբերող տեսութիւնը մարդարէների կողմից պաշտպանվում է ազգայնական մեղքերի այն յանդիմանութիւններով, որոնք նրանց գործերի մի այսպիսի մութ բնոյթ են տալիս։ Ազգայնական յանդգնարձութիւնների մէջ անկարգութիւնն ու կուռքի երկրպագող կամայականութիւնը աշքի ընկնող տեղ են բռնում։ Այս կուռքը այն չէ, ինչ որ պէտք է լինի Եհովայի պաշտամունքը։ Մարդիկ, բայց նրանից՝ ուրիշ էակների էլ են դիմում. նրանք հեթանոսական խնջոյքներ են սարքում, Եհովայի պաշտամունքի մէջ մտնում են հեթանոսական կուռքի անհամեմատ ծէսերը. ծէսերի մէջ ոչ լրջութիւն կայ, ոչ

արժանապատուութիւն, ոչ պատշաճաւոր կարգ ու կանոն։ Այս ծէսերը սրտով ասես՝ կատարվում են. շատ տեղեր, որտեղ կատարվում են՝ բոլորովին անյարմար են Եհովայի սպասարկութեանը։ Երկրպագութիւնների ժողովները աւելի վայրենի անառակ, զեղխ խնջոյքների (օրգիաների) են նման, քան առաւելապէս հանդիսաւորապէս մօտենալուն։

Սակայն մարդարէների շատերը ծիսական կողմի մէջ չեն կենտրոնանում։ Նրանք կարող էին լոկ յանդիմանել Եհովային երկրպագելուց զատ՝ ուրիշ աստուածների էլ երկրպագելու համար, կամ Եհովային անվոյ անվայել սպասարկութեան համար. բայց նրանք կուռքի մասին գրական ցուցմունք չեն տալիս։ Երբ ժողովուրդը բուն երեւոյթին տգիտութիւնից և չերմեռանդութեամբ անձնաւորւ եղաւ Եհովայի սպասարկութեանը, աշխատելով արժանանալ նրա ողորմութեանը մի խիստ կեանքով կամ ծանրագին զոհերով՝ այն ժամանակ մարդարէները չդադարեցրին իրանց բարոյական խիստ պահանջները։ Ամենքին յայտնի են Ս. Գրքի այն տեղերը, որտեղ մարդարէները յայտարարում են թէ Աստուած երբէք զոհեր չէ պահանջել, և թէ զոհերով չէ, որ Իսրայէլը պէտք է ցոյս ունենայ արժանանալու նրա ողորմութեանը։ Այդ տեղերը այն չեն ապացուցանում, թէ մարդարէները զոհաբերութիւնների իսպառ դադարումն էին ցանկանում. նրանք միայն զոհաբերութեան մասին խօսում են, համեմատելով այն ուրիշ տեսակ պարտաւորութիւնների հետ, որ աւելի կարեւոր են համարում։ Ոչ թէ զոհ է պէտք, այլ ողորմութիւն, ոչ թէ զոհ, այլ արդար վարմունքը, զթասրտութիւնն ու խոնարհութիւնն Աստծու առաջը,—ահա նրանց ասածների բովանդակութիւնը։ Մարդարէները այնպան կուռքի անկանոնութիւններից չեն սարսափում, որքան իրանց ժողովրդի բարոյական անկայան պակասութիւններից։ Ժողովուրդը մեղադրվում է բոլոր տաղ պատուիրանների արգելված (Ելից. Ի.) յանցանքների և ուրիշ շատ յայտնիների մէջ, որոնք չեն յիշված պա-

տուրքերի մէջ։ Մարդարէները սրանջում են մանաւանդ հարուստների՝ ապրանների նկատմամբ ցոյց տված անզգուշութեան և հաւատի ու ճշմարտութեան գործերում յաճախակի կատարած զանցառութիւնների դէմ. նրանք յաճախ յիշում են հարստահարութիւնն ու կաշառքը, որկրամոլութիւնն ու այլ ասելոյթ բաները։ Այս մեղքերն էին, որոնք պլեսատրապէս բերին նրանց վրայ Աստծու դատաստանը. այս յանցանքները այնքան ծանր են, որ Եհովայի համար անհնարին է կասեցնել պատիժը Իսրայէլից ու հրէից թագաւորութիւնից։ Եհովա նախ և առաջ արդարադատութիւն ու գթութիւն սիրող մի ճշմարիտ աստուածութիւն է, և նրա ճշմարտութիւնն ու ողորմութիւնը այնպէս յայտնի կերպով դրժող ժողովուրդը չի կարող երկար ժամանակ նրա ժողովուրդը լինել. Եհովա պէտք է ոչնչացնի նրան։

Այս պատճառով *մարգարէները յայտարարում են որ Եհովա վճռել է լքել իր ժողովուրդը*։ Սա ցոյց է տալիս թէ նրանք հասկ են այն նոր պատկերացմանը, թէ ինչ բան է Եհովա։ Նրանց համար նա լոկ ազգայնական աստուածութիւն լինելուց մի փոքր աւելի բան է, և անխզելի կերպով կապված է իր ժողովրդի ճակատագրի հետ, երաշխաւորւում է նրա այս աշխարհում ունենալիք առաջադիմութեան համար և իր ժողովրդի ոչնչանալու դէպքում խոստանում է ոչնչանալ նրա հետ միասին։ Նա նախ և առաջ մի բարոյական վարիչ է. նրա համար արդարութիւն ու աջողութիւն պաշտպանելը աւելի է կարևոր, քա որևէ առանձին ժողովրդի, մինչ անգամ Իսրայէլի բարօրութիւնը։ Ճշմարիտ է նա սիրում է Իսրայէլին. Իսրայէլը նրա սիրեցեալ որդին է, նրա երիտասարդութեան կինն է, այն ժողովուրդն է, որի հետ, նա դաշն է կապել։ Սակայն հէնց այս պատճառով Իսրայէլին աւելի, և ոչ թէ պակաս, ներելի չէ անօրէնութիւնը։ Եհովա չի կարող այն ժողովրդի կողմը լինել, որ չէ պահում նրա օրէնքները։ Այսպիսով մարգարէները հասան Եհովայի բնաւորութեան մի նոր հասկացման որը,

թէպէտ նրանք այդ դեռ չեն տեսնում, չէ կարող կիզ լինել ազգայնական աստծու դերին։ Նրանք նրան նայնայիսին ճշմարտութեան ու ողորմածութեան գաղափարի հետ և սրանով մի մեծ բայլ արին, գոնէ սկզբունքով, ազգայնական կրօնից դէպի համաշխարհայինը փոխանցվելու համար մի այնպիսի կրօնից, որ կապված է մի առանձին ժողովրդի պատմութեան հետ և որ չէ կարողանում այս ժողովրդի սահմաններից անցնել դէպի մի կրօն, որ կարող է հասկանալի լինել բոլոր մարդերին և քարոզվել բոլոր ժողովուրդներին։

Թվացող հակասականութիւնը։ Եհովայի բնաւորութեան մասին ունեցած խորին հայեացքին մարգարէները կցում են մի յայտ ու վճռ հայեացք աշխարհի ու աշխարհում ապրող զանազան ազգերի հետ նրա ունեցած յարաբերութիւնների մասին։ Մարգարէները բացարձակ յայտնում են որ Եհովա, բացի Իսրայէլից, ուրիշ ժողովուրդների հետ էլ կապեր ունի։ Նա, եթէ կամենար, կարող էր իր համար մէկ ուրիշ ժողովուրդ ընտրել. բոլոր ժողովուրդները գտնվում են նրա տիրապետութեան տակ, և նրանցից ոչ մէկի վրայ նա չէ նայել, իբրև իրան թշնամի մի ժողովրդի։ Նա կախում չունի Իսրայէլից, և շատ պարզ է, որ եթէ սկզբից կարողանար կառավարվել առանց Իսրայէլի՝ ապա այժմ էլ՝ պէտք եղած ժամանակ, կարող է կառավարվել առանց նրան։ Ճշմարիտ կրօնը շարունակելու համար՝ Իսրայէլը ըստ ինքեան մի անհրաժեշտ պայման չէ։ Նայելով իր դիրքին՝ Եհովա Իսրայէլեան ազգային կրօնի ենթադրածից էլ բարձր է։ Նա ոչ թէ լոկ մէկ ժողովրդի, այլ բոլոր ազգերի հրամայողն է։ Նա նրանցից իւրաքանչիւրին կարող է իր ընտրի պէս գործածել, երբ և ինչպէս կամենայ, նա նրանցից իւրաքանչիւրին հասցրել է իր ներկայ դրութեանը և այժմ կառավարում է նրա կեանքը։ Էլ ուրիշ ինչ նպատակի համար է ձեռք բերել նա մի այդպիսի զօրութիւն։ Նա աշխարհը կառավարում է ոչ թէ լոկ մի ազգի շահերը նկատի ունենալով, այլ արդարու-

լեան շահերը։ Նա այնպէս է առաջնորդում ազգերի ճակատագրերը, որ հասնի առաջուց դրած նպատակին, այսինքն՝ ճշմարտութեան համաշխարհային թագաւորութեան հիմնելուն։ Ի՞նչպէս կարծում էին իսրայէլացիք, կարծ այն օրը, երբ նա պատելու է աշխարհը, սակայն Լոկ Իսրայէլը զգուշանայ, որպէս զի այդ օրը նրա համար չլինի խաւարի, այլ լոյսի օր լինի, որովհետև այդ օրը բերելու է իր հետ սրպիսի և է ժողովրդի մեղաւորների պատիժը։ Մեղքը վերջ պէտք է ունենայ ինչպէս Իսրայէլի, այնպէս էլ միւս ժողովուրդների մէջ, որպէս զի կարողանայ առաջ գալ մի նոր աշխարհ։ Այն դիրքը, որ այսպիսի հայեացք ունեցած ժամանակ, առանում է Եհովա՝ ամենայն բարձր է նախ-ապգայնական աստուածութեան դիրքից։ Մարգարէները հետզհետէ պարզ են հասկանում, որ Եհովա աշխարհի և ամէն՝ թէ երկնաւոր ու թէ երկրաւոր բարօրութեան առեղծողն է։ Ոչ երկրի առեղծողը, բոլոր ժողովուրդների կառավարողը, թէպէտև կցանկանար յայտնվել մէկ ժողովրդի, բայց չի կարող նրանով սահմանափակվել։ Միաստուածութիւնը այսպիսով ձեռք էր բերված։ Ահա հին մարգարէները լսում են սրիշ ժողովուրդների աստուածների մասին (թէպէտ Իսրայէլի համար միակ աստուածը Եհովան է) իբրև իրօք գոյութիւն ունեցողների, բայց քիչ-քիչ գալիս են այն համոզման, որ այդ սրիշ աստուածները ամենևին գոյութիւն չունեն, որ նրանք սոդգակի «ունայնութիւն» են կամ «սչնչութիւն»։ Փոխանակ ասելու թէ Եհովա աստուածների մեծագոյնն է և թէ նրա պէս մէկը չկայ՝ այս բարգիչները սարածում են թէ միմիայն Եհովա է աստուած, թէ նա աշխարհում եղած ու կատարվող բոլոր բանների արարիչն է։ Ցայտնապարծած է եղել մի աստուածութիւն, որին փառաբանելու համար ապրում են բոլոր էակները և որին կարող են համարձակ դովաբանել բոլոր ժողովուրդները։

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ (Этическій) ՄՕՆՕԹԷԻՄԸ. Այս արդիւնքները սաացվել են աստիճանաբար. մեծ տարբերութիւն

կայ Ամովսի ու Երեմիայի վարդապետութիւնների միջև։ Եւ չպէտք է մոռանալ, որ այս արդիւնքները սաացվել են ոչ թէ այնպէս, ինչպէս միւս մոնօթէիսմները, այսինքն՝ փիլիսոփայական բնոսթեամբ, այլ զուտ բարոյական միջոցներով։ Եհովա այդպէս մնծանում է այն պատճառով, որ վերին աստիճանի ճշմարիտ է ու սուրբ։ Նրա ճշմարտութիւնն ու սրբութիւնը սրիշ աստուածների համանման յատկութիւններից ամենատարբերն է. աշխարհիս գոյութիւնը միմիայն նրա համար է, որ այդ յատկութիւնները երևան գան նրանում, և այն ամէնը, ինչ որ հակառակ է նրանց, Իսրայէլի մէջ լինի, թէ սրիշ ժողովրդի՝ պէտք է խոնարհի այդ ճշմարտութեան ու սրբութեան առաջը։ Այսպիսով հերքակայվում է որ Եհովա միակ աստուածն է։ Բարոյական իդէալը մէկը պէտք է լինի։ Մարգարէների ազգ կրօնը առաջնորդվում է բարոյական մոտիւներով։ Ամուսնական մարդերից միմիայն սուրբ կեանք է պահանջում. իսկական զոհերը՝ սրտի ու բարոյական կեանքի զոհերն են։ Մարդերի՝ Աստծու հետ ունենալիք յարաբերութիւնները պէտք է կրեն իրանց ազգակցական յարաբերութիւնների բնոյթը, այն յարաբերութիւնների, որոնց մէջ ոչ իշխանութիւնն և ոչ հաշի սոիտուններն են մտնում։ Թէպէտ Ամոսը ամենաճշմարիտ է ու ամենասուրբ, սակայն նա բարոյական մաշկալի է ապօթքներին և պատրաստ է առաջ գնալու իրան դիմողներին։ Անկարող է զոհաբերութիւնների վրայ այնքան դրամ ու աշխատանք վատնելը, քանի որ Աստծու հետ ունենալիք ամենալաւ յարաբերութիւնները կարող են ամենի հասարակ կերպով ձեռք բերվել։ Ամոսը ներում է առանց սրևէ զոհաբերութեան. նրա սէրը և մարդերի մէջ սէր պահելու ցանկութիւնը վերազանցում է այն ամէնը, ինչ որ կարելի է գտնել մարդերի ազգակցական յարաբերութիւնների մէջ. նրա անկրկնելիութիւնը նման է սարվայ եղանակների իրենվելուն կամ ասղերի [illegible]հասասասութեան։ Նա հոգսերով է պաշարվում Իսրայէլի պատճառով, ինչպէս հայրը՝ իր կա-

մասնակ որդու պատճառով, և պատրաստ է ամէն բան անելու, որպէս զի իր որդին իրան վերադարձնի։ Նա պատրաստ է իր բոլոր նախկին ծրագիրները փոխելու, միայն թէ հանուի մի այսպիսի հետևանքի։ Նա կարող է փոխել մարդու բնաւորութիւնը, կարող է տալ նրան նոր սիրտ, եթէ բացի դրանից ուրիշ ոչինչ բան բաւարար չհամարվի կամ թէ բոլորովին կփոխի իր գործելու սեփական եղանակը և կազդի մարդկերի վրայ ոչ թէ պատուիրանքներով, այլ՝ նկարչութեամբ, դրելով իր օրէնքը մարդու ներսը, նրա սրտումը, որպէս զի կարելի լինի ձեռք բերել Աստծու՝ մարդու հետ ունենալիք մեծ ու յաւիտենական կապը։

ՄԱՐԳԱՐԷՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ Այսուհետև մենք պէտք է կանգ առնենք, որպէս զի ուշք դարձնենք միւս մեծ բոյլի վրայ, որ արել են մարգարէները կրօնական զարգացման գործում։ Նրանց այն հայեացքը, որ ձգում են Եհովայի, իբրև մի զուտ բարոյական էակի և մարդու նրա հետ ունեցած յարաբերութեան, իբրև մի բարոյական յարաբերութեան վրայ՝ նման երկու այնպիսի մարդու յարաբերութեան, որոնք պարտաւորված են սիրել միմեանց, օրինակ, այր ու կնոջ, հայր ու որդու՝ կրօնը չվնասում է ոչ այնքան ազգայնական, որքան մի անհատական գործ։ Երբ կրօնը երևան է գալիս համայնական գոհաբերութիւններով, ծիսական շրջ հանդէսներով ու արարողութիւններով՝ այն ժամանակ Աստծու հետ գործ է ունենում ողջ ժողովուրդը, և կրօնական "գործում ուրոյն անձնաւորութեան վրայ մեծ պատասխանատուութիւն չէ ընկնում։" Բայց երբ Աստուած սէր է պահանջում, երբ նա յայտնում է որ իրան ոչխէ գոհեր են պէտք, այլ՝ սէր ու ջերմեռանդութիւն, այն ժամանակ նա արդէն դիմում է ուրոյն անձնաւորութեանը։ Ամէն մարդ, ով կարողանում է սէր բերել նրան՝ իրան կոչված է գտնում նրա կողմից։ Միմիայն իր սրտումը կարող է ամէն մարդ իմանալ թէ Աստծու ուզածի պէս է շարժվել արդեօք. ուստի ով

անկնդիր է լինում կոչին՝ անձամբ է պատասխանատու գտնում իր առանձին պատասխանի համար, և կրօնը գտնում է ոչ միայն իբրև Աստծու և ժողովրդի, այլ և Աստծու և ուրոյն անձնաւորութեան միջև կատարված մի գործ։ Այս պատճառով վերը նկարագրած միջոցին Հրէաների մէջ յայտնվում է անձնական կրօնը։ Երեմիա խօսում է Աստծու հետ. ապօրէնը գտնում է ոչ միայն համայնական պէտքերի, այլև անձնական զգացման մի արտայայտութիւն. հոգին հասկացել է, որ ինքը կոչված է Աստծու հետ ապրելու, ոչխէ միայն ժողովրդի կեանքին մասնակցելու համար։

Մենք բաւական հանգամանօրէն կանգ առանք մարգարէների գաղափարների վրայ, իհարկէ, ոչ այնքան հանգամանօրէն որ բաւարարութիւն տանք այնպիսիներին, որոնք սիրում են նրանց գրութիւնները, որովհետև մենք մի հայեացքով բացատրեցինք այն բանը, որ պատմաբանօրէն վերաբերում է զանազան դարերի ու զանազան մարգանէների անձնաւորութիւններին. մենք ուշք չդարձրինք նրանց այն խոր հաւատի վրայ, որով նրանք վերաբերվում են իրանց խօսքերի ճշմարտութեանը, նրանց սրանչելի արիութեան վրայ։ Մենք միևնոյն ժամանակ հանուր գծերով գծեցինք մարի այն մեծ առաջադիմութիւնը, որ այսպիսի անգրին նշանակութիւն ունեցաւ կրօնական զարգացման համար։ Սրանք այնպիսի աջողութիւններ են, որոնք չեն կորել անհետ, բայց որոնցից մենք մինչև հիմա օգտվում ենք։ Եթէ աչքիս ցնդը այնպիսի ընդունակութիւն ունի, որ Աստծու գաղափարին մի այսպիսի ուղիղ գործական կենսունակութիւն է տալիս, որպիսին երբէք չէ տվել բուն իսրաէլական կրօնը՝ ապա մենք խորին յարգանքով, պէտք է նայենք այն սէմիտ—իմաստունների վրայ, որոնք այս մեծ ընդունակութիւնը յարմարեցրել են աստուածպաշտութեանը, բանի որ Աստուած բացի արդարութիւնից ու սիրուց՝ ուրիշ բնութեան և ուրիշ յատկութիւններ չունի։ Այսպիսով կրօնը թէ նրանց և թէ այն ամենքի հա-

մար, որոնց վրայ նրանք ապրում էին՝ դարձել էր մարդերի մեջ սէր ու արդարութիւն առաջ բերելու մի միջոց. և մենք պահում մեզ համարում չունենք մարգարէների վրայ այն բանի համար, որ նրանց ցանածը չաճեց իրանց օրով։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԱՑՈՂ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԶՆ ՈՒՆԵՑ ՒՐԱՆՑ ԲԵՐՈՒՄ։ Առաջին հայեացքից երևում է որ մարգարէների վարդապետութիւնը պատմել է այն ժամանակից էլ շատ վաղ, երբ աշխարհը պատրաստակամ էր նրան ընդունելու։ Մինչ անգամ այն գործական միջոցները, որոնք կարող են վերագրվել նրանց ազդեցութեանը՝ համապատասխան չեն նրանց գաղափարներին։ Մենք արդէն տեսանք և տեսանք այս բանի պատճառները։ Մարգարէները գործական յեղափոխիչներ չեն եղած։ Նրանց պահանջած յեղափոխութիւնը աւելի անհատական կեանքին էր վերաբերում, քան համայնականին, և նրանք հանդէս չեն գալիս բարեփոխումների (ռէֆորմների) ծրագրերով, մեծ-մեծ գաղափարները նրանք աւելի իրանց ժողովրդի մարերում են ցանում և ուրիշներին են վերապահում իրանց վարդապետութեան գործականութիւնն տալը։ Հրէաների պետութեան գոյութեան բոլորովին վերջը մարգարէներն ու նրանց կուսակիցները երևում են իբրև իրանց ժողովրդի մի շնչին փոքրամասնութիւնը։ Ժողովուրդը հանուր առմամբ չէր հասասում նրանց խօսքերին, կուռքերի, ինչպէս և ուրիշ սասուածների երկրպագութիւնը շարունակվում է, մինչ անգամ Երուսաղէմի տաճարում։ Մի քանի ականաւոր պետականների ներում էր իսրայէլը իր ամբողջութեամբ մի հեթանոս ժողովուրդ է եղել դերութիւնից առաջ և դեռ նա պատնաղում էր դէպի Եհովայի կրօնը։ Կիմնէ համոզիչ կերպով ապացուցում է որ սա մի չափազանցութիւն էր, և որ ժողովուրդն ու մարգարէները հասասարապէս Եհովայի կրօնը Իսրայէլի ճշմարիտ կրօնն էին համարում. բայց մինչև նոյն իսկ դերութիւնը այնպէս չէր կերպարանափոխված, ինչպէս մարգարէներն էին ցանկանում։

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ։ Սակայն Եհովայի խօսքը մինչ անդամ այս ժամանակաշրջանում մի պատարկ ձայն չէր։—Պատմութիւնների մէջ պատմվում են մի ամբողջ շարք բարեփոխումներ։ Նրանք ցոյց են տալիս որ մարգարէական գաղափարները հասասոնների մի զօրեղ կուսակցութիւն են ձևոք բերել ժողովրդի մէջ, և որ մի քանի թագաւորութիւնների օրով աբբունները նրանց ազդեցութեան տակ է եղել գտնուելիս։ Այս բարեփոխումները երկու ուղղութիւն ունեցող առաջադրած են ցոյց տալիս։ Մարդիկ առաջին ցանկանում են Եհովայի կուլտը հասապատասխանեցնել նրա բնոյթի վերաբերմամբ ունեցած նոր ու վսեմ հասկացողութիւններին, այն է՝ իբրև մի անհամեմատ մեծութիւն ու սրբութիւն ունեցող էակի հասկացողութիւններին. միւս կողմից բարոյական զգացման արագ աճումն է նկատվում. ուրիշների վերաբերմամբ ունենալիք արդարութիւնն ու բարութիւնը միշտ առաջ են մղվում, իբրև սասուածութեան պահանջներ։ Մենք կարող ենք լսկ մասնացոյց անել այն տեղերը, որտեղ կարելի է գտնել սրա ապացոյցը։ *Եզեկիայի բարեփոխումները* (Թագ. ա. գլուխ, ժը.) երկար չտևեցին։ Նա աչնչացրել էր Եհովայի նշանաւոր պատկերը, միևնոյն ժամանակ թերևս նոյն վիճակի էին ենթարկվել և միւս պատկերները, և բարեփոխութիւն էր մտցրել ողջ Հրէաստանի սրբազան վայրերի սասուածպաշտութեան մէջ, հետևելով կուլտի հեթանոսական կողմերը և կենտրոնացնելով միմիայն Եհովայի վրայ։ Եզեկիայի յաջորդ՝ Մանասէ հակառակ քաղաքականութեան էր հետևում։ Նրա թագաւորութեան օրով վերահաստատված էին վաղեմի կուլտը, որոնց մի քանիսը թերևս առանձին ցեղերի էին պատկանում. մինչ անգամ մարդիկ պահելու բարբարոսական սովորոյթը Երուսաղէմում էր սահմանված, և Եհովայի կուլտը դարձել էր աւելի անհամեմատելի մեծութիւն։ Իսրայէլի վրայ ձգվում է Ասորեստանի սասուերը, և, ինչպէս սովորաբար լինում է հասարակական ազմուկների ժամանակ՝ վաղուց իվեր սովորութիւնից դուրս

եկած ժէսերը ապրային ու առանձին ուժ ունեցող ժէսեր են համարվում և կոչած տեղից լույս աշխարհը հանվում։ *Յովսիայի բարեփոխումը* (Թագ. 4-րդ գիրք, իբ, իգ.) աւելի հիմնաւոր էր, քան Եզեկիայինը։ Նա վերջ դրեց այն բոլոր անվայել առասւածպաշտութիւններին, որ նրա նախորդը խրախուսում էր Երուսաղէմում, այնպէս որ միմիայն ճշմարիտ երկրպագութիւնն էր մնացել։ Սակայն նրա ամենանշանաւոր գործն այն էր, որ աշխատում էր ժամանակով աշնչացնել այն սրբավայրերը, որոնց մէջ մինչ այն տեղի էին ունենում տեղական կուլտերը, և այսպիսով մարդից երկրի պիտական շրջանների կառավարութիւնը։ Այս բոլորը, ինչպէս մեզ ասում են, տեղի էր ունենում այն օրինագրքի համաձայն, որ մի քանի բարձրաստիճան մարդիկ գտել էին տաճարներում. Յովսիա, մի մարգարէուհու հետ խորհրդակցելուց յետոյ, այս օրէնքներին գործադրութիւն տվեց, միաժամանակ նրանք հանդիսապէս պարտաւորվեց և պարտաւորեցրեց իր ժողովրդին՝ կատարել այդ օրէնքները։ Եւ Յովսիայի գլխաւոր բարեփոխումը այսինքն՝ տեղական կուլտերի աշնչացումը և ամէն առասւածպաշտութիւն Երուսաղէմի տաճարում կենտրոնացնելը մանավանդ օրէնքների մէջ՝ առաջին տեղն է բռնում։ Այս բանը նրանք են հնարել, ովքեր կրօնի բարեփոխումը նկատի ունէին մարգարէների գաղափարների համաձայն։ Միակ բարձրագոյն Աստծուն երկրպագելը կարելի է—այսպէս էին մտածել նրանք—միմիայն մէկ տեղում և պէտք է ազգային բնոյթ ունենայ. բոլոր ժողովուրդը միակ Աստծուն պարտաւոր է երկրպագել նրա մայրաքաղաքում։ Միջոցներ էին ձեռք առնված, որ սա պիտական շրջաններում բնակիչների համար մեծ դրդիչ լինելու պատճառ չդառնար։ Առաջ ամէն՝ կենդանի մորթելը տոնախրութիւն էր, և միտը իրրև կերակուր գործածելը կարելի էր միայն տոնախրութեան հետ միաժամանակ։ Բայց յետագայում մտել էր մորթել կենդանիները Երուսաղէմից էլ դուրս՝ միայն իրրև կերակուր գործածելու, առանց

սրեւէ կապ ունենալու տոնախրութեան հետ։

ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ։ Յովսիայի բեղափոխութիւնները նրա գահի յաջորդը շատ շուտ էր խափանել, և այլևս բարեփոխումների առիթ չկար, քանի որ ժողովուրդը մնացել էր Պաղեստինում։ Բայց գերութիւնը չսիրեց բարեփոխումների բարեկամներին՝ հրաժարվել իրանց պաղափարներից։ Մարգարէները պահպանել էին գերութիւնը և այնպէս էին, թէ Իսրայէլի կրօնը չի աշնչացվի, այլ նրա հակառակ կմրկվի այդ գերութեամբ, և բանից երևեցաւ որ նրանք այս կողմից էլ իրաւունք ունէին։ Գերութիւնը վերջնապէս տանել էր ժողովրդին կատարեալ հեթանոսութիւնից և նախընտրել նրանում այն միտքը, թէ նա մի առանձին տեսակի ժողովուրդ է, որ կոչված է կատարելու մի այնպիսի գործ, որ ուրիշ աշխարհի ժողովուրդ չէր կարող կատարել կամ մինչ անգամ հասկանալ, այսինքն բարձր բռնել ճշմարիտ կրօնի դրօշակը աշխարհի բարիքի համար։ Այս համոզումը գերութեան ժամանակի *անցեալ մարգարէի* գուշակութեան բովանդակութիւնն է (Եսայի, ԽԹ—Ձէ.)։ Նա իր նախորդներից բարձրանում է փառաբանում Եհովայի կարողութիւնը։ Նա Եհովային համարում է աշխարհում որոշ նպատակների համար ընտրած մի էակ, որի համար ժողովուրդները, մինչ անգամ մեծ Բաբելոնի ժողովուրդը, կարող են շաղրավել ուր կամենար, ինչպէս գոյից գոյացած մի կաթիլ ջուր. նա է ընտրել Իսրայէլին իրրև իր ժողովուրդ և մխիթարում է նրան աքսորման վշաների մէջ։ Այն մեծ դրամի (драма) մէջ, որ նա յուզում է աշխարհում՝ Իսրայէլը գլխաւոր դերն է կատարում։ Իսրայէլը կոչված է յայտնի անելու ճշմարիտ Աստուածը նրան չճանաչող ժողովուրդներին։ Վաղուց էր գուշակված որ հեթանոս ժողովուրդները գալու են Սիօն լեռը՝ հրէից Աստծուն խոնարհ հարցնելու, և որ Եհովա պատրաստ է նրանց օրհնելու ու պատասխանելու։ Անյայտ մարգարէն ընդարձակօրէն է խօսում այս բնաբանի վրայ, և, հոյակապ պատկերներ նկարելով՝ ձգտում

է համոզել ժողովրդին, որ՝ այս գործը իր առաքելությունը լինի և հասկանայ իր վրայ դրված պատասխանատվությունը: Իսրայէլը պէտք է լինի ժողովուրդների լուսաւորը, առաջնորդն ու հրամայողը: Հեթանոսները պէտք է գան հեռուից, բերելով իրանց գանձերը, և Ծառային ճշմարիտ հաւատի տէր ժողովրդին: Եթէ Իսրայէլը դեռևս պատրաստ չէ աշխարհի համար այս գործը կատարելու, ապա իր մէջ կան ընտրեալ մարդիկ, որոնք լիովին համաձայն են Եհովայի մտադրութիւններին և բոլորովին անձնատուր են նրա կամքին: Այս՝ «Եհովայի ծառան» կանգնած է իր կոչման բարձրութեան վրայ. Եհովայի ոգին նրա մէջ է դրնված: Նա չի դատճանի գործին և չի վհատվի, մինչև որ ճշմարիտ կրօնը չհաստատվի աշխարհում: Մարգարէութեան մի այլ տեղում «ծառայի» դէրը մուխ գոյներով է նկարվում: Նրա հետ վատ են վարվում, նրա արածները սուտ են մեկնվում, մինչ անգամ երբ նա չարչարվում է ուրիշների համար՝ նրան ծաղրում են, արհամարհում են. և դեռ ասելին կասեմ՝ նա մեռնում է իրրև նահատակ, մեռնելով ոչ իր սեփական մեղքերի համար: Սակայն մինչ անգամ այսպիսի պայմաններում Աստծու ծառան վերջ ի վերջոյ յաղթող է դուրս գալու: Նա իմանալու է որ իր չարչարանքները զուր չեն. նա դառնալու է չատերին ի պիտութիւն ճշմարտութեան բերող մի միջոց, նա լինելու է Եհովայի գործիքը՝ աշխարհում ճշմարիտ կրօնը մոյնելու համար:

ՎԵՐԱԴԱՐՁԸ: ԵԶԳԻՒ ԲԱՐԵՓՈԽՈՒՄԸ: Այս խրատները իրենց ներգործութիւնն ունեցան այն ժողովրդի վրայ, որին ուղղված էին, և երբ հրէաները Պաղէստինէ վերադարձան՝ այն ժամանակ անշուշտ ոգևորված էին իրանց առանձին ազգային առաքելութեան նոր գիտակցութեամբ: Նրանք խոսքն և եթէ վճռեցին ցոյց տալ, որ իրանք մի բոլորովին առանձին տեսակի ժողովուրդ են, և զգալի, մինչ անգամ խիստ կերպով երես դարձրին շրջապատող ժողովուրդների հետ յարաբերութիւն ունենալուց: Նրանք էլ իսկոյն և եթէ Եհովայի կուլտը հաշակեցին իրրև միակ Աստծու կուլտ, որ իր միակ սրբավայրը հաստատած ունի Երուսաղէմում:

Նրանց՝ Պաղէստինէում արած առաջին փորձերը ոչնչով միխիթարական չեղան: Մի ամբողջ դար նրանք մի պատերազմող խեղճ համայնք էին, և կասկածելի՛ էր, թէ կարող էին այնքան զօրեղ լինել, որ պահպանեն իրանց առանձին կերպը և ան աշխարհին իրանց յայտնութիւնը: Սակայն այդ ժամանակ օգնութեան հասան նրանց Բաբելոնում մնացած հրէաները: Այս մարդիկ երբէք չէին դադարում իրանց պաղէստինեան եղբայրների հետ միասին իրանց ժողովրդի առաջադիմութեան համար աշխատելուց. մանաւանդ լրջօրէն մշակում էին կուլտի խնդիրը և նրանց ջանքերի արդիւնքը եղաւ մի կրօնական կանոնադրութիւն, որ այնքան խիստ էր իր դատաստիաններով, այնքան տրամաբանօրէն էր մշակված բոլոր մանրամասնութեամբ, այնպէս շնորհքով էր մարմնացնում ու ամփոփում իր մէջ ժողովրդի բոլոր անցեալ աւանդութիւնները ու սովորոյթները, որ համարեա կարելի է ասել, թէ նա ընդունակ է դէմ կենալու ինքն ըստ ինքեան և անշուշտ թէ՛ ան ընդունող ժողովրդին տալիս է անհրաժեշտ պաշտպանութիւնն ու կարգապահութիւնը:

ՀՐԷԱՆԵՐԻ ԿՐՕՆԸ, որ մի այսպիսի օրէնք ունի, սովորաբար տարբերվում է Իսրայէլի կրօնից, որ իշխում էր մինչև նոյն իսկ գերութիւնը. մի քանի կարևոր նոր սկզբունքները էլ անշուշտ այդ ժամանակին են առաջ եկել: Յարմար կլինի այս գլուխը աւարտել, թէվելով նախ հրէաների կրօնական կեանքի բնորոշ գծերը, որոնք կապված են Օրէնքի կամ քահանայական սիստէմի հետ, իսկ յետոյ նրա այն գծերը, որոնք այս սիստէմից դուրս են:

1) Քահանայական կրօնը հիմնված է մի այնպիսի զգացման վրայ, որ լսկ մի շնչին դեր է կատարում նախնական ժողովուրդների կեանքում, այսինքն՝ մեղաւոր լինելու գի-

տակցութեան մէջ։ Մարդպարէների կողմից Իսրայէլի հատուցարարութեան կշռամբարում վերջապէս նա մօտ առաւ իր սրտին և ժողովուրդը ընդունեց մի սխալէմ, որ հատատում էր, թէ իր բոլոր անցեալ պատմութիւնը լի էր մեղքերով ու մոլորութիւններով, և թէ մեղքերի թողութեան համար պահանջում մի մշտական անհրաժեշտութիւն կայ։ Իւրաքանչիւր պահք սկսւում է ապաշխարանի մեղքի երկար ու բարակ խոստովանութեամբ, որի մէջ այժմեայ սերունդն էլ է յանձնարարւում։ «Մենք մեղանչել ենք մեր հայրերի հետ», ասված է այդ պահքերում։ Այս հայեցողութիւնը սիրուած է պատմական գրքերում առանձին միապետների, ազգային կեանքի յայտնի շրջանների և մանաւանդ ողջ հիւսիսային թագաւորութեան (Նեհեմ. Թ.) մասին արված կարճառօտ դատողութիւնների մէջ։ Եհովայի՝ իր ժողովրդից անբաժան լինելու վաղեմի հատաւորը այժմ անհետացել է։ Հին իսրայէլացիք բնաւ չէին տարակուսում որ Եհովա իրանց մէջ է գտնվում. սա բան բնութեան հետևակացիում էր, եթէ միայն փառաւորը չէին ապացուցում հակառակը։ Սակայն այժմ Եհովա աւելի մեծ ու ահաւոր է դարձել, քան ժողովուրդը յաւ լ սիրտ տեսել է իր թևութիւններըը և, չկարողանալով ենթադրել, որ Եհովա միշտ իր հետ է՝ միջոցներ պէտք է ձեռք առնի, որպէս զի ապահովի նրա ներկայութիւնը։ Սա անտարակոյս կապ ունի անձնանձան սկզբունքի զարգացման և կրօնի վերաբերմամբ պատասխանատուութիւն ունենալու հետ։ Ժողովրդի կամ ցեղի համար բնական բան է իր գործը իրագործի համարել ու կարծել թէ Աստուած իր հետն է. սակայն անձնաւորութիւնը, որի պահանջների նկատմամբ ազատ է իսկական պահք է ընդունակ զգալու մի այսպիսի համոզում։ Այն ինչ մարգարէների բարոյած կրօնը գլխաւորապէս անձնաւորութեան է վերաբերում։ Եզեկիէլ մանաւանդ զգում էր որ ինքը պատասխանատու է բոլոյն անձնաւորութիւնների վիճակի նկատմամբ և աշխատում էր իր հայրենակիցներից խլտարանչիւրի

մէջ զարթեցնել սպասնացող վտանգի և իր պատասխանատուութեան դիտակցութիւնը. նա սովորեցնում էր, որ ամէն մարդ պարտաւոր է հոգ տանել իր անհատական փրկութեան մասին, որ ամէն մարդ իր անհատական գործերի պատուն է քաղելու։ Այս բոլորը ասելի խոր զգացում ու խստաբար ոգի է պահանջում կրօնի մէջ, քան այն ժամանակ, որ մեղքի խոստովանութիւնը, որից այնպէս խիստ կախում ունի կրօնական առաջադիմութիւնը իր բարձր աստիճաններում՝ աստիճ արմատացած էր հրէից կրօնի մէջ։ Որ հրէաները իրանց մասնաւորութեան եղանակի մէջ արմատական փոփոխութիւն էին ենթարկիլ՝ դա ապացուցում է այն փաստով, որ նրանք հպատակել էին օրէնքի լծին. և մենք կարող ենք հարցնել՝ արդեօք կայ մի ժողովուրդ, որ իր բնական ազատութիւնը այն աստիճան զոհած լինի կրօնի պատճառով, ինչ աստիճան զոհել էր հրէայ ժողովուրդը։

2) Աստուածային կամքը այժմ ժողովուրդը ընդունում է *սրբազան գրքով*։ Ժողովուրդը էլ ականջ չէ դնում մարգարէների կենդանի ձայնին, և գալիս է այն համոզման, թէ Աստուած լաւ գրքով մի լրիւ ու կատարեալ յայտնութիւն է շնորհել իրան։ Գիրքը բռնում է մարգարէի տեղը, մի փոքր էլ թագի տեղը։ Մարդը էլ ինքը չէ մտածում թէ՝ նրան է ասում ու ճշմարիտը, այլ միայն հարցնում է. ինչ է ասում օրէնքը։ Ճշմարիտ է, գրքի մի նշանաւոր մասը պրպտված է ծիսական կողմով, որի հետ սովորական մահկանացուն փորը ինչ դէպք է ունենում գոյն ունենալու, սակայն մարդը հաւատացած է, որ այնտեղ պարզված են իր բոլոր պարտաւորութիւնները։ ՃԺԹ. ապրմսից մենք տեսնում ենք թէ ինչ սիրուն ձև կարող է առանել կրօնը մինչ անգամ այն պայմաններում, երբ իսօսկու նեղմտի դարձած դիրքը մի հոգևոր գանձ է հանդիսանում և կենդանի Աստծու գաղափարն է ճառագայթում, բայց գրքի կրօնի սիստէմը բոլորովին տարբեր սպասնելի սերմեր է պարունակում իր մէջ։ Սրբազան գիրքը հասարակ

վում է այն ամէն բանը պարունակող մի գիրք, ինչ որ կարելի է պահանջել մարդուց. բայց նրան գործական կեանքի այլ և այլ դէպքերում գործադրելու համար՝ պէտք է մեկնել այն ու եզրակացութիւններ հանել նրանից։ Այսպիսով նա տալիս է բազմաթիւ ցուցումներ, որոնք ուղղակի չեն յայտնված։ Այսպէս նրան է պատկանում երկրորդական օրէնքը, կամ «աւանդութիւնը»,—մի սիստէմ, որ գիտնականների դասակարգի առանձին ճիգերն է պահանջում։ Պատիւները, որոնք մեկնում են օրէնքը ու գործադրում կեանքի մէջ՝ մեծ ազդեցութիւն են ձեռք բերում և դառնում են ժողովրդի անյայտ մնացած ուղեցոյցները։ Ժողովուրդը, գլխաւոր կէտերում առաջնորդվելով իր կրօնի ազնիւ ոգով՝ դպիրների սիստէմի երեսից մանում է շատ մոլորութիւնների մէջ, որոնց սոփհատութիւնը (կազուիստիկա) ժամանակ առ ժամանակ մինչ անգամ անբարոյական է դուրս գալիս։ Դպիրները ըստ ինքեան մի դասական օրինակն են այն հետևանքների, որոնք բխում են լիովին մշակված բանաւոր ճեղագրութիւից. հրէաների կեանքը դպիրների օրով շատ անբնական ու արհեստական է դառնում, և ժողովուրդը սկզբով է սկսում զբաղվել կրօնի ոչ այնքան միջոցով, որքան կեղևով։

3) Առաւածային կամքի գլխաւոր կողմը, ինչպէս ասում է օրէնքը, կապված է զոհաբերութեան հետ։ Զոհաբերութիւնը գրքի մէջ կենտրոնական տեղն է բռնում, նոյնպէս և այն պատմութեան մէջ, որի մասին խօսում է այս գիրքը։ Տաճարի առաւածպաշտութիւնը, որ այնպէս է ներկայացված, իբր ճիշ անապատում ճափառելու ժամանակ [տաղաւարի մէջ կատարվող առաւածպաշտութեան տեղն է բռնում՝ ներկայացվում է այս գրքում իբրև մի մեծ նպատակ, որի համար Առաւած ստեղծել է աշխարհս, բնակեցրել է ժողովուրդներով և Իսրայէլին սերտ կերպով միացրել մի ամբողջ ժողովուրդ է չինել։ Երուսաղէմի աւերումից առաջ պահպանված ծիսական կողմը նկարագրված է Ելից ու Դևտացոց գրքում։

Մենք կարդում ենք քուրմերի դասակարգերի ու համայնքների մասին, որոնք բերում են արդօրեայ և միւս զոհերը, համաձայն այն օրէնքի, որի մէջ ինամքով կարգի են բերված ամենաչնչին մանրամասնները,—զոհեր, որոնց մէջ սակաւ են պահպանվել նախկին հանուր ուրախ հացկերոյթի հետքերը, բայց որոնք աւելի մարդով կամ ½ գումի շարժով բնոյթ ունեն։ Հարիւնցի պիտոլին զոհաբերութեան ծէսերը այնպէս կթվան, իբր թէ քիչ են տարբերվում յունաց ու հռոմայեցոց ծէսերից. հրէաները, իհարկէ, զոհաբերութիւնները աւելի մեծ շափերով էին կատարում։ Թէ ինչ նպատակ ունէին այդ միջոցները,—սրան հրէան լաւ ևս դժուար կպատասխանէր։ Զոհաբերութիւնը այն պատճառով էր անվում, կասէր նա, որ օրէնքն էր այդպէս հրամայում. իսկ օրէնքին անհրաժեշտ է ստորագրվել, մինչ անգամ չհասկանալով նրա պատուէրները։ Ամենօրեայ զոհաբերութիւնը նկատի ունէր տաճարի սպասաւորների մարդակեցութիւնը և հնարաւորութիւն էր տալիս ժողովրդին հաւատացած լինելու այն բանում, թէ Առաւածութեան դէպի նրան ցոյց տված շնորհը չպատնակվում է։ Զոհաբերութիւններից շատի նպատակը՝ յայտնի մեղքերի առաջն առնելն էր. զոհաբերութիւններով այլն շնորհակալութիւն էր արտայայտվում. և միւս [զգացումները լաւ ևս վեր էին բարձրանում զոհի սեղանից բարձրացող ծխի հետ միասին։ Հեռաստանում բնակող հրէաների համար զոհը, որ կարող էր միմիայն Երուսաղէմում կատարվել՝ նրանց կրօնի գլխաւոր սիմբոլն ու մեծ գաղտնիքն էր։

4) ՍՐԲՈՒԹԵԱՆ հասկացողութիւնը սերտ կապված է հոգու հետ։ Եհովային պատկանող առարկաները ու մարդիկ սուրբ են համարվում և դուրս են հանված սովորական գործածութիւնից։ Մինչ անգամ նրանց անզգայ դիպչելը վտանգաւոր է։ Եհովա մի այնպիսի էակ է, որին չի կարելի մոտենալ. քահանապետը կարող է մուտք գործել տաճարի ամենանաև բրին ժամը, բայց տարին մէկ անգամ միայն, և այդիչ

ոչ ոք չի համարձակվի մտնել այնտեղ. քահանաները կարող են մտնել տաճարը, բայց ժողովուրդը՝ ոչ: Տաճարի մասին անխոհեմ կերպով խոսելը մի այնպիսի յանցանք է, որ հրէաները չէին ներում: Զարմիկը ահրեշական օր էր. մի այսպիսի օր ոչ ոք չպէտք է հոգ տանի իր կենցաղական գործերի մասին: Աստուածամերձները այնպիսի սարսուռ է ազդում, ինչպիսին ոչ ոք չէ ազդում. նրան պատկանած ամէն բանի երկիւղածութեամբ պէտք է նայել: Սրբութեան հասկացողութեան հետ կապված է մաքրութեան հասկացողութիւնը: Պարսկաստանի վերջին կրօնի մէջ՝ հնութեան պարտաւոր էր միշտ յիշել թէ ինչն է պատկանում բարի ոգուն և ինչն է դանուում չար ոգու իշխանութեան տակ: Հրէան, որ նոյնպէս կոչված է սուրբ լինելու և ուրիշների հետ չխառնվելու՝ շրթունակ ահ ու դողի մէջ է, չլինի թէ որևէ անմաքուր բանի դիպչի ու զրկվի իր սեփական մաքրութիւնից: Կան սուրբ ու անսուրբ կենդանիներ, որ նա չպէտք է իրեն կերակուր դրծածի. մաքրութիւն պահպանելու համար՝ ձեռքերի ու անօթների զանազան լուացումներ են հարկաւոր. կան շատ այնպիսի պարագաներ, որոնք այնպիսի նիւթերի հետ են շփվել պահանջում, որ համարեա անհնարին է լինում մաքրութիւն պահպանել: Այս այսպէս լինելով՝ մարդը պղծվում է, ուստիև հեթանոսի նման, կամ սեղանակից լինելով հեթանոսներին: Այսպիսով հրէաները հատատուում էին այն հասարակութեան մէջ, թէ իրանք բարձր են ուրիշ ժողովուրդներից, և պէս-պէս պատուարներով պաշտպանվում էին նրանց հետ խառնվելուց կամ մինչ անգամ նրանց իրերն եղրայրներն նայելուց: Նրա թլփատութիւնը, նրա շաբաթը, նրա սրբութեան, մանաւանդ կերակրի սրբութեան օրէնքները, այն հանգամանքը, որ նրա համար անպայման անհնարին էր հեթանոսների հետ ուտել,—այս բոլորը նրան մեկուսացած էր պահում և նրանում ամբարտաւանութեան ու բացառականութեան ոգի էր ծնունդ տում: Հին *մարգարէների* ասելով՝ ճշմարիտ երկրպագուն նա է, ով բարոյապէս մաքուր է, ով չարչարել է իր կրքերին ու էպիտեմական դրդումներին. յիսուպայ ժամանակի հրէայի համար էլ սա կարող է տեղի ունենալ, սակայն կան դէպքեր մի ամբողջ շարք անխուսափելի պարտութիւններ, որպիսիք մարգարէները չեն էլ երազել: Եհովայի լինը բարձրանալ ուզողը չէր կարող իրրև կերակուր դործածել փափկամարմին կենդանիներ կամ խոզինի, չէր կարող շաբաթի օրով առհասարակ անել, չէր կարող դիպչել մեռած մարմնի կամ դործածել հեթանոսի տված գոտը, առանց առաջուց լուանալու: Նոր Ուխտը պարզ ցոյց է տալիս, թէ այս բանը ոչնչան էր խանգարում հրէայ ժողովրդին մաքուր կրօնի միսիոներ լինելու, և ինչպէս պետական ազգ սիամոր խափանափիլ էր լինում կրօնը լուրջ կերպով ընդունելուն ու նրա տարածելուն: Սակայն այս հանգամանքը ժողովրդին մեկուսացած էր պահում աշխարհից և նրան հատատարիմ էր դարս բերում իր կրօնին մինչ անգամ ամենամեծ փորձութիւնների ու ամենախիստ հալածանքների մէջ, և այսպիսով նրան ընդունակ էր դարձնում՝ պահպանելու այն լիամկապին դանձը, որ հատատացված էր իրան, քանի որ չէր եկած այն ժամանակը, երբ աշխարհը պատրաստ էր նրա ձեռքից այդ դանձը:

ՀՐԷՈՒԹԵԱՆ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ: Մեր նկարագրած սխալմամբ, որի մէջ մարգարէների վարդապետութիւնը ընդունել էր ծիսական կողմն ու օրէնքը, կան պանդուխտ տարրեր, որոնք կրօնական զարգացման բարձր աստիճանին չեն պատկանում: Այն միջոցին, երբ գոհարերութեան ձէսը, որ արտաքուստ բարձր չէր կանգնած հեթանոսութիւնից, մի աստիճան արդարանում է նրանում մտնող սահպատմներով, սուրբ ու անսուրբ բաների վարդապետութիւնը չէ հիմնված ոչ մի բանաւոր (ռացիոնալ) հիման վրայ և յիշեցնում է վերջինի ցելի մի համրողջ շարք տաբուն, որ ոչ որ չի կարող բացատրել և սովորական կեանքը մի ամբողջ շարք նրբացած ու

ճնշողական կանոններին ստորադրելը ցույց է տալիս նրանց ստորադրված մարդերի աւելի բարեկաշտութիւնը, քան լուռ-ւորված լինելը։ Այն անօթը, որի մէջ պահվում էր հրէական կրօնի պինին, որպէս դի ուրիշ հեղուկների հետ չխառնվէր՝ պէտք է լինէր նեղ ու պինդ, բայց ինքն անօթը վերադրվում է կոպիտ ու նախնական աշխարհին։ Հրէաների այս ժամանակվայ կրօնի մէջ կան և բոլորովին այլ տարրեր, որոնք ոչ լիէ յետ են տանում, այլ առաջ են քաշում, և պարզ որոշում են կրօնական պրօգրէսի ապագայ ընթացքը։ Թէպէտ տաճարում կատարվող ծէսերը կոպիտ էին, թէպէտ օրէնքը հետևում էր հրէայի իւրաքանչիւր գործողութեանը՝ այսուամենայնիւ մարդերը մնում էին ազատ. այն ճշմարտութիւնները, որոնք բաց էին անում նրա մարդի առաջը իրանց դանձերը՝ բաւարար վարձատրութիւն էին արտաքին ճնշման վոխարէն, և ցնորքների մի սիրուն աշխարհ էր բացված նրա համար, իսկ այդ աշխարհում անցեալը միացած էր մեծամեծ ակնկալութիւնների հետ։

ՀՈԳԵՒՈՐ ՏԱՐԲԵՐԸ։ Սաղմոսարանում ուրախութեան ու յաղթանակի ձայն է լսվում այն բանի համար, որ Թէյիսմի մեծ ճշմարտութիւնները անկասկածելի են հանդիսանում։ Այժմ հարցերը հրգերի մէջ այն է արտայայտում, ինչին որ այնքան քչերը բաղութիւն ունեցան հաւատալու, երբ մարդարէն առաջին անգամը հռչակեց,—այն է՝ որ Եհովա ժողովուրդներ կառավարող մի Թագաւոր է, որ նա անասելի կերպով բարձր է բոլոր առաւածներից, և որ մինչ անգամ չկայ մի ուրիշ աստուած՝ բացի նրանից։ Այն ուրախութիւնը, որ ցույց է տալիս Թէ վերջացած են աշխարհս կառավարող ուժերի նկատմամբ ունեցած տարակոյսները, Թէ այժմ ամէն բան այս մարդի պայծառ լոյսով է լուսաւորվում՝ արտայայտվում է գանազան կերպով։ Հաւատացողները նորից զուարճանում են՝ Եհովային երկրպագելով, նոր գեղեցկութիւններ են տեսնում նրա օրհնաններում ու տաճարներում նրան պաշտելու մէջ, հրճվում

են նրա խօսքի վրայ, որ կապված է իրանց կեանքի իւրաքանչիւր կողմի հետ։ Այժմ նրանք աշխարհը այնպէս լաւ են հասկանում, ինչպէս առաջ երբէք չէին հասկացել. նրանք այդ աշխարհը Եհովայի տեղծած են համարում, և փառաբանում են արարչագործութեան բոլոր պրօցէսին։ Իրանց ժողովրդի պատմութիւնը նրանց ներկայանում է նոր լոյսով, նրանք նոր եղանակով բարոյական խնդիրներ են լուծում, տեսնելով որ չարերը բաղօրութեան մէջ են, իսկ բարիները սոսկ տակ մնում։ Սաղմոսներում շատ տեղ է խօսվում ծիսական կողմի մասին. դրա, այդ ծիսական կողմի վրայ դէնատորապէս նայում են իբրև դոհութեան ու փառաբանութեան արտայայտութեան՝ Եհովայի օրհնելի գործերի ու բարեբարութիւնների համար. սա գաղափարական մարդ մի ջերմեռանդութեան արարողութիւն է, որին կարող են մասնակցել համարվել ոչ միայն Եհովայի ճշմարիտ երկրպագունները, այլ և բոլոր ժողովուրդները։ Մեւս կողմից՝ Եհովայի բարոյական պահանջները կատարելը և դէպի նրան տաժած անշահ հաւատարմութիւնը, այն միջոցին, երբ աշխատում են կատարել նրա կամքը՝ միշտ առաջ է շարժվում իբրև Աստծուն հաճոյանալու և բոլոր փորձութիւնների դէմ պաշտպանվելու համար նրա հովանաւորութիւնը ձեռք բերելու մի ճշմարիտ միջոց։ Կրօնական կեանքի շատ բիչ կողմերն են մնացել սաղմոսներում՝ առանց չօշափվելու. զղջում, կասկած, ընտանեկան վիշտ, լռութիւն, միայնութիւն, մահամերձ վիճակ, մեծամեծ անցքերի պատճառած յուզմունք, հալածման սարսափ, բնութեան խաղաղ պննում—ամէն բանի մասին տտված է, ինչ հարկաւոր է։ Մի բանի սաղմոսների նեղվքները ազգայնական բնոյթի մի այնպիսի կողմն են ցոյց տալիս, առանց որի պատկերը լրացած չէր լինի։ Այս կողմը կարող է մեղմանալ, ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ այդ սաղմոսներում խօսողը համայնքն է, և որ լաւ բանի Թշնամին աւելի բիչ է արժանի ներողամտութեան, քան անձնական հակառակորդը։

Դեռ չէ վճռված այն հարցը, թէ կարող է պատահել որ սովմոնների մէջ բոլոր եղած չեզածը ուժի համաչափ հատ հատարկի, քան ուրոյն անձի բանաստեղծական ներշնչում։ Թէ մէկ ու թէ միւս մարդ՝ սովմոսարանը զօր է ազդում իրրև քրիստոնէական ու հրէական երգասացութիւնների մի գիրք. Իսրայէլի կրօնի մէջ միշտ մի զարմանալի դիծ կլինի այն հանգամանքը, որ հէնց որ մարգարէները յայտնագործեցին Աստծու միութեան ճշմարտութիւնը, նա այդ ճշմարտութիւնը տարաւ մի այնպիսի արտայայտութիւն, որը յարմար եղեւ աշխարհիս բոլոր ժողովուրդներին։

Գերութիւնից յետոյ հրէաները *կրօնական ասոցիացիայի**) մի նոր ձեւն են ընդունում, որ զարգացման բարձր աստիճանն է ցոյց տալիս։ Ճաճարում կատարվող ատուաձաշութիւնը սովորական աշխարհականը չէ մասնակցում, կամ միայն յայտնի դէպքերում է մասնակցում։ Ճաճարում ամէն բան քահանան է անում. մինչ անգամ սովմոնները արքաներ ապաշխանների երգեցիկ խմբերն են երգում։ Գիւղի բնակիչը շատ ուշ-ուշ է կարող վկայ լինել այս մեծ հանդէսներին։ Բայց մենք գիտենք որ Մակաբայեցիների ժամանակ երկիրը լի էր ժողովրդանոցներով, այսինքն՝ այնպիսի շինութիւն, որտեղ շրջակայ բնակիչները յաճախում էին շաբաթ օրերը, իսկ ուրիշ օրեր՝ հանուր ազօթքն սկսելու և Մ. Գրքի խրատները լսելու։ Անհրաժեշտ էին տեղական կրօնական պրէ ժողովներ. յուրջ ժողովուրդը առանց այդ ժողովների չէր կարող կառավարվել, իսկ տեղական պահարեւութիւնները անցեալի գործ էին։ Սակայն ժողովրդանոցի պաշտամունքը հրէից կրօնական վիճակում մի խոշոր բայլ է։ Այժմ նրանք կարող են հաւաքվել, նկատի չունենալով կատարելու ոչ մի արարողութիւն կամ խորհուրդ, այլ անձնատուր լինելու բացառապէս կրօնական մտորումների։ Մի և

*) Համայնքի անգամ դնդունվելը, կապ։

Հ. Թ.

նոյն բայլը, ինչպէս կտեսնենք, այն ժամանակներում արված էր Ճաճատանում. ինչպիսի կրօնական կամ բարոյական առաջադիմութիւնների էլ որ նրանք ձգտէին, այսուամենայնիւ տեսել էին լրջութիւն որոնել այդ առաջադրմութիւնները փիլիսոփայական գրուածքներ կարդալու մէջ։ Սակայն ժողովրդանոցը աէրիտոբեալ հիմնարկութիւն էր. բոլոր հրէաները տեղական տեղերից այնտեղ էին գնում գունդ-գունդ։ Նա նրանց ծանօթացնում էր այն օրէնքին, որ այլապէս նրանք կարող էին մոռանալ, այլև մարգարէների գրուածքներին, որոնք կարդացվում էին ամէն անգամ, այդպիսով ամրացնելով այն կապը, որ բոլոր հրէաներին միացնում էր անցեալ պատմութեան և իրանց ժողովրդի աճող յոյսերի մէջ։

ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՅՈՅՍԵՐԸ։ Հրէութիւնը հետզհետէ մի ազգնակութեան կրօն է դառնում, ինչպէս տեսանք է այն հատուածին, որի իրրև նախապատրաստներ հանդիսանում են մարգարէները։ Զուրկ լինելով քաղաքական գործունէութիւնից, հրէաները չնորհիւ այն բանի որ հետզհետէ հեթանոս տիրապետողների իշխանութեան տակ էին ընկնում, և խորին կիրքով զղալով այս նուաստացումը՝ դիմում են իդէալական աշխարհին, որտեղ իրանք ազատ են։ Մարգարէները խօսում էին այն գաղտնաստանի մասին, որտեղ եհովա գտնելու է ազգ աշխարհը, այն երանելի ժամանակի մասին, երբ Իսրայէլը վայելելու է խաղաղութիւն, և ճշնամիները այլևս չեն անհանգրստացնելու նրան, իսկ Աստուած ու ժողովուրդը ապրելու են միաբանական սիրով,—այն ժամանակի մասին, երբ Իսրայէլի երկիրը դառնալու է ազգ աշխարհի կրօնական մայրաքաղաքը։ Նրանք ակնարկներն այս գաղափարին էլ ակնի գաղափարական դեր և յայտնեցին որ արտաքին աշխարհում կռիւը դադարելու է, վայրենի կենդանիները դառնալու են ձանձաստան ու բարի, և ամէն ֆիզիկական ու բարոյական չարիք անհետանալու է։ Այս բոլորը իրագործվելու է այս աշխարհում, և ոչ մէկ հետաքրքրութիւն դառնելում կամ անդրգերեզմանային աշխարհում։

Երուսաղէմը երեան է գալիս իբրև պատկերի կենտրոնը և նրա առաջին տեղը բռնում են հրէաները, իբրև համաշխարհային Աստծու ընտրեալ ժողովուրդ։ Մարգարէների անորոշ կերպով ու գաղափարական մտքով արած գուշակութիւնները՝ հրէաները միշտ լրջօրէն էին ընդունում և մշակում էին ամենայն մանրամասնութեամբ։ Մարգարէից յետոյ գալիս է յորդրրդատու (апокалиптический) դրողը, ինչպէս Դանիէլ (Նոր Ուխտի Յայտնութիւնը գրականութեան նոյն կարգին է վերաբերում), որ ճշտութեամբ նկարագրում է դէպի վերջին դատաստանը տանող պատմութեան ընթացքը, նշանակում է նրա ժամանակը և շատ մանրամասներ է տալիս վերջին ժամանակների դործերի վիճակի մասին։ Այս յայտնութիւնները, որոնք սովորաբար գրված են հրէաներին իրանց փորձութիւնների մէջ պաշտպանելու և հալածանքներ տանելու տոկունութիւն ներշնչելու նպատակով շատ ժողովրդական էին։ Ճշմարիտ է, դրանք ազգային հպարտութիւն էին ներշնչում և հրէային սովրեցնում էին որ իրան բարձր դպչ այն աշխարհից, որի մէջ ինքը բարձր տեղ չէր բռնում արտաքուստ. սակայն միւս կողմից՝ նրանց տաժան յոյսերը անպատճառ նիւթական յատկութիւն չունէին. քրիստոնէութեան ժամանակ մենք տեսնում ենք որ ամենամարդուր բարեպաշտութիւնը Իսրայէլի փրկութեան յոյսն է համարում։ Այս շրջանում ազգայնական յոյսերը ուղղում են դէպի Աստծու ուղարկած Փրկագործ Մեսիան, որի գալուստը Աստծու արքայութեան հաստատելու սկիզբն է լինելու։ Աւետարանից մենք իմանում ենք որ առաջին դարի հրէաների մէջ շատ գաղափարներ էին պրտրտում «Որ գալոցն է»-ի մասին, և որ մանուկ Յիսուս Քրիստոս եկաւ հանուր ակնկալութիւնների պատասխանը։

Անհրաժեշտ է էլի մի-երկու խօսք ասել հրէաների՝ *անդրզերեզմանային կեանքին վերաբերող հաւատալիքների մասին*։ Թէպէտ հրէաների պատմութեան հնագոյն մասերում կան նախնիների վախճանի կուլտի հետքերը, սակայն մի այսպիսի հաւատ մեծ նշանակութիւն չունէր Իսրայէլի աշխարհում։ Հրէաները ընդունում էին նախնական աշխարհի այն հնաոճ հաւատը, թէ մեռելները շարունակում են իրանց առերեսիլ գոյութիւնը՝ չունենալով գործելու ուրիշ ուժ։ Նրանք անկեն մի առանձնացեալ աշխարհ՝ Շէօլ, որտեղ գտնվում են մեռելները. Եսայի ունի մեռած թագաւորների մի փառաւոր նկարագրութիւն, որոնք հաստատած են Շէօլում, գահերի վրայ և առքի են կանչում՝ միմիայն ողջունելու այն նորեկին, որ մեծ հրամայող է եղած այս աշխարհում, հետեւեալ խօսքերով. «Դու էլ մեզպէս թուլացար։ Դու էլ ես մեզ նմանվել»։ Մեռելներին այնպէս են ներկայանում, իբր թէ իրանց գոյութիւնը շարունակում են իբրև իրանց նախկին անձնաւորութիւնների թոյլ ու աննիւթական ցոլքերը։ Մոգական կախարդները կարող են նրանց կանչել այս աշխարհքը՝ ապագան գուշակելու համար. բայց այս բանը հին ժամանակներում խիստ էր արգիլված։ Սաղմոսներում և ուրիշ՝ համեմատաբար յետագայ ժամանակների գրքերում հանդիպում են շատ այնպիսի տողեր, որոնք ուղղակի հերքում են այն միտքը թէ մարդը կարող է յայս աշխարհում շարունակելու իր կեանքը՝ մեռնելուց յետոյ։ Չին Ուխտի գրքերը, ինչպէս մենք յաճախ ցոյց ենք տվել, գործ ունի երկրաւոր կեանքի հետ։ Աստուած մարդուն՝ մեռնելուց առաջ է վարձատրում. երբ նա արդէն գերեզման է իջնում, այլևս չի կարող օգտվել Աստծու ամենարարութիւնից և շնորհակալ լինել նրանից։ Աստծու գալոց արքայութիւնը միանգամայն այս աշխարհի արքայութիւնն էլ է. Երուսաղէմը նրա մայրաքաղաքն է. բնութիւնը վերածնվելու է նրա համար։ Սակայն հրէաների պատմութեան յետագայ շրջանում նորից ուրիշ ձևով ծագում է ապագայի յոյսը, որ բոլորովին մոռացված էր, որ օրինակ, Յոբ այնպէս կրքոտուկ կերպով է մերժում առաջին պլաններից մէկում։ Քրիստոսի ժամանակ հրէաները հաւատում են, ինչպէս մի անխուսափելի բանի, որ բոլոր մարդիկ յարութիւն են առնելու։ Են-

Թագրում էին Լէ հրէաները իրանց՝ ապագայ կեանքի հնազոյն վարպապետութիւնը Պարսկաստանից են առել. բայց կարիք չկայ այս այսպէս բացատրելու: Այդ վարպապետութիւնը բնական առաջ է եկել հրէաների մէջ շատ պատճառներով: Ամէն հաւատացող, Յօբի պէս, որ բոլորովին համոզված է որ ինքն անմեղ է և զգալով որ իր համար վճռված է միանել իր հիւանդութիւնից՝ առանց այս կեանքում արեւ մէկից վրէժխնդիր լինելու, ցանկանում էր որ գերեզմանի այն կողմը հնարաւոր լինէր մի վճիռ կայացնել, որ չի կարող չկայացնել արդարադատ Աստուած: Դանիէլ մարգարէի գրքում գուշակվում է որ բոլոր մարդիկ՝ Լէ բարեգործներն ու Լէ չարագործները յարութիւն են առնելու,—առաջիններըՙ որ մանակից լինեն արքայութեան փառքին, ուր նրանք անպատճառ գալու են իբրև դաստիարակներ ու նահատակներ, վերջիններըՙ որ ոտանան իրանց պատիժը: Այսպէս ուրեմն ըստ հինհաւատի հին ժամանակները մեռած մարգարէները, հանուր ակնկալութեան համաձայն, վերադառնալու են այս աշխարհըՙ ապա ուրեմն մահի դռները այնպէս պինդ չեն փակված, ինչպէս առաջ, և կեանքի հաւատալը հեշտութեամբ սովորական է դառնում:

Այսպիսով հրէութիւնը դարձել էր մի՝ հասկացողութիւններով լի կրօն և իր ամբողջութեամբ չէր կարողացել անցնել ուրիշ ժողովուրդների ձեռքը: Տաճարն ու ժողովրդանոցը կուտի ներհակ սկզբունքներն են: Հրէան դրում է որ իրան մի համաշխարհային կրօն է տրված, և սակայն մի այնպիսի բացառական դիրք է բռնում, որ ողջ մարդկային ազգի ատելութեան առարկան է դառնում: Հաւատի ու սիրոյ կրօնը դատապարտում է կրօնների ու սահմանափակումների կրօնի հետ: Եւ որպէս դի Իսրայէլի կրօնը կարողանար կատարել իր համաշխարհային առաքելութիւնըՙ անհրաժեշտ էր, որ դար մէկը, որբէր նրա կալը, այրէր յարդը, ժողովէր ցորենը և այդ հասիլները մարդկութեան պրօպրէսի սերմի փոխարկէր:

ԺԳ ԳԼՈՒԽ

ԻՍԼԱՄԸ

Ժամանակագրական կարգով՝ Իսլամը բոլոր մեծ կրօնների մէջ վերջին տեղն է բռնում: Դա, այդ կրօնը աշխարհ եկաւ քրիստոնէութիւնից վեց դար յետոյ, և քրիստոնէական պատարիները տեղ են գրաւել նրա կազմի մէջ: Սակայն այսու ամենայնիւ այս կրօնը այն ասպնձան սէմիտ բնոյթի ունի, որ միայն այն ժամանակ կարող է հասկացվել, ինչպէս հարկն է, երբ ուսումնասիրվի այն այժմ մեզ շրջապատող լոյսի հետ: Իսլամի մէջ սէմիտ կրօնը բաց է անում իր դիրքը մարդկութեան համար և մասամբ կատարում է Իսրայէլի առաքելութիւնը, որը նրան չաջողեց իրագործել, մինչև նրա կուլտը քրիստոնէականի չվերածեց: Իսլամի մէջ սէմիտ կրօնը չէ կերպարանափոխվում, այլ՝ պահպանելով իրան յատուկ պարզ ու անողոք բնոյթը՝ բռնում է համաշխարհային կրօնների մէկի տեղը:

Այս կրօնը առաջ եկաւ ու ուռ կոխեց յաղթութիւնների ճանապարհը զարմանալի յանկարծակիութեամբ և մինչ անգամ, ինչպէս հաստատում են մի քանի պիտականներ՝ գործ չունեցաւ իր աշխարհ գալու համար որևէ բնական նախապատրաստութիւն: Արաբներն Իսլամից առաջ եղած շրջանը «անուսումնութեան ժամանակ» էին անուանում. նրանք այնպէս էին համարում Լէ այդ շրջանում իրանց ժողովուրդը պատմութիւն չէ ունեցել. նոր կրօնը, առաջ գալով՝ բոլորովին ուրացաւ այն ամէնը, ինչ որ կար առաջ և դրեց նոր աշ-

խարհի սկիզբը։ Սակայն արաբ պետականների ջանքերը կարասեցին այն մառախուղի ցրվելուն, որ կանգնած էր հին Արաբիայի դլխին. այս պատճառով մենք կարող ենք տալ այժմ արաբների սկզբնական կրոնի ոչ միայն այն, ինչ որ առաջ էլ հնարաւոր էր տալ, այլ և բաւարար նկարագիրը, և մի յայտնի աստիճան բնորոշել այն պրօցէսները, որոնք անցիտակցաբար մի նոր, աւելի խոր հաւատի երևան գալն էին նախապատրաստում։

ԱՐԱԲԻԱՆ՝ ՄԱՀՄԵՏԻՑ ԱՌԱՋ։ Արաբները, որոնք բնակում էին թերակղզու կենտրոնական մասում՝ Մահմետի ժամանակները ազգութիւն չէին, այլ այնպիսի ցեղերի մի խումբ, որոնք մեծ մասամբ թափառական էին, մի և նոյն ժամանակ ունեին բաղարներում էլ բնակում. այս ցեղերը, թէպետև միատեսակ լեզու, սովորոյթներ ու աւանդութիւններ ունէին՝ սակայն զուրկ էին մի կենտրոնական վարչութիւնից կամ կազմակերպութիւնից։ Նրանց բնական անասելաը, երկրի մշակութեան յարմարութիւն չունենալով՝ մարդկային կեանքը դարձնում էր միակերպ ու առաջադիմութեան չհակվող։ Արտարին ազդեցութիւնները դանդաղ էին թափանցում աշխարհի այս անկիւնը, և համայնքը այն մի և նոյն կարգն էր պահպանում, ինչ որ պահպանում էր ամբողջ հազարամեակներ առաջ։ Ամենահաստատը արիւնի կապերն էին։ Մէկի սպանութեան համար սէտ է վրէժխնդիր լինէին նրա ըստ ցեղի ընկերները. և այսպիսով մէկ սպանութեան հետևում էր մեսպան, և սերնդէ սերունդ երկիրը ոռոգվում էր անպատճառ արիւնահեղ կռիւներով։ Սակայն տարին երկու անգամ այս կռիւները դադարում էին. մի ամսվայ մէջ տիրում էր հանուր խաղաղութիւն։ Իրար թշնամի մարդիկ միասին սկսում էին դնում հեռաւոր արբանյորը. այսպիսի ժամանակ առևտրական քարաւանները կարող էին անվտանգ ճանապարհ ընկնել. հէնց այս ժամանակ տարբվում էին մեծ տօնավաճառներ կամ հանդէսներ, որոնք, թէպետև սկզբում կրօնական դադափարների վրայ էին հիմնված, սակայն մեծ մասամբ արդէն—չունէին այլևս արևէ կրօնական բնոյթ։ Մահմետի օրով այս տօնավաճառներից մի քանիսը ազգային նշանակութիւն ունէին. ամէն ցեղ մարդիկ գնում էին այնտեղ և ծանօթութիւն էին տալիս միմեանց. նախընթաց ամիսներում շարադրված բանաստեղծական երկերը արտասանվում էին հրապարակաւ, այնպէս որ նոր բանաստեղծի երևան գալը յայտնի էր ողջ Արաբիային. բոլոր ցեղերի կեանքից նորութիներ էին հաղորդվում, լսում էին նաև օտարազգի գաղափարներ ու վարդապետութիւններ։ Ազգի բնութիւնը անհիւրնկալ էր ու խիստ, այնպես ուրախ ու զուարթ էր ընկերվարական կեանքը, պինդն, կանայք, կատակները ու պատերազմը բանաստեղծների բնաբանները էին ու կեանքի սովորական նպատակները։

ՀԻՆ ԿՐՕՆԸ։ Սովորաբար ասում էին թէ արաբները Իսլամից առաջ կրօն չունէին։ Բայց արաբները նոր շրջանի խոստութիւնը հակադրում էին հին ուրախ կեանքի։ Ուղիղն այն է, որ, ինչպէս հիանալի կերպով ապացուցել է Վէլհաուզէնը, իսլամական շրջանից առաջ երկրամբը ներգործող կրօնը բոլորովին ապարդիւն էր դարձել։ Արաբական կրօնը հիմնվում էր այս դրի X-րդ դլխում նկարագրված դաղափարների ու սովորոյթների վրայ. սէմիտ կրօնի սկզբնական բնոյթը յայտնի է մեզ դլխաւորապէս Արաբիայով։ Բայց անիշխ ցեղ ունէր իր աստուածը, որին համարում էր իր մեծ իշխանաւորը կամ վարիչը և որի հետ յարաբերութիւն էր պահպանում զոհարերութիւններով, որոնց ժամանակ արիւնը տալվում էր աստուածութեանը, իսկ զոհը կեր էր լինում ցեղի անդամներին։ Աստուածութիւնը կերպաւորվում էր երբեմն ծառի, իսկ սովորաբար քարի նմանութեամբ. նրան է պատկանում մի արդաւանդ հազարաժին, որտեղ բոյսերն ու կենդանիները սրբազան են. կրօնական ժողովները չեն կարող կայանալ ուրիշ տեղերում։ Այս պատճառով արաբներին քարերի երկրպագող էին անուանում. սակայն խօսքի այն ձևը (ֆրազ)

անկանոն է, որովհետև ալաթները ոչ թէ բարին էին երկրպագում, այլ նրա հետ կապ ունեցող աստուածուհիները։ Արաբիայի նախնական աստուածները մի խայտաբղետ համայնք են. փոքր ինչ միակերպուհին են տալիս նրանց միայն յարդոլների հետ ունեցած յարաբերութիւնները և նրանց մատուցած պաշտամունքի կարգերը։ Արաբական ամենամեծ ու ամենահին աստուածուհին Ալլատ կամ Ալիլատ է՝ «Տիրուհի»։ Բոլոր նախնական սէմիտ կրօնների իսկական աստուածուհիան պէս՝ նա մի վատահեղ ու հրամայող աստուածուհի է։ Նա սրիկ Աստծու ամուսնուհի չէ, և անպարկեշտ մարթ գործ չունին նրա հետ։ Նա պատկանում է նախնական աշխարհին, որտեղ մայրութիւնը (материнство) կարգ ու կանոնի նոյնանիշն էր, քանի որ ընտանիքը արական սեռի գլուխ չունէր. նա ունի իր բնոյթը, բայց պատմութիւն չունի. նրա մասին դեռևս աստուածաբանութիւն չէ կազմվել։ Արաբիան, ի հարկէ, բնական աստուածներ էլ ունին։ Առտոյին աստուածութիւնները մեծ մասամբ իսկական են. կայ Գուզարէս անունով մի արևային արական աստուածութիւն։ Ոմանք երկրպագում են երկնքին, բայց ոչ թէ կապոյտ, այլ անձրևաբեր երկնքին, որ բարերարութիւնների ակբիւրն է։ Սաորերկրիայ գաւառում (սանդարամէաում) բնակող աստուածներ չկան։ Կենդանիներից միմիայն օձն էր երկրպագութիւն ստանում։

Բայց Արաբիայի աստուածները մեծ մասամբ ուրիշ դասակարգի են պատկանում, տարբերվելով բնական աստուածներից. կամ գոնէ եղէ նրանք երբ և է կապված էլ են եղել բնութեան հետ, ապա այդ կապը խզված է։ Սրանք օտարոտի դէմքեր են՝ անորոշ լեգենդաներով ու պէտէս տորոգելքներով։ Ասում են թէ նրանց մի խումբը պաշտում էին Նոյի ժամանակակիցները. դրանք բարձրահասակ մարդիկ են և դրանց բնորոշ գիծը կոթի խմելն է։ Մէքկայի պղնձաւոր աստուածը համարվում էր Գուբալ, որ անձրև էր ուղարկում։ Վադդ մի մեծ մարդ էր՝ երկու հայեացով, սրով ու թէկով, աղեղով

ու պրաիով։ Նադդուտ՝ «օդնական», իրրև փոխարերական աստուածութիւն էր հանդիսանում, հաւանական է որ ոչ իրրև բար, որովհետև նրա գեղը նրան պատկերագրում էր տանում, ինչպէս իսրայէլացիք՝ ուխտի տապանակը։ Միւս աստուածը կոչվում էր «Պիղիչ», ի հարկէ նրան մատուցվող զոհերի պատճառով։ Իւրաքանչիւր ցեղ ունի իր աստուածութիւնը կամ աստուածութիւնների խումբը և յայտնի սրբազան առարկաները, որոնք յարակից են նրա աստուածներին։ Աստուածներից մէկը նրանք են գանում, որոնք համբուրում են յայտնի սև քարը կամ հոլում, քսում են նրան, միւսը գանվում է սպիտակ քարի հետ, երրորդը՝ ծառի հետ։ Գան նրանցից շատերի պատկերները. քարը յայտնի կերպով մշակվում է, կամ լէ, առնվում է կոպիտ տաշած գերաններ։ Սկզբում «Քաաբ» էր կոչվում Մէքկայում եղած սև քարը, որ համբուրում էին կամ որին ձեռք էին դիպչեցնում։ Սակայն այս անունը տրվում էր և՛ այն խորանարդաձև շէնքին, որի պատերից մէկի մէջ դնված էր սև քարը։ Հին ժամանակները այս շինութեան մէջ կանգնած էին Աբրահամի ու Իսմայէլի պատկերները, որոնցից իւրաքանչիւրի ձեռքում նետ կար՝ գուշակութեան համար։ Մահմէտի օրով շատ կային այսպիսի կուռքեր, որ և նա կործանեց։ Մի քանի դէպքերում պատկերը դրվում էր շինութեան մէջ և նրա պահպանութեան համար պահապան էր կարգվում. այս անձն էլ ունէր իր մօտ մի սրիկ հատարակ գործիք՝ վիճակ ձգելու կամ աստուածութեանը ուրիշ կերպ խնդրուածք անելու համար, և նրա ներկայութեամբ երդվում էին ու խոստումն անում, իսկ դրա համար վկայ էր հանդիսանում աստուածութիւնը։

Արաբիայի այս հին հաւատալիքներին պէտք է կցել ջնարի կենդանի հաւատը, այն ոգիների, որոնք աստուած չեն համարվում, որովհետև աստուածները աշխարհում են գանվում, իսկ ջինը պէտք է բնակի այս աշխարհի սրիկ տեղում։ Ջինները ինչպիսի ձև ուզենան՝ կարող են առնել և յաճախ պա-

ատնում են օձի կերպարանքով։ Վէլլահուզէն ենթադրում է, որ հրէաների սերովբէներն էլ նոյնանման ծագումից են։ Նրանք վիտում են անմարդաբնակ տեղերում և սովորաբար գիշերով են գործում։ Նրանց արաբերենը յաճախ վերջն են միայն իմացվում։ Նրանք հետամուտ են լինում աստուածներին և այն մարդկերին, որոնց այցելում են և կամ որոնց հետ բարեկամական յարաբերութեան մէջ են գտնվում, կարող են յայտնել այն, ինչ որ կատարվում է վերևը։ Ո՛չինչ չունենք ասելու Արաբիայում մտած դևթիւթեան (կախարդութեան) մասին, այսինքն՝ այն նշանների ու գուշակութիւնների, որ անել են տալիս թռչունները, երազներն ու այլ երևոյթները. նախնական արաբների հասկացողութեանց այն համառօտ նկարագրի վերջը մեզ միայն մնում է ասել, որ նրանց անպէրդեհեմանային կեանքի հաւատը, շատ թոյլ էր. նրանք կերակուր էին գնում մեռելների համար, որոնց այնպէս էին համարում թէ դեռևս գոյութիւն ունեն. սակայն թէպէտև կար նրանց մէջ այս հաւատը, այսուամենայնիվ մշակված չէր և ազդեցութիւն չունէր։

ԿՈՒԼՏԻ ՄԻՋՈՑ ԱՌԱՋ ԵԿԱԾ ՁԻՈՒԹԸ։ Իսլամի շրջանում Արաբիայի կուլտի մէջ մեծ շփոթ էր առաջ եկել։ Աստուածները նստակեաց էին, իսկ ցեղերը թափառում էին. հետևանքն այն եղաւ, որ թափառող ցեղը թողնում էր իր սրբավայրը, թողնելով նրա հոգացողութիւնը իր յաջորդներին, որոնք գրաւելու էին այդ վայրը, միևնոյն ժամանակ ինքն էլ, գնալով նոր վայրը՝ առնում էր իր վրայ իր նախորդներից իրան թողնված աստծու սրբավայրի հոգացողութիւնը։ Այսպիսով մի կողմից իւրաքանչիւր սրբավայրի կուլտ շարունակ նոր համայնքներ էր հաւաքում, և իւրաքանչիւր ցեղ իրանից յետոյ իւրաքանչիւր սրբավայրում թողնում էր մի կամ նոր ձէս. իսկ միւս կողմից՝ ուխտագնացութիւնը հանուր կերպարանք էր ստացել, քանի որ իւրաքանչիւր ցեղ պէտք է պարբերաբար այցելէր իր անուէր թողած աստուածներին։ Մէքկայում հարիւրաւոր կուռքեր կային. հարիւրաւոր ցեղեր թողնում էին այնտեղ՝ իւրաքանչիւրը իր մի բանը։ Այսպիսով Մէքկան դարձաւ մի սրբազան վայր մեծաւոր ու հեռաւոր ցեղերի համար և ստացաւ ազգային նշանակութիւն. միևնոյնը փորը ծաւալով տեղի էր ունենում և ուրիշ կողմերում։ Բայց սրբան այս պրօցէսը զարգանում էր՝ այնքան անխուսափելի կերպով առաջ էր բերում կրօնի թուլացումը։ Զարունակ զգայվող արիւնի կապը շատ օրերով էր հանուր կուլտի կապերից, որի համար ցեղը պէտք է դնար երկրի մի ուրիշ մասը և չիմէր միւս բազմաթիւ կուլտերի հետ։ Այս պատճառով կուլտը, բանի գնում էր՝ հետզհետէ նմանվում էր անապաշտութեան, այսինքն դառնում էր մի այնպիսի բան, որի իսկական սրբութիւնը անցեալումն էր, և որ պահպանվում էր յոկ բարեպաշտ սովորութեան համար. այս կուլտը հանապազօրեայ կեանք չէր ներշնչում և չէր դեկավարում ժողովրդի գործունեայ անձնաւորութիւնների մտքերը։

Մենք դեռ չենք խօսել *Ալլահի* մասին, որ Արաբիայի գլխաւոր աստուածն էր համարվում։ Բայց սա ունէր իր պատճառները։ Ալլահ մի պատմական աստուածութիւն չէ, միւս էակների պէս, որոնք ունեն իրանց լեգենդան, իրանց սրբավայրը, իրանց ցեղը, որ բացառապէս իրանց էր պատկանում։ Սա մի պատմական անձ չէ, այլ մի հասկացողութիւն, որ վաղուի շրջանում աստուածութեան է վերածվել։ Ալլահի ծագումը՝ մեզ համար մի չափազանց շահեկան կերպով նկարագրում է Վէլլհաուզէն։ Այս անունը, ինչպէս նա ապացուցում է, արաբական պանթէօնի մէջ մի որոշ դէմքի պատկանող յատուկ անուն չէ. սա մի մականուն է, որ արաբը տալիս է իր աստծուն, ինչպիսի յատուկ անուն էլ ունենար նրա աստուածը։ Նա ինչպիսի աստծու էլ երկրպագէր՝ նրան անուանում էր Ալլահ՝ ասէր. այսպէս ուրեմն արաբական իւրաքանչիւր աստուածութիւն Ալլահ էր, ինչպէս ընտանիքի ամէն գլուխ ունէր «հօր», ամէն միահնծան թագաւոր՝

«Վապաւորի» անուն: Բայց որովհետև իւրաքանչիւր ցեղական աստուածութիւն Ալլահ էր՝ այս պատճառով առաջ եկաւ մի միտք, և այն անուշադ չատ հին ժամանակներում, մի աստուածութեան մասին, որ լինելու էր հանուրը բոլոր ցեղերի համար: Լեզուն մոքի համար ճանապարհ հարթեց. լեգենդա դեռևս հաւատում ու հրկրպագում էին ցեղական աստուածութիւններին, սակայն այս դէմքը գրեթե կանգնեց նրանց վրայ, մի էակի դէմք, որ չունէր իր առանձին կուլտը, չէ պահանջում այն և կարօտ չէ նրան, բայց որ այնպէս է բաւարարութիւն տալիս աստուածութեան բնոյթին, ինչպէս չէ տալիս աստիճանի էակներից ոչ մէկը: Ալլահը բոլոր ցեղերի աստուածն էր. որքան նրա դէմքը աճում էր՝ այնքան պատմական աստուածների կուլտը անխուսափելի կերպով քիչ-քիչ կորցնում էր իր նշանակութիւնը և շուտով գործառ լոկ կանոնց ու երեխաների կուլտ: Այսպէս ծանրաբարոյ ու խիստ միաստուածութիւնը ճանապարհ հարթեց իր համար չատ աստուածների հին հաւատի հետ միասին: Մահմէտ տեսաւ որ իր հայրենակիցները իրօք չեն հաւատում փարր աստուածներին, փորձութեան մէջ ընկած ժամանակ կամ չատ կարօտ լինելով այս կամ այն բարերարութեան՝ նրանք օգնութեան էին կանչում Ալլահին: Կաւրերի անկումը չատ հեշտ տեղի ունեցաւ. նրանք այլևս պէտք չէին: Արաբները սկսեցին հաւատալ մի աստծու, որ բնակում էր երկնքում ու աշխարհի առեղծոն էր և մարդկային կեանքը մի հաստատ օրէնքի տակ պնելով՝ որոշել էր նպատակին հասնելու գործում քաջքերն ու դաւը և՝ աջողութիւնն անաջողութիւնը: Ալլահի բարոյական բնոյթը դպալի կերպով բարձր չէր իր ժողովրդի բնոյթից: Մարդը իր ամէն ձեռք բերածը, կողոպտածը Ալլահի պարգև էր համարում. իսկ այն քանին, ինչ որ ստանում էր աշխատութեամբ՝ ուրիշ անուն էր տալիս: Սակայն ոմանք գգում էին որ Ալլահը ձգտում է իրանց հեռու պահել կողոպուտից. նա բարձր է բռնում այն բարոյական դրօշակը, որ

ձեռք էին բերել արաբները: Նա օտարականների պաշտպան է, վրէժխնդիր է լինում անհատատարմութեան համար: Նրա բարոյական ազդեցութիւնը ուելի բացատական է, քան դրական: Նա բարութեան պատիարներ չէ ներչնչում, սակայն կասեցնում է չարից: Նա մի այնպիսի էակ չէ, որ միշտ կարողանայ մերձաւոր ու բարեկամական յարաբերութիւն հաստատել մարդերի հետ, ինչպէս հրէաների Աստուածը. նա աշքի է ընկնում չափազանց մեծ վերացականութեամբ և այնքան կապ չունի պատմութեան հետ, որ ընդունակ լինի այդպիսի ձևափոխութեան: Նրա կրօնը, երբ բոլորովին կազմակերպուի, ուելի մարդակրօնների ու փանտաթիների կրօն կլինի, քան հեղերի ու խնամարհների: Նա ներկայանում է իբրև մի այնպիսի ստեղծ մեծ օրինակը, որ բնական պատուանդանից դուրկ է և որ լոյս է ընկել կառավարելու համար: Նա մի այնպիսի աստուածութիւն է, որ լիովին կարող է ընդունվել բանականութեան կողմից. ոչինչ անհեթեթ լեգենդաներ չեն կապված նրա հետ. նա հէնց սկզբից մեծ է, հզօր ու բարոյական և կառավարում է աշխարհը անփոփոխ օրէնքներով: Այս կրօնը երեան է գալիս մինչ անգամ «ամուսնութեան ժամանակ»ը:

ՀՐԷՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ԱՐԱԲԻԱՅՈՒՄ:

Չատ անգամ է պնութիւն այն հարցը, թէ արդեօք Արաբիայի նոր կրօնը հրէութեան ու քրիստոնէութեան հետ չփոխկռից է առաջ եկել: Այս երկու կրօնները յայտնի էին Արաբիայում մարգարէի յայտնվելուց առաջ: Մէդինայում խիստ չատ հրէաներ էին բնակում, ուրիշ չատ տեղերում էլ կային ժողովրդանոցներ. Արաբիայում կային և այնպիսի քրիստոնեաներ, որոնք Լեգենդա մանր աղանդների էին պատկանում, կամ քրիստոնեաներից անջատված անապատականներ էին, սակայն նրանց էլ չաջողվեց դարձնել ողջ երկիրը: Արաբները հրէաներին «Գրոց ժողովուրդ» էին համարում,—այն գրոց, որի ուսմունքների մէջ տեղ ունէին և իրանք արաբները: Մեծ մասամբ կիր-կարդում չդիտնալով և իշխելով բազմաթիւ մա-

ներ կուլտների վրայ, որոնց նրանք այլևս չէին յարգում՝ արաբները նախանձով էին նայում նրանց վրայ, որոնց հաւատը այնքան զարերից հաստատված էր դրաւոր խօսքով։ Եւ թէպէտ հրէաները յարգանք էին վայելում Արաբիայում, սակայն դեռևս ժողովրդականութիւն չէին ստացել։ Այն յատկութիւնները, որոնցով նրանք գարձրել էին իրանց վրայ հեռներին ապրած ժողովուրդների դատն ատելութիւնը՝ այն ժամանակին էլ յատուկ էին նրանց. նրանց հպարտութիւնն ու բացառականութիւնը, նրանց՝ զրծերի մէջ ցոյց տված բարկացկոտութիւնը, նրանց վաշխառութիւնը,—այս բոլորի շնորհիւ նրանք նոյնքան ատելի էին գարձել Արաբիայում, որքան և ժամանակակից Գերմանիայում ու Ռուսիայում։ Միւս կողմից կեանքի վրայ ունեցած ճգնաւորական հայեացքը, որին հետևում էին քրիստոնեաները, հրապուրում էր շատ՝ մինչ անգամ վսեմ մարդերի մէջ արաբների։ Մահմէտի ժամանակը բաց յայտնի էր գանիփ կոչված մարդերի խումբը, որոնք որոնում էին այն կրօնից մի աւելի լաւ կրօն, ինչպիսին տալիս էր արաբական կուլտը, և այն կեանքից մի աւելի լաւ կեանք, որ լի էր տեսլական կռիւներով. ենթադրում էին թէ այս մարդիկ առաջնորդվում էին քրիստոնէական դաղափարներով։ Նրանց անունը, Վէլհաուզէնի ասելով՝ նշանակում էր «ապաշխարող». իսկ մի ուրիշ անուն, որ այս մարդիկ կրում էին աւելի վաղ՝ նրանց կապում է միրտուխեան ծէսի հետ։ Մինչ անգամ այնտեղ, ուր, ինչպէս իրան Մահմէտին, հրէութեան ու քրիստոնէութեան փաստերը շատ անձիչտ կերպով էին յայտնի, այս կրօնների ատածու մասին բարոյական իդէալը չէին կարող գօրով ազդեցութիւն չանել։ Եթէ հինց իրանց արաբների հասկացողութիւնների մէջ Ալլահի նման մի աստուածութիւն բարձրացել էր մինչև մի որոշ անձնական բնաւորութիւն և մինչև այն գրութիւնը, որ նրան բարձր էր գասում ժողովրդական աստուածներից, ապա նշանակում է՝ նրերին զարգացումը առաջ էր

գնում այն միևնոյն ուղղութեամբ, որով առաջ էր գնում վաղեմի կրօնների ազդեցութիւնը արտաքուստ, և հասել էր նոր հաւատի երևան գալու ժամանակը։ Մի անսպասելի բան էր որ արաբների պէս մի ժողովուրդ ընդունէր մի այնպիսի կրօն, որ իրանից հեռու չէր լոյս ընդել. անհրաժեշտ էր ներքուստ զարգանալ, և նա պատրաստ էր իր գաղափարը տալու։

Կրօնների մեծ մասի սկզբնաւորութիւնը խաւարով է ծածկված. սակայն Իսլամի ծագումը յայտնի է մեզ կատարեալ ճշդութեամբ ու նշանաւոր մանրամասնութիւնով։ Նրան հասկանալու միակ դժուարութիւնը՝ հոգեբանական յատկութիւն ունեցող դժուարութիւններն են. մենք բացատրելու ենք մի այնպիսի կրօնի ծագումը, որ կայծակի արագութեամբ տարածվել է շատ երկրներում և դեռ տարածվում է. որի հիմնադիրը մի այնպիսի մարդ էր, որ մի բանի կողմերով հեռու էր վեհութիւնից, ընդունակ էր փափկանկատումների և իր նպատակին հասնելու համար՝ ամենաստոսկալի հաւատուրացութեան։ Ի՞նչ կերպով մի կրօն, որ պիտանի էր շատ ժողովուրդների ու մարդկային սկզբունքների՝ կարող էր հիմնվել մի բարբարոսի ձեռքով, բարբարոսական միջոցներով—ահա այս կրօնի խնդիրը։ Այդ խնդրի լուծման նիւթերը դրված են մեր առաջը։ Ղուռանը անշուշտ Մահմէտի իր խոսկական գործն է. այս գրքի գլխները անկանոն կերպով են դասաւորված, և եթէ կարդանք, ինչպէս որ դասաւորված են,—նրանք սչինչ չեն բացատրում մեզ. իսկ եթէ այդ գլխները այնպէս դասաւորենք, ինչպէս արել են այժմ գիտնականները, այսինքն՝ պատմական պատշաճաւոր կարգով, ապա նրանք շատ պարզ են նկարագրում Մահմէտի ոգևկան գրութեան պատմութիւնը. Ղուռանից յետոյ հնան աւանդութիւնները։ Իսլամը և ուրիշ հմուտ ուսումնականները իրանց ջանքերի շնորհիւ կարողացել են այդ աւանդութիւնների ահագին բանակութիւնից գատել այն, ինչ որ ամենամեծ նշանակութիւն ունի։ Ուրիշ ոչ մի գէպքում չէր կարելի այդպէս

հեշտությամբ սկզբնական աստղագիտների միջից գտած աստղագիտական տարրը պատմականից, և կրոնը կանգնում է աչքներիս առաջը պայծառ, ինչպես ցերեկուայ լոյսը։

ՄԱՀՄԵՏ։ ՆՐԱ ԿԵՆՔԻ ԱՒԱՏԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ։ Մահմէտ ծնվել է Ք. Ե. մօտ 570 տարի յետոյ մի ընտանիքում, որ պատկանում էր Կօրէյշիտների մէրկայեան ճիւղին,—այն զօրեղ ցեղին, որ բարեւաններով ընդարձակ առևտուր էր անում Սուրիայի հետ. Կօրէյշիտներն էլ պահպանում էին այն արբանեակը, որ արաբական կրօնի կենտրոնական կէտն էր համարվում։ Այս պատճառով նոյն իսկ իր ծննդեան օրից Մահմէտ ընկաւ իր երկրի հաւատացեալների։ Նա վաղ որբ մնաց և մեծացաւ այնպիսի ազգականների միջև, որոնք յաւ էին վերաբերվում նրան, բայց շատ աղքատ էին։ Նա մանկական տարիներից ստիպված էր ոչխար արածեցնել, որպէս դի մեռնող ձեւը բերէր իր համար. իսկ այս պարապմունքը որոշ դէպքում, ինչպես և ուրիշ շատ դէպքերում, առիթ էր տալիս նրան դիտելու և խորհելու։ Էվենով երիտասարդ տարիքում՝ նա ծառայության մտաւ հարուստ այրի Հաջիջայի մօտ. այդ այրու գործերը նրան հարկադրում էին ճանապարհորդել Սուրիայում ու Պալէստինէում, որտեղ նա տեսել էր հրէից պատմության մէջ հռչակված տեղեր, գուցէ միանգամայն և շփվում էր քրիստոնէության հետ։ Քսան հինգ տարեկան հասակում նա ամուսնացաւ Հաջիջային, որ 15 տարով մեծ էր նրանից. բազդաւոր ամուսնութիւն էր. և նրանից առաջ եկան մի քանի որդիք։ Նկարագրութիւններին նայելով՝ Մահմէտ մի միջահասակ մարդ էր, գեղեցկագէմ, հմայկական արտայայտութեամբ ու գաղտնի վարմունքով. իր ընդունակութիւնները նա ցոյց էր տվել գործադարձության միջոցին։ Ամուսնանալուց մի քանի տարիներ յետոյ նա սկսեց խոր մտածմունքի մէջ ընկնել կրօնական առարկաների վերաբերմամբ և իսկ երևոյթին յարաբերության մէջ էր մտել վերը յիշած գանիֆներից կամ ազատախարոններից մի քանիսի հետ, որոնք

թէպէտ ազգով չէին, սակայն հետևում էին հնուց նախահայրերի—որոնում էին մի ազգի դոհացում տվող կրօն։ Նրանց հրապարակող կրօնը միաստուածութիւնն էր, Աբրահամի միակ Աստծուն պաշտելը, բայց ոչ հրէութիւնը, որ փառաւորում էր հրէայ ժողովրդին, ոչ էլ քրիստոնէութիւնը, որտեղ Աստուած իրան ընկեր ունէր իր որդին։ Կրօնի էութիւնը նրանք համարում էին միակ Աստծուն հպատակութիւն։ «Իսլամ» նշանակում է հպատակութիւն, իսկ «Մուսուլման» այն անձը, որ հպատակում է միակ Աստծուն, թէ հրէաների Աստուած լինի, թէ քրիստոնեաների կամ թէ երկուսից էլ տարբեր մէկը։ Գանիֆները ընդունում էին նաև քրիստոնեաների՝ վերջին պատասխանին վերաբերող հաւատը՝ նրանց հաւատի հետևանքն այն էր, որ անձնատուր էին լինում ճշնաւորական կեանքին և հրաժարվում աշխարհից։

ՆՐԱ ԿՐՕՆԱԿԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ Իր կեանքի այս շրջանում Մահմէտն էլ սկսեց առանձնանալ քաշվել անապատ տեղերը մարդերի մէջ խորասուզվելու։ Թէ ինչի մասին էր նա մտորում,—մենք այդ չգիտենք նրա յաջորդ ասածներից ու արածներից։ Կար, իհարկէ, մի խիստ զօրեղ հակադրութիւն Ալլահի մասուր կրօնի, ինչպես ճանաչում էին գանիֆները, և ժողովրդական կրօնի միջև, որի կենտրոնը Մէքկան էր, և որի հետ Մահմէտ արդէն ծնունդով էր կապված,—Մէքկան՝ իր առևտրական կապերով, իր կուռքերով, իր անհատականալի ձեռերով. և եթէ ամենքի դլխին, բացի Ալլահի երկրպագուներից, մի գաղտնի ակար է կատարվէր, ապա այդ գաղտնիքը լինելու էր մի զարհուրելի գաղտնիք։ Մի քանի տարի սակայն Մահմէտ ուղղակի գանիֆէր։ Նա այն կարդի մարդկերից էր, որոնք իրանց բնական ու տպաւորիչ հոգով պատրաստ էին անձնատուր լինելու Աստծու կամքին և նրա առաջնորդութեանը. նա տոգորված էր Ալլահի ներկայութեան ու կարողութեան գիտակցութեամբ, նոյնպէս և իր սեփական պատասխանատուութեամբ Նրա առաջ՝ իրական կեանքի մե-

ծամիծ ու անաւար երևոյթների մէջ: Մենք պարձանալ չենք ուզում մի հանգամանք, որ սովորաբար վճռական ազդեցութիւն ունեցող են համարում այն բանի վրայ, որ Մահմէտ դարձաւ Իսլամի հիմնադիրը: Նա մէկ իր տեսակի յատկութիւն ունէր. մեծաւոր գրգիռը նրանում առաջ էր բերել ներքին ցնծութիւններ, որոնք,—վերնոտութիւն անուանենք մէկ հիստէրիա,—ամփոփում էին նրան տեսիլներ տեսնել ու հաւատալ որ իրան ուրոշ խօսքեր էին ուղղված երկնքից իջնող այդկաների կողմից: Արաբիայում տեղի ունեցող նոր կրօնական շարժումը ձեռք էր բերել մի համախոհ, որ իր հոգևոր ուժերի մի ահաւոր լարմամբ իւրացնում էր նոր վարդապետութիւնը և կարող էր արտայայտել իր զգացումները մի աննահանջելի ուժով:

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Մահմէտ 40 տարեկան էր, երբ սկսեց բացարձակ կերպով արտայայտել վարդ իր գլխում պտտվող մտքերը: Այս բանը տեսիլքով եղաւ: Երբ նա իր դիշերային ուղևորութիւններից մէկի ժամանակ քնած էր Հիր (Гиръ) լեռան վրայ, նրա մօտ եկաւ մի հրեշտակ, որ բաց արեց նրա առաջը մի ոսկրած թուղթ և նրան ստիպեց կարդալ այն ամէնը, ինչ որ մէջը գրված էր: Մահմէտ կարդալ չգիտէր, սակայն հրեշտակը պնդում էր, և նա սկսեց կարդալ: Նրա կարդացածը Ղուրանի խօսքերից առաջինն էր, որ յայտնուեցաւ էր առաջին (սուրա*) 96):

«Կարդա: Յանուն քո Տիրոջ, որ ստեղծել է ամէն բան, ստեղծել է մարդուն քանձրացած արիւնից (արեան շիճուկից): Կարդա: Որովհետև քո ողորմած Տէրը սովորեցնել է տալիս մարդուն՝ գրիչ եղէգնով (գրչով) այն, ինչ որ նա չգիտէր: Ճշմարիտ է, մարդը մոլորվում է, մտածելով որ ինքը բաւական է իրան. ամէնքը պէտք է վերադառնան Տիրոջ մօտ»:

Բոլոր մարդիկ,—թէպէտ նրանք կարծեն, ինչպէս արտ-

*) Ղուրանի երրորդ գլուխը:

ներն էին կարծում, թէ կարօտ չեն ոչ որի օգնութեան, բայց իրանց սեփական աչքից՝—պէտք է ներկայանան Աստծո դատաստանի առաջ ու հաշիւ տան նրան. ահա այն վարդապետութիւնը, որով Մահմէտ սկզբում գիմում էր իր ցնծակիցներին: Սա յայտնութիւնն է: Աստծո տալիս է այդ յայտնութիւնը, աշխարհ ուղարկելով այն բանի գաղափարը, ինչ որ գրված է երկնային գրքում, «մայր գրքում», որից առնված են բոլոր՝ հրէական, բրիստոնէական և Մահմէտի իր յայտնութիւնները: Այսպէս սկսեց մարգարէանալ Մահմէտ: Յայտնութեան առաջին գիտակիցը նրան մեծ յուզման մէջ ձգեց. նա կարծում էր թէ ինքը ջնռտված է (ջնից բռնված). Մահմէտին ուժի վշտացնում էր այն հանգամանքը, որ երկու-երեք տարի շարունակ ընդհատվել էին յուզական տեսիլները: Ընտանեան տեսիլը կրկնվեց: «Դէր կաց և զգուշացիր» ասում էր նրան. «փառաբանիր տիրոջդ, մաքրիր հագուստներդ և հեռու կաց պղծութիւնից. մի լաւ տաս որ ողորմութիւնը մեծանայ և ապառիկ տիրոջդ»: Այժմ յայտնութիւնները արագ արագ էին յաջորդում միմեանց, այդ ժամանակ Մահմէտ հաւատում էր վերևից անվոյ նախշնշանք և զգաց որ ինքը կոչված է իր ժողովրդի մարգարէն լինելու: Այս համոզումը այնուհետև երբէք չտատանվեց նրանում. չի կարելի տարակուսել, որ նա առաջին յայտնութիւնները բոլորովին անկեղծութեան արտայայտութիւն եղած և իրան նախշնշված էր համարում մի այնպիսի ուժով, որին ինքն անկարող էր դիմադրել: Նրա հայրենակիցները այս բանի վրայ բնական ուրիշ կերպով էին նայում. ուրիշ մարգարէների պէս՝ Մահմէտ հոչակվեց խելագար ու ջնռտված. այս մեղադրանքները նրան կենդանի ապտակում էին, մանաւանդ որ ինքն էլ սկզբում մի ինչ որ տէնդ այդպիսի բան էր կարծում: Յետագայ ժամանակների յայտնութիւնները ուրիշ բնոյթ ունէին. վերջը ամէն ուզած դէպքում յայտնութիւններ անելու մի ուժ յոյս բնական նրանում. սակայն առաջին յայտնութիւնների բովանդակութիւնը արժա-

նի էր անում նրանց այդ անունին, և Մահմէտ զգում էր այդ։

ՆՐԱ ՔԱՐՈԶՔ։ Առաջ նա նոր ճշմարտութիւնը իր մերձաւորներին էր բարոզում։ Սա ոչ թէ նոր, այլ հին ճշմարտութիւն էր. դա Աբրահամի կրօնն էր, այն դրբի կրօնը, որի մէջ իրանց մասն ունէին թէ հրէաները ու թէ քրիստոնեաները. նոր կրօն հիմնելու մասին նա չէր էլ մտածում։ Նա հրաւիրեց իր ընտանիքն ու իր ազգականներին՝ հպատակվելու Ալլահին, ծայրագոյն տիրոջը ու արդար դատաւորին, որի դատաստանին նրանք չուտով ներկայանալու կլինեն։ Նրանք պէտք է հրաժարվին հեթանոսական արատներից ու վարժվին կանոնաւոր ապօթքի, անշահասէր մտքով ողորմութիւն տալու և ժուժկալութեան մէջ։ Մի քանի ժամանակից յետոյ նոր սուրանները դրդում են նրան դուրս գալ յայտնի կերպով քարոզելու,—նա այնպէս էլ անում է։ Սակայն մէքկայեցիք չեն լսում նրան։ Այս ընդդիմութիւնը մարգարէի բարոզին խստութիւն է տալիս, մի բան, որ առաջ չկար նրա բարոզի մէջ, և նա սկսում է այնպէս խիստ կերպով յարձակվել ժողովրդական կուլտի վրայ, որ միմիայն ամենաանհաշտ թշնամութիւն կարող էր առաջ բերել իր դէմ։ Մէքկայեցիք նրանից լսում են, որ այն կրօնը, որի համար պջվում գալիս է ողջ Արաբիան, և առանց որի վատ էր գնալու նրանց առևտուրը, որ այս կրօնը ոչ միայն մի դատարկ բան է, այլ և ատելի է Ալլահին և անտարակոյս պատասխատում է այն ամենքին, որոնք հաւատում էին նրան. և որ նրանց բոլոր նախնիքը անվիճելի կերպով դժոխքումն են գտնվում։ Անկարելի է տանել մի այսպիսի բարոզ. Մահմէտի բարեկամները կանչվում են՝ նրա բերանը փակելու, բայց իզուր. իսկ նրա ցեղակիցները թէպէտ չեն հաւատում նրան՝ սակայն պաշտպանում են, ինչպէս պահանջում են ազգականութեան օրէնքները։

ՀԱԼԱԾԱՆՔ։ Մահմէտն էլ է տանջվում այնպէս, ինչպէս և միւս մարգարէները. նրան ծաղրում են, նրա խօսքերը սուտ են համարում, նրան սպառնում են։ Միւս կողմից՝ նա

ունի և՛ իր մխիթարութիւնները. իր նուաստացած վիճակում նա զօրանում է վերուստ։ Նրա թշնամիները կոչնչանան, նրա արածը կաջողի. կգայ այն օրը, երբ մարդիկ խումբ-խումբ կհաւատան՝ նրա վարդապետութիւնը լսելու։ Բայց հալածանքը այսուամենայնիւ չէ մնում առանց նրա վրայ ազդելու. մի անգամ նա նոյն իսկ փորձից դիջել հեթանոսութեանը. Քաաբում արտասանած մի սուրայի մէջ նա իրան թոյլ տվեց գովասանքով խօսելու Ալլահի երեք ապջկայ մասին, որոնց հաւատում էին մէքկայեցիք։ Մէքկայեցիք սրանով շատ գոհ էին, բայց Մահմէտ, տուն վերադառնալով՝ ստիպված էր լսել Գաբրիէլ հրեշտակապետի յանդիմանութիւնները, և այն ժամանակից դիջումները չկրկնվեցին։ Եթէ, ինչպէս շատ հաւանական է, այս դիջումը դիտաւորութեամբ էր արված, ապա յայտնութիւնները մի տարօրինակ գոյն են ստանում՝ ուզղակի նրա հանդէս դալուց յետոյ։ Սակայն այնուհետև այլևս համաձայնութեան փորձեր չեղան։ Խօսք չկայ, որ այսպէս թուլութիւն ցոյց տալուց յետոյ մարգարէի դրութիւնը վատացել էր, և նրա համարատարածիների հալածանքը սաստկացել. երկու տարի Մահմէտն ու իր հետևողները բոլորովին կտրել էին իրանց յարաբերութիւնը քաղաքի ուսուցիչների հետ։ Միւս կողմից՝ մարգարէի ոգին աւելի սուր ու մռայլ էր դարձել սկսած այն ժամանակից, երբ նա տեսաւ որ վերադարձը անհնարին է։ Դժոխքի տարօրինակները ոչ մի ժամանակ այդպէս զօրեղ կերպով չէին պատկերացվել. արիւնը ոռնչում է մարդու երակներում, երբ կարդում է մէքկայեցի անհաւատներին տրված յանդիմանութիւնները, նրանց, որոնք անձամբ էին ծանօթ մարգարէին, և լսում է՝ ինչպէս նա նախատուշակում է թէ ինչպիսի խօսքերով են նրանց կանչելու որ յաւիտենական տեղ դրաւեն կրակի մէջ։ Անձնական դրգիռը սրում է ֆանատիսմի մերկացումները։ Հրէից պատմութիւնից այնպիսի մարդերի օրինակներն են բերվում, որոնք մերժում էին մարգարէներին՝ Մովսէսին ու

նայլեն, և խիստ պատժվել են սրա համար։ Մէքկայեցիների վրայ քիչ էին ազդում այսպիսի սպառնալիքները. նրանք խիստ չէին հաւատում հանդերձեալ կեանքին, այս պատճառով ծիծաղում էին մարմնի յարութեան հնարաւորութեան վրայ. և այս սկէպտիցիսմին մարգարէն զուգահեռադիր էր դնում պատմութեան մէջ, որոնք ցոյց են տալիս թէ ինչ վիճակ է սպասում կասկածողներին։

Կարդալով Ղուրանը՝ մենք Մահմէտին երեակայում ենք իբրև մի անգուրեկան ֆանատիկ. բայց նա բոլորովին ուրիշ կողմերով էլ էր աչքի ընկնում։ Նրան ամենից աւելի մօտիկից ճանաչողները ամենից աւելի էին նրան անձնաւորում։ Նրա հետեւորդները պատրաստ էին նրա փոխարէն ամէն հարածանքներ տանելու. նա մինչ անգամ հաւատացող սորուհիներին լծոյ է տալիս խզել իր հետ ունեցած կապերը, որպէս զի խոյս տայ այն խիստ վարմունքից, որ բնում էր նրանց դիմին մարգարէի հաւատարիմ լինելը։ Մի այսպիսի սէր կարող էր ներշնչել դէպի ինքը միայն մի աղիւս բնութիւնն. նրա հետեւողները նրան հաստատում էին իբրեւ Ալլահից ուղարկված ուսուցիչ, և հոգեկան զմայլմամբ հաւատում էին նրա վարդապետութեան ճշմարտութեանը։

ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ ՆԵ ԳՃՌՈՒՄ Է ՀԵՒՆՆԱԼ ՄԷՔԿԱՑԻՑ։ Նայելով սրան՝ նրա դրութիւնը անհատուտ էր ու ծանր։ Իր կին Հաֆիզա, որին նա չափազանց անձնաւորում էր եղած՝ մեռաւ. մեռաւ նաև նրա ամենահզօր հովանաւորը։ Դրա հետ միասին նրա դործը առաջ չէր գնում Մէքկայում, և չէր երեւում թէ այդ գործը աջողութիւն է ունենալու այնտեղ, այնպէս որ Մահմէտ սկսեց մտածել գործը ուրիշ տեղ փոխադրելու մասին։ Այսպէս անելու առաջին փորձը անաջող անցաւ։ Թայիֆում, որտեղ նա ապաստան ու բարեզիւղ գործունէութիւն էր որոնում, նրան կոպտութեամբ դէն հրեցին, այնպէս որ նա խորտակ վհատված՝ վերադարձաւ Մէքկա։ Սակայն հնարաւոր էր թվում նպատակին հասնել մի այլ տեղում։ Ջօհանիթութիւններից մէկին

եկողների մէջ Մահմէտ հանդիպեց Մէդինայից եկած ուխտաւորների մի խմբի, որոնք յարգանքով վերաբերվեցին նրան և ցոյց տվին որ հասկանում են նրա վարդապետութիւնը։ Մէդինան բաց ծանօթ էր հրէական դպրոցներին և մարդարէների գործունէութեան համար աւելի շնորհաւորատ տող էր երեւում. ենթադրում են մինչ անգամ, որ մէդինացի արաբները, որոնք լսել էին թէ հրէաները սպասում են Մեսիային, մտածում էին որ իրանց ձեռնտու կլինի, եթէ այդ Մեսիան իրանց ժողովրդին լինի պատկանելիս, և որ, եթէ կամենաք, Մահմէտը կարող է լինել այդ Մեսիան։ Սակայն Մահմէտի գործը Մէդինա փոխադրելը կատարվեց մեծ հետաքրքրութեամբ։ Նրանք, ովքեր ցանկանում էին Մահմէտի գալուստը՝ մի տարի բարոզում էին Մէդինայում նրա վարդապետութիւնը, և այն՝ մեծ աջողութեամբ։ Նրա բարեկամները չափազանց խօսք էին տալիս որ չեն ունենալու մի այլ Աստուած՝ բացի Ալլահից, որ չեն մօտենալու օտարի սրեւէ բանին, հեռու են կենալու շնութիւնից, չեն կոտորելու նորածին մանուկներին, զգուշանալու են գրպարտութիւնից և հնազանդելու են Աստծու առաքեալին, որքան դա բանաւոր կերեայ. ահա այն՝ գործական բարեփոխումները, որ այն ժամանակ պահանջում էր Իսլամը։ Այս բոլորի հետեանքը այն եղաւ, որ Մահմէտ իր համախոհներին ուղարկեց Մէդինա։ Իսկ ինքը սպասեց, մինչև որ ամէնքը գնային, և միայն այն ժամանակ ճանապարհ ընկաւ, երբ կորէյշիների միջև ունեցած իր թղթակցութիւնները դատարկութիւն սարքեցին ու վճռեցին սպանել իրան։ Չէջրա կամ փախուստը տեղի ունեցաւ Ք. Ծ. 622 թ. յունիսի 16-ին։ Արդարև փախուստն է մահմէտական ժամանակագրութեան կարագրութիւը (էրա), և ոչ թէ ծնունդը, քանի որ փախուստի ժամանակից է սկսում իսլամի յաղթանակող գործունէութիւնը։

ՄՇՄԻՑ ՄԷԴԻՆԱՅՈՒՄ։ Այս ժամանակներից մենք մարդարէի նոր դրութեան մէջ ենք տեսնում, նոր բնաւորու-

Մէքքայում Մահմէտ մի հալածվող, պատերազմող, անաջողությունների հանդիպած բարոզիչ է. իսկ Մէդինայում նա արագ յաջողությամբ ամենահզոր մարդն է դառնում պետության մէջ: Նա կազմակերպում է աստուածպաշտությունը և նոր կանոններ է մտցնում համայնքը, խաղաղեցնելով նրա կռիւները, միացրնելով նրա բոլոր ուժերը՝ Ալլահին ծառայելու համար, և այն դէպքերում, որոնք նրա վճռին են վերապահուած, իր կարգադրութիւններով դնում է նոր օրէնսդրութեան հիմքը: Մէդինայում հիմնուած էր մի իսկական աստուածպետութիւն, մի և նոյն ժամանակ Մահմէտ, իբրև մարգարէ, նրա իսկական տէրն էր ու վարիչը: Այսպէս նա նշանաւոր ընդունակութիւններ ցոյց տվեց, ցոյց տալով մի և նոյն ժամանակ որ կրօնական, ինչպէս և պետական գործերում բոլորովին հասկանում է իր հայրենակիցներին: Նա ազատ կերպով ձեռք առաւ փափկանկատումը, որպէսզի իր կրօնն ու բարոյականութիւնը մատչելի անի ժողովրդական մասսաներին և ապահովեցնի նրանց՝ դէպի ինքն ունենալիք հաւատարմութիւնը: Այսպիսով նա չուտով ձեռք բերեց իր համար մի անկախ հեղինակութիւն:

Այսպէս ահա նոր կրօնը դարձաւ մի շաղախ, որի շնորհիւ կազմակերպվեց մի զօրեղ պետութիւն այնպիսի տարրերից, որոնք սկզբում անհամաձայն էին: Մէդինա գալուց յետոյ Մահմէտի առաջին հոգսը աստուածպաշտութիւն կազմակերպելն էր: Քաղաքը չունեց մի չէնք, որտեղ կրօնական համայնքը կարող էր հաւաքվել աղօթելու և բարոզ լսելու համար. այս շինութեան կողքին կանգնած էր մարգարէի տունը կամ աւելի ճիշտ՝ պոնվում էին նրա կանանոցները. այժմ նա երկու կին ունէր, որոնց վրայ յետոյ նորերը աւելացան: Մզկիթը, որ ամէն տեղ մուսուլմանների աղօթատեղին էր, հաւանական է որ կառուցված էր ժողովրդանոցի կամ քրիստոնէական եկեղեցու նմանութեամբ: Մզկիթում կատարվող աստուածպաշտութիւնը զոհաբերութիւն չէ, այլ բաղկացած է հոգևոր վարժութիւններից, որոնք ներկայ եղողների մէջ կրօնական ոգի են մտուցանում: Մէդինայի մզկիթում Մահմէտը իր հետևողներին սովորեցնում էր նրանցից պահանջվող ծէսերն ու պարտաւորութիւնները: Նա այդ շատ ճշտութեամբ էր ոսկրեցնում և ինքն օրինակ էր տալիս, եթէ ինչպէս պէտք է կատարել իւրաքանչիւր վարժութիւնը, այնպէս որ, ինչպէս ասում է Վէլհաուզէն, մզկիթը դարձել էր վարժարան, որտեղ մարդիկ սովորում էին նոր հաւատի պահանջները: «Ընտեղ մուսուլմանները ձեռք բերին այն հաւաքական ոգին ու կարգապահութիւնը, որոնցով աշրի է գնկնում նրանց զօրքը:

ՆՈՐ ԿՐՕՆԱԿԸՆ ԿԱՊԸ: Այսպիսով նոր կրօնական կապը բանեց նախկին արիւնական կապի տեղը, որ ամենից զօրեղն էր Արաբիայում: Իւրաքանչիւր մուսուլմանի իւրաքանչիւր ուրիշ մուսուլմանի վրայ նայում էր իբրև իր եղբօր, թէպետև նա ուրիշ ցեղի լինէր պատկանելիս: Կրօնական պահանջները յարմարվելին միւս բոլոր պահանջներին. բոլոր բնական ճաշակները, բոլոր ընտանեկան կապերը, ինչպէս սովորեցնում էր մարգարէն, պէտք է տեղի տային կրօնին: Մէդինայում լինելուց մի քանի տարի յետոյ Մահմէտ կարողացաւ արդելել պինու զոհաժառութիւնը և արհեստով պարապելը, այլ և հրամայեց բոլոր կանանց, որոնք յարել էին իր կրօնին, որ բօղ կրեն: Ամէն հնարներով համայրին ներշնչում էին որ նա իրան կարված համարի երկրի նախկին կեանքից և այն ամենից, ուրիշ չեն ընդունում նոր հաւատը. այսպիսով դրւս պէտք է դար նոր կրօնի թագաւորութիւնը: Ուղղափառներին արիւրութիւն ներշնչելու համար՝ հարուստ աւար էր խոստացվում և հաւատացնում էին որ պատերազմում ընկնողները ուղղակի դնալու, ճաշակելու են արքայութեան ուրախութիւնները. այս պատճառով ուղղափառների մղած պատերազմները մի անընկճելի բնոյթ ստացան, որ արաբների համար մի նորութիւն էր: Նրանց լսոյլ էր արված պատերազմել սրբազան ամսին, երբ բոլ հին սովորութեան տիրելու էր հանուր խաղաղութիւն: Նրանք կռւում էին մահի վճռականութեամբ և օգտում ի-

բանց յայտնութիւններից անդուսպ անկեղծութեամբ, որ յուզմունք ու սարսափ էր տարածում բոլոր ականատեսների վրայ։ Նրանք միւս աւարների պէս երկար ու բարակ չմտածեցին, պատերազմելու իրանց գերակիցների դէմ։ «Իսլամը խզել է բոլոր կապերը, իսլամը ջնջել է բոլոր դաշնագրութիւնները» ասում էին նրանք, երբ նրանց նախատում էին վաւերի հաստակացութիւնները խանգարելու համար։ Ինքը մարգարէն առաջինն էր տալիս այս անօրէն բազաբականութեան օրինակը։ Պատերազմում առնուած գերիները կոտորում էին. կոտորվեց մի ամբողջ գիւղ, որ միայն երէց մի ամուսնի և անձնատուր եղաւ պաշարումից յետոյ այն յոյսով, թէ ողորմութիւն է գտնելու։

ՀՐԵՈՒԹԵԱՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՊԱՏԹՈՒՄԸ։ Այսպիսով Մահմէտ, ապաւինելով «ամենազօրութեան Աստծու» հաւատը տարածելիս ամէն դիմադրութիւնից ու ամէն պատից՝ երբ նա հասատատ գիրք ձեռք բերից, դէն ղրկեց նաև միւս կրօնների հետ ունեցած կապերը, քանի որ այդ կապերը կարող էին ձնշող ազդեցութիւն անել։ Իր նախկին լուսաւորութեան մէջ նա ասում էր որ իր սեփական կրօնը բուն Էութեան համաձայն է հրէութեան ու քրիստոնէութեան։ Բոլոր երեք կրօնները հիմնւում են «Գրքի» վրայ. Ղուրանը հրէական ու քրիստոնէական յայտնութիւնների շարունակութիւնն ու յաւելուածն է, իսկ Մահմէտ իսկ մի վերջին դէմքն է այն մարգարէների երկար շարքում, որոնք եղան են եկել այս կրօնների մէջ։ Ուրիշ հիմնադիրների պէս՝ նա սկզբում նոր կրօն ստեղծելու միտք չունէր, այլ միայն ուզում էր լոյս աշխարհ հանել և ուժ տալ այս կրօնների սկզբնական ճշմարտութիւններին,— այն ճշմարտութիւններին, որոնց նշանակութիւնը նսեմացել էր։ Այս պատճառով նա սկզբում բարեկամաբար էր վերաբերւում հրէաներին ու հրէական քրիստոնեաներին, և դէպի նրանց ստացած բարեկամական զգացումները բուն հրեոյթին պէտք է օրիգինալին՝ նրա՝ Մէդինա փոխադրվելուց յետոյ։ Բայց այնուհետև վնասուց յետոյ չուտով Մահմէտ փոխեց իր հրէաների

հետ ունեցած յարաբերութիւնը։ Նրա հետևողները սկզբում ստիպում էին երեսները դէպի Երուսաղէմ դարձրած. բայց մարգարէն հրամայեց փոխել այդ և ստիպել, դարձնելով երեսը ոչ թէ դէպի Երուսաղէմ, այլ՝ դէպի Մէքքա։ Նոր «զրույց»*), ինչպէս նա կոչում է, այս կարգադրութիւնը իսլամը յայտարարում էր իբրև մի այնպիսի կրօն, որ տարբեր է հրէութիւնից, որ ունի ազատական, բայց ոչ հրէական կենսրան։ Հրէաների դէմ ունեցած թշնամութիւնը աստիճանաբար աւելիներ էին սրտնում նրանց դէմ կռիւներ մղելու, որոնք վերջացան, բոլորովին ոչնչացնելով հրէաների իշխանութիւնը Մէդինայում։ Մահմէտ աշխատեց իր կրօնը բրիստոնէութենից անջատել։ Արաբիայում քրիստոնեաները պահում էին նախկին իրանց հաւատքին, բան հրէաները, և հետևաբար ընդունեցին իսլամը, այնպէս որ այդ դէպքում թշնամութիւնը այնքան էլ զօրեղ չէր։ Աստուածային երեքութեան ու մարմնաւորութեան վարդապետութիւնը, ի հարկէ, հակակշռեցին իբրև մի աննշանակի աստուածահայհոյութիւն Ալլահի մէկ լինելու դէմ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆԴԱՆԸ։ Մահմէտի գործունէութիւնը մէդինան շրջանում զբաղված է նրա մի յայտնի աստիճան կատարած ամուսնական կապերով և նրա ընտանեկան կեանքում կատարված անկարգութիւններով։ Զանազան առիթներով նա յայտնութիւններ էր շարադրում նմանօրինակ կապերը արդարացնելու համար, որոնք ինչպէս ինքը զգում էր, ստուեր էին ձգում իր վրայ, և ժամանակակից ընթերցողը պէտք է զարմանայ, թէ ինչպէս նրա հեղինակութիւնը պահպանվում էր, չնայելով այսպիսի արարքներին։ Թէպէտ տարակոյս չկայ որ նա շատ բան է արել Արաբիայում կանանց դրութիւնը բարւոքելու համար, սակայն պարզ է, որ այս բանում նա չունէր ոչ մի վեհ իդէալ։

*) Ղուրան։

ՄԷՔԿԱՑԻ ՆՈՒՃՈՒՄԸ։ Ցալով իր հետևողներին նոր կրբա և Տրամայելով նրանց որ աղօթքի ժամանակ երեսները դարձնեն դէպի Մէքկա՝ Մահմէտ այս քաղաքը յայտարարեց իրրև արաբիայի կրօնական մայրաքաղաք։ Թէպէտ նա Մէքկան բարկանալեամբ թողեց, սակայն չկարողացաւ մոռանալ կամ անուշադիր թողնել այն քաղաքը, որ նշանակութիւն ունէր իր աչքում։ Նրա՝ Մէքկայի հետ կապված առաջին մրտրերը՝ վրէժխնդրութեան մարքեր էին. նա պէտք է հաշիւ տեսնէր Կօրէյշիների հետ, որոնք արհամարհում ու հալածում էին նրան և վերջապէս վռնտեցին։ Մէդինայի ու Կօրէյշիների միջև պատերազմը շարունակվում էր մի քանի տարի. մուսուլմանները կողոպտում էին հարուստ Մէքկայի բարեւանները. Բէդրի մօտ տեղի ունեցած մեծ պատերազմում (623 թ. Ք. Ծ. յ.) Մահմէտ յաղթեց իր թշնամիներին և ստիպեց նրանց յարձակուելու նրա վրայ ու պաշարեցին Մէդինայում, սակայն վճռական աջողութիւն չունեցան։ Մահմէտի յաջորդ բայլով փորձ փորձվեց օգուտ քաղելու սրբազան ամսից՝ Մէքկա ուխտի գնալու համար, որտեղ արգէն վեց տարի կար (628 թ.), բնչ նա չէր եղել. և թէպէտ նրան թոյլ չտվին աղօթել Քաաբում, սակայն կօրէյշիները հարկաւոր համարեցին դաշը կապել նրա հետ, այդպիսով ընդունելով նրան իրրև մի զօրեղ անձ, և խոստանալ որ նրա հետևող անպամուայ ուխտագնացութիւնը կարող է կատարվել անարգել կերպով։ Այդ ուխտագնացութիւնը իրաւ կատարվեց. և Մահմէտի իշխանութիւնը այնպէս արագ մեծացաւ ողջ Արաբիայում, որ մէքկացիքը իրանց անզօր զգացին նրան երկար դիմադրելու։ 630 թ. նա մեծ զօրքով առաջ գնաց դէպի Մէքկա և լսկ մի թոյլ դիմադրութեան հանդիպեց։ Մէքկան ընկաւ նրա իշխանութեան տակ։ Նա իր յաղթութենից օգուտ քաղեց վեհանձնութեամբ. միմիայն չորս մարդ պատժվեց։ Նա միանգամայն ցոյց տվեց, որ քաղաքին վնաս չի հասցնվի։ Չին կուռքը իր արարողու-

թիւններով մի կողմ դրվեց։ Բոլոր կուռքերը, ի հարկէ, կործանվեցին. թէ Քաաբում գտնվածները (տարվայ իւրաքանչիւր օրվայ վրայ մէկը կար) և թէ մասնաւոր անձերում եղածները։

ՄԷՔԿԱՆ ԴԱՐՁՆՈՒՄ Է ԻՍԼԱՄԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ։ Մէքկայի նշանակութիւնը այս յաղթութեան շնորհիւ միայն մեծանալ կարողացաւ։ Մահմէտի անպարտելի իշխանութեամբ Մէքկան հռչակվեց իրրև նոր կրօնի կենտրօնական սրբավայր։ Յաղթութեան երկրորդ տարին Մահմէտ նորից այցելեց Մէքկան և անձամբ կատարեց ուխտագնացութեան միջոցի բոլոր ծէսերը, պահպանելով ամէն մանրամասնութեամբ այն կանոնաւոր օրինակը, որին պէտք է հետևէին ուխտագնացները յաւտպայ բոլոր ժամանակներում։ Մերթ ուրեմն իմանալ է թէ ինչ ծէսեր են այդ ծէսերը, նրանք որոնց պատկերացույցիչ ու մանրամասն նկարագրութիւնը կգտնեն գնդապետ Բիւրտոնի «Ուխտագնացութիւն դէպի էլ—Մէդինա և Մէքկա» («Pilgrimage to El—Medinah and Mecca») գրուածքի մէջ. այս սպան այն երեք հրոպացիներից մէկն էր, որոնք ներկայ դարում, ուխտագնացի շորեր հագած՝ մասնակցում էին մահմետական բոլոր ծէսերին։ Քաաբի պատի մէջ դնտնված սրբազան սև քարը համբուրելը, շրջութիւն հօմն անգամ պտտվելը, Զէմզէմ աղբիւրի ջուրը խմելը, Մէքկայի մերձակայքում բլրի մի գագաթից միւսը վազվզելը, հօմ քար մի յայտնի տեղ գցելը և յայտնի հոտում կենդանի զոհ բերելը —ահա այն ծէսերը, որոնցից իւրաքանչիւրը հատանաբար ունէր մի առանձին ծագում, միևնոյն ժամանակ դժուար է կարելի լինի նրանցից մի քանիսի սկզբնական նշանակութիւնը բացատրել։ Մահմէտ «հեթանոսութեան այս կոշտը» չնինց իր կրօնի մի մասը։ Նա չկարողացաւ այն դուրս ձգել և, ընդունելով կատարելագործված կերպով, ինչպէս իր սեփական սիստէմի մի մասը՝ գործաւ կրօնական ազգայնական աւանդութիւնների ժառանգը և իր կրօնը ազգայնական հատուած վերածեց։ «Այսօրվայ օրը ես հաստատեցի ձեզնում ձեր հա-

տաճարները», ասում է նա՝ ուխտագնացությանն ծէսերը սահմանելուց յետոյ, «և իսլամը չինեցի ձեր կրօնը»։ Իսլամը ընդունում է մերկայական ծէսերը և, սրա շնորհիւ դառնում է Բաբիայի ազգայնական կրօնը։ Քաաբէ գլխաւոր աստուած Հուբալը անհետանում է. Ալլահը դառնում է սրբավայրի միակ աստուածութիւնը։ Դրա՝ Աբրահամի ձեռքով հիմնված լինելու լեգենդան հրապարակ է իջնում, և այսպիսով աստուածութիւնը կապվում է հնագոյն կրօնի հետ, այսինքն այն իսլամից առաջ։ Մահմէտ յայտնում է որ նախկին ժամանակներում Քաաբում կատարվում էր Ալլահի մաքուր կուլտը։ Այս պատճառով Քաաբը սրբազան է միմիայն Ալլահի համար։ Օրէնք էր դրված, որ ոչ մի հեթանոսի իսլամ չտրվի ուխտագնացութիւն անել, և այսպիսով ուխտագնացութիւնը կորցրեց իր հեթանոսական բնոյթը, դառնալով դրա փոխարէն՝ մի մահմետականական հաստատութիւն։

ԻՍԼԱՄԻ ՏԱՐԱԾՎԵԼԸ։ Երբ Մէքկան հաստատուց, ապա մնացած Արաբիան չէր կարող երկար ժամանակ անմասն լինել այս շարժման մէջ։ Մի քանի տեղ դիմադրութիւն ցոյց տրվեց այն փոփոխութիւններին, որ այժմ Մահմէտ պահանջում էր իր հայրենակիցներից։ Բայց այդ փոփոխութիւնները չնորհնելու պատիժը մարգարէի զօրքերն էր իր սարսափելի հետևանքներով, այն է՝ պատերազմն ու կողոպուտը, մի ևնոյն ժամանակ արարներից ոչ ոք այնքան նախանձոտ չէր իր հին աստուածներին, որ նրանց պատճառով տանէր այդպիսի զրկութիւններ։ Թայիֆի բնակիչները փորձեցին հակաճայնութեան դալ, որպէսզի փոփոխութիւնը այնքան սուր չլինէր։ Թայիֆի պատգամաւորները խնդրում էին որ իրանց լոյղ տրվի չնութիւնը, վաշխառութիւնը և գինու գործածութիւնը սակայն դա չէր կարող լոյսատրվել. Թայիֆի բնակիչներն էլ էին կրելու այն պրկանքները, ինչ որ կրում էին բոլոր մահմետականները։ Սակայն նրանք սկսեցին խնդրել որ իրանց Քաաբա

աստուածուհին երեք տարով իրանց մօտ մնար, և երբ այդ մերժվեց նրանից, այն ժամանակ խնդրեցին լոյսնել երկու տարով, մի տարով, մի ամսով։ Միակ դիջումը, որ նրանք ստացան, այն էր որ նրանց լոյղ տրվեց չկործանել իրանց աստուածուհին իրանց ձեռքով։ Չին հեթանոսութիւնը, ինչպէս կանոններ, վերացաւ առանց նեղութիւն պատճառելու և առանց որ և է ոտրիբութեան։

Մահմէտ երկար չապրեց իր կրօնը բոլոր ժողովրդի կողմից ընդունելուց յետոյ. նա մեռաւ 632 թ. յունիս 8-ին։ Բայց նա մեռաւ, մի շատ լայն ապագայ բաց անելով իր գործի համար, և իր հետևողներին կանգնեցրեց կրօնական պատերազմների ու յաղթութիւնների ճանապարհին, որտեղ նրանք շուտ կանգ չառան։ Գեռևս իր գործունէութեան համեմատաբար կանուխ շրջանում նա այնպէս էր կարծում թէ իսլամը սահմանված է իշխելու ոչ միայն Արաբիայում, այլև ուրիշ երկրներում։ Հիմնվելով այն բանի վրայ, որ իր յայտնութիւնը, ասելի ուշ էր, քան հրէական ու քրիստոնէականը՝ Մահմէտ հկաւ այն համոզման, որ հրէութիւն ու քրիստոնէութիւնը սուտ կրօններ են, իսկ իր կրօնը միակ ճշմարիտը։ Ոչ աշխարհում չէր տեսնում նա մի ճշմարիտ կրօն՝ բացի իր սեփական կրօնից. այս պատճառով նա պէտք է փոխարինէր մեռ բոլոր կրօնները։ Այս բանը պրկից նրան՝ Մէդինայից պատգամաւորներ ղրկելու արևելեան կայսր Հէրակլին, պարսից Խոսրովին, Եգիպտոսի կառավարչին և միւս իշխաններին, յայտարարելով որ ինքը «Աստծու մարգարէն է», և կոչում անելով որ նրանք իսլամին իրանց հեթանոսական կուլտերն ու դիմեն միակ ճշմարիտ Աստծու կրօնին։ Այս պատգամաւորութիւնները քիչ աջողութիւն ունեցան. բայց Մահմէտ պատրաստ էր ասելի սուիզոզական միջոցների դիմելու՝ իր կրօնը տարածելու համար։ Եւ սրովհետև անհաւատների դէմ մղվելը պատերազմը ուղղափառների գլխաւոր պարտաւորութիւններից մէկն էր, այս պատճառով հրատարակվելին պա-

նպատակ կարգ ու կանոններ՝ դերվիշների հետ վարվելու և այդպիսի պատերազմներից ստանալիք աւարը բաժանելու համար։ Ասուած, որ Ղուրանի իւրաքանչիւր տան մէջ կիմաց ուներով է կոչւում, այսպիսի դէպքերում խրախուսում է ուղղափառներին՝ կոտորել, կողոպտել ու բռնաբարել սրբազան պատերազմներում դերի առնված կանանց։ Մարդարէի մեռնելու րոպէին մի արշաւախումբ, որ առաջինը չէր՝ պատրաստ էր ճանապարհ ընկնելու յունաց կայսրութեան վրայ։ Ենթ լմ. ինչ մտքով է խալիֆը իր վրայ առնում համաշխարհային կրօնի գերը։

ՄՈՒՀԱՄՄԱՆԻ ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ Խալիֆի բարձրիչը իր կրօնը ընդունողներից աչքի առանձին գժտաւոր բան չէ պահանջում ոչ կրօնի խնամատի, ոչ գործելու եղանակի նկատմամբ։ Նրա պահանջները կարճ են ու պարզ։ Նրանք բաղկացած են հետեւեալ հինգ կէտերից.—1) Ասածու մի լինելու և Մահմէտի առաքելութեան խոստովանութիւնը. սրա բանաձեւն այս է, «Չկայ ուրիշ Աստուած՝ բացի Ալլահից, և Մահմէտ Ասածու մարգարէն է»։ 2) Ազօթք։ Դա կայանում է յայտնի բանաւոր բանաձեւը օրը հինգ անգամ կրկնելու մէջ, որի ժամանակ հաւատացեալը երեսով դէպի Մէքկան է դառնում։ Մզկիթները միշտ բաց են ազօթելու համար. իսկ առանձին աստուածպաշտութիւնը տեղի է ունենում ուրբաթ օրերը. Մահմէտ շաբաթվայ այս օրը ընտրել է հրէաների շաբաթից ու քրիստոնեաների կիրակուց զանազանելու համար։ 3) Ողորմութիւն տալը։ Սա պէտք է անվի որոշ չափերով, մի ևնոյն ժամանակ Մահմէտի ժամանակները այս արդիւնքը սահմանվում էր անհաւատների դէմ պատերազմ մղելու համար։ 4) Պահք։ Սա պէտք է տեղի ունենայ Ռամազան ամսում և պահվի շատ խստութեամբ։ 5) Հաղթ կամ ուխտագնացութիւն դէպի Մէքկա։

ՂՈՒՐԱՆԸ խալիֆի սրբազան գիրքն է։ Այս անունը «կարդալ» է նշանակում։ Ուրիշ սրբազան գրքերի պէս՝ Ղուրանը

այնպէս է պատաւրված ու կազմված որ կարդացողը շփոթանք չզգվում է և գրկված է նրա պատմական նշանակութիւնը հասկանալու հնարաւորութիւնից։ Ղուրանի իւրաքանչիւր գլխում, իւրաքանչիւր տողում կոչում է անվում Ասածու ներշնչմանը, խօսքերը դուրս են գալիս իրան Ասածու կողմից։ Բայց Ասածու ասածները շատ սկսէս աւարկաների են վերաբերում։ Այնտեղ հանդիպում են օրէնսդրութեան շրջանից ամենատեսակ վճիռներ՝ պատերազմական կարգադրութիւններ, կրօնական գործերի նկատմամբ պատուէրներ, առակներ ու պատմութիւններ։ Ուղիղ է, կայ միայն մի դէպք՝ ապստամբն զուշակելու. մարգարէն իրան հրաշքներ գործելու կարողութիւն չէր վերագրում, խոստովանելով որ բացի բնութեան հայտնած կարգադրութիւնից՝ հաւատին ուրիշ հրաշքներ հարկաւոր չեն. և ուղիղ այդպէս էլ նա չէր յանձն առնում գուշակել ապագան, իսկ Ասածու կամքի գործերն հանդիսանալով ներկայումս։ Իրրև աստուածպետութեան վարիչ, իրրև գործերի առաջնորդ, իրրև պատուոր բարոյագիտական շատ գործերում, իրրև իր ժողովրդի բարիքների մարդութիւնը պահպանող, իրրև համայնական աստուածպաշտութեան մէջ պիտանի դեր կատարող և իրրև իր տեսակի շատ ընտանեկան կեանքի պիտանի,—մարգարէն վճռելու էր հարիւրաւոր ընթացիկ գործեր, մի ևնոյն ժամանակ, երբ նա յանձն է առնում վճռել այս գործերից մէկը, նրա կանոնադրութիւնը գեռնոված է Ղուրանում։ Այս կերպով առաջ եկած պիրքը ամենեւին հրապուրիչ չէ, և մինչ անգամ պրօֆ. Պալմէրի անգլիական թարգմանութեան մէջ չէ կարողանում բաւականութիւն պատճառել ընթերցողին։ Ուղիղ է, թարգմանութեան մէջ կորչում է բնագրի բանաստեղծութիւնն ու երաժշտականութիւնը, որոնք շատ բարձր են գնահատւում. սակայն Ղուրանի կարդալու ժամանակ գլխաւոր խոչնդոտը կարգ ու կանոնի պակասութիւնն է։ Ամենավատ գրված տողերը (այսինքն՝ գլուխները կամ տառացի՝ չերտերը կամ ալիւնները) մեծ մա-

ամէն գանուում են հաւատացեալ վերջը. սկզբի ու մէջտեղի երկայն սուրաները աւելի յետագայ ժամանակների գործ են, և նրանցից շատերը են կազմած երկու կամ մի քանի գլուխ միացնելուց: Գատմական կարգով կարդացվող սուրաները կարող են կարդացվել շահեկանութեամբ, քանի որ մարդարէի գործերի ու գործերի գարգացումն են ցոյց տալիս: Ամենահինաւ ժամանակների սուրաները կարճ են, բանաստեղծական ու գօրեղ: Գրանք այն սուրաներն են, որոնք մարգարէին պիտի էին մի այնպիսի մարտութեան ու վճռաւորութեան մէջ, որ նրա մարդը ճերմակեցնէր: Գրանք լի են բռնաւորների ու պատմութեան մէջ տեղի ունեցած ահաւոր յիշատակներով, կատարածութեան կարող մերկացումներով և սոսկալի ազատնալիքներով: Յետագայ ժամանակների սուրաները երկայն լկէնգեաներ են՝ ասված պետական հրէաների «Նադգադից» կամ բրիստոնէական աստուածաբնից. և նրանց մէջ մարգարէն խոր ակնարկութիւն է ցոյց տալիս բիբլիական պատմութեան ամենաստորական փաստերի նկատմամբ. իսկ որքան մարգարէի իշխանութիւնը մեծանում ու զօրանում է, այնքան սուրաները վերաբերում են պետական հարցերի, որ մենք յիշել ենք վերևը: Ոճը, որ սկզբում բանաստեղծական է ու վսեմ, յետոյ դառնում է արձակ ու բազմաբառ. խօսում է արդէն ոչ թէ նկարչված մարգարէն, այլ՝ մի պետական ազատարար կամ դատաւոր. և այս՝ վերջին ժամանակների ազդեցութիւնը Ասծու բերանը դնելը չի՛ զարմացնում հարիւր սկզբնական աննկարագրելիներին: Վեցաներորդ հատորի (Գատ) ու հրէից Գրքի պէս՝ Գաւռանը կրօնի վերջին ասութիւնների վրայ սկսեց ամենաարագ յարձակ տալիլ. և իսլամի ամենամեծ վէճերից մէկը պատճառ էր այն հարցի շուրջը, թէ արդեօք Գաւռանը յաւիտենական ժամանակներից է գոյութիւն ունեցել, և կարելի է նրան անել համարել:

ԻՍԼԱՄ ԻՐԵՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԿՐՕՆ: Իսլամի մէջ ամենանշանաւորը նրա արագ զարգացումն է: Մահմէտ իր կեանքը սկսում է իբրև մի ազգաւոր ու հէգ հովիւ—և մեռնելիս յաղթում է իր հետևողներին իր կազմակերպած պետութիւնը, որը կարճ միջոցում իշխելու է իր բոլոր գրացիների վրայ: Ուրիշ այդպէս էլ նրա վարդապետութիւնն էր. սկզբում առանձնափակվել էր մի նեղ շրջանում և հանդիսել խիստ դիմադրութեան, բայց մի կէս դար յետոյ դառնում է նրա ժողովրդի հատուածը, և ոչ միայն իր ժողովրդի, այլ և շատ ուրիշ երկրների ժողովուրդների հատուածը: Այս կարճ շրջանում խլամը հետաւ ազգայնական կրօնի բնաւորիճանին, և ազգայնական կրօնի բնաւորիճանից անցաւ դէպի համաշխարհային կրօնի բնաւորիճանը, մինչև որը բաժանել էին հանդիսապէս միմիայն երկու կրօն: Այն զարգացումը, որին քրիստոնէութիւնը գարերի ընթացքում էր հասել, իսլամից պահանջեց նոյնպէս աստիճանակ: Չի կարելի խլել իսլամից համաշխարհային կրօնի անունը: Նրա հռչակած ճշմարտութիւնը, այն է՝ Աստծու միութեան ու ամենակարողութեան և ամէն մարդու՝ իր առեղծի ու գատաւորի առաջ ունեցած պատասխանատուութեան վարդապետութիւնը պատկանում է ոչ թէ մի որևէ ժողովրդի, այլ՝ բոլոր մարդերին: Այն հոգեկան դրութիւնը, որ իսլամ է կոչվում, այսինքն՝ կոյր հնազանդութիւն մեծ Աստծուն, նրա պատուէրները լրիւ ընդունելը և նրա կամքին կատարեալ հնազանդելը,—մի այսպիսի հոգեկան դրութիւն ամենքին պիտանի է: Ամենքը պէտք է լրջութեամբ վերաբերվին իրանց կեանքին և խիստ պատասխանատու լինեն իրանց արարքների համար. այն հասկացողութիւնը, որ Աստծուն վերագրած յատկութիւններով արտայայտում է Գաւռանի իւրաքանչիւր էջի մէջ, այն է՝ «գթած ու ողորմած» անունը, որ ցոյց է տալիս թէ Աստուած կարեկցելով օգնում է իրան պաշտողների ձգտումներին ու ճիգերին, և թէ նրանք կարող են նայել նրա վրայ ոչ միայն երկիւղածութեամբ, այլ և սիրով,—այս հասկացողութիւնը մտաչելի է ամենքին, և ամենքին օգտակար է թվում: Մանաւանդ այն ժամանակ,

երբ աշխարհս անձնատուր է եղած հեթանոսությանը՝ իսլամը կարող է համաշխարհային կրոն համարվել. երբ ամէն մի առանձին տեղ ունի իր կուռքը, ամէն ազգ՝ իր աւելի էլ մեծ կուռքերը,—կրոնը՝ փոխանակ միացնելու բաժանում է, և այսպիսի աստուածներին մատուցված ունայն ու անմիտ պաշտամունքը խանգարում է մարդկերին՝ կատարելու իրանց պարտաւորութիւնները այն մեծ Աստծու վերաբերմամբ, որի առաջ բոլորն էլ հաւասար են, քանի որ նա ամենքի կառավարիչն ու դատաւորն է: Իսլամը՝ հեթանոսութիւնը արմատախիլ անելու մի փառաւոր միջոց է. նա միացնում է մի վեհ հաւատով ու մի հասարակ օրէնքով կուռքերի ցրված ու մոլորված երկրպագուներին:

Իսլամի ժուռութիւնը նրանում է կայանում, որ նա պարտադիր չէ զարգանալու: Նրա դպրոցները փծուն են ու աղքատիկ. նա աճեց չատ արագ. նրա վարդապետութիւնն ու ծէսերը հաստատատիպ (стереотипный) դարձան նոյն իսկ նրա ծագման միջոցին և փոփոխութիւններ չեն ընդունում: Նրա բարոյականութիւնը գտնվում է այն աստիճանի վրայ, երբ մարդիկ լծվնում են կառավարութիւնը, և առաջ չէ գնում, այնպէս որ նա պահպանում է այն հիմնարկութիւններն ու սովորոյթները, որոնք խափանարիմ են հանդիսանում քաղաքակրթութեանը: Մահմէտի դրախտը, որտեղ դինուորին ծառայելու են գեղեցիկ հուրիները (որոնց իրը յայտնի չէ), գուցէ մի անբարոյական պատկերացնում չէր մարդարէի օրովը, բայց այժմ նա անբարոյական է, և նրանից ազատվելը, ըստ երևոյթին, անկարելի է: Կենսակրթութեան աստիճանի վրայ կանգնած ժողովուրդների կարգապահութեան համար՝ այդ հիանալի գործիքը, որ նրանց պիտանի է մինչև մի յայտնի աստիճան զարգացման ու բարեկարգութեան ընտելացնելու՝ իսլամը նրանց չի կարող մարդկային կեանքի ու մտքի մի աւելի բարձր զարգացման հասցնել: Իսլամը ճնշում է ազատութիւնը, և որա պատճառն

այն է, որ նրա վարդապետութիւնը սուրբ բացառական բնոյթ ունի: Ալլահը ըստ էութեան ներկայանում է լոկ իբրև միւս աստուածների բացառութիւն. նրա էութեան մէջ դրական հարստութիւնների պաշար չկայ, նա կարեկցութիւն չէ ցոյց տալիս մարդկային գործունէութեան բազմակողմ զարգացմանը. նրա պարզեած ներշնչումը բացառական ներշնչումն է, որ լի է ջնջամտութեամբ դէպի այն, ինչ որ հակառակ է իրան, և սէ լի է մի զարիէ դէպի վսեմ ու սիրուն իղէալները: Նա յաւիտեան զանվում է ամէն բանից հետու՝ իր սառցային գահոյքի վրայ. լսվում է նրա ձայնը, բայց նա չէ կարողանում իջնել մարդու մօտ: Նա չէ հասկանում մարդկութիւնը, այս պատճառով, էլ չի կարող տալ նրան ամենամեծ բարիքը:

Գ. Մ Ա Մ

ԱՐԻԱԿԱՆ ԽՈՒՄԲ

XIV ԳԼՈՒԽ

ԱՐԻԱԿԱՆՆԵՐԻ ԿՐՕՆԸ

Լեզուագիտությունը անկասկածելի է համարել այն փաստը, թե հերոսական դիսաւոր ժողովուրդների լեզուները ազգակցական կապ ունեն իրար հետ, և թե Հնդկաստանի ու Պարսկաստանի լեզուները էլ բարբառների մեկ ընտանիքին են պատկանում: Հնդհրոպական լեզուները, այսինքն՝ Հնդկաստանի ու Պարսկաստանի, այլ և յոյների, իտալացիների, կելտերի, գերմանացիների, սլաւների, լիտվացիների ու ալբանյիների բարձր դասակարգերի լեզուները, որքան վեր են բարձրանում, այնքան մոտենում են միմեանց: Սանսկրիտը այս բարբառների ոչ թե ապրիւրն է, այլ՝ ապ հսմրի ուսոգ եղբայրը. իսկ այս լեզուների նահապետը, որ, ինչպես ցույց են տալիս փաստերը, երբեմն գոյութիւն է ունեցել՝ շատ ճիշտ լեզու է եղել, և, դուցէ, լիտվացիների լեզուն ամենի է մոտ նրան, քան սանսկրիտը: Սակայն այժմ մենք նրան կարող ենք ճանաչել միայն իր կենդանի մնացած արդիների հանուր կողմերի ուսումնասիրութեան շնորհիւ:

Այն փաստը՝ որ վերոյիշեալ ժողովուրդները ազգակից են միմեանց բերել է նոյնպէս այն եզրակացութեան թե այն ժողովուրդները պատկանում են մի ցեղի և ծագում են աշխարհի մէկ մասից: Եթե այդպէս է, հապա արդեօք է եղել դեռևս չբաժանված արիական*) ցեղի սկզբնական հայրենիքը, որտեղից առաջինը դուրս են եկել այն խուժանները, որոնց վերապահված է եղել տիրել զանազան երկրներ ու իշխել վրանները: Սկզբում այնպէս էր կարծվում թե այս ցեղը արևելքում է եղել բնակիչ. դա բնապէս բխելիս է եղել այն փաստից, թե հնդկական բազմաբարբառութիւնը ուրիշ ամեն արիական ժողովրդի բազմաբարբառութիւնից հին էր: Պրօֆէսսոր Մաքս Միւլլէր շատ բանաստեղծօրէն է նկարագրել, թե հնչպէս հրոսպայիր հնդիկների հետ միասին արևելքում են որոնելու իրանց ցեղի օրօրոցը: Նա նեղմպրում է թե այն ժողովուրդները, որոնց վերապահված էր տիրել ողջ Եւրոպան՝ Ասիայի բարձր սարահարթերից են իջել. իսկ միւս պաղեը առաջ է եկել Պարսկաստանի կողմն ու Հնդկաստանի հովիտների ուղղութեամբ:

Սակայն այն տեսութիւնը, որ արիականների հայրենիքը Ասիայի անհիւրընկալ տափաստան «Բարձր Պամիրում» էր գտնվում՝ երկար չտևեց. փորձեր են արվել այս հայրենիքը մի ուրիշ տեղ՝ Թունայի հովտում, Բալթիկ ծովի հարաւային ափերում, մինչ անգամ Սկանդինաւեան լեռնաշղթում գտնելու: Ասում էին թե նուաճողները չէին կարող գալ արևելքից. ասելի հաւանական է, որ արիական լեզուն ու բարքերը արևմուտքից լինեն առաջ եկած, որտեղ նրանց ներկայացուցիչների ամենամեծ մասն է գտնվում, իսկ յետոյ տարածված լինեն դէպի արևելք: Բրանից էլ ասելի մեծ քայլ էր արված. փորձում էին հերքել որ արիականները ծագմամբ ազգակից են միմեանց: Ասում էին թե լեզուի մեկ լինելը ցեղի մեկ լինելու ապացոյցը չէ. այս բանը հաստատելու համար բաւական է մի հայեացք ձգել Բրիտանական կայսրութեան կամ

*) Բրիտանի՝ այն ազգն էր կոչվում, որ տիրել էր Հնդկաստանին: «Հնդհրոպացիներ» անունը մեզ ասում է որ այս ցեղը այժմ բնակում է Հնդկաստանում ու Եւրոպայում: «Հնդգերմանացիներ» խոսքը բնորոշում է այս խումբը սրա արևելեան ու արևմտեան պետական անդամով, ինչպես սրան համապատասխանում են:

մինչ անգամ բրիտանական կղզիների վրայ։ Այս պատճառով ենթադրում են, թէ արիական ժողովուրդների ազգակցութիւնը ծագման ազգակցութիւն չէ, այլ՝ լոկ լեզուի ու կենսակերպութեան մէկ լինելը. «արիական» բառը ուրիշ բան չէ ցոյց տալիս, այլ այն, թէ լեզուի մի յայտնի տիպը և այդ տիպի հետ կապ ունեցող բաղաքակրթութիւնը, որ տարածվել է բոլոր մատնացոյց արված ժողովուրդների միջև շատ հին ժամանակներում։ Արիական լեզուն ու բաղաքակրթութիւնը տիրել են ժողովուրդների մի ամբողջ շարք, որոնց մէջ չկայ մէկ ուրիշ ազգակցութիւն։

Բայց այսուամենայնիւ դարձեալ այն կարծիքն է տիրում, թէ այն զանազան երկրների բնակչութիւնը, որոնց իշխող են հանդիսանում արիական լեզուն ու կենսակերպութիւնը՝ առաջ է եկել մէկ կենտրոնից։ Երբ համայնքը թափառական վիճակի մէջ է եղել, բնական կարելի է ենթադրել, թէ աշխարհի որևէ մասում հաստատված բարձր բաղաքակրթութիւնը՝ թափառող օրդունների միջոցով պէտք է տարածված լինէր ամէն կողմ, և թէ նոր բաղաքակրթութիւն մտնողները դառնալու էին յաղթող ու այն երկրների հրամայող, ուր տանելու կլինէին նրանց ուղղնացութիւնները։ Եւ ներկայումս ականատես հեղինակութիւնների միջև մի ինչ որ համաձայնութիւն է երևում կայացած՝ այն բանի վերաբերմամբ, թէ որտեղից է սկսել արիականների զանազան կոզմեր բնակելը։ Ասիայի հարաւային տափաստաններում, Սև, Կասպից ու Արալեան ծովի հիւսիսակողմը, ընդարձակ հարթավայրերում, պատմութեան արշալոյսից շատ առաջ բնակելու են եղել, ինչպէս մեզ ասում են, այն մարդկերի աւելի օրդունները բան ցեղերը՝ որոնք թէպէտ սկզբում մէկ լեզուով են եղել խօսում, բայց քիչ-քիչ սկսել են որոշվել միմեանցից լեզուով ու կենսակերպութեամբ։ Այս օրդունները այն ժողովուրդների օրօրոցն են եղել, որոնց մէջ տեղի էր ունենում կրթութեան պրօցէսը։ Թափառելը նրանց յատուկ գործն էր, և որքան

նրանք հեռանում էին կենտրոնից՝ այնքան նկատելի կերպով էին տարբերվում հանուր տիպից։ Նրանցից ոմանք դնացին հարաւ ու հիւսիս՝ դէպի Պարսկաստան ու Հնդկաստան. միւսները դնացին արևմուտք և հաստատեցին Եւրոպայի երկրները։

Արիական հարցը կանգնած է արիական ժողովուրդներից իւրաքանչիւրի պատմութեան չէմքում, և նրան հարկ է լինում հանդիպել արիական կրօններից իւրաքանչիւրը ուսումնասիրելիս. այս պատճառով մենք պէտք է մի փոքր անենք բացատրելու, թէ ինչում է կայանում այս ժողովուրդների հանուր ժառանգութիւնը։ Մեր ասածների հիման վրայ բնաբնչպէս չի կարող սպասել որ այդ ժառանգութիւնը մի զարգացած բաղաքակրթութիւն լինէր կամ շատ բարձր հայեացքների մի ամբողջ շարք։ Առաջ ենթադրում էին թէ վաճառների մաքուր ու վսեմ զգացմունքները պէտք է մօտ լինէին արիական շարժման արմատին։ Այժմ մեզ յայտնի է, որ մենք պէտք է սկսենք մի աւելի կոպիտ սկզբունքից (начало)։ Ապացոյցը հետազօտում է թէ ինչպիսի արուեստներ են ունեցել արիականները, դոնելով այնպիսի բառեր, որոնք հանրածանաչ վերաբերում են այս խմբի զանազան բարբառներին, և նա համոզվում է որ նրանց քաղաքակրթութիւնը շատ սկզբնական է եղել։

Ահա ինչ է ասում դ-ր Տայլոր.

«Անթաժան արիականները մի հովուական ժողովուրդ էին, որ թափառում էր իր հօտերով, ինչպէս հրէաների նահապետները թափառում էին Քանաանում։ Ընտերը, տաւարն ու ոչխարը արդէն ընտանի էին դարձած, բայց խոզը, ձին, այծը, էշը դեռևս ընտանի կենդանի չէին դարձել. ընտանի կենդանիներն էլ անհամեմատ էին։ Ցայտնի բոյսերի նրբաթիթեղը հիւսում փոխարէներ էին դառնում, բայց բուրդ չէին մանում, և կենդանիների մորթերը քերվում էին բարէ դանակներով, և նրանցից հագուստներ էին կարվում՝ ոսկրից, փայտից կամ բարից շինած ասեղներով։

«Նրանց ուտելիքն էին միսն ու կաթը որից դեռևս պանիր ու իւղ չէին պատրաստում։ Միակ արբեցնող ըմպելիքը՝ վայրենի մեղուների մեղրից պատրաստված մեղրաջուրն էր. իսկ գարեջուրն ու գինին անծանոթ էին։ Ոչ ոք յայտնի չէր արիականների ասիական ճիւղին, բայց նրա զործակրութիւնը արագ մուտք էր գործել նրանց հրոսպական ճիւղը։ Ձմեռը նրանք բնակում էին գետնափոր փոսերում՝ ծածկված մի կարգ ցցերով, որանց վրայ հողածուխ (торфъ) կամ աքմար էր ածված։ Ամառը նրանք բնակում էին կոպիտ շէնքերի սայլերում կամ ոստաշէն խուցերում։ Միսայներից, դուցէ, պղպինձը գործ էր ածվում զարդարանքների համար, իսկ գործիքներն ու զէնքերը մեծ մասամբ քարից էին։ Ակեղնները շինվում էին կաղնեփայտից (тисовое дерево)... ծառերը այրելով ու քարի կացիններով դուրս փորելով՝ մակոյկներ էին շինում։

«Չէնի ասելով՝ ձերերը կամ հիւանդները մորթվում էին, կանայք ձեռք էին բերվում, գնելով կամ յափշտակելով, նորածին զաւակները ծածուկ պէն էին գցվում կամ սպանվում։ Ժամանակով, երկրագործութեան հետ միասին, առաջ եկաւ մասնական սեփականութիւնը, իսկ ընդունված սովորոյթը բիչ-բիչ օրէնք էր դառնում։ Նրանց կրօնական գաղափարները հիմնված էին կախարդութեան կամ անապաշտական երկիւղների վրայ. բնութեան ուժերը դեռևս անթօղօմօրֆիք (մարդկային) պատկեր չէին ընդունել։ Դեռևս մեծ անուն, որ յետոյ սկսեց Աստուած բառի նշանակութիւնը ստանալ՝ ոչ պարզ երկինքն էր նշանակում։ Նրանք համարում էին մահներով, բայց հարիւրից բարձր թիւ հաստատելիանը չհասան»։

Նախնական արիականների այս համառօտ նկարագրութիւնները աչքի են ընկնում գրութեան մեծ համարձակութեամբ, քան նրբութեամբ. բաւական ճիգ է պահանջվում, որպէսզի մարդ դիտակցել կարողանայ, թէ այսպէս ապրողները արդէն շատ են առաջ գնացել, և թէ այս նախնական արուեստներն ու հմտութիւնները ապագայում շատ բան էին խոստանում։ Ձնայով, որ հին արիականը վայրենի է, սակայն բարձր է կանգնած իր զրացիներից և արդէն կարգին առաջ է գնացել քաղաքակրթութեան ասպարէզում։ Մանաւանդ կենսունակ ու զարգացման ընդունակ են հանդիսանում նրա ընտանեկան սկզբունքները։ Թէպէտ արիական երկրների անապին հին ճարտարապետութիւնը շատ հին շրջանի է պատկանում, բայց պարզ վկայում է որ նահապետական ընտանիքի գաղափարը հանուր ժառանգութեան մի մասն էր։ Բոլոր նաւաճած բոլոր երկրներում արիականները ապրում էին նահապետական մեծ ընտանիքներով։ Որդիքը իրանց կանանցով ու զաւակներով մնում էին հօրանց յարկի տակը, մինչդեռ ժամանակ հայրը այս անապին համայնքի գլուխն ու բուրմն էր։ Մենք կարող ենք մանանայոյց անել համայնքի միւս կողմերը՝ ընտանիքի այս տիպի հետ միացած։ Երբ ընտանիքը շատանում է դառնում ու այդպիսով անկարող է մնում որ անհնարին է լինում ապրել մէկ յարկի տակ՝ այն ժամանակ չինվում է մի այլ տուն, որտեղ որդին կամ լուսը իր կնոջով հիմնում է մի նոր ընտանիք։ Այսպիսով առաջ է գալիս ընտանիքների մի խումբ, որոնք ամենքն էլ արիւնակից ազգականներ են միմեանց և անուն միակերպ վիճակ, սակայն իրանց կենտրոնը նահապետի տունն են համարում։ Համայնքի այս տիպը, երևի, արիական աշխարհակալներն են տարել Հնդկաստան, որոնք մոյրել են այնտեղ մեծ ընտանիքներով նահապետական կերպով ապրելու սովորոյթը՝ Հոլանդիայի, Իսլանդիայի կամ նախնական Անգլիայի գաղմականութեան պէս։ Այսպէս ապրողները երկրագործութեամբ չէին պարապում, այլ հովիւներ ու որսորդներ էին. և երբ արմատ էին բռնում մի յայտնի տեղում, նրա նախկին բնակիչներին, իբրև ստրկի՝ ստիպում էին մշակել հողը իրանց՝ այդ աշխատակաների համար։

Ան թէ բաղաբակրթական ինչպիսի տիպ էր ասրած-ված նախնական ժամանակները և իր երևան գալովը շատ դէպքերում մի նոր աշխարհ առեղծում։ Արիական ժողովուրդներից մի քանիսը միւսներից արագ էին առաջ գնում։ Նրանք վաղ էին մտել մետալական դարը, և պատմութիան արշալոյսին երևում են բոլորովին կազմակերպված հիմնարկութիւններով, որոնք կրում են իրանց վրայ նահապետական հասկացողութիւնների կնիքը։ Միւսները երկար ժամանակ մնացին քարի դարում և միայն պատմական ժամանակներում սառցան մի ղարկ, որ դրդեց նրանց հասնել ազգութիւնների աստիճանին։ Նրանցից շատերի կամ բոլորի արուեստներն ու պիտոյքը պարտաւորացնում են դեռևս անբաժան արիականների ժառանգութիւնը չին։ Արուեստներից շատերը կարող էին առաջ գալ երկրներից իւրաքանչիւրում անկախ, կամ թէ մի արիական ժողովուրդ կարող էր այդ արուեստները միւսից ուշ առնել։ Առաջ գալով բաղաքակրթութեան հանուր արմատից՝ զանազան ազգութիւններ մշակում էին այդ բաղաքակրթութիւնը՝ իւրաքանչիւրը իր հասկացածի պէս, երբեմն էլ, ինչպէս կռնեցիք, զարմանալի կերպով համանման ճանապարհով։

Կարելի է միթէ տալ այն կրօնի նկարագիրը, որ արիականները դեռ չէին մշակել զանազան կերպով այլ և այլ երկրներում։ Մենք էլ չենք կարող, Մաքս Միւլլերի հետ միասին, որոնել Հնդկաստանում համարիական կրօնի բացատրութիւնը։ Հնդիկ կրօնը, երբ կարդացողը նրան առաջին անգամ ծանօթանում է, արդէն զարդացած, բոմական մշակված համակարգութիւն էր, և աներևի կերպով զանում է զարդացման ուելի յետագայ աստիճանի վրայ, քան այն անպաճոյճ կուլտերը, որոնց մենք հանդիպում ենք հրոպական զանազան երկրներում։ Իսկ եթէ մենք այս կէտում չենք կարողանում համաձայնել գերմանացի նշանաւոր պետականին, ապա պատրաստականութեամբ օգտվում ենք նրա խօսքերից՝ առարկայի միւս կողմը ձևակերպելու համար, երբ նա մատնացոյց է անում արիական ժողովուրդների կլխաւոր Աստծու առաւելականն նոյնութիւնը։

Իր «Լեզուագիտական դասախօսութիւնների» մէջ Մաքս Միւլլէր մեզ ասում է որ «Ձևս», յունական առասպելարանութեան մէջ ամենասրբազան անունը,—միևնոյն բառն է, ինչ որ Դիաուս (Dyaus) սանսկրիտում, Յուիս կամ Յուն՝ լատինական Լուպիտերում (Iupiter-ից սեռ. հոլ. Iovis), Տիւ (Tiw)—անգլիասաքսոնական լեզուում, որ պահպանված է Tiwsdaeg-ում, Tuesday (երեքշաբթի), էդը Աստծու օրը, Տիրի (Tyr), հին վերին-գերմանական բարբառում Զիս (Zio)։

«Այս բառը մէկ անգամ է կազմված եղել, ոչ աւելի. այդ բառը չէն առել յոյները հնդիկներից, ոչ էլ հռոմայեցիք ու գերմանացիք՝ յոյներից։ Դա պէտք է գոյութիւն ունեցած լինի նախնական ժողովուրդների նախնիների՝ լեզուի ու կրօնի վերաբերմամբ բաժանվելուց առաջ, նրանց՝ աջ ու ձախ գրվելու համար իրանց հանուր արտատեղերը լծոլնելուց առաջ։ Այս յարգելի խօսքի մէջ մենք կարող ենք նշմարել մեր ցեղի մի քանի կրօնական հնագոյն հասկացողութիւնները»։

Այս օրինակի մէջ առասպաբանութիւնը ցոյց է տալիս արիական կրօնների ենթադրելի կլխաւոր կողմերից մէկը։ Բայց եթէ մենք յոյներս դնենք այն բանի վրայ թէ առասպարանութիւնը բաց է անելու մեզ համար հնից այդպիսի բացմաթիւ օրինակներ ու մոցնելու է մեզ արիականների պանթէոնը՝ ապա խոթված կլինենք մեր ակնկալութիւնների մէջ։ Գայ դարձեալ Հնդկաստանի ու Եւրոպայի առասուածների միջև*) առասպաբանական զուգադիպութիւնների մի կամ երկու

*) Նրանցից կլխաւորները հետևեալներն են

1. Dyaus՝ երկնքի աստուած, ամն վերևը։

2. Ուսնակը. Ushas՝ արշալոյսի աստուածուհի. լատ. aurora. լիտվերէն ausszra. անգլոսաքս. costra։

3. Սանսկր. Agni կրակ, կրակի աստուած. լատ. ignis O. C. ogni։

դէպք, սակայն դրանցից մի քանիսի մէջ նմանութիւնը չի առաւելութեան է: Տիւտնական առասպելաբանութեան Տիւ կամ Տիր իր բնոյթով կամ ինչի համար որ առնմանուած է, չէ յարմարւում Զևսին կամ Յուպիտերին, թէպէտև այս անունները առաւելաբանօրէն ազգակից են: Նմանութիւնը չէ վերաբերում բոլոր բնական կրօնների, ոչ էլ որ և է երկու կրօնի մէջ չէ վերաբերում նրանց բոլոր առասպելներին. հրոսական առասպելութիւնների մեծ մասը դուրս են հանում Հինդուստանում: Այս պատճառով առասպելաբանական ակնյայտութիւնը քիչ բան է ասում մեզ այն նախնական կրօնի մասին, որ մենք փորձում ենք նկարագրել: Բայց եթէ մենք ուշ դարձնենք նախնական հովիւ-արօտրդի հայեացքների ու սովորոյթների վրայ, որ այժմ հանուր արիականի տիպական դէմքն է համարւում, այն ժամանակ աւելորդ կլինի երկար որոնել այն, ինչ որ բոլոր արիական կրօնների հանուր յատկութիւնն է եղած: Նահապետական ընտանիքը ունի իր յատուկ կրօնը, որ այդ անդամներին միացնող կապ է հանդիսանում: Օջախը նրա սրտարանն է, որովհետև նրա տակն են թաղված ընտանիքի նախնիները, կամ էլ մի այլ պատճառով: Այս նախնիները անտարակոյս ընտանիքի առաւելներն են հանդիսանում: Օջախի այս կուլտի բուրմը ընտանիքի հայրն է, և նա իր հերթին մանելու է իր հայրերի շարքը, եթէ վրան թաղման ծէսեր կատարող որդի ունի: Ընտանիքի անդամներից զատ՝ ոչ ոք չի կարող մասնակցել տնային կուլտին. այն ամենը, ինչ որ արիների կապերով չէ կապված ընտանիքի հետ՝ հեռու պէտք է մնայ այս ծէսերից: Սա այնպիսի կրօն չէ, որտեղ ուրոյն անձը կարողանայ առանձին պաշտամունք ու-

4. Սանսկր. Surya՝ արև յատ. sol. յուն.

5. Սանսկր. Más՝ լուսին. յատ. mena. յնտալիք. menu: Mars—Maruts, Manu—Minos—Mannus, Varuna—Ouranos և այլ նմանկին նոյնութիւնները առասպելաններն ոչ ոք չեն ընդունում:

նենալ, ինչպէս և ուրոյն անձը չէ կարողանում առանձին պաշտամունք ունենալ նաև ծառերի մէջ, երկու դէպքումն էլ միմիայն հանգուցեալ նախնիներն է ծառայում առասպելութեանը. մի դէպքում նրանք մէկ ծառի ընդունողներ են, միւսում՝ արիւնակից ազգականներ: Ծառերում անձնաւորութիւնը իրան պահ է տալիս. այսպէս նա ըստ բնութեան իր ընտանիքից հեռու մի առանձին բան չէ: Արիական բարեպաշտութիւնը՝ մարդ ու պարզ ընտանեկան կրօն է: Նա առաջ է բերում այնպիսի զգացումներ, որոնք բոլոր երկրներում արիական հոգիների ուժ էին: Նա ընտանեկան կեանքը շինում է մի սրբազան գործ, ընտանեկան բոլոր կապերին տալիս է մի վսեմ սրբագործում (санкція) և անպիսի դէպք է առիթ տալիս, որ «օջախի ու տան» յատկութիւնը հարկադրւում է մի անմեղադիր դրւում լինելու դէպի անբարոյութիւնն ու անառակութիւնը: Մինչ անգամ այն վայրերի կառավարութեան մէջ, որոնք նախնական մարդիկ պաշտպանում են իրանց տները տարերքացիների մուտք գործելու դէմ՝ կարելի է տեսնել ընտանեկան ու հայրենասիրական բարձրագոյն առաքինութիւնների սաղմերը: Այսպիսով նախնիների կուլտը, որ մարդկային ամենահնչեակական կրօնների մի մասն է, իրական ուժ է հանդիսանում ուրիշ արիականների մէջ, բան որևէ ուրիշ տեղ: Եկեղեցական պատմութեան սկզբում դարձեալ մեռելների վիճակի վրայ. Քրիստոնէութիւնը կուլտը զրկած էր ու զրկած գրեթէ շարժիչներից: Արիականների մէջ նա եռանդուն կերպով միանում է ընտանեկութեան գործ զգացումին, որ պատճառով նրանք յաջողութեամբ իրանց առասպելների ու կուլտի կսկիծն են բռնում*):

Բայց նրանք, որոնց մասին մենք խօսում ենք, բացի ընտանեկան առասպելներից՝ ուրիշ առասպելների էլ էին եր-

*) Ցուցնոց նախնիների կուլտի համեմատական անհնազանութիւնը ապացուցած է դ-ր Քրատչերն կոսկածել՝ որովհետև նրանք կրօնով արիականներ են: Այս կարծիքը սխալմունքը նման են յոյներին:

կըրտպատում։ Աբիական կրօնի երկրորդ բնորոշ կողմը՝ ոչ թէ տեղական կամ ցեղային, այլ համաշխարհային աստուածների երկրպագութիւն է։ Պիտուսին՝ երկնքին, երկնքի աստծուն կարելի է երկրպագել ամէն տեղ, ամէն տեղ կարելի է պաշտել երկիրը, երկնային երեւոյթները, որոնք նոյնպէս նախնական արիական կրօնի առարկաներն էին, ամէն տեղ կարելի է երկրպագել արեւին ու լուսնին։ Չի կարելի ասել թէ արիականները միշտ այն են նկատի ունեցել, թէ այդ էակները տեղական կամ ցեղային բնոյթ չունեն։ Երկնքի աստուածութիւնը միեւնոյն ժամանակ կարող էր լինել մի յայտնի տեղի աստուածութիւն ու այնտեղ կրել իր մասնաւորական անունը. կամ թէ այս աստուածութիւնը կարող էր ընդունված լինել արեւ ցեղի կողմից, որ նրան անուն էր տվել, ինչպէս իր առանձին հովանաւորին։ Իւրաքանչիւր ընտանիք կարող էր ունենալ իր սեփական՝ երկնքի աստուածը, ինչպէս և իր սեփական՝ օջախի աստուածը։ Մենք չենք կարող մտածել և այն, որ, երկրպագելով այնպիսի էակների, որ կարելի էր գտնել ամէն տեղ՝ արիականները սկսել են արհամարհել իրանց պաշտած սրբազան վայրերն ու առարկաները։ Նրանք իրանք էին բարձրացել վայրենի վիճակից, սակայն դեռ ընդունում էին վայրենիների հասկացողութիւններից շատերը։ Թէպէտ նրանք մի քանի մեծ աստուած ունէին, բայց դեռ էլի կարող էին հաւատալ փոքր աստուածութիւնների մի մեծ բանակութեան։ Ծառը, հեղեղը նրանց համար ունէր իր ոգին, քարանձաւը կամ մեծին ճեղքը՝ իր չար դևը։ Նրանք յաճախ պիտում էին հմայութեան, օրինակ, երգելեցնելով յանուն անձրեւի, մի գործողութիւն, որ բարձր աստուածութեան էլ կարող էր ստիպել՝ ուղարկել հարկաւոր եղածը։ Աշխարհս խիտ առ խիտ լի էր աստուածներով, ամենի հետ լաւ յարաբերութեան մէջ լինելու համար՝ մեծ ուշադրութիւն ու արուեստ էր պահանջում։

Արիական կրօնի համար բնորոշ համարվող մեւս կողմե-

րը՝ նրա մէջ քրմական բնոյթի բացակայութիւնն է, այլև այն, որ նրա աստուածները սովորաբար մէկ միապետական պանթէօն են ներկայացնում։ Բայց այս կողմերից ոչ մէկը այն կրօնի յատուկ (специфический) տարբերութիւնը չէ, որ մենք ձգտում ենք որոշել։ Ո՛չ մի նախնական կրօն քուրմ չունի. քուրմերը այս կամ այն կրօնի մէջ երեան են գալիս նրա զարգացման մի որոշ աստիճանի վրայ, երբ պետութիւնից դուռ է կազմակերպվում։ Միապետական պանթէօնը, ինչպէս Համիրասինն ու Էգիպտինը՝ նոյնպէս ոչ թէ կրօնի ոգին է մատնացոյց անում, այլ՝ այն, որ նա հասել է մի համակարգող (систематизирующей) բնաւորիճանի այլև այն բազաբական իդէաներր, որոնց համաձայն բարձր նշանակութիւն է ստացել յայտնի սիստէմը։ Ճշմարիտ է, արիական կրօնները կարգի են բերում իրանց աստուածներին, երբ գալիս է դրա ժամանակը արիական նահապետական ազգի օրինակով, դնելով գլխին հօրը, կողքին՝ նրա տպաներն ու աղջիկները՝ շրջապատված ծառաներով, կարգի չբերված ոգիների մի ամբողջ շարքով, յաւերժահարսներով ու էլֆէրով (փոքրիկ ոգիներ՝ երբեմն բարի, երբեմն չար)։ Բայց կրօնի սկզբնական բնոյթը հասկանալու համար՝ այնքան այն չէ կարևոր իմանալ թէ ինչպէս է սարբված նրա պանթէօնը, որքան այն, թէ ինչպիսի աստուածներ են պաշտվում և ինչպիսի յարաբերութիւն ունեն նրանք մարդկանց հետ։ Պարզ կերպով աչքի է ընկնում մի կէտ, այն է՝ այն միջոցին, երբ սէմիտ կրօնը դուռ տեղական ու ցեղային բնոյթ ունի՝ արիականի մէջ կայ մի տարր, որ անցնում է այս սահմանները։ Սէմիտ հողի վրայ աստուածութիւնը յարաբերութեան մէջ է մտնում ցեղի հետ, իսկ ցեղի բոլոր անդամները արիւնի կապերով կապված են իրանց աստուածային պետի կամ նախնու հետ։ Արիական կրօնում արիւնն էլ է կարևոր դեր խաղում։ Ընտանեկան զոհարանը կուլտի կենտրոնն է, և նա, ով դուրս է գցված իր սեփական ընտանիքից՝ զրկված է

պահել և է. ասուածներին երկրպագելու հնարաւորութիւնից։ Ամենից աւելի, իհարկէ, ընտանեկան աստուածների մասին են մտածում, և նրանք մի ահագին ուժ ունեն մեր կեանքի մարմով։ Բայց այն կուլտը, որի իրրև միաւորիչ սկզբունք ներքինիայ ընկնելն է հանդէս գալիս՝ արիականի, ինչպէս և սեմիտի համար մի ամրողջ կրօն չէ։ Կան էակներ՝ ինչպէս երկնքում, այնպէս էլ երկրում ու երկրի տակ, որոնց կուլտը աւելի լայն է, քան ընտանեկանը։ Ընտանիքը կարող է պիտի երկնքին, տալով նրան մի առանձին մասնական անուն, կամ պիտի նրան մի առանձին տեղ. սակայն ինքը երկինքը բարձր է այդ բոլոր անուններից ու տեղերից։ Ընտանիքի սրինները, ինչպէս տեսնում ենք բոլոր սէմիտ աստուածների մէջ՝ գոյանալից են բաժանմանը, իսկ բարձրագոյն աստուածները ներկայանում են միացմանը, և սրբան սրեկ համայնք զարգացել է՝ այնքան բարձրագոյն աստուածները, որոնք հաւասարապէս պաշտւում են նրա բոլոր անդամների կողմից, վսեմագիր ու մեծ նշանակութիւն են առացել։ Այս պատճառով մենք կարող ենք համաձայնել Փոսսէլի հետ, երբ նա իր «Ethnology of folklore»-ում չշտփում է արիականներին տեղական կուլտի սկզբունքից ազատելու հարցը և ասում է թէ այն հանդամանքը, որ երբ մարդիկ բարձրանում են իրանց աստուածներին հասկանալու չափ, որոնք կարող են ուղեկցել և ուղեկցում էլ են ցեղերին, ուր որ նրանք գնում են՝ «արիական ցեղի ամենամեծ յաղթանակն» է։

Բայց այն կողմը նոյն իսկ վտանգաւոր կլինի անցնել ցեղի մի գաշտ, որ դեռ շատ քիչ է ծանօթ։ Արիական կուլտերի մէջ կան պէսպէս զոհաբերութիւններ, որոնք տարբերւում են իրանց կարևորութեան աստիճաններով։ Մի քանի ժողովուրդների մէջ իրրև առանձնապէս մի հանդիսաւոր կերպով մատուցված զոհ՝ հանդիսանում է ձի զոհ բերելը, բայց ամենակարևորն էր մարդկի զոհաբերելը, թէպէտ արիական բոլոր երկրներում չարգացման սկզբնական աստիճաններին

վրայ մտածում են փոխանակել այս զոհերը։ Երեսան և աշխարհական կրօնների տարբեր լինելը շատ անպաշտպանելի է առաջ բերել. նատաճելուց յետոյ վերջինների աստուածները յաճախ առաջինների շուր աստուածները կամ դևերն էին դառնում. հայտնակով կուլտի քուրմերը կախարդ ու վհուկ էին համարվում, պահպանից եղած աստուածները շատ փորձեր էին անում իրանց զոհը վերադառնալու և զոհաբերութիւնից հանված ձէռները վերանորոգելու համար։ Սակայն արիականների կրօնի նման մի կրօն, որ ընտանեկան կապերի վրայ է հիմնված՝ ընդունակ է զարգանալու, նայելով թէ ինչպէս կամաց-կամաց առաջ է շարժվում քաղաքակրթութիւնը։

ԺԵ ԳԼՈՒԽ

ՏԵԻՏՕՆՆԵՐԸ*)

ԸՐԻՍԿԱՆՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՑՈՒՄ։ Շատ Եւրոպական ժողովուրդներ, հռոմէական քաղաքակրթութեան հետ չփվելուց առաջ, ամբողջ հազարամեակների ընթացքում համայնական այն վիճակի մէջ են գտնվել, որ նկարագրված է նախընթաց գլխում և մտել է արիականների մուտք գործելուց յետոյ՝ նրանց նուաճած ժողովուրդների մէջ։ Զանազան երկրներում մենք հանդիպում ենք նահապետական ընտանիքի համապատասխանը գիւղականի հետ, երկրագործական կեանքի համապատասխանը հովուականի հետ, որոնց համար արիականները վաղուց հաստատվել էին ոչ-արիական ժողովուրդների միջև։ Համայնական այս կազմակերպութեան պատճառը, որ աւատականութեան զարգացմանը իբրև հիմք է ծառայել՝ հանդիպում ենք մեզ Հնդկաստանում ու մեզ Գերմանիայում։ Նրա արմատը թաղված է հեռաւոր անցեալում և մի քանի տեղ մինչ անգամ ներկայումս էլ է հանդիպում։

Քաղաքակրթութեանը վերաբերող ամէն բան վերաբերում ունի և դէպի կրօնը։ Սլաւների, կէլտերի, տեւտօնների նախկին հաւատը այժմ արիականների կրօնի ամենապատ

*) Տեւտօնները մի գերման ցեղ է, որ էն սկզբում բնակում էր ստորին Էլբայից դէպ արևելք և Դանիական կղզիներում։ Դրանց անունը յիշվում է Պիթէյի աշխարհագրական գրուածքում, բայց յայտնի չէ Ստրաբօնին։

Հ. Թ.

պայումն է համարվում։ Այս կրօնի ծիսական կողմն ու հաւատալիքները անորոշ ու փոփոխական են եղել Հնդկաստանի ու հարաւային Եւրոպայի յետագայ ժամանակների կրօնների համեմատութեամբ. նրանում ոչ կանոնաւոր քրմութիւն է եղել, ոչ էլ կրօնական ձևերը որոշող դրուածք։ Գետը, պարիսպը, հինաւուրց կաղնին—ամէն բան իր լեգենդան ու ծէսերն է ունեցել, որոնք յօրինված են եղել ամենահին ժամանակներում։ Կրօնի նախապատրաստական ու արտաքին մասերը գործում ու ներկայացում էին միմեանց վրայ, և այդ միջոցին արիականները անշուշտ երեան էին գալիս իբրև մի առաջխաղաց մասը, սակայն միւս մասերի հետ միանալով՝ գտնում էին մի խառնուրդ, որ չէր մասնատվում։ Նախնիների ոգիները ապրում էին տոհմի հաւատալիքների ու ծէսերի մէջ. հազարաւոր աներևոյթ գործիչներ էին ընդունվում երկնքում, երկրում ու երկրի տակ, և նրանց վերաբերվում էին, ինչպէս պահանջում էր աւանդութիւնը. նրանց կերակրում ու վրաները ծխացնում էին, կաշառում կամ երդվեցնելով դուրս էին կանչում, ինչպէս պահանջում էր յայտնի դէպքը։ Երեան էին գալիս նոր աստուածներ կամ հները միանում ու նոր աստուածներ էին ծնում, կամ մէկ աստուած մի գաւառից միւսն էր տեղափոխվում։ Այստեղ էլ առասպելներն ու ծէսերը կազմվում էին զանազան պրոցէսների միջոցով։ Սակայն հաւատալիքների հաստատուն հասակը (աճը) առաջ էր գալիս, մի քանի աստուածութիւնների հետ կապակցված, նայելով թէ ինչպէս էին առաջ գալիս աւելի նշանաւոր ընկերվարական օրգանիզմները, որի ժամանակ պետական համայնները ցեղեր էին դառնում, ցեղերն էլ՝ ազգեր։ Երկնային մեծ աստուածները, ինչպիսի սկզբնական զարգացման պատմութիւն էլ ունենային, առանձնապէս պետանի էին կանայքն ու ժողովուրդները իրար հետ միացնելու համար։ Այս էակները զանազան երկրներում զանազան անուններ էին ստացել։ Ընդունց սկզբնական պատմութիւնը, անշուշտ, միատեսակ չէր

ամէն տեղ. սակայն ամէն առասպելաբանութեան մէջ կային այնպիսի դէմքեր ու պատմուածքներ, որոնք ուրիշ տեղեր էլ էին հանդիպում. որպէսզի մէն է դրա պատճառը, որ նրանք իւրաքանչիւր երկրում դուգահեռաբար էին զարգանում համանման հանգամանքների շնորհիւ, թէ յետագայ ժամանակում ուրիշից առնուած լինելու շնորհիւ, կամ էլ՝ այդ երկու պատճառներով միասին, մեզ-յայտնի չէ:

Մենք կտանք այստեղ դիցամանացոց կրօնի համառօտ նկարագիրը: Կելտերի կրօնը, որ կարող է ուսումնասիրուել պրօֆ. Ռայսի դասախօսութիւններով, կամ սլաւների կրօնը (որի մի սիրուն հանուր նկարագիրը տալիս ենք Մօրֆիլի «Religions sistems of the World» գրուածքում) նոյնպէս կարող էին պիտանի լինել՝ արիական կրօնը իր զարգացման տարբ տարիճանի վրայ պատկերացնելու համար այն ժողովրդի մէջ, որ դեռ բոլորովին չէ կազմակերպուել՝ ապա դարձել: Տիտօնների կրօնը այս միւս երկու կրօնների հանդէպ մեր ուսումնասիրութեան համար այն առաւելութիւնն ունի, որ աւելի երկար տակաց ու չշնչացուել ըրիստոնէութեան ձեռքով և իր սկզբնական ճիւղի մէջ դեռ համեմատաբար նոր ժամանակներս ցոյց է տալիս մի հզօր ու իր տեսակի զարգացում: Լինելով Եւրոպայում ծագած ամենահին ժամանակի հնութիւն՝ նա միանգամայն և՛ մեր նախնիների՝ անգլիացիների կրօնն է, որին յարել է հիւսիսային երկրների ըրիստոնէութիւնը, և նրա բազմաթիւ մնացորդները մինչև օրս հանդիպում են Անգլիայում: Այս պատճառով այս կրօնը բոլոր ընթերցողի համար մի նշանաւոր շահեկանութիւն ունի:

ՀԻՆ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, որոնք բնակութիւն էին հաստատել Ռէյնի ու Դունայի աւազաններում՝ մենք տեղեկութիւններ ենք գտնում Ցեզարի ու Տացիտի գրուածքներում: Նրանցից յետոյ մի քանի տեղ է մնում դիցամանացիներին վերաբերող հաղորդագրութիւնների մէջ. ըրիստոնէական միսիոներները իրանց պարարտ էին համարում մուտքագրութեան առ

ջորդական նախկին հաւատալիքներն ու ծէսերը. միևնոյն ժամանակ պահպանում էին նրանց մասին տեղեկութիւններ հաղորդելուց: Մեզ յայտնի եղածը առնուած է եկեղեցական մատենագիրներից: Էդդաները պատկանում են տիտօնական կեանքի զարգացման բարձր բնաստիճանին. նրանք պատմում են իրանց սեփական պատմութիւնը, որի վրայ իր հերթին կդարձնենք ընթերցողի ուշքը:

Հին դիցամանացիները բնակում էին ցուրտ ու ցան եղած բնավայրերում՝ շրջապատուած ընդարձակ անտառներով ու ճահիճներով, որոնք այն ժամանակները բռնած ունէին կենտրոնական Եւրոպան: Ամէն մարդ կարդացել է այն բաց ու պատերազմիկ ժողովրդի նկարագրութիւնը, որից զուր չէին այնպէս վախենում հռոմայեցիք, և պիտի որ դիցամանացիք ունէին կատարի կապոյտ աչքեր, փայլուն մազեր ու բարձր հասակ, պիտի նրանց ռազմական ապստամբներն ու պարտաւորութիւնները նրանց համարձակ ոգևորոյթներն ու խիստ բարոյականութիւնը: Նայելով հռոմէական մատենագրների նկարագրութեանը՝ նրանք ամենևին վայրենիներ չէին: Նրանք բազաքներում չէին բնակում, այլ մի տեղից միւսն էին անցնում, այդ ժամանակ հռոմայեցը մշակում էր իր ձեռքին ունեցած հողը, պահպանելով միաժամանակ սիրապատութեան սիստէմը հողը պրատող անձերի փոփոխութեան միջոցին: Կանայք, Տացիտի ասելով, դժուար գործերն էին կատարում, ազամարդիկ ժամանակը որսի ու պատերազմի մէջ անցկացնում: Բացի շինական կազմակերպութիւնից նրանք էլի մի ուրիշ կազմակերպութիւն ունէին՝ անգլիական հարիւրապետների ու կոմսութիւնների պէս մի բան, որտեղ իւրաքանչիւր շրջան պէտք է հասցնէր պատերազմի համար զինուորների մի որոշ քանակութիւն, ընտրելով իր սեփական իշխանաւորները ու այլ և այլ նպատակների համար ժողովներ տարբերով: Այս տեղական ու ցեղային բաժանումների միջև նրանք չէին մոռանում որ իրանք ուրիշ ազգերից տարբերուող մի ազգ են, և իրանց վրայ յարձակվե-

լու դէպքում միանում մի ազգ էին դառնում: Այս բանի կրօնական արտայայտութիւնը մենք գտնում ենք մի լէգենդայի մէջ, որ պատկերացնում է ազգութեան այն երեք մեծ ստորբաժանումները, որոնք հաւասարապէս առաջ էին եկել Մանն աստծուց՝ երկրի ստեղծած Տուիսկոյի որդուց. վերջինին օրհներգներ էին ուղղված, իբրև գերման ցեղի հօրը: Այս ժողովուրդը բոլոր կարեւոր գործերը յիշում էր օրհներգներով:

ՀԻՆ ԳԵՐՄԱՆ ԱՍՏՈՒԾՆԵՐԸ: Այսպէս, ուրեմն գերմանացիք ազգային աստուած ունեն. միւս աստուածները, որոնց մասին պատմում է մեզ Տացիտ, նոյնպէս իբրև ազգային աստուածներ են հանդիսանում, և ոչ թէ տեղական կամ ցեղային: Բալթիկ ծովի հարաւակողմի ցեղերը երկրպագում են Գէրտային, որ Տացիտի ասելով՝ նրանց համար Terra Mater-ի, այսինքն՝ Մայր Երկրի անունն է: Միւս աստուածներին Տացիտ հռոմէական անուններ է տալիս: Գերմանացիք, նրա ասելով, երկրպագում են Փայլածուին (Մէրկուրիին) իբրև իրանց գլխաւոր աստուածութեանը. յայտնի օրերում մարդիկ են զոհաբերում նրանց: Նրանք նոյնպէս յարգում են Մարսին ու Հէրքուլէսին և նրանց կենդանիներ են զոհում. միևնոյն ժամանակ ցեղերից մէկը՝ սվիմները երկրպագում են Իզիդային: Ցէզար ասում է թէ գերմանացիք պաշտում են Արեը, Լրաբուխան (Վուլկան) ու Լուսինը: Տացիտ յիշում է ուրիշ գերման աստուածներ, և դրանք երևան էլ ճիշտ տեղեկութիւններ են տպորդում: Տացիտ անուն-անուն յիշում է գերման աստուածները, համաձայնելով հին ժամանակի սովորութիւնը, և սա մի մեծ չափով արդիւք է եղած. մենք յետայ կտեսնենք թէ հռոմայեցիք ինչպէս էին Յունաստանի աստուածները նոյնացնում Հռոմի աստուածների հետ:

Տացիտի՝ գերման աստուածները լատինականներին համապրելը մինչև հիմա պահպանվում էր շաբաթվայ օրերի անունների մէջ: Հռոմայեցիք այնպիսի մոլորակների անուններ էին գործ ածում, որոնք նրաց սեփական աստուածների անուն-

ների տերն էին բռնում՝ շաբաթվայ օրերը դեռևս առաջին դարում որոշելու համար. իսկ Գերմանիայում աստուածները կոչվում էին այն գերման աստուածների անունով, որոնք ինչպէս կարծվում էր, համապատասխանում են հռոմէական յայտնի աստուածներին: Եւրոպայի կէսը շաբաթվայ օրերին հռոմէական անուններ է տալիս, իսկ միւս կէսը՝ գերմանական: Մենք լատինական անունները բերում ենք ֆրանսիական ու անգլիական ժամանակակից անունների հետ, որոնց մէջ աւելի պարզ են արտայայտվում գերման աստուածները, քան ժամանակակից գերման լեզուում*):

Շաբաթվայ օրերի այս տիեզերական անունները հանուր են տիեզերական լեզուի բոլոր ճիւղերին և աշրի են ընկնում հաւանաբար խորին հնութեամբ: Նրանցով մենք իմանում ենք թէ հնում ինչպիսի աստուածներ ունէին գերմանացիք, և այդ աստուածները հռոմէական ինչպիսի աստուածների էին համապատասխան համարվում. սակայն անօգուտ աշխատանք կլինէր սրանից կամ այս առարկայի վերաբերմամբ տեղի ունեցած սրեկ հին տպորդագրութիւնց եզրակացութիւններ հետևեցնելը յիշեալ աստուածների ծագման ու բնոյթի մասին: Գրիմմի՝ այս խնդրի նկատմամբ խնամքով կատարած հետազոտութիւնից մենք տեսնում ենք որ հռոմայեցիներին միայն մէկ հաշիւ է դրդել՝ Վօդան Մէրկուրիի հետ նոյնացնել: Լուսնիմպի հետ նոյնացած Տօր հաւանաբար երկնքի աստուած էր, մինչդեռ Տիվ կամ Յիու, որին աստղաբաշխութիւնը Զեսի

*) Dies Solis, անգլ. Sun's day (արեի օր)—Sunday (ֆրանս. Dimanche առաջ է գալիս Dominicus-ից՝ Տիրոջ օր)—պիրակի:

Dies Lunae, ֆրանս. Lundi և անգլ. Monday կամ Moon's day (լուսնի օր):

Dies Martis, ֆրանս. Mardi և անգլ. Tuesday, այսինքն՝ Տիվ կամ Յիու աստծու օր:

Dies Mercuri, ֆրանս. Mercredi, անգլ. Wednesday, Վօդանի օր:

հետ է նայնացնում, ոչ թէ Մարսի՝ պատերազմի աստուածն էր, իսկ Վէներա, Աստղկի պէս՝ կապվում էր կանացի գեղեցկութեան հետ։ Մենք սրանից ուրիշ բան կրխտենանք այս աստուածների մասին, երբ ծանօթանանք Էդդաներին, սակայն հարկ է նկատել, որ օրինական համարվի աստղին դարի հետաքրքրական աստուածները հիւսիսային-գերմանականներից անջատելը, որոնք միևնոյն անուններն էին կրում XI կամ XII դարում։ Այս պատճառով մեր՝ գերման աստուածների նկարագրութիւնը մենք կազմում ենք միևնոյն հիւսիսային աստղաբաշխութեան հանձնարարութեամբ։

Հռոմայեցի մատենագիրները ոչ մի ճիշտ հասկացութիւն չեն տալիս *նրանց ժամանակակից գերմանացոց* կրօնի մասին։ Ճիշտ է, որ նրանք քրմերի այնպիսի դասակարգութեան հետ չէին գործ ունենում, ինչպէս գալլերը, և այնքան էլ չէին անձնատուր լինում զոհարերութիւններին. այս հիմնարկութիւններից ոչ մէկը չի կարող բնորոշել առանց մտածելու։ Տացիտ, ինչպէս և Ցեսարը՝ իրէալացնում է անկիրթ վայրենուն՝ անտառացած բազմաթիւ աստուածները կրճատելու համար։ Նորերս անտառային հին կուլտների վերաբերմամբ հաստատած տեղեկութիւնները ստիպում են մեզ՝ հաստատ սրան, որ նա բանի-բանի անգամ խօսում է այն առանձին սրբազան նշանակութեան մասին, որ գերմանացիք տալիս էին անտառներին ու պուրակներին։ Տացիտ ուշիշ չէ իրէալացնում, ասելով՝ «Նրանք չեն վախում իրանց աստուածները շուրջ պատի մէջ և չեն պատկերացնում նրանց մարդկերի կեր-

---

Dies Iovis, *ֆրանս.* Ieudi, *անգլ.* Thursday, *Յօրի օր։ Գերմաներէն այս օրը կոչվում է* Donnerstag, *այսինքն՝ Թօնարի, Յօրի* (Thor) *օր։*

Dies Veneris, *ֆրանս.* Vendredi, *անգլ.* Triday, *Ֆրէյիի օր։*

Dies Saturni, *պահպանում է լատինական աստծու անունը անգլ.* Saturday-*ի մէջ (ֆրանս.* Samedi *դուրս է եկած* Sabbath-*ից)։*

պարանոցով,—իսկ այս նրանց դրդում է երկնային էակների *ճեմելիան գիտակցութիւնը*»։ Մի բանի դար անցնելուց յետոյ, մենք տեսնում ենք ինչպէս քրիստոնեայ եպիսկոպոսները կործանում են գերմանացիների հեթանոսական առասպելները և այդում նրանց մէջ գտնված պատկերները։ Սակայն, տարակոյս չկայ, որ յայտնի տեղի գլխաւոր սրբավայրը, ինչպէս և Տացիտ է ասում, անտառների խորքումն էր գտնվում։ Գատասատանի ու խորհրդի համար ցեղը հաւաքվում էր սրբազան պարագում, մի հզօր ծառի տակ, որտեղ չէր կարող դիպչել մարդու ոտքը, և որ աստուածների բնակարան էր համարվում. այնտեղ զոհ էին բերվում կենդանիներ ու մարդիկ, այնտեղ կախվում էին զոհերի սակրերների հետ միասին, և այդ սակրները պատերազմի ժամանակ ցեղի առաջից էին տանում, իբրև նրա սրբազան նշանները։ Այդ անում էին բարմերը, որոնք գօրքին ուղեկցում էին պատերազմ և որոնք այդ ժամանակ իրաւունք էին ստանում՝ տալու անհրաժեշտ պատիժները, բանի որ նրանք աստծու ներկայացուցիչներն էին համարվում, որ և կարծվում էր թէ անձամբ է ներկայ, իբրև առաջնորդ։ Բարմերը, որ նրանց հետ խորհրդակցում էին համայնական գործերի մասին, կարիք էին զգում գուշակութեան դիմելու. մանաւանդ դէպքերում այդ բանը կարող էր անել ընտանիքի հայրը։ Բարմերին նոյնպէս յանձնված էր սպիտակ սրբազան ձիերի խնամատարութիւնը, որոնց վրնջիւնով իմացվում էր աստուածների կամքը։ Ճիշտում են նաև մի բանի կանայք, որոնք սրբազան անձնատուրութիւնների համար էին վայելում. մինչ անգամ գերմանացիք իրանց կանանց մէջ նկատում էին մի յայտնի սրբութիւն ու ներշնչմանութիւն։

Տացիտի ու քրիստոնէութեան առաջին դարերի միւս մատենագիրների ասելով՝ այն ժամանակվայ գերման կրօնի մէջ մի համակարգութիւն չէր նկատվում. աստուածները սրբատաղ ընտանիք չէին կազմում, քարմերը, Գալլիայի ու Բր-

բիտանիայի մոգերի պէս, դասակարգ չէին, և կօնական ծէսերը փոխոխական ու չարժական էին։ Պէտք է յիշել նոյնպէս որ տարերկրեայ մատենագիրների պատմածը աւելի ազգայնական ու պաշտօնական կուլտին էր վերաբերում քան տիպական ժողովրդական ծէսերին։ Վերջիններս փարթամ էին զարգանում. այս բանը կարող էր չվիճենալ օտարազգի ականատես մատենագիրը, բայց սրա ակնեսի լինելը յայտնվում է այն զանազան ձևերով, որոնք նոր ասա սկսել են լրջօրէն ուսումնասիրվել։ Իմանալու համար, թէ իրօք ինչպիսի կրօն էր հին Գերմանիայի կրօնը՝ մենք պէտք է դիմենք չինական հանդէսներին ու լէգենդաներին (ինչպէս արել է Մանհարդտ իր «Wald und Feldkulte» երկրի մէջ), որոնք թէպէտև այժմ կորցրել են իրանց նշանակութիւնը, բայց մի ժամանակ պիւպայինների կրօնական լուրջ ծէսերն ու հայեացքներն էին ներկայացնում։ Գիւղացին իր ցանկութիւններով ու պօեմբներով պատիս էր մերձակայ ազգիւրը և նուէր էր մատուցանում ապրիւրի ոգուն, դրելով այդ նուէրը ազբիւրը կամ կախելով շրջապատող ծառերից։ Ճակատագրի մասին ասելի սիրով կախարդուհու հետ էին խորհրդակցում, քան հետաւոր Վօտանի. առասպելական չինական հերոսի կուլտը՝ նրա վաղեմի օտարոտի սովորոյթներով ասելի էր էնտուզիազմ պրդռում, քան համայնական չքեղ հանդէսը։ Հին Գերմանիայի մասի մեծ կողմը կարող է ուսումնասիրվել այն հերոսական լէգենդաներով ու կախարդական տէքսթներով, որոնց շատ տարրերը անկասկած արդէն այն ժամանակ գոյութիւն ունէին։ Արդեօք այս լէգենդաները դէգրադացիայի (աստիճանաբար ցածանալու) պրօցէսի միջոցով էին կազմվում։ Արդեօք նրանք առաջ աստուածների մասին էին խօսել, իսկ յետոյ հերոսներին, իշխանաւորներին ու հասարակ մահկանացուներին վերաբերվել։ Կամ թէ պրօցէսը հակառակ ուղղութեամբ է տեղի ունեցել. արդեօք սկզբում են կազմակերպուել մարտիկների մասին, նրանց պատերազմների ու սիրոյ պատմուածքները, իսկ յետոյ

այս պատկերները չփոխվել են արևի ու երկնքի հանդէսների հետ։ Արդեօք կախարդական տէքսթները սկզբում աստուածների նկատմամբ պատմուածքներ են եղել, որոնք յետոյ ժողովրդի մէջ տարածված լինելու շնորհիւ կորցրել են սկզբնական արժանաւորութիւնը, մինչև որ իջել են նաւատացած ու իր նշանակութիւնը կորցրած առասպելաբանութեան աստիճանին. կամ թէ դրանք սկզբում կենդանիների ու խարտեանի արարքների պատմուածքներն են եղած, ինչպէս սիրում են պատմել վայրենիները, իսկ յետոյ աւելի բարձր աստիճանի վրայ են կանգնել, այնպէս որ նրանցից մի քանիսը կարող ենք աստուածներին վերաբերող պատմուածքներ համարել։ Մի անհրաժեշտ կարիք չկայ պատասխանելու այս հարցերին, որոնք աւելի էլ հին ժամանակի են վերաբերում, քան այն ժամանակը, որով մենք զբաղվում ենք. սակայն նրանք, որոնց յայտնի են այդ առասպելները, և որոնք կաշխատեն թափանցել այն մարդկերի հոգեկան դրութիւնը, որոնք այդ պատմուածքները ոչ թէ ցնորք, այլ լուրջ փաստեր են համարում՝ թիչ թէ շատ բան կիմանան հին Գերմանիայի կրօնի, օտարոտի էակների, կախարդուհիների, թզուկների, խօսուն կենդանիների, շնչաւոր արևի, լուսնի ու քամիների մասին, որոնցով իրան շրջապատված էր համարում գերմանացին։

ԳԵՐՄԱՆԱՑՈՑ ՅԵՏԱԳԱՑ ՀԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԿՐՕՆԸ։ Հաւանական Գերմանիա քրիստոնէութիւնն մտնելը վաղուց էր պատրաստել տեսօնական կրօնի զարգացումը, որ կարող էր առաջ գալ այնտեղ։ Հին հաւատը սակայն աւելի հիւսիսային դաւառներումն էր պահպանվում։ Այդ հաւատը Բրիտանիա էին բերել գերման աշխարհակալները, պահպանվել այնտեղ մինչև VII-րդ դարը և նորից տարան նրան այն կողմը աւելի էլ հիւսիսային ձևի մէջ հին սկանդինաւները, որոնք իրանց հերթին «քիչ-քիչ ձևոք վերցրին Ծօրից ու Օդինից՝ սպիտակ Քրիստոսի պատճառով»։ Ժամանակագիր Բէդ (Bede) համաբան ոչինչ չէ ասում հեթանոսութեան մասին, որ Անգլիայի

կրօնն էր դեռ մի հարիւր տարի էլ առաջ այն ժամանակից, երբ նա գրում էր. այս կողմից նա նման է ուրիշ բրեսանեայ ուսուցիչների, որոնք նոյնպէս կարող էին խօսել հելմանոսաբների մասին, բայց ոչինչ չեն ասել։ Թէպէտ հելմանոսաբիները դադարից Անգլիայում, սակայն տեսան կրօնը շարունակ իշխում էր այն երկրներում, որտեղից եկել էին աշխարհականները։ Փրիզիայում VIII-րդ դարում մեզ յայտ է հանուում Հուլդա տաճարի մասին, մի բարձ տաճարձուհու, ինչպէս նոյնիսկ նրա անունն է ցոյց տալիս, որ հաւատ է տալիս բոլորին և հովանաւորում ձկնորսաբիները։ Փօպիսէ, կամ Փօրդիսէ (հաւանաբար Voorzitter, նախագահ) անունով տաճարձուհիները, որ նոյնացած է Օդինի ու Բայդաբի հետ՝ պաշտւում էր Էդլհոլանդ կղզում. այնտեղ նա ունէր մի սրբազան տրիւր, որից ջուր էին առնում յուն ու մանջ*)։ Այնտեղ, յատուկ՝ անտառի մէջտեղը, կային տաճարներ իրանց քուրմերով, որոնք հարուստ նուէրներ էին ստանում՝ մէկ հոգերով ու մէկ դանձերով. ասում են, որ դանդաղ եղանակներով մարդիկ գոհ բերելը նոյնպէս գործածական էր այնտեղ։ Ձիաստահութիւն կայ կաւքերի (Զվէցիայում, Ուզեդոմում), մինչ անդամ կաւքերի երեսութեան մասին. սակայն սրանում բրեսանեական եկեղեցին բնագէտ մեջա հելմանոսներին էր մեղադրում, և այսպիսի հաստատութեան չի կարելի հաւատ ընծայել։ Չի պահպանվել ոչ մի տեսակ կաւք —մեզ կարուստ չէ արուեստի համար, բայց մի այդպիսի գիտ կարող էր վճռել այս վիճելի հարցը։

ԻՍԼԱՆԴԻԱ։ Տեսան հելմանոսութիւնը իր բարձր զարգացմանը Իսլանդիայում հասաւ։ Միայն նրա այս ճիւղից է մնացել գրականութիւնը, քանի որ ժողովրդական աւանդութիւններից շատերը Իսլանդիայում իրրև գրական չարժման

*) Ազբիրից յուն ու մանջ չաւը տանելու սովորոյ՛ն մեզանում էլ կայ և կատարւում է Համբարձման օրը, վիճահանդէսների ասիճով։

Հ. Թ.

արդիւնք են հանդիսանում, որ հաստատւել է բրեսանեութիւնից առաջ. պատմաբան Արի, որ գրում էր այս անցքից մի քար յետոյ, գործերի նախընթաց վիճակը հանգամանօրէն է պատկերացնում։ Բիւրեղ Ոլեալի կարգացողը գիտէ, որ հեաթրը իսլանդացիների մէջ շատ կարճ է և պատահարների ենթակայ։ Արիատանդրութեան հետ, որ նրանց շարունակ մղում էր դէպի ռազմական ու ատգաբակային արշաւանքները՝ նրանք ատոմիկ հակւած էին դէպի տեղական կռիւները, որոնք տալիս նրանց հեաթրը համակել էին շարունակ արիւնահեղ վէճերով։ Այս վերջիններս գնում էին, ասես թէ, իրանց մեծագական գործի կարգով. սովորութիւնը արբազարձում է այդ վէճերը, տեղական ժողովները հետամուտ չեն լինում ու չեն պատժում, եթէ միայն նրանք կանոնով են առաջ գալիս։ Գեռ չէ գտըս եկել մի այնպիսի հատարակական հնարիւնակութիւն, որ կարողանար յուզել երկու բնտանիքի միջև ծագած վէճերը. վրէժ խնդրողը ունի իր ընդունված տեղն ու ճանաչված պարտաւորութիւնը։ Հատարակութիւնը, ինչպէս ուրիշ արիական համայնքներում, նահապետական է. փոխարէն պաշտպանութեան և տաճարների միանական երկրպագութիւն տալու համար՝ իւրաքանչիւր բնտանիք արիւնակից ազգականների մի համայնք է համարւում։ Իսլանդական կրօնի գլխաւոր կէտը նախնիներին բնտանիքով երկրպագելն էր, որ կատարում էր բնտանիքի մեջ։ Մեռելները լցւում էին բլուրների տակ կամ բնակարանին կից փոսերում, և իսլանդացիք կարծում էին թէ նրանց ոգիները այդ տեղերումն են բնակում. տում էին թէ, մեռած ժամանակ նրանք հետանում հոգեմարմինի (курганъ) էին գնում։ Այնտեղ տեղաններ էին կանգնեցնում ու գոհեր բերում. այնպէս էին կարծում, թէ մեռելները խմում են դեռեւ լցւած արիւնը. հոգեմարմինը յայտնի պատահների սրբազան վայրերն էին գտնել, և այս անհանգիստ արարքների ու նրանց՝ կենդանիների հետքրած օգնելիան մասին շատ հետաքրքիր կա-

յին։ Նրանց «այլ֊ֆա» էին անուանում և բարի ու մաքուր ժողովուրդ համարում։ Դրա հակառակ չար մարդերի հոգիները, իբրև դևեր՝ չարքաշ կեանք էին անց կացնում և զանազան ֆ֊չուաուելիններ առաջ բերում։

Ընտանեկան հոգեմումբերում բնակող մեռելների հոգիների այս հատատակիրների հետ կար և մի ուրիշ պատկերացում, այն է՝ թէ մեռելները գնում են անտեսանելի աշխարհի հեռաւոր գաւառները։ Չոմերոսի գրուածքում այս երկու պատկերացումները միանում են իրար հետ։ Իլանդական ֆոլկլորի սովորոյթները այս վերջին հայեցուածքի վրայ են հիմնւում։ Ննջեցեալը գնում է մի հեռաւոր ճանապարհ, և բարեկամները յուզարկաւորում են նրան, որքան կարելի է, հեռու. նրան հաղցնում են հոգեմատներ, դժոխային կօշիկներ, որովհետև դժոխքը մեռելների գաւառի անունն է։ Նրան նուէրներ են մատուցվում, ձիերը, ծառաները ու ապահովները, բալէները ու չնորհ այրվում են նրա հետ խարոյկի վրայ. կինը յօժարակամ հետևում է էրիկին. սրանք բոլորն էլ նրա հետ են լինելու անդրգերեզմանային աշխարհում։

Բացի ընտանեկան կուլտից մենք ունենք նաև տեղական առարկաների երկրպագութիւն. սրբազան ապրիւրները, ջրվէժները, պուրակները, քարերը—այս բոլորը պաշտվում է։ Գիմում են և Մայր—Երկրին, Որոտին, Երկնքին։ Բայց այս մանր կուլտերից զատ՝ կայ և մեծ ցեղի կամ արքայական տան հետ միացած մի հասարակական կուլտ։ Մեծ ու հարուստ տան կողքին մի գնի վրայ շինված տաճարը է միանգամայն ժողովների ու զոհարերութեան վայրը, ապաստարանը և երդման ու դաշինք կապելու տեղը։ Սեղանի վրայ, մի բարձր նոտարանի առաջ դրված է արիւնով լի մի ֆիալ, որի մէջ, գուշակութիւններ անելու համար, դրսած են բարակ ձողիկներ։ Այնտեղ դրված է նաև մի ոսկի մատանի, որ բուրմը կրում է ժողովներում, և երդվողը՝ դնում իր մատը։

Քրմի պարտաւորութիւնն է՝ պահպանել տաճարի շէնքն

ու սեփականութիւնը և կատարել զոհաբերութիւնը։ Զոհաբերութեան միջոցին զանազան ծէսեր են կատարվում. գործ է ածվում զոհերի արիւնը, և ինջոյթին ներկայացողները միսն ուտում են ու գինին խմում։ Առաջին գաւաթը դատարկվում է ի պատիւ Վօդանի, ապա փառաբանվում են ուրիշ այլ և այլ աստուածներ և խմվում է ննջեցեալների հոգեմատը։ Զոհաբերութիւնը կատարվում է, հայելն առատութիւն խնդրելով, և համայնքին վերաբերող զանազան կարիքը գործերի առիթով յայտնութիւն մաղթելով։ Այս կուլտի հետ կուռքերի մասին անմիջական վկայութիւններ չկան։ Թէպէտ իսլանդացիք արուեստ էլ ունեն, սակայն մեծ աստուածները դուրս նրանց պատկերացումների մէջ դեռ այնքան որոշ կերպարանք չէին ստացել, որ արտայայտէին արուեստի ստեղծագործութիւնների մէջ. նրանք Չոմերոս չունէին, որ կարողանար պարզ դուրս բերել այդ աստուածները հոգևոր աչքերի առաջ։ Ծէսերը արիւնոտ բնոյթ ունեն, բոլը շարունակ ներկվում է զոհերի արիւնով։ Մարդկային զոհերին դիմում են միայն տանուտէր մեծ վտանգների ժամանակ, իբրև մի վերջին ու ստկալի միջոց. աստուածութիւնը, որին նուիրվում է մարդկային զոհը՝ դիմաշարժվում է, տեսնելով թափված արիւնը, դարձնում է իր ցասումը կամ թէ շատ քան է անում իր ժողովրդի օգտին։ Արիւն թափելը բոլոր կապերի մէջ ամենազօրեղ կապն է։ Երկու բարեկամ, անբաժանելի եղբայրութեամբ միանալու համար, խոռնում են գետնի վրայ իրանց արիւնը, իսկ յետոյ նրանցից իւրաքանչիւրը ոտքը դնում է այդ տեղի վրայ։ Ցայտնի է նոյնպէս մարդկային արիւն թափելը՝ նաւը ծովն իջեցնելիս կամ շինութեան հիմքը դնելիս։ Թէպէտ այս կրօնը շատ վայրենի է ու խիստ, սակայն նշաններ կան, որ սկսել է կակղել, և որ նրա մութ ծէսերից մի քանիսը արդէն պատրաստիր են փոփոխութիւնների ենթարկվելու։ Քրիստոնէութեան մօտենալովը իսլանդացիք զգում են, որ մեծ փոփոխութիւն է առաջ բերելու, և որ այդ կլինի

պէն պղել այն խաուլիւններից մի բանիսը, որոնց վրայ նրանք նայում էին իբրև հին ու բարի սոլորոյմների։ Մենք լսելու ենք այնպիսի պայմանաւորում, որով միրամովների չափը է պահանջվի Լուսակամ որդիների կատորում և ձիու մի ուսկը։

ԷԴԴԱՆԵՐԸ, որոնց մէջ սկանդինաւեան առասպելարանութիւնը իր վերջնական ձևին է մօտենում՝ ըստ երեւոյթին պատկանում են մարդկային զարգացման ուրի բարձր մակարդակին, քան մեր նկարագրած կրօնը. վերջին ժամանակի շատ պիտականներ հաստատել են, որ Էդդաների վրայ չի կարելի նայել իբրև հեթանոսութեան զուտ արդիւնքի, այլ որ նրանց վրայ ազդել է քրիստոնէութիւնը եւ բովանդակութեան ու եւ դպացման կողմից։ Ուրի հին՝ առանձնապէս գրված Էդդան, ինչպէս ասում են, հաւաքել կազմել է Զէմունդ Զիգֆուսսոն՝ (Sämund Sigfusson), որ իսլանդիայի քրիստոնեայ բահանաներից մէկն էր և ապրում էր XI-րդ դարի մօտերքը։ Միւս Էդդան արձակ է գրված. սա մօտաւորապէս երկու դար աւշ կազմված մի հաւաքածու է։ Առասպելներին ձև են տվել սկալդերը կամ պալատական բանաստեղծները, որոնք ծաղկել են իսլանդիայում միջին դարերի սկզբում. բայց իրանք լեգենդաները ուրի հին են։ Առաջին ժամանակները նրանց ծագման ու տարածման վերաբերմամբ ոչինչ յայտնի չէ։

Էդդաները շատ կողմից կարելի է համեմատել հնդկական բերդուածների հետ։ Ինչպէս այս վերջիններին, այնպէս և Էդդաների մէջ աստուածները կազմում են մի ընտանիք, որի անդամները հաւաքվում են մի յայտնի տեղ՝ խորհրդակցելու, միևնոյն ժամանակ իրարանցիլը աստուածուհիներ իր սեփական արկածներն ունի, իր սիրային պատմուհիւնները, իր խանդոտութիւնը, իր կատակները ու ծպտուհիւնները։ Խօսելով խիստ լեզուով՝ Էդդաների մէջ աստուածները էլ անմահ չեն համարվում. նրանք աստուածների ուրի հին տեղակին են յաջորդել, այնպէս որ իրանց մեռնելու հերթն էլ կարող է հասնել։ Նրանց Էզիր (Aesir) են անուանում, որ Աս-ի (As) յօրնակի թիւն է։ Այս բառի առուգաբանութիւնը ճիշտ յայտնի չէ. նրան համարում են սանսկրիտական Ազուրային (Asura), որ, ինչպէս ասում են, ապրողներ, շնչողներ է նշանակում։ Էդդաների մէջ Էզիրի մասին խօսում են, ինչպէս մարդկների. նրանք, ըստ աւանդութեան, եկել են Սկանդինաւիա ու յաղթել այնտեղ առաջուց բնակողներին, բանի որ ուրի վեհ աստուածների խմբին էին երկրպագում։ Այստեղ կարող է ծածկված լինել մի պատմական յիշողութիւն։ Էզիրից առաջ եկել են հսկաները և երկիրը իր բոլոր մասներով այս հսկաներից մէկի մարմնից է շինված, որոնց հետևել է աշխարհ կառավարողների մի նոր սերունդ։ Սակայն հսկաները կան դեռ ևս, և նրանց ոգին չէ փոխվել. պէտք է երկիւղ կրել, որ չլինի թէ նրանք յոյս ընկնեն՝ իրանց նախորդների իշխանութիւնը ոչնչացնելու համար։

Բայլ Իմիր (Ymir) հսկայի բաժանման առասպելից՝ կան և ուրիշ միեզերական աշխարհաճանաչական (космогонический) առասպելներ։ Նրանցից մէկը մի այսպիսի բովանդակութիւն ունի։ Աշխարհի սկզբնաւորութիւնից առաջ մի կողմից Նիմֆլհէյմ էր՝ մառախուղի ու ցրտի երկիրը, միւս կողմից՝ Մուսպել'հէյմ՝ կրակի աշխարհը. նրանց մէջտեղը դրված էր Գինունգի նեղուցը, որի հիւսիսակողմը սառած է, իսկ հարաւայինում տաք ջուր էր հոսում, և կեանքը առաջ էր գալիս այս կամ այն կերպով տաքը ցրտի հետ ընդհարվելուց։ Պատմանական շատ առասպելներ մարդու՝ փայտի երկու կտորից կազմված լինելու պիշեր—ցերեկվայ, իբրև սայլի սայլամարների կամ ձիաւորների մասին, գայլերից խուսափող արեի ու լուսնի մասին և այլն։ Ուրի բանաստեղծական է աշխարհս Ասգարդի, այսինքն՝ Էզիրի այգու, Միդգարդի՝ մարդու (ներբլին) աշխարհի և Ութհարդի՝ արտաբին աշխարհի բաժանելը։

Առաջինում գտնվում է Օդինի գահը՝ Հլիդսկյալֆ (Hlidskjalf). նստած նրա վրայ՝ նա տեսնում ու իմանում է ամէն բան, ինչ որ պատահում է անծայր աշխարհի որևէ մասում (այս դէպքում արդեօք դա արևը չէ)։ Երրորդ գաւառը սովորաբար Յօտունհէյմ է կոչվում, այսինքն՝ հսկաների բնակարան. սա աշխարհի վերջին մասում գտնված մի սառցային գաւառ է՝ բնակիչներով լի։ Աստուածների բնակարանից մի կամուրջ կայ գցված դէպի մարդերի բնակարանը. դրան Բիֆրէստ (Bifröst) են անուանում, և դա ուրիշ բան չէ, բայց եթէ՝ ծիածանը։

Աստուածները իրանց ժողովները գանազան տեղեր են ունեցել. բայց նրանց գլխաւոր ժողովատեղը, տեսնելով սովորելիքամբ, գտնվում էր մի մեծ ծառի, այն է՝ Յգդրասիլ տակ։ Իգդրասիլը աստուածներին ամենից մի ծառ է. սա համաշխարհային ծառ է. սրա ճիւղերը մինչ անգամ երկնքի վրայ են տարածվում*)։ Նրա տակը գտնվում է Միմիր աղբիւրը՝ իմաստութեան բանալին, որից ամէն օր ջուր է խըմում Օդին։ Մօտակայքում գտնվում է նօրների, այսինքն՝ կախարդ բոյրերի բնակարանը (սրանք մինչև յն բաներն են, ինչոր հռոմէական պարկայրը), որոնք սահմանում են օրէնքները, պաշտպանում են նրանց և որոշում են իւրաքանչիւր մարդու կեանքի տեսութիւնը։ Նրանց անուններն են՝ Ուրդ-անցեայ, Վէրդանդի-ներկայ և Սկոլդ-ապագայ։ Ամէն օր այդ բոյրերը աղբիւրաջրով ջրում էին հացենին՝ նրա տերևները թարմ պահելու համար, և օգնում են նրան կուտելու իր բազմաթիւ թշնամիների դէմ, որովհետև մեծ օձը չարասնակ կրծծատում է նրա արմատը, որի ժամանակ ծառին ուրիշ վ-

*) Մեզնում էլ էր մտած «որբանուկը ծառիչի կուլոը», ինչպես Արմաւրի սօսիներն էին և բարդին, դրում է Ս. Զահուկեանն («Ամառնային նամակներում»)— «ես դարդի ծառ մի աւելի պատուէր քան կաղամախին և գոյլս ի ծառաց . . . Քանի այդ ծառը՝ որ բարդի անուանի, ի կառապաշտութեան ժամանակն ի պաշտօն առեալ էր . . . յորս և դէք մտանէին և ի մարդկանէ երկրպագութիւն ընդունէին (ներբէս ընորհալի)։

Հ. Ֆ.

տանիներ էլ են ոտնատում։ Իգդրասիլի այս առասպելը, որ ծառերի կուլտի տեսութեան ապօրինակ (մարդուն տատուածների չարքը գտնելը) է ներկայացնում՝ շատ մեծ նշանակութիւն ունի։

ԷԴԴԱՆԵՐԻ ԸՍՏՈՒԱԾՆԵՐԸ։ Այժմ պէտք է խօսենք այս կրօնի աստուածների մասին։ Օդին Էդդաների մէջ իրրև աշխարհի տեսիչ-ը հանդիսանում, այնպէս, ինչպէս նա աշխարհը կայ այժմ։ Նա գահավէժ արեց աստուածների հին տեսիչը և գարձաւ մի նոր ու զօրեղ սերնդի պլուս, որ այժմ կառավարում է նրանց փոխարէն*) Հին գիտնականները Օդինին պատկերացնում էին իրրև մի զօրավար, որ նախնական ժամանակներում Ասիայից Նօրվեգիա գիմով գաղթի առաջնորդն է եղած։ Նա գրչութեան արուեստի հնարողն է ու բանաստեղծութեան հիմնողը. սա նրան, տես թէ, չինում է մի կուլտուրական հերոս, այսինքն՝ առաջադէմ հայեացքների տէր մի մարդ, որ իր ժողովրդին բարեբարած լինելու համար՝ կռիւ է մղում բարձրացնել էր հերոսութեան, իսկ յետոյ՝ աստուածութեան։ Սակայն Օդինի կամ Վօդանի կուլտը այն հնագոյն երևոյթներից մէկն է, որոնք յայտնի են մեզ կերպարանի վերաբերմամբ։ Նա ամենից առաջ հարուստների դասակարգի աստուածն էր։ Նրա սկզբնական բնոյթը՝ փոխարէն աստուծու բնոյթն էր։ Պատճառ է արդեօք նրա անունը գերմանական Yûthen—չաուշիզ (շօպ. Wud), կամ վէդական Yata—փոխարէն աստուծու անուան հետ, թէ ոչ՝ յամենայն դէպս նա ամենից առաջ մի կատաղի էակ է։ Նրա հին առասպելը հիմա էլ պիտի թէ վերացած լինի. պիւպագին դեռ հիմա էլ է լսում, թէ ինչպէս նա պիչիով տարվում է անտառներով։ «Դա Վօդանի վայրի որսորդութիւնն է» ասում է նա. աստուած գալիս է եկել իր շրխմբով, և վայ նրան,

*) Կարելի է «Հերոսներն ու հերոսականը պատմութեան մէջ» գրքում պատկերացնում է այս և հանրագէտ հին-սկանդինաւեան առասպելաբանութեան հոգևոր ապրելութիւնը։

ում կհանդիպի նա ճանապարհին։ Չին վերմանացիները նրան մի այնպիսի էակ էին համարում, որ կատարում է մարդերի ցանկալիությունները, և հատանարար նրա բնաւորութեան այս կողմը նրան նոյնացրել է Մերկուրիի հետ։ Էդդաներում նա պատերազմ հոխանաւորող է հանդիսանում, ինչպէս և ապրում է պատերազմիկ ժողովրդի գլխաւոր առաւելութեանը։ Նա սարքում է պատերազմներ և տալիս է յաղթութիւն. նա իր երկնային վիճակութեան մէջ ընդունում է այն հերոսներին, որոնք ընկնում են պատերազմում. նրանք բնակում են նրա հետ Վալհալլում կամ Վալհէլլում (Valhöll), մի ընտրական ապարանքում։ Օդինն ընտրում է նրանց, ովքեր ընկնում են այնտեղ. այս բանում նրան օգնում են Վալկիրները կամ ընտրող կոյսերը։ Վալհալլի կեանքը չարունակ պատերազմներն են, վէրքերն էլ խնոյնեւին անցնում են, և այն խլեցջոյքներն են, որտեղ խորթիները չարունակ վերանորոգվում են։ Միւս մեծ առաւելների պէս՝ Օդինն իր վրայ վայրենութեան հետքեր է կրում, ասես թէ, մի ժամանակ վայրենիների մէջ է եղել ապրելիս։ Նպատակին հասնելու համար նա կարող է արձել կամ ուրիշ կենդանու փոխարկվել և երբեմն խայտառակ գործերի մէջ է խառնվում։ Բայց նա ձգտում է կատարելագործվել, ուստի և էդդաները նրան (պատկերացնում) են ամենալաւ կերպով։ Ընտեղ նա կոչվում է հանուր հայր, աշխարհակալ, որ մարդու տալիս է անմահ հոգի. նրանք ասում են որ Օդինն ուտելու կարիք չունի և չէ մասնակցում հսկաների խնջոյքներին։ Բոլոր արդարները լինելու են նրա հետ Վինոյլֆում (նոյնն է, ինչ որ Վալհալլը). Նրա չարերը գնալու են գժոխքը՝ Հէլլայի, այսինքն՝ առարկրկեայ աշխարհի առաւելագործութիւնը։

ՏՕՐ կամ Թօնար, այսինքն՝ Որոտը համարվում էր առաւելագործների ամենահզօրը. ինչպէս տեսանք, նրան Լուսնլմապի հետ են նոյնացնում, սակայն նա աւելի կոպիտ ու սկզբնական առաւելագործութիւն է։ Տօր մեն է պատկանում երեք՝ հրաշալի յատկութիւններ ունեցող բան։ Նրանցից առաջինը մուրճն է՝ Միէլլնիր (Mjölnir), որին, երբ Տօր գցում է այն, չեն կարող դիմադրել լեռների ու առնամանիքների հսկաները. երկրորդը ուժի գօտին է, որ երբ Տօր կապում է՝ կրկնակի ուժ ու զօրութիւն է տալիս նրան. և երրորդը երկու պրահատուր բազպանների են, որոնցով նա բռնում է իր վիրաը (кольчуга)։ Զատ բաներ են պատմում նրա բաջութեան, հսկաների հետ ունեցած ընդհարումների մասին, որոնք իրանց խորամանկութեամբ շատ դիւթացուցիչներ են պատճառում, և այն բանի մասին, թէ ինչպէս նա բռնել էր Միդհարդ օձը, որ ծովի յատակում շրջապատած ունի աշխարհը։ Էնիելով փոքրորկի առաւելած՝ Տօր կապված է երկրագործութեան հետ, և սա տալիս է նրան աւելի դրական բնաւորութիւն. նա խառն է նաև ամուսնական կապեր հաստատելու գործում, և մուրճը իրրև սիմբոլ գործ է ածվում խայտպահան հարսանիքներում։ Տօր Օդինի միւս որդիների հարազատ եղբայրը չէ։ Նրա մայրը Ֆիէրգին էր (Fiörgyn), այսինքն՝ երկիրը. Օդինի ու Տօրի կուռքերը, որոնք ծագմամբ տարբեր են, ըստ երևոյթին հնուց միացած են եղել միմեանց հետ։

ՏԻՐ առաւելը Օդինի որդին է, ծնված մի հսկայ կնոջից. հանդէս է գալիս էդդաներում իրրև համանիշ դերմանական Տիվին (Tiw) կամ Յիուին (Ziu), որ առաւելաբանօրէն համապատասխան է Զևսին կամ Լուսնլմապին, սակայն որին հռոմայեցիք նոյնացրել են Մարսի հետ։ Չին ժամանակները, երբ նա աստերի մեծ առաւելածն էր, նրա կուլտը շատ էր տարածված Եւրոպայի զանազան մասներում։ Իսկ էդդաներում Տիր հանդէս է գալիս իրրև մի ժպտուն դէմք և բիչ է պատահում որ մի պալի մասնակցութիւն ունենայ լէգենդում*)։ Ուրիշ երկու առաւելածութիւն՝ Լոկի ու Բայլդուր,

*) Հայերս էլ ենք ունեցել «Տիր» անունով մի առաւելած։ «Ոսկեդրում է Դ.Գ.-էր Երամապի դպիրը. առանցութիւնը անուանում է նորան նաև դպիր պիտութեան

սրա հակառակ, չատ պայծառ են նկարված։ *Հոկին* կրակի աստվածանական աստուածը, մի կողմից Օդինի եղբայրն է, մյուս կողմից՝ նրա որդին, ծնված հսկայ կնոջից։ Նրա բնավորությունը երերուն է. երբեմն նա աստուածների վերաբերմամբ հղբայրաբար է վարվում, նրանց օգնում է խելացի խորհուրդներով՝ դուրս պրծնելու դժուարացնող հանդամանքներից, երբեմն էլ զուարճալիություններ է պատճառում նրանց. սակայն Հոկի մեծ մասամբ խորամանկությեան ու չարությեան մարմնացումն է. նա պահավիժվելու ճանապարհի վրայ է կանգնած. նա հակված է մի անպատճառ չար էակ դառնալու, անդիմաբար հակառակ գնալով միւս աստուածների ցանկություններին և աշխատելով վտանգի ենթարկել նրանց, այնպէս որ նրանք ստիպված են վերջնդել նրան երկնքից։ Ըստ ամենայնի նա մի իր տեսակի Լյուցիֆէր կամ սատանայ է, և նրա վախճանական վիճակը, ինչպէս և բրիստոնէական սատանայինը՝ է բնեռված մնալ մինչև աշխարհի վերջը։ *Բայդուր*՝ Օդինի ու Ֆրիդդայի որդին, աստուածներից ամենալաւն ու ամենամաքուրն է։ Ըստ ամենայնի պէս՝ նա կապ ունի լոյսի հետ, և ոչ մի կերպով չի կարող ապականվել. նա նոյնպէս կապ ունի արդարամիտ լինելու և այնպիսի վճիռներ կայացնելու հետ, որոնք չեն կարող փոփոխվել։ *Հէյմդալ* էլ (Heimdall) մի յատուկ ու բարի աստուածություն է. նա էզիրի պահապանն է ու կանգնած է Բիֆրէստ կամրջի մօտ։ Պատմում են որ նա ծովից էլ բիչ է բնում, պիտի լինի թէ

քրմաց, ուսումն ճարտարութեանց, երաժշտոյց և երաժշտան։ Սրանից երևում է որ Տիրն էր աստուածների և քրմերի մէջ միջնորդ և հրէշտակ. նա էր յայտնում երազների գաղտնիքը, նա էր ուսուցանում գիտութիւնները և նա էր աստուածութիւնների համար գրագրութիւն անողը։ Այս յատկութիւններից մէկը մինչև հիմա մի խորհրդաւոր կերպով մնացել է մեր պատանների բառանում, երբ ասում են. «գրողը քեզ տանի», որ նշանակում է. նամանաւանդ մնացել է երազ մեկնելու կախարդութիւնը, եղունգին նայելով գուշակութիւն անելը և այլն, որ նոյնպէս հին հեթանոսութեան հետքերն են։ Տիր տաճար պաշտամունքի տեղն էր երևանում և Ըրաուշտոի մէջ տեղը երազային աստուած տուած է, իսկ նրա պատկերը կոչում էր Տրիգվիք»։

Հ. Թ.

ցերեկ նա տեսնում է հազարաւոր մղոն հեռաւորութիւնից և լսում է ինչպէս խոտն աճում է գետնին և բուրդը՝ ոչխարի մէջքին։ *Բրագի* բանաստեղծութեան ու ճարտարախօսութեան աստուածը՝ սկալդերից ամենաբան է։

Աստուածուհիների միջև առաջին տեղը կանգնած է Ֆրիգգա՝ Օդինի կինը, խորհրդաւոր գիտելիքներով օժտված գառատիղ մայրը, որի հետ մինչ անգամ աստուածները են խորհրդակցում, և որի անունով երդվում են մարդիկ. նա խառն է նեռ ամաւնական գործի մէջ, և անզաւակներին նրան են գիմում։ Աստղաբաշխորէն նրան հազիւ թէ կարելի լինի զանազանել Օդուրի կին Ֆրէյից, որ սակայն թեթև բարքի տէր է և ունի սիրոյ աստուածուհի է հանգիսանում։ Էդդաներում աստուածուհիները ունի աժգոյն դէմքեր են, քան աստուածները. կան էլի ուրիշ աստուածուհիներ, որոնց թիւը փորձում էին աստերկու դուրս բերել՝ աստերկու պլիատար աստուածների թուով, բայց անուններըը կազմված են այնպիսի յատկութիւններից, որոնց նկատմամբ այդ աստուածուհիները անձնաւորացումն են հանգիսանում, և չատ քիչ են իրական։

ԲԵՅԼԴՈՒՐԻ ՄԱՀՎԱՆ պատմութիւնը, որի պատճառը Լոկու չար ոգին էր, որ գիտմամբ հակառակ էր գնում աստուածային ամրոյզ բնաւորութեան՝ երբի մի ողբերգական նոտի ձայն է հնչում էդդաների աստուածային ողջ բնաւորի մէջ։ Իրանք աստուածները առնչվում են ու չեն կարողանում յետ կացնել, կասեցնել իրանց գլխին եկող թշուառութիւնը։ Նրանք հանուր ուժերով աշխատում են դուրս հանել Բայդուրին անկարամիտից (աստերկրեայ աշխարհից), սակայն անարդիւնութեան են հանդիպում նոյն իսկ այն չար ուժի չնարհիւ, որ ատրել էր նրան։ Բայդուրի մահուից ասուածները գլուխ են որ գտարարում է իրանց վարչութիւնը, նրա հետ էլ ոչնչանում է իրանց կառավարած աշխարհը, որ անխզելի կերպով կապված էր իրանց հետ։ Աստուածները ջլե-

ջվում են աշխարհի աւերակներում. և չատ տեղն է, որովհետև նրանց մեղքն անպակաս է նրանց պլխից ու իրանց տան ու տեղից, և իրանք էլ երկար չեն կարող տևել։ Վերջ է հասնում աստուածների աղջամուղջը՝ Ռագնարեօքը (Ragnarök). աշխարհը վառվում է մի սոսկալի հրդեհից, և իմպէտ կան երանութեան ու խշտաւութեան օթևանները, որտեղ մի քանի աստուած դեռ ևս ապրում են՝ սակայն աշխարհս, իբրև մի ամբողջութիւն, բոլորովին փոխվում է, և աստուածների աւելի մեղմաբարոյ սերունդին է մնում կառավարել մի աւելի կատարեալ աշխարհ։

Եթէ բանից այն լինէր դուրս գալիս, որ այս առասպելաբանութիւնը սկանդինաւեան ծագում ունի, ապա դա այն կապայուդէր, որ սեռօնական կրօնը ընդունակ է բարձր զարգացման, և մի Շահապրդիր լոյս կսփռէր նրա նախնեաց պատմութեան վրայ։ Այսպէս, դիտնականների կարծիքով, մենք տեսնում ենք, ինչպէս սեռօնական կրօնը բարձրանում միաստուածութեան է հասնում։ Օդին, իր միւս անուններից զատ՝ կրում է և հանուր հօր անունը. նա բարձրը է կանգնած միւս աստուածներից, հասած լինելով ծայրագոյնութեան աստիճանին, որ կսպասէր նրան, եթէ մի այգպիսի պրօցէս ներկի լինէր. հակառակ դէպքում սա նրան հնարաւորութիւն կտայ մի փոքր առաջ գնալու, մօտենալու մարդու պատուածութեանը և մի անբաժան յարգանք առաջելու դէպի ինքը։ Այսպէս էլ մենք հանդիպում ենք մի կրօնի, որ սկզբում եղել է իբրև մի կապտ հատորպակցութիւն վայրենի մարդերի ու վայրենի աստուածների միջև, իսկ յետոյ ընդունել է իր մէջ մի պալաթեական տարր։ Ինչպէս յայտնի կրօնական սկզբունքը տեսնում էին դեղեցկութեան, իսկ հոմայեցիք չահեկանութեան մէջ՝ այնպէս էլ դերմանացիք այն տեսնում էին չարչարանքի մէջ։ Նրանք հասան չարչարվող աստուածութեան պատկերացման. յանձին Բայլդուրի աստուած մեռնում է իբրև չարութեան զոհ, և ոչ երկինքը

վշտանում է նրա անկման պատճառով։ Այսպիսով չարչարանքն ու ու զոհը սրբագործվում են մարդու համար աստուածների պատմութեամբ, և նրա՝ աստուածների հետ ունեցած յարաբերութիւնները տանում են նրան դէպի այն բարձունքները ու խորքերը, որոնք մինչև այն ժամանակ անծանօթ էին։

Սակայն այժմ մի տեսողում է հաստատվում, որ սեռօնական կրօնի այս բնաստիճանը առնված է բրխտոնէութիւնից, որ այն ժամանակ լուրջ կերպով սպառնում էր հին կրօնի գոյութեանը, և որ հիւսիսային աստուածների մէջ նկատվող այս տրտմութեան զգացումը առաջ է գալիս այն սպառնալիքից, թէ մօտեցող նոր կրօնը ջնջելու է հինը։ Նրանք զգում են, որ կորչելու են իրանց դերերը. նրանք այլևս աստուած չպէտք է լինեն—հարկաւորվում է պիջող լինել համաշխարհային կարգուկանոնին, որ հիմնված է իրանց սեփական օրէնքից մի աւելի զօրեղ օրէնքի վրայ, որ (այսինքն իրանց սեփական օրէնքը) գոյութիւն է տվել իրանց և այժմ պատրաստվում է վերացնելու նրանց։ Աստուածների հին աշխարհը պարզապէս մանում են բրխտոնէական խէմաներ, այն է՝ մեղքի, զոհի, վերջին դատաստանի, մեռնող բարի աստուածութեան և շատ ոգու հատկացողութիւնը, այն ոգու, որ իջնելով մի որոշ ժամանակի՝ կաշկանդվում է ու պէտք է սպասի իր ճակատագրին։ Այն հանգամանքը, որ իրանք աստուածները են խոստովանում իրանց յանցանքները՝ ցոյց է տալիս որ նրանք զրկվում են իրանց իշխանութիւնից և խոստովանում են որ իրանց յաջորդները իրանցից յաւն են լինելու։

ԺԱ. ԳԼՈՒԽ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Եւրոպայի պատմությունը սկսվում է Յունաստանում։ Այնտեղ եւրոպական արյականները առաջին անգամը շփվեցին արեւելեան արուեստի ու արեւելեան բազաքակրթութեան հետ և զարկ առացան դէպի մի նոր գործունէութիւն. այն կենդանութիւնը, որ առաջ էր եկել Յունաստանում, ցոլացաւ Իտալիայի վրայ և այսպիսով անցաւ ամբողջ Եւրոպային։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՈՒ ԵՐԿԻՐԸ։ Ուզպակի վկայութիւններ չկան այն բանի մասին, թէ յոյները ուրիշ տեղից են եկել իրանց երկիրը. այժմ մի կողմն է գրված յոյն-իտալական շրջանի տեսութիւնը, որ Յունաստանի ու Իտալիայի ազատագայ բնակիչները բնակելիս են եղել իրը թէ մէր-որ այս երկու երկրներից դէպի հիւսիս և միասին են ընթացել բազաքակրթութեան ճանապարհը։ Կան սակայն լուրջ ցուցումներ այն բանի մասին, թէ յոյները ապրել են իրանց երկրում հիւսիսից հարաւ։ Թէ նրանց գալուց առաջ ինչ ժողովուրդ էր բնակում այնտեղ—անկարելի է ասել. պելասգներն ու լելեգները, որոնց իրանք յոյները էին իրանց նախորդներ համարում՝ բացի այդ հաւատալիքից, իրանցից յետոյ ուրիշ ոչ մի հետք չեն թողել։ Երբ մենք առաջին անգամը ծանօթանում ենք այս երկրին պատմութեան լոյց արշալոյսով. այն ժամանակ այնտեղ բնակած ենք տեսնում մի ժողովուրդ, որի անունը կրում է այդ երկիրը, միայն հիւսիսում արիականների հետ շփվելով, իսկ արեւմուտքում իլլիրիացիների, որոնք նոյնպէս արիական ցեղին են պատկանում։ Թէպէտ յոյները բնակում են Էգէյեան ծովի երկու ափում, որ տեսնում ժամանակներից ըստ երեւոյթին, ասիի միացնում էր նրանց, քան բաժանում, սակայն նրանց ծանրութեան կէտը Էլլադայի մայր ցամաքն էր, հաշվելով նրանում և Պելոպոնէսը։ Ժողովրդի այս երկրում վերջնական հաստատվելուց առաջ այստեղ տեղի ունեցան շատ պատերազմներ. այս պատերազմներից մէր բանների մասամբ են յայտնի պատմութիւնից։ Երբ ժողովուրդը արդէն բոլոր յայտնի տեղերում, այն ժամանակ երկրի բնոյթը դարձել ազդեցութիւն արեց ժողովրդական հիմնարկութիւնների կազմելու և դանազան համայնքների փոխադարձ յարաբերութիւնների վրայ։ Այն բազմամարդ ցեղերը, որոնք եկել են Յունաստանի նեղ հովիտներն ու մեկուսացած ափերը՝ անտառապատ կերպով արտուեցին փոքրիկ մասների, որոնցից իւրաքանչիւրը, թէպէտ կորցած չլինելով իր պրացիների հարաբերութիւնից՝ կարող էր զարգանալ ինքնուրոյն կերպով։ Ուզեորները այս երկիրը աշխարհիս ամենաբերրի երկիրն են համարում։ Արիականների այն ճիւղը, որ բնակութիւն է հաստատել այդ տեղ՝ գոյն է բերել է իր հետ մի աղքատիկ լսատացուածք, սակայն դրա հետ միասին բերել է մեծ-մեծ ընդունակութիւններ։ Յոյները զարմանալի տալանդ ունէին իրացնելու այն, ինչ որ տեսնում էին ուրիշների մէջ, և ձեռք բերածը ուրիշներից աւելի լաւ շինելու, այնպէս որ այն գաղափարը նում էր իրանց սեփական սեփականը։ Նրանք մի բնաւորութիւն ունէին հակամիտութիւն ունէին դէպի այն, ինչ որ խելացի է։ Որ նրանցում խորն էր արմատացած ամէն ներդաշնակ ու գեղեցիկ բանի հակամիտութիւնը՝ այդ արդէն ապացուցվում է նրանց առաջին դիցարուեստական վաստակով, նրանց լեզուով։ Հնագոյն ժամանակներում յոյն լեզուի մի քանի գաւառաբարբառները կային. նրանցից ամենագլխաւորներն էին՝ կոպիտ դօրիականը, որ գործ էր ածվում Թեսալիոդում ու գաղութներում, և կակուղ յոնիականը, որի ճիւղը դասական լեզուն է

հանդիսանում։ Բայց բոլոր դաւառաբարբառներ գոր ած ազգ յոյները կարողանում էին հասկանալ միմեանց, և բարբառս էին համարում նրանց, ովքեր բնակում էին նրանց երկրից դուրս և խօսում ուրիշ լեզուներով։ Այսպիսով էին սկզբից այս ժողովուրդը խիստ բաժան-բաժան էր եղած, սակայն միևնոյն ժամանակ, և ամուր կապերով կապված։

ՀՆԱԳՈՅՆ ԿՐՕՆԸ։ ԿԵՆՔԻ ՈՐՈՉ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ԸՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ Կրօնը որ յոյները իրանց հետ բերել էին իրանց երկիրը, անշուշտ, էր այն կրօնը, որի մասին մենք խօսել ենք մեր երկի այն պլխում, որ խօսում է արիականների մասին։ Արիական կրօնի բոլոր սկզբնական տարրերը հանդիպում են Յունաստանում. բնականական բազմաթիւ մանր կուլտերի միացումը՝ աստուածութիւններից բաղձ կանգնած մեծ աստուածութեանը տալիք երկրպագութեամբ, երբ մի քանի մեծ աստուած շրջապատված են բազմաթիւ ոգիներով, որոնցից ամենք նոյնպէս զարգանում, աստուած են դառնում. շատ բնական լեռ կենդանի ու լեռ մեռած առարկաների մէջ ոգիների ներկայութեան խոստովանութիւնը,—այս բոլորը մենք գտնում ենք հին Յունաստանում։ Բոլոր ժողովուրդը հաւատում է Զևսին, նա ամենքի համար երկնքի պետն է, որ ուղարկում է մայր-հողը բարեբեր անձրևը, ծայրագոյն կառավարիչն է թէ երկրում ու թէ երկնքում, ինչպէս մարդկութի, այնպէս էլ աստուածների հայրն է։ Սա յունական կրօնի մէջ առաջին միաւորիչ (գոկիչ) տարրն է։ Սակայն ամէն պիտ, ամէն բարբար ունի իր սեփական կուլտը, որ ուրիշ տեղեր չկայ։ Այս կուլտը երբեմն ուղղված է Զևսին, որով վերջինը առանում է տեղական մականուն, մարդերի ամէն շրջան ունի իր առանձին Զևսը որ նրանց համար հովանաւորող ու կառավարիչ է. այսպիսով Զևս ունենում է շատ կերպարանք ու անուն։ Իւրաքանչիւր համայնքում կայ նման օջախի (Հէստիա) աստուածուհու կուլտը. ամէն ընտանիք ունի իր սեփական Հէստիան և հետևում է այն կուլտին, որ արիական ուրիշ ժողովուրդների մէջ միացած է մեռած նախնիների յիշատակութեան հետ։ Բայց ընտանիքն ու բարբարոսները նման երկրպագութեան ուրիշ առարկաներ։ Բացի Զևսից կան և ուրիշ երկնքի հետ կապ ունեցող աստուածներ, այսպէս օրինակ. Ապոլլոն ու Հէրակլէս։ Կան աստուածներ, որոնք կապված են ժողովրդի ամէն մի բոլորի հետ։ Ընտանեկան աստուածութեան է, Աստղիկ՝ բնութեան աստուածուհին է, Աստղիկ՝ բնութեան ու այգիների անպտղութեան կեանքի, այլ և սիրոյ աստուածուհին։ Ծովերի աստուած Պոսիդոն դամարում էլ էր պաշտվում, իսկ սկզբում, կարծեմ, ձիերի ու եզների աստուածն է եղել. Հեփեստոս դարբինների աստուածն էր. Երևս՝ պատերազմի աստուածը։ Այս աստուածութիւնները, նայելով իրանց ծագմանը, կոչվում են գործառնական (функциональный) աստուածներ, այսինքն՝ այնպիսի աստուածներ, որոնք վարում են այն պաշտօնը, որի հետ իրանք կապված են, որի իդէալական կամ սրբազան մասն են, և առանց որի նրանք գոյութիւն չունեն։

Յունաստանի աստուածները, իրաւ, սկիզբն էին առնում բնութեան վրայ ունեցած այն հայեացքից,—բնութեան, որ ամէն մասամբ չնչաւորված էր,—որ յոյները ունէին թէ առաջին ժամանակ հնդիկների ու թէ հանրապէս նախնական արիականների միւս ճիւղերի և թէ հանրապէս նախնական մարդկութեան վրայ։ Լատիների պէս՝ յոյները սկզբում տեսնում էին դերի վրայ։ Լատինների պէս՝ յոյները սկզբում տեսնում էին դերի վրայ։ Լատինների պէս՝ յոյները սկզբում տեսնում էին դերի վրայ։ խորհուրդը, տեսնում էին ոգին կեանքի բոլոր կողմերում. ամէն ազգիւր ունէր իր յատկութիւնը, ամէն անուանապաշտ՝ իր անուանային յատկութիւնը. և յոյները զգում էին որ, երբ գարունը գալիս էր իր ծաղիկներով, աստուածները նոր կեանք էին առնում։ Նրանց սեփական զարգացումներից իւրաքանչիւրը նոյնպէս ունէր անհամեմատ ոգին։ Անուանների աբ

ՅՈՒՆԱՑ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ։ Սակայն այսպիսի էակները պաշտելով աստուած լինելու չափ չեն հասունացել. և յոյները, մեր՝ նրանց հետ ծանօթանալուց շատ առաջ, արել են մի այնպիսի բայլ, որ գժուար թէ երբ և է արած լինեն հռոմայեցիք, այն է՝ անցել են ազգ դէպի աստուածութիւնը, առարկայի կամ գործողութեան մէջ ծածկված անորոշ ու աներեւոյթ գօրութիւնից դէպի մարդկային յատկութիւններ ու զգացումներ ունեցող մի ազատ էակ, որ կարող է հոգեաւորվել համարները և օգնել նրան բոլոր գործերում։ Բոլոր ազինները չեն բարձրանում, աստուած դառնում. հանդամանքներից է կախված, թէ նրանցից ոմն է ընտրվելու այսպիսի բարձր աստիճանի համար. բայց երբ արդէն ընտրութիւնը կայացած է, արագ են բարձրանում։ Ո՛րքան աստուածները զարգանում անձնաւորութիւն էին դառնում և մի որոշ բնոյթ ձեռք բերում, այնքան նրանց նոր փունկցիաներ էին տալիս, թէպէտ շէր մոռացվում ի՛նչ փունկցիան, որից նրանք առաջին անգամ առաջ էին եկել. և որքան մեծանում էր աստուածութեան ուժն ու դէպի նրան տածած յարգանքը՝ այնքան նրա կուլտը նոր-նոր տեղեր էր փոխադրվում, որտեղ նրան տալիս էին նոր անուններ ու վերագրում նոր յատկութիւններ։ Տեղական աստուածութիւնը մի յայտնի հետաւորութիւնից կարող էր նոյնանալ մեծ աստծու հետ։ Հզօր համայնքի աստուածութիւնը՝ Ըմբինա կարող էր բնդունելութիւն գտնել ամէն տեղ, ուր տարածվում էր այս համայնքի տիրապետութիւնը. այսպէս առաջ էին գալիս նոր աստուածներ, իսկ հները ձեռք էին բերում տեղական բնոյթ։ Երբ ժողովրդի սոփորոյմների մէջ մի փոփոխութիւն էր տեղի ունենում, նրան յարակից էր լինում նրա աստուածների բնոյթին համապատասխան փոփոխութիւնը։ Երբ երևան է գալիս երկրագործութիւնը, այն ժամանակ աստուածները պէտք է ուշադրութեան առնեն այդ բանը. հովտական աստուածները դառնում են երկրագործական աստուած, և մինչ անգամ որսորդուհի Անահիտ դառնում է բերրութեան հովանաւորող*)։ Երբ ծովագնացութիւնը սկիզբ է նշանակութիւն ստանում, աստուածների մի յայտնի խմբի, Պօսիդօնի գլխաւորութեամբ ծովային աստուածութիւն են դառնում։

ՔՈՐԵՐԸ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ, ԾՈՒԵՐԸ։ Յունաստանում աստուածների կուլտը շատով բռնեց մարդկային ամէն բնոյթից զուրկ առարկաների կուլտի տեղ։ Ուղիղ է, այսպիսի կուլտերի հետքերը աստուածների մէջ, սակայն այս կուլտերը ազդեցութիւն չունէին այդ կրօնի զարգացման վրայ. նրանք իսկ իրանց պատմութիւնն են պատմում մոռացված անցեալի մասին։ Հին Յունաստանում պաշտում էին քարերը։ Հոմերոսի կրօմլէխների**) ու զօմբինների***) մասին, որոնք հանդիպում են Յունաստանում, ինչպէս և Ասիայի ու Եւրոպայի բոլոր մասերում, և որոնց նշանակութիւնը շատ քիչ է պարզված՝ մինչ անգամ քարերը երբեմն ժամանակ պահվում էին զանազան տեղերում իբրև սըր-

*) Հայոց աստուածների հոր, արի եւ իմաստուն աստուածապետի մեծութիւնը—գրում է Կ. Կ.—երևում է նորա ծննդնեղից. և ամենից պանծալի ու փառաւոր ծննդնդն էր Աւանիս սիկլնը . . . Ընահիտ . . . նշանակում է սքեթ, սինուրաս, Արամազդի գուտարն էր և ճանաչուած էր իբրև ամայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, որով կեաց և գկենդանութիւն էքէ երկիս հայոց, որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ . . . Հայոց սէրը դէպի Անահիտ դիցուհին արտայայտված է և՛ նորա պաշտամունքի մէջ. նախ՝ որ թագաւորները Անահիտից էին խնդրում խնամակալութիւն իրանց երկրի վրայ. և երկրոդ որ մի քանի նշանաւոր տեղեր դանվում էին նորա մեհեաններըն . . .

**) Գրօմլէխը հին կէլտական յուշարձանների մի առանձին տեսակն է, որոնք հանդիպում էին հիւսիս-արևմտեան Եւրոպայում, գլխաւորապէս Բրիտանիայում ու Գալլիայում։ Գրօմլէխը սովորաբար շինված է կոշտ, անտաշ ու երկայնկէկ քարերից, որոնք կազմում են մէկ կամ մի քանի համա կենտրոն շրջաններ՝ սրբավայի շուրջը, որի մէջտեղը երբեմն տեղաւորված է լինում մի հէնց այդպիսի բայց՝ մի քիչ խոշոր սիւն։

***) Գօլօմիս ականաւոր հնդիպարանի անունով, որ ամենից առաջ է յայտնի արել այդ քարի յատկութիւններըն։ Դա մի ապիատակ, թիթեղագան հանք է, որ գտնվում է ամէն տեղ. մանաւանդ Ալպեան լեռներում երբեմն, շերտ-շերտ, երբեմն մեծ զանգուածներով և քան այժմեայ տոպրագէտների՝ կրի ու մագնէսիայի կբկնակ բնութեան է։

Հ. Թ.

բազան առարկաներ և անտարակույս սկզբում պաշտվում էին։ Հերմէս աստուածը ամէն ժամանակներում պատկերացվում էր ուղիղ կանգնեցրած քարի կամարային ձևով, որի վրայ երեսում էին մարդկային դէմք և մարդկային ուրիշ մասեր։ Մինչ անգամ ասելի ուշ՝ Յունաստանում մի քանի տեղ հանդէս էին գրվում քարի կամարաձևեր կամ հոդակոշտեր—դրանք էին Ենահատի ու Փրիապոնի (Ափրոդիտէի) հնագոյն պատկերները, որոնք պաշտվում էին այդ տեսակում։ Թէպէտ աստուածուհու հոյակապ անդրիները բռնել էին նախկին պատկերների տեսքը, սակայն սկզբնական պատկերը համարվում էր դեռևս մի առանձին իրան միայն յատուկ արդիւնքն ունեցող։ Մենք նոյնպէս նկատում ենք որ Յունաստանի աստուածները մի կապ ունեն կենդանիների հետ։ Զևս Կրետէյում հանդիսանում է իբրև եզ. նա ունի և ուրիշ դիմափոխումներ։ Պան հանդիսանում է այծի պատկերով. Անահիտ մի քանի դէպքերում ներկայացնում է իբրև մատակ արջ, միւսներում՝ իբրև երինկ։ Ակրոպօլիսի Ամֆինան օձ է. Ապօլլօն երբեմն մուկ է համարվում։ Աստուածները կենդանիների հետ այսպէս նոյնացնելու հետ միասին մենք կարող ենք յիշել այն կենդանիները, որոնք ծառայում են իբրև աստուածների խորհրդանշան (эмблема) և որոնց հետ միացած՝ պատկերացվում են աստուածները։ Ընծիւղ Զևսի խորհրդանշանն է, բուն՝ Ամֆինայի, սիրամարգը՝ Հերայի, ագռաւին՝ Փրիապոնի։ Այս միաւորումը մեզ ակամայ ստիպում է մտածել եգիպտական պատմների սրբազան կենդանիների մասին, միևնոյն ժամանակ հարց է ծագում՝ կարող են արդեօք նմանօրինակ կենդանիները Յունաստանում սկզբնական տոտէմիսմի նշան համարվել։

Վերջին ժամանակ շատ էր գրվում Յունաստանում ընդունված ծառերի կուլտի մասին։ Կաղնին Զևսի սրբազան ծառն էր. երևի կարծում էին թէ նա կաղնու մէջ է բնակում. Դոդոնում նա գուշակում էր ազազան կաղնու ոստերի ձրնդունայով ու ճայթունով։ Ամֆինա ունէր ձիթենի, Ապօլլօն՝ ար-

մաւենի, նոյնպէս և դափնի։ Երկրագործութիւնը մանկուց յետոյ առաջ էին եկել շինական կուլտեր, որոնց մէջ պեղջուհիները, համապատասխան ծէսեր կատարելով, հետևում էին աստուածների ճակատագրին, որոնք ամառը ապրում էին բոյսերի պէս և աշնանը մեռնում նրանց հետ միասին։ Մեմիների աստուածութիւնը սովորաբար մի անփոփոխ էակ է, որ ինքն է առաջացնում տարվայ եղանակի փոփոխութիւնները. բայց Յունաստանում մենք գտնում ենք այնպիսի աստուածներ, որոնց մարդը կարող է հետևել իրանց անկման պրիապութեան ու բարձրացման հանդիսաւորութեան մէջ։ Մենք յետոյ կտեսնենք, որ Թէմէտրի ու Պրոզերպինի շինական կուլտերը հանդէս էին բերված յունաց կրօնի կրիտիկական շրջանում՝ նրա մէջ սաստիկ պակասող տարրի տեղը լցնելու համար։ Այս կուլտերը, որոնք Փրէդերի ասելով՝ նման են մինչև հիմա երոպական գեղջուկների մէջ պահպանված կուլտերին, աչքի էին ընկնում Յունաստանում անյիշատակ ժամանակների հնութեամբ, թէպէտ նրանց մասին քիչ է խօսված ասելի հին շրջանի ընթացքում։

Այսպիսով յունաց աստուածները զարգացել են այն էպոխից առաջ, երբ Յունաստանը արշաւացել էր նոր մարերի համար՝ օտար ժողովուրդների հետ շփվելու շնորհիւ։ Անշուշտ, այն ժամանակ պահպանվում էին դեռևս շատ կոպիտ ու խիստ ծէսեր. մարդիկ զոհելը, որի մասին երկրի հետաւոր ծայրերից լուրեր են հասնում մեզ, դրանից շատ ժամանակ անց՝ անյայտ չէին, և յայտնի գործողութիւնները միացած էին դաժան աստուածներին ու աստուածուհիներին ծառայելու գործի հետ, որոնք, թէպէտ և նրանց մասին պրականութիւնը լռում է, մնացել են իրանց հետքը սովորոյթների մէջ։ Զևսն ու մի կամ երկու ուրիշ աստուածութիւն պլաստատական բռնոյական բնոյթ ունեն, և մի քանի պարտաւորութեան կատարումը խիստ խրախուսվում է կրօնի կողմից, ինչպէս օրինակ՝ հիւրասիրութիւնն ու սահմանների խիստ պահպանութիւնը,

հաւատարմութիւնը դէպի խօսքը, յարգանքը դէպի օտարականները։ Բայց չատ աստուածներ այնպէս սերտ են հիւսված արտաքին բնութեան հետ, որ չեն կարող անկասկածելի բարոյական ուժ համարվել. նրանք նման են բոյսերին ու կենդանիներին, նրանք ոչ բարի են, ոչ չար, այլ լոկ բնական։

ՅՈՒՆԱՑ ԿՐՕՆԸ ՏԵՂԸԿԱՆ ԲՆՈՒԹՒ ՈՒՆԻ։ Յունաց նախնական կրօնի մէջ մեզ ամենից չատ ապշեցնողը՝ սիսաէմի կատարեալ բացակայութիւնն է, և նրա տեղական, կատ-կլատ եղած բնոյթը։ Ամէն քաղաք, ամէն ընտանիք իր սեփական կրօնն ունի։ Կենտրոնական հեղինակութիւն չկայ։ Զարունակ առաջ են գալիս նոր աստուածներ. հներն չարունակ ստանում են նոր-նոր անուններ ու նոր կապեր են կապում միմեանց և աւելի նոր աստուածների հետ։ Մի տեղ ընդունված աստուածութիւնը միւս տեղում լոկ իրրև հակայ է հանդէս գալիս. միևնոյն աստուածութիւնը այլ և այլ տեղերում ստանում է բոլորովին տարբեր դէմքեր և նրա անունի հետ կապվում են բոլորովին տարբեր լեգենդաներ։ Այս պատճառով յունաց առասպելարանութիւնը հենց սկզբից զարմանալի կերպով ընդարձակ ու անյաջորդական է, դրա հետ միասին ժողովրդի կուլտը տեղական չատ վարիանտներ ունի։ Համարը կրօն չկայ, բայց կան տեղական բազմաթիւ կրօններ։ Թէ պատմուածքներում ու թէ ծէսերում հենց ու նորը խառնվել են, տեղականը խառնվել է դրսից բերվածի հետ, բնոյթով ու ծագմամբ վայրենին՝ առաջադիմականի հետ։ Յոյների մի այսպիսի դրութիւն՝ կազմակերպված կրօնի սկսվելուց առաջ, մենք կտեսնենք բոլոր երկրներում։ Ծէսերն ու լեգենդաները ամենուրէք տեղական ծագում ունեն, իսկ դանազան ծէսերը մի յաջորդական ծիսարանի և աստուածների սիսաէմական վարդապետութեան մէջ ժողովելու փորձը աւելի ուշ է սկսվում։

Յունաստանում, ինչպէս նկատում է Ռօբէրտսօն Սմիթ, դոյների սկզբնական դրութիւնը աւելի երկար է տևել և աւելի զօրեղ կերպով ազդել ազգայնական հաւատի վրայ, քան

նր և է ուրիշ տեղ։ Ինչպէս որ երբէք յոյները աջողութիւն չեն ունեցել մի կենտրոնական բարձրական սիսաէմ ստեղծելում, այնպէս էլ երբէք չեն հասել կուլտի միութեան։ Նրանց մէջ չէ ստեղծվել մի ազգայնական տաճար, որի բուրմունքը կարողանային ազգայնական կրօնին մի յայտնի կերպարանք տալ, զոհաբերութեան համար օրէնքներ սահմանել կամ սրբազան գրքեր հրատարակել։ Յոյները ուրիշ բոլոր ժողովուրդներից պակաս են փորձել իրանց վրայ կրօնական հեղինակութեան ճնշումը։ Այն միջոցին, երբ տեղական ծէսերը որոշված էին, սովորոյթն ու աւանդութիւնն էլ բաւական պարզել էին մէկ ինչ-ումն են կայանում կրօնական պարտաւորութիւնները՝ հաւատը կարող էր բոլորովին ազատ զարգանալ, ինչպէս պահանջում էին հանգամանքները կամ կենսակերպութեան զարգացումը։ Կրօնը այսպիսի վիճակում, այն էլ կենդանի երևակայութեան ու առանձին գիտարուեստական ձիրքերի տէր ժողովրդի կրօնը՝ ձուլվելու էր յայտնի կազապարների մէջ աւելի նկարչի, քան քուրմի ազդեցութեան տակ։

ՀՆԱՕՒՄ ԴԷՊԻ ԳԵՂԸՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԾԷՍԵՐԸ։ Այսպիսով հենց սկզբից կարող ենք մենք որոշել այն ուղղութիւնը, որ յունաց կրօնին վիճակված է ընդունել։ Յոյները սկսել էին պատկերացնել իրանց աստուածները աւելի վազ ու աւելի ազատ կերպով, քան ուրիշ ժողովուրդները, և չարունակ պատկերացրին նրանց, մինչև որ այս կէտում կատարելութեան հասան։ Համերոսից չատ առաջ նրանք այնպէս էին պատկերացնում իրանց աստուածներին, որ նրանց կարող էին երկրպագել ազատ ու գեղեցկի զգացումով օժտված մարդիկ։ Նրանք չէին բաւականանում անշունչ առարկաներ պաշտելով, այլ կամենում էին երկրպագել կենդանի էակներին, այն էլ՝ բանական էակներին։ Նրանք հակված չէին իրանց պաշտած բնական առարկաներին սոսկափով նայելու և առջևները երեսի վրայ ընկնելու, այլ աւելի հակված էին

նրանց հետ բարեկամական ու համակրական ոգով վարվելու, իբրև իրանց պէս էակների։ Այս պատճառով նրանք իրանց աստուածները մարդացրին։ Հակումն դէպի աստուածամարդացումը (антропоморфизированіе), որ ինչպէս տեսանք, հանդիպում է ուրիշ երկրներում և ուրիշ կանուխ շրջաններում, որ հանդիպում է մինչ անգամ ամենուրէք, որտեղ կրօնը յայտնի զարգացման ու նշանակութեան է հասնում,—յունաց մէջ ուրիշ ազգ տարածվեց, քան թէ և ուրիշ ժողովրդի։ Ընդհարի ու ծառի պաշտները, բնութեան իրաքանչիւր աստուածացրած մասի պաշտները սահմանում էին մարդկային կերպարանք։ Սկզբում ի հարկէ յատկաժամարոյ ազգերի ներսումն էր և անտառային յատկաժամարոյ կապնու ներսը, սակայն ժամանակի ընթացքում ազգիկը ծանօթ էր տալիս իր վրայից մամուռը, իր կեղևն ու տերևները և ինքնակայութեանը երևում էր բոլորովին մարդկային էակի կերպարանքով, այն էակի, որ բնակում էր ազգերի կամ ծառի կողքին։ Հէնց այսպիսով էր երկինքը դարձել մեծ հայր՝ մարդու կերպարանքով, ծովը՝ երկիրը ցնցող աստուած, որին դիւթինները տանում են ալէբների վրայով, արևը՝ մի հզօր նետաձիգ, կրակը՝ մի կաղ արհեստաւոր (բոցի առկայծկլուց չէ արդեօք), որի դարբնոցը գետնի տակն է, որտեղ գտնվում են հրաբուխները։ Սակայն երբ մի անգամ արդէն առնչվել են այս դէմքերը, էլ դժուար չէր պատմուածքներ յերիւրել նրանց արկածների ու միմեանց հետ ունեցած յարաբերութիւնների մասին և նրանց հետ կապել ուրիշ հին պատմուածքներ, հետևելով պետարուեստական հոտառութեան կամ երևակայութեան ծնեզդութիւններին։

Աստուածներին լուսին մարդացնելը, նրանց մարդկային ազատ հատարակութեան բարձր տիպ տալը այն առաջին գործն է, որ արել է այս չնորհալի ցեղը կրօնի զարգացման գործում։ Ստանալով նախնական աշխարհից միևնոյն աստուածները, Յունաստանը, ուրիշ ազգերի պէս, վերաբերվեց նրանց

իբ դիտեցած պէս, իդէալականացրեց ու կատարելագործեց բնութեան այն կողմերը, որոնք աստուածային էին համարվում, և վերադրեց նրանց ոչ միայն մարդկային զգեստներ ու կրքեր, ինչպէս միւս նախնական ժողովուրդները, այլ և մարդկային դեղեցկութիւն, իմաստութիւն ու բարութիւն։ Որքան էլ կոշտ լինէին իր մշակելու նիւթերը, որ նա վաղեմի հայրենակիցներից էր ստացել իբ օտար երկրներից՝ սակայն նա այդ նիւթերը իր ոեփականութիւնն էր շինել, նրանց իդէալական տպաւորների ու կանոնց վերածելով։ Այսպիսով յոյները եկան այն համոզման, դէպի որը գալու համար նախ իրանց անմահ բանաստեղծութեան, ապա քանդակագործական անմահ արուեստով նրանք սովորեցրին աշխարհին, որ մարդը իրանից աւոր եղով ոչ մի բանի առաջ գլուխ չպէտք է ծռի, և որ բնութիւնը միայն այն ժամանակ կարելի է պաշտել, երբ նա իդէալականանում է ու մարդանում։ Վերջ էր դրված այն խաւար պատկերացմանը, որ սպառնում էր տիրել ողջ հին կրօնին,—թէ աստուածութիւնն ու մարդկութիւնը տարբեր ու հակադիր բաներ են, թէ մարդու աստուածութիւնը, որ յատկնութիւն ունի կապ ունենալու իր հետ՝ կարող է լինել անբան առարկայ, առարկայ կամ կենդանի, որ գոյանալ է պատճառում ոչ թէ իր բարի յատկութիւններով, այլ՝ մի ինչ որ՝ մարդուն անհասկանալի բանով։ Ցոյները եկան այն եզրակացութեան որ աստուած ու մարդ միատեսակ բաներ են, և աստծու մասին մի ճշմարիտ հասկացողութիւն կազմելու համար՝ մենք իդէալական այր կամ կին մարդու պատկերը պէտք է կերտենք, չինենք այն բնական առարկայի հիման վրայ, որի մէջ աստուածութիւնը բնակած է համարվում։ Սա մի մեծ քայլ էր, սակայն, ինչպէս կտեսնենք, այսպիսի հասկացողութեան չնորհիւ շատ դժուարութիւններ են առաջ եկել նոյն իսկ իրանց՝ յոյների համար։

ՀԻՆ ԸՐԵԻԼԵՍՆ ԸՆԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ Մեր՝ յունաց պատմութիւնը դրականապէս գիտենալը սկսում է Ք. Ծ.

առաջ, երկրորդ հազարամեակի կիսի մօտերը. այս ժամանակաշրջանի մասին մենք կարող ենք դատել Միկէնի, Տիրինթի ու միւս տեղերի աւերակներով։ Այս մնացորդները վկայում են մի բաղաքական վիճակի մասին, որ բոլորովին տարբեր էր այն ժամանակաշրջանի նահապետական վիճակներից, երբ յոյները դուրս էին գալիս արարական բարբարոսութիւնից, և որ շատ տարբեր էր նաև յետագայ ժամանակում առաջ եկած բաղաքային կեանքից։ Նորագոյն պեղումները բաց են արել Իլիական թագաւորների պալատները, որոնք աշքարաց կառուցված են եղել արևելեան օրինակով և մեծ իշխանների թագման ու պաշտամունքի այնպիսի յարմարութիւններով, որոնք բուրգերի յարմարութիւններն են յիշեցնում։ Արուեստը դեռևս կոպիտ է, բայց ցոյց է տալիս որ նրան զործադրողների արուեստագրութեան առաջ հարուստ ուժեր են եղել դանվելիս։ Այսպիսով մենք այստեղ ունենք՝ հոմերական բերդուածներում նկարագրվածի պէս՝ զործերի մի այնպիսի դրութիւն, որտեղ մենքը իշխանները կառավարում են յունաց բաղմաթիւ քաղաքներում, և երբ նրանցից մի քանիսը նշանաւոր ազդեցութիւն ու իշխանութիւն են ձեռք բերում։ Այն բաղաքակրթական շարժմանը, որի մասին վկայում են այս մնացորդները, զարկ էր տրված արևելքից. սակայն յայտնի չէ թէ արդեօք այդ զարկը փիւնիկեան վաճառականների ու նոր երկրներ հետազօտողների ուղևորութիւններն էին տվել, թէ Փորը Ասիայի առևտրական ճանապարհներով ու Էգէեան ծովով անցնող ցամաքային ճանապարհից էր տրված։ Յամենայն դէպս կարելի է բայց առ քայլ հետևել այս շարժմանը մինչև հելլեսպոնտոսի ափերը, որտեղ երկրորդ հազարամեակի սկզբում Ք. Ծ. առաջ հանդիպեցին բաբելոնեան ու ասորական ազդեցութիւնները և ծնեցին մի իր տեսակի կոպիտ քաղաքակրթութիւն։ Յունաստանը չէն նուաճել արևելքից եկողները, սակայն նա արժանացել է մի նոր կեանքի համար, հաղորդակից լինելով արևելեան ցեղերին։

Այս շարժումը դիւր է նպաստել յունաց կրօնի զարգացմանը կամ որ և է փոփոխութեան։ Թագաւորների՝ իրանց նախնիների երկրպագութիւն տալը հակառակ չէր յունական ըզգացումին, զուցէ այդ երկրպագութիւնը հէնց այնպէս էլ պատմուն, զուցէ այդ երկրպագութիւնը հէնց այնպէս էլ պարզ էր, ինչպէս պահանջում էր այդ զգացումը։ Բայց կրօնի մատնացոյց արած կողմը չէ զարգացել Յունաստանում. և լիագաւորների կատարած ձէռները խափանութիւն չեն հանդիպացել նրա յետագայ ժամանակները անյայտանալուն։ Ապացուցված չէ, որ որ և է աստուածութիւն այդ ժամանակ մարդուած լինէր Յունաստան։ Որոշ յոյներն ու փիւնիկեցիք հանդիպում էին միմեանց, ինչպէս մի բանի կղզիներում, այնտեղ արևելեան աստուածութիւնը կարող էր նոյնանալ յունական հետ. Ափրոդիտէի ու Աստարտայի կուլտերը այսպիսով խառնվել էին Կիպրոսում, և Ափրոդիտէն կարող էր մի բանի նոր կողմեր ձեռք բերել մինչ անդամ Յունաստանում։ Բայց սա դժուար հաւատալու է։ Գուցէ աւելի կարևոր լինի ծանրանալ այն բանի վրայ, որ այսպիսի ընդհարման միջոցին պալատական կեանքի նոր կազմը կարող էր օրինակ դառնալ երկնային ընտանիքի կազմին, երբ սկսվել էր պատկերացում առաջ դալ երկնային ընտանիքի մասին։ Ժամանակով արևելեան ազդեցութիւնը ընդհատվել էր, և երբ այս ճնշումը վերացել էր, միապետութիւնները խորտակվել էին, պալատական կուլտերը ոչնչացել, և Յունաստանը, արժանացած լինելով մի աւելի կատարեալ կեանքի համար՝ կարող էր ազատ հետևել իր սեփական մարերին իր սեփական ճանապարհով։

ՀՈՄԷՐՈՍԻՆ՝ իրանից յետոյ ապրող յոյները իրանց կրօնի հիմնագիրն էին համարում։ Հէրոդոտոս կարծում է որ Հոմէրոս ու Հեսիոդ իրանից 400 տարի առաջ էին, և որ նրանք կազմել են թէոգոնեան (աստուածների ծնունդը) յոյներին համար, անուններ դրել աստուածներին, միացրել նրանց յատկանիշներն ու արուեստները և տվել նրանցից իւրաքանչիւրին մի բանի դէմք։ Այս մասնագիրները այսպիսով

կրծնական հաւատալիքի օրինակ են ցոյց տալ. մենք պիտենք որ նրանց վատառնները յունաց կրթութեան հիմն են եղել և հնումը մեկ միաւորիչ տարր են եղել կազմելիս։

Համերոսի բերմունածները, թէկուզ մենք նրանց մի կամ երկու երգչի կամ ամբողջ շիջոյի արդիւնք համարենք՝ զարգացման երկարատև պրօցէսի արդիւնք էին։ Քանատեղծականի արուեստը, որ այդ բերմունածները համային մարդկութեան համար մի դատարկութեան առարկայ է չինում, առաջին փորձը չէ, այլ մի մշակված մեթոդի հասունացած արդիւնքն է։ Նրանց միջի պատմուածքներն ու առակաւածքները հաւաքված են զանազան կողմերից երկար աշխատանքներով։ Այն, ինչ որ հաղորդվում է նրանց մէջ աստուածների անձնական կեանքի ու նրանց՝ միմեանց հետ ունեցած յարաբերութեան մասին՝ նոյնպէս պատահական բան չէ, այլ մի գեղարուեստական անդիտակից առեղծագործութեան գործունէութեան հետևանքը, որ այդ կազմողի մէջ ձուլվելուց առաջ պէտք է շարունակվէր ամբողջ դարեր։ Համերոս այ մի դէպքում չէ կրկնում այն բոլոր պատմուածքները, որ յայտնի են իրան աստուածների վերաբերմամբ։ Նա չէ դիպչում տեղական շատ աստվածների, մանաւանդ նրանց, որոնք աւելի մի կողմ հրբոյ բնոյթ ունեն, և յայտնի են դարձել ամբողջ հարիւրաւոր ակներ անցնելուց յետոյ, թէպէտ անշուշտ Համերոսի ժամանակներն էլ դոյութիւն են ունեցել։ Նա վերաբերում է միայն այն, ինչ որ վայել է մի բարեպաշտ երգչի։ Սակայն բարեպաշտ երգչի առաջ բաց էր մի ընդարձակ աստվարիք, և այս արտայայտութիւնը ամբողջովին չէ ներկայացնում այն ամէնը, ինչ որ էր Համերոս։ Նա հասարակական ակումբների ու արքայական պալատների երգիչն էր, որտեղ խնջոյքը աւանդ նրան խնջոյք չէր («Ոդիսա», VIII). նա երգում էր խնջոյքներում կամ բայօղեայ հանդէսներում, և նրա երգածը զբաղեցնում էր ունկնդիրներին։ Սա չէր կարող շպղել նրա բնորոշ նիւթերի վրայ, մինչ անգամ, երբ նրա բնաբանը

աստուածների էին։ Նա չէր կարող խօսել այն բանի մասին, ինչ որ ամենասովորականն էր աստուածների նկատմամբ պատմուածների մէջ, չէր կարող մանել պատմվածքների կամ պատմիչների մէջ. չէր կարող մէջ բերել այն պատմուածքը, որ Լիկ միայ ունէր այնտեղի վերաբերմամբ, որտեղից առաջ էր գալիս, սակայն չէր կարող նմանատ շահեկանութիւն ունենալ։ Նա ըմբռնում ու շարադրում էր պատմական ձևով այն, ինչ որ զօրեղ էր ու իմաստերդական, ինչ որ հասկանալի էր ամենքին, ինչ որ շահագրգիռ էր ու գրաւիչ, ինչ որ պատասխանում էր հանրային զգացումին. նա բնականաբար որոնում էր յոյն պատկերներ, գրաւիչ գրոյցներ, պարզ ու անկեղծ զգացումներ, լաւ ծանօթ բնոյթների հետ միացած հարցասիրական անցքեր։ Պարզ է, որ այսպիսի բանաստեղծները չէին կարող տալ կրօնին խորութիւն և ուժ. մարդկից չատերը, որոնք ծագում էին մարդկերի գլխումը աստուածների վերաբերմամբ՝ չէին կարող ցոլանալ այս բանաստեղծների բառերում։ Սակայն միւս կողմից՝ մենք պիտենք որ յոյները իրանց կրօնի հանդերական պատկերացումը օրինակելի էին համարում. միայն այս պատկերացման առաջ գալուց ամբողջ դարեր էին անցել, երբ սկսողին ձայներ բարձրանալ նրա դէմ։ Եւ սա բոլորովին հասկանալի է։ Համերոս այնինչ չէ խլել յոյների կրօնից. նա ձեռք չէ տվել տեղական այ մի կուռքի. իսկ միւս կողմից՝ յունաց աշխարհին, որի հաւատալիքները առաջ կազմված են եղել բազմաթիւ անկապ, կամ մինչ անգամ հակասող լեգենդաներից՝ նա տվել է աստուածների մի կարգին սիստեմ, որի վրայ մարդերը կարող էին հանդստանալ, իսկ երևակայութիւնը ձեռք էր բերել իդէալական գեղեցկութեան մի անսպառելի աղբիւր։

ՀՈՄԵՐԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ։ Ի՞նչպիսի կրօն է, ուրեմն, Համերոսի կրօնը։ Աստուածները այնպիսի էակների մի խումբ են, որոնք այնքան էլ հեռու չեն մարդ լինելուց. նրանք հանդիսանում են իբրև մի հարցասիրական զուգաւորութեան, որ

մարդկային էությունը միացնում է կերմարդկային յատկությունների ու կարողությունների հետ: Փիլիսկական անասկսիոց աստուածները ամեն զօրեղ են մարդկից, նրանց կազմուածքը ամեն խոշոր է, հայեացքը՝ ամեն լուսանցիկ, ձայնը՝ ամեն բարձր. հին ժամանակների վիպերների սէջ՝ նրանք իրանց նպատակներին հասնելու համար կարող են ստանալ գիտական կերպարանք, կարող են անհետանալ և տարվել օդումը: Իսկ միւս կողմից՝ նրանք կարող են վիրաւորվել մինչ անգամ մարդկի հետ մարտնչելիս. կարող են թշնամանքների հանդիպել. նրանք ուտել-խմելու սէտր են զգում: ձրդմարմին է, նրանք նեկտար են խմում և ամբրոս ուտում, որ անմահութիւն է պարգեւում, և նրանց երակներում ոչ մի մարդկային արիւն, այլ մի առանձին աստուածային հեղուկ է հոսում: Մարդուց նրանք տարբերվում են իրանց անմահութեամբ. պատահել է որ մարդը սպանել է անմահութիւն և դրա շնորհիւ դարձել աստուածութիւն: Աստուածներին ու մարդկին իրարից անջատող գծից այն կողմն էլ կարելի է անցնել. առաջին ժամանակները նրանք շատ անգամ էին անցնում այն կողմը: Աստուածները յարաբերութեան մէջ էին մտնում մահկանացուների հետ. շատ հերոսներ աստուածային ծագում ունեն, և աստուածները շարունակ իրանց սրտին մօտ են առնում իրանց հիմնած արքայական ընտանիքների վիճակը: Սակայն նմանօրինակ դէպքեր արդէն բանաստեղծի ժամանակներից չեն կապվում այլևս: Աշխարհս այնքան էլ աստուածային չէ մնում:

Բայց Հոմերոս դէպի հեռաւորագոյն անցեալն էլ է յետ նայում, և մենք նրանում գտնում ենք մի համոզում, որ Հեղկաստանում ու Իտալիայում էլ է հանդիպում, այն է՝ թէ մի ժամանակ իշխելիս է եղել աստուածների մի աւելի վայրենի սերունդ, որին այժմեայ հարստութիւնը յաղթել է ու գահից գրկել: Այս հնագոյն սերնդին պատկանում էր Կռոնոս՝ Զևսի ու Տիտանի հայրը, որոնք այժմ Տարտարոսը, այսինքն՝ առ-

բերկրեայ անդնդային գաւառն են գահավիժված: Մարդերին յայտնի աշխարհը ներկայ էպոխի սկզբում Կռոնոսի երեք արքունների միջև էր բաժնված, և այդ ժամանակ Զևսին բարձրագոյն աշխարհն էր բաժին ընկել, որ պարունակում է իր մէջ երկինքը, որ Ոլիմպոս լերան գագաթին է պոնվում՝ թէսալիայում, Պոսիդոն ստացել է ծովը, իսկ Հադէս՝ ստորերկրեայ աշխարհը, որ գտնվում է Տարտարոսի վրայ, և ուր մարդիկ գնում են մեռնելուց յետոյ:

Զևս իշխում է Ոլիմպոսի վրայ: Այնտեղ նա իշխում է այն աստուածների վրայ, որոնք զօրեղ են ներկայումս: Նա խորհրդի է հրաւիրում նրանց, սեպան է նշանում հեռանելը: Նրանք մարդու շատ նման էակներ են: Նրանց յատկում են մարդկային սովորական զգացումները. նրանց սրտերում իշխում են սէրն ու քէնը, խանդոտութիւնն ու բարկութիւնը: Նրանք գործում են ոչ միայն յատկենական սկզբունքների ազդեցութեան տակ, այլ՝ մարդերի պէս առաջնորդվում են բոլէական դրդումներով կամ իրանց կամ իրանց սիրելիների համար ժամանակաւոր շահեր ձեռք բերելու ցանկութեամբ: Նրանք մինչ անգամ անձնատուր են լինում կամաւոր սիրային արկածների և ընկնում ծիծաղելի դրութեան մէջ: Նրանք ծիծաղում են իրար վրայ. զօրեղ աստուածը թոյլն Ոլիմպոսից գետին է շպրտում: Միասին մեր առած՝ օլիմպիականները ներչնչող ազատութիւն չեն զգում. բայց նրանց առանձին-առանձին դիտելով՝ մենք բոլորովին այլապէս ենք գտնում նրանց: Անհատական աստուածները վեհ գաղափարներ են հանդիսանում և արժանի են երկրպագութեան: Ինչ և եղած լինեն նրանք մի ժամանակ—բնութեան ուժեր, ֆետիշներ միմարդիկ, ինչպիսի շինական լեգենդաներ էլ բերած լինեն նրանք այն տեղերից, որտեղացի որ են իրանք, կամ նախնական կեանքի ինչպիսի կողմեր էլ կապված լինեն նրանց հետ,—բանաստեղծի աշքում նրանք հրեան են գալիս իրրև այլևայլ կատարելութիւնների մարմնացում: Աստուածների

ու մարդերի հայր Զևս ամփոփում է իր մէջ արդարութեան ու բարութեան յատկութիւնները. նա հասարակական կարգ ու կանոնի հիմնողն է, ալօթանողների պաշտպանը, նա ունի ամենաստուգ իմաստութիւն։ Էլեա՝ վարդի պէս բացված գեղեցկութեան ու անընդունակի արժանաւորութեան տէր մարդն է. Ալօլեոն՝ հօր հրամանները կատարող մի հնազանդ որդի է. Ալթինա՝ մի մարտիկ աղջիկ է, պատերազմի մէջ աջողակ, ամենատեսակ արուեստների հմուտ, յատկապէս խորհրդական և իր սիրած մահկանացուների առաջնորդուհին. Ափրոդիտէ՝ սիրոյ աստուածուհին է, որի գործ մէջ ամփոփված են բոլոր կանացի շրիդութիւնները. Արէս՝ մի անվհատ մարտիկ է, Էրմէս՝ առաջին կարգի երկնաբնակների յատուկ սուրհանգամն է. Հէփէստոս՝ կոշ ու անհեթեթ դարբին է,—մի արհեստաւոր, որ աստուածների համար մետալից ամենատեսակ խորամանկ բաներ է կռում։ Օլիմպիականների չուրջը խմբվումեն միւս սորնագոյն աստուածութիւնները, ինչպէս՝ Հէբա, Ծաղկափթիթ կոյսը, և Հանիմէդ՝ մի պատանի, որ մարդկային ծնունդ է, բայց իր գեղեցկութեան պատճառով երկինք է տարված՝ աստուածներին իրանց ինջոյքներում ծառայելու համար։ Ափրոդիտէյին սպասաւորում են Ջնորհները (Գրացիաները), Ալօլեոնին՝ Մուսաները, և աշխարհս, իր համար Հոմերոս ունենալով՝ դուրկ չէ տեսական աստուածութիւններից, թէպէտ պլեսաւոր աստուածները այժմ բարձրումն են բնակում. լեռները, գետերը, անձաւները ու ավիանոսի կղզիները—բոլորն էլ իրանց անմահ բնակիչներն ունեն։

ՀՈՄԵՐՈՍԻ ԴՈՒԼՏԸ։ Եթէ աստուածները այսպիսի բնութիւն ունեն, հապա ինչ յարաբերութիւն կայ նրանց ու մարդու միջև և ինչպէս են ազդում նրանք մարդերի կեանքի վրայ։ Նախնական աշխարհի պարզ ծէսերին հետևում է կուլտը։ Դա չունի յատնական բնոյթ։ Քուրմեր կան, և նրանք ճշտութեամբ կատարում են զոհաբերութիւնը իրանց թնամքին յանձնված սրբավայրերում, սակայն զոհաբերութիւնը կարող է

կատարել ծագատարն էլ, ընտանիքի մեծն էլ. և թէպէտ «Եղիականում» մի կամ երկու տաճար է յիշվում, բայց դոհ բերելը ամէն տեղ էլ կարելի է։ Տաճարները սկզբում միմիայն Յունատանումն են երևում իրրև պատկերներ պահելու տեղեր, բայց «Եղիականի» մէջ աստուածութեանը ոչ թէ պատկերի միջոցով են երկրպագում, այլ՝ իրրև ամէն տեղ ներկայ եղող էակի. դեռևս տաճարների կարիք չէ զգացվել։ «Ոդիսականում» տաճարների մասին խօսվում է, իբրև այնպիսի շէնքերի, ուսանց որոնց քաղաք չկայ, սակայն սա արդէն ուշ ժամանակի է վերաբերում։ Զոհաբերութիւնը մի այնպիսի ուտ է, որտեղ աստուածներին առաջ իրանց բաժին միան է մատուցվում, իսկ յետոյ նրանց յարգողները կերուխում են անում՝ իրանց բաւականութեան պատճառելու համար։ Սա հանդամանօրէն նկարագրվում է «Եղիականում», I, 472։ Խնջոյքից յետոյ լսվում է երաժշտութիւնը.

Փառաբանում էին աստծուն արէագիր ամրողջ օր,
Բարձր ձայնով Ալօլեոնին հրդարանում ոտայր բոլոր,
Փառը տալով նետաձկեցին, որ տրճմում էր ունկնդիր։

«Ոդիսեան» VII-րդ գրքում կարդում ենք.

Որովհետև յայտնապէս երևում են մեզ մեր աստուածներ,
Երբ զոհում ենք հարիւրաւոր՝ նրանց ընտիր մեր ցուլեր.
Եւ խընջոյքին մեզ հետ նրանք սեղան բազմում անխտիր։

Մի այսպիսի զոհաբերութիւն ոչնչով նման չէ բաւութեանը. սա պարզապէս աստծու և այն մարդերի միջև կապված դաշինքի վերանորոգութիւնն է, որոնք մի նոր գործի ձեռնարկելիս կամ հանդիսաւոր պայման կապելու միջոցին նրա օգնութեանն են դիմում։ Ալօթքները շատ պարզ են։ Ահա ինչպէս վերաւորված Թիւդէդ աղօթում է Ալթինային («Իլիական» V. 115).

Զանթարձակ Աթամազդի, լսիր, գնւատ անպարտելի,
Եթէ՝ հաճութեամբ սիրում էիր ինձ ու հօրս պաշտպանել՝
Եղիր և՛ ինձ բարեհամ՝ հրատապ ռազմի մէջ, Ալթինաս.

Ծնուբ ինձ հասնել և սիգամասոյ անել նրան,

Ո՛վ, կանխելով վիրաւորից, դեռ զուռզաբար էլ յայտնում է.

Թէ աշխարհում ես երկար՝ տեսնելու չեմ լոյսն արևի:

Որովհետև չար աստուածներ չկան, ուստի մարդիկ այնպէս են համարում, թէ մի և նոյն էակներն են ուղարկում բարիքն ու չարիքը: Այսպիսով, մարդերի ու աստուածների յարաբերութեանց մէջ չպարզված շատ բան կայ: «Բոլոր մարդիկ աստուածների պէտք ունեն», կարգում ենք. Տոմերական հերոսը աստուածութեան հետ ունեցած կապը կարևոր ու իր ձեռնարկութիւնների համար անհրաժեշտ է համարում: Բայց նրանց տրամադրութիւնը պահպանելու համար մի բանի միջոցների պէտք է դիմել: Նրանց չի կարելի արհամարհանքով վերաբերվել. պէտք է ուշը դարձնել և նրանց սիմբօլների վրայ. ամենից առաջ մարդը պէտք է յարգելի լինի, պէտք է շափաւոր լինի կեանքի ու մտածմունքների ընթացքի մէջ. եթէ ոչ՝ աստուածները հեշտ կարող են վիրաւորված լինել կամ կարող են նախանձ զգալ ու զրկել մարդուն իրանց պաշտպանութիւնից: Եւ եթէ նրանք մի յայտնի աստիճան քմահաճ են՝ ապա նրանցում կայ և մի այլ կողմ, որ խափանարար է լինում դէպի նրանց հաւատարմութիւն տածելուն: Նրանք ամենակարող չեն: Պայ մի սահման, որից այն կողմը չեն կարող նրանք աչքին օգնութիւն հասցնել մարդուն: Ամէն մարդ ունի ճակատագիր, որ աստուածները չեն պոչում, և որ աստուածները չեն կարող փոխել: Երբ հասնում է մարդու ժամը՝ աստուածները պէտք է թողնեն նրան իր բազդի կամքին. նրանք մինչ անգամ ընդունակ են խաբելու ու մոլորեցնելու նրան, որպէսզի նրան ենթարկեն ճակատագրին: Յանցանքի համար պատժելու իրաւունքը, թէ այս աշխարհում ու թէ հանդերձեալում, պատկանում է մի առանձին տեսակի էակների՝ Էրիաններին: Ամենից շատ յարգված աստուածները այս բանով չեն պարապում. նրանք անխոցելի յարաբերութեան մէջ չեն

գտնվում աշխարհի բարոյական կարգ ու կանոնի հետ, այլ յաճախ իրանք են շեղվում նրանից: «Ոգիտասում», ասվել է, մենք ունենք խոր զգայման նոր հանդիպում: Այնտեղ Զևս հանդէս է գալիս իբրև մի իր տեսակի բարի նախախնամութիւն, որին մարդը կարող է յայտնել իր խորհուրդները, եթէ յաւ է վարում, և որի բոլոր կարգադրութիւններին մարդը պարտաւոր է պարկեշտութեամբ ենթարկվել: Այստեղ արդէն միաստուածութեան սաղմ կայ. ինչպէս էն սկզբում եղել է արիական բոլոր կրօնների մէջ, Յունաստանում էլ այդ սկզբունքին վիճակված է ճախողութեամբ զարգանալ: Իսկ Տոմերական պանթէօնը, իբրև մի ամբողջութիւն, դոյդ է տալիս մեզ կրօնը այն աստիճանի վրայ, որի վրայ նա երևան է գալիս աւելի իբրև կեանքի մի արտաքին զարդ, քան ներքին ներշնչում: Գուցէ երբէր եղած չեն իսկական մարդիկ, որոնք այդպէս լինեն մտածած աստուածների մասին և այդպէս վարված նրանց հետ, ինչպէս տեսնում ենք Տոմերոսի պրուածքներում: Եթէ երբ և է գոյութիւն է ունեցել մի այդպիսի կրօն, ապա նա մի առանձին ազգութիւն չէ ունեցել: Այդ աստուածները իրանց բմաղաշութիւններով ու լծակութիւններով, իրանց սահմանափակ իշխանութեամբ երբէք չեն կարող զօրեղ կերպով ներգործել բարոյական կողմի վրայ կամ պրեէ կերպ շարժել իրանց յարգողների մէջ: Դրանք պարզ ու կապոյտ երկնքի աստուածներ են. դա երեխաների կրօնն է, որի մէջ դեռևս չէ զարթել պատակցութիւնը և երևան չեն եկել աւելի խոր հոգեոր պէտքեր: Միակ բանը, որ մինչև հիմայ կատարել է յունական միտքը՝ դա այն գիտան է, թէ բնութիւնը նրանից այդ մարդից բարձր չէ. բնութեան ուժերը նրա համար մարդկային են. նրանք ոչ թէ այն պատճառով են աստուածային, որ էապէս են տարբերւում նրանից, այլ այն՝ որ հանդիսանում են իրրև նրա սեփական յատկութիւնների անընդատակելի իդէալներ: Սա ազատ մարդերի կրօնն է: Բայց յոյնը դեռ չէ յայտնագործել թէ ինչպէս է ինքը

որոշվում այն ամէն բանից, ինչ որ իրան շրջապատում է. երբ նա կյանքագործի իր մէջ այն տարրը, որ բարձր է բնաւթիւնից՝ այն ժամանակ կրծնը, համերական պէս մի կրօն ընդ միշտ անհնարին կլինի նրա համար:

ՆԱԽԱՆՁՆՆԵՐԸ: Որովհետև աստուածների պետը երբէք առանձին կերպով հետ չէ լինում համերական յոյնից և երևան է գալիս իրրև մարդկային գործերին մասնակցող մի ներգործող էակ՝ ուստի չաճախ զգայնել է տալիս իր ներկայութիւնը: Օդը լի է այդ ներկայութեան նշաններով. աստուածները յուրեր են ուղարկում մարդկանց լռուհիների լռութիչրով, չանկարծահաս ձայներով. կայծակը Զևսի ուղարկած նշանն է և ցոյց է տալիս անձրևի կամ կարկտի, երբեմն էլ պատերազմի մօտալուտ լինելը: Այդ նշանները մեկնելու կանոններ կան, որոնք սակայն չաճախ կասկածելի միտք են պարունակում: Երազները էլ աստուածների սիրած հաղորդակցական միջոցներից մէկն են, սակայն նրանք էլ կարող են սուտ մեկնվել: Անձնաւորութիւններ կան, որոնք մասնագիտական ընդունակութիւն ունեն աստուածների կամքն իմանալու. տեսանողը լուսաւորված է աստուածութեամբ ոչ թէ արտաքուստ, այլ՝ ներքուստ. նա լսում է աստուածութեան ձայները և կարող է ուղղակի յայտնել աստուածների կամքը: Այս ձիրքը կարող է պատկանել մի յայտնի ընտանիքի, կամ արդիւ միայն յայտնի տեղում, որտեղ խորհրդակցութիւնների համար կայ կանոնաւոր պատգամատուն: Փոքրնում, ինչպէս կարդում ենք, մելլիները կամ դելլիները, որոնք ճգնաւորական սովորութիւններով քուրմերի մի խումբ են կամ ընտանիք՝ մեկնում են սրբազան կաղնու շշուկով, իսկ Ագամեմնոն Տրոյական պատերազմից առաջ խորհուրդ է հարցնում դելփեան քրմուհի Պիւթիայից:

ՅԵՏՄՈՀԵՑՈՑ ՎԻՃԱԿԸ: Յետմահեայ վիճակի վերաբերմամբ Համերոսի պոեմներում հաւատալիքները միակերպ չեն: Թաղման սկսված ծէսերը այն համոզումն են մատնա-

ցույց անում, թէ հերոսի ոգին մեկ ուր-որ ապրում է և պահպան բանների պէս ունի: Բայց Ինջեցիաների կեանքը այնպէս հանդամանօրէն չէ պատկերացված, ինչպէս Եպիսատեսում: Միքենեան (микенский) ծէսը բիչ ազդեցութիւն ունէր, որովհետև թաղման հանդէսները Համերոսի պոեմներում շատ նման են ուրիշ նախնական արիական ժողովուրդների նոյն ծէսերին և անկասկած ուրիշներից չէին առնված: Շատ բիչ են մտածում հերոսի անդրերեզմանային գոյութեան մասին: Նա այլևս գոյութիւն չունի: Մարմինը մարդն է, իսկ ոգին, որ թռոչել է մարմինը՝ յոկ նշանաւոր գոյութիւն ունի, առանց արեւ ուժի ու յոյսի, շատ-շատ՝ նա կարող է մի փոքր կենդանանալ, ճաշակելով արիւնը: Բայց այն միջոցին, երբ Համերոսի օրով մտածների կուլտը թուլանում է յոյների մէջ՝ երևակայութիւնը դեռևս կերպով զբաղված է այն պատառներով, որտեղ նրանք գտնվում են և փորձում է սահմանել նրանց համար մի ուրիշ իրական ու գործունեայ գոյութիւն, բան այն, ինչ որ թռոյլ էին տալիս հին հաւատալիքները: Հադէսի («Անտեսանելիի») սոսրերկրեայ թագաւորութիւնը ուրիշ կերպարանք է առնում: Նկարագրվում են պատիժներ, որ կրում են այնպիսի խոշոր յանցագործներ ինչպիսիք են Տանտալ և Իքսիօն. բերվում են և ուրիշ մանրամասներ: Ուրիշ կերպ են պատկերացնում իրանց Ելիսեան դաշտերը հետաքրքրական տեղում, ուր աստուածները վոխադրում են հերոսին նրա մահից յետոյ, և որտեղ ոչ ձիւն կայ, ոչ բուք, ոչ անձրև:

Համերոս միակ բանաստեղծը չէ եղել, որ տվել է յոյներին իրանց աստուածների համակարգութիւնը. և նրա հանգամանքները ոչ ամէն տեղ առանց տարակոյսների է ընդունվել: Հեզիոդ, որ գրել է VIII-րդ դարի երկրորդ կիսում Ք. Ծ. առաջ՝ տալիս է «Թէոգոնիա» կամ աստուածների ծնունդ պատմութիւնը, որ նոյնպէս աշխարհի սկզբնաւորութեան պատկերն է, բանի որ յոյները կարծում էին թէ աստուածները և աշխարհը միաժամանակ են առաջ եկել:

պատում է ճշմարտանման առասպելներ սովրեցնողներից, պատչ Հոմերոսին ամենարկելով։ Նրա՝ տիեզերքի չինուվածի տիպական սիստեմը լինելն բան չէ, այլ խնամքով կատարած աշխատասիրություն, որ, անշուշտ, տեսի է ունեցել բարմերի մանրապիտական աշխատանքի շնորհիւ. այսպես փորձ է անվում յայնների յայտնի բոլոր աստուածներին կամ կիսաստուածներին դասաւորելու ցեղապրական (գենեալոգիական) կարգով և տալու նրանց ցուցակը։ Քերվում են առասպելներ, մի քանիսը սարսափելի բնոյթով, որոնք չեն հանդիպում Հոմերոսի գրուածքներում։ Քերվուածի նշանաւոր մասը բռնում է Ցեսանների դէմ աստուածների մղած պատերազմը, և այս աշխատասիրությունը վերջանում է այն պատմուածքների հաւաքածուով, որոնք պատկերացնում են հերոսների ծագումը այն կապերից, որ աստուածները ունեցել են մահկանացուների հետ։ Այս քերվուածը, ինչպէս տեսանք, հոմերական քերվուածների շարքում աստուածներին վերաբերող մի հակինակութիւն էր համարվում և իրրև ապացոյց էր բերվում մինչ անգամ քրիստոնէութեան առաջին դարերում այն բանի համար, թէ ինչին էին հաւատում յայնները։

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՆ ՈՒ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԿՐՕՆԸ։ Այս բանաստեղծների աշխատասիրությունները ապացուցնում են որ հին յայնները ձգտում էին աստուածների մասին պարզ ու ներդաշնակ պատկերացումներ ունենալ։ Այն շարժումը, որի վրայ Հոմերոս ու Հեսիոդ դրել են իրանց կնիքը, որոշելով պանողան աստուածասիրությունների բնոյթները ու առասպելաբանական աստուածների առարկելիքները, հաւանաբար արդէն վաղուց էր առաջ եկած. և ինչպէս տեսանք, դանդան տեղերում նա ունեցել է այլ և այլ հետևանքներ։ Այս աշխատասիրությունը, վերջանալով՝ տվեց Յունաստանին մի նոր կրօն։ Տեղական կուլտերը չարունակվում էին իրանց հերթով, չընդունելով կենտրոնական հակինակութիւնը և մի անվերջ բազմազան տեսարան ներկայացնելով։ Իւրաքանչիւր քաղաք հանդիսաւոր ու լուրջ

կերպով կատարում էր իր սեփական աստուածների ազանդական կուլտը, որոնց տարամարկութիւնից էր կախված նրա բարեկեցութիւնը։ Պանհէլէնի միւս աստուածներին քաղաքը կարիք չունէր յարգելու. դեռ տեղական կուլտերը նշանաւոր չափով էին վերաբերվում աստուածութիւններին, ինչպէս Դէմետր կամ Դիօնիս՝ որի մասին էպօսին (բանաստեղծական դպրը) շատ քիչ բան է յայտնի։ Այս պատճառով բանաստեղծները քիչ էին օգնութիւն տացնում ներդործող կրօնին. իսկ միւս կողմից՝ Հոմերոսի երանելի ու դեղեցիկ աստուածները մուտ էին ունենում ամէնուրէք, որտեղ սիրում էին բանաստեղծութիւնը։ Սա մի կրօն էր ամբողջ Յունաստանի համար. այս աստուածները ազգային աստուածութիւններ էին. թէպէտ նրանցից ոմանք էօլիայի էին պատկանում, սակայն դարձել էին ազգային աստուածութիւններ, քանի որ ամփոփված էին բանաստեղծութեան մէջ, որը ազգ ազգը իրանն էր համարում։ Աստուածութեան հոմերական հասկացողութիւնը այս պատճառով ներդործում էր բոլոր յայների մարերի վրայ. բոլոր աստուածները վեհացան Հոմերոսի տված պատկերով, և ժողովրդի մարի առաջ դրված էր մի առարկայ, որ յաջորդ կրօնական արուեստը ուսումնասիրում էր ամենայն ազնութեամբ։

ԿՐՕՆԱԿԱՆ ԸՐՈՒԵՑՔԻ ԾԱԳՈՒՄԸ։ VII-րդ դարը Ք. Ծ. առաջ Յունաստանում արագ զարգացման ու ճոխ ծաղկման մի շրջան էր։ Դա դաղմաւորվելու դար էր. արուեստներն ու առևտուրը զարգանում էին, և թէպէտ փիլիսիկոսները դեռևս չէին հասասավել էգէյեան ծովում՝ այսուամենայնիւ յայնները իրանք նաւում էին դէպի արևելք ու բերում հետները շատ նոր դաղափարներ։ Սա Եւրոպայի XVI-րդ դարի նման մի ժամանակ էր, երբ արագ-արագ ընդարձակվում էր աշխարհագրական աշխարհը, և ընդլայնվում էին նաև հայեացքները ու զգացումները։ Կուլտն էլ չէր կարող չմասնակցել հանուր առաջխաղացմանը, և հետց այս շրջանում մենք

ահռնում ենք կրօնական արուեստի մէջ այնպիսի զազափարների ծագումը, որոնք հանուր նախահնձ են շարժում դէպի Յունաստանը։ Ճարտարապետութիւնը մի նոր զարկ առայս Եգիպտոսից ու բաբելոնից. չինված էին բնակարաններ ոչ թէ մարդկային վարիչների համար, ինչպէս միջերեան շրջանում, այլ՝ աստուածների համար։ Ընտանեկան շրջաններում կամ փոքրիկ քաղաքներում բաւական էր մի կոչտ-կոպիտ ծածկոյթ որ անշնորհք պատկերը ծածկէր. իսկ մեծ քաղաքներում, որտեղ շատերը բարձր հասկացողութիւններ ունէին աստուածների մասին, և որտեղ գոյութիւն ունէին դիպարուեստական ճաշակներ՝ տաճարներ էին շինում պիմպկուն նիւթից։ Այս բանը դարձաւ մի հանուր սովորոյթ և նոր զաղութի առաջին պարտաւորութիւններից մէկը առաջադիմող քաղաքի մի աչքի ընկնող տեղում, մայր-քաղաքի աստուածների համար հոյակապ տաճարներ կառուցանելն էր միշտ։ Յունական տաճարի նպատակը յարդողների մեծ բանակութիւն տեղաւորելը չէր, այլ տաճարը աստուածութեան բնակարան էր։ Նա երկայնաւուն ձև ունէր և տեղաւորված էր մի բարձր տափարակի վրայ, ուր բարձրանում էին աստիճաններով։ Սովորաբար նա շրջապատված էր սիւներով, ծածկված էր տանիքով և իւրաքանչիւր ծայրի վրայ մի սուր գագաթ ունէր։ Տաճարի գլխաւոր սենեակը այն է, որի մէջ գտնվում է աստուածութեան պատկերը։ Այս կիսախաւար սենեակից աստուածութիւնը նայում է դէպի արևելք՝ իր հանդէպի դռնովը, որ բացվում է առաջի սիւնազարդ սրահակում։ Այսպէս, երեսը դէպի արևմուտք ուղված՝ ապօթքի է կանգնած աստուածութեան յարդողը։ Որովհետև անհրաժեշտ էր համարվում որ գոհի կրակի բոյրը, աղաւ բարձրանար, երկինք՝ աստուածութեան իսկական բնակարանը, այս պատճառով գոհի սեղանը կանգնած էր տաճարի դուրսը։ Մի քանի դէպքերում, առաստաղում մի բացվածք էր լողնվում, և գոհարանը կարող էր կանգնել բացօթեայ, աստծու բնակարանում։

Յունական արուեստը մի բանձր դործարութիւն դտաւ իր համար տաճարի շինութեան ու զարդարանքի մէջ։ Այն տաճարների ճարտարապետութիւնը, որոնք դեռևս պահպանված կամ նկարագրված են եղել՝ աչքի է ընկնում այնպիսի խոչորութեամբ ու դեղեցկութեամբ, որոնց նրանք երբէք չէին հասել. այն էակները, որոնց համար կառուցվում էին նմանօրինակ բնակարանները՝ պէտք է աչքի ընկնէին վեհութեամբ ու յարգանք վայելէին։ Տանիքների ու տափարակ տեղերի վրայ սիւնածայրերի ու տանիքների միջև դրվում էին քանդակագործական շինուածքներ. այս մէջօդներով տանիքի տակ, շինութեան ծայրերի միջև եղած տարածութիւններով ու ճարտարապետական զարդերով հնարէտը կարող է հետագօտել յոյն բանդակագործութեան զարդացումը կոպիտ վիճակից մինչև այն մօմենտը, երբ բանդակագործը լիովին տիրապետում է իր նիւթի վրայ և կարող է տալ առաստղի վեհ պատկերը կամ տեղաւորել մարմարիոնի վրայ բազադրած տպաւորների ու դեղեցիկ կանոնաւ կրօնական մի ամբողջ թափօրը։ Այն աստուածութիւնների պատկերները, որոնք նշանակվում էին տաճարներում տեղաւորվելու համար՝ առաջ էին բերում նկարչի առեղծագործական բարձր բանքարը. մինչ անգամ եթէ պահվում էր մի հին, կոպիտ աստուածութիւն, ապա նրա հետ միասին կարող էր կանդնել և արուեստի մի ընտիր արտադրութիւը։ Յոյները սկսում են երկրպագել բանաստեղծութեան իդէալական աստուածներին, և բանաստեղծի պատկերացումը արտայայտվում է մարմարիոնի վրայ։ Սակայն քանդակագործութիւնը Յունաստանում ճարտարապետութիւնից մի քիչ ուշ էր հասել իր բարձր զարդացմանը։ Տաճարներին էլ իսկապէս այնպիսի հազուագիւտ ու թանկագին առարկաներ էին նուէր տրվում, որպիսիք մարդկի մինչև հիմա սիրում են հաւաքել իրանց տներում, այն է՝ թանկագին մետաղներից գոտորիկ կիրպով շինված գաւաթներ ու թասեր, անդրիներ, գորգեր ու ամենատեսակ պանձեղէն։

ՏՕՆԵՐՆ ՈՒ ԽՂՃԵՐԸ։ Տաճարը, ուր այնքան շատ նուէրներ էին բերվում՝ այն քաղաքի կենտրոնն էր, որտեղ նա զբաղվում էր։ Նրա մէջ բազաբը տեղաւորում էր իր գանձերն ու արձանները. այնտեղ էին հաստատվում երդումները ու դաշինքները։ Այնտեղ էր սարքում քաղաքը իր հանդէսները յայտնի ժամանակամիջոցներում, այն է՝ աստուածուհեան ծննի տարեդարձներին կամ բազաբի պատմուհեան մէջ տեղի ունեցած մի և է բաղդաւոր անցքի տարեդարձին. ժամանակի ընթացքում նմանօրինակ դէպքերը շատացել էին։ Գանայք դուրս էին գալիս իրանց միակերպ բանտարկուհիւնից և միանում էին այն թափորին, որ ուղղվում էր դէպի սրբազան վայրը, տանելով, դուել, աստուածուհեան համար մի նոր զգեստ։ Բերվում էր գոնը, աստուածուհիւնը ոտանում էր նրա՝ իր համար սահմանված մասը. իսկ երկրպագուները մասնակցում էին խնջոյքին, աշնշացնելով մնացորդը։ Բայց խնջոյքից առաջ կար ժամանակի մի մասը, որ լրացվում էր կուլտի հետ կապ ունեցող զանազան վարժուհիւններով, որոնք սահմանված էին մասնակցող անձերի բարձր զուարճուհեան համար։ Պարը իւրաքանչիւր ծէսի մի մասն էր. կատարվում էր երաժշտուհեամբ և կայանում էր ոչ թէ անպատնեշի շարժուձևերի, այլ չափված ու խնամքով մշակված վարժուհիւնների մէջ, որոնք արտայայտում էին յայտնի դէպքի հետ կապված զգացումները։ Ակներև է որ կրօնական գործողուհեան այս կողմը ընդունակ է մեծ զարգացման։ Բանաստեղծուհիւնն էլ է իր տուրքը մտցնում կրօնական արուեստը. չհշտված առոգանուհեամբ ու պատշաճ շարժումներով արտասանվում են աստուածների պատմուհիւնը պարունակող բնիծ ուածներ։ Զոհաբերուհիւնը տեղի է ունենում պէսպէս հանդամանուհիւններով. երգիչները մրցում են մրցանակի համար, սարքվում է ըմբիշների մենամարտը, որին մասնակցողները պարտաւոր էին դրա համար երկար ժամանակ պատրաստվել։ Ցաղմոսները պահվում են պահակով կամ այն բոյ-

սի ատով, որ արդարան է համարվում յայտնի աստուածուհեան համար։ Ծունկաչող խաղերը, որոնք այսպիսով առաջ են եկել կրօնական ծէսերից, և որոնցից մի քանիսը մեծ նշանակուհիւն էին ստացել և մասնակցողներ էին գրաւում այն բոլոր երկրներից, որտեղ խօսում էին յունարէն,—այս խաղերը հանդիսանում են իրրև յունական բարեպաշտուհեան մի նշանաւոր արտայայտուհիւն։ Յոյն կրօնի մէջ ճշնաւորականուհիւն չկայ. աստուածուհիւնը ներկայացվում է իրրև մի մարդկային գեղեցիկ անձնաւորուհիւն, և երկրպագուները նրան ներկայանում են միայն՝ իրանց պատանեկուհեան բոլոր գեղեցկուհեամբ և մատուցանում են նրան իրանց ուժն ու ճարպիկուհիւնը ամենավարպետ վարժուհիւններով, որի միջոցին ողջ քաղաքը կամ խումբը, որ զբաղի կերպով կերակրում է բազաբի բնակչուհիւնը՝ զուարճանում է այդ տեսարանով։

Այսպիսով յունաց կրօնը ամփոփում է իր կուլտի մէջ բոլոր արուեստները և գարգանում է նրանց հետ համահաւասար։ Այս շրջանում բարեպաշտուհեան անխոհեմ արտայայտուհիւնները քիչ-քիչ անյայտանում են, մարդկային զոհերի՝ և կենդանիների երկրպագելու մասին միայն հեռաւոր անկիւնադրում է լսվում։ Ծիրանեազգ կրօնն է հանդիսանում այն հանդամանքը, որ մարդկի փայլուն ու երջանիկ կերպով նոյնացնում են իրանց այն էակի հետ, որ մարդկային գեղեցկուհեան ու բարեպաշտուհեան տիպական ներկայացուցիչն է, այս նոյնացմանը մարդիկ հասնում են, ձգտելով այն բանին, որ գրքան կարելի է, լինեն գեղեցիկ, առնեն սիրուն բաներ, յօրինեն գոգարիկ առանաւորներ, մարմինները հագցնեն վերին աստիճան ուժգուհեան ու ճկունուհեան և ցոյց տան նրա կատարելուհիւնը բաղմահիւ մարմնամարզական փորձերի մէջ։ Գրօնի նպատակամբ մի այսպիսի հասկացողուհիւն, որ երկար ժամանակ իրականացած չէ Յունաստանում, մինչև հիմա ներկայանում է մարին իրրև մի տեսիլ, որ մի անգամ երևան գալուց յետոյ՝ էլ չի կարող մոռացվել։ Ով այս տեսիլն տեսել է,

նա չի կարող անարժան ու սորացուցիչ չհամարել այն բոլոր կրօնական ծէսերը, որոնց մէջ մի ձգտում չէ նկատւում դէպի ներդաշնակութիւնն ու դեղեցկութիւնը։

ԶԵՒՍ ՈՒ ԱՊՕԼԼՕՆ։ Այստեղ անկարելի է խօսել մանրագիտարար առանձին աստուածութիւնների կուլտի մասին։ Սակայն երկու աստուած, որոնք Հոմերոսի դրուածքներումն էլ բարձր են հանդիսանում միւսներից՝ պետք պահում են այդ դերազանցութիւնը։ Զեւս ևս առաւել զուտ աստուածութեան նշաններ է առնում, նրա անունը հետզհետէ չափազանց է դարձնում ուղղակի «աստուած» անունի փոխանակ, ասես թէ ուրիշ աստուածներ ամենևին չկան։—Նա աստուածների ու մարդերի հայրն է. նրան յատուկ են բարութիւնն ու սէրը։ Նա ծայրագոյն իշխանաւորն է ու սէրը, որի խօսքը համազօր է ճակատագրին, և որի ճանապարհները բարեպաշտ զգայմանց արդար են թւում. բայց նա նոյնպէս մի փրկիչ է, որին ամէն մարդ կարող է դիմել։ Նա բոլոր իմաստութեան ակրիւրն է. նրանից են ծագում բոլոր յայտնագործութիւնները։ Միւս աստուածութիւնը, որ նշանաւոր դիրք ունի՝ Ապօլլօն է, լոյսի աստուածը և իր հայր Զեւսի տեսանողն է։ Նրա դէլֆեան պատգամախօսը Յունաստանի պատգամախօսների մէջ ամենանշանաւորն էր. այս վայրը երկրի կենտրոնն էր համարւում և բոլոր յոյների ժողովատեղն էր։ Ապօլլօնի բուրմերը պատգամախօսի միջոցով զօրեղ ազդեցութիւն էին գործում յունական կեանքի վրայ, և որովհետև նրանց աստուածութիւնը, խիստ մարդասիրութիւն ու արդարութիւն պահանջելով, ամենաառնակ արուեստներ նախընչող ու միմիայն ազնիւ գիտակցութիւններ խնդրողն էր՝ այս պատճառով Ապօլլօնի կուլտը յունական կրօնի վսեմ ձևերից մէկն է հանդիսանում։

ՅՈՒՆՈՆԱՆ ՈՒՈՒ ՓՈՓՈԽՈՒՄԸ VI-ՐԴ ԴԱՐՈՒՄ Ք. Ծ. ԱՒԱՋ։ Բայց մօտ էր այն ժամանակը, երբ բանաստեղծների պատկերացրած աստուածների կուլտը, չնայելով այն ամենին, ինչ որ արել էր արուեստը այդ կուլտի համար՝ անհամապատասխան դարս եկաւ Յունաստանի գիտակցութեան VI-րդ դարում Ք. Ծ. առաջ առաջ է գնում սոսկալի արագութեամբ. յոյները արդէն առանց տարերքիայ ազդեցութիւնից դրդուելու՝ շատով սաւսրում են ընդհանրապէս մեծական ուժերին և նրանց գործադրել նոր ուղղութեանց մէջ։ Գեանքը աւելի հարուստ ու խորն է դառնում, հանգէս են գալիս նոր զգացումներ, ազգը աւելի լաւ է գիտակցում իր միութիւնը, իսկ անձնաւորութիւնը միևնոյն ժամանակ սաւսրում է աւելի բարձր գնահատել իրան ու աւելի ուժեղ երևալ։ Մի կողմից միտքը արթնանում է ինքնուրոյն կերպով գործելու, և աւանդական հաւատալիքները քննադատւում են. միւս կողմից այնպիսի հոգեոր պէտքեր են զգացվում, որոնց չէ գոհացնում հին կուլտը և որոնց համար կրօնը հարկադրւում է նոր ելքեր որոնել։

Մենք զգալի կերպով անցած կլինենք մեր համառօտ նկարագրութեան սահմանները, եթէ սկսենք պատկերացնել այն ժողովրդի կրօնական շարժումները, որ ուր է կոխում ինքնաճանաչութեան ստիճանը և անհամեմատ ուժով ու եռանդով է անում մեր առաջը մարդկային ոգու բոլոր պէսպէս յայտնութիւնները։ Բաւական է, եթէ մատնացոյց անենք յոյն ոգու այս շրջանում զարգացման մի բանի՝ ամենից աւելի աչքի ընկնող կողմերը։ Ամենից առաջ մենք նկատում ենք *ռացիոնալիզմի* երևան գալը, այսինքն հաւատալիքները քննադատելու և նրանց մէջ այն տարրը որոնելու ձգտումը, որ համաձայն է բանականութեան։ Բանականութիւնը յայտնում է իր իրաւունքը աւանդութիւնը քննելու նկատմամբ. կասկածողը շատումներ է անում լսկնդայի մէջ. բարեպաշտութեան տրամադրված մարդիկ ուշը են դարձնում յոյն տաճարների վրայ, որոնք կարող են ներգործել վսեմացնող կերպով։ Այս ուղղութիւնը կորուստ է պատճառում բազմաստուածութեան։ Որովհետև բանականութիւնը մէկ աստծուց պահանջ չէ անում, ուստի աստուածները կարող չէ ճանաչում, ուստի աստուածները կարող

են պահպանել իրանց դիրքը միայն այն պայմանով, որ լինեն այն, ինչ որ սկզբ է լինի Աստուած, այս պատճառով բոլոր աստուածները ձգտում են միատեսակ դառնալ իրանց բնաւորութեամբ. ուշագրութիւնը դիտաւորապէս կենտրոնանում է ձայրագոյն աստուածութեան, այսինքն՝ Զևսի վրայ, իսկ միւսները յարգվում են իբրև նրա մարգարէներ ու համբաւարերներ։ V-րդ դարի բանաստեղծները յայտնում են այն համոզումը, որ այն ժամանակները ընդունել էին հայրենիքի բոլոր մեծ հանճարները այն է՝ թէ աշխարհս մէկ աստուած է կառավարում։ Սա նրանց դրդում է դրատվելու աստուածային արդարադատութեան ու վարչական սկզբունքների հարցերով։ Էսքիլէսի ու Սոփոկլէսի գրուածքներում, որոնք հաւանաբար մօտաւորապէս այն ժամանակին են գրել, երբ գրել է Յոբի գրքի հեղինակը՝ մենք բազմաթիւ նոյնանման հարցեր ենք գտնում։ Ինչու մարդկութեան ամենաազնիւ բարերար Պռոմէթէոս այնպիսի տանջանքների է դատապարտված։ Ինչու մի յայտնի տոհմի վրայ նզովք է ծանրանում, և չարութիւնը չարիք է ծնում սերունդ սերունդ։ Ի՞նչ յարաբերութիւն կայ մարդկերի արատների աստուածային օրէնքների ու մարդկայիններու միջև, որոնք երբեմն հակասում են այս հնագոյն օրէնքներին։ Այսպիսով V-րդ դարի կրթուած յոյնի համար հին կրօնը իսկապէս կորցրել էր իր նշանակութիւնը։ Անհրաժեշտ արագութեամբ առաջ եկաւ այսպէս այն շարժումը, որ ուժի գանգատ էր առաջ գնում Հնդկաստանում, որ Եգիպտոսում շատ վաղ էր առաջ եկել, բայց չէր կարողացել արմատ բռնել այնտեղ, և որ պէտք է կատարի բազմաստուածութեանից հրաժարուած ամէն ժողովուրդ, եթէ նրա կրօնը յարգութիւն ունի ձգտելու։

ԿՐՕՆԱԿԱՆ ՆՈՐ ՁԳՏՈՒՄԸ. ՄԻՍՏԻՐԻՆԵՐԸ (հեթանոսութեան խորհրդաւոր ծէսերը)։ Բայց Յունաստանում բանաիմանութեան հետ միաժամանակ զարթնում է և՛ խիղճը, և յունական կրօնը համակվում է ուժի խոր զգացումով։ Անհատացել էր հոգեբանական ոգու անմիջական արտայայտութիւնը (ОБЪЕКТИВНОСТЬ), որի ժամանակ մարդը կարողանում էր ազատ երկրպագել իր նման ու մի քանի՝ իրանից բարձր էակների։ Աստուած այդ ժամանակ աւելի մեծ ու զարհուրելի է դառնում, իսկ մարդը, որ աւելի պակաս է հաւատացած իրան՝ խորհրդաւորութեան ու միստերութեան մի նոր պահանջում է սկսում զգալ։ Առաջ են գալիս պահանջութիւններ, որոնք ոչ միայն հանդիսանում են իբրև աստուածութեան հետ ունեցած բնիկերմարական՝ հաղորդութիւններ, այլ և նպատակ ունեն որ և է յանցանքի քաւութիւն կամ որ և է ապականութիւնից փարատելը։ Առաջ եկաւ միստեր լինելու պահանջութիւնը, որ անհրաժեշտ էր հոգեբանական աշխարհին, մի պահանջութիւն, որ նոր գոյն է տալիս մարդերին՝ աստուածի հետ ունեցած հաղորդակցութիւնը։ Իբրև մի արիւնոտ նոր կոմ՝ հանդիսացաւ Դիմէտրի և Դիոնիսի կուլտերի զարգացումը, որոնց մէջ մարդը պիտանում է այն կուլտերի զարգացումը, որոնց մէջ մարդը իրան զգում է իր աստուածութիւնով լիաթափուած ու ներշնչված։ Այս կուլտերից մի քանիսը առաջ են եկել Փորձ Ենիսէյում,—կուլտերի մեծ կենտրոնում, էքստազի (կատարի սքանչացման) ու ցնորքի հետ,—բայց մի քանիսը տեղական ազդեցութեան։ Սովորական մարդը ստանում էր նրանցից ծագում ունէին։ Սովորական մարդը ստանում էր նրանցից այնպիսի բաւականութիւն, որպիսին չէին տալիս նրան աստուածների վեհատեսիլ ծէսերը։ Պաշտօնական կրօնը զարձել էր ճարների վեհատեսիլ ծէսերը։ Պաշտօնական կրօնը զարձել էր մի սառը, որի հետ քիչ խօսող կրօն, բայց Դիմէտրի կամ Դիոնիսի կուլտերի մէջ,—ինչպէս յետոյ փրկչական պրլայի «Մեծ մօր» կուլտի մէջ, որ ստեղ էին հոմէացիք,—ամէն մինչ անգամ կրթութիւնից զուրկ մարդ ընդունակ էր զգալու աստուածութեան ազդեցութեամբ էնտուզիազմի և ինքնամոռացութեան ուրախութիւններ, և կարող էր մօտենալ իր երկրպագութեան առարկային, կատարելով այնպիսի գործողութիւններ, որոնց մէջ սիմբոլաբար կրկնվում էր այն, ինչ որ անցել էր աստուածութեան գլխով։

Դիմէտրի ու Դիոնիսի կուլտերի արագ աճումը այսպէս

սով այն օրէնքի մի օրինակն է հանդիսանում, որ բանակա-
նուհեան ու արուեստի կրօնը, մինչ անգամ եթէ նա ըստ
երեւոյթին յայտնել է բոլոր արդելքները՝ հնչուն կարող է ե-
լմարկուել զգացման կրօնի յարձակմանը, որ ոչնչացնում է ա-
ռաջուց ձեռք բերուած ազգ հոյակապ զարգացումը: Այն ժա-
մանակ, երբ Զեսի, Ապօլլօնի ու Վեներայի կուլտը փառա-
հեղ կերպով ծագկել էր, Դէմէտրի ու Դիոնիսի կուլտերը բա-
նսել էին արագ տարածուել: Սկզբում սրանք չինական ծէսեր
են եղած, որոնք ամենահին ժամանակներում առաջ են եկած
Սաուիկէում ու Բէօոտիայում, որտեղ պետական հանդէսների
ամօրուելեամբ պարտան գալը կամ տարեայ վերջը անց էին
կացնում կառամներով ու երգերով և տեղի էին ունենում մի
բանի գործողութիւններով, որոնք յատկապէս ներկայա-
նում էին աստուածուհեան ճակատագիրը, որ կապուած է տար-
ւոյ մի յայտնի եղանակի հետ: Գարնանը մայր-աստուածուհի
Դէմէտրա բարձրանում էր իր ստորերկրեայ աշխարհից որտեղ
որնում էր իր կորած դուստրը. կամ եթէ աշնան ամեցողու-
թեան աստուած Դիոնիս յայտնուած էր երեւում իր ընչամիներից
կամ պատառ-պատառ յօշոտուած: Այս կուլտերը, զարգանալով ի
յունական կրօնի աշքի ընկնող մասը կազմելով էին կոչուել
«միստէրիաներ», և ոչ թէ այն պատճառով որ միայն մի քա-
նիսին էին մատչելի այլ այն՝ որ նրանք իրանց մի քանի մաս-
ներում կատարուում էին խորին լռութեամբ և այնպիսի յար-
պանք ու ջերմեռանդութիւն էին առաջ բերում, որ մինչ ան-
գամ այն մի բանիների մասին չէին էլ խօսում: Այս էլ կայ,
որ ոչ ոք չէր կարողանում մանակցել այս ծէսերին, փորձից
ու մարքուելեան- մի յայտնի ժամանակաշրջանից յետոյ հան-
դիսապէս նուիրուած չլինելով: Գոնէ էլեզինեան*) միստէրիանե-
րի նկատմամբ, որոնք ամենից շատ էին տարածուած և Ե-

*) Էլեզինեան Ճանապարհի էլեզինս բազաքում Ցէրէսայի պատուին մի տաճարին
յարիպիտեմբ կատարուող հանդէս:

Հ. Թ.

լէնքի պետական կրօնի մի մասն էին՝ հին մատենագիրները
միաձայն հաստատում են, որ նոյն իսկ ընդայվելուց առաջ կա-
տարուած փորձը աչքի էր ընկնում իր վսեմացնող ու հանդի-
սաւոր բնոյթով, այնպէս որ ընդայվելու ժամանակը՝ կրօնա-
կան կեանքի բարձրագոյն կէտն էր: Նոր անդամի ընդունելու-
լեան պայմանը որի մարքուելիքն էր և պետական յան-
ցանքի բացակայութիւնը: Ըստ երեւոյթին բանաւոր ուսում
չկար. ամէն բան տեսարանով պէտք է լեզուդրէր: Ոչին
պահուում էր լարուած ու ջերմեռանդ ակնկալութեան մէջ, և
այնպէս էր համարուում լեզ խնայականութիւնն ու հայեացքի
խորութիւնը ընդայման ժամանակամիջոցի մտածելոնն էին
աճում: Վերջնական ձէսից առաջ, յայտնի ժամանակաշրջանի
ընթացքում պահեցողութիւն էր սահմանուած. ապա տեղի էր
ունենում Ելեզինից էլեզին փոխադրութիւնը այն սրբազան ճանա-
պարհով, որ սահմանել էին սրբավայրերը. ապա սկսում էին
էլեզինի աւերակներում անցուդարձ պիշերուայ մեծութեան մէջ
կորած աստուածուհուն որոնել, և վերջապէս լոյս էր տրուում
մանել չքեղ լուսաւորուած շինութիւնը: Այսպէս՝ մի անհնա-
հոյակապ տպաւորութիւն լեռնելու համար, միացած էին բո-
լոր արուեստները, մինչդեռ ժամանակ նորընծային լոյս էր
տրուում այդ միջոցին ձեռք տալ յայտնի սրբազան հաստարակ
առարկաներին ու նրանց համբուրել, և իր ընծայվելու բոպէ-
ներին նա կրկնում էր հանդիսաւոր բանաձեր:

Այս ծէսերին մասնակցողը ազատած էր համարուում իր
նախկին մեղքերից. նա մի առանձին յարաբերութեան մէջ էր
մտնում աստուածուհեան հետ, ընդունելով նրա պաշտօ-
նեայի տեսակէտը, և սկսում էր մի կեանք, որ նրան բարե-
յեսպէս բարձր էր դասում: Հնչուն է տեսնել այս կուլտի ա-
հագին դերապանցութիւնը առաքեալ մէջ կատարուող պաշտօ-
նական ծէսերից: Մանաւանդ նշանաւոր և այն հանդամանա-
քը, որ այստեղ կրօնական կապի մի նոր սկզբունք է ե-
րեւան գալիս: Մարդուն աստուածուհեան ու նրա նման մար-

դերի հետ ոչ մէկ արիւնի ու հանուր քաղաքական շահերի կապերն են կապում, այլ՝ հանուր հոգեոր կեանքի աւելի վեռեմ կապերը։ Բոլոր յոյները կարող էին Էլեկլենեան խորհուրդների անդամ ընդունվել։ Մարդը չէր ծնվում այս շրջանում, այլ ամեհեղ մուտք էր գործում իր սեփական բարի կամքով և համաւոր ճիգերով ու անձնուրացումներով։ Այսպիսով յունաց պատմութեան մէջ առաջ է գալիս բարձր դասակարգի մի հասարակութիւն, որի մէջ կարելի է լինում անցնել ցեղի ու տեղի սահմանները, և իւրաքանչիւրը կապված է մնացածների հետ, որովհետև ամենն էլ յօժարակամ են դիմել միևնոյն իդէալին։ Միստէրիաների անդամներից կազմված համայնքի ու բրիստոնէական եկեղեցու միջև եղած համեմատութիւնը այնքան մեծերն է, որ աւելորդ է երկար խօսել նրա մասին։ Քրիստոնէութեան հակառակորդները պնդում էին թէ միստէրիաների մէջ կարելի էր գտնել այս կրօնի բոլոր ճշմարտութիւնները ու ոչ բարոյականութիւնը։

ԿՐՕՆՆ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ։ Սակայն այն ժամանակը, երբ միստէրիաները մի յայտնի աստիճան բաւարարութիւն էին տալիս աստուածութեան հետ ունենալիք սերտ յարաբերութեան ծարաւին՝ յոյների մօտ սկսում վատուց զարգացած մի այլ պահանջ սկսել է բաւարարութիւն ստանալ բոլորովին ուրիշ եղանակով։ Մեր նկարագրած յոյն կրօնի մէջ շատ քիչ դաւանաբանութիւն կար։ Ո՛չ սրբազան գրքեր կան, ոչ աստուածաբանութիւն, ոչ կրօնական ուսում։ Երբ յունական ոգին արդնացել էր մտաւոր կեանքով ապրելու և պահանջ էր յայտնվել իրան հաշիւ տալու աշխարհի շինուածքի ու բոլոր բաների, այլ և մարդու ծագման մասին՝ բանից դուրս եկաւ, որ յունական կրօնը շատ քիչ է ընդունակ այդպիսի մի պահանջի բաւարարութիւն տալու։ Սակայն մարդը միշտ կրօնի մէջ էր որոնում այս հարցերի պատասխանները, և այն կրօնը որ անընդունակ է տալու այդ պատասխանները կամ, որ բուդդհայականութեան պէս՝ ուղղակի հրաժարվում է այս

հարցից՝ վտանգաւոր վիճակի մէջ է գտնվում։ Եթէ սրբավայրը չունի մի վարդապետութիւն, որ բացատրէ մարդուն նրա ծագումն ու ու երկրի կապը՝ ապա նա այդ վարդապետութիւնը կսկսի մի ուրիշ տեղ որոնել, և կրօնը չի ազդի նրա հայեացքի վրայ։ Մի ուրիշ տեսակի այլաբնաւորվա (երկրից մկկի ընտրութիւն) է բուդդհայականութեան բարդը, որի մէջ մարդը համաձայնական վարդապետութիւն չունենալով՝ ընկնում է մեռաւոր անզգայութեան (anarin) մէջ։

Վերջինը սակայն չէր կարող պատահել յոյներին, և այս կէտից նայելով, նրանց վիճակը ուրիշ բոլոր ժողովուրդների վիճակից մի այլ տեսակի վիճակ դուրս եկաւ։ Նրանց մեռաւոր պարզութիւն չտուց, երբ նրանք սկսել էին ամէն տեղ բոլոր երևոյթների նախապատճառը որոնել, տարակոյս չունենալով որ աշխարհում իշխում է մի բանական կարգ ու կանոն, և աշխատելով երբեմն մէկ, երբեմն միւս բանականով բանալ աշխատելով երբեմն մէկ, երբեմն միւս բանականով բանալ աշխարհային պատնէշը,—տեսնում ենք որ ինքը կրօնը ժամանակների ընթացքում և մի քանի փորձ անելուց յետոյ ուղղակի և մի քանի փորձ անելուց յետոյ ուղղակի և մի քանի փորձ անելուց յետոյ ուղղակի

թագաւոր է, և ողջ երկրի տանդողը»։ Դիոնիս առաւածն էլ է որփէոսեան մաեննադիրների կողմից դլուխ կանդնում առեղծադործութեան բոլոր պրօցէսի մէջ։ Այն առասպելը, թէ ինչպէս նա յօշոտուել էր, և նրա մսխիրը գրուել ողջ աշխարհով՝ սիմբօլապէս պատկերացնում է բոլոր երկրի կեանքի մի և նոյն ազբիւրի հետ կապուած լինելու մեծ միտքը։ Տրուում էին նաև դժոխքի ու նրա մէջ եղած ոգիների նկարագրութիւնները, որոնք համապատասխան էին նաև անձնական պատասխանատուութեան աճող գիտակցութեանը, այլ և տոգիփոխութիւնը (метемпсихозъ), որի միջով անցնելու են հոգիները։ Այս վարդապետութիւնը ունեցել է ազդեցութիւն, որի չափերը սակայն դժուար է. նա ներդործում էր թատերդահների վրայ, երբ նրանք փորձում էին յեղաշրջել իրանց երկրի հաւատալիքները, տալով նրանց բարոյական բնոյթ. այդ ազդեցութիւնը Պլատոնի վրայ էլ նկատվեց ու արտայայտվեց միստէրիաների մէջ։ Այս վարդապետութիւնը իր սիմբական գարդարանքով մի նոր երևոյթ ծնեց յունաց կրօնի մէջ, այն է՝ երկրէ երկիր շրջող քարոզիչներ, որոնք ամէն տեղ ուրոյն անձնաւորութիւններ էին հրապիրում՝ մատնելու իրանց հոգիների փրկութեան մասին և որոնք, երբեմն էլ օտարոտի լինի, գործ էին տալիս յայտնի հմայք՝ մարդիկ փրկութեան ճանապարհի բերելու համար։

Սակայն յունական կրօնի վերանորոգումը այսպէս չէր առաջ գար։ Յունաստանի վրայ կրօնը ոչ թէ բուրմների, այլ փիլիսոփաների գործ էր։ Թէպէտ փիլիսոփայական վարդապետութեան նշանաւոր մասը բուն երևոյթների բացատրական է ու կրօնի համար կործանիչ,—որովհետև Յունաստանը ունէր իր կրօնական սիէպտիկները, որոնք ծաղր ու ծանակի առարկաներ էին ուղղում գոյութիւն ունեցող հաւատալիքներին, ունէր իր ապիստաիկները՝ անդէանները*), որոնք կարծում էին թէ

*) Ագանդաւորները։

Հ. Թ.

աստուածների վերաբերմամբ հաւատոխտակէս ոչինչ չի կարելի պնդել, և մինչ անգամ՝ իր աշխարհական մտածողները, որոնք այնպէս էին ընդունում թէ կրօնը բուրմերի ու վարիչների հնարած բանն է՝ լոկ իրանց շահասիրական նպատակներին հասնելու համար,—սակայն յոյն փիլիսոփայութիւնը հանուր առմամբ դրական բնոյթ ունէր մինչ անգամ հաւատի գործերում և աշխատում էր մի կրօն հաստատել մարդ ամուր հիմքի վրայ։ Մարդկային ոգու այս մեծ շարժման մէջ յոյն մտածողները՝ Սոկրատ, Պլատոն, Արիստոտէլ, շնորհելով միւսների մասին՝ աշխատում էին այն մի և նոյն խնդրի վրայ, որ դրաղեցնում էր Իսրայէլի մարգարէներին և մի հանգամանալից հիմն էին առնում մի Աստծու իշխանութեան մասին՝ մի անսահման իմաստուն ու բարի էակի, ամէն գեղեցկութեան ազբիւրի, աիեղերքում կատարվող ամէն բանի առեղծողի, և որ փոխարինում է շատ՝ անհատատ ու լծոյլ աստուածների, որոնք իշխելիս են եղել առաջ։ Յունական գրողները շատ կողմերով քրիստոնէութեան կարապետներ են եղած։ Ինչպէս իրանց տաճարից անջատված հրէաները նոր սկզբունքի վրայ հիմնված մի կրօնական դաշնադրութիւն են հաստատում՝ առանց որ և է պոհարերութեան, մի դաշնադրութիւն, որ կազմված է լոկ հոգևոր բարեպաշտական վարժութիւններից՝ այնպէս էլ յոյները, որոնց համար իրանց տաճարները այնքան քիչ նշանակութիւն ունէին, որ և է ուսուցչի պակասութեամբ ճշմարտութեան լրջմիտ որոնողների փոքրիկ համայնքներ են կազմում։ Քրիստոնէութեան առաջին ժամանակների արժանեան քրիստոնեայ պետականները փիլիսոփայի խօսքը համարում էին մի նմուշ, որի նմանութեամբ կազմվելու էր և քրիստոնէական քարոզը։ Մի բանի փիլիսոփայական դպրոցներ անձնաւոր եղան ճշմարիտ հոգևական գործունէութեան, վերահսկողութիւն սահմանելով իրանց անդամների վրայ և աշխատելով համակերպել իրանց բարոյական կեանքն ու սովորոյթները ճշմարիտ իմաստութեան պահանջներին։

Այսպիսով յունական հողի վրայ, տաճարների ազդեցութեան վերանալուց յետոյ, առաջ եկաւ այն, ինչ որ կարող է իրաւացի կերպով կոչվել յունական երկրորդ կրօն։ Այս կրօնը նուաճեց հռոմէական աշխարհը և քրիստոնէութեան յայտնված ժամանակ կրթված մարդերի մէջ կրօնի գերակշռող ձևն էր։ Ի՛նչպէս դաշնագրութեան արտաքին ձևի նկատմամբ, այնպէս էլ Աստծու մասին իր բարոզած վարդապետութեան մէջ, որ իր ապաւայ զարգացմամբ շատ նման էր հրէական վարդապետութեանը, այնպէս էլ մարի՝ բարոյագիտական ինդիրների ու անհատի բարոյական կեանքի վրայ կենտրոնանալովը այս կրօնը ըստ բնութեան մի զօրեղ նախապատրաստութիւն էր քրիստոնէութեան համար։ Դա կրօն չէր՝ բառի բուն նշանակութեամբ, քանի որ ոչ պատմական հիմք ունէր, ոչ հաւատալիք ու ծիսական կողմեր, որոնք բաւականաչափ որոշված լինէին հասարակ ժողովրդի իւրացման համար։

ԳԼՈՒԽ Դ

ՀՌՈՄ ԿՐՕՆԸ

Իրանք հռոմայեցիք իրանց պատմութեան յայտնի շրջանում իրանց սեփական աստուածները նոյնացնում էին Յունաստանի աստուածների հետ և շատ բան էին առել յունաց ծէսերից ու յոյն առասպելաբանութիւնից, այնպէս որ կարծվում էր թէ հռոմէական ու յունական կրօնները էապէս միևնոյնն են։ Առաջին դարերի քրիստոնեայ մատենագիրների հաշւով Յունաստանի ու Հռոմի կրօնները միևնոյն համակարգութեան կրօններ են. և մինչև հիմա այն հայեացքն է տիրում, թէ մի հին հեթանոսական կրօն է եղել, որ այդ երկու երկրներում ունեցել է իր տեղական առանձնայատկութիւնները, բայց իսկապէս մի և նոյն է եղել թէ Յունաստանում ու թէ Հռոմում։

ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿՐՕՆԸ ՅՈՒՆԱԿԱՆԻՑ ՏԱՐԲԵՐ Է։ Թօրձը սակայն այնպիսի ընթացք էր ստացել, որ երբ յունական կրօնը յաղթեց Հռոմին՝ Իտալիան ունէր իր սեփական հնագոյն կրօնը, որ չէր ոչնչացրել փայլուն եկւորը, այլ շարունակ գոյութիւն ունէր նրա հետ միասին, երբէք բոլորովին չյաղթվելով նրան։ Հռոմայեցիք այնքան մտածող ժողովուրդ չէին, որքան գործունեայ։ Քաղաքականութեան գործում նրանք զգալի կերպով բարձր էին կանգնած մնացած աշխարհից, բայց մտածողութեան ու երևակայութեան կողմից երեխաներ էին. այս պատճառով բանն այն տեղը հասաւ, որ նրանք գաղափարներ էին առնում այս կամ այն ազգերից և կազմում նրանցից

մի ամրողջ սիստեմ, որ օգտակար էր իրանց, այն էլ նրանց ոչ թէ ինքն օրգանիսմն էր պատկանում, այլ նրա մասնիմը կազմող մասներից մի քանիսը։

Սրա նկատմամբ մենք ամենից առաջ հարց պէտք է տանք մեզ, թէ ինչպիսի կրօն էր հռոմայեցիների կրօնը նրանց յունական դպրոցների ազդեցութեան ենթարկուելուց առաջ։ Նրանց հնագոյն կրօնը հիւսում է իրանց սրբազան տարվայ օրացոյցի մէջ, աստուածների այն ցուցակներում, որ պահել են մեզ համար եկեղեցական հայրերի գրուածքները, հնագոյն ժամանակներից առաջ եկած անթիւ սովորոյթների ու հիմնարկութեանց մէջ։

Հին Հռոմի սրբազան տարին երկրագործական տարին է։ Տօները վերաբերվում են ցանքին, բերքին, հնձին, այգեկութիւն, տաւարին ու հօտերին, գոյերին, անասնային ոգիներին, տոհմաններին, ապրուրներին և արեւի ու լուսնի փոփոխութիւններին։ Կան ընտանեկան տօնախմբութիւններ, ընտանեկան օջախի տօնախմբութիւններ, շեմբանական ոգիների, ննջեցեալների ոգիների, տան հրեշտակների տօնախմբութիւններ։ Կան նաև ազգական գործերի կամ գեակ ու նրա բերանի մօտ եղած նաւամատոյցի կամ թէ հասարակ ժողովրդի արհեստների հետ կապ ունեցող տօնախմբութիւններ։ Օրացոյցը լուռ ինքնան այն տպաւորութիւնն է անում, որ նրան գործածող տոհմերը սկզբում երկրագործութեամբ է եղել պարապելիս, իսկ յետոյ նրան կցել է ուրիշ զանազան պարապմունք. այս օրացոյցի մէջ ոչինչ այնպիսի բան չկայ, որ հակասէր այն ենթադրութեանը, թէ հռոմէական կրօնը սկիզբն է առել դաշտերում ու անտառներում։

Այս բանին չեն հակասում նոյն իսկ *հռոմէական հնագոյն աստուածները*։ Նրանք տակաւին ներկայանում են իրրև մի շատ իր-տեսակի աստուածների խումբ։ Մի կողմ թողնելով առ այժմ մեծ աստուածները՝ ուշք գարձնենք երկրագործական երկու աստուածութեան վրայ. նրանցից մէկը *Սատուրնոս* է, միւսը՝ տոհմանների աստուած *Տէրմին*։ Սրանք գործառնական կոչված աստուածութիւններ են, որոնց մենք հանդիպում էինք Յունաստանում, իրանց անունը առանում են այն գործողութիւնից կամ գաղափարից, որոնց հետ կապված են։ Սատուրնոս վար ու ցանքի աստուած է։ Նրա անունը երբեմն վար ու ցանքով պարապող մարդ է նշանակում. Տէրմին ուղղակի սահմանի անունն է։ Նայելով այս օրինակներին՝ տեսնում ենք որ աստուածութիւնը այն մեծ էակը չէ, որի իշխանութեան տակ գտնվում են այս գործառնութիւնները միանների հետ միաժամանակ։ Նա իսկապէս կապված է մի յայտնի պաշտօնի հետ. նրան նա պարտական է իր ամբողջ աստուածութեամբ։ Բայց սրանք լոկ առանձին օրինակներ են. մի և նոյնը կարելի է ասել բոլոր կամ համարեա բոլոր յայտնապէս հռոմէական հաստատուած աստուածների մասին. նրանք բոլորը, խօսելով համապէս՝ գործառնական էակներ են։ Ամեն աստուածութիւն՝ ունի իր առարկայի կամ գործողութեան անունն է կրում, միւս կողմից՝ չկայ մի առարկայ կամ գործողութիւն, որ չունենայ իր աստուածը։ Զարմանալի է, թէ մինչև որ աստիճան է հաստատած այս էակների միջև աշխատանքի բաժանումը։ *Սիլվանն* անտառի աստուածն է, *Լիմֆան* հեղուկ աստուածուհին, և իւրաքանչիւր անտառ, իւրաքանչիւր հեղուկ իր *Սիլվանը*, իր *Լիմֆան* ունի։ *Սէլեա* գործ ունի հատիկի հետ միայն, *Տուտիլինա* նրա բուսնիլը, *Սեգէտիա*՝ բուսած հատիկի հետ, *Տուտիլինա*՝ շեմբարանի ածած հատիկի հետ, *Նօրօա*՝ յարդի հանդոյցների հետ։ Կայ դռան աստուած, օթակների աստուածուհի, շեմքի աստուած։ Իւրաքանչիւր գործողութեան երեխայական տարիներում ունի իր աստուածը կամ աստուածուհին։ *Երեխայի* մօտ գտնվում է *Գունիա*, երբ նա պառկած է օրօրոցում, *Սատինա*՝ երբ ոտքի է կանգնում, *Էդուկա*՝ երբ ուտում է, *Լոկուցիյ*՝ երբ սկսում է խօսել, *Ռէօնա*՝ երբ ուղղուում է դէպի իր մայրը, *Աբէօնա*՝ երբ հեռանում է նրանից. երկ-

խայտալեան 43 այսպիսի աստուածների անուններ են տալիս։

Սովորաբար, նկատի ունենալով այս բազմաթիւ մանր աստուածութիւնները՝ ասում են թէ հռոմայեցին շատ բարեպաշտ էր և ամէն գործողութեան, ամէն բանի մէջ, ինչին որ անուն էր տալիս՝ մի ինչ որ խորհրդաւոր, գերբնական բան էր տեսնում։ Ասում են թէ յոյնը ամէն բան իրան հաւասար է տեսնում և աստուածներին կցում է մարդկային յատկութիւններ ունեցող մի աստուածութիւն. իրան շրջապատող ամէն բան նա բացատրում է մարդկային ոգով։ Հռոմայեցին, սրա հակառակ, աստուածների մէջ մի ինչ որ խորհրդաւոր բան է տեսնում և նրանց լրացնում է ոչ-մարդկային աստուածներով։ Այս ուղիղ է. բայց այս հռոմէական աստուածների վերաբերմամբ հարց պէտք է տանք մեզ՝ թէ նրանք կրօնական զարգացման ո՞ր աստիճանին են պատկանում. այդեօք նրանց մէջ կրօնական գիտակցութեան մի նախնական թէ զարգացած բնաստիճան է երևան գալիս։ Նկատված է որ աստուածների այս անունները բոլորն էլ յատկանիշներ կամ ածականներ են. և ենթադրութիւն է արված, որ սրանք մէկ մեծ աստուածութեան կամ, քանի որ իրանցից ոմանք արական, ոմանք էլ իգական սեռի են՝ մեծ արական ու մեծ իգական աստուածութեան էպիտետներն (մակդիրները) են եղած։ Գոյականը իրր թէ դուրս է եկել գործածութիւնից, բայց դեռ ևս հռոմայեցու աչքի առաջն էր գտնվում. այս պատճառով աստուածային անունների կատեգորիաները ոչ թէ զանազան անձնաւորութեանց նշանակութիւններ են, այլ՝ մի և նոյն անձնաւորութեան մականունները, որ այս բոլոր անթիւ յայտնութիւնների մէջ հաւատարատէս ներկայով է համարվում։ Բայց հեշտ չէ բացատրելը թէ, եթէ նախնական Իտալիան հասել էր աստուածութեան մէկ լինելու հասկացողութեանը՝ աստուածութիւնը ինչպէս էր աստրբաժանվել այսպէս զարմանալի կերպով, կամ ինչպէս էր կորել նրա սեփական անունն ու բնոյթը։ Ւեթէ բնական է ենթադրել, թէ

Հռոմի բոլոր մանր աստուածութիւնները հին լատինների աստուածութիւններն են եղած և պաշտվում էին ըստ ինքեան։ Նրանք ներկայանում են իբրև անիմիսմ կոչված մտածութեան բնաստիճան, երբ մարդիկ այնպէս են կարծում, թէ բնութեան իւրաքանչիւր մասը իր ոգին ունի, և աներևոյթ էակների թիւը հաւասար է անվերջ մեծութեան։ Մինչդեռ արիական միւս ցեղերը արդէն այս բնաստիճանը անցել էին այն ժամանակ, երբ մենք առաջին անգամն ենք հանդիպում նրանց, և հասել էին մեծ աստուածներին հաւատալու աստիճանին, որոնք բնութեան ընդարձակ գաւառներն են կառավարում,—լատինները, որոնց միտքը աւելի գործնեայ էր քան արտադրող՝ այս բոլորը ուշ արին, իսկ դրա փոխարէն՝ ոգիների աշխարհը կազմակերպեցին չտեսնված լրութեամբ։ Այս պատճառով նրանք աստուածներ չունէին՝ բառի բուն նշանակութեամբ, այլ կային միմիայն բազմաթիւ ոգիներ։ Մինչ անդամ այն էակները, որոնք յետոյ մեծ աստուածներ դարձան, սկզբում լոկ գործառնական ոգիներ էին։ *Ջանուս*, որ յետոյ հռոմէական գլխաւոր աստուածներից մէկն էր դարձել՝ սկզբում «յայտնագործութեան ոգի» էր,—մի վերացում, որ բազմաթիւ դէպքերի կարող էր յարմարվել. մի որ և է Ջանուսի կարող էր մարդ իր ինդրով դիմել ամէն այսպիսի գործողութեան ժամանակ։ *Վէստա* օջախի ոգին է. ամէն ընտանիք իր Վէստան ունէր, թէ նախկին ու թէ յետագայ ժամանակներում։ *Ինոծնա* մէկը չէ, նրանից շատ կայ, ինչպէս ամէն տղամարդ իր պահապան հրեշտակին ունի, իր հոգևոր «ես»ը, որ գնում է հետը ամէն տեղ կամ պահպանում նրան, այնպէս էլ ամէն կին ունէր ոչ թէ իր պահապան հրեշտակը, այլ՝ իր *Ինոծնան*։ Շատ Վէստաներ, շատ Ինոծնաներ տակը, այլ՝ իր *Ինոծնան*։ Շատ Վէստաներ, շատ Ինոծնաներ են եղել. և հազիւ թէ վերջը միայն երևան եկաւ մեծ աստուածուհին, որին ամէնքը կարող էին դիմել։ Յետագայ ժամանակի հռոմի միւս մեծ աստուածները հէնց այդպիսի սկզբնական պատմութիւն ունեն։ *Մարս* առաջ հացահատիկի

բանելու ոգին էր, Դիանա՝ ծառի ոգին, ինքը Ցուլիս կամ Դիովիս,—թէպէտ նրա անունը առուպաբանօրէն յունական Զևսին ու սանսկրիտ Դիաուսին է նման, և թէպէտ վերջը, այդ աստուածուհիների պէս, երկնքի աստուած է դառնում,—սկզբում գիտու ոգին էր, և նրան, ինչպէս ամէն գիտի, ամէն ագարակի Յուլիսի՝ գիտու ծնողին, ապրիլին էր երկրպագուհին տրվում, երբ շալափով ծակվում էր առաջին տակառիկը։ Այսպէս, լատինների աստուածները գոյութիւն չունեն լոռ ինքեան և չունեն իրանց սեփական բնորոշ կողմերը. նրանցից իւրաքանչիւրը սահմանափակված է մի յայտնի առարկայով կամ գործողութեամբ, որոնցից աստուածները առանում են իրանց բնոյթը. յայտնի առարկայի կամ գործողութեան սահմանից դուրս նրանց լիագաւորութիւնը վերջանում է։ Մի և նոյնը կարելի ասել տնային ու ընտանեկան աստուածութիւնների մասին, որանց կուռքը, զուգ, հռոմէական կրօնի պէսաւոր կողմն է եղել։ Լարները պատկերացնում են ընտանիքի վախճանված նախնիները. այս նախնիները տան այն տեղի մօտ են ապրում, որտեղ նրանք թաղվել են, և գեղ ևս ընտանիքի ներկայացուցիչներին են հանդիսանում, ինչպէս և կենդանութեան ժամանակ. ամէն օր նրանց երկրպագում են ապօթքներով և կերակուր ու խմելիք են մատուցանում. նրանցում ընտանիքը այնքան մեռածներին չէ յարգում, թէպէտ նրանց դիմակները կախված են պատերից՝ որքան իր սեփական ընտանիքի յարատևութեան պատճառը։ Պէնատները կամ հռեմարանական ոգիները պաշտում են Լարերի հետ, կերպարանաւորելով ընտանեկան բարեկեցութեան անընդհատ լինելու պատճառը։ Ննջեցեալների աւելի հանուր անունը Մանէը է, այսինքն՝ բարիներ. նրանք բնակում են գետնի տակը. տնախնամութիւններին նրանց պատուին ոչ մի ուրոյն անձնաւորութիւններ են յարգվում, այլ՝ հանրապէս մեռելները՝ ընտանիքի ու ժողովրդի նախկին նեցուկները։

ՀԻՈՄԻՆԿԱՆ ԿՈՒԼՏԻ բնոյթը որոշվում է նրա առար-

կանների բնոյթով։ Որովհետև իւրաքանչիւր աստուածութեան հիմքը նիւթական առարկայի կամ գործողութեան մէջ է, այս պատճառով աստուածներ պատկերացնելու կարիք էլ չկայ. որտեղ առարկայ կամ գործողութիւն կայ՝ այնտեղ էլ աստուած կայ, աստուածութեան բնոյթը արտայայտվում է առարկայի կամ գործողութեան մէջ, այլապէս չի էլ կարող արտայայտվել։ Այսպիսի աստուածները տաճարներին էլ չէին կարող պիտանի լինել։ Եւ կարող էին արդեօք նրանք բրմերի պահանջ ունենալ, եթէ նրանց անունը գիտեցող (իսկ սրանից շատ բան էր կախված) ամէն մարդ կարող էր յարաբերութիւն ունենալ հետները՝ առարկան տեսնելիս կամ այն գործողութեան մասնակցելիս, որի հետ կապ ունէին աստուածութիւնները։ Ո՛չ էլ շատ բան կարելի է պատմել նմանօրինակ աստուածների արկածների մասին,—հռոմայեցիք առասպելաբանութիւն չունեն։ Նրանց երկրպագած էակները ոչ մի անձնաւորութիւններ, այլ վերացականութիւններ են։ Դէմքը այնքան էլ տարբեր նրանց, որ լինեն արական կամ իգական աստուածութիւններ, բայց նրանք՝ իրանց բնական ծագումից անկախ՝ չեն կարող շարժվել կամ գործել. չեն կարող ամուսնանալ, չեն կարող սկանդալներ սարքել, չեն կարող սկանդալներ սարքել, հիմք էլ չի կարող լինել, որ մարդ այդպիսի էակների հետ նոյնացնի մեռած մեծ մարդուն. որտեղ իսկական աստուածներ կան՝ այնտեղ ոչ կիսաստուածներ կարող են լինել, ոչ էլ հերոսներ։ Այսպիսի էակները լոկ սահմանափակ իշխանութիւն կարող են գործ դնել. բարեկեցիկ կեանք տալուց կամ պահպանելուց զատ՝ նրանք ոչինչ չեն կարող անել. այն էլ՝ իրաքանչիւրը այն նեղ շրջանում, որի հետ ինքը գործ ունի։

Այդպիսի էակներին վերաբերող կուլտը նպատակն է՝ տիրել յայտնի գործողութեան հետ կապ ունեցող ոգուն կամ աստուածութեանը, վարվել հետը այնպէս, որ կարելի լինի կատեցնել նրա անօգորմ բայլը, որ միշտ երկիւղալի է հռոմայեցու համար, և երաշխաւորվել նրան պաշտպանելու մասին։

Տնային աստուածները հաստատ կուլտ ունեցող էակներ են, բայց հռոմայեցին տնային կուլտից զատ՝ իւրաքանչիւր առանձին դէպքում պէտք է վճռէր այն հարցը, թէ ինքը որ աստուածութեանը պէտք է դիմի։ Կարող է պատահել որ նա այն աստուածութիւնը չընտրի, որը պէտք էր. և այն ժամանակ նրա երկրպագութիւնը զուր կանցի։ Եթէ նա աստուածութեանը կանուանի, ինչպէս հարկն է՝ նա կլսի նրան. այս պատճառով կասկածելու դէպքում նա մի քանի աստուածների անուն է տալիս, յուսալով որ նրանցից մէկն ու մէկը ցանկալի աստուածութիւնը կլինի, կամ թէ միանգամայն բոլոր աստուածներին է կանչում։ Կասկածելի դէպքերում նա ասում է. «ով աստուած կամ աստուածուհի, կամ ինչ անունով էլ որ դու ցանկանում ես կոչվել . . .». իւրաքանչիւր աստուած իր ճաշակն ու մակաբուծն ունի, և զուր կլինէր, եթէ մէկը ժամանակ նրանց՝ սրա մասին չմտածած. այս պատճառով շատ հին ժամանակները զանազան աստուածների ցուցակներ էին կազմւում հանուր գործածութեան համար, նշանակելով թէ ինչպէս էր պէտք դիմել նրանց։ Լատիներէն «indigito» բառը որ նշանակում է՝ ցոյց եմ տալիս, և գուրս է գալի «digitus» այսինքն՝ «մատ» բառից՝ աստծու մասին խօսելիս գործածվող մի տերմին է. աստուածների ցուցակները՝ նրանց իսկական մականուններով կոչվում էին «indigitamenta». իսկ մէջները յիշված աստուածները՝ «Dii indigetes»։ Երկրպագութեան արարողութիւնը աչքի է ընկնում իր լրջութեամբ ու ձեականութեամբ. նա պէտք է կատարվի ճշտութեամբ ու կանոնով. արարողութեան միջոցին լռութիւն պէտք է պահպանվի. զոհ բերողը կրկնում է դէպքին յարմարվող ազօթքը այն մարդու հետ, ով գիտէ այդ ազօթքը, մտքում պահած լինելով. յարգողները ծածկում են իրանց գլխները։ Այս կողմից հռոմէական ծիսականութիւնը զգալի կերպով տարբերվում է յունականից։ Մօմղէնի ասելով՝ յոյնը ազօթում է բաց գլխով, որովհետև նրա ազօթքը աստուածներին ուղղված մի հայեացք

էր. իսկ հռոմայեցին՝ գլուխը ծածկած. որովհետև նրա ազօթքը մի մտաւոր վարժութիւն էր, և այս բանում կերման ուսումնականը տեսնում է կրօնների միջև եղած բնորոշ տարբերութիւնը։ Հռոմէական ծէսի աւելի ժամանակակից մեկնութիւնն այն է, որ առաջ է եկել հետևեալից. երկրպագուն վախենալիս է եղել տեսնելու այն աստուածութիւնը, որի անունը նա ճիշտ չգիտէր էր ինքը. իսկ դա վտանգաւոր էր լինելու։ Եթէ ծէսի մէջ մի և է մի սխալ է անվում, նշանակում է երկրպագութեան արարողութիւնը զուր է անցել և նորից պէտք է կրկնվի։

Մեծ ընտանեաց։ Ահա թէ ինչպէս է տրամաբանվում այն սիստէմը, որի վրայ հիմնված է եղել հռոմէական կրօնը, որ տարբերվում էր վերջին ժամանակները իրան միացած տարաշխարհիկ տարրերից. բայց այս կրօնը միայն այն ժամանակն է լուսաբանվում պատմութեան կողմից, երբ վերացականութիւնների կամ մանր ոգիների նմանօրինակ կուլտից սկսում է բարձրանալ ու անցնել դէպի աստուածների կուլտը։ Լատինները մեծ աստուածների կուլտի ուղղութեամբ մի բայլ արել էին ըստ երևոյթին աւելի խոշոր հասարակական կազմակերպութիւնների զարգացման ազդեցութեան տակ։ Մինչդեռ ընտանեկան կրօնները մինչև վերջն էին տակում՝ ցեղը, ինչպէս և նահանգական ուրիշ ժողովուրդներ, ընտանեկանից մի աւելի լայն կրօն ունէր. իսկ ցեղերի դաշնակցութիւնը արտադրել էր մի աւելի մեծ չափով կրօն։ Հին Հռոմի պատմութիւնը կապված է ցեղերի այսպէս հետզհետէ ձուլվելով բազաբական աւելի խոշոր միաւորներ դառնալուց։ Երբ սկսում է պատմութիւնը՝ «Հռոմը ներկայանում է իբրև մի բոլորովին կազմակերպված ու առանձնացած բազաբ». սակայն Հռոմը բաղկացած է մի քանի ցեղերից, որոնք պահում են շատ՝ առանձին հիմնարկութիւններ։ Ցեղապայ ժամանակի կրօնը վկայում է ցեղային յաջորդական առանձնացումների մասին։ «Deus Fidius», այսինքն՝ հաւատարմութեան աստուածը դաշնակցութեան սրբա-

դան անձնաւորացումն է։ *Մարս* ու *Կվիրին* բոլորովին նման են միմեանց, և նրանցից իւրաքանչիւրը ունի մի ֆլամին կամ դոհարանի փուքս և սաուերիու սալի կամ կաքաւուղ։ Մարս՝ հռոմէական, իսկ Կվիրին սաբինական աստուածութիւն է. և մենք տեսնում ենք որ այդ երկու ցեղերը իրանց միաւորվելուց առաջ շատ նման կուլտեր են ունեցել, որոնք պահպանվել են միաւորվելուց էլ յետոյ։ Լատինական feriae latinae տօնախմբութիւնը, որ կատարվում էր Ալբրանական լեռան վրայ՝ կատարում են բոլոր լատինական ցեղերը և հանդիսանում է իբրև նրանց դաշնակցութեան յիշատակ։ Յովիս նշանակութիւն է ստանում բազաբային կեանքի զարգանալովը. նրան սկսում են անուանել հայր Յովիս, Լուպիթար (iov-pater). շատ լուսնթագներ կան, բայց Հռոմ քաղաքի *Լուսնթագը* ամենից մեծն ու լաւն է. նա կրում է Optimus Maximus անունը։ Նա բարձր է Մարսից, որ հին ժամանակները հռոմայեցիների առաջին աստուածութիւնն էր, որի անունն էր կրում տարուայ առաջին ամիսը նրա՝ Յանուս ու մարդիչ Փեբրուի (Februus) ամիսների կցվելուց առաջ։ Միակ աստուածութիւնը, որի համար դոյութիւն ունէր պատկերը՝ սկզբնաւորութեան պետական մեծ աստուած Յանուսն էր. Մարս սիմբոլապէս պատկերացվում էր իբրև նիզակ, իսկ Յանուս ներկայանում էր երկու դէմք ունեցող մարդու կերպարանքով։ Վերջապէս՝ պետական օջախի աստուածուհին, խօսք չկայ, որ մի մեծ կուլտի տէր մեծ աստուածութիւն էր։

Այստեղ մենք յիշելու ենք Հռոմէական կրօնի մի այնպիսի կողմը, որ անշուշտ արմատ է բռնել նախապատմական խաւարի մէջ, բայց որը դժուար թէ կարողանար կազմակերպվել այնպէս, ինչպէս մենք տեսնում ենք, քանի որ մեծ աստուածները չեն հասել հզօրութեան յայտնի աստիճանին։ Հռոմայեցիք հաւատում էին որ աստուածները շարունակ նշանաց կերպով ազդում են մարդկերին, մանաւանդ օդի մէջ տեղի ունեցող երեւոյթների՝ օր. որոտման ու փայլակի, լճլռչունների լռութեան միջոցով, այլ և ուրիշ զանազան միջոցներով։ Ազգային նշաններից մի քանիսը հատարակ նշաններ էին, այնպէս որ ամէն մարդ կարող էր ասել՝ բազմաթիւ նշաններ են նրանք, թէ ոչ, բայց մի քանիսն էլ ոչ ոք չէր կարողանում մեկնել, բացի այն մարդերից, որոնք մանաւանդ տարած էին ճանաչում առարկան։ Եւ այդպիսիներին դիմում էին որ և է գործ սկսելուց առաջ՝ ուրոյն անձնաւորութիւններ կամ պետութիւնը, խնդրելով նրանց հետազօտել այն նշանները, որոնք կապ ունեն յայտնի դէպքի հետ։ Սա հռոմայեցոց համար գործ էր մի մեծ ու կարեւոր գործ և որոշ նոյ առաջնորդվող բուրմերը մեծ ազդեցութիւն էին ձեռք բերել։

ՍՐԲԱԶԱՆ ԸՆՁԵՐԸ։ Շատ հին ժամանակները ընտանիքի կրօնի մէջ բուրմը ընտանիքի հայրն էր, ցեղային կրօնի մէջ՝ կառավարող ընտանիքի մեծը, որովհետև ցեղը լոկ մի շատացած (մեծացած) ընտանիք էր. իսկ քաղաքում, որ կազմակերպված էր մի և նոյն օրինակով՝ բուրմը լճապատրաստ էր։ Պրօնը պետական ծառայութեան դասաւոր կողմն էր. լճապատրաստը պէտք է կատարէր զոհարերութեան արարողութիւնը, հոգար, որ խորհուրդ հարցնելին աստուածներից, հնազանդ լինէր, դասէր և պատժէր օրինազանցներին ու աստուածների զայրոյթը իրանց վրայ բերողներին։ Բայց երբ պետութիւնը հետզհետէ ընդարձակվեց, այն ժամանակ, լճապատրաստը այդ պարտաւորութիւնների մի մասից ազատ անելու համար՝ ստեղծվեցին զանազան պաշտօններ. երբ հին կուլտերին միացան նորերը՝ նրանց հոգատարութիւնը յանձնվեց առանձին մարդերի կամ առանձին ընկերութիւնների. և հին Հռոմի այս բուրմերն ու սրբազան միաբանութիւնները շարունակում էին իրանց դոյութիւնը երկար դարերի ընթացքում, և այս հատարակական պաշտօնը կատարում էին նոյն իսկ այն ժամանակ, երբ նրանց խօսքերն ու գործերը վայրկեան կորցրել էին իրանց բոլոր նշանակութիւնը։ Սկսելով մանա-

պետական կուլտերի հետ կապ ունեցող սրբազան անձերից՝ մենք ամենից առաջ հանդիպում ենք Մարսի, Կվիրինի ու Յովիսի (fl. Martialis, Quirinalis, Dialis) մօտ կարգված հոգևոր ֆլամիններին։ Մարս ու Կվիրին, ինչպէս վերը ասել ենք, իրանց կարաւոններն ունեն։ Վերջը ուրիշ աստրին ֆլամիններ էլ մտցրվեցին դեղային առանձին կուլտերի համար։ Շատ հին են «fratres arvales», այսինքն՝ դաշտային եղբայրները, որոնք մայիս ամսին սպասաւորում էին դիւցուհի բերրի աստուածուհուն (Dea Dia) այն հաշւով, որ ամառը առատ հունձ է լինելու. նրանք պարում էին նրա առաջը և պիտում նրան այնպիսի օրհներգներով, որոնք այժմ իրանց՝ հռոմայեցիներին անգամ անհասկանալի են։ Լուպէրկները (մարդ-գայլերը) փետրվար ամսում հովիւների տօնն էին կատարում. նրանք մի որ և է շինական աստուածուհեան այծեր ու շներ էին զոհ բերում ու յետոյ մերկ-մերկ վազում էին փողոցներով, խփելով հանդիպողներին զոհի կենդանիների մորթից կտրտած կաշվէ մտրակներով (խրաց, ремень)։ Քաջ յայտնի են վեց վեստալականները (վեստուհիները), որոնք պարտաւոր էին հոգ տանել Վէստայի կրակի, այսինքն՝ պետութեան անային օջախի կրակը անշէջ պահելու մասին։ Նրանք իրանց այդ կեանքը այս պարտաւորութեան կատարելուն էին նուիրել և մեծ յարգանք էին վայելում։ Քրմական այսպիսի համախմբումները, որոնք սահմանված էին յայտնի կուլտերի շարունակութիւնը ապահովելու համար՝ ընդունակ չէին քրմական տիպի կրօններ առաջ բերելու։ Կրօնական միւս պաշտօնները իրանց բնոյթով նոյնպէս չէին կարող նպաստել նմանօրինակ տիպի կրօնների առաջ գալուն, որովհետև այս պաշտօնները կապ չունէին յայտնի կուլտերի հետ, այլ ծառայում էին մի աւելի հանուր նպատակի, այն է՝ օգնելու պետութեանը և նրան առաջնորդելու կրօնի հետ կապ ունեցող գործերում։ Այս պաշտօնների մէջ կար առաջին քրմապետի (понтифекс) պաշտօնը. այս բառը այլ և այլ կերպով է

մեկնվում, երբեմն «կամուրջ շինողի» մտքով,—որ շատ կարեւոր ու յարջ գործ էր համարվում,—երբեմն կրօնական թաղուած գործ էր համարվում,—երբեմն կրօնական թաղուած գործ էր համարվում,—երբեմն կրօնական թաղուած

կարելի է պահել այս առարկայի վերաբերմամբ Ֆիլիպոնի հմայուլիան մասին տված բացատրուլիան մէջ։ Միւս սըրբազան կօլէկիան, որ մի փոքր ուշ է առաջ եկել, նախ և-բեր, յետոյ առանուհինգ հոգուց բաղկացած մի ընկերուլիւն էր, որոնք զբաղվում էին, մեկնելով Սիվիլլայի սրբազան գրքերը, որ գնել էր Տարկվինոս Լիտատուրը կումեան հին Սիվիլլայից։

ՀՌՈՄԷՈՑԿԱՆ ԿՐՕՆԸ ԱԻԵԼԻ ԻՐԱԻԱՆՆԱԿԱՆ ԲՆՈՑԹ ՈՒՆԻ, ՔԱՆ ՔՐՄԱԿԱՆ։ Թէպէտ այս քրմական համալսրմ-բումներից շատերը մեծ ազդեցուլիւն ունէին, սակայն նը-րանց իշխանուլիւնը բուրմերին ոչ մէկ յատուկ էր համար-վում, այլ իրրև լիազօրուլիւն ունեցող անձերի վերաբերող։ Սրբազան պաշտօնները ոչ մէկ ժառանգական էին, այլ ընտ-րական. այդ պաշտօնները առանձնելու համար մի առանձին կրթուլիւն չէր պահանջվում. մարդիկ այդ պաշտօնների, ինչպէս և ուրիշ հասարակական պաշտօնների համար՝ ընտըր-վում էին, և քրմի գործերը միևնոյն ժամանակ բազ-մազան էին մնում, շարունակ նիստեր էին ունենում սենա-տում և երբեմն միանգամայն ուրիշ պաշտօններ էլ էին կա-տարում։ Այսպիսով նախապատուհուլիւն էր արված նոյն իսկ քրմական դասակարգի ծագման հնարաւորուլիւնից մասին. կրօնը զրկված էր ազատ զարգանալու հնարաւորուլիւնից և մնացել էր իրրև գործիք՝ պետուլիան նպատակներին հա-նելու համար։ Չկայ մի ուրիշ օրինակ մեծ կրօնների մէջ, որտեղ այնպէս շատ բան լինէր համարվելիս ծէսը, և այն-պէս քիչ՝ վարդապետուլիւնն ու էնտուզիազմը, ինչպէս հռոմէական կրօնի մէջ։ Այս բոլոր քրմերն ու կօլէկիանե-րը միմիայն այն բանի համար են, որ ամենայն ճշտուլիամբ կատարեն ծէսերը, որ անհրաժեշտ է համարվում աստուած-ների հետ լաւ յարաբերուլիւն պահպանելու համար։ Չունեն նրանք մի վարդապետուլիւն, որ կարողանան սովորեցնել, չկայ հատուկ, որ կարողանան հաղորդել ուրիշներին, չկան

մինչ անգամ սրբազան պատմուածքներ։ Ճշտապահուլիւն ու անհանգստուլիւն՝ ահա լէ ինչերն են բնորոշում նրանց բոլոր գործերը։ Ինէի (Ihne) ասելովը՝ հռոմայեցիների հա-մար կրօնը մի հրճիւալի բան է պատնում, մի զուտ ստա-տուածները նրանց պատժեն՝ իրանց արհամարհիլու համար. ամէն մի անսովոր անցք կարող է այն բանի նշանը լինել, որ աստուածները զրկում են պետուլիունը իրանց աջակցու-լիւնից. այս բանին պէտք է հետամուտ լինել և, հարկը պա-հանջած ժամանակ դիմել անհրաժեշտ միջուլիանը»։ Ծիսա-կան կողմը պէտք է կատարվի ամենայն ճշտուլիամբ. հա-կապէս այս ճշտուլիունն է հաշվի առնվում, և ոչլէ հրկըր-պազուի հզոր տրամադրուլիունը, որ կարող է մինչ անգամ խարել աստուածներին այն բանում, ինչ որ պէտք է նրանց, եթէ նա այդ ժամանակ ձեռնհասուլիան կողմից կանոնաւոր կերպով է կատարում ծէսերը։ Օրինակ. եթէ աուսպիցիանե-րը (auspicium—թռչունների թռիչքով արված գուշակուլիուն-ները) անբարեյաջող են դուրս գալիս՝ այդ դէպքում գուշա-կուլիունը կարող է կրկնվել մինչև ատելի լաւ հետևանքի հասնելը։

Մեր բոլոր աստուածները ներկայացնում են հռոմէական կրօնը նրա սկզբնական ձևով՝ միայն ժողովուրդների ազդեցու-լիամբ փոխվելուց առաջ։ Նրա աստուածները անտառների ու պաշտերի, շուկայի, յարձակման, պաշտպանուլիան, մի խօսքով, այն բոլոր երևոյթների ոգիներն են, որ առնչվել է կեանքը միջին Իտալիայի ցեղերի, մանաւանդ լատիններէ ու սաբի-նացիների համար, որոնց մէջուլիունից առաջ է եկել հռոմէա-կան պետուլիունը։ Այս աստուածները ընտանիք չեն դատնում և պատմուլիուն չունեն, նրանք կապ չունեն երևակայուլիան հետ, ինչպէս Յունաստանի աստուածները, ոչ էլ մտերմուլիան, ինչպէս Գերմանիայի աստուածները։ Նրանք յայտնի են լոկ պարզ կերպով, բայց հզօր են, և անհրաժեշտ է հաշիւ տա-նել նրանց. միակ յարաբերուլիունը, որ կարելի է ունե-

նայ այդպիսի էակների հետ՝ գործնական ու օրէնքի վրայ հիմնված յարաբերութիւնն է։ Սրանից հետևում է որ սա մի բռնութեան կրօն է։ Այս կողմից սա համաձայն է հռոմէական բնոյթին, որ հակված է աւելի դէպի կարգ ու կանոնը, քան ազատութիւնը, աւելի դէպի օրէնքը, քան արուեստը։ Այստեղ կազմակերպվել է կրօն բառը. նրա սկզբնական նշանակութիւնն է՝ բռնութիւն կամ սանձ, քանի որ այն գլխաւոր զգացումը, որով հռոմայեցին վերաբերվում էր իր աստուածներին՝ երկիւղի զգացումն էր։ Եւ ոչ թէ այն պատճառով, որ աստուածները չար էին. չար աստուածութիւն Վէդիովիս, որ համապատասխան է Զևսին՝ մի անյայտացող դէմք է,—բայց աստուածները բիչ էին յայտնի, ուստի և հեշտութեամբ կարող էին զայրանալ։ Այս պատճառով այստեղ կուլտը, աստուածների հետ բարեկամական յարաբերութիւն ունենալը բօղարկում էին կրօնի միւս տարրերը։ Կրօնը չէ ազատում մարդկային բնութեան ուժերը և չէ թոյլ տալիս նրանց յայտնվելու անմիջական գործունէութեամբ, այլ այդ ուժերը բևեռում է պերմարդկային հեղինակութեան ճիշդ սահմանութիւններ։ Ամէն բան, ինչ որ դրսում է առաջացնում՝ հետու է պահվում, և մարդիկ դաստիարակվում են հնազանդութեան, խոնարհութեան ու անձնուրացութեան մէջ։ Նրանք չեն ստեղծում արուեստի պերճելի արտադրութիւններ և համարեա չունեն այնպիսի ըրոյցներ, որոնցով կարտահայտել. սակայն յարդելի են ու բարեխիղճ. անձնական զգացումը խստաբարոյ բաւականութեան հետ զոհվում է հասարակական շահին, և սրա շնորհիւ հռոմայեցիք մեծ ուժ են ձեռք բերում։ Ապրելով մնայուն մրճնոլորտում, երբ ամէն կողմից պարանոմուտ են լինում նրան աներևոյթ վտանգներ, իսկ կանոնաւորապէս գործածված բառերի ու ձևերի մէջ ծածկված է այս վտանգները կասեցնելու ուժը,—հռոմայեցին կատարելագործելու շատ զարգացնում է կրօնի մի կողմը։ Նրա համար խորթ են այդ

կրօնի ներշնչումները, հիացումները և թարնված միխիթարութիւնները. բայց նրան ուրիշներից լաւ է յայտնի կրօնը իբրև մի պահպանողական ու կանոնաւորող ուժ, որ սանձում է կիրքը, հրաւիրում է դէպի զգուշաւոր ու բարեբարոյ վարքը և անձնաւորութեան ստիպում է ենթարկվել համայնքին։

ԸՐՏԱՔԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԻՑ ԸՒՍՋ ԵԿԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ Հռոմէական կրօնը, ուղիղն ասած, առաջ չէր գնում։ Թէ նա ինչ կդառնար, եթէ զարգանար առանց արտաքին միջամտութիւնների՝ այդ մենք միայն գուշակել կարող ենք. բայց նա վաղ էր ենթարկվել աւելի վսեմ կերպով զարգացած կրօնների ազդեցութեանը և այնպէս բիչ ընդունակ հրևեցաւ նորամուծութիւններին դիմագրելու գործում, որ իր սկզբնական բնոյթից շատ բան կորցրեց։ Հռոմայեցիք գիտակցում էին իրանց կրօնի անկատարելութիւնը. նուաճելով աշխարհը՝ նրանք երբէք յաւակնութիւն չունեցան յայտնելու որ իրանց կրօնը միակ ճշմարիտ կրօնն է կամ կոչված է իշխելու միւսների վրայ։ Նրանք հէնց սկզբից համբերատարութեամբ էին վերաբերվում միւս ժողովուրդների կրօններին։ Նրանք միւս ժողովուրդների աստուածներին միշտ իրական էակներ էին համարում, որոնց հետ նոյնպէս սլաքը լաւ յարաբերութիւն ունենալ։ Եթէ աշխարհում ամէն բան իր օրէնքն ունի, ապա այս աստուածներն էլ իրանց երկրների ու ժողովուրդների օրէնքներն էին. նոյն իսկ աստուածութեան մասին հռոմայեցիների ունեցած հասկացողութիւնը չէր խոչընդոտում որ նրանք մի բացառական հաւատ տածէին դէպի իրանց սեփական աստուածները և մերժէին միւս ժողովուրդների աստուածներ ունենալու իրաւունքը։ Այս պատճառով, երբ հռոմայեցիք չփվեցին տարաշխարհիկ կրօնների հետ՝ այն ժամանակ խորին համոզմունքով պաշտպանված չլինելով իրանց սեփական կրօնի ճշմարտութեան կողմից՝ նրանք ամբողջապէս մատչելի էին նոր զգացմունքների ազդեցութեանը։ Նոր կրօնները եկան նրանց մօտ այն ժողովուրդների կենսա-

կրճատման հետ միասին, որոնք ուելի շատ էին առաջ վնասել արուեստի ու մտաւոր զարգացման մէջ, քան իրանց. ամէն այսպիսի չափման դէպքում հռոմայեցիք այս պատճառով ղեկում էին մտաւոր զարգացման նկատմամբ օտարականների վերաբանցուելիքինը իրանցից. և միշտ ու ամէն տեղ ուելի պակաս օժտված բնակչուելիքինը ընդունակ է փոխելու իր կրօնը և փոխուելու ինքը ուրիշ կողմերով ևս: Մենք պէտք է ընդգծենք այսպիսի արտաքին ազդեցուելիքիններից առաջ եկած փոփոխուելիքինները:

Ամենից առաջ Հռոմը ընկաւ *Էտրուրիայի* ազդեցուելման տակ: Էտրուսական կրօնը մի և նոյն ժամանակ ինչ ուելի էր զարգացած, և՛ ինչ ուելի վայրենի էր, քան հռոմէականը: Յայտնի է, որ նրա մէջ գոյուելիքին ունէր մարդ զոհ բերելը. գուշակուելիքինը (զբաղուելիքինը) տեղի էր ունենում անհեթեթ լինելու չափ երկար ժամանակ, և նրա մի նշանաւոր ճիւղը՝ սպանուած կենդանիների փորոտիքներին նայելով, սպագան գուշակելն էր: Էտրուրիայում հաւատում էին դժոխքին ու այն տանջանքներին, որոնք սրոշուած էին մեռելների համար. իսկ Հռոմում անդրշերեզմանային կեանքի հաւատը ուելի քիչ էր զարգացած: Միւս կողմից՝ Էտրուրիայում կային այնպիսի աստուածուելիքիններ, որոնք մի փոքր ուելի բան էին, քան վերացականուելիքինները. այնտեղ գոյուելիքին ունէր 12 աստուածուելիքինների մի ակումբ, որոնք ժողովներ էին սարքում ու աշխարհի գործերը տնօրինում: Նրանց վրայ ծանրանում էր մի բաւական անորոշ իշխանուելիքին, ճակատագրի պէս մի բան, որին ենթարկուած էին աստուածները: Ցունական ազդեցուելիքինը, որ այնքան զարդ է երևում էտրուսականի արուեստի մէջ՝ էտրուսական կրօնի վրայ էլ է ցոլանում. մի այսպիսի, բայց մի փոքր մուխ ճանապարհով յունաց կրօնական պատկերները առաջին անգամ երևեցան Հռոմում: Այս ազդեցուելման տակ տեղի ունեցան Հռոմում այլ և այլ նորամուծուելիքիններ: Միապետուելման վերջանալուց առաջ հռո-

մայեցիք սկսեցին տներ շինել իրանց աստուածների համար 170 տարուայ ընդմիջումում, ինչպէս մեզ ասում են, նամանաւորապէս չէնքեր չունենալու պատճառով: Հռոմէական «templum»ը սկզբում ոչ թէ շէնք է եղած, այլ՝ յայտնի կանոններով ամպերին դիտելու համար նշանակուած մի տեղ: Երկնքի մի մասը նոյնպէս նշանակուած էր այդպիսի «դիտողուելիքինների» ու «հայեցման» համար: Մի այսպիսի սրբազան տեղ, կապիտոլեան բլրի վրայ առաջին Տարկվինոս հիմնել էր Լուսնեմատղի տաճարը, որ մնացել էր մեզ հռոմէական կրօնի գլխաւոր կենտրոն: Նրա նարտարապետուելիքինը տոսկանեան էր. նրա մէջ ոչ միայն Օպտիմ Մաքսիմի Լուսնեմատղի պատկերի համար մի բաժանում կամ սրբազան բնակավայր կար, այլ և՛ մի-մի բաժանում Իւնոնայի ու Մինէրվայի համար: Վերջինը թէ էտրուսական ու թէ հռոմէական աստուածուհի էր՝ յիշողուելման աստուածուհի: Այսպիսով արուեստը սահմանուած էր աստուածներին սպասաւորելու համար. աստուածային պատկերները առանց իրականուելիքին ու պարզուելիքին, որից բոլորովին զուրկ էին ուելի հին վերացականուելիքինները. և հռոմէական ոգին մի նոր հասկացողուելիքին էր ձեռք բերել աստուածուելման մասին: Սկսեցին շինել ուրիշ տաճարներ թէ Լուսնեմատղի, որ կապիտոլիանից տարբեր անուններ էր կրում, և թէ միւս աստուածուելիքինների համար: Ըստ վաղ էր առաջ եկել հաւատարմուելման տաճարը: Տաճարների կառուցման միջոցին այն կանոնն էր պահպանուում, որ աստուածուելման երեսը ուղղուած լինէր դէպի արևմուտք, այնպէս որ ապօթողը երեսը դէպի արևելք էր կանգնում: Սրբազան շէնքերի հռոմէական ուղղուելիքինը ընդունել էր և՛ քրիստոնէական եկեղեցին: Էտրուրիայից հռոմայեցիք առել էին նաև գուշակուելման կանոնների համար մի նշանաւոր յատկութիւն. սակայն էտրուսական գուշակուելման ուելի երեխաչելուած

ՅՈՒՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ ՀՌՈՄՈՒՄ։ Այն ժամանակ, երբ յունական պատվիրանները շեշտակի թափանցում էին հելլենից՝ լցնելով հարաւային մասը հետզհետէ յունական էր դառնում, և Հելլադայի աստուածներն ու տաճարները, որոնք առաջ մոռցված էին ծովեզերեայ քաղաքներն ու գաղութները՝ քիչ-քիչ սկսեցին երևալ Հռոմում։ Այս շարժումը կապ ունի Սիվիլլայի գրքերի հետ, որ ձեռք էր բերել Տարկվինիոս վերջին թագաւորը։ Այս գրքերը Հռոմ էին տարված յունաց Կում քաղաքից. գրված էին յունարէն և պարունակում էին իրանց մէջ իմաստալից ասացուածներ, որոնք վերագրվում էին յունական մի հին մարգարէուհու։ Այդ գրքերին պետութեան կարևոր դէպքերում դիմում էին, հարց տալով առանձին պաշտօնական անձերի միջոցով, որոնց հատուցացված էր նրանց հոգատարութիւնը, և այդ գրքերը սովորաբար խորհուրդ էին տալիս՝ բերել Յունաստանից այս կամ այն աստուածը և նրա համար կուլտ սահմանել Հռոմում։ Այսպէս էին մուծված բազմաթիւ տարաշխարհիկ կուլտեր։ Առաջ սկսեցին երկրպագել Ապոլլոնին, որ ծածկված էր լատինական Ապէրտա՝ «յայտնող» անունի տակ, քանի որ գրքերը պարունակում էին իրանց մէջ նրա պատգամներից շատերը. նա ընդունված էր և երկրպագութիւն էր ստանում իբրև բուսութեան աստուած, քանի որ պետութիւնը սրանում պակաս չէր կարիք զգում, քան գուշակութեան մէջ։ 496 թ. Ք. Ծ. առաջ մի և նոյն կերպով մտցրած էին Դիմիտրա, Պերսեփոնա ու Դիոնիս, որոնք նոյնացած էին հին լատինական Ցերերայի, Լիբերայի ու Լիբերի հետ, իսկ մէկ դար յետոյ՝ Հերակլ, որ նոյնացած էր լատինական Հերքուլէսի հետ։ 291 թ., ժանտախտի պատճառով, Էպիտաւրից առնված էր Ասկլէպիոյ, լատինական Էսկուլապը. իսկ երբ սկզբում Հաննիբալի դէմ մղվող կրիտիկական պատերազմի ժամը (204 թ. Ք. Ծ. առաջ), այն ժամանակ Պէսսինից Փռիւգիա բերվեց աստուածների մեծ մայր Կիբելա (Գիբլայ) կամ Ցի-

բէլա։ Այս բոլոր բնակչութիւնը վիճակաբար յանձնեց յունաց դեսպաններին այն բարը, որ նրանց համար աստուածուհու պատկերի տեղն էր բռնում, և նրա Հռոմ գալը դանդաղ կայի հետևանք էր ունեցել, որովհետև Հաննիբալ վտարված էր Իտալիայից։ Իրեցինեան Աստղիկ, որ յարգված էր Սեցիլիայում, մտցրվել էր Հռոմ մի և նոյն ժամանակներում. սա մի աստուածուհի էր, որ ամփոփում էր իր մէջ Ասիրոդիտէի ու Աստարտայի բնոյթները և ամենևին նման չէր հին հռոմէական պարզ Աստղկին, որ կարևան աստուածուհին էր, և որի տաճարին պահպանում էին այդ կինները։ Այս պրօցէսը, որի արտաքին արտայայտութիւնները մենք նկարագրել ենք, շարունակվում էր Հանրապետութեան ամբողջ շրջանի ընթացքում և իր հետևանքն էր հին հռոմէական կրօնի վախճանը։ Սա այն, ինչ որ Մոմզէն յոյն-հռոմէական կրօն է անվանում։ Սա մի շատ լուրջ վտանգութիւն էր։ Այս վտանգութիւնը միայն նրանում չէր կայանում, որ հին աստուածներին կցված էին նորերը, որ յունական արուեստը սկսել էր գործ ածվել մէական տաճարների կառուցման ժամանակ, որ մտցրած էին նոր ծէսեր, ինչպէս օրինակ Lectisternium, որի մէջ օֆեականներ էին շինվում իւրաքանչիւրը աստծու կամ աստուածուհու պատկերով և դարսվում էին սեղաններ՝ բնկողմանած (մէջ բնկած) աստուածութիւններին հիւրասիրելու համար։ Աստուածութեան մասին ունեցած հասկացողութիւնը փոխվեց. յունական աստուածութիւնը, որ ձևացվում էր մարդու կերպարանքով և ազատութիւն էր վայելում վերին աշխարհում՝ յատնական աստուածութեան տեղն էր բռնել, որ կազմում էր գործողութեան, երևոյթի կամ յատկութեան անհատական կողմը՝ որից նա ստացել էր իր անունը և առանց որի գոյութիւն չունէր։

Բերում ենք լմէ հռոմէական գլխաւոր աստուածների ցուցակը և լմէ յունական աստուածներինը, որոնց հետ նրանք նոյնացած էին. Լատինմապ (Զևս), Իւնոնա (Հէրա), Նէպտուն (Պոսեյդոն էին. Լատինմապ (Զևս), Իւնոնա (Հէրա), Նէպտուն (Պո-

սիպոն), Մինէրվա (Ալթինա), Մարս (Արէյ), Ապոլիկ (Ափրոդիտէ), Դիանա (Արտեմիդա), Վուլկան (Հեփեստոս), Վեստալ (Հեստիա), Մերկուրի (Հերմէս), Ցերէրա (Դեմետրա)։ Այս նոյնացումները ամենևին չի կարելի ճիշտ համարել. Լուսնի աստ ու Վեստա, ինչպէս տեսանք հռոմէական միակ աստուածներն են, որոնք իրաւ նոյնն են, ինչ որ յունական աստուածները, մնացած համապատասխանները հիմնված են պատահական նմանութիւնների վրայ և աւելի կամաւոր են, քան կանոնաւոր։ Նրանց հետևանքը սակայն այն էր, որ հռոմայեցիք նշանաւոր աստիճան մոտացան իրանց սեփական աստուածները և վերաբերնը ընդունեցին յունական աստուածներ։ Աստուածների պատկերների հետ նրանք յունական առասպելաբանութիւնն էլ առան և այսպիսով աստուածները սկսեցին քաջ յայտնի դառնալ իրանց բոլոր յատկութիւններով և արդէն առաջվայ պէս էլ խորհրդաւորութեամբ ու յարգանքով չէին շրջապատվում։ Այն կուլտը, որ հիմնված էր աստուածութեան աւելի հին հասկացողութեան վրայ և պահպանված անպայման կանոնաւորութեամբ՝ չէր կարող զործադրվել այս նոր աստուածների օրով և անխուսափելի կերպով պէտք է կորցնէր իր նշանակութիւնը։ Սա ոչ միայն, այլ այն պլեբեայ պատճառներից մէկն է, որոնք նախապատրաստել էին այն սոսկալի տեսարանը, որ ներկայացնում էր հռոմէական կրօնը Հանրապետութեան վերջը, երբ աշքի ընկնող կրթուած մարդիկ հանդէս էին գալիս իբրև մի այնպիսի կրօնի ներկայացուցիչներ, որին չէին հաւատում, և որ ծաղրում էին իրանց դրաւած տեղում։

Արևելքից հռոմ գնացած կուլտերի մէջ կային մի քանի՝ ոչ միայ յունական, այլ արևելեան ծագում ունեցող կուլտեր։ Դրլայի կուլտը փոքր Ասիայում է առաջ եկել, Մէպէտա և տարածված էր Ցունաստանում. Պիռնիսի կուլտն էլ Ասիայից էր Ցունաստան մտցրված։ Այս երկու կուլտերի ծէսերը միանում էին յարգողների էքստազի ու անձնազոհութեան հետ. և

նրանց ծէսերը աստիճան տարբերվում էին հռոմայեցոց աստիճանայնի ու ձևական կուլտից, որի մէջ միակ՝ միայնակ կերպը՝ զէպի բարեվայելչութիւնը տածած հանգիստ կերպն էր։ Դրլայի կուլտը ներբինիներն էին կատարում. նա պարունակում էր իր մէջ ապիկալի Լատիօրներ և պահպանվում տուրքերով։ Մտնելով այդ կուլտը իրանց բազաքը՝ հռոմայեցիք կարգադրեցին, որ հռոմէական քաղաքացիները նրա մէջ պիտանի պատասխանութիւններ չկատարեն. բայց այն հանգամանքը, որ նա ծագում էր բազմաթիվ օտարականների ու խեղճերի միջից՝ ցոյց էր տալիս որ նրա մեծ պահանջն էր զգացվում։ Բաքոսի կուլտը պետութիւնը հարկաւոր համարից վերացնել. նրա սպառնալիութիւնը տեղի էր ունենում պիշերային ժողովներում, որտեղ նոքա էին լինում մինչ անգամ քաղաքացիք, և այս բանը առաջ էր բերում ամենատեսակ անկարգութիւններ։ Որովհետև այս պլեբեայ նիւթը հռոմէական կրօնն է, և ոչ Հռոմի այլ և այլ կրօնները, ուստի մենք չենք տայ տեղ այն բազմաթիւ տարաշխարհիկ կրօնների տեսութիւնը, որոնք մտցրված էին մայրաքաղաքը կայսրութեան ամէն կողմերից և որոնք Հռոմը Հանրապետութեան վերանալու միջոցին գործել էին բոլոր ժողովուրդների աստուածների ամբոխանիստ բազաքը։ Սիփական հանգամանները, ինչպէս տեսանք, չէին հատցրել հռոմայեցիների տարաշխարհիկ կրօնների ճշմարտութեան հերքելու աստիճանին, քաղաքակրթութիւնն էլ բաւական չափով էր նրանց համրերել այն ամեն տեսակ կուլտերին, որոնք հակառակ չէին պետական կարգ ու կանոնին։ Գաւառներում կանոն էր սահմանված՝ շմիջամտել տեղական կրօնի մէջ. Հռոմում իշխանութիւնները ճանաչում էին ոչ միայ տնից մտցրված կրօնը, որի մասին պետութիւնը իրան իրաւունք չէր համարում դատել, այլ միայն այն հաստատութիւնը, որ կատարում էր յայտնի կրօնի ծէսերը և նրա համար իշխանութիւն էր տանում։ Այն ժամանակ կուլտը վայելում էր վութիւն էր տանում։ religiolicita։ Այս պետութեան հովանաւորութիւնը և դառնում

բոլոր աստուածների ու հաւատալիքների մէջ, որոնք ընդհարվում էին Հռոմում, պահպանում էր իր տեղը և՛ ինքը հռոմէական կրօնը բայց ոչ թէ իբրև վարդապետութիւն, որին ոչ և է հաւատում էր, քանի որ իրանը բուլմերն ու ավգուրները ծիծաղում էին իրանց կատարած ծէսերի ու արարողութիւնների վրայ՝ այլ իբրև մի յայտնի ծիսարան, որ կապված էր Հռոմի բոլոր անցեալի հետ և անհրաժեշտ էր համարվում պետութեան բարօրութեան ու հասարակ ժողովրդի բաւականութեան համար։ Այն ժամանակներին իշխող դատողութեան ու սկէպտիցիսմի մէծնոլորտում չէր կարելի սպասել, որ հաւատը կարողանար մի զօրեղ նեցուկ դառնել իր համար Հռոմի պատմական կրօնի մէջ։ Օկտաւոս կայսրը կրօնը վերանորոգելու և կենդանացնելու մի լուրջ փորձ արեց։ Նա ընտրեց յարների անայլն կուլտը, ինչպէս հին սիստէմի ամենաակնոցանի մասը, և հրաման հանեց որ երկու Լար կայսրի պահպանի հրեշտակի հետ միասին յարգվեն և Հռոմը թագերի բաժանեց, և իւրաքանչիւր թագում այս իր տեսակի երեքութեան տաճարը ամփոփեց. իսկ գաւառներում իւրաքանչիւր շրջան, բացի գոյութիւն ունեցող կուլտերից՝ պէտք է պահպանէր հռոմէական ու կայսերական կուլտը։ Հռոմում տաճարները վերանորոգվում էին, կառուցվում էին նորերը, որպէսզի ազատ պաշտօնները աէրէյտէր էին անվում, սահմանվել էին կրօնական խաղեր՝ հռոմայեցիների մէջում սրբազան անցեալի մասին յիշողութիւն զարթեցնելու նպատակով։ Լիւիոս ու Վիրգիլիոս անցեալի վրայ նայում էին կրօնական տեսակէտից, մատնացոյց անելով հռոմէական ժողովրդի սրբազան կոչումը և իւրոյ հանելով պետութեան հիմնադիրների սերտագործութիւնն ու բարեպաշտութիւնը։ Եթէ հռոմէական կրօնը կարողանար կենդանանալ, ապա դրա համար յարմարաւոր միջոցներ էին ընտրված։ Սակայն ազգային կրօնը ուրիշ կերպ էր նախապատրաստվում։

ԳԼՈՒԽ ԳԼԱԽ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԿՐՕՆԸ

Ա) ՎԷԴԱՆԵՐԻ ԿՐՕՆԸ.

Դժուար է երևակայել երկու այնպիսի բան, որոնք այնքան նման չլինեն միմեանց, որքան նման չեն պերսանացիների ու հնդիկների կրօնները։ Մի դէպքում մենք գործ ունենք մի կորովի բայց դեռևս ոչ կենսակրթական ժողովրդի, միւսում՝ մի բարձր կազմակերպութեան ու կենսակրթութեան հասած, բայց անզօր ժողովրդի հետ. առաջինը գործունեայ կրօն է, երկրորդը՝ ձևական։ Արիականների սկզբնական հաւատից, որ մինչև այնպէս շատ է նման տեսօնների կրօնը՝ հնդիկների կրօնը անջատված է երկու խոշոր աստիճանով։ Իրրև արիական հաւատի առաջին այլաձևութիւն հանդիսանում է հնդկական կրօնը՝ պարսիկների ու հնդիկների դեռևս չբաժանված նախնեաց կրօնը, որ գոյութիւն է ունեցել այն հեռաւոր շրջանում, որ առաջընթաց է եղել արիականների հնդկաստանի գաղթելուն։ Այս կրօնի մասին, որ պարսկական ու հնդկական կրօնի հանուր մայրն է, մենք խօսելու ենք, հնդկաստանի աստուածներին ծանօթանալուց յետոյ, մեր այն գլխի սկզբում, որ խօսելու է Պարսկաստանի մասին։ Հնդիկների կրօնը հնդիրանական կրօնի տեսակի այլաձևութիւնն է, որ իր հերթին արիական տիպի կրօնի այլասերումն է հանդիսանում։ Այս պատճառով ոչ նրա ծագումը, ոչ բնոյթը նրան իրաւունք չէ տալիս արիական կրօնների տիպական օրինակը համարվելու։ Ժամա-

նակագրապէս նա նրանցից առաջինն է, ի նրա դրքերը արեւական հաւատի հնագոյն սրբազան գրականութիւնն են կազմում. իսկ ինչ վերաբերում է զարգացմանը՝ ապա դա ոչ թէ մի նախնական երեւոյթ է, այլ կենսակերպութեան շատ բարձր աստիճանի հետ կապված երեւոյթ: Այդ երեւոյթը շատ մեծ շահեկանութիւն ունի մեր դիտութեան ուսումնասիրողի համար, նկատելով անընդհատ յաջորդականութեան այն կրօնական մարի հատակը, որ, սկսելով հատարակ հասկացողութիւններից ու զարգանալով՝ գառնում է բարձր ընդարձակ կուլտ, անցնում է քիչ-քիչ վէպի բնազդականութիւնին (мистицизмъ) ու ճգնաւորութիւնը, իսկ այստեղից՝ վէպի ամէն աստուածների ու ծէսերի բացառումը և անձնական բարի կեանքով փրկվելու սիստէմը: Ուրիշ ոչ մի տեղ կրօնի առաջադիմութիւնը այդպէս պարզ չէ երեւում իր զարգացման բոլոր շրջաններում, ոչ մի տեղ չի կարելի այդպէս անսխալ կերպով տեսնել այս շրջանների միմեանց հետ ունեցած տրամաբանական կապը: Այս պլուխը այն կրօնների մանկութեանն ու պատանեութեանն է վերաբերում, որոնք յայտնվել են վէդականութեան (վէդիզմի) մէջ. յաջորդ բնաստիճանների, այն է՝ բրահմինականութեան ու բուդդհայականութեան մասին կխօսենք մեւս գլխներում:

ՈՒԴՎԷԴԱ: Վէդական կրօնը իր անունը առած է Ուդվէդայից, այսինքն՝ հնդիկ գրականութեան հնագոյն մասից և արիականների կրօնի առաջին գրաւոր յուշարձանից: Շատ վէդաներից կամ օրհներգների հաւաքածուներից Ուիգվէդան ամենահինն ու ամենի շահագրգիռն է: Նա պարունակում է իր մէջ մի քանի օրհներգ, որոնց, ինչպէս և իրանց սկզբնական գրականութիւնից ուրիշ շատ բան՝ հնդիկները աստուածային անմիջական յայտնութեան էին վերագրում, բայց ոբանք, ինչպէս մեզ յայտնի է, գրուած էին այնպիսի մարդկերի ձեռքով, որոնք յատկութիւն չունեն մի առանձին կերպով նկարչված լինելու: Օրհներգների մեծ մասը այն ժամանակին է վերաբերում, երբ արիականները՝ մանելով Հնդկաստան, բայց դեռևս բոլորովին չհաստատելով նախկին բնակիչներըը՝ հաստատվել էին Պէնջաբում: Օրհներգների կրօնը չափազանց ազգայնական բնոյթ ունի: Արիականները օգնութեան են կանչում իրանց աստուածներին այն ցեղերի դէմ, որոնք վերջը ճնշվել են դէպի հարաւ ու ծովափներն, որոնք ապրեբերվում են նրանցից մարմնի գոյնով, դիմագծերով, լեզուով, բարքերով ու կրօնով: Այս աշխարհականները ոչ մի դէպքում նախնական ժողովուրդ չեն հանդիսանում. նրանք շատ վաղուց միասներ էին դարձած, տներ շինում, խմբվում, պետեր կազմում. նրանք ապրում էին պլուտարքական իմաստութեամբ, այլ և երկրագործութեամբ ու արուեստութեամբ: Նրանք խմում էին սուրա, որ օղու մի տեսակն է, և սոմա՝ խունդ գարեջրի մի տեսակը, որի մասին դեռ խօսելու ենք: Սովորաբար նրանցում ընդունված էր միակնութիւնը, կինը բարձր դիրք ուներ ընտանիքում և օգնում էր էրիկին տնային գործարերութեան ժամանակ: Ամէն պատերազմի մէջ, ինչպէս և համերգական յոյների՝ գլուխ էր կանգնած խաղաւորը. բայց նա անսահման միապետ չէր. ժողովուրդը իր ժողովներում վերաստուգում էր նրա արածները: Ինքը խաղաւորը կատարում էր իր գործերութիւնը իր ցեղի փոխարէն. իր սեփական տանը. տաճարներ չկային, բայց յաճախ նրան օգնում էին մէկ կամ մի քանի՝ այդպիսի ծէսերին մասնագիտացած ծանօթ մարդիկ:

Ուիգվէդայի օրհներգները գրված էին գործարերութեան ժամանակ գործածվելու համար: Իսկ գործարերութիւնը մի կերպարանք է, որին՝ յայտնի աստուածութիւնը հրաւիրվում է գալու, որպէս զի մասնակցելու, կամ որ կրակի միջոցով ուղարկվում է՝ իրանց երկնային գահոյքների վրայ բազմած աստուածներին: Սոման, այսինքն՝ սոմա բոյսի արբեցնող հիւթը այս օրհներգների մէջ հանդէս է գալիս իբրև այսպիսի ինքնուրոյն մի անձնաւորութիւն. իսկ սուրա (պինդ) ստեղիքը բաղկացած է խաղից,

կամ քրնձից կամ կարկանդակներից. մորթվում էին և կենդանիներ, և առանձնապես մի կարևոր բան էր համարվում ձի զոհ բերելը: Օրհներգն էլ ձեռի էական մասն էր. առանց նրան զոհաբերությունը զորություն չէր ունենայ: Նա, այդ օրհներգը բաղկացած է փառաբանությունից ու աղօթքից: Աստուածությունը փառաբանվում է իր կատարած սքանչագործությունների, զորության, գեղեցկության, իմաստության կամ բարության համար. նա յաճախ հրավիրվում է ճաշակելու այն բանից, ինչ որ իրան առաջարկված է, և դրա փոխարէն նրան խնդրում են որ տայ իր յարգողին տուն կամ կենակուր, տայ նրան խորհուրդ, հովանաւորի նրան, կամ պարգևի նրա չունեցածը:

ՎԷԴԱՆԵՐԻ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ: Բայց ինչպիսի աստուածների է տրվում այսպիսի երկրպագություն: Նրանք բնության կամ երկնային երևոյթների աւել կամ պակաս կերպարանաւորված մասներն են: Երկրպագությունը երբեմն մեկ աստուածային էակին է ուղղված, երբեմն միւսին. նրանցից իւրաքանչիւրը ունի մի ուշագրաւ պատմություն, և մի շարք իրան յատուկ արարողություն, որոնց համար նա փառաբանվում է ու օգնության կանչվում. ուրիշ խօսքով իւրաքանչիւր աստուածություն իր առասպելն ունի: Այս աստուածների հետ կապ ունեցող առասպելները այնպէս պարզ են, որ մենք համարձակ կարող ենք աստուածներից ամեն մեկը նոյնացնել բնության այն կողմի հետ, որ սկիզբն է տվել նրան:

Բայց գտնում է վէդական աստուածները, նայելով էլ նրանք ինչ աստիճան են հեռացած իրանց բնական հիմունքից: Երկու աստուածություն մինչ անգամ ամենևին չեն անջատվում այս հիմունքից: *Ագնի*, Ռիգվիդայի գլխաւոր աստուածություններից մեկը, կրակն է, և *Սոմա* այն աստուածությունը, որին ուղղված են ինքնուրույն գլուխ բոլոր օրհներգները, ուղղակի օսմա բույսի հիւմքն է, ամեն զոհի հեղուկ մասը: Ագնին մի որ և է առանձին կրակ չէ, այլ կրակ, ինչպէս տիեզերական մի տարր, որ ստեղծված է երկնքում, որ նոյնպէս ամեն օր ծնվում է զոհարերության միջոցին, այն ժամանակ, երբ շիվում են փայտի երկու կտորներ, այսինքն նրա ծնողները, որոնց նա կլանում է: Նա մի բուրմ է, որ մարդերի նուէրները հասցնում է աստուածներին, բայց նրա՝ մարդերի մօտ իջնելուց առաջ նա մի բուրմ է եղած երկնային առաջին զոհաբերության ժամանակ: Նա մի և նոյն ժամանակ մարդու ընտանիքի հիւրն ու բարեկամն է, մի բարի ու բարեկամական էակ: Սակայն նա թափանցում է համայն բնությունը, և ամեն զարկացում, ամեն էնէրգիա նրանից են առնում իրանց սկիզբը: Սոման, որ նոյնպէս անխզելի կերպով կապված է ամեն զոհաբերության հետ, որ աստուածներին ուժ ու անմահություն է տալիս՝ նոյնպէս մի համաշխարհային տարր է. նա էլ առաջ երկնքից է իջել և նոյնպէս գործում է ողջ աշխարհում: Պատմուածքներ կան այն բանի մասին, որ նա սկզբում աստուածների մէջ է առաջ եկել, այլ և նրա երևան գալու առաջին հետևանքների մասին. նա անուշանում է բոյսերը, տալիս է բանաստեղծին ներշնչում, աղօթքին՝ ջերմություն: Ագնու հետ միասին նա է վառել արևն ու աստղերը:

Միւս աստուածները աւելի մօտ են մարդկային կերպարանքին, և այնպէս սուր կերպով չէ աչքի ընկնում նրանց ֆիզիկական կողմը: *Ինդրային* միւս բոլոր աստուածներից չատ-չատ են գիտում, և նա կարող է այս ժամանակաշրջանի ազգայնական աստուածը կոչվել: Նրան նկարում են իրրև երկձի կառքի մէջ կանգնած մեկ իշխանաւոր: Նա մղել ու մղում է շարունակ մի մեծ պատերազմ խորշակի ու երաշտի հրէշների՝ Վրիտրայի ու Ազայի դրակօնի դէմ, կովերի, այսինքն՝ երկնային ջրերի ազատության համար, որոնց նրանք գերի են վերցրել: Աստուածության ու դևի միջև անդադար պատերազմը շարունակվում է ու կշարունակվի յաւիտեան: Ինդրան էլ ամենատեսակ բարիքներ պարգևողն է, նա պահպանում է երկնային մարմինները իրանց տեղերում, ամեն

կեանքի առեղծուն ու պահպանուն է, նա է լինելագրում բոլոր աղնիւ մարերը ու պատասխանատում բարեպաշտ ապօթքներին, վարձատրում բոլոր իրան հաւատ ընծայողներին և նեղում զղջացողներին։ Նրան պէտք է պոհեր բերել և աստուծին սօսա մատուցանել, որովհետև այդ հիւթը կապուրում է նրան և հնարաւորութիւն է տալիս ամբողջացած ուժերով ձեռք տալու իր մարմին ու աշխատանքներին իրրև մարդու համար մարմնեղող։ Ինդրա շրջապատված է *Մարութներով*, այսինքն՝ պատման աստուածութիւններով, որնց առանձին են դիմում շատ օրհներգների մէջ։ Նրանք բարձրաձայն հաւատածութեամբ ասրվում են երկնքով և անձրև են ուղարկում չորացած երկրին։ Նրանց հայր *Ռուդրա* նոյնպէս որոշ աստուածութիւն է, բոլոր աստուածների մէջ ամենապերպեցիկը և, չնայելով իր ամպրոպներին՝ մի բարի ու բարերար էակ է։ Զարութիւն անսած տեղը նա դրում է իր նիզակը՝ չարագործին ոչնչացնելու համար, սակայն նա մի և նոյն ժամանակ հանդէս է գալիս իրրև մարմնաւոր ու հոգևոր ախտերը բուժող և բոլոր բժիշկներից լաւագոյնը։ Աստուածութիւնների մի և նոյն աստրոգութեանը (kategorija) պատկանում են *Վատա* կամ *Վայու*, այսինքն՝ քամի, և *Պարիանիա*, այսինքն տեղատարափ։ Բայց վէտական աստուածութիւններից ամենամեծը *Վարունան* է, այն է՝ մեծ պարզ ու լուսապայծառ երկինքը։ Նրան համեմատաբար քիչ օրհներգներ են ուղղված, բայց այդ օրհներգների մէջ կան այնպիսիները, որոնք հասնում են բարոյական ու կրօնական ամենամեծ բարձրութեանը։ Մի այնպիսի լեզուով, ոչ թէ բիբլիական առաջնակարգուհների ու մարգարէների լեզուն է յիշեցնում՝ նրանք փառաբանում են *Վարունային*՝ իրրև երկրի, երկնքի ու աստղերի առեղծուի, իրրև բարիների ամենագէտ պաշտպանի ու ամէն չարութեան վրէժխնդրի, իրրև մի ճշմարիտ ու սուրբ և մի և նոյն ժամանակ կարեկցութեամբ լի էակի այնպէս որ ապօթողը, խղճի յանդիմանութիւնները առնելու հետ միասին՝ յանդգնում է դիմել նրան։

Բերում ենք այստեղ մի քանի քառատող այն օրհներգներից, որոնք ուղղված են մեր յիշած աստուածներից մի քանիսին։

Ի Ն Դ Ր Ա Ց Ի Ն.

Դու, Ինդրա, մի ժամանակ
Ծծկերի հիւթը Սոմայի՝
Հրճուում էիր անասելի։
Ճիշտ է, Սոման սիրում են աստուածները,
Բայց բոլոր աստուածներից մեծըդ՝
Դու ես միայն նրա սիրտարը։
Գիտէր մայրդ, ի՜նչ դուրեկան
Էր այս հիւթը ինչպէս մանկան.
Եւ նա իր լծասից՝ հիւթով լի
Խմցնում էր որդուն սիրելի . . .
Այն, հէնց որ ծնվեցիր դուն—
Զգացիր Սոմայի բաղդաւէտութիւն,
Այժմ էլ պահաս չես սիրում
Հաւնած հիւթը ծնված օրից։
Ասում են լծէ դու մէկ անգամ,
Ո՜վ մեծ հոգիների իշխան,
Պարպել ես մինչ վերջին կաթիլ
Երեսուն գաւաթ բաղդր Սոմա։
Եւ, անշուշտ, քեզ այս հեղուկ
Օգտակար է վազուց ի վեր.
Այս պատճառով ջրաւէտ են
Ծովը լճափով բոլոր գետեր,
Ուստի և մեր լծասի բերնում
Սոման է միշտ փրփրակաթում։
Եւ հեղուկի շիշխոցում
Երգի ուրախ ձայներ լսվում։
Դէհ, արի և անուշ արա,

Զավագրու չուտա դու քո ծարաւ,
Ինչպէս միշտ եղնիկը յոգնած՝
Զովացնում է ջրի հոսանքում,
Կամ բառաչող եղը դաշտում՝
Արդէն առուի ջրին հասած . . .
Դէհ, արի և վայելիր.
Խմիր։ Մինչ կոկորդդ խմիր։

Ինդրայի մի այլ օրհներգը.

Եւ դու նայում ես բաղցր աչօք
Սպիտակադէմ արիականներիս,
Որ հնազանդ ենք առուտուածներին
Եւ ապօթում նրանց ծնկաչոք։
Դու մեզ տալիս ես ամէն ինչ՝
Եզ, ոչխար և կով ու ձի,
Կարգում մեզ վրայ կառավարիչ.
Վաղուց է տալիս ես ասկի։
Աշխարհից միշտ ես հալածում
Դու սնամոլի դադաններին,
Որոնք բնաւ չեն հանգուրժում
Իմդրա սիրող եղբայրներին։
Ջարդիր, ուրեմն, ջարդիր անխնայ,
Քշիր սևերին։ Քշիր չարերին։
Իսկ երբ մենք պիտենք քեզ
Զոհերով ու ապօթքներով՝
Ողորմիր ու փրկիր դու մեզ
Ամէն չարից ու գարշանքից։
Տուր մեզ ապրել հարիւր տարի,
Մեզանում երկչոտ մէկը չլինի։
Իսկ երբ մեռնենք այս աշխարհում,
Գնանք Արևի արքայութիւն՝

Քեզ հետ մենք այնտեղ, Ի՛նդրա,
Խրմելու ենք քաղցր Սօմա։

Ը Գ Ն Ո Ի Ն.

Միշտ դու նոյնն ես,
Ո՛վ մեծ Ագնի, բայց
Երեք կերպ երևում մեզ.
Յաստեղ կրակի պէս ես վառվում,
Ամպերում պէս կայծակ փայլում,
Երկնքում—արևի մէջ այրվում։
Երկնքում ես դու ծնվել,
Բայց այն աւրը, իմաստուն մարդ
Ընտեղից քեզ ցած է բերել—
Այն օրից ծխում է ամէն տեղ
Մարդու օջախ՝ կրակը զօրեղ.
Եւ դու յարդի ես երկրիս վրայ։
Խորհրդաւոր այն զոյգից,
Որ առաջ բաւրմի էր ձեռքին՝
Ծնար՝ պայծառ փայլ երեսիդ . . .
Ո՛վ երկինք ու դետինք-երկիր,
Սուտ չի լինի, եթէ ասեմ՝
Հրաշալի մանուկը ոչնչացնում է
Այրվող փայտերի այն ձոյեր—
Եւ անվրդով նա լափում է
Այն զոյգը, որ իրան ծնել է . . .

Վ Ա Ր Ո Ի Ն Ը Ց Ի Ն.

Այնտեղ, երկնի բարձունքներից
Ամենակալն այն մեր աէր
Տեղնում է մեր բոլոր գործերը,

Որ, ասես լիէ, կատարում ինք
Իր գահի ոտքերի մօտ . . .
Ամենատես նրա աչքերից
Չինը կարող ծածկել երբէք
Եւ ոչ մեր չնչին մի չարժում—
Խցում փակված ժամանակն էլ
Յայտնի է նրան մեր անկիւք . . .
Թէ շըշուկնով երկու հոգի
Հեռանում են հատատատ յոյսով,
Թէ մէջները մնաց գաղանիք՝
Աւա՜ղ, Վարունան երրորդն է,
Միշտ ներկայ նրանց զրոյցներին.
Երկիրն ու երկնի վիհեր՝
Ոդն էլ Վարունի ձեռքին են,
Այլ և երկու ծովի հուներ,
Ե՛ւ այս փայլուն մեծ աւազան:
Թէև յանդուգն ու մէկ խիզախ
Ստղերի սահմանն էլ անցնի,
Սակայն այնտեղ էլ նա չի կարող
Թարչել մեծ Վարունի աչքից:
Ամէն բան գիտէ նա, ամէն ինչ տեսնում,
Նոյն իսկ հետևում կայծկռտոց այն աստղիկ,
Եւ ինչպէս ձեռքիս տակին՝
Նրա առաջն է ողջ աշխարհ . . .
Ո՛վ էլ որ աչքերը խարխի—
Թարխումների հաշիւ պահվում է:
Աշխարհ կառավարել նրա համար՝
Նոյն է իմէ մի խաղացող
Մի վէգ գցի իր վարժ ձեռքով . . .
Թռչո՛ւն, ուրուն, աստծու անուններ,
Որ լծուում են երկնի վրայ՝
Չգիտէն արդար մարդերին,

Այլ ընկնեն մեղաւորի վրայ:*)

Վարունա, ամենաբանիգակ երկինքը, շատ օրհներգների մէջ հանդէս է գալիս նոյնպէս երրի արեւային աստուածութիւն. կան և ուրիշ արեւային աստուածութիւններ. *Միթրը*, որին յաճախ դիմում են Վարունայի հետ. *Սիրիւս*, *Սաւիտրի*, *Վիշնուի* և *Պուշան*—սրանք բոլորն էլ մի և նոյն դասակարգի աստուածներ են: Նրանցից իւրաքանչիւրը ունի լոկ իր հետ որ և է կապ ունեցող առարկաներ կամ առարկաներ: *Սիրիւս* հետամուտ է լինում մարդերին և նրանց յանդնարները հայտնում Վարունային ու *Միթրին*: Կենագործող *Սավիտրի* առաւօտը իր երկայն ոսկի ձեռքերով ամէն բան արթնացնում է քնից, իսկ երեկոյին ամէն բան քնեցնում: Ներգործող *Վիշնու*, երեք բայլափոխ անելով՝ տիեզերքը անցնում է ծայրէ ծայր: *Պուշան* մի հովիւ է, որ իր հօտից ոչ մէկը չէ կորցնում. նա էլ մարդերի առաջնորդ է նրանց իմէ այս աշխարհում ու իմէ վերջին պանդխտութեան միջոցին: Գլխաւոր աստուածների մի մասը ունի *Աղիտիկ* կամ *Աղիտիի որդիք* հանուր մականունը, որ նշանակում է անընդդիմելի, դա մի էակի անուն է, որ այնքան ընդարձակ ու անորոշ է, որ դժուար կարող է պատկերացվել: Ձիշնեք նոյնպէս *Ուշաս* այսինքն՝ արշալոյս, այն աստուածուհին, որին ամէն օր հետամուտ է լինում արեւի աստուածը. *Ասվիններ* կամ երկնային երկու կառավարիները, որոնք ամէն օր քերով պտտվում են երկնքի շուրջը. *Տվաշտրի* դարբին, որ կռում է Ինդրայի աշխարհատաշան նիզակը. *Ռիբհուներ*, այսինքն՝ արհեստաւորներ, որոնք մի ժամանակ մարդի էին և ընդունված էին աստուածների հասարակութեան մէջ: Նա-
մա՝ մեռելների աստուած, դա առաջինն է, որ փոխադրվել է անպրկրեզմանային աշխարհը, և այժմ կառավարում է

*) Այստեղ առաջ քարգմանչուհին դնում է հետևեալ ծանօթութիւնը:
«Այս քաղուածքը քարգմանել է B. P. Shielsեն Միթրի անգլիական տպագրութեան քարգմանութիւնից, որ գտնվում է գրքի անգլիական բնագրում:
Հ. Թ.

այն՝ և անխաբեն ուրախություններով մխիթարում է այն ոգիներին, որոնց տանում է այնտեղ Ազնիվ ստուածը (սա մահացոյց է անում դիակների այրումը, որ տեղի էր ունենում յառաջ, բայց ոչ ամէն տեղ) կամ Պուշան։ Այնտեղ պիտրիները կամ հայրերը սեղան են բազմած աստուածների հետ և վայելում են յաւիտենական երջանկութիւնը։ Բրահմանաապաստին, այսինքն՝ ապօթքի ոգին մի ուրիշ տիպի աստուածութիւն է, արարողութեան կամ ծէսի մարմնացումն է, և տարրերի աստուածութեանց հետ նրա ներկայութիւնը Վէդաներում ցոյց է տալիս թէ՝ սրբան կանուխ է սկսվել խմացակատնութիւնը հնդիկների մէջ։

ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՐ ԲՆԱՍՏԻՃՆԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ԱՑՍ ԿՐՕՆԸ։ Մենք պէտք է սահմանափակվինք այս սխեմի լոկ կարճ նկարագրով. այժմ վճռելու ենք այն հարցը, թէ ինչ տեղ է բռնում այս վարպապետութիւնը Հնդկաստանի կրօնական զարգացման մէջ։ Ոմանք հաստատում են որ սա մի նախնական կրօնական երևոյթ է, որ որա մէջ պարզվում են մարդերի՝ կրօն ստեղծելու ամենաառաջին ջանքերից մի քանիսը. իսկ միւսները ենթադրում են, որ վէդական օրհներգները ու սխեմը քրմական բնոյթ ունեն, հետևաբար՝ առաջ են եկել այն ժամանակ, երբ կուլտը հասել էր նշանաւոր զարգացման, և իրանց ծագմամբ պատասխան են այն մարդերի խմբին, որոնք շատ էին առաջ անցել իրանց ժամանակից։

1. ՍԱ ՆԱԽՆԱԿԱՆ ԿՐՕՆ Է։ Մաքս Միւլլէրը ասում է որ «Հնդկաստանի սրբազան գրքերն էլ պնահատելի են կրօնի ծագման ու զարգացման ուսումնասիրութեան համար, ինչպէս ասնկրիտը՝ մարդկային խօսքի ծագման ու զարգացման ուսումնասիրութեան համար»։ Դ-ր Միւիր պնդում է որ վէդական օրհներգները ցոյց են տալիս մարդկային ոգու բնական գործունէութիւնը նրա երևոյթների շրջանում։ Այս մատենագիրները կարծում են թէ վէդաների մէջ մենք կարող ենք տեսնել այն պրօցէսը, որի շնորհիւ նախնական

մարդիկ աստուածներ ունենալու հաւատքին էին հասել, և այն պարզ ու հասարակ միջոցները, որոնցով տեղի էր ունենում մարդու առաջին յարաբերութիւնը աստուածների հետ։ Այս գրաւոր վաստակների անկասկածելի հնութիւնը այս կարծիքի օգտին է խօսում. Ռիգվէդան ամենքը հնդիկ գրականութեան հնագոյն ստեղծագործութիւնն են համարում, և շատ օրհներգներ գրված են եղել Ք. Ծ. մօտաւորապէս 1500 տարի առաջ*)։ Վէդական կրօնի մարուր ու բացորոշ բնոյթը ըստ երևոյթին նոյնպէս էլ պէտք է տալիս ունենալ մի այսպիսի հասկացողութիւն։ Սա մի այնպիսի կրօն է, որ զարմանալի կերպով խօսքի է մարդկային նախնական հաւատի առաջ տարրերին։ Աստուածների մասին եղած վայրենի ասացուածներն ու անբարոյական պատմուածքները բոլորովին բացակայում են այս օրհներգներից. նրանք խօսքի են նաև կախարդութեան ու ֆէտիշիզմի տարրերին. աստուածները հանդէս են գալիս լրիվ խաչար էակներ, և կրօնը կայանում է այս խաչար էակներին հաղորդակցելու մէջ։ Այն ինչ Հնդկաստանի յետագայ ժամանակի կրօնը, այն է՝ բրահմանները կամ Ռիգվէդայի կօմէնտարիաները և միւս յետագայ Վէդաները պարունակում են իրանց մէջ բազմաթիւ պլպլուն լկէնդաներ և ներկայացնում են իրրև մի այնպիսի կրօն, որ ոչ մի գէպքում զուրկ չէ սնապաշտութիւններից։ Այս պատճառով կարելի է հաստատել, որ արիականների մարուր կրօնը վերջը ենթարկվել է փչացման՝ այն ցեղերի աւելի ստոր կրօնի հետ շփվելու պատճառով, որոնց հետ ճել էին արիականները։ Ենթադրում են որ հնդիկ կրօնը վերջը փչացել է պրավիդիայի ու կօլաբեացի բնիկների ազդեցութիւնից։ Վէդական կրօնի մէջ չկան կուռքեր, չկան պժոխքի մասյ նկարագրութիւնները. նրանից բացակայում է պատկերապաշտական սխեմը, որի վրայ հիմնվել

*) Ըստ Մաքս Միւլլէրի՝ Մանտրա կամ օրհներգների ժամանակաշրջանը վերաբերում է 1000—800 թ. թ. Ք. Ծ. առաջ. բայց ուրիշ գիտնականներ նրան աւելի կանուխ են տեղ տալիս։

էր յիսապայ բրահմանիսմը, նրա մէջ չկան դևեր, որոնցից պէտք է զգուշանալ, չկան շատ աստուածութիւններ։ Ընտանի չենք պահում մենք հոդեփոխութեան վարդապետութիւնը, նոյնն էլ չափազանց ասմայեն տեսակի է։ Այրուձ՝ իր ամուսնի թաղման խարոյկի վրայ զոհ բերվելը չէ սրբագործւում Վէդաների կողմից, և նրանց մէջ հանդիպում են լոկ նախնիների երկրպագութեան մի բանի հետքեր։ Այս բոլորը, կարելի է ենթադրել, որ յիսապայ ժամանակի փշանալու նշաններն են։ Վէդական կրօնը մի լուսաւոր ու հզօրանիկ կրօն է, և նրա մէջ երևան են գալիս մարդկութեան նախնական հասարակները, որ հնդիկները ուրիշ ժողովուրդներից բիչ են ազգատել. օրհներգները՝ ցոյց են տալիս հասարակը, դէպի որ բնազդս ձգել էր մի զօրեղ ու հզօրանիկ ցեղ, երբ մարդերի ոգին սկսել էր բացվել նրանց շրջապատող աշխարհի հրաշալիքների առաջը,—«նախնական հովիտների» հասարակը, «որոնք փառաբանում են իրանց աստուածներին այն ժամանակ, երբ նրանք դշում են իրանց հօտերը դէպի արօտատեղերը»։ Հնդիկները ուրիշ ժողովուրդներից հեռու պահպանեցին՝ աստուածութիւնը բնութեան մէջ տեսնելու ընդունակութիւնը. և մարդկութեան նախնական հասարակները պահպանվում են այստեղ իրանց սկզբնական անձեռնմխելիութեան մէջ, մինչդեռ ուրիշ կրօններում այս հասարակները անյայտանում են ու չեզոքվում։

2. ՍԱ ՅԵՏԱԳԱՅ ԹԱՄԱՆԱՑԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿՐՕՆՆ Է։ Միւս կողմից՝ մի կարծիք կայ, թէ այն հասարակութիւնը, որի մէջ առաջ են եկել օրհներգները՝ չէ թէ նախնական, այլ զգալի կերպով զարգացած մի հասարակութիւն է եղել արուեստների ու հիմնարկութիւնների նկատմամբ։ Ինչները, այսինքն՝ մարգարէները, օրհներգներ յօրինողները, նմանօրինակ արուեստով պարապող ընտանիքներին էին պատկանում. օրհներգները չէ թէ երևելական դպացումների անմասնական արտայայտութիւնն էին, այլ գրված էին չափաբերական մի-

շակված սիստեմով՝ որոշ նպատակի համար, այսինքն՝ իբրև մեծ բանաւոյատրծութիւնների մասներ։ Եակ ինչ վերաբերում է նրանց մէջ աստուածների նկատմամբ գոյութիւն ունեցող վայրենի առասպելների ու անբարոյական պատմուածքների բացակայութեանը՝ ապա այդ փաստը չէ ապացուցում թէ ժողովրդին այն ժամանակ չէին այդպիսի բաներ, այլ միայն այն է հաստատում, որ բանաստեղծները այդ պատմուածքները չեն տեղաւորել իրանց օրհներգների մէջ։ Լանգ ժողովել է այս վայրենի առասպելները, որոնք նման են երկրի զանազան մասներում բնակող ուրիշ ժողովուրդների առասպելներին և որոնք հնդիկ պրահմանութեան առել են շրջանառման են հանդիպում. նա այն էլ է ցոյց տալիս, որ իրանք օրհներգները զուրկ չեն այս առասպելներից մի քանիսի խառնուրդից։ Հնդիկներին յայտնի էր երկնքի ու երկրի ամուսնութեան և աստուածների ծնունդի առասպելը, ինչպէս այդ ամուսնութեան հետևանք։ Նրանց մէջ գոյութիւն ունէր ջրհեղեղի պատմուածքը և ունէին էլ առել նախնական պատմուածք այն բանի մասին, թէ ինչպէս երկիրը բարձրացել էր ծովի յատակից։ Հնդիկների մէջ կային նաև պէսպէս առասպելներ աստուածների հին պատերազմի և երկրի ու իր վրայի բոլոր մարդերով՝ մաս-մաս յօշոտված մի ահագին հրէշ։ Նրանք կարծում էին թէ մարդիկ չէին առաջ գալու մասին։ Նրանք կարծում էին թէ մարդիկ այն պատճառով են պատկանում դանազան դասակարգերի, որ առաջ էին եկել Պուրուշի մարմնի դանազան մասներից՝ նրա յօշոտված ժամանակը։ Հնդիկ պրահմանութեան մէջ կարիք է զգում շատ պատմուածքներ, որոնք նախնական հերետիկոսութեան ծնունդ են համարվում. և այն փաստը, թէ Ռիգվէդան միմիայն այս պատմուածքներին չէ վերաբերում, և թերում է ուրիշները՝ ուղղակի այն է մատնացոյց անում, որ այս հատուածում հեղինակները մտաւոր ու կրօնական զարգացման ուրիշ բարձր աստիճանի վրայ են եղել կանգնած, քան նրանց ժողովուրդը։ Այս բոլորը մեզ բերում է այն

եղբակցությունն, որ այն էպօխում, երբ գրված են եղել օրենքները, նրանք, որոնց վրայ գրված է եղել կուրսի զարգացման հոգսը՝ աշխատելիս են եղել շրջել մասսաների ուշադրությունը կրօնի աւելի անապաշտական ու երեխայական տարրերից և առաջ քաշել առաջին գծի վրայ այն մարդու ու վախմ հայրապակցությունը, որպիսին մարդիկ կարող էին ունենալ բարի աստուածների հետ։ Վատ աստուածների հետ յարաբերություն չէ հաստատվում. եթէ կան էլ աստուածների մասին անհեթեթ պատմուածքներ՝ ապա այդ պատմուածքները չեն կրկնում. ամէն բան, ինչ որ մոլի է ու սոսկալի, ինչպէս և ամէն անխոհեմ բան՝ հեռացվում է կրօնից։ Նախնիների երկրպագությունն ապէս չէ խրախուսվում. ընտանեկան ծէսերը չարունակվում էին, բայց կուլտը ընտանիքից դուրս էր, և չէր սահմանափակվում որոշված տեղերով։ Զոհարերության հետ կապ ունեցող հանգամանքները աչքի չեն ընկնում շատ վաղ ընթացքում։ Զոհարերությունը ամենից առաջ փոխարինումն է։ Այն պատճառով է աստուածներին նուէր տրվում, որ նրանք էլ իրանց հերթին պարգև տան։ Բացի դրանից՝ սա մի համայնական գործողություն է, որի մէջ աստուածն ու իր յարգողը՝ երկուսն էլ մասնակցություն ունեն։ Կերակուրը, և դրուագապէս սոման կազդուրում է աստծուն, և այդ բանը մի սերտ համակրություն է առաջ բերում աստծու և մարդու միջև։ Իսկ երբորդ՝ զոհաբերությունը սրբագործության արտայայտությունն էր։ Ծէսի ճիշտ կատարումը բնազդական նշանակություն ունէր։ Այնպէս էր համարվում, թէ զոհաբերությունը պահպանում է համաշխարհային կարգ ու կանոնը. առանց զոհերի՝ աստուածները կհարանային, բնության օրէնքները չէին կատարվի, և մարդը մի վայրենի վիճակի մէջ կընկնէր։ Իրանք աստուածները սկզբում զոհեր էին բերում. նրանք իրանք զոհաբերությունից էին ծնվում, այնպէս որ զոհաբերությունը համաշխարհային հիմնական սկզբունքներից մէկն է. նա յաւիտենից այդպէս է

եղել, և միշտ էլ այդպէս է լինելու։ Էդիպական կրօնի առաջնորդները այսպիսով կրօնի մէջ զարգանալու կողմնակիցներ չէին միայն. նրանք նոյնպէս այն ծէսը կատարողներն էին, որ ըստ էնրեան նրանց համար նպատակ էր. նրանց դժվարագործը՝ զոհաբերությունը պատշաճաւոր կերպով կատարելն էր։ Նրանց գործունէության այս կողմը ունէր, ինչպէս կանոններ, կարևոր հետևանքներ։ Բայց Ռիգվէդան մեծ գործ կատարեց Հնդկաստանի համար, առաջ քաշելով բարոյական աստուածներին, դէպի որոնց՝ մարդուն քաշում էին անձնական դրդումից բարձր դրդումներ։ Երդարապատ, մարդու արարքներին հետամուտ եղող և նրան իր գործերի համեմատ վարձատրող աստուածները պէտք է արհեստներին նրանց խիղճը, որերբ հետաքրքրում էին նրանց. հէնց այսպէս էլ աստուածները, որոնք ընդունակ են օրենքը տալու տարրեր ազգացողներին՝ պէտք է այնպէս անեն, որ իրանց ժողովուրդն էլ ոգևորված լինի։ Հնդիկ կրօնի բոլոր մոլորությունների մէջ երբէք աչքից չէ վրիպել այն բարձր բարոյական դրօշակը, որ բարձրացրել են հնդկաց աստուածությունները։

Ո՛րտեղ գոյություն ունի շատ աստուածների հաւատը, այնտեղ այդ աստուածները յայտնի յարաբերության մէջ պէտք է լինեն միմեանց հետ. և մեզ համար կարևոր է գիտենալ, թէ *ինչպէս են վերաբերվում միմեանց վէդաների աստուածները*։ Այստեղ մենք շատ պարզ կերպով կարող ենք տեսնել թէ որքան անհատական է բազմաստուածությունը։ Աստուածների վիճակը միմեանց վերաբերմամբ շարունակ փոփոխում է։ Մենք տեսնում ենք, որ Ագնուն դիմում են, երբ մի անպատման ծայրագոյն էակի. նա բնակում է երկնքի բարձր սահմաններում, ծնում է աստուածներ, սահմանում է համաշխարհային կարգ ու կանոնը. սակայն յետոյ տեսնում ենք, որ մի և նոյն սպով են դիմում Ինդրային էլ, Վարունային էլ, Միթրին էլ, միւսներին էլ։ Ապա մենք հանդիպում ենք միաժամանակ երկու աստուածության պնդելուն. այս

բանը յաճախ պատահում է Ինդրայինն ու Ագնան, այնպէս էլ Վարունայինն ու Միհիրայինն։ Ծայրագոյն աստուածութիւնն չկայ, կամ աւելի ճիշտ՝ բոլոր աստուածները հերթով հանդէս են գալիս իբրև ծայրագոյն աստուածներ. այս պատճառով անհրաժեշտ է մի աստուածութիւն, որին կարելի լինէր փառաբանել ամէն կերպ, և հնդիկը փառաբանում է այսպիսով ամէն որոշ աստուածութիւն։ Այսպիսով առաջանում է մէկ իր տեսակի միաստուածութիւն. ոգին ընդունում է այն աստուածը, որին կարելի է տալ անսահման երկրպագութիւն։ Բայց սա մի այնպիսի միաստուածութիւն է, ինչպէս ուղիղ ցոյց է տալիս Բարա՝ որի մէջ ծայրագոյն աստուածութիւնը շարունակ փոխւում է. իսկ Մաթս Միլլէր այս ձևերի միաստուածութիւնը անուանում է կաէնոթէյիսմ, այսինքն՝ երկրպագութիւն միաժամանակ միաստուածութեան, սակայն առանց մերժելու, թէ կան և արժանի են երկրպագութեան ուրիշ աստուածներ էլ։ Նկատենք որ կրօնի այս ձևը, որի մէջ պաշտւում են մի քանի աստուածներ, և որոնցից իւրաքանչիւրը հերթով ծայրագոյն է համարւում,—յոկ Հնդկաստանի սեփականութիւնը չէ. մենք արդէն հանդիպել ենք այս ձևին և դարձեալ հանդիպելու ենք։ Բայց Հնդկաստանում գտնված էր այս դժուարութիւնից դուրս գալու մէկ իր տեսակի ելք։ Հնդիկների աստուածները այնքան անորոշ, անդէմ ու նման էին միմեանց, որ դժուար թէ շատ հաստատ կարողանային պահպանել նրանց ուրոյն անձնաւորութիւնները. չէր տպում նոյնպէս, որ նրանք միապետական պանթէօն կազմէին. նրանցից ոչ մէկը, ինչպէս հարկն էր, չէր զանազանւում միւսներից և հարկ եղած չափ բարձր չէր կանգնում միւսների վրայ, որ շարունակ կառավարէր մնացածներին։ Սակայն մէկ լինելու (միութեան) զգացումը հնդկաց կրօնի մէջ շատ զօրեղ է. էն սկզբից հնդկական կրօնը միջոց է որոնում հաշտեցնելու զանազան աստուածների յատկութիւնները և նայելու նրանց վրայ, իբրև մէկ հատիկ բանի. շատ հին ժամում ու-

նի մի նմանօրինակ հասկացողութիւն Ռիշի, այսինքն՝ կարգ ու կանոնի մասին, որ մասնաւորապէս չէ միացել որ և է աստծու, բայց որ կառավարում է ֆիզիկական ու բարոյական աշխարհը, և որի հետ բոլոր էակները պէտք է տեսնեն իրանց հաշիւները։ Փիլիսոփայութիւնը էն սկզբից զբաղվում է Վէդական աստուածներով. այս կրօնին հատասարապէս յատուկ են թէ ձգտումն դէպի բարոյական կեանքը և թէ բռնապետութիւնը։ Մենք կարող ենք տեսնել մինչ անգամ Ռիգվէդայում, որ Հնդկաստանը կկործանի իր աստուածների բազմաստուածութեան պրօբլէմը ոչ թէ միաստուածութեան միջոցով, հարկադրելով մէկ աստծուն իշխել միւսների վրայ, այլ բազմաստուածութեան, դարձնելով բոլոր աստուածները մէկ էակի տեսակները կամ յայտնութիւնները։ «Ագնին բոլոր աստուածներն է», կարդում ենք մենք այստեղ։ Եւ այն կրօնը, որ իր պաշտամունքի առարկաները համախմբում է այս կերպով, ոչ թէ գործողութեան, այլ խոհականութեան կրօն է դառնում։

ԺԱ ԳԼՈՒԽ

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Բ) ԲՐԱՀՄԱՆԻԶՄ.

Այս էպօխին, երբ Պէնջաբում բնակող արիականները ժողովել էին երգերը՝ հետևեց պատերազմների ու շփոթմների շրջանը, որից յետոյ յաղթական ցեղը տարածվեց հեռու, դէպի արևելք և բնակեց Գանգէսի ու նրա վտակների մօտ։ Դրամխան այս փոփոխութեան հետ առաջ եկաւ և՛ մի մեծ փոփոխութիւն ժողովրդի հոգեոր վիճակի մէջ,—փոփոխութիւն, որ պարզ կերպով յոլանում էր նրա կրօնի վրայ։ Քուրմերը ջոկվում, առանձին դասակարգ էին կազմում ամբի աչքի ընկնող կերպով, բան առաջ, և դրա հետ միասին առաջին տեղը բռնեցին այն բոլոր երևոյթները, որոնք սովորաբար միացած էին քուրմերի բահանայապետութեանը կամ իշխանութեանը։ Սկզբնական կրօնական պրատաքները միացել, որպեսզի կանոն էին դարձել. հետզհետէ կերպով առեղծվում են նոր պրատաքներ՝ հների բացատրութեան համար. զոհաբերութիւնները պայմանաւորվում են ամբի բարդ ծէսերով, և նրանից վերապրվում են նոր ուժեր. այս ձևապաշտութեան և կրօնի արտաքին կողմերի սատակ չոր ու ցամաք լինելու հետ ձեռք-ձեռքի տուած՝ առաջ են գնում կրօնական ընդարձակ ու ազատ մտորումները։

ԴԱՍԱԿԱՐԳԱՑԻՆ ՍԻՍՏԷՄԸ. ԲՐԱՀՄԱՆԵՐԸ. Այս բոլոր շարժման բանալին ձեռք է գալիս քուրմերի նոր դրու-

թեան կամ ժամանակաշրջանում դասակարգային սիստէմի առաջ գալու մէջ։ Թէպէտ այս սիստէմի մասին միայն մի անգամ է յիշատակութիւն լինում Ռիգվէդայում, այն էլ յետագայ ժամանակի ծագում ունեցող օրհներգի մէջ՝ բայց դիտնականները նրա հետքերը գտնում են նոյն իսկ օրհներգների դասաւորութեան մէջ, և որովհետև նա հանդիպում է Պուրուսաստանում, ապա հաւանական է որ հնդիկների մէջ էլ է գոյութիւն ունեցել նրանց՝ Հնդկաստան մտնելուց առաջ։ Ենթադրում են, թէ այս սիստէմը կարող է մինչ անգամ վերապրվել դասերի բաժանմանը նախնական արիական ընտանիքների միջև։ Տիտօնական լէգէնդաներն էլ, ինչպէս և հնդկականները, բացատրում են, թէ ինչ կերպով մարդկութիւնը էն սկզբից բաժանված է եղել զանազան դասակարգերի։ Բայց սկզբնական դասակարգային տարբերացումները պէտք է առաջին դարերում լինէին՝ Հնդկաստանի դասակարգային սիստէմի խիստ ձևի հետ ձուլվելուց առաջ։ Այս սիստէմը ըստ երևոյթին կազմակերպված է եղել բրահմական դասակարգը բարձրացնելու յատուկ նպատակով, և պէտք է երևան գար իբրև բուրմերի ու վարիչների կամ մարտիկների դասակարգի միջև տեղի ունեցած պայքարի հետևանք։ Քուրմերը անհրաժեշտ գործառն

վում է այս դասակարգի ձեռքում, որի սրբությունը ժառանգական է և կարող է ձեռք բերվել միմիայն ծնունդով։ Այս դասակարգի անդամները—և միմիայն նրանք—իրաւունք ունեն հոգևոր կրօնական ծէսերի կատարման վրայ. սակայն նրանց չի կարող տեղ մարդերի ու աստուածների միջև եղած հաղորդակցությունը։ Բրահմանը, նոյն իսկ իր ծնվելուց սկսած մի սուրբ էակ է. նա աւելի բարձր նպատակների համար է նախատեսվածը, քան միւս մարդիկ, և նրա ու միւս մարդերի միջև եղած տարբերությունը պէտք է երևայ նրա բոլոր գործողությունների ու սովորույթների մէջ իր ամբողջ կեանքում։ Նա բոլոր դասակարգերի բնական պետն է։

Եթէ ճիշտ է որոշված բարձր դասակարգը, ապա ճիշտ են որոշված և միւսները։ Երկրորդ դասակարգը *զշատրիների*, այսինքն՝ մարտիկների կամ նրանց վարիչների դասակարգն է, երրորդը՝ *վայշյաների* կամ երկրագործների դասակարգը։ Այս երեք դասակարգերը յայտնի արժանաւորությեան աչքեր են, որոնք երկու անգամ ծնված դասեր են (սրանց կրկնակի ծննդեանդը համապատասխանում է քրիստոնէական եկեղեցու կոնֆիրմացիային)*)։ *Սուդրաները* չորրորդ ու ստորին դասն են. սրբազան գրքերում նրանց վրայ յաճախ միւս դասակարգերին խնամարկությեամբ ծառայելու պարտաւորությունն է դրվում։ Ենթադրում են, որ սուդրները նուաճված բնիկներն էին, իսկ երեք բարձր դասերը յաղթանակող արիականներին էին պատկանում, բայց սա դեռ ևս բաց խնդիր է։

Պրօն ուսումնասիրողը պէտք է ուշ դարձնի բրահմանների վրայ, որոնք իշխող դասի դրությունն են ձեռք բերել։ Առաջ կիսօսենք այն պրակտիկ չարժման, որի հետ կապված է եղել այս դասը, ապա գոհարերությունների, որ կատարում էին բրահմանները, և նրանց աստուածների մասին։ Ցետոյ գոյց կտանք թէ ինչպէս նրանց կրօնը գործնականապէս յարմարվել է կեանքին, և, վերջապէս, կշռադատենք այս շրջանի իմացական գործը, որ սակայն չի կարող միմիայն բրահմաններին վերագրվել։

1. ՍՐԲԱԶԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ։ Երբ անցաւ այն ժամանակը, երբ առաջ էին եկել Վէդաները, նրանք սկսեցին էլ աւելի սրբազան համարվել։ Նրանց գրվելուց մի բանի դար յետոյ, նրանք այլևս հանրահասկանալի չէին. նրանց հասկանալու համար մեկնութիւններ էին պահանջվում. սակայն մի և նոյն ժամանակ աւելի էլ տարածվում էր նրանց ներշնչված լինելու վարդապետությունը։ Հարկաւորվեց, որ բրահմանները մեկնէին հին օրհներգների բառերը և բացատրէին, թէ ինչպէս են նրանք գոհաբերության միջոցին կատարում իրանց վերապրված գործողությունը։ Այս եղաւ պատճառը, որ առաջ եկաւ հնդկական հնագոյն պրօզը (արձակ ոլուածը), այսինքն՝ բրահմանների կամ ծէսերի մեկնութիւնները։ Այս երկերը, որոնք սկզբում տեղեկություն էին քահանի լինելու համար, իրրև կուլտի կատարման միջոցին մի ձեռնարկ՝ հարատևում էին գոհաբերությունների և նրանց ծագման ու գործողության մասին ունեցած ամենատեսակ զրպարտներով. ծէսերի յայտնի կողմերը բացատրվում են նրանց մէջ աստղաբաշխական պատմուածքներով, որ մենք այդպէս չէինք պիտենայ, և որոնցից տեսնում ենք որ շատ սնապաշտություններ, որոնք Վէդաների կողմից չէին հրահանգված, այսու ամենայնիւ գոյություն ունէին ժողովրդի մէջ։ Իւրաքանչիւր Սամհիտա կամ օրհներգների հատորածու՝ ունէր իր բրահմանը, իսկ մի քանի հատորածուներում նրանցից մի քանիսը կար։ Թէպէտ այս երկերը իրանց հրամայելու համար պերազանցում են շատ աստուածպաշտական գրքերի, այսու ամենայնիւ մեծ արժէք ունեն, որովհետև յայտնի են սփռում հնդկական բարքերի ու հասկացողության վրայ։ Եւ ինչ որ պէս և հնդիկների առասպելաբանության մեջ նրանց պատմության յետագայ ունեցաւ սէմիտների միջև նրանց պատմության

*) Ըստգանի ծնունդ։
Հ. Թ.

պայ շրջանում, նույնը պատահից և՛ այսոհեպ, բնագրի սրբագրությունը տարածված էր կոմմէնտարիանների վրայ, բրահմանն էլ սկսել էր աստուածների տուրք ու ազդում համարվել, և ոմանց կողմից մինչ անգամ օրհներգներից էլ ավելի էր յարգվում։ Ներշնչված գրուածքների երրորդ շարքը կազմված է ուպանիշադներից կամ խմացական մեկնութիւններից, որոնց մասին խօսելու ենք ստորև։ «Վէդան» ավելի ընդարձակ մըտքով երեք մասից կամ գրուածքից է կազմուած, այն է՝ մանտրաններից, բրահմանաններից և ուպանիշադներից։ Այս երեք մասները յայտնութիւնն կամ «Շրուտին», այսինքն՝ լսողութիւնն են վերաբերում. նրանց մէջ պարունակվածը այնպէս է համարվում, թէ ներշնչված մարդիկ են լսել ավելի վսեմ ապրիւրից։ Սրուտի համապատասխանում է «սմրիտին», այսինքն՝ յիշողութիւնը, աւանդութիւնը։ Սա ընդգրկում է «Սուտրաները» կամ այն վարդապետները, որոնք վերաբերում են ավելի հին գրականութիւնից, անալին ծէսերից և ամէն տեղ ընդունված սովորոյթներից հաւաքած համառօտ կանոնների նման ծէսերին. որոնց կցված է Վէդաների նիւթի դասաւորութիւնը։ Օրէնսգրքերը, դիւցազներգութիւնը (էպոս) և Պուրանները կամ հին լեգենդային պատմութիւնները նոյնպէս այս դասին են պատկանում։

Վէդաների, նրանց սրբութեան ու գօրութեան վարդապետութիւնը նշանաւոր դեր էր կատարում հնդիկների մըտքում։ Վէդաները յարգում էին ոչ իբրև ս. Գիրք, որովհետև նրանք գրված չէին, այլ բերանէ բերան էին հաղորդվում,— բրահմանը մինչև այժմ անգիր գիտէ իր սրբազան գրականութիւնը,—այլ իբրև գերբնական ուժ ունեցող օրհներգներ, և որոնք ավելի բարձր ծագում ունեն, քան մարդու գրաւոր վարդապետները։ Նրանք բարձրացրված էին աստուածութեան աստիճանին, կապված էին աշխարհի ստեղծագործութեան հետ և գտնվում էին առաջնաստեղծ առարկաների թւում։ Նրանց ուսումնասիրութիւնը չափազանց կարևոր նշանակութիւն ունէր. այդ ուսումնասիրութեանը ձեռնարկողը մի կարևոր գոհ է բերում, ձեռք է բերում իր համար անանց աշխարհ և միանում է Բրահմայի հետ։ Ահներև է որ այն մարդկերի դասը, որոնք հանդէս էին գալիս իբրև ընդունված՝ օրհներգ մեկնողներ, պէտք է շատ մեծ ազդեցութիւն ձեռք բերէր։

2. ՀՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ. Հնդիկների ծիսարանը մի չափազանց ընդարձակ բան է։ Վէդական ժամանակաշրջանում կային մի քանի կարգի գոհաբերութիւններ—Ռիգվէդայի օրհներգները լոկ ածմայի մատուցանելու հետ գործ ունեն—և մի քանի տեսակ քուրմեր. մշակված ծիսարանը հաւանաբար առաջ էր եկել հետաւոր անցեալից և, զուրգուրվելով հետևելէ գործադրող քրմական դասակարգի կողմից՝ չէր կարողանում շուտով փոխվել։ Ձնայելով այն նիւթերի նշանաւոր կուտակմանը, որոնք մատչելի էին «բրահմաններում» ու «սուտրներում»՝ հնդիկների գոհաբերութեան լիակատար պատմութիւնը դեռ չէ գրված։

Հնդիկների հին գոհաբերութեան համար բնորոշ է այն հանգամանքը, որ նա չէ սահմանափակվում տաճարով կամ ուր և է սրբազան տեղով, և որ նրա հետ չէ պահանջվում աստուածութեան ոչ մի պատկեր։ Սակայն հրամաններ են տրվում ծէսի կատարման կամ գոհի սեղան կանգնեցնելու համար տեղի ընտրութեան ու պատրաստութեան վերաբերմամբ. ամէն անգամ տեղը պէտք է յայտնապէս պատրաստ լինէր։ Աստուածներին խնդրում էին որ չնորհ բերեն կամ այնպէս էին ենթադրում, թէ նրանք բաղկած են երկնքումը և դիտում են, ինչ որ տեղի է ունենում. գոհը մատուցվում է բացօդեայ։ Ընտրութիւնը միշտ կատարվում էր յայտնի ծիսարանով, սակայն երկրպագուներից էր կախված, թէ ուր աստուածութեանը կամ ուր աստուածութիւններին պէտք էր դիմել գոհաբերութեամբ։ Ո՛չ Ընդու համար կար առանձին ծիսարան, ոչ էլ Ինդրայի, բայց մի և նոյն ծէսը կարող էր

կատարվել նրանցից իւրաքանչիւրի և միանգամայն երկուսի համար: Այն զոհաբերութիւնները, որոնց մասին մենք լսում ենք «բրահմաններում», ընտանեկան ծէսեր են. այդ զոհաբերութիւնները կատարւում են տան մեծերի ձեռքով, որոնք այդ ժամանակ նախնիներին էլ են հրաւիրում ներկայ լինելու: Բրահմանը այն պատճառով է ներկայ լինում, որ հրահանգներ տայ զոհաբերողներին ու նրանց օգնող տարբեր բաժիններին, և անօրինաւիրեան անի բահանայապետական արարքների մասին, որոնք պատկանում են ընտանիքի բոլոր անդամներին: Զոհաբերութեան ժամանակը որոշւում էր, բնութեան բնական երեւոյթներին կամ ընտանեկան անցքերին նայելով: Պայմն զոհաբերութիւններ, որոնք աւելի էին կարեւոր քան միւսները, այն էլ՝ աւելի մշակուածները լիովին կատարված լինելու համար՝ երբեմն մի քանի օր, մի քանի ամիս և մինչ անգամ մի քանի տարի էին պահանջվում: Մեր լսված զոհերի միջև, որոնք կարող էին կատարվել, յիշատակութիւն ենք գտնում և՛ մարդկային զոհերի վերաբերմամբ. սակայն մարդ զոհ բերելը, լմէ և հնագոյն ժամանակներում իշխող էլ էր, այսուամենայնիւ վերջը հնացաւ:

Այն հանդամանքը, որ գաւակարգը կազմվում էր բրահմաններից՝ փոխեց զոհաբերութեան բնոյթը, և այնպէս արեց, որ զոհաբերութեան կատարումը կախումն ունենայ մանաւանդ գիտութիւնից կամ նրա խորհրդաւորութիւնը մեծացնելուց: Երբ մի անգամ արդէն օրէնսդրը նմանօրինակ զոհութեան էական տարր ճանաչվեց՝ ապա անհրաժեշտաբար մեծ նշանակութիւն պէտք է տանար այն անձը, որ կարող էր մեկնել օրէնսդրին ու բացատրել նրա նպատակութիւնը: Եւ եթէ մի անգամ արդէն ոկսվել էր զոհաբերութեան այլ և այլ յատկութիւնների բացատրութիւնը՝ ապա հէնց դրանով կատարեալ ընդարձակութիւն էր տրվում ամենաբնտիր հնարագիտութեանը: Պէտք է զարմանալ, թէ ինչ մանրուքների են հասնում բուրմների այս հրահանգութիւնները, ամենատարօրէ-

կան երեւոյթների ինչպիսի բացատրութիւններ են տրվում երկնքի ու երկրի բոլոր ծայրերից, և ինչպիսի սրբութիւն է նկատվում մինչ անգամ զոհարանի շուրջը ճաղ խոտի կանաչութեան մէջ: Ծիսարանին այսպէս վերաբերվելու հնարանքը անհասկանալի կերպով այն պէտք է լինէր, որ ծէսը, նրա արտաքին, մեքենական կատարումը սկսեցին շատ կարեւոր համարվել, իսկ էթիկական (բարոյական փիլիսոփայութեան) ու կրօնական նպատակը, որին սկզբում հետամուտ էին լինում՝ աչքաթող էր արված: Քուրմն ու այն մարդիկ, որոնց համար նա բահանայապետութիւն է, այնպէս են խնամք տանում ծիսականութիւնների վրայ, որ մոռանում են այն ամենայն ուղիները, որի համար կատարվում են այդ ծէսերը: Եւ որովհետև նրանք լիովին համոզված են, որ բոլոր կանոնների համաձայն և առանց ծէսի մէջ որ և է բան թոյլ տալու մատուցվող զոհը անպատճառ պէտք է ունենայ իր ներկայութիւնը՝ ուստի ինքը զոհաբերութիւնը հանդէս է գալիս իրրև ցանկալի օրինութիւն բերող մի բան. առաջ նշանակութիւնը փոքրանում է, իսկ զոհաբերութեանը՝ մեծանում: Այսպիսի մի պրօցէս, որ նկատվում է ամենուրէք որտեղ կայ ծիսական կողմ՝ բրահմանիզմի ժամանակաշրջանում ծայրայեղութեան էր հասցրած: Այս ժամանակաշրջանում հին աստուածները չունէին այլ ևս այն ազդեցութիւնը, որ առաջ ունէին ժողովրդի ոգու վրայ. մարդիկ այլ ևս իրանց աստուածները երկնքում կամ մրրկի մէջ չէին որոնում, այլ բոլոր աշխարհութիւնները կենդրոնացրել էին այն երկար արարողութիւնների վրայ, որ կատարում էր քուրմը, այն օրէնսդիրը, որ նա երգում էր զոհարանի առաջ, կամ այն ճգնաւորական կեանքի, որ անց էր կացնում իր կենդանութեան ջօրով: Երեւան եկան նոր տիպի աստուածներ: Ինչպէս մենք վէդական շրջանում տեսանք, որ Բրահմանապատի, այսինքն՝ աղօթքի տեղ էր ստացել Ինդրայի ու Վարունայի հետ միասին՝ այնպէս էլ այժմ ենք տեսնում, որ ծայրագոյն աստուածութիւնը

թիւնը կոչւում է *Բրահմա*: Զոհաբերութիւնը կցված ապօթքը տվել էր իր անունը տիեզերքի կառավարչին: Ծայրագոյն էակի միւս անուններն էլ են հանրային գործածութիւն ստանում, երբ պատմական ու առասպելական հին աստուածութիւնները յետին դծի վրայ են կանգնում, և մարդիկ սկսում են մի վերացական աստուածային միութիւն որոնել: Իբրև աստուածների գլխաւոր՝ յաճախ հրաւիրւում է *Պրաճապատի*, բոլոր արարածների պետը, որի մասին քիչ է խօսւում օրհներգների մէջ. յիշւում է նոյնպէս աստուածների մի երեքութիւն, այն է՝ Ագնի, Վայու, Սիրիւս, այսինքն՝ կրակը, օդը, արևը, մի երեքութիւն, որ ամփոփում է իր մէջ աստուածային զօրութիւնները: Աստուածների ստորոգելիքները կերպարանաւորւում են, և այսպիսով պանթէօնին աւելանում է դժգոյն վերացականութիւնների մի խումբ, երեան են գալիս ոգիներ ու դևեր, որոնց մասին խօսք չէ լինում օրհներգների մէջ, թէպէտ սրանից չէ եզրակացւում որ նրանք անյայտ են եղել աւելի կանուխ շրջանում: Սրանք, գուցէ, այն բնիկների աստուածներն են, որոնք այսպիսով վրէժխնդիր են լինում, երբ նուաճողների կրօնը, ճնշելով նրանց՝ զրկւում է ապա իր նախկին ուժից: Հզօր աստուածները անհետանում են հորիզոնից, և մարդիկ սկսում են երկրպագել բազմաթիւ, անորոշ ու անզօր աստուածների, ինչպէս չարիքի այնպէս էլ բարիների: Առաւօտները սկզբում հանրապէս աստուածներ էին, այժմ նրանք այնպիսի չար էակներ են դառնում, որոնց դէմ պէտք է լինում, որ բարի աստուածները կռւեն:

3. ԳՈՐԾԱԿԱՆ ԿԵԱՆՔ: Մենք ունենք հնդկական կեանքի ու բարքերի բոլորովին լրիւ պատկերները բրահմանիզմի շրջանում: Մեզ հասել են հին իմաստունների չատ օրէնքադրքեր, որոնցով, ինչպէս ենթադրւում են, կառավարվելիս է եղել հնդիկ հասարակութիւնը. ընթերցողն ինքը կարող է նրանց ծանօթանալ Մաքս Միւլլերի «Արևելքի Սրբազան գրքերով»: Այս գրքերից ամենանշանաւորն ու ամենահնագոյնը մարդկութեան առասպելական նահապետ Մանուի օրէնքներն են: Ընդհէնս, ինչպէս որ մեզ մօտ գտնւում է այդ երկը, հաւանաբար վերաբերում է երկրորդ դարին Ք. Ծ. յետոյ, բայց նրա կմախքը աւելի հին է: Լինելով սկզբում կանոնների մի տեղական հաւաքածու՝ նա քիչ-քիչ սկսեց ճանաչվել հնդկաստանի հնդիկ բնակչութիւնից: Տեղական ծագում ունեցող միւս հաւաքածուների հետ միասին նա նկարագրում է մեզ հնդիկ հասարակութեան վիճակը՝ նրանում գտնւող տարրերի յետոյ. սակայն այս կերպով մեզ հասած օրէնքներից շատերը պէտք է կազմված լինեին նախապատմական ժամանակներում:

Մանուի օրէնքը հիմնված է բրահմանների՝ ուրիշ դասակարգից ունեցած գերազանցութեան վրայ: Բրահմանները պետութեան կենարարն են և հսկում են ամենի վրայ. բայց նրանց կեանքը իր հերթին սահմանափակված է խիստ կանոններով, և նրանց բոլոր պատմութիւնն ու բոլոր գործունէութիւնը որոշված են նրանց համար ամենայն մանրամասնութեամբ նոյն իսկ իրանց ծնվելու մօմենտից: Բրահմանի նուիրեամբ նոյն իսկ իրանց ծնվելու մօմենտից: Բրահմանի կեանքը չորս շրջանի է բաժանված: Իր կեանքի մի բաւորքը նա եկած է մի աշակերտ, որ ապրել է ուսուցչի հետ և նրա ղեկավարութեամբ ուսումնասիրել է Վէդաների սրբազան վարդապետութիւնը: Իւրաքանչիւր վարդապետութիւն սկսում է *պատեաութիւնը*: Թոյլ տուր որ այսպէս կոչված սավիտրիի ոտանաւորից. «Թոյլ տուր որ խորհենք աստուածային կենարարի այս հոյակապ փառքի մասին: Թող լուսաւորի նա մեր միտքը»: Սա մի ապօթք է Օմի բնագանցական սճի հետ միասին (ենթադրում են որ այս սճը վերաբերում է երեքութեան երեք աստուածութիւններին, սակայն հաւանական է, որ սրա սկզբնական «այն» նշանակութիւնը այն վերացական, ամենաբովանդակ «այն»ն է, որով կուռքերը բացառապէս հաստատում է զուտ գոյութիւնը միայն, որ այսինքն՝ այդ սճը կրկնում է ամեն անգամ, երբ սկսում է

ուսումը և շատ յաճախ էլ ուրիշ դէպքերում։ Ուսուցիչը աշակերտի համար հօրից աւելի է և նրան պէտք է վերաբերվել շատ մեծ ուշադրութեամբ ու յարգանքով. այս տարիքը ոչ միայն լոկ իրերն օրէնքի, այլ և հասկանալ ու վայելուշ վարք ու բաբքի ուսուցման տարիքն է։ Վերջացնելով իր ուսման օրերը՝ բրահմանը բերում է իր առաջին զոհը, ամուսնանում ու դառնում է տան մեծը։ Ընդհատ հայթայթելու նպատակի մասին բիչ է խօսւում. բրահմանը աշխարհիկ մարդ չպէտք է լինի, բայց պէտք է անկախութեան ձգտի։ Նրան, սակայն, լծոյլ է տրւում, դէպք եկած ժամանակ ոգորմութիւն խնդրել։ Բայց աւելի այն են պնդում որ նա շարունակի իր ուսումը և անպէտն զոհ բերի աստուածներին ու մանուներին, որոնք նրա ամենօրեայ հոգածութեան առարկան պէտք է լինեն։ Բրահմանը, դաստիարակելով իր որդին, որին կարող է յանձնել իր տունն ու աստուածները՝ հանում է իր կեանքի երրորդ աստիճանին. նա կարող է բաշխվել աշխարհից և դառնալ ինքնահարատեւման ու խիստ կեանքի անձնատուր եղող մի ճգնաւոր։ Չորրորդ բնաստիճանը՝ անագատականի բնաստիճանն է, *զևսնկվսն* կամ *սաննիասինի* բնաստիճանը, երբ ծերացած մարդը, բաժանելով իր բոլոր գոյքը, հրաժարվելով մարդկային հասարակութիւնից ու ամէն օէս կառաբելուց և ապրելով միմիայն ոգորմութեամբ՝ աշխատում է որքան կարելի է պահել իր սիրտը ամէն յանկութիւնից և խորին մտախոհութեամբ միանալ ծայրագոյն հոգու հետ, հանելով այսպիսով Բրահմայի հետ յարաբերութիւն հաստատելուն ու վերջնական ազատութեանը։ Մանուի օրէնքների այս մասում տեղ է գրաւում մէկ այնպիսի խրատ, որի կառաբումը կեանքի հանգրնեմայ աստիճաններում չէ պահանջվում։

«Թող նա չցանկանայ մեռնել. չցանկանայ ապրել. թող սպասի իր ժամին, ինչպէս ծառան՝ իւ ռոճկի վճարելուն»։

«Թող նա համբերութեամբ տանի կծու խօսքեր, ոչ ոքի չվշտացնի, չպատժայ ոչ ոքի լռելեայն այս անցաւոր մարմնի

պատճառով։ Բարկացողին պատասխանելիս թող բարկութիւն չարտայայտի. թող օրհնի, երբ իրան անիծում են»։

Նա պէտք է ատելի զգուշանայ որ և է կենդանի էակի վնասելուց, պէտք է խորհի ծայրագոյն հոգու մասին, որ ներկայ է բոլոր՝ լէզ բարձր ու լէզ ստոր օրգանիզմների մէջ։ Նա պէտք է հրաժարվի սիրոյ բոլոր կապերից և այս միջոցով, իր մարմնի հանգչելու հետ, նա մինչ անգամ այսուհետև մնում է կատարեալ ազատութեան, կատարեալ հանգստի վիճակը և յարաբերութիւն է սկսում մեծ հոգու հետ։

Նմանօրինակ դաղափարները ցոյց են տալիս, որ բրահմանիզմը լոկ զոհաբերութիւնով չէ եղել զբաղվելիս։ Մանաւանդ խօսում է զոհաբերութեան վրայ ունենալիք հակոգութեան, այսինքն՝ իրրև այն զոհութիւնների մէկի մասին, որ պիտին կարող է ընտրել բրահմանը. և եթէ նա կարող է հաստատ իրաւունքով նուիրվել ուսման կամ ինքնակրթութեան, ապա մենք տեսնում ենք, որ աւաջ չէ բշվել կրօնի մի այլ կողմը, և ոչ լէզ այն կողմը, որ գոյն է ունեցել արտաքին աստուածների կամ մարդու արտաքին զոհութիւնների հետ։ Ա՛րքան գնահատում են արտաքին աստուածները, այնքան ընդարձակվում է ոգու ներքին աշխարհը, մարդիկ չգալիս են այն համոզման, որ փրկութիւնը ներքին ջանքերով էլ կարելի է ձեռք բերել ուղիղ այնպէս, ինչպէս և արտաքին ծէսերով, և որ փրկութեան գործին նպաստում են նաև իմաստութիւն և ապրելակերպը, ինքնանուաստացման ջանքերը և այն աստուածորոնելը, որ անհրաժեշտ կապը, որ բոլորովին հեռու է կանգնած ամէն նուէրից, կուլտ բոլոր ձևերից։ Մանաւանդ էվոլիկայի դէմ առարկում են որ նա ոչ լէզ մի ներդործական, այլ կրօնական խրատ է և ցոյց հանում. անագատականը բարձր է պատվում մնացորդից, մարդկի խրախուսվում են թողնելու իրանց այն պարտաւորութիւնները, որ ունեն դէպի ընտանիքն ու հասարակութիւնը, որից անկու և նուիրվելու մի, լէզ պէտք և վաեմ, բայց բացառապէս անձնական ու հեռանալու

նոասիրական նպատակի։ Իհարկէ, եթէ կրօնը չէ կարողանում մի աւելի վսեմ նպատակ դնել ամենազօրեղ մարդերի առաջ՝ ապա դա նրա թոյլ կողմն է ցոյց տալիս։ Բայց դրանից՝ կեանքը պայմանաւորւում է այնպիսի կանոններով, որոնց վրայ մենք չենք կարող չզարմանալ։ Այն բազմաթիւ մանրուքների ու ձևականութիւնների միջև, որոնք կապ ունեն ամէն գործողութեան հետ՝ բրահմանների կրօնի մէջ խորին կերպով արտայայտւում է մարդասիրական համեստ ոգին ու գործական առողջ բարոյականութիւնը, այնպէս որ բրահմանի սովորական ընտանիքը կարող էր ժրապլխութեամբ ու արդիւնաւէտութեամբ համակված լինել։ Սուրբի մասին սակայն ամէն տեղ խօսում է, իբրև մի այնպիսի էակի, որ երբէք չի կարող դուրս գալ իր առորագրեկութիւնից, և որի հետ չվիճելը՝ պղծվել է նշանակում։ Ո՛չ մի դասակարգի չպատկանողների վիճակն աւելի վատթար էր և ապրում էին անասելի ապրատութեան մէջ։

4. ՓԻԼԻՍՈՓՈՒԹԻՒՆԸ։ Մենք տեսանք որ բրահմանները լթ իրանց առաջնորդած ծիսական կոմի ու լթ բարձրադոյն աստծու մասին կազմած իդէալի մէջ, աչքի առաջ ունենալով Վէդաններում յիշված բնութեան հին երկրպագութիւնը՝ հասել էին մի աւելի ներքին ու ներանձնական (սուբյեկտիվ) կրօնի։ Բրահմային, այսինքն՝ աղօթքի զօրութեանը ծայրագոյն աստծու շափ փառաբանելը՝ մի փոխանցում էր արտաքին աստուածութիւնից դէպի մի և նոյն ժամանակ արտաքին ու մարդու կողմից իր սեփական փորձառութեամբ հասկացված աստուածութիւնը. փրկութեան նոր, թէպէտ և սկզբում միայն աշխարհից ձանձրացած անապատականին մատչելի՝ ելանակի երևան գալը,—այն եղանակի, որի մէջ ներքին զմայլումն ու ինքնախորասուզումը տանում էին դէպի կեանքի անհարաբար եղրակացութիւնը,—մատնացոյց էր անում նաև այն, թէ մօտեցել է նոր կրօնի ծագման ժամանակը։ Բրահմանների փիլիսոփայութեան մէջ արդէն վերջնապէս տեղի ունեցաւ մարդու վերաբերմամբ արտաքին աստուածներին մեքենական ծխականութեամբ ծառայելուց մի փոխանցում՝ ճանաչելու այն աստուածային էակը, որին մարդ հոգով մօտ է զգում իրան, և որին մօտենում է իր սեփական ներքին ջանքով։ Այս շարժման մէջ, որ սկզբում կարող էր մի սկէպտիկական յուզում լինել բրահմանների սեփական սիստէմի դէմ՝ նրանք ցանկացան սակայն մատնակցութիւն ունենալ, և այն երկերը, որոնց մէջ պարունակված է այս շարժման յիշողութիւնը՝ պարձան յայտնութեան մի մասը։ «Ուպանիշատները» կամ «Տպորդված վարդապետութիւնները» սրբազան խմացական կանութեան երրորդ ճիւղն են, և Վէդական գրականութիւնից այդպիսի շատ բան վերաբերում է բուդդիզմի նախընթաց շրջանին։ Այս գրքերը մինչև օրս կարդում է կրթուած հնդիկը, իբրև սրբազան գրուածքների գլխաւոր մասը, և նրանց փիլիսոփայութիւնը նրա կրօնն է։ Այստեղ մենք կարող ենք միայն յիշատակութիւնը նրա գլխաւոր գրութիւնների ու հասկացողութիւնների։

Աշխատելով խուսափել բազմաթիւ աստուածների պատճառով առաջ եկած շփոթից՝ հնդիկները մինչ անգամ վէդական շրջանում միջոց են որոնում շատ աստուածութիւնները իբրև մի աստուածութիւն քննելու։ Հնագոյն ժամանակներում իբրև մի աստուածութիւն հերթով իշխում էր իբրև ծայրագոյն աստուածութիւն. աստուածութիւնը ծայրագոյն է բազոյն աստուածութիւն. աստուածութիւնը ծայրագոյն է հանդիսանում այն պատճառով, որ իր էութեամբ աստուածներից մեծագոյնն է, այլ որ նրան հանգամանքներն են աստուածներից մեծագոյնն է։ Սա դէնէօտիսմ է։ Ապա փորձառութեան գծի վրայ կանգնեցրել

Բրահմա հոգևոր աստուածութիւն է։ Նա մտածող է, հասկացող է, նա «Մախան Ատմա» է կամ այն մեծ ոգին, որ անդրդուելի խաղաղութեամբ բաղմած է տիեզերքի փոփոխութիւնների ու խռովութեանց վրայ։ Տալով «Մախան Ատմա» արտայայտութիւնը «մեծ ոգի» բառերով՝ մենք ոգային առաջնութիւնը վազում։ Ատմա, որ սկզբում կեանքի շունչն էր, յետոյ ստանում է անձնաւորութեան, այն է՝ «ես»ի նշանակութիւնը, որը նրանից անջատւում է ամէն պատահական բան, ստանում է բոլորովին խորքում թաքնված «ես»ի իսկական նշանակութիւնը։ Իսկ Բրահմա մի մեծ «ես» է, բոլոր իրերի ներքին էութիւնը, որ գոյութիւն է ունեցել նրանցից առաջ, և որի վրայ չեն ներգործում նրանց փոփոխութիւնները։ Բայց մարդն էլ ունի ատմա կամ «ես». նա, այդ «ես»ը կարող է լինել շատ փոքր ու տեղաւորվել մարմնի մի այնպիսի մասում, որտեղ իրը չի երևայ։ Այստեղ տեղը չէ խօսելու այն հոգեբանական վարդապետութիւնների մասին, որոնցով պաշտպանվում էր այս արտայայտութիւնը. բայց բրահմանական մարդ խորքում գտնվում է ատմայի մասին մի տասկացողութիւն, որի մեծ յայտնութիւնը Բրահմայի մէջ նոյնացած է նրա փոքրը յայտնութեան հետ մարդու մէջ։

Յանձին Բրահմայի ձեռք էր բերված մի եզակի աստուածութիւն, երբ մարդիկ երես էին դարձնում նրա հետ կապ ունեցող ամէն զգայական նկատելի (կոնկրէտ) բանից։ Ոչինչ էպիտէտ չէ յատկանշում նրան, բանի որ ամէն էպիտէտ սահմանափակում է պահանջում. նա կարող է նկարագրվել միմիայն բացառական դրութիւններով կամ հարցական փոխարկութիւններով (метафора)։ Նա պէտք է բառնանութիւն առ այն կրօնական ձգտումը, որ ուղղված է ամէն անհատականութիւնից վերև և բոլորովին բարձր էակի, իսկ սա զրկում է նրան աչքի ընկնող կողմերից կամ որոշ բնոյթից։ Եւ, իրաւ, մարդ ի՞նչպէս բացատրի նրա ինչութիւնը աշխարհին։ Ի՞նչ գոյն ունի կատարեալ էակը այս փոփոխութեան

ու անկման, հիասթափութեան ու վշտի աշխարհի հետ։ Մի թէ նա է ստեղծել աշխարհը և միթէ նա, այդ էակն է պատասխանատու նրա համար։ Սրան հնդկական միտքը այն պատասխանն է տալիս, թէ աշխարհը իր գոյութեամբ Մայայինն, այսինքն՝ ցնորքին է պարտական։ Մոլորութեան պատճառով Բրահմայի մէջ, որ այլ և այլ կերպով է պատկերացվում, մի փոխանցում է արված միութիւնից դէպի բազմութիւնը, և այս սխալն էր աշխարհիս բոլոր չարչարանքների պատճառը։ Կամ ևնթադրում էին, թէ ոչ թէ Բրահման է ևնթարկվել ցնորքի, այլ ցնորքը պարտնակված է մարդու՝ աշխարհի մասին ունեցած հայեացքների ու մտքերի մէջ. և եթէ մարդը կարողանար ազատվել Մայայի ցանցից, ընդունելով, որ աշխարհս մի ցնորք է, և որ Բրահմայից, դատարկելով, որ աշխարհս մի ցնորք է, և որ Բրահմայից դատ ոչինչ չկայ, այն ժամանակ նա մի բան արած կլինէր իր սեփական ազատութեան համար, Բրահման նրանում ևնէր իր սեփական ազատութեան համար, Բրահման նրանում ևնէր իր սեփական ազատութեան համար, Բրահման նրանում ևն

Նրա ընդունած՝ իրերի պրոբլեմնից հանված գործական եզրակացությունը ամենից առաջ բացառական է—մարդը հանրապէս չպէտք է ծոյլ տայ որ աշխարհը ազդի իր վրայ, իսկ յետոյ՝ դրական—մարդը պէտք է ձգտի Բրահմայի հետ միանալուն։ Բացասական հարցը լուծվում է նրանով, որ ոգին արձակվում է բոլոր առարկաներից և լցվում է յոկ մի հանուր ու անկախ առարկայով. այլ և ծոյլ չէ տալիս յարվելու որ և է երկրաւոր բանի, ոչնչացնում է յանկուվիլիւնը աշխարհային գործերի պատճառով որ և է յուզում։ Դրական վճռիը լուծվում, ըմբռնվում է մտաւոր պրօցէսի միջոցով, որ մենք այստեղ չենք կարող նկարագրել, բայց որի օգնությամբ ոգին վերադառնում է դէպի ներքին «ես»ը և նրան յայտնի է անում այնպէս, ինչպէս որ կայ, ազատ ամէն մարերից ու բարեկամական հակումներից։ Այդ կրթութիւնները չեն կարող բարոյական կրթութիւն կոչվել. սրտեղ ամէն ինչ ցնորք է, այնտեղ բարոյականութիւնը տեղ չունի։ Այնտեղ ոչ բարի կայ, ոչ՝ չար, ոչ էլ բարին առաջացնելու և չարը նուազեցնելու ջանք։ Աշխարհս ոչ թէ այն պատճառով է դատապարտված որ վատ է, այլ՝ որ կայ։ Էնէրգիան, որ ուրիշ հաւատալիքներում արվում է բարոյական պատերազմ մղելու համար՝ այստեղ արտայայտվում է ճգնաւորական կարգապահութեան մէջ, որով ուրոյն անձնաւորութիւնը մտածում է խուսափել աշխարհից, ինչպէս որ նա կայ։ Բարի գործեր չկան, և յաւէտ որ մարդ հետու կենայ ամէն տեսակ գործերից. իր ոգին յուսաւոր պահելու և ամէն յուզման ու տարայման անմատչելի անելու պէս էլ ոչնինչ բարի գործ չկայ, մարդիկ հետամուտ են լինում մէկ նպատակի՝ անձնաւորութեան փրկութեանը, չկայ յոյս սիրելու և ուրիշներին փրկելու ցանկութիւն, քանի որ քչերն են ընդունակ բոլոր իրերի առերեսվի բնոյթը գիտակցելուն, այն ինչ՝ միմիայն այս պիտակցութեամբ կարելի է փրկվել։

Պարզ է որ մի այսպիսի կրօն չէր կարող ժողովրդական

կրօն լինել։ Վէրացական Բրահմա ոչինչ չէ ասում երևակայութեանը. նա չկարողացաւ վանտել ժողովրդական աստուածները իրանց որոշ առասպելներով ու աստրոպելիքներով։ Ժողովրդի մէջ էլ չկարողացաւ տարածվել մի այսպիսի կրօն, որ ընտանիքն ու հասարակութիւնը մի ստոր բան էր համարում, և կարող էր հետևողներ ունենալ միայն նրանց միջև, ովքեր թողել էին իրանց տունն ու ընտանիքը։ Անապատականները, ճգնաւորները ու ապրատ կուռակրօնները կարող էին կազմել մի կրօնական արիստոկրատիա. բայց ժողովրդին անհրաժեշտ էր մի այլ տեսակի վարդապետութիւն։ Եւ իրաւ որ Բրահմանիսմի շրջանում մենք հնդկաստանում երկու տիրապետող կրօն ենք տեսնում, մէկը այն, որ նկարագրեցինք, և որ ոգու մէջ էր պարունակվում*), մէկն էլ այն կրօնն էր, որի մէջ, մարդիկ երկրպագելով արտաքին աստուածներին՝ պարտաւորական էին համարում արտաքին սրբազան օրէնքը, որ այն պատճառով է սրբազան, որ ներշնչված է աստծուց կամ աստուածներից, և իրանց համար ապաստան էին գտնում ամէն կսմից հաւաքված անպաշտութիւնները։ Մի վէմ կրօն ոչ մի կերպով չէ սպանել մի ցած կրօն, ինչպէս տեսնում ենք մենչն այդ օրը հնդկաստանում։ Սրա հակառակ, որովհետև մի վսեմ կրօն հետացաւ մի այդպիսի գաւառ, ուր ժողովուրդը չէր կարող նրան հետևել՝ ուստի ժողովրդական կրօնը մինաւ մինչ այդ ժամանակ չտեսնված նուաստացման մէջ։ Մենք պէտք է մատնացոյց անենք մի վարդապետութիւն։ Հնդկաստանում գոյութիւն ունեցող կրօնից՝ չէ պատկանում

*) «Բրահմայի հետ մէկ լինելու տեսակէտից՝ աստուածները չաստուածներ են, վէգաները՝ ոչ-վէգաներ»։

բրահմանիզմի ամենի վսեմ մտածումների հասնակին, որ նկարագրված է այս պլսում. ամեման կամ «հոլ», որ նմանացած է ծայրագոյն «հոլ» հետ՝ պատկանում է մարերի մի բուդդայական հասկացողությունները, քան հոգու մասին ունեցած հասկացողությունը, որ առաջ մեկ ուրիշի մեջ էր, իսկ այժմ պանծում է ինձնում և կարող է յոյս ընծայել գարձեալ ուրիշ շատ էակների մեջ: Ենթադրում են որ այս վարդապետությունը տարված է եղել Հնդկաստան մոտավորապես այն ժամանակը, որի մասին խոսվում է: Այդ վարդապետությունը նկատի է ունենում զօրեղ կերպով ներգործել մարդկերի վրայ, հեռու պահելով նրանց յանցանքից և հրապուրելով դեպի առաքինություն: Եթե իմ ներկայ շարշարանքներով ես պարտական եմ ոչնչի իմ սեփական վարվեցողությանը, այլ այն էակի, որի մեջ հոգին բնակում էր առաջ՝ ապա և կարող եմ այնպէս ասել, որ իմ հոգու ապագայ դրությունը ներկայից լաւ լինէր, ոչ թէ վատ, և նա, հոգին ոչ թէ նուաստանար, այլ բարձր կանգնէր. էակների անդունդի վրայ և մտնէար իր վերջնական ազատության: Սրա մասին մենք խոսելու ենք հանգամանօրէն բուդդիզմի մասին խոսելիս:

Հնդկաստանի կրօնի յաջորդ զարգացումը, բացի բուդդիզմից՝ առաջ է գնում երկու ուղղությամբ: Մի կողմից ծագում է մի փիլիսոփայական շարժում, որի մեջ մշակվում են աստուածության, աշխարհի հոգու և նրա փոխհարաբերությունների բրահմանական հասկացողությունները, և որ հնդիկ փիլիսոփայության վեց գլուխ է կազմակերպել տալիս: Միւս կողմից՝ աստուածները էլ իրանց պատմություն ունեն: Բրահմա մնում է իբրև ծայրագոյն աստուածություն. բայց որովհետև նրա բնաւորությունը պարզ չէ, այս պատճառով նրան քիչ են երկրպագում: Հին ազգայնական աստուած Ինդրա տեղի է տալիս երեք աստիճանի (երկնքի, օդի, երկրի) արեային վարդի աստծուն, որ մի սերտի աստուածություն է պահում: Դաժան, ահարկու Սիվա ներկայանում է իբրև մի նոր դէմք և քան

երևույթին առնված է վայրենի բնիկներից. նրա կուլտը աչքի է ընկնում ամենամեծ ֆանատիզմով: Այս երեք աստուածությունները, այն է՝ ստեղծողը, պահպանողն ու ավերողը՝ Տրիմուրտին կամ հնդկաց աստուածային երեքությունն են կազմում, —երեքություն, որ այն պատճառով չէ առաջ եկած, որ նրանում միացած էլին երեք՝ միմեանց դէմ թշնամացած աստուածների իրենիաժությունները: Այնտեղ մենք պանում ենք ե՛ մանրամասնության վարպետությունը: Վիշնու ունի աստ. վամար կամ մարդկային կանանով մարմնավորվելուն. նա աշխարհ է իջնում, երբ մի առանձին պատճառ կայ նրա միջամտելու համար: Այս ավատարները, մանավանդ Կրիշնա՝ խաւար են Մահաբհարատի մեծ դիցապնեղությունը պատմող աստուածը, որի հերոսական սխրագործությունները պատմված են Մահաբհարատի մեծ դիցապնեղության (էպոպէյա) մեջ՝ մի աստվածի պատասխանում են այն պահանջին, որ զգացվում է աստվածի պատասխանում: Իսկ այդ պատկերը վում է աստուածային պատկերի մեջ: Իսկ այդ պատկերը շատ հեռու չէ մարդկային լինելուց, և դրան կարելի է սերտ վերաբերվել: Այս ավատարներն ահա պատասխանում են մեկ պահանջի, որին բուդդայական հիմը:

ԺԱ ԳԼՈՒԽ

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Ա) ԲՈՒԴԴՀԻՄ

Բուդդհիմի մէջ Հնդկաստանի կրօնի մեծ չարժումը մօտենում է իր ամենաբարձր զարգացմանը և հասնում է այն կէտին, որից այն կողմը այլևս անկարելի է առաջ գնալ։ Այստեղ մենք գործ ունենք մի այնպիսի կրօնի հետ,—եթէ միայն նա կարող է կրօն կոչվել,—որ ոչ աստուածութիւն ունի, ոչ պաօթիք, ոչ բուրմունք և ոչ կուլտ. մի կրօնի, որ իր ահագին առաջադիմութեամբ ոչ մէկ իր աստուածարանութեան, (թէօլօգիա), ոչ մէկ իր ծիսական կողմին է պարտական, քանի որ չունի էլ, այլ՝ իր բարոյական զգացմանն ու իր ՚արտաքին կազմակերպութեանը։ Սկիզբն առնելով Հնդկաստանի կենտրոնում և տալով հնդկական պապափարներին՝ կեանքին յարմարեցրած ձևը, նա արագ ու արձակ ծաւալվեց ինչպէս իր մայրենի երկրում, այնպէս էլ դրացի երկիրներում։ Այժմ նա վերացել է Հնդկաստանում, այսուամենայնիւ աւելի հետևողներ ունի, քան որ և է մի ուրիշ կրօն։ Քրիստոնէական դարագլխից սկսած նա երկու խոշոր ճիւղերի է բաժանվել։ Հարաւային բուդդհիմը Ցէյլոնի, Բիրմայի ու Սիամի կրօնն է, մինչդեռ հիւսիսային բուդդհիմը տարածվել է Տիբէթում, Չինաստանում, Եապոնիայում և Եավա ու Սումատրա կղզիներում։

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ Բուդդհիմի այս երկու ճիւղերը ունեն այլ և այլ գրական աւանդութիւններ, թէպէտ երկերից մի քանիսը հանուր են երկուսի համար էլ։ և այս գրականութիւնները, տարբերվելով միմեանցից լեզուով՝ խիստ տարբերվում են նաև բովանդակութեամբ ու ոգով։ Հարաւային աւանդութիւնը, որ կապված է պալի լեզուով,—նորերս է յայտնագործվել գիտնականների համար և պէտք կերպով փոխել է նրանց՝ այս կրօնի ծագման ու իսկական բնոյթի վրայ ունեցած հայեացքները։ Հարաւային բուդդհիմի կարգը, որ մենք կարող ենք պալիական աստուածաշունչ անուանել, երբ պալիական աստուածաշնչից կրճատակի ընդարձակ չէ մի գրականութիւն է, թէպէտ, եթէ ոչնչայիններ միջի կրճատութիւնները՝ պալիական աստուածաշունչը մի քիչ փոքր կլիներ կգայ մեր ձեռքից։ Նա բաղկացած է երեք Պիտակայից, այսինքն՝ զամբիւղից կամ հաւաքածուից։ Առաջինը՝ Վինայի պիտական վարքերում է վարք ու բարքի կանոններին, բայց ամփոփում է իր մէջ Մահավագգա, այսինքն՝ համայնքի ծագման պատմութիւնը, երբ նրա հիմնադիրը իր շուրջն էր հաւաքել միաբանութիւնը։ Երկրորդը՝ Սուտտա Պիտակա կամ խրատաների հաւաքածու է։ Նա պարունակում է իր մէջ համայնքը հիմնողի յետագայ կեանքի հնագոյն զրոյցը, մտորումների ու բարեպաշտութեան մէջ վարժվելու դրքերը. ուսուցչի պատմուածքների հաւաքածուն, քերթուածներ, կոնտարպական հէքիաթներ, առակներ, բուդդհայական սուրբերի պատմուածքներ և այլն։ Երրորդ հաւաքածուն՝ Աբիդհամման պարունակում է իր մէջ զանազան առարկաների վերաբերմամբ մտորումներ ու պատուհասութիւններ։ Այս նիւթից շատ բան բուդդհիմի բացատական սեփականութիւնը չէ, նրա մէջ կան շատ նախաբուդհայական մտքեր և շատ էլ պատմութիւններ, որոնք մինչ անգամ Հնդկաստանի սեփականութիւնը չեն։ Այդ բոլոր յիշատակների հետ՝ այդ դրքերը տալիս են մեզ հիմնադրի կեանքի ու մահի հնագոյն պատմական նկարագիրները և պարունակում են իրանց մէջ այն բանի ձևակերպումը, ինչ որ նա ըստ աւանդութեան ասվորեցրել է, որ դրի է անցկացրած

նրա մեռնելուց մի քար յետոյ։ Ինքը հիմնադիրը ոչինչ չէ գրել. բայց նրա ու իր վարդապետութեան մասին գրքեր կազմելը աւելի հին դարձ է, և կանոնիկ շատ բան, գլխաւորապէս անգլիական գիտնականների կարծիքով, դոյութիւն է ունեցել արդէն բուդդհայութեան առաջին դարում*)։ Շատ դարեր այս ամենը լոկ յիշողութեամբ է եղել պահպանվելիս։

ԳՈՑՈՒԹԻՆ ՈՒՆԵՑԵԼ Է ԱՐԴԵՕՔ ՀԻՄՆԱԴՐԻ ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ։ Այն կրօնի համառօտ նկարագիրը, որ կապվում է մի որոշ հիմնադրի հետ՝ բնական պէտք է սկսվէր նոյն իսկ նրա հիմնադրի կեանքի ու վարդապետութեան նկարագրութիւնից։ Սակայն այն դէպքում, որի հետ մենք գործ ունենք, բայց է ասվում այս բանի նոյն իսկ հնարաւորութիւնը։ Մօտ ժամանակներս առաջ եկաւ քննադատների մի դպրոց, որ հաստատում է թէ մեզ ոչինչ բան հաւաստի կերպով յայտնի չէ Բուդդհիմի հիմնադրի անձնաւորութեան մասին, և ենթադրում է թէ այս կրօնը հիմնված չէ եղել, այլ զարգացել է բնական կերպով, հիմնադրի մասին ասվածն էլ յետոյ է աւելացվել ու կազմվել դանազան պէտքէս նպատակից։ Սէնար իր «Essai sur la légende du Buddha»-ի և Կէրն իր «The Buddhisme in Iniё»ի մէջ՝ երկուսն էլ կարծում են թէ մենք այստեղ գործ ունենք արևի առասպելի

*) Բուդդհայական գրականութիւնը «Աբհիդրի սրբազան գրքերից» հաշուով բաղկացած էր հետևեալ գրքերից.

X հատոր Դհամմասանգադա, որ պարունակում է բուդդհիստական բարոյականութեան էութիւնը, և Սուտտա—Նիպատտա, որտեղ մէջ են բերվում Բուդդհայի կրօնի մասին խօսացած խրատները։

XI հատոր Բուդդհիստական Սուտտանները, այսինքն՝ կրօնական, բարոյական ու փիլիսոփայական գուտագութիւնները։

XIII հատոր Վինայի Պատիմոկխայի բնագիրները կամ Մոնաստիզդայի բարոյական կանոններն ու սկզբունքը, որ պարունակում է հիմնադրի ծառայութեան մէջ մտնելու կրօսքը։

XVII հատոր Վինայի գ.ի բնագիրները. Մոնաստիզդայի շարունակութիւնը։ Նուլլաստագա կամ ասուցչի առհասարակ՝ բարոյական կեանքի կանոնները։

XX հատոր Նուլլաստագայի շարունակութիւնը։

XXII հատոր որ պարունակում է այլինների կրօնից վերցրած Սուտտաներ, նախնական չնչվում է այս գլխում։

հետ, և լէկենդայի այլ և այլ կողմերը շատ սրամիտ կերպով մեկնում են, կապելով այս տեսութեան հետ։ Բայց այս հաւաքածոը բոլոր հետևողներ ունեցաւ։ Մասամբ այն պատճառով, որ Բուդդհայի պատմութեան մէջ շատ բան թնապէս ու լուսո երևոյթին իրօք հաղորդվել է աւանդութեամբ, մասամբ էլ այն՝ որ ինքը կրօնը աւելի լաւ կարող է հասկացվել, եթէ նայենք վրան, իբրև մէկ իրական անձնաւորութեան գործի, որ ունեցել է մի լծելադրող մեծութիւն,—սակայն սովորաբար ենթադրում են որ Բուդդհա գոյութիւն է ունեցել, ինչպէս մի ուրոյն անձնաւորութիւն, և որ գրքերի մէջ նրան վերագրված վարդապետութիւնը գլխաւոր կէտերում իսկապէս իրան է պատկանում։

Բայց այս հզրակացութեան հետ պետականները համաձայն են այն կէտի վերաբերմամբ, թէ դժուար է մի պիտ բաշել իրականութեան ու լէկենդայի միջև։ Մինչ անգամ պալիական պատմողական հին նկարագիրների մէջ հերոսը դարձել էր մի կրօնական դէմք, նրան արվում են մականունները, որոնցով նրան բարձր են դասում մարդկութիւնից, և նրա սրամտութեան տակ գերբնական ուժեր են գտնվում։ Բուդդհայի պատմութեան իրականութեան խնդիրը լուծելուց առաջ՝ պէտք է ձեռնարկվի խնամքով կատարած մի քննադատական աշխատանքի՝ այլ և այլ զրոյցները միմեանց հետ համեմատելու և նրանց ուրիշ միջոցներով առուգելու համար։ Մեր առաջարկած հարևանցի նկարագրութիւնը յատկանութիւն Մեր առաջարկած հարևանցի նկարագրութիւնը յատկանութիւն չունի մի այսպիսի քննադատական գնահատութեան. մենք կատմանատիկվենք, լոկ պատմուածքի հանուր կողմերը մէջ բերելով, որ այս կրօնի ազդեցութեան գլխաւոր ապրիւրներից մէկն է։

ԲՈՒԴԴՀԻՄԻ ՀԻՄՆԱԴՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ։ Հիմնադրի տոհմային անունը Գաուտամա էր, և այս անունով նա յայտնի էր իր ամբողջ կեանքում։ Նրա մանկութեան ժամանակվայ նի էր իր անձնական անունը Սիդդարտա էր։ Այն մարդիկ, որոնք նրա

մահից յետոյ ուղում էին յարգանքով խօսել նրա մասին՝ նրան Մարիա Մունի, այսինքն՝ սաբինների իմաստուն էին անուանում։ Իսկ սաբինները մի ցեղ էին, որ ապրում էր այն ժամանակ, այսինքն՝ Ք. Ծ. 500 տարի առաջ, սրբազան Գանգէսից դէպի հիւսիս գրված մի երկրում, բնաբէս քաղաքից մի քանի օրուայ ճանապարհ հեռու։ Գաուտամայի հայր Սուդդհօտանա սաբինների ռաջան էր կամ առաջնորդը. նրա ամուսնիտը Պապիյավաստուն էր, Ուդէի մօտ։ Ազգայ իմաստուններ այսպիսով բշատրիների դասին էր պատկանում և դաստիարակված էր փարթամութեան մէջ, ինչպէս մի երեսի անձ։ Նրա պատանեութեան մասին բիչ բան է յայտնի մեզ. Գաուտամա ամուսնացած էր 10 տարեկան հասակում, և նրա սիրված կինը հազիւ թէ նրա համար մի որու զաւակ էր ծնել, երբ, դառնալով 29 տարեկան՝ նա, Գաուտամա, անակնկալ կերպով ու ծածուկ լռողից հայրենի տունը և նաւերից կրօնական կեանքին։ Այս բայլը անել ստից նրան այն ծանր տառապանների յաճախակի պիտոդութիւնը, որոնք նրան ստիպեցին արագապէս գիտակցել որ ամէն գոյութեան զուգընթաց է չարչարանք, և արհամարհանքով վերաբերվել ճոխ կեանքին։ Այս ժամանակ չաուերը մի լաւագոյն ճանապարհ էին որոնում, և բարձր անձնաւորութիւնը բնապէս դիմում էր առանձնութեան ու ինքնախորասուզման, որոնց մէջ, ինչպէս ենթադրում էին, կարելի էր գտնել կեանքի չարչարանքներն ու գաղտնիքները հասկանալու բանալին։ «Մեծ անձնաւրացութեան» մէջ, ինչպէս անուանվում է այս գործողութիւնը, ոչինչ անհասկանալի բան չկայ մեզ համար։ Սակայն այս վեհ գործողութեանը զուգընթաց էր փորձութիւնը. չարութեան ոգի Մօրա պահանջում էր Բուդդհայից, բայց զուր էր պահանջում, որ նա հրաժարվէր իր ընտրած նպատակից։ Ապա Գաուտամա միացաւ բրահմանեան անապատականներին, որոնցից ստորեց նրանց փիլիսոփայութիւնը. իսկ դրանից յետոյ վեց տարի նա անձնատուր եղաւ պահեցողութեան ու զղջման, հետևելով կրօնական

կեանքի նպատակին մօտենալու բրահմանական եղանակին։ Այդ շրջանը անցնելուց յետոյ, նա հրաժարվեց պահեցողութիւնից, չատանալով նրանից այն, ինչին որ սպասում էր, և նորից սկսեց գործ ածել սովորական կերակուրը։ Այս փոփոխութիւնը նրան էժան չնստեց. դրանով նրանից հեռացան հինգ աշակերտ, որոնք յարված էին նրան իր խստամբեր կեանքի վրայ սրանչանալուց։ Սակայն այս կորուստը, համեմատելով իր ձեռք բերածի հետ՝ մի անչնչան բան էր։ Հոգեկան երկրորդ մեծ պատերազմից ու նոր փորձութիւնից յետոյ, նա վերջապէս հասաւ ցանկացածին։ Նստելով ficus religiosa ծառի տակ, որ յետոյ ծառ պիտութեան կամ Բօ ծառ կոչվեց՝ նա ինքնախորասուզման մէջ ինքն իրան գերազանցեց այդ փորձութիւնների ու կասկածների մէջ, մինչև վերջապէս իմացաւ իրերի իսկական բնութիւնը։ Այս ժամանակից նա դարձաւ Բուդդհա, այսինքն՝ «զգօն». նա ձեռքին ունէր ճշմարտութեան բանալին և ինքն իրան համոզված էր, որ վիշտն ու չարիքը այլ ևս չեն իշխում իր վրայ։ Նրա մարում պարզվեց իր վարդապետութիւնը։ Նա գտաւ մարդկային կեանքի հետ այնպէս սերտ կապված չարչարանքի պատճառը և այն միջոցը, որով այդ չարչարանքը կարող է յաղթված լինել։ Միջոց էր գտնվել, թէ մարդ ինչպէս պէտք է խոյս տայ չարչարանքով լի նոր կեանքերի անծայր շղթայից, որոնց՝ այն ժամանակվայ հաւատին նայելով, դատապարտված էին մարդիկ։ Այն Բուդդհաները, որոնք գրված էին հիմնադրի բերանը, նրա հոգեկան դիրքին հասնելուց յետոյ, իրանք են խօսում իրանց կոչման մէջ։ «Այս վրանը ստեղծողի հանդէպ ընկած՝ ես անցնելու եմ բազմաթիւ ծնունդների միջով, մինչև գտնեմ նրան. իսկ յուրաքանչիւր նոր ծնունդի կից է չարչարանքը։ Բայց արդ, տեսանում եմ ստեղծող, քեզ հասկացան. դու էլ չես տարածի այս վրանի ստեղծող, քեզ հասկացան. դու էլ չես տարածի այս վրանը։ Քո տանիքի բոլոր խոյանները փլվեցին. քո ձողերը բոլորը կոտրված են. ոգին, մօտենալով յաւիտենականին՝ ընչացրել է բոլոր ցանկութիւնները»։

Երբ մեծ յայտնապործութիւնը արված էր, պատշաճաւոր կերպով մատնված ու պարզված՝ այն ժամանակ դրվեց այս հարցը, ինչ անենք այս վարդապետութիւնը: Բուդդա չէ վրատանում այն բարոզել ուրիշներին: Ինքը Բրահմա գուգահիւսում է պատմութեան մէջ, որպէս զի սիրա տայ նրան բայց անելու ուրիշներին իր գաղտնիքը և համոզի, թէ շատերը մեծ ուրախութեամբ կընդունեն այդ վարդապետութիւնը: «Երանելին» համաձայնում է և այսպէս է պատասխանում. «Լայն բացված են Անմահի դռները նրանց համար, ովքեր ականջ ունեն լսելու. լծի նրանք հաւատով դիմաւորեն նրան: Խրատը բացը է ու սիրուն. ես առաջ չէի ասում մարդկերին, որովհետև անյոյս էի այս խնդրի կողմից»: Ուրախութիւնով իր սեփական գերբնական իմացականութեամբ՝ նա ուղղում է իր բայերը դէպի Բէնարէս քաղաքը՝ գտնելու այն հինգ միանձնները, որոնք իրան խոզել՝ հեռացել էին: Ճանապարհին նա հանդիպում է մի մերկ անապատականի, որ հարցնում է նրա երեսին երեցած ուրախութեան պատճառը. նա պատասխանում է որ յաղթել է բոլոր թշնամիներին, ազատութիւն է ստացել ցանկութիւնը խորտակելու և հասել է Նիրվանին: «Ես գնում եմ գալիների քաղաքը՝ (Բէնարէս) ճշմարտութեան թագաւորութիւնը հիմնելու. ես թմբակահարելու եմ Անմահին այս աշխարհի խաւարի միջից»: Դրան հետևող պատմութիւնը, որ խօսում է «արդարութեան թագաւորութեան» գտնելու մասին՝ շատ կողմերով նման է ուրիշ հոգևոր շարժումների սկզբնական աստիճաններին: Հիմնադիրը, անփոփոխ կերպով հաւատացած լինելով իրան ու իր վարդապետութեանը՝ անցնում է մի տեղից միւսը, տարւայ անձրևային մասը անց կացնելով քաղաքում և ամէն տեղ քարոզելով: «Օրէնքի անիւը» առաջին անգամ Բէնարէսում է շարժվում. այնտեղ խօսվեց առաջին քարոզը: Պատմվում են նաև այնպիսի հանգամանքներ, որոնց միջոցին խօսել են միւս բարոզները. տեղեկութիւն տալով ժամանակի, տեղի, լսող անձերի և այն դէպքերի մասին,

որոնց պատճառով տրվում են այս խրատները: Սկզբում նա քիչ հետևողներ ունէր, և յիշվում են այդպիսիների անուններ. բայց քիչ-քիչ շատանում են: Նրանցից աւելի եռանդոտները նրա բնիկիկու կամ ազգատ կոչված համայնքի անդամներն են դառնում. նրանք լծոզնում են ընտանեկան կեանքը, սափրում են գլուխները ու գիսկին տալու տպնում և մի լման են առնում ձեռները՝ ողորմութիւն հաւաքելու: Նրանք էլ են ուղարկվում քարոզելու. «Գնացէք, ով բնիկիկուներ, և շրջեցէք երկիր երկիր՝ շատերին բարիք հասցնելու համար, կարեկցելով աշխարհին, աստուածների ու մարդերի օգտի ու բարիքի համար: Չլինի թէ ձեզանից երկուսը մէկ ճանապարհով գնան: Քարոզեցէք, ով բնիկիկուներ, այն վարդապետութիւնը, որ փառաւոր է սկզբում, փառաւոր մէջտեղը, փառաւոր վերջում՝ թէ ոգով, թէ առում, հաշակեցէք սրբութեան լրիւ, ամբիւլ ու մաքուր կեանքը: Գան էակներ, որոնց հոգևոր աչքը չէ ծածկվել հոգով. բայց եթէ նրանց չքարոզվի վարդապետութիւնը՝ չեն կարող փրկվել»: Այն գրոյցները, որոնք վերաբերում են պատմութիւնների այս մասին՝ կապ ունեն այն անձնաւորութիւնների հետ, որոնք աշխատում են մտնել համայնքը կամ պէտք ունեն նոր վարդապետութեանը դառնալու. վարդապետութիւնն ու նրա տարածումը առաջին կարևոր գործն են համարվում: Այս տարածումը, Բուդդայի ցանկութեամբ, առաջ է գնում հասարակութեան աւելի բարձր դասերի միջև: Մեծ է լինում հանդէսը, երբ Մագադխի թագաւոր Բիմբիսարա դառնում է համայնքի հովանաւորող, և մի քանի գրոյցների մէջ պատմվում է Բուդդայի սեփական հօրն ու մօր դարձը (դէպի հաւատը): Քահրինների աշխատանքը աչքի է ընկնում խաղաղասիրական բնոյթով. Բուդդա լաւ յարաբերութեան մէջ է գտնվում քրտանմանների, այլ և միւս ուսուցիչների ու նրանց աշակերտների հետ: Միակ խոշոր դիմադրութեանը պէտք եղաւ նրան հանդիպել իր համայնքի մէջ: Նրա հօրեղբօրորդի Դեւ-

պատրաստ, որ միանձն էր գործել՝ կամեցաւ մի նոր համայնք հիմնել՝ առաջինից աւելի խիստ կանոններով։ Բուդդհա մերժեց հպատակին ու կերակրին նշանակութիւն տալը, ինչպէս առաջարկւում էր նոր կանոնագրութեամբ, միւսից կ՚բացօդեայ ապրելը։ Այդ բոլոր նրա առաջ բերած չարժումը իր ցանկացածից նեղ ու նուազ սիեղերական կանէր։

Բուդդհայի գործունէութեան սկիզբը բաւական հանգամանօրէն է պատմված, բայց նրա կեանքի երկար շրջանի մասին միայն մի քանի ցիրուցան մանրամասնութիւններ են տրված։ Կայ մի մանրամասն զրոյց նրա կեանքի վերջին երեք ամիսների մասին։ Բուդդհա արդէն 80 տարեկան է, իսկ Սատտա Մաթայի մէջ նրա պանդխտութեան ու քարոզների նկարագիրը անվում է մի ևնոյն կերպով, ինչպէս և առաջ։ Սակայն տարվայ անձրևային եղանակին 80-ամեայ Բուդդհա հիւանդանում է և զգում այն գիտակցութեան, որ մերը երկար չէ ապրելու։ Այս բանը նա ասում է իր աշակերտներին, թախանձանքով յորդորելով նրանց, որ հաւատարիմ մնան վարդապետութեանը ու համայնքին և լայս սիրեն օտար երկրներում։ Նրա մահը արագանում է այն հանգամանքից, որ խոզենուց պատրաստած մի կերակուր էր կերել, որ պրել էր նրա առաջը իրան հիւրասիրող մի ոսկերիչ, տարրին գտնակարգի մի մարդ։ Որանից յետոյ նրա դէմքը լուսաւորվեց երկնային փայլով, և ուրան մօտենում է վախճանը, այնքան՝ երկնային շատ տեսիլներ են երևան գալիս։ Բուդդհա լիովին գիտակցում է, որ ըմողնելու է աշխարհը, և որ իր մահը մի վերին ասպետնան նշանակալից իրոցութիւն է երկնային զօրութիւնների համար, որոնք ինչպէս նա համոզված է, խմբվում են իր շուրջը, սպասելով իր վերջին ժամին։ Նա աշխատում է սակայն լեցնացնել իր բարեկամների վիշտը, որոնք մեծ թուով նոյնպէս խմբվում են իր շուրջը, և որքան դեռ ուժ ունի, խօսուրդներ ու հրահանգներ տալ նրանց՝ իր գործը պաշտպանելու համար։ Իր թաղմանը վերաբերող հարցերին Բուդդհա յայտնում է նրանց, որ մի այնպիսի մարդու նշխարների, ինչպիսին որ ինքն է, Տատխագատայի, այսինքն՝ «կատարեալ լուսեան տասած» մարդու նշխարների հետ պէտք է վարվել ուղիղ այնպէս, ինչպէս մարդկի վարվում են արքայից արքայի նշխարների հետ։ Նա խոստովանվում է իր ամենամերձ նշխարների հետ։ Նա խոստովանվում է իր ամենամերձ աշակերտ Անանդայի բարութիւնը, և աշխատում է մխիթարել նրան, համոզելով լուրջ կերպով աշխատել իր վրայ, որ նոյնպէս շուտ ազատվի չարից։ Նա յորդորում է իր բոլոր աշակերտներին որ շատ չորտնեն իր մեռնելու պատճառով, և չմտածեն թէ Բուդդհա բոլորովին մինակ է թողել նրանց։ Այն ճշմարտութիւնները ու համայնքի կանոնները, որ նա սահմանել է վերջինի համար՝ լինելու են նրա փոխարէնները իր մահից յետոյ։ Նա հարցնում է, արդեօք մի և իսկ չէ կասկածում կամ երկմտում Բուդդհայի, ճշմարտութեան կամ հաւատի վերաբերմամբ։ Եթէ կան այդպիսիները, ապա թող ազատ հարցնեն իրան, որ յետոյ չկշտամբեն այն բանում, թէ խորհուրդ չհարցրին իրան, երբ ինքը նրանց մէջն էր։ Միաբանութիւնը սակայն լռում է, թէպէտ Բուդդհա նոր ի նորոյ պիտում է նրան մի և նոյն հարցով։ Ամբողջ ժողովում չկայ մէկը, որ ունենայ որ և է կասկած կամ երկմտութիւն։ Այս եղբայրներից ամենից յետամնացն անգամ հաւատացնում էր (բառացի՝ «հոսանքի մէջ էր մտել»). նա արդէն չարչարանքի համար չէ ծնվելու, բայց հաւատացած է յաւիտենական փրկութեան։

«Ցետոյ երանելին դարձաւ դէպի միաբաններն ու ասեց. Լսեցէք, եղբայրներ, յորդորում եմ ձեզ. բաշխայումը յաւուրց է պոյութիւն ունեցող բոլոր իրերին։ Ջանասիրութեամբ աշխատեցէք ձեր փրկութեան համար»։

«Սա Տաթագատայի վերջին խօսքն էր»։

Նրա կամ Նիրվանի մասը պատում է բուդդհայական ժամանակագրութեան գարագլուխը, և այդ մասի ժամանակը այժմ մի քիչ ճիշտ է որոշված. նա տեղի է ունեցել 482—

ՄԻ ԽՈՒՈՎՈՒԹԻՒՆ Է ԸՐԴԵՕՔ ԲՈՒԴԴԻԶՄԸ ԲՐԱՀՄԱՆԻՄԻ ԴԷՄ:

Բուդդիզմը իրրև կրօն քննելուց առաջ անհրաժեշտ է մի քանի խօսք ասել այն յարաբերութեան մասին, որի մէջ ներկայ հայեացքների համաձայն նա գտնւում է հնդկական բարեպաշտութեան հանուր պատմութեան հետ: Մինչև վերջին ժամանակը ընդունված էր Բուդդան համարել մի մեծ յեղափոխիչ, իսկ նրա կրօնը՝ մի մեծ խոտորումն այն բանի դէմ, ինչ որ այդ կրօնը գտաւ Հնդկաստանում: Բուդդայիզմի մի կողմից անհաստատաժամութեան (ամէլիսմ) բառոյն է վերագրվում, ինչպէս մի հակագրեցութեան (ռէակցիա) չափազանց բազմաթիւ աստուածների դէմ, միւս կողմից էլ՝ պատակարգերը աչնչացնելու խոշոր շարժման դրդումը, Վէդաների մինչ այն ժամանակ անդրդվելի հեղինակութեան յայտնի ժխտումը և բրահմանիզմի հզօր պարտութեան դատապարտութիւնը նրանով, որ նա իր ազդեցութեան համար միանձների համայնքն է չինել կրօնի ներկայացուցիչ: Ներկայումս այս ենթադրութիւններից ոչ մէկը չի կարող պաշտպանութիւն գտնել: Բուդդիզմը ոչ թէ իրրև մի հերձուածի հակագրեցութիւն է ճանաչվում բրահմանիզմի դէմ՝ այլ իրրև այս սիստէմի մի բնական շարունակութիւն: Հնդկաստանի սրբազան գրքերի բովանդակութեան հրապարակվելու շնորհիւ, այս երկու կրօնների աւելի մօտ ծանօթանալը բերում է մեզ այն եզրակացութեան, որ շատ բան, ինչ որ առաջ բուդդիզմի բացառական սեփականութիւնն էր համարվում՝ իրօք բրահմանիզմից էր ժառանգված: Հնդկաց կրօնի աւելի հին ձևի քննութեան ժամանակ մենք տեսանք, որ նրա մէջ բարեպաշտութեան մի այնպիսի տեսակէտ է մշակվել, որ անկախ էր դարձնում անապատականին կոնքերից, բրմական աստիճանից, մինչ անգամ աստուածներից, ամէն բանից, բացի մէկ աստուածութիւնից, որ թափանցում էր այն ամէն բանի մէջ, ինչ որ գոյութիւն ունի, Հնդկաց կրօնի այս բնաստիճանի մէջ

Վէդաների հեղինակութիւնը արդէն տատանված էր, ներքին ջանքը փոխարինել էր արտաքին կուլտին, սուրբ սովորեց էր հրաժարվել աշխարհից: Կրօնական մտքի այս ուղղութիւնը բուդդիզմի բոլոր երևոյթները Գաուտամայի շրջանից վար էր առաջ բերել: Բրահմանիզմի սաննիասին (саннiасiенъ) նոյնպէս բխիկիւ, այսինքն՝ մուրացիկ է կոչվում. հին անապատականների համար սահմանված կանոնների բոլորովին նման են բուդդիստական միաձների կանոններին. նոյն իսկ նրանց արտաքին պատկանելիքները, այն է՝ հագուստն ու աղօթութիւն հաւաքելու թասը՝ միատեսակ են:

Մի հանգամանք շատ պարզ է դոյց տալիս, թէ որքան հետու էր բուդդիզմից խոտորումը բնոյթը. այս հանգամանքն է իսկապէս, որ մի և նոյն ժամանակ և Հնդկաստանի մի և նոյն դաւառում տեղի է ունենում մի շատ նման երևոյթ: *Ջանիզմը* ներկայացնում է հնդիկների կրօնը, որ այնքան շատ նմանութեամբ է նման բուդդիզմին, որ շատերը նրան վերջինի պատկան էին համարում: Նրանում էլ կայ միանձնական համայնք՝ առանձնին հագուստներով և բուդդհայական միաբանութեան կանոնագրութեան պէս մի կանոնագրութիւն: Նա էլ ունի հիմնադիր, որին տրվում են հէնց նոյնպիսի մականուններ, ինչպիսին և Գաուտամային, և որ վերջը աստուածացվում է ու Ջաձա տեղ պաշտվում: Ջանիզմի հիմնադիր Մահավիրա, Գաուտամայի պէս, արքայական ընտանիքի որդի է. թէ հանիստական ու թէ բուդդհայական լէգէնդաները շատ հանուր կողմեր ունեն: Եթէ այսպէս է, ուրեմն, Մահավիրայի լէգէնդան Գաուտամայի լէգէնդայի ազանդաւորական մի դարձուածքը (версiя) չէր արդեօք, աւելի ուղիղ չի լինի, եթէ ենթադրենք, որ այդպիսի մի անձ երբէք գոյութիւն չէ ունեցել, գոնէ իրրև կրօնական սիստէմի հիմնադիր: Առաջ հէնց այդպէս էլ մտածում էին. բայց այժմ յայտնի է դարձել, որ իրանք բուդդհայական գրքերը վկայում են որ Մահավիրա իրօք գոյութիւն է ունեցել Գա-

ուսուցչի օրով, որ մի անգամ հանդիպել ու տպավել է նրան։ Այսպէս, ուրեմն, մի և նոյն ժամանակը, ըստ երեույթին տեղի էին ունենում երկու՝ միմեանց նման չարժուման։ Նրանք անկախ էին միմեանցից. երկու կանոնն էլ տարբերվում են էական առանձնայատկութիւններով։ Նախքան ասելն հետու է տանում «ախիմսա» կամ կեանքը ոչնչացնելու արգելքը. նախականները պահանջում են խստութիւններ, որ մերժում են բուդդհայականները, և երկու սիստէմների փիլիսոփայութեանց միջև նշանաւոր տարբերութիւններ կան։ Միւս կողմից՝ թէ բուդդիսմը և թէ նախիսմը իրանց ծէսերի ու հիմնարկութիւնների մեծ մասը բրահմանիսմից են առնում. երկուսն էլ ներկայանում են իբրև փրկութեան ճանապարհի զարգացում, մշակված ոչ միայն բրահմանների, այլ և ուրիշ դասակարգերի պատկանող և ուրիշ հայեացքների տէր մարդերի կողմից, որ տիրապետել էր ազգայնական հին աստուածների հաւատը։

Այժմ անցնում ենք քննելու *բուդդհիստական սիստէմը* այն ձևով, ինչ ձևով որ նա ներկայանում է հին դրքերում, որոնք մեզ ծանօթացնում են այն բանին, ինչ որ IV-րդ դարում Ք. Ծ. առաջ հիմնադրի գաղափարներն ու ցանկութիւններն էր համարվում։ Ես այն բանաձևը, որով նորադարձը արտայայտում էր միաբանութեան մէջ ընդունվելու ցանկութիւնը. «Ես ապաւինում եմ Բուդդհային, ես ապաւինում եմ Դհամմային, ես ապաւինում են Սանգհային (եղբայրութեանը)»։

1. ԲՈՒԴԴԱ։ Այս պատանութիւնը ուղղված է այն երեքութեանը, որի մէջ Բուդդհա նախանձախնդիր է հանդիսանում։ Իսկ Բուդդհայի մականունը ոչ թէ բուդդհիսմն էր հնարել, այլ վերաբերում է բուդդհիսմի վարդի հասկացողութիւններին, որոնց համաձայն այնպէս էր համարվում, թէ ժամանակ առ ժամանակ, աստիճին բարելաջող շրջաններում, այցելում է աշխարհին լուսաւորվածն ու լուսաւորվողը, ամէնապէսն ու

կատարեալ ուսուցիչը։ Այս ուսուցիչներից առաջին ժամանակները կային 24, և Գաուտամայի հետևողները նրան համարում էին 25-րդը, բայց ոչ վերջինը։ Այս մականունը Գաուտամային յարմարեցնելը հաւատացողների աչքում նրան բարձրացնում էր սովորական մահկանացուներից և մի առիթ էր նրա անձնաւորութեան շարունակ փառաբանութեան համար։ Այս պատճառով, յարելով Բուդդհային՝ նորադարձը ծանկ է խոնարհում ոչ թէ մի հասարակ մարդու, այլ այն անձի առաջը, որի մէջ պատրաստվում է իրականանալու աստուածութեան մի նոր տիպը։ Բուդդհա մարդ է. մի չիշողութիւն է մնացել նրա մարդկային կեանքից. այդ չիշողութեան մէջ նա կատարել է մի մեծ անձնուրացութիւն. մարդերին կարեկցելուց՝ թողել է հարուստ ու երևելի մարդու դիրքը՝ մուրացիկ դառնալու համար։ Այսպիսով նա հանդէս է գալիս իբրև մի փրկիչ, ոչ շատ հեռաւոր ու բարձր, բայց որին բոլոր աշխարհը կարող է սիրել, որին այդ սիրը կարող է հետևել։ Գտնելով իր սեփական փորձով խաղաղութեան ճանապարհը և բանալով այդ ճանապարհը ուրիշների համար՝ նա խորհրդանշում է հաւատացող հոգու համար հանդէս է գալիս իբրև նմուշ ու խրախոյս, այլ և օրէնսուտ. անձնական յարաբերութիւնը, որ այս միջոցով հաստատվում է հիմնադրի հետ՝ այս կրօնի առաջադիմութեան մեծ գործօններից մէկին է։ Միւս կողմից՝ Բուդդհա մարդ լինելուց մի ուրիշ բան է. շատ կարևոր է առաջ բերել այն համոզումը, թէ նա ծնվել է, ոչ սովորական եղանակով, թէ նրա ծնունդը իր սեփական մի յաւիտենական գործ էր, և թէ Բուդդհայի մեծ անձնուրացութիւնը կայանում էր նրանում, որ դէպի մարդիկ ունեցած կարեկցութիւնից նա վճռել էր մտնել մարդկային կեանքը և կրել այդ կեանքի չարչարանքների բեռը։ Այսպիսով այն կրօնի մէջ, որ տիրում ոչ աստուածներ է ունեցել, ոչ կուլտ՝ սկրսում են երևալ աստուածներ էլ, կուլտ էլ։ Ուրիշ գիտնականներ ենթադրում են որ Բուդդհան աստուածութիւն չինելը և

նրան երկրպագելը սկսվել է աշխարհային համայնքում, այնպիսի մարդերի միջև, որոնք բոլորովին նուիրված են բուդդայական հայեացքին և նոր հաւատի մէջ չեն կարել այն, ինչ որ նրանց տալիս էին իրանց նախկին կրօնները. և մենք կարիում իրաւունք ունենք կասկածելու այն բանում, որ բուդդիսմը երկար կատար ու հեռու տեղեր կատարածվէր, եթէ այս պահանջները (բայերը) վաղ չլինէին վերացված։

2. ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ։ Հիմնադրի կեանքը մեզ բանալի է տալիս՝ այդ կեանքը բացատրելու։ Մենք միանգամայն տեսնում ենք որ այս վարդապետութիւնը եղել է ոչ թէ բացատական, այլ՝ գործնական ու շինող։ Ընկերակարութեան նկատմամբ այդ վարդապետութիւնը չէ եղել նման յեղափոխական վարդապետութեան և ոչինչ չէ եղել միջոցից եղած կրօնից։ Ո՛չ մի անգամ մենք չենք լսում որ Գաւտամայի վարդապետութիւնը բռնամանները սատ վարդապետութեան անուանէին. միայն ուսուցչի մտնելուց ամբողջ պարեր յետոյ տարաձայնութեան ընկաւ միաբանութեան ու միւս սիսեմների կողմնակիցների միջև։ Բուդդայի վարդապետութիւնը մի նոր փիլիսոփայութեան էլ առաջ չէ բերել. յայտնի յարաբերութիւնների մէջ նրանում մարդ զարգացում է նկատվում, բայց նոր հայեացքները չէին սպասում։

Իրօք՝ *վարդապետութիւնը* ամենևին *տեսութիւն* չէ, այլ՝ *փրկութեան ճանապարհ*, որ հէնց իրանց համար է բարդվում և խնամքով պաշտպանված է տեսական ու կրօնական վէճերի խառնուրդի դէմ։ Բուդդհա փրկութեան մի նոր ճանապարհ գտաւ և հանդէս եկաւ բացառապէս լոկ իր յայտնագործածը քարոզելու։ Մնացած ամէն բան նա լռողնում է այնպէս, ինչպէս որ կար։ «Նրա բոլոր ջրոյցները լի էին փրկութեան խօսքերով, ինչպէս ամբողջ ծովը լի է ազով»։ Ուրիշները կարող էին եղրակացութիւններ հանել նրա վարդապետութեան՝ բռնամանների վճռակի, գոհաբերութեան, կամ գոյութիւն ունեցող հաւատալիքների հետ ունեցած յարաբե-

րութեան մասին. բայց նա ինքը չէ անում այս եղրակացութիւնները, մի անհրաժեշտութիւն չզգալով դրանում։

Այս վարդապետութիւնը իրան հռչակում է մի որոշ տարի ամած պատասխանով, այն է՝ մէկ շարշարանքի պատճառի բնչ է։ Առանձնապէս բնորոշ է ինչպէս կրօնի, հիմնադրի, այնպէս էլ նրա վարդապետութեան համար այն հանգամանքը, որ այդ շարշարանները ծագում են շարշարանքի հանդուրժողութիւնից և միջոց են որոնում նրան աշխատելու. ուստի նրանք հէնց սկզբից տոգորված են մարդկային կեանքի ու կարեկցութեան զգացման վրայ ունեցած մեծ հայեացքով։ Փոքրիկ պետութեան պատանուն պալատը լռողնել և սահմանային կամ անապատական պահել ոսխտոցը խոպանէս հանդուրժարանքի վրայ իշխելու դիտակցութիւնն է։ Կրակոտ բարոյի մէջ նա շարշարանքը համեմատում է կրակի հետ՝ ցոյց տալու համար թէ ինչպէս շարշարանքի օրէնքը ամփոփում է իր մէջ բնութեան ու մարդկային կեանքի բոլոր երեւոյթները։ «Ամէն բան այրվում է, աչքը այրվում է, այրվում է ամէն բան, ինչին որ նա նայում է, և այն ամէն բանը, ինչ որ նա յիշում է, իրրև մի առաջուց տեսած բան». մի և նոյնը վերաբերում է միւս զգացմունքների իրաքանչիւրին, այլ և մարմնի Կայ կրքի կրակ, շարութեան, ցնորքի, ծուռության, ծերութեան, մահի, ցաւի, անյագութեան և վհատութեան կրակ։ Բայց մարդու շարշարանքի բնոյթը, այլ և նրանից ազատվելու միջոցը ամենից աւելի պարզ նկարագրված են այն «չորս մեծ ճշմարտութիւնների» մէջ, որոնք ցոյց են տրված Բէնարէսի նեղածական բարոյի մէջ։ Այս յիշատակի պրոյեկների մէջ ուսուցիչը խօսում է, ինչպէս թէատրում են բժշկական արուեստի կանոնները, նախ հիւանդութեան բնոյթը ցոյց տալով, ապա նրա պատճառը. յետոյ խօսում է նրա ինչ եղը ունենալու մասին. և վերջապէս ցոյց է տալիս այն միջոցները, որ բաց պէտք է գործել այդ հիւանդութեան անցնելու համար։

1) *Շարշարանքի* մեծ ճշմարտութիւնը։ Ծնունդը շար-

չարանք է, թաւամիկը՝ չարշարանք, հիւանդութիւնը՝ չարչարանք, մահը՝ չարչարանք: Մեր առած առարկաների ներկայութիւնը չարչարանք է, սիրած առարկաներից անջատվելը՝ չարչարանք, ցանկացած բանի չստանալը՝ չարչարանք: Մի խօսքով՝ գոյութեան հինգ տեսակի հակումը չարչարանք է:

2) *Չարչարանքի պատճառի մեծ ճշմարտութիւնը*: Ներից ծնվելու ախիտ ծարաւը, որ տեղի է ունենում գոհութեամբ և ուրախութեամբ, և որ բաւականութիւն է գտնում թէ մէկի ու թէ միւսի մէջ: Սա երեք տեսակի ծարաւ է՝ բաւականութեան ծարաւ, կեանքի ծարաւ, երջանկութեան ծարաւ:

3) *Չարչարանքը դադարեցնելու մեծ ճշմարտութիւնը*: Չարչարանքը դադարում է այս ծարաւը բոլորովին դադարեցու հետ միասին,—դադար, որ կայանում է ամենատեսակ կրքերի բացակայութեան մէջ, այս ծարաւից ազատվելու, կրակից ազատվելու, ցանկութեան անցնելու հետ միասին:

4) *Այն մեծ ճշմարտութիւնը* որի վերջաւորութիւնը չարչարանքի դադարումն է: Այս սրբազան ճանապարհը ունի ութ առոիճան, այն է՝ ուղիղ հաւատ, ուղիղ ձգտում, ուղիղ խօսք, ուղիղ վարք, ապրելու ուղիղ միջոցներ, ուղիղ աշխատանք, ուղիղ յիշողութիւն և ուղիղ մտածողութիւն:

Այս դրութիւններից շատը մեզ համար բոլորովին պարզ է, բայց կան մի քանի՝ ոչ այնքան դիւր ըմբռնելի բաներ: Բրիստոնեաները շատ լաւ են ծանօթ այն դրութեանը, որ ցանկութիւնը ամենատեսակ վշտեր ու հիասթափումներ է առաջ բերում, որ իր անձնաւորութեան հատատատութիւնը, անձնական ցանկութիւնների ու յատկութիւնների յայտնելը չարչարանք է պատճառում: Աւետարանումն էլ է ասված, որ այսպիսի չարչարանքից խուսափելու հնարը ցանկութեան, այսինքն՝ այն բանի երկրային գոհարումն է, ինչ որ աշխարհը կարող է տալ կամ խլել մեզնից՝ դանձ դիզելու դադարումը: Բուդդհայական վարդապետութեան բարոյական հիմքը

դրված է այն հասկացողութեան վրայ, թէ մարդու բոլոր ձիգերն ու ցանկութիւնները ունայն են, և այն համոզման, թէ մարդու ճշմարիտ դանձերը ոչ մէկը չեն այն բարիքներից, որոնց բուն բնութեան մտերմացած է մարդու սիրտը: Ո՛րտեղ չկայ այս հասկացողութիւնը, որտեղ անպայման չէ ընդունվում մեծ ճշմարտութիւններից առաջինը՝ այնտեղ խօսք անգամ չի կարող լինել բուդդհիզմի մասին: Մինչև այստեղ բուդդհիզմի վարդապետութիւնը բոլորովին պարզ է: Սակայն երկրորդ ճշմարտութեան մէջ մենք տեսնում ենք որ չարչարանքի պատճառը նշմարվում է մարդու անձնաւորութեան պատմութեան մէջ, ինչպէս հասկանում է այդ պատճառը հնդկական միտքը: Մարդը այն պատճառով է չարչարվում, որ ներից է ծնվում, տանում է վերածնունդը, իսկ նրա վերածնվելու պատճառը այն ծարաւն է, որ նա զգում կամ ունացանում էր նախընթաց գոյութեան մէջ: Այն միտքը, թէ չարչարանքը առաջ է գալիս ցանկութիւնից՝ այնպէս հասարակ կերպով չէ արտայայտվում, ինչպէս մեր Աւետարանում, այլ՝ մարդկային կեանքի վարդապետութեան և մի սերտով՝ միւսի հետ ունեցած յարաբերութեան հետ,—այն վարդապետութեան, որ բոլորովին խորթ է մեզ համար, բայց որի դիմաց սկզբնական բուդդհիզմը այնպէս էր ենթադրում, թէ նրա բարոգած չարչարանքի վարդապետութիւնը չէր կարող հասկացվել: Բուդդհա, յայտնագործելով այս վարդապետութիւնը, վարանում է սկզբում արդեօք քարոզել այն. իսկ նրա վարանման պատճառը այն անհատատութիւնն է, թէ կկարողանան արդեօք մարդիկ հասկանալ պատճառաբանութեան օրէնքը և այն գոյութեան անընդհատ շարունակութիւնը, որոնց մասին նա ինքը մտածում էր ողջ գիշերը՝ իր լուսաւորութեան յետոյ, և որոնց յայտնագործումը իր մեծագործութեան մի նշանաւոր մասն է համարում: Այս *պատճառաբանութեան շղթան յարատեւութիւնը* հասատատվում է այն երկար ու ձիգ դրութիւններով, որոնց մէջ պլոտոր ու առնդուամաօրէն պատկե-

բայվում է մի սերնդի կապը միւսի հետ և ցանկութեան ու վշտի ախտաւոր ժառանգութեան փոխանցումը մի կեանքից միւսը: Այս ամենի (չորս ճշմարտութիւնների) նախապատճառը անգիտութիւնն է. անգիտութիւնից առաջ են գալիս «սամկրևաները» կամ գործողութիւնների տեսակները, արտաքին պայմանները, չիմութը, ծարաւը և այլն մինչև նոյն իսկ ծերանալն ու կեանքի չարչարանքները: Չարչարանքը պատճառում է այս յաջորդականութեան բացատրական կերպով դուրս բերելով այնպէս որ, երբ պատճառում է չգիտայի առաջին օղակը, ապա նրա հետ միասին պատճառում է և հետևեալ օղակը:

Մինչ զարմանալու բան չկայ, երբ բուդդիզմի հիմնադիրը կասկածում էր, թէ արդեօք ամենքին հասկանալի կլինի պատճառաբանութեան այս վարդապետութիւնը՝ որպէսզի նրանք մարդկային անձնաւորութեան՝ բնութեան վրայ ձգած երկու հակառակ հայեացքները համաձայնեցնելու մի փորձ էր: Ամենից առաջ սկզբնական բուդդիզմի մէջ մենք պահում ենք, որ մարդկային էակի մէջ չկայ իր «հոգի». մարդը կազմված է տարրական նիւթերի ու պատրաստութիւնների պահպան խմբերից, որոնք *սկանդները* են կոչվում, բայց նա բուն իսկական նրանցից ոչ մէկը չէ: Այս գործողութեան ու ձևերի մէջ չկայ անձնաւորութեան մի յարատև հիմնանիւթ (субстратъ), ինչպէս որ սայլակ չեն անիւները, թևերն, (оглобли), բեռները և այլն, որոնցից կազմված է սայլակը: Բուդդհայականը հրաւիրվում է հրաժարվել մշտական «հոգի» հասկացողութիւնից. մարդը միայն այնտեղ է, որտեղ միացած են պահպան մասները: Սա յայտնի կրօնի մէջ հոգու յայտնի ժխտումն է. հոգին ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ «անունի ու ձևի» տարրերի պատահական միացում: Դժուար է ասելը, թէ ինչպէս է եկել այս վարդապետութիւնը. Կէրն ասում է, որ նա տեսակներ անդամահատելու պիտութիւնից հանված մի եզրակացութիւն է. ուրիշները այն համեմատում են Հերակլիտի վարդապետութեան հետ, որ մի և նոյն ժամանակին-

րը հանդիպել էր Յունաստանում,—այն վարդապետութեան, որ բարոզում է թէ ամէն բան գոնվում է յարատև չարժողութեան մէջ . . . Բուդդհայի վերջին խօսքերը հաստատում են, որ հանուր աւերումն է առաջ գալիս. և սրանդերի վարդապետութիւնը այս պրոբլեմի եզրակացութիւնն է. եթէ այն բոլոր տարրերը, որոնցից կազմված է մարդկային անձնաւորութիւնը, աւերման են ենթարկվում՝ այն ժամանակ «հոգը» չի կարող մի ինչ որ էական ու մշտական բան լինել: Այս վարդապետութիւնը սակայն վատ է յարաբերվում հաւատի հետ, հաւատի, որ ամփոփված է չարչարանքի հանդարտեցութեան ու անոտրելիութեան մէջ: Եթէ «հոգը» չկայ, ապա չկ՚ըլ է արդեօք դատարկ պիտակութիւնը այն տարրերի աւերման ժամանակ, որոնց միացրել է տրիմը, և մահն ժամը կատարեալ ազատութեան ժամ չկ՚ըլ է լինի: Այս բանը սակայն անկարելի էր մտածել Հնդկաստանում Գաուտամայի ժամանակը. *Հոգեփոխութեան* հաւատը խիստ էր հաստատուել, և նա չէր մտածում առարկութիւն անելու նրա մասին: Այս հաւատն էր ահա, որ աշխարհի չարչարանքը այնքան տխուր էր դարձրել: Հնդիկների աչքում չարչարանքը հարիւրապատիկ սաստկացել էր հաւատի անգթալի ու ապազայի հետ ունեցած կապի խստաբ պատկերացմամբ: Մի՞ն, ինչ որ պէտք է տանէր մարդը, այն արարքների հետևանքն էր, որոնք կատարվել էին նախընթաց շատ կեանքերի մէջ, որ մարդիկ անց էին կացրել ցանկութեան ունայն հշտութեան մէջ. և նրանց առաջը բացվել էր այն բանի տխուր հեռանկարը, որ մահը չէ վերջացնելու նրա չարչարանքները, բայց որ նա նոր ի նորոյ ծնվելու է, որպէս զի նորից չարչարվի, ինչքան ժամանակ որ տևելու է ցանկութիւնը: Բայց եթէ այսպէս է, ապա հոգին մի ինչ որ երկարատև ու հաստատուն բան է, ընդունակ անվնաս մնալու, անցնելով շատ կեանքերի ու շատ չարչարանքների միջով: Հոգեփոխութեան տեսութեամբ՝ հոգին ոչ միայն յայտնի արատութիւններ միացնելու համար մի

երևակայական անուն է, այլ մի ինչ որ եղականապէս երկարատև բան, որ շարունակ ապրում է, երբ ամէն պատահական ու ժամանակաւոր բան անջատվում է նրանից։ Այսպիսով սկանդերի ու հոգեփոխութեան վարդապետութիւնները հակառակ են միմեանց, և նիհարների կամ պատճառաբանութեան անընդհատ չարունակութեան վարդապետութիւնը նրանց միջև այն կամուրջն է հանդիսանում, որ բաւականութիւն է տալիս նոյն իսկ Գաուտամայի մարին, բայց որի վերաբերմամբ նա կասկածում էր՝ կաջողվի արդեօք ներդաշնակութեան բերել նրանց միւսների համար։ Իր այս մտքի պրօցէսները թւելով՝ նա նկատի ունէր ցոյց տալ, թէ ինչպէս մէկ կեանքում տեղի ունեցած վարմունքը հակված է վերանորոգվելու միւսում, որ սկսվում է առաջինի վերջանալուց յետոյ։ Թէպէտ չկայ մի հոգի, որ կարողանար մէկից միւսին անցնել՝ սակայն նախընթաց կեանքի բարոյական ազդեցութիւնը անյնում է յաջորդներին։

Բուդդայի դլխաւոր վարդապետութիւնը սակայն պայմանաւորվում է հոգեփոխութեան հաւատով։ Նրա իր լուսաւորվելու միջոցին արած ուրախ բացագանչութիւնը բացատրվում է նրանով, որ այժմ վերջացել է դոյութիւնների այն երկար շարքը, որանց միջով նա անցել է, և որ նա արդէն նրանից ծնվելու չէ։ Իր քարոզներում Բուդդա շարունակ կրկնում է, թէ մրքան տխուր բան է ծնունդների ատոտափելի յաջորդականութիւնը չաշարանների վերանորոգման դրժում, և ինչ անվախճան երանութիւն է՝ այս շրջանից խուսափելը։ Նորընծայ աշակերտը պէտք է կարողանայ ասել. «Թժոխքը ինձ համար աւերված է, նոյնպէս և կենդանու կամ մի աւերեալի տեսիլի պէս վերածնունդը չարշարանքի ինչպիսի և իցէ տեղում։ Ես զարձել եմ (դէպի նոր հաւատը), ես էլ վերածնվելու չեմ չարշարանքի վիճակում, և հաւատացած եմ որ յաւիտեան փրկված եմ»։

Մարդու իր չարշարանքներին վերջ տալը տէնց իր վար-

ժունքից է կախված։ Յաջորդականութեան չգիտեն, որ վերջանում է չարշարանքով՝ սկսվում է ապիսութիւնից։ Իսկ այս ապիսաւիլիւնը չորս մեծ ճշմարտութիւնների տիսութիւնն է՝ փրկութեան ճանապարհի ապիսաւիլիւնը։ Թող պատարի մարդու հաւատ ապիսաւիլիւնը, թող նա ընդունի մեծ ճշմարտութիւնները և նրանց՝ չարշարանքի պատճառների բացատրութիւնը, և այն ժամանակ, դադարելով ծարաւելուց կամ վշտանալուց, հեռացնելով իր սրտից ամէն ցանկութիւնից, հաւատալով որ իր սրտը իրօք իր փրկութեան համար է լինելու՝ նա կսանձի յաջորդականութիւնների չգիտեն հակառակ ուղղութեամբ և, աշնչացնելով ապիսաւիլիւնը՝ կարող է անդորրանալ այն համոզումով, թէ աշնչացրել է չարշարանքը և կանգնած է իսկական ճանապարհի վրայ։ Նա այլ ևս հարկադրված չի լինի բաշ տալու իր ժառանգած բնոյթը, և իր մահից յետոյ ընդ միշտ կազատվի նրանից։

Գտնելով դէպի *շորրորդ մեծ ճշմարտութիւնը*, որ բացատրում է թէ ինչ պէտք է անի մարդ այս փրկութեանը հասնելու համար՝ մենք առաջ ակամայ զգումանում ենք։ Այն խոր լրջութիւնից յետոյ, որով սահմանվում է հիւանդութեան բնոյթը, նրա պատճառը և բժշկութեան եղանակը՝ մենք կարող ենք սպասել, որ կպատահնջվին աւելի զօրեղ գործական միջոցներ, քան այս ուժ տեսակ ինքնակրթութեան աշխատանքը։ Քրիստոնէութիւնը խօսում է այն բանի մասին, թէ պէտք է կարել աջ ձեռքը, հանել աջ աչքը, որպէս զի վերջ դրվի ցանկութեանը. և, ինչպէս տեսանք, առաւելութեան հետ միանալու բրահմանական սիստէմը կայանում էր մարմինը բարոյին աշնչացնելու մէջ, որ միացած է ինքնախորասուզման հետ։ Բուդդա մեկ տարի վարժվում էր այս բրահմանական սիստէմի կամ *յոգայի* մէջ, որով անապատականը փորձում էր խլել տալ գոյութեան ամէն պատճառականութիւնից և ի մի ձուլվել մեծ «Ես»-ի հետ. բայց երբ խմեց իր լուսաւորվելու ժամը՝ Բուդդա մի տարով թողեց այս միջոցը, և որոշակի

դատապարտում է ուրիշների համար այն ճանապարհը, որ անօգուտ գտրո եկաւ հէնց իր համար։ Սա այն երկու ծայրայեղութիւններից մէկն է, որոնցից պէտք է խուսափել։ «Մէկ ծայրայեղութիւնը բաւականութեան ու գոհացութիւնների նուիրուած կեանքն է. նա ստորացնող է. դժբախտ, ցած, ապարդիւն. միւսը՝ ինքնամոռացումներով լի կեանքը. դա տանջողական է, ցած ու ապարդիւն։ Խոյս տալով այս երկու ծայրայեղութիւններից՝ Ցախտագատա գտաւ միջին ճանապարհն բռնելու կարողութիւնը, որ տանում է դէպի հասկացումը, իմաստութիւն, հանդիստ, Նիրվանը»։ Այս պատճառով Կարմայից,—այն բարոյական հատուցումից, որ անխնայօրէն մէկ կեանքում առաջ է բերում այն բանի հետեւանքները, ինչ որ կատարված է նախընթաց կեանքերում,—խուսափելու հնարը կայանում է ինքն իր վրայ խնամքով ու անընդհատ աշխատելու մէջ. այդ աշխատանքը ծայրայեղութիւնների չէ հասնում, և իր նպատակը պարզ հասկանալով ու ինքն իր վրայ կատարելագոյն իշխելով մոլորութիւնը այն անհրաժեշտ առաքինութիւնները, որոնք յիշված են մեծ ճշմարտութիւններից չորրորդի մէջ։ Բայց որոնք են այդ առաքինութիւնները։ Դրանք հետեւեալներն են.

1) Ուղիղ, ոչ անապաշխ ու անմոլար հաւատ։

2) Ուղիղ ձգտում դէպի այն, ինչին որ մտածող ու լուրջ մարդը նշանակութիւն է տալիս։

3) Ուղիղ խօսք, բարեհամական ու անհիգծ խօսք։

4) Ուղիղ վարք, խաղաղասիրական, վայելուչ ու անբիծ վարք։

5) Կեանքի ուղիղ միջոցներ, այսինքն՝ զործողութիւնների այն հպանակը, որ զրկանքներ կամ կեանքի ապահանում չէ բերում իր հետից։

6) Ուղիղ ջանք, այսինքն՝ իր վրայ իշխելու կարողութիւն և շրջահայեցութիւն։

7) Ուղիղ յիշողութիւն, այսինքն՝ յիշողութեան մշտական

ներկայութիւնը այն բանի մէջ, ինչ որ պէտք է յիշել. և

8) Ուղղախոհութիւն, այսինքն՝ կեանքի հանելուկների լուրջ կշռադատութիւն։

Ա՛յսպիսի ճանապարհ է այդ ճանապարհը. դրա չորս ասպիճանը կայ։

1) Ա՛յն մարդու աստիճանը, որ սար է դրել այս ճանապարհի վրայ։

2) Ա՛յն մարդու աստիճանը, որ մի անգամ էլ է մանելու կեանքը։

3) Ա՛յն մարդու աստիճանը, որ չէ՛ վերադառնում նորից, բայց կարող է նորից ծնվել իբրև աւելի կատարեալ էակ. և

4) Արժանաւոր սուրբ Արահատի աստիճանը, որ ազատ է զոյութիւն ունենալու ցանկութիւնից, նոյնպէս և իր արդար լինելու հպարտ գիտակցութիւնից, և ամ փրկվել ու ձեռք է բերել սրբութիւնը մինչ անգամ այս կեանքում։

Արահատ նոյնը չէ, ինչ որ Բուդդա. առաջինը ինքն է փրկված, իսկ կատարեալ Բուդդա իր կատարեալ հմտութեամբ կարող է ուրիշներին փրկել։ Սակայն Բուդդաներ շատ են երեան գալիս։ Մարդը Արահատ է դառնում եռանդուն ու անխոնջ ճիգերով։ Պէտք է փշրել այն տաս չղճաները, որոնք արգելք են լինում մարդու ազատութեանը։ Նրանցից մէկը ինքնախաբութիւնն է, միւսը՝ գոհին հաւատալը, և դուրսկը տմփոփում է իր մէջ մէ՛ մարմնաւոր ու մէ՛ մտաւոր մոլութիւնները։ Պէտք է մարդ հսկի իր վրայ և ժուժկալ լինի. ամէն գործ, ինչքան էլ չնչին լինի, պէտք կատարվի կատարեալ գիտակցութեամբ ու լրջութեամբ։ Պէտք է յիշես, որ կատարում ես մի մեծ ու գժուար գործ, և կարուկ կերպով «լուսաւոր հոսանքի հակառակ» կողմը, գնահատելով ըստ արժանոյն ամէն հակում ու գայթակղութիւն, որոնք հետու են պահում մարդուն։ Մարմինն ու բոլոր բնական կազերը պէտք է արհամարված լինեն. գործումը այնպէս պէտք է դուրս հանվի ազդեցից, որ կարողանայ հաստատել կատարեալ հանգիստ ու ան-

պորտալիքին։ Այն ժամանակ մարդ դառնում է Ըրախատ, ճըշմարիտ Բրահման։ Այսպիսի կեանքը աշխարհից տարագրվել է պահանջում. միայն նա կարող է ձեռք բերել իսկական փրկութիւնը, ով լիովին է իր մտքը անտուն կեանքի համար։ Բայց Բուդդհամը նոյնպէս բարոյական հանուր կանոններ է տալիս նրանց, ովքեր տուր չեն դնում այս ճանապարհի վրայ. այդ կանոնների պահպանութիւնը տանելու չէ նրանց ուղղակի դէպի փրկութիւնը. այսպիսի փոխանցում նրանց այժմեայ կեանքից տպաւոր անհնարին է. բայց սա դեռ սկիզբն է. դա կը նեխէ նրանց համար Ըրախատի վիճակին հասնելը և յաջորդ գոյութիւններից մէկի մէջ փրկութիւն ձեռք բերելը։ Ամենքի համար լաւ է ցանկութիւնից զերծ լինելը, և որովհետև ամէն ցանկութիւն իր մէջ մահի սաղմն է պարունակում՝ ապա ուրեմն միայն այս ճանապարհով է հնարաւոր փրկութեան մօտենալը։

ԲՈՒԴԴՀԱՅԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ Մեր գաւառների վերաբերմամբ բուդդհայական բարոյականութիւնը հիմնված է հանուր հաւատարութեան հասկացողութեան վրայ. բոլոր կենդանի էակներին պէտք է յարգանքով վերաբերվել։ Անմ արգելութեան այն հինգ կանոնները, որ պարտաւոր են պահպանել Բուդդհայի հետևողները.

1) Չսպանել ոչ մի կենդանի էակ։
2) Չառնել այն, ինչ որ քեզ չեն տալիս։
3) Չեղու կենալ շնութիւնից։
4) Սուտ չխօսել։
5) Չեղու կենալ ամէն արբեցնող խմելիքից։

Այս կանոնները կցուած են դարձեալ հինգ կանոն միաբանութեան անդամների համար, որոնցից պահանջվում է հեղու կենալ մեւս սեռի հետ որ և է հաղորդակցութիւն ունենալուց, այս պատճառով էլ պէտք է, որ նրանք

1) Չունեն ճաշից յետոյ։
2) Ներկայ չլինեն պարի, երգեցողութեան, նուագածութեան կամ խաղերի ժամանակ։

3) Գոթ չածեն բարձր կամ լայն անկողին։
4) Չունենան ոչ արծաթ, ոչ ոսկի։

Այս պատուիրանները, հին-ուխտի տաս պատուիրանների պէս, բացատական ձևի են. բայց բուդդհայական դրուածքներում ամէն նշանաւոր ու քնութեամբ հրապուրիչ բան բարոյական դրական իդէալով է համակված, և այս բոլորը պահպանվում է մի գործ, թէպէտև հանգամանքների փոփոխութեամբ (Ընտուիզմով)։ Մենք այստեղ մի երջայած բաղձողութիւն ենք գտնում այն յարաբերութիւնների նկատմամբ, որ պէտք է պահպանի մարդը իր մերձաւորների հետ. հրամայվում է ամենալայն համբերութիւն,—համբերութիւն, որ տարածվում է բոլոր էակների, բոլոր կարծիքների վրայ։ Բաելութեան պէտք է պատասխանել սիրով, կեանքը պէտք է համակված լինի բարութեամբ ու կարեկցութեամբ։ Դիամապատա ու Սուտտա-Նիպատա արժանի են, որ կարդան ներքանց այն ամէնքը, ովքեր շահագրգռվում են ոգու ծածուկ գանձերով։ Իրանց պարզ լրջութեամբ, իրանց՝ առակների ու փոխաբերական մարերի հմուտ գործադրութեամբ, իրանց ամենօրեայ իրերը ամենամեծ ճշմարտութիւնների հետ խառնելով այս գրքերը աշխարհում ամենագօրեղ կերպով ներգործող կրօնական գրքերից մէկն են։ Բերում ենք այս գանձարանից յոկ մի քանի գոհար։

ԳԻԵՄՄԱՊԴԱՅԻՑ. Լրջութիւնը մի ճանապարհ է, որ տանում է դէպի անմահութիւնը (Նիրվանը), անհասկացողութիւնը՝ մի ճանապարհ դէպի մահը։ Լուրջ մարդիկ չեն մեռնում, թեվեհ անմիտները, ասես թէ, արդէն մեռած են։

Մեր լինելը մեր մտածածի հետևանքն է. մեր գոյութիւնը հիմնված է այն բանի վրայ, ինչ որ մենք մտածում էինք, բաղկացած է այն բանից, ինչ որ մենք մտածում էինք։ Եթէ մարդ մտքով է խօսում կամ գործում, ապա նրան հետևում է երջանկութիւնը, նման իր ստուերին, որ երբէք չբանից չէ հեռանում։

Մարդը ինքն է գործում չարությունը, ինքն է չարչարվում. ինքն է հետևում կենում չարից, ինքն է մաքրվում։ Մարդությունն ու անմաքրությունը իրան մարդուն են պատկանում. ոչ որ չի կարող մաքրել ուրիշին։

ՕՈՒՏԱՆ-ՆԻՊԱՏԱԳԻՑ։ Ապրել յարմարաւոր երկրում, կատարելով բարի գործեր նախընթաց գոյությեան մէջ և ձեռք բերելով կատարեալ ինքնաճանաչությունն՝ ահա մարդու բարձր օրհնությունը։

Ի՞նչպէս մայրը իր կեանքը վտանգի ենթարկելու դնով պահպանում է իր սեփական երեխան, իր միակ գաւակը՝ այնպէս էլ լծոր ամէն մարդ անսահման բարությունն անի բոլոր էակներին։

Այն բնութիւնը, որ հրաժարվել է ցանկությունից ու հակումից և իմացականությունն է ձեռք բերել այս աշխարհում՝ արդէն անցել է անմահական վայրը, Նիրվանի անփոփոխ վիճակը։

ՆԻՐՎԱՆԱ։ Մեր այս վարդապետության համառօտ նկարագրությունը թերի կլինէր, եթէ չփորձէինք պատասխանել այս հարցին. ինչ բան է Նիրվանա։ Սա, ինչպէս ցոյց է տալիս, վերջին բաղադրիչը՝ փրկության վիճակն է բուդդհայականության մէջ։ Ի՞նչպէս տեսանք, սա այն մարդու վիճակն է, որ խոյս է տվել մի ամբողջ շարք վերածնունդներից և էլ երբէք չէ ծնվում։ Մարդը այդ վիճակին, մինչ անգամ երկրաւոր կեանքում, հասնում է Արահատով, որի մէջ ամէն ցանկություն ու անհանգստություն դադարում են։ Միւս կողմից՝ խոսք է լինում թէ մեռնելուց յետոյ մարդը մուտք է գործում Նիրվանը, ասես թէ այս վիճակը ոչ թէ երկրաւոր, այլ անդրշերեզմանային կեանքի վիճակը լինի։ Այսպիսով բազմաթիւ վէճեր են ծագել այն բանի մասին, արդեօք բուդդհայական (կամ ասելի ճիշտ՝ հնդկական, քանի որ այս հասկացողությունը միմիայն բուդդհիզմին չէ յատուկ) Նիրվանա մի հատարեալ ոչնչացում է, որի սկիզբը այս կեանքում ցանկությունը ճնշելն է, կամ թէ սա մի բացասական կամ խաղաղ երանության վիճակն է, ուր սուրբը կարող է մուտք գործել հէնց այստեղ, բայց որին լրիւ հասնում է մեռնելուց յետոյ միայն։ Սակայն երկու Նիրվանա կայ. մէկը կատարեալ ժուժկալության Նիրվանան է, որ ձեռք է բերվում այս կեանքում, և միւսը՝ լրիւ Նիրվանան, որ ձեռք է բերվում մեռնելուց յետոյ։ Սուրբը կարիք չունի իր փրկության համար մահի սպասելու, և կարիք չունի փոխադրելու իր վախճանը՝ այն լիովին վայելելու համար։ Բուդդհա իր սեփական օրինակով ու խրատով արդիւնաւորում է այսպիսի նախապատրաստությունը։ Մահը տպատերում է այն, ինչ որ արդէն ձեռք է բերվել, և նա Նիրվանայից չէ վերադառնալու դէպի որ և է մի ուրիշ կեանք։ Բայց սա մեզ չէ պարտաւորեցնում անելու այն եզրակացությունը, իբր թէ դերեզմանի այն կողմը մեռած Արահատի համար չկայ ոչ կեանք, ոչ ճանաչողություն. նա զատ է ցանկությունից, բայց բուդդհիզմը որոշ չէ ասում, արդեօք բոլորովին է մարել նրա գիտակցությունը, և այս հարցը մի ունայն պատրաստություն է համարում։

ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒԹԻՒՆԸ։ Մենք յետոյ խօսելու ենք փրկության վրայ ունեցած այն հայեացքի մասին, որ բացատրում է բուդդհայական կրօնի բնույթը։ Նկատենք այստեղ, որ այս փրկությանը մարդը հասնում է իր սեփական ջանքերով, առանց որ և է արտաքին նեցուկի կամ օգնության։ Այս սիստեմում տեղ չունեն ոչ քուրմեր, ոչ զոհաբերություններ, ոչ ապօրէքներ, ոչ աստուածներ։ Չկայ ծիսակատարություն, որովհետև կուլտ աստուածների համար չկայ, չկայ մեղք՝ բարձրագոյն էակին վիրաւորելու մտքով։ Աստուածները մերժվում են ոչ թէ իրանց գոյության մէջ իմացականության տարածկոյս լինելու պատճառով, այլ, որ նրանք ոչինչ դեր չունեն բարոյական աշխատանքի այս նորերին աշխարհում, այն դերը, որ մարդը ճանաչել իրրև ամենից իրական ու կարևոր։ Չընդունելով հասկացողության մէջ բոլոր աստուածները դուրս

վել էին Բրահմայի առաջը, և հառել էր Բրահմայի հերքիը նրանց պէս գունատվելու։ Բուդդհայականը այնպէս է խօսում աստուածների մասին, ասես թէ նրանք գոյութիւն ունեն, և չէ յարձակվում գոհաբերութիւնների վրայ. բայց ոչ մի կենդանի աստուածութիւն չէ լցնում նրա սիրտը։ Բուդդհա բարձրը է բոլոր աստուածներից. նրա վարդապետութիւնը աստուածների օգտին էլ է պէտք գալիս, ինչպէս և մարդերի։ Սակայն Բուդդհա չէ հանդիսանում իբրև երկրպագութեան առարկայ. եթէ բուդդհայականը երկրպագում է սր և է բարձր ուժի, ապա երկրպագում է լոկ այն բարոյական կարգ ու կանոնին, որ միշտ հաստատում է մարդերին իրանց գործերի համար նախընթաց գոյութիւնների մէջ։ Սո նրա համար մի իրական ու երկիւղալի, լէպլէտ անկէմ, ուժ է, որով նա, ինքն իր մէջ խորասուզվելով՝ կարիլի է ասել, կատարում է մէկ իր տեսակի կուլտ։ Բայց փրկութեան հասնելու համար նա կարիք չունի օգնութեան ոգասկու որ և է երկնաւոր կամ երկրաւոր ուժից։ Բուդդհիմը բոլոր կրօնների մէջ ամենից անհատական կրօնն է. նա միւս բոլոր կրօններից աւելի կտրուկ կերպով է յայտարարում, թէ մարդ իր սեփական ջանքերով պէտք է փրկվի, թէ այս կողմից ոչ ոք չի կարող փոխարինել նրան կամ իր վրայ առնել նրա մեծ խնդրի լուծման մի մասը։ Այն ամենը, ինչ որ մէկը, մինչ անգամ Բուդդհա, կարող է անել միւսի համար՝ այդ միմիայն նրան լուսաւորելն է, այն է, որ բաց անի նրա աչքերը ճշմարիտ ճանաչողութեան համար և ցոյց տայ այն նեղ կածանը, որով նա գնալու է այնուհետև։

3. ՀԱՄԱՅՆՔԸ։ Միանձնները բուդդհիմից էլ առաջ կային։ Այս կրօնը լոյս ընկաւ այն ժամանակ, երբ հնդկական միտքը զարգացման այնպիսի վիճակում էր գտնվում, որ կարելի է ոգասկ միանձնական համայնքների առաջ գալը։ Երբ կրօնը դադարում է միմիայն ազգութեան կամ ցեղի գործ լինելուց՝ և սկսում է անձնաւորութեան գործ համարվել, երբ

մարդկային ոգին գոհաբերութիւններն ու հաստարակաան կրօնի ձևերը թողնելով՝ յարաբերվելիս է սկսում մի այնպիսի ուժի հետ, որ պէսաւորապէս հոգով ու սրտով է ճանաչվում, և երբ կրօնական պարտաւորութիւնը մի այնպիսի անսահման ու ամենաբովանդակ սպասաւորութիւն է ճանաչվում, որ ձեռք ու ոտքով չի կարող կատարվել, և որի կատարումը ձեռք է բերվում լոկ երբէք չընդհատվող, միշտ վերանորոգվող ներքին ճիգերով՝ ողջ անձը իր բոլոր գործողութիւններով ու նպատակներով իդէալին համապատասխան անելու,—այն ժամանակ կրօնի համար ապրող մարդիկ աշխատում են օգնել միմեանց, դիմելով մի յայտնի կանոնագրութեան ու կարգապահութեան։ Բուդդհայական սամգխայի կամ միաբանութեան, ինչպէս և նրան ժամանակակից հանիական միաբանութեան կանոնները հասել են մեզ։ Սամգխան ունէի ֆրանցիսկեան միաբանութեանն էր նմանում, բան բրիստոնէական միւս միաբանութիւններին։ Ցարելով միաբանութեանը՝ բխիկկուն թողնում էր իր ընտանիքը, հրաժարվում կալքից, հագնում դեղին հագուստ և այն ու այդ մօմէնտից ապրում էր ողորմութեամբ, խստիւ հնձմարկվելով այն կանոններին, որոնց մէջ ամենայն մանրամասնութեամբ որոշված էին նրա ուտելիքը, հագուստը, քնակութեան տեղը, ամենօրեայ զբօսանքները ու զրոյցները։ Համայնքի երկու գլխաւոր նպատակներն էին՝ փոխադարձ օգնութիւնը կրօնական կեանքում և քարոզը։ Առաջին նպատակը իրագործվում էր միանձների մասնաւոր ժողովներով և այն խոստովանութիւններով, որ նրանք անում էին միմեանց՝ յայտնի եղանակով։ Հնազանդութեան խոստում չկայ. բուդդհայական միանձը օրէնքին է հնազանդում, ոչ թէ մարդկային հեղինակութեանը։ Քարոզելու համար նրանք պէտք է դուրս գան մէկ-մէկ ու քարոզեն ամենքին։ Փրկութեան դռները բաց են այն ամէն մարդու համար, որ ցանկանում է լսել։ Օրանում երևան է գալիս բուդդհայականի արհամարհանքը դէպի գասակարգերը։ Բուդդհիմը չէ յայտա-

բաբում պաշտօնապէս կամ հանուր դրութեամբ, թէ մարդիկ հաւատար են, չէ յարձակվում բրահմանական դասակարգի վրայ, չէ փառաբանում ստորին դասակարգերը։ Սկզբում միաբանութիւնը անդամները ժողովում էր բրահմանների միջից։ Բայց նոր կրօնի շարժող դրդումը կարեկցութիւնն էր, իսկ անկեղծ կարեկցութիւնը չի կարող փակվել արուեստական սահմաններում։ Քարոզվող վերկութիւնը պիտանի է բոլոր մարդկերին։ Այն հիւանդութիւնով, որ պէտք էր բժշկել՝ ախտառնում էին բոլոր մարդիկ, բժշկութիւնն էլ մի այնպիսի բժշկութիւն էր, որին ամէն մարդ պոնէ կարող էր դիմել։ Այս պատճառով բուդդիզմը կարող էր կործանել դասակարգերի պատուարները և ժողովել ի մի կրօնական դասակարգ բոլոր մարդկին անխտիր։ Թվում էր թէ համայնքի մէջ այս խտրութիւնները վերանում էին։ Ո՛չ թէ ծնունդը, այլ գործերն էին այնտեղ ճշմարիտ բրահմա առաջ բերում։ Այս կրօնի համաշխարհային ուղղութիւնը իրան բնդունակ էին անում տարածվելու ուրիշ երկրներում։ Նրա վարդապետութեան մէջ ոչինչ բան նրան չէր կապում Հնդկաստանի հողի կամ աստուածների որ և է առանձին խմբի երկրի հետ։ Նրա համընդհանրութիւնը իրաւ այնպէս մեծ է, որ մարդ կարող է միանալ, յարել նրան, չմոռնալով իր նախկին հաւատը։ Հասարակ մարդիկ կարող են առանց դժուարութեան միացնել այս կրօնը իրանց նախկին հաւատալիքներին ու ծէսերին։ Զանգ-ախուն հաւատացողն էլ կարող է լինել բուդդայական, ինչպէս և Բրահմային հաւատացողը։ Այս կամ այն բահանայապետութեան կամ կենտրոնացած կազմի բացակայութիւնը հնարաւորութիւն էր տալիս այս կրօնին ազատ տարածվելու, և նոյն իսկ նրա վարդապետութեան պակասաւորութիւնն ու ծիսականութեան բացակայութիւնը չահաւէտ էին նրա համար։

ԲՈՒԴԴԷԻՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆԱՆՈՒՄ Է։ Բուդդիզմը ընդունակ եղեցաւ տարածվելու շատ երկրներում, որովհետև պարզ էր և իր էութեամբ՝ բարոյական ու մարդասիրական։

Բայց ուրիշ՝ շատ երկրներ տարածված կրօնների պէս, բուդդիզմն այլ և այլ երկրներում շատ տարբեր ձևեր էր ստանում, և նրա յետագայ ձևը յաճախ շատ է տարբերվում իր սկզբնական պարզութիւնից։ Մինչ անգամ նոյն իսկ բոլորովին վազ նա պէտք չէ եղել բաւականաչափ անապաշտութիւնից. Արաքատա, ինչպէս և նրանից առաջ բրահմանական անապատականը, ընդունակ էր համարվում աստուածների վրայ ազդելու իր առաքինութիւնների շնորհիւ, և այսպիսով մի հասկացողութիւն էր մտնվում կերպարական ուժի մասին, որ վատ էր յարիւրվում բարոյական վարդապետութեան հետ։ Այն կրօնը, որ առաջ արհամարհում էր աստուածներին և իւրականչիւր մարդուց պահանջում էր հաւատ դէպի իր սեփական ուժերը, բարձր բարիքին հասնելու համար՝ շուտով դարձաւ այն, ինչ որ էր անհրաժեշտաբար ժողովրդական կրօնը այն ժամանակվայ զարգացման աստիճանի վրայ, այն է՝ բարձր էակների կուլտ և նրանցից բարեխաւութիւններ ստանալու միջոց։ Պզդայնական աստուածները մերժված էին, բայց հիմնադրի պաշտամունքը վազ էր տվել մի էակ, որին կարելի կլիներ երկրպագել։ Էչգինգան ճոխ ճաշ էր նրա ծնունդի ու սկզբնական գործունէութեան շուրջը, և նա գարձել էր բոլոր աստուածներից ամենաբարձրը։ Նախկին ժամանակներն ապրող նախկին Բուդդաները դեռ դոյութիւն ունէին իրրև աստուածներ. և մի անգամ հիմնված աստուածային ընտանիքը թոյլ էր տալիս դանազան յաւելումներ. մինչ անգամ Ինդրայի պէս մի ժողովրդական աստուածութիւն կարող էր միանալ մեծացող շրջանին։ Հիմնադրի կեանքից առնված դիպաւոր տեսարանները ձեռք էին բերել տվել ուխտագնացութեան համար շատ սրբազան վայրեր ու նպատակներ, և այնտեղ երկրպագութեան համար դանազան սրբութիւններ էին յուցահանվում։ Էչգինդայի ու մահապաշտութեան գարդացումը շատ արագ էր ընթանում և մեծ ծառայ էր ստացել աւելի հիւսիսային, քան հարաւային բուդդիզմի մէջ. սակայն բուդդիզմը իր հայրենի

երկրներում էլ անընդունակ երևեցաւ մի հանրամատչելի կրօն դառնալու առանց այն յատկութիւնների ու փոփոխութիւնների, որոնք բոլորովին յատուկ չէին իր իսկական բնոյթին։ Բուդդհիզմի դաւանելը կապ ունէր մինչ անգամ ոչ արիական ցեղերի նախնական կուլտի հետ. Սիվա նոյնացած էր Բուդդհայի հետ, իսկ յետոյ պաշտւում էր նրա փոխանակ այնպէս, ինչպէս և Վիշնու, և այդ ժամանակ կրօնի յեղաշրջումն ու ստրացումը նախապատրաստւում էր վերջնի վտարումը իր հայրենիքից։ Այս վտարումը հաւանաբար առաջ էր եկել Հնդկաստանում ապրող մահմեդականութեան անմիջապէս տարածվելով միջին դարերի առաջին կիսում։ Այսուհետև մենք չենք կարող խօսել այն օտարոտի ձևի մասին, որի մէջ բուդդհիզմն ընդունել էր հիւսիսում, այն է՝ Տիբէթում։ Այս երկրի լամայիզմը իր՝ աստուածային Բուդդհայի չարունակ մարմնացմամբը ներկայ ուսուցիչների յաջորդական շարքում, իր բռնատիրապետական եկեղեցով, որ շատ կողմերով հռոմէական եկեղեցին է ստահիկ յիշեցնում, իր պօէմական նշաններով ու անիւներով և կրօնական ծէսերը մեքենաբար կատարելու համար՝ երկար ժամանակ ողջ աշխարհին զարմանք էր պատճառում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ։ Այն բանի մասին թէ իրօք ինչ բան է բուդդհիզմը, և նրա նշանակութեան, իբրև մարդկային ազգ արտապրութեան մասին, մենք չենք կարող պատկերացում, թէ ինչ բան է բուդդհիզմը ներկայումս այն երկրներում, որտեղ նա ծաղկում է և ունի հետևողներ, որոնք մի և նոյն ժամանակ ուրիշ կրօններ էլ են դաւանում։ Սրա համար մենք պէտք է դիմենք սկզբնական բուդդհիզմին։ Ի՞նչպէս կարելի է դատել այս կրօնի մասին, որ աստուածներ չունի և հիմնված է այն գրութեան վրայ, թէ ամէն կեանք չարչարանք է, իսկ ամենամեծ բարիքը՝ կեանքի կատարեալ ոչնչացումը։ Անհնարին բան կլինէր, եթէ նրան բնորոշէինք իբրև մի այնպիսի կրօն, որի մէջ տեղ չունի ուրախութիւնը, և որ

պիտակցաբար է հրաժարւում դէպի իրան որ և է վերաբերմունք ունենալուց։ Այն Երախտաւոր, որ իր մէջ յայտնել է ցանկութեան, և որ ուրիշ ծնունդների չէ ապատում՝ համակված է անասելի ուրախութեամբ ու ցնծութեամբ, ինչպէս մի յայտնակով, որ յայտնել է բոլոր ըշխամներին. և նրանք ովքեր մի բիչ բան են ձևը բերել այս ճանապարհի վրայ՝ այսուամենայնիւ իրանց բաժինն ունեն այս հրճուանքի մէջ, որ նրանց ապահովում է՝ պատերազմը չարունակելու։ Սակայն այսուամենայնիւ բուդդհիզմը ախուր կրօն է։ Նա լոյս է բնկնում Հնդկաստանում, երբ այն աստուածութիւնը, որին հաւատում էին այնտեղ, իջոլել էր աշխարհը, և յայտարարում է, որ մարդը աշխարհում մենակ է։ Չկայ մէկը, որ կարողանայ օգնել նրան, մէկը, որ կարողանայ համոզել նրան, լվ բարութիւնը, որ ունի լայն մտքով, իր սեփական անձնական կեանքի սահմաններից այն կողմն է անցնում՝ պէտք է յայտնական. չկայ մի էակ, որ և է բարոյական կարգ ու կանոն պահպանէ՝ բացի այն կարգ ու կանոնից, որ իւրաքանչիւր մարդ մշակում է իր անձնական փորձով։ Հետևանքն այն է լինում, որ հաւատացողը չէ վրդովվում այն բանից, ինչ որ կատարվում է աշխարհում, այլ լոկ իր անձնական փրկութեան մասին է մտածում։ Այս կրօնը մի ընկերվարական ուժ չէ, որ ստիպվելու է հաւատացողների միացած ջանքերով, այլ միայն նպատակ ունի առանձին հոգիների փրկութիւնը, որոնք նոյն իսկ իրանց փրկութիւն արարողութեամբ հետևցել են որ և է գործ կատարելուց, աշխարհն հետ որ և է հարցրպակցութիւն ունենալուց։ Այս պատճառով բուդդհիզմը հետևողների կերպով քարոզութիւնը նպատակ մի ուժ չէ։ Լինելով կրքեր զսպելու և ունայն ու ապօրինի ցանկութիւնների առաջն առնելու մի հզօր գործիք՝ բուդդհիզմը այսպիսով խաղաղութեան է ձգտում։ Բայց նա չէ՛ մի այնպիսի գրքում, որ ցոյց տայ մարդուն նոյն իսկ բնութեան մէջ թաքնուած

դանձերը. նա ամէն ձեռնարկութեան մէջ աւելի իրրև արդեօք է երևան գալիս, քան իրրև խրախոյս. նա աւելի կանոնների ախտաւոր ենթարկմանն է նպաստում, քան պէտք ձիրքերի ազատ զարգացմանը: Նրա իդէալն է՝ աւելի խլել այն ամէն բանի կեանքը, ինչ որ գործունեայ, ինչ որ դրական է, քան էնէրգիա կենդրոնացնելը որ և է մեծ նպատակի հասնելու միջոց: Նա զգացումները չէ ուղղում դէպի առաքինի ու ներդաշնակ գործունէութիւն, այլ մերժում է նրանց ամէն մի գործունէութիւնը և ոչնչացման է դատապարտում: Նա այս դատավճիռը նրանով է բերում իր վրայ, որ արձակվում մարդկային առաքինութեան ու ջանքերի այն բարձր դրդումից, որ պարունակված է կենդանի Աստծուն հաւատալու մէջ: Բուդդհիմը այս եղանակով դադարել է մարդկերի համար կրօնի դեր կատարելուց, և թէպէտ մենք պատմական մտքով կարող ենք նրան դասել համաշխարհային կրօնների շարքը, սակայն այսուամենայնիւ այն սիստէմը, որ իր հետևողներին ազատում է ամէն կուլտից և մի և նոյն ժամանակ չէ՛ գոհացնում նրանց հոգևոր պահանջները, քանի որ պահանջում է երկրպագել այնպիսի էակների, որոնց նա անտարբեր կերպով է վերաբերվում՝ մի այսպիսի սիստէմ, ասում ենք, չի կարող պատասխանել կրօնի հասկացողութեանը և լիովին չէ՛ արժանի այդ անունին:

XXI ԳԼՈՒԽ

ՊԵՐՍԿԱՍՏԱՆ

Արիական ժողովուրդները, որոնք Հնդկաստան էին մտել նրա տիրապետող ցեղը դառնալու համար՝ եկել էին կենտրոնական Ասիայից, թողնելով այնտեղ արիական կենսակերպութիւն ունեցող զարգացել ուրիշ ցեղեր: Այս ցեղերը մնացին Իրան ասված երկրում, այսինքն՝ Հնդկաստանի, Պասպիական ծովի, Սև ծովի ու Պարսից ծոցի միջև եղած վայրերում: «Արիական» բառը առաջ է եկել այս երկրից, որի մի մասը Արիանա էր կոչվում: Այս երկրի լեզուները ազգակից են սանսկրիտին. կարելի է բոլորովին համոզված կերպով պնդել, որ հնդիկների ու իրանցիների նահապետները Հնդկաստան խուժելուց առաջ միասին են եղել ապրելիս այնտեղ և ունեցել են մէկ հանուր բարբառակերպութիւն: Եթէ նրանց բարբառակերպութիւնը միատեսակ է եղել, ապա և կրօնն է մի և նոյնը եղել: Մենք տեսանք, թէ ինչպէս էր զարգանում հնդկական կրօնը Հնդկաստանում: Լինելով սկզբում գործօն ու պատերազմիկ ուժերի մի կուլտ՝ նա աստիճանաբար դարձել էր կրաւորական բնոյթ ունեցող մի կրօն, որով շրջապատից հնազանդ ու բարմաղատակիպ մարդկութիւնը արտայայտում էր երկնքի առաջ իր կարիքներն ու նեղութիւնները և ստանում համապատասխան պատասխաններ: Իրանում մնացած արիական ժողովուրդները պահպանել էին իրանց գործօն ու գործական ուղղութիւնը: Չունենալով գրացման կոթողի ու

մարի ճիտնուլթեան պահատուլթիւն՝ նրանք բիչ էին հակված դէպի մատւոր աշխատանքը և շատ՝ դէպի առողջ բարոյականուլթիւնը, քան իրանց հնդիկ ազգակիցները։ Պէտք է նկատել, որ մինչեւ Հնդկաստանի կրօնը մինչև ներկայ դարը չէ ազդել Եւրոպայի վրայ որքան և է յայտնի կերպով՝ Պարսկաստանի կրօնը զգալի կերպով ներգործել է այն աշխարհի մարի զարգացման վրայ, որի մէջ մենք բնակւում ենք ներկայումս։

ԸՂԲԻՐՆԵՐԸ։ Պարսկաստանի հին կրօնի վրայ գրած հանրատարած հայեացքները առնված են այն յոյն մատենագիրներից, որոնց նկարագրուլթիւնները մէջ են բերվել այս գլխի վերջը։ Այժմ կարելի է աւելի կանոնաւոր տեսակցուլթիւն ունենալ այս կրօնի մասին, քանի որ սրա սրբազան գրքերը մատչելի են աշխարհին։ Այդ գրքերը միայն վերջի դարումն էին ստացվել պարսիերից (փարս), որոնք պահպանում են իրանց հին կրօնը Հնդկաստանի տոլի վրայ, այս գրքերի ուսումնասիրուլթիւնը շատ դժուար էր և բարձրացրել է շատ վէճեր, որոնք դեռ հիմա էլ չեն վերջացել։ Այս հին գրքերին կցված են արևելեան թարգմանուլթիւնները ու կոմմէնտարիներ (մեկնուլթիւններ)։ Պէտք է ասլեօք, որ արևմտեան գիտնականը առաջնորդվի այս վերջիններով, որոնք անշուշտ մասամբ հանդէս են դալիս իբրև այս կրօնի պատմական աւանդուլթիւնները, կամ լթէ կարող է նա իրան նոյնքան վստահ (կոմպէտէ) համարել՝ բնագրերի սկզբնական միտքը հասկանալում, որքան և արևելեան մեկնիչը (կոմմէնտատօրը). և ասլեօք շատ գլխի կընկնի, եթէ նրանց համեմատելու լինի Վէդաների հետ։ Ո՞րքան են հին նրանք, Իրանի մի տեղումն են եղել գրված։ Ասլեօք նրանց սր և է մասը Զօրօաստրի գրած է և նրան կարելի է պատմական անձնաւորուլթիւն համարել։ Գիտնականները դեռ ևս կատարեալ համաձայնուլթեան չեն եկած այս և ուրիշ շատ հարցերի պատասխանների նկատմամբ. և եթէ այդքան մութ բան կայ

դրքերի վերաբերմամբ, ապա շատ վիճելի բան էլ կլինի կրօնի պատմուլթեան և նոյն իսկ բնոյթի վերաբերմամբ։ Յաջորդ տեղերի նկատմամբ մենք պիտաւորապէս առաջնորդվել ենք այն վիճականներին գրուածքներով, որոնք «Արևելքի սրբազան գրքերում» ուշը են գտնել Պարսկաստանին վերաբերող հատորների վրայ։ Այս հատորներից վերջինում (XXX) նոր լոյս է սփռված նեւլթի վրայ, որից մենք ուրախուլթեամբ օգտվում ենք։

Պարսկաստանի սրբազան գրքերը յայտնի են «Զէնդ Աւէստա» անունով, պէտք էր ասել Ավէստա և Զէնդ։ «Ավէստա» «վէդա» ազգակից բառի պէս՝ նշանակում է գիտեցուլթիւն (գիտուլթիւն) իսկ «Զէնդ» բառը այստեղ ոչ լթէ այս նշանակութիւնը կրող լեզուն է մատնացոյց անում՝ այլ նշանակում է այն «կոմմէնտարը» (մեկնուլթիւնը), որ յետոյ միացել էր սկզբնական գիտուլթեանը կամ բնագրին։ Մեկնուլթիւնը գրված է ոչ լթէ զէնդ, այլ պահլաւիկ կամ պարսից լեզուով։ Ավէստա, որ գրված է աւելի հին զէնդերէնով, այն է, Պարսկաստանի սրբազան լեզուով՝ այնպիսի գրքերի մի հատւածատ է, որոնք գրված են այլ և այլ ժամանակներում և մինչ անգամ, գուցէ, այլ և այլ երկրներում։ Գրքերը լի մի էին հատւորվել բրիտանական թւականից լոկ մի քանի ժամանակ յետոյ։ Յետագայ էկզէմպլարները, որոնք վերաբերում են հետոյի գրքերի՝ Զօրօաստրին տրած գերբնական ներշնչմանը՝ չպէտք է կանդնել մեծ մեզ. պէտք է նկատել սակայն, որ պարսից կրօնի մինչև այժմ պահպանված գրքերը՝ բնդարձակ գրականուլթեան աղբատիկ մնացորդներն են համարվում միայն, և ոչ աւելի։ Սկզբում Ավեստան բաղկանում էր 21 նոսկայից կամ գրքից, և նրանց մեծ մասը աշնչացրել էր Ալէքսանդր արևելքը նեռս խուժած ժամանակը. ամբողջ մնաց միմիայն մէկ նոսկա։ Այն գրուելուամբ, ինչ գրուելուամբ որ Ավէստան մեզ հասել է, նա կրօնական արարողուլթեան վերաբերող մի գրվածք է, նրա մէջ ամփոփված են մի քանի լէգէնդաներ ու օրհներգ-

ներ, այլ և նշանաւոր քանակութիւնամբ օբէնքներ, բայց նրա կիսաւոր յատկութիւնը ծիսաբանի յատկութիւնն է, և այս օբէնքներին հատանաբար նա (կիրքը) նա պարտական է այն բանով՝ որ իր մէկ մասը պահպանվել է Ավէստայի և յետոյ մոհմէտականների ներս խուժելու ժամանակ: Ավէստան երեք մասից է բաղկացած: Ամենահինն է Եասնա՝ դա այն պաշտամունքների հաւաքածուն է, որոնք մինչ անգամ դիմողներին էլ այլ են տալիս համեմատել սկզբնական բրիստոնէութեան պաշտամունքների հետ. նրանց հետ միասին գտնվում են հատուկերը (гаты) կամ օրհներգները, այն է՝ Ավէստայի միակ ոտանաւոր մասը, որ գրված է ամենի հին բարբառով: Վիսպէրատը աղօթագիրք է և Վէնդիդատը՝ հին օբէնքների հաւաքածու, որ պարունակում է իր մէջ նաև դանազան կրօնական լէգենդներ: Բացի այս երկերից, որոնք յատկապէս Ավէստան են ներկայացնում՝ կայ դարձեալ Կօրդա (կամ փոքր) Ավէստա, որի մէջ օրվայ, ամսվայ օրերի և ամբողջ կրօնական տարվայ դանազան ժամանակների համար աղօթքներ են ամփոփված. այս աղօթքները ոչ միայն քահանաները, այլ և բոլոր հաւատացողներն են գործածում, և նրանցից շատերը դեռ մինչև օրս էլ գործածութեան մէջ են:

ԶԻՆԴ-ԱՎԷՍՏԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԴ Է: Այս երկերի մէջ դիտնականը շատով տեսնում է ոչ թէ մէկ, այլ մի քանի կրօնական սիստէմ: Մի տեղ մենք տեսնում ենք մէկ աստծու կուլտը, ասես թէ միւսներն ամենևին է ուշադրութեան իսկ առնել, միւս կողմից՝ աղօթքներից մի քանի նրանց մէջ պարունակված են երկրպագութեան առարկաների բնագրական ու մշակված յանկերը: Մի քանի մասում կրօնը անձնական ու անմիջական բնոյթ ունի. միւսների մէջ՝ քրմական: Փարսուիզմը (парсизмъ) յաճախ կրակապաշտութիւն է կոչվում, և տարրերը՝ հողն ու ջուրը նոյնպէս մեծ սուրբեր են համարվում նրանում, սակայն ամենի հին գրքերում այս բանի քիչ հետքերն ենք տեսնում: Դրականութեան պէսպէսութիւնը անշուշտ ցոլացնում է իր մէջ իրանական կրօնի պէսպէսութիւնը: Իրա, Իրանը ոչ թէ մէկ, այլ մի քանի կրօնի է տունեցել, և հարցը նրանում է, որ ձևակերպներ թէ ինչպէս նրանք մէկը միւսի տեղից շրջվելիս են եղել մազդէականութեան (մազդէյիսմի) կամ զրադաշտականութեան, սրանք՝ Իրանի տեղական կրօնի հետ, և մարմնանալիս եղել նրա մէջ: Զանազան կրօններ մի յայտնի աստիճան պատկանում էին զանազան գաւառների: Մենք գիտենք, որ Միդիան (Միգացոց երկիրը) նաւաճող Պարսկաստանը իր հերթին նաւաճվել էր Միդիայի կրօնից. մենք այն էլ գիտենք, որ պարսից Լճապաւորների կրօնը, նայելով նրանց արձանագրութիւններին, չէ համապատասխանում այն կրօնական գրութիւններին, որոնք նկատվում են Ավէստայում: Մի քանիսից ոչ մէկին, որոնք նկատվում են Ավէստայում: Մադերը, որանցից կրօնը, ինչպէս մի հանուր բան՝ նոյնպէս առնում է իր անուններից մէկը, առաջ Հնդկաստանում էին, իսկ այնտեղից տարածվել են ողջ Իրանով և մեծ ուժ են ձեռք բերել: Հասկացողութիւններն ու ծէսերը հիւսիսից էլ էին առնվում, այն է՝ սկիւթացիներից, հարաւից էլ, որ է՝ Բաբելոնից. այսպիսով, այլ և ուրիշ միջոցներով, առաջ էին գալիս այն կրօնի ձևերը, որ նոյնքան խիստ էր տարբերվում Զօրաստրի հաւատից, որքան քրիստոնէութեան յետագայ ձևերը՝ Քրիստոսի վարդապետութեան պարզութիւնից, թէ՛ պէտ և այն կրօնները Քրիստոսի իրանց հիմնադրին ու օբէնքներն էլ ճանաչում էին համարում:

ԶՕՐՕԱՍՏՐ: Սկսենք Զօրաստրի վարդապետութիւնից: Դ-ր Մէյէր «Geschichet des Alterthumus»-ում և Դարմսթէտէր Աւեստային ուղված իր հոյակապ ներածութեան մէջ՝ երկուսն էլ Զօրաստրին համարում են մի առասպելական անձնաւորութիւն, կրօնի պաշտօնական կուլտի մի երևակայական պլուս, որ օգտակար է եղել նրա անունից՝ իր վճիռները տարածելու համար: Սակայն կշիռ ունեցող հետևակութիւնների պատճառներում կարելի է դնել Զօրաստրի պատմական ի-

բանականության հատուկությունը, և, որ մեզ ամենակարևորն է թվում, «Երևելի սրբազան պրկերի» XXXI հատորի հեղինակը, իր աշխատակից Գարմսեէլերի հետևողությամբ այնպես է դասավորել այդ օրհներգները, որոնք պատկերացնում են հիմնադրի գործերն ու արվածները իր վարդապետությունը հաշակելու միջոցին, որ կարողացող վայ մարդարէի ու նրա առաքելության պատմական իրականության տպավորությունն է անում։ Նրանք մեզ հասկացողություն են տալիս այն կրոնական շարժման մասին, որ զարգացել էր բանաստեղծի օրոք, շարժման, որի մեջ մարդու ու վսեմ հասկացողությունը աշխատում է հաստատվել, յողջել տիրապետող մոգպաշտությունները։ Վերանորոգող բերած վարդապետությունը այն վարդապետություններն է, որ պարսից կրոնի մեջ ամենից ավելի կենտրոնականն է համարվում. և այսպիսի դրության կարելի է հասնել միայն այն խորը լրջության ու բարեպաշտության ժամանակ, որոնք նրան են վերագրվում այստեղ։ Այսպես, ուրեմն, սկսենք Զօրօաստրից ու նրա գործից, և ամենից առաջ պատասխանենք այն հարցերին, թե նա ո՛ր ժամանակի մարդ է եղել, որտեղ է եղել ապրելիս և ինչպիսի կրոն է եղել գտած իր հայրենի երկրում։

Զօրօաստրի կամ Զրադաշտի (Զարատուստրա) առաջինը յունական, երկրորդը իրանական ձևն է այն անունի, որ պարսից լեզուում կրճատվել Զարդուշտա է դարձել) կեանքի տարեգրությունը կարող է միայն շատ մոտավորապես որոշվել։ Նա կանոնած է ավեստական գրականության էն ծայրին, իսկ կրոնը, որի արտայայտությունն է այդ գրականությունը՝ գարգանալիս է եղել երկար ժամանակաշրջանի ընթացքում։ Բայց սկզբ տեղ չէ տալիս Զրադաշտի հնդկական արխայականների՝ հնդիրանական ճյուղից անջատվելուց առաջ։ Այսպիսի անորոշ հանգամանքներում մենք, եթե կամենանք, նրա կեանքի տարեգրությունը կարող ենք տանել մոտավորապես դեպի 1400 տ. Ք. Ծ. առաջ։ Իսկ ինչ վերաբերում է նրա

բնակած դաշտին՝ ապա պիտականներն մեծամասնությունը նրա վարդապետությունը տարածված է համարում Իրանի արևելյան մասից դեպի արևմուտք. և թեպետ բուն աստղաբնեկան Մէդացոց աշխարհն (Միդիան) է համարում, սակայն նա պարծելիս է եղել Հնդկաստանի մասին էլ, Բաքտրիայում։

ԻՐԱՆԻ ՆԵԽՆԻԱՆ ԿՐՕՆԸ։ Նա չէ թարգել այնպիսի ներին, որոնց անծանոթ է եղել կրոնը։ Վէդաների կրոնական հասկացողություններից ու պէմքերից շատերը պարսկական նահապետական ժամանակում էլ են հանդիպում, և, նրանց ուսումնասիրության շնորհիվ, կարելի է մի բանի եղրակացություն անել Պարսկաստանի մուսուլ պատմության վերաբերմամբ Զրադաշտից առաջ։ Արևային Միհր աստուածը ինչպես Հնդկաստանին, այնպես էլ Պարսկաստանին է պատկանում։ Երկնքի աստուածը, որ Հնդկաստանում յայտնի է Վարունա անունով՝ դարձավ Պարսկաստանի պետական աստուածությունը։ Այդ երկու երկրներն էլ ընդունում էին կրակի, բամու և անձրևի ու մարդու ճշտության օձի աստուածը, որի պէմ պատերազմ էին մղում այս աստուածները։ Զոհարերությունը, որի ժամանակ աստուածներին սպասավորում են նուէրներով ու օրհներգներով՝ շատ նման են երկու երկրում։ Երկուսումն էլ զոհարերությունը սկզբում հանդես է գալիս իբրև մի բարի գործ, այլ աշխարհականների, մանավանդ լծապատների գործ, և չէ սահմանափակվում տաճարով, այլ կատարվում է բացօթյա, դրա համար բնտրված տեղում։ Ամենասպիտակ զոհարերությունը ձի զոհելն է, իսկ անփոխարեն նուէրը արբեցնող հիմն է, Հնդկաստանում սոման, Պարսկաստանում պոման, (որի միջից ինն տեսակ է անում մինչև ս հնչյունի միասում գ-ի փոխվելը) իր ինքը համարվում է կենդանի տիեզերական (космический) ոգի, և որին գիմում են իբրև աստուածության։ Երկու երկրում էլ շատ հին ժամանակներից այն հայացքն է իշխում զոհարերության վրայ, թե աստուածները նեղկայ են լինում

նրա ժամանակ և մասնակցում խնջույքին իրանց յարգողների հետ միասին, և լավ գոհարեուվիլիանը կապդուրում ու բաշխվում է աստուածներին։

Այս նման գծերը, նոյնպէս և ուրիշները, որ մենք չենք յիշատակում, ցույց են տալիս որ Հնդկաստանի ու պարսկաստանի կրօնը հանուր գաղափարներից ու սովորոյթներից է ծագել։ Մի կարևոր հանգամանք էլ ցույց է տալիս այդ միայն երկու սիստէմի նոյնութիւնը, այլ և այն, որ երբանք բաժանվել միմեանցից։ Հնդկաստանում երկու տասմային անուն է հանդիպում աստուածների համար։ Նրանցից առաջինը՝ *դևը* նշանակում է լուսաւոր կամ փայլուն աստուածութիւն, երկրորդը՝ *ահուրա*՝ կենդանի աստուածութիւն։ Մի և նոյն անունները հանդիպում են և՛ Պարսկաստանում. բայց այս տէրմինների գործադրութիւնը միատեսակ չէ երկու երկրում. Հնդկաստանում դրանք երևան են գալիս իբրև աստուածների անուններ, բայց բիչ-բիչ, այն միջոցին երբ *դևը* դառ երկրպագութիւն վայելող աստուած է նշանակում՝ «*ահուրան*» կորցնում է նախկին անունը, մինչև որ վերջապէս սկսում է նշանակել այն երկրորդական էակները, որոնք դևերից ցած են կանգնած և ունեն իրանց մէջ շատ ու քիչ մի ուժեր։ Պարսկաստանում այս երկու բառերի հակառակ բազդ վիճակվեց։ *Ահուրան* գառնում է աստուածութեան նշանակ բուն առաւելութեան, նշանակելով ծայրագոյն աստուած. իսկ «*դևը*» մի անուն, որ Հնդկաստանում մնացել էր իբրև մի յարգելի անուն՝ Ավէստայում հանդէս է գալիս իբրև շատ աստուածների անուն, որոնց պէտք չէ երկրպագել։ Այս բանում մի բանի պիտական ընդհարման առիթ են տեսնում, որ այս երկու կրօնները բաժանվելու վիճակին է հասցրել. *ահուրաների* հետևողների ու դևերի հետևողների միջև հեռացած առաջ եկաւ, որի հետևանքն այն եղաւ, որ երկու կողմերը բոլորովին անջատվեցին միմեանցից։ Սա այն հին հայեացքի վերջին ձևն է, որով պրոպաշտի կրօնը հանդէս է գալիս իբրև

հետևանք կրօնական պայքարի, իբրև հակազդ (ռէակցիա) այն աստուածների դէմ, որոնք վերջը պաշտվում էին Հնդկաստանում։ Այսպիսի մի պայքար ուղղակի ակներև չէ, և մեր նկարագրած տարրերութիւնը դուցէ առաջ է գալիս Հնդիրանական կրօնի բնական զարգացման շնորհիւ, որ տեղի է ունեցել զանազան հանգամանքներում ու այլ և այլ ժողովուրդների միջև։ Զրադաշտ հատերի մէջ գտնում է արդէն բոլորովին կազմակերպված հակադրութեան բարի ու չար աստուածութիւնների միջև. նա խօսում է սրա մասին իր հայրենակիցների հետ իբրև մի այնպիսի հերոսի, որ պէտք չէ սովորեցնել նրանց, բայց որին նրանք վաղուց արդէն ընտելացել էլին։ Պէտք է յիշել այս, նրա կեանքի տարեգրութեան մասին խօսելիս։

Այժմ *հատերի* հիման վրայ նկարագրենք Զրադաշտի առածներն ու վարդապետութիւնները։ Հատերը քերթուածներ են՝ գրված այն չափով, ինչ չափով որ Վէդաների մէջ էլ հանդիպում են, և որոնք, հնդկական օրհներգների պէս՝ նախատեսված են գործադրվելու աստուածպաշտութեան ժամանակ։ Հատերի մէջ խնամատարի գործունէութեան ու վարդապետութեան նկատմամբ ասվածը բանաստեղծական կնիք է կրում. չեն պատմվում լոկ փաստեր, թէ այդ վերջինները ինչպէս են առաջ եկել, այլ այդ փաստերը մշակվում ու մեկնվում են կրօնական գործադրութեան համար։ Օրհներգները նոյն իսկ Զրադաշտի բերանն են դրված. նա այդ օրհներգները գրում է գոհաբերութեան միջոցին գործադրելու համար և, յիշելով թէ ինչպէս են նրանք արտասանվելու՝ երբեմն դնում է երկրպագուների բերանը «Զրադաշտ ու մենք» խօսքերը։ Այս խօսքերը չեն ապացուցում թէ օրհներգները Զրադաշտին չեն պատկանում։ Գ-ր Միլ՛սի բացատրութեամբ՝ օրհներգները լի են իմաստով ու պարզութեամբ։ Լինելով արտայայտութեան կոչից անհեթեթ ու տեղ, պահանջելով համբերութեան մի աստիճան պաշար և նրանց մէջ արտայայտված գաղափարների

կապը հասկանալու հնարավորությունը՝ այդ օրհներգները զարմացնում են կարդացողին, որ կարողանում է հասկանալ դրանց նշանակությունը իրանց բավանդակության խորությամբ ու վեհությամբ և նրան հարկադրում են ընդունել իրանց՝ իբրև մեծ կրոնի սկզբունքին արժանի մի յուշարձան։

ՋՐԱԴԱՇՏԻ ԿՈՉԸ։ Օրհներգները նկարագրում են մեզ նախնական աշխարհի այն կենդանի պատկերը, որի մեջ ապրելիս է եղել մարդարէն։ Սա պատերազմով ապրված մի աշխարհ է եղել։ Մի կողմից՝ մենք տեսնում ենք մի երկրագործական համայնք, որ հակված է դէպի առևտրականությունը և, մինչ անգամ այժմեայ հնդիկների պէս՝ սրբազան է համարում տաւարը, որ իրանց գլխաւոր կարողությունն էր։ Միւս կողմից՝ կան մարդիկ, որոնք բնակում են հերկած հողի ու վայրի անկերի միջև եղած սահմաններում, որոնք շարունակ յարձակումներ են գործում հերկերի վրայ, բզում ու սպանում են տաւարը՝ գոհաբերության կամ իբրև կերակուր գործածելու համար և փշացնում են դաշտերը, ոչնչացնելով այն ոռոգիչ յարմարությունները որոնք պատրաստության են առաջ բերում նրանց համար։ Փողովրդի այս երկու մասերի միջև կայ մի կրօնական ու մի կենսակրքական տարբերություն։ Երկրագործները Ահուրայի երկրպագուներն են. իսկ նրանք, ովքեր անասունի կուլտին արհամարանքով են վերաբերվում՝ հատուկ մի «դևեր» են կոչվում։ Այս հերձուածը Զրադաշտի գործ չէր, նրա ժամանակը սա արդէն գոյություն ունէր, և, լինելով քուրմ՝ պէտք է հրապարակ գար և ուրիշներին առաջնորդէր դէպի այդ հերձուածը։ Այս է օրհներգների պատկերացրած գործերի դրությունը։ Մենք կփորձենք մեկնել այս օրհներգներից մի քանիսի բովանդակությունը։ Նրանց խօսքերը՝ առանց հանգամանօրէն բացատրելու, մինչ անգամ բոլորովին կանհասկանալի կերպով թարգմանված ժամանակ, դժուար է կարողանալ հասկացնել. միւս կողմից՝ ժամանակակից արտայայտությունների մէջ էլ մի համառօտ գրուածք չի կա-

րող տալ այս հզօր տպաւորությունների ուժն ու հանդիսաւորությունը։ Որովհետև մենք գործ ունենք Զրադաշտի խոհականի յայտնության հետ՝ այսինքն կրօնի սկզբնի հետ՝ ուստի այն գիտենալու ենք բաւական հանգամանօրէն։

«Ընկերի սրբազան գրքերի» մէջ գտնվող առաջին օրհներգը վերաբերում է այն բանին, որ մենք կարող ենք Զրադաշտի կոչ անուանել։ Նրա մէջ բանաստեղծականն ու դրամայինը ձևով ամփոփված է այն շարժման արդիւնքը, որ առաջ է եղել մտած Զրադաշտին։

Առաջ խօսում է «Կինեայի հոգին». դա այն երկրպագող հոգիների կերպարանաւորումն է, որի համար ամենից սրբազանը իր անասունն է։ Նա (Կինեայի հոգին) դանդաղում է Ահուրային ու Աշային (ճշմարտությանը, Ասուրայի առաքելին, որ յաճախ նրա միւս առաքյալների պէս՝ իբրև մի ինքնաւորյն անձնաւորություն է երևում), լի տոկված է մեզ տանել վերաւորանքներ, սոսկալի ամայացումներ ու կողոպուտներ։ «Ո՛ւմ համար էր դուք ինձ առիջել», ասում է նա, «ինչի համար եղայ ես»։ Նա կոչում է անում անմահներին, որ սովորեցնեն իրան հոգ մշակելը, յոյս ունենալով որ դրանով կապահովի իր անմահությունն ու բարեկեցությունը։

Սպա խօսում է Ահուրա ու հարցնում Աշային, լի ինչպիսի պահապան էր կարգված Կինեայի կառավարման ու պաշտպանության համար. Աշա պատասխանում է, լի կարելի չեղաւ գտնել մէկը, որ, կրքերից ու բնությունից ազատ լինելով ընդունակ լինէր յարմարաւոր պահապան լինելու։ Այս չարքերի պատճառները ծագված են իրերի դրության մէջ, այս պատճառով էլ նրանք, ովքեր որ և է գործի մէջ աջողություն են որնում՝ պէտք է մօտենան իրան Ահուրային, և ոչ լի մի ստորադրված էակի։

Զրադաշտ ասում ու հաստատում է Աշայի խօսքերը. նա ու կինեա յայտները դնում են իրան Ահուրայի վրայ. նրանք

ենթարկվում են նրա կամքին. նրան են դիմում նրանք իրանց առարկայներով ու հարցերով, որոնք ծագում են արտաքին անվտանգաւորութեան բացակայութեանց։

Անուրա խօսում է, պատասխանելով իր սեփական հարցին։ Ճշմարիտ է, չի կարելի գտնել կինոյի հրամայողին, որ լիովին համապատասխան լինի այս պրոբլեմանը. բայց նա Զրադաշտին երկրագործական համայնքի պլուն է կարգում։

Խօսում է երկնցիկ խուժբը, որ բաղկացած է հաւատացողների համայնքից, որոնք ենթադրում են իրրև նեղկայ հոգիներ, կամ ամէշօսպէնդէր, այն է՝ Անուրայի կերպարանաւորված սատրագիլքները, և փառաբանում է Տիրոջը նրա այն գիտութեան ու ոգորմածութեան համար, որ նա յայտ է տալիս ուրիշներին. սակայն մի և նոյն ժամանակ երկնցիկ խուժբը հարցնում է, թէ նա ումն է վարձատրել, բարի բանականութեան տալով կամ, ինչպէս մենք կարող էինք ասել՝ ումն է յորել Սուրբ Հոգով իր վարդապետութիւնը մահկանացուների մէջ հռչակելու համար։ Զրադաշտի կոչը, որի մասին յիշատակութիւն է լինում ոտանաւորի նախընթաց տան մէջ մոռացված է,—որպէս թէ անհնարին է որ նրա պէս մէկը յանձն առնէր այդ գործը։ Անուրա առարկութիւն է անում, կրկնելով Զրադաշտին արած յանձնարարութիւնը, որին այստեղ իր ցեղական անունով Սպիտամա է անուանում, և խոստանում է հաստատել նրան և աջողութիւն տալ իր գործում։

Խօսում է Կինոյի հոգին, շարունակ դանդաղելով այն բանի մասին, որ իր համար մի յարմարաւոր պահ չէ նշանակված։ Զրադաշտ մի թոյլ ու փոքրոգի մարդ է, որ չէ պատկանում այն արքայական ցեղին որ ընդունակ է իր ժառանգութիւնը իրականացնելու։ Ամէշօսպէնդները միանում են բարձրաձայն ազօթքին, որ իսկական հրամայողին գալ է հրաւիրում։

Ապա խօսում է Զրադաշտ, իր վրայ առնելով Անուրային դիմելու պարտաւորութիւնը, որին նա ապաշում է որ ուղարկի իր օրհնութիւնը իրրև խոստացութիւն ու երջանկութիւն, որովհետև ոչ ոք, բացի նրանից՝ չի կարող անել այդ բանը, և համոզել այս գործի աշակերտներին, թէ ուրախութիւնն ու արքայութիւնը, որ թէպէտ առաջ մարդու ներսն է եղնան պալիս, իր հետ արտաքին օրհնութիւններ էլ է բերում։ Նա իր համար էլ է ազօթում, որ Բարի բանականութիւնը կամ Տիրոջ Ծայրագոյն Զօրութիւնը (դարձեալ սատրագիլքներից մէկն է) շաւտով իջնի իր վրայ և զօրացնի իրան իր առաջիկայ գործում։

Զրադաշտի այս բանաստեղծական կոչի հաղորդութիւնը վերծ է թէ հրաշալի զարթերից և թէ մարգարէի անձնաւորութեան աւելորդ փառաբանութիւնից, և մի նշանաւոր հատկապատկեր է պատնում Ավէստայի յետագայ տողերի հետ, որտեղ մարդարէն խորհրդաւոր հաղորդակցութիւն ունի Անուրայի հետ, խորհուրդներ է հարցնում նրան և ստանում մանրամասն պատասխաններ, որոնք յանկարծ յայտնութիւններ են պատնում։ Հատերի մէջ, որոնք թոյլ են տալիս աստուածաբանական ու բանաստեղծական ձևը՝ ամէն բան մարդկային է ու բնական։ Նրանք սառնիկ յիշեցնում են մեզ մարդաբէների կոչերը Հին Ուխտի մէջ—այնտեղ մենք տեսնում ենք Աստուածութեան ըստ երևոյթին նոյն տկար գործիքի բնութիւնը՝ կատարելու մի այնպիսի գործ, որ թախանձանութիւնը՝ կատարելու մի այնպիսի գործ, որ թախանձանքով է պահանջում ժամանակը, նոյն անհրաժեշտութեան լռացումը մարգարէի կողմից, սակայն մի և նոյն ժամանակը, նրա նոյն անպայման հաւատը գէպի աստուածութեան կարողութիւնը և այսուհետև մի և նոյն անպայման համոզումը, թէ, երբ արդէն նա յանձն է առնում այդ գործը՝ պէտք է յաջողութեամբ պսակվի։ Հետևել շատ հատկ նոյնպիսի տպաւորութիւն են գործում ընթերցողի մտքի վրայ։ Տիարութեան գիտակցութիւնը շարունակ կրկնվում է—մարգարէի գործունէութիւնը յաղթանակով չէ, այլ առաջ է բերում շատ դիմադրութիւններ, որոնք նրան առնսկի կաւ են պատճառում։

Սակայն նա երբէք չէ տալակուսում, որ իր աստուածութիւնը իր հետ է, և աշխատում է իր համար։ Նրան նա հաւատում է իր տարակոյսները ու երկիւղները; նրա բարեխնամութեան նա համոզված է, և հաւատով օգնութիւն է սպասում նրանից։ Նա ամրոզջապէս Հնութեան ու նրա գործին է նուիրված և իր բոլոր ուժերով անձնատուր է լինում Աստծու կամքի կատարմանը։ Նա ասում է, թէ չի պատրի սովորութիւնից, քանի որ ընդունակ կլինի այդ բանին, միևչև որ հաւատի բերի բոլոր ապրողներին։ Ըստ ինքեան ուշիղ լինելով՝ նա զօրիկ է այն ստութեամբին ստորնութեամբ, որ ուղարկում է նրան Հնութիւն. նրա խօսքերը կարող են խշնամիներին պահել հնազանդութեան մէջ և նպաստել մարդերի մրտքերում աստծու արքայութեան մօտենալուն. Գոյոս առաքեալի պէս՝ նա ցգում է, որ իր գործն է «Ոմանց հոտ մահանալ ի մահ, և ոմանց՝ հոտ ի կենդանանալենէ ի կեանս»։

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ։ Բայց ինչ աւետիք է բարոզում նա։ Դա աշխարհի ծագման փիլիսոփայութիւնն է, սակայն մի այնպիսի փիլիսոփայութիւն, որի ընդունելը փրկիչ ու հեռանդուն գործունէութիւն է պահանջում։ Աշխարհի չիրի վիճակը բացատրութիւն է պահանջում, որպէս զի միջոց գտնվի այդ բանին օգնելու. և Զրադաշտ, պատրաստվելով հանդէս գալ իր վարդապետութեամբ՝ ապօթում է Հնութեանն, որ օգնի իրան՝ տալու այն բանի բացատրութիւնը, որ ինչպէս է առաջ եկել նիւթական աշխարհը։ Այս բացատրութիւնը ամենեին նոր չէ, դա արդէն տեղ է գրել նրա ժողովրդի մտքում, բայց նա ի ցոյց է հանում նրան իբրև հաւատի վարդապետութիւն և դուրս բերում նրանից բոլոր գործնական հետևանքները։ Առաջին հատի երրորդ օրէնսդրի մէջ նա հանդիսաւոր հռչակում է իր վարդապետութիւնը ժողովրդի առաջը և դիմում է նրան ոչ իբրև ժողովրդի, այլ իբրև ուրոյն անձնաւորութիւնների, և լիովին գիտակցելով իր պատասխանատուութիւնը՝ հրաւիրում է ամէն մարդու հնազանդել այդ

վարդապետութեանը, ընդունել ու գործել նրա համաձայն։ Սա երկ-արմատեան (երկուորակութեան дуализмъ) մի ազանդ է, բայց ոչ վերջին բոլորովին զարգացած ձևով, որտեղ երկու անձնական հրամայող նախ և առաջ բաժանում են իրանց միջև սահմանը՝ մի ուրիշ աւելի մտահայեաց ու անորոշ ձևով։ Երկու նախնական սկզբունք կայ՝ հոգու և նիւթի,—մէջ բերվող արտայայտութիւնները անորոշ են—միմեանց հակադրեալ սկզբունքներ, անկախ իրանց գործունէութեան՝ ամենաբարի ու ամենաչար, և Զրադաշտ հրաւիրում է իր ունկնդիրներին ընտրութիւն անելու նրանց միջև և չընտրելու այն, ինչ որ ընտրում են չարերը։ Աշխարհս, ինչպէս որ նա կայ, ստեղծվել է այդ երկու սկզբունքների միացած ուժերով, և նրանք են որոշել նոյնպէս մարդերի ճակատագրերը, նշանակելով չարերի համար գժոխքը—մի վատթար կեանք, իսկ բարիների համար՝ դրախտը—հոգեկան ամենալաւ վիճակը։ Ստեղծագործութեան վերջը երկու սկզբունքը անջատվելին միմիանցից, որի ժամանակ չար սկզբունքն ընտրից չարն ու չար գործերը, իսկ բարի սկիզբ՝ ճշմարտութիւնը, հաստատվել երկնքում և սկսել իրը համարել նրանց, ովքեր բարիք են անում ու հաւատում իրան, բարի սրտով։ Դևերն ու իրանց հետևողները, ընդունակ չեն կանոնաւոր ընտրութիւն անելու բարու և չարի միջև. նրանք էն սկզբից իրանց տէրն «Չար Ոգուն» ճանաչեցին և նրա համաձայն գործերին։ (Այսպէս մտքի ամենարնեկ կան փորձութեան ու անկման մասին, բայց ամենքն էլ նրանց հետևողներին են վերագրում միմիայն չար ոգիներին ու նրանց հետևողներին են վերագրում միմիայն չար ոգիներին ու նրանց հետևողներին են վերագրում)։ Այդ ժամանակից աշխարհս համակվեց մի մեծ պատերազմով։ Մի կողմը գտնվում է Հնութիւն, դա այն միակ աստուածութիւնն է, որի անունը յիշվում է հատերի մէջ։ Հնութեան երկնքի աստուածն է, նա իսկապէս պարզ երկինքն է, այլ և մի բարի ու բարերար էակ. որ ապրում է ուրախ, գրաւած։ Օրէնքների մէջ նա կորցնում է իր որոշ բնաւորութիւնը և դառնում է վերացականութիւն, աւելի դատանաբա-

նական, քան պատմական ստուգաժամբիւն։ Նա կերպանաւորուած բարի սկզբունքն է և, ինչպէս ասկել է մի այսպիսի վեմ բնաւորութեան տէր ստուգաժամբեան՝ գործում է ոչ միայ ուղղակի, այլ՝ իր հետեւողների ձեռքով։ Նրա մարմնացած առարկելիքները կատարում են իր հրամանները, օգնում են սուրբերին նրանց հոգեւոր ճանապարհներում և պատրաստում իրերի լաւ կարգ ու կանոնը։ Միւս կողմը գտնում են դեմը՝ չարութեան դեմ հետ, որ ամէն կողմը ստութիւն ու խշտաւութիւն է սիրում և իր համար վրէժ դիզում վերջին դատաստանի հանդէպը։ Բարիների համար օգնելուց լաւ ոչինչ չկայ,—և նրանք կարող են օգնել, վերանորոգում առաջադիմելով, մինչ անգամ այժմ միայով Ս. Հոգու մօտ և օգտուելով նրա առարկելիքներից, որոնք նրանց մէջ էլ են ներգործում, ինչպէս և նրանում հաստատելով կանոնաւոր կարգ ու կանոն և պատրաստելով ապրիլ այնտեղ, որտեղ գտնուում են իմաստութեան կայանները։ Վերջ ի վերջոյ ստութեան գիր դառնալու է անմահ և գերու պէս յանձնուելու է արդարադատութեան ձեռքը։

ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ։ Ինչպէս պատահում է ամէն նոր նօրինակ յեղափոխութեան ժամանակ՝ նոր վարդապետութիւնը առանց հակառութիւնների չէ պատրաստ գալիս, նոր վարդապետութեան կազմի մէջ մտնում են հին հայեացքներ, թէպէտ և չեն ազատում նրան. դէպի ամէն բան ունեցած հոգեւոր վերաբերման փոխարինում է աշխարհական վերաբերութիւնը։ Ահա սրա մի քանի օրինակը։ Որոշակի բարոյական ու գծոխքի մեծ վարդապետութիւնը, ինչպէս ոգու ներքին կացութիւնների վարդապետութիւն. բայց ներում է նոյնպէս իշտաւութեան ու վշտի ապագայ կայանների վրայ ձգած աւանդական հայեացքը։ Պինդատ կամարջը մի բանի անգամ է յիշում հատերում, և նրա վրայով, իրանցիների կարծիքով, անցնելու էր իր մեռնելուց յետոյ իւրաքանչիւր ոգուն անձնաւորութիւն։ Եթէ նա արդար էր, ապա կամարջը նրան

ողջ առողջ հասցնում էր այն արքայական լեռը, որտեղ բարիները ապրում էին մի նոր կեանքով. եթէ նա չար էր՝ այն ժամանակ վայր էր ընկնում կամրջից և ընկնում չարչարանքի վայրը։ Երկրորդ անկոհեմութիւնը կայանում է նրանում, որ Զրադաշտ մտածում է իր մէկ բարոյութեամբ, գարձնել աշխարհը, իսկ միւսով բարի ու չար ոգիների ու նրանց հետեւողների միջև եղած հակադրեցութեան գիտակցութիւնը յանձն նրան տախտում է դիմել բռնի միջոցների։ Մի որինակ վերջանում է, կոչում անելով իր հետեւողներին՝ զէնքը ձեռքին յարձակելու չհաւատացողների վրայ, և նա չարունակ պատրաստում է նրանց յանկարծակի պարտութիւնը։ Սրա հետ միասին մենք կարող ենք յիշել, որ նա աշխատում էր միացնել զօրեղ բնաւորիների հետ այն աջակցութեան համար, որ նրանք կարող էին ցոյց տալ գործին։ Մեզ անյայտ պատճառով Վշտասպի անունը միշտ կապում է մարգեան հետ, ինչպէս նրա արքայական հովանաւորողի անուն. յիշում են նաև մի քանի ազդեցիկ բարեկամներ։ Միւս կէտը, որի մէջ մենք տեսնում ենք գոյութիւն ունեցող կարգ ու կանոնին յարմարում՝ զոհաբերութիւնն է։ Հաւերի մէջ կան մի քանի վեհ տեղ, որոնք պատկերացնում են այն ճշմարիտ զոհը, որ մարդը պարտաւոր է բերել աստուածութեանը նրա բարութեան փոխարէն և որ կայանում է ուղղակի ինքն իրան զոհ բերելու մէջ, այն է՝ նուիրել այն բոլորը, ինչ որ է մարդը և ինչ որ նա կարող է անել։ Մի և նոյն ժամանակ Զրադաշտ ոչ մի յանդիմանական խօսք չէ ասում կենդանիներ զոհելու մասին։ Նա ապօթում է այն բանի մասին, թէ ինչպէս պէտք է վարվել այսպիսի կրօնական պարտաւորութիւնների վերաբերմամբ. նա ցանկանում է որ ամէն բան միանայ ամենականոնաւոր զոհաբերութեան և ամենազոր օրէնսդիրների հետ։ Այսպիսով մարդու կեանքը չէ թողնում լոկ իր յոյսով։ Մարդը մի և նոյն ճանապարհով է գնում աստուածութեան հետ, մեր բարեպաշտութիւնը հաշակ-

վում է մեղնում իրրև աստուածաւմեան գաւազան, նրա ճշմարտաւմիւնը ներկայանում է մեղնում և ուղղում է մեզ դէպի իր նպատակները. բարի մարդու ցանկաւմիւններն էլ, արարքներն էլ աստուածաւմեանն են վերագրւում և այս բանի բուն իմաստով հոգին արդարացնում և զուգաւորւում է իր խնդրի ու իսկական վիճակի հետ. բայց մի և նոյն ժամանակ մարդը լարված ուշադրութեամբ նայում է այն արբանեան կրակին, որ աստուածաւմեան արտաքին յայտնութիւնն է. այստեղ կենդանիներ, մինչ անգամ ձի զոհ բերել էլ կայ, երբ մարդարէի հոգին դէպի պատերազմ է հակւում (զօռային մատուցումը չէ հանդիպում, և մենք կարող ենք ենթադրել, որ մարդարէն աստուածաւմեան այս պաշտամունքը փոխարինել է արբեցութեամբ). այստեղ կայ և դևերին ասղերով ու նզովքով յայտնելը, նրանց պէս, ինչպիսիք հանդիպում են Սաղմոսում աստուածային զօրի թշնամիների դէմ։

2ի կարելի հոգևոր չվիճելու ապացոյց համարել այն հանգամանքը, որ Պինա, որի բարքից է սկսում մարդարէի կոչը՝ յայտնութեամբ չէ վրիպում աշխից նրա աստիւաւմեան ժամանակ։ Երկրպագողները բռնում են ուղղամիտ էակի կողմը, հոգի լաւ ու չարունակ բարւորվող մշակութիւնը նրան հաճոյանալու միջոց է հանդիսանում. նա ցանկանում է որ Պինա ազատ լինի ախմուկներից ու բարեկեցիկ. և նրան կարելի է կոչել այն բանի համար, որ իրաւի լիւ ինչպէս պէտք է հասնել այն նպատակին։ Վարդապետութիւնը շատ հեռու է գնում իր սկզբնական սահմաններից. բայց երբէք աչքից չէ վրիպում այն, ինչից որ առաջ էր եկել այդ վարդապետութիւնը։

Հատերը առանձին առած՝ դժուար լիւ մի բան կարողանան ասել մեզ Զրադաշտի ու նրա հայրենակիցների կրօնի մասին։ Նրանք անչուշտ հաւատում են շատ աստուածների. Եղիւտոյի այն մասներում, որոնք ժամանակով ամենից աւելի են մօտ եղել օրհներգիներին՝ բազմաստուածութիւնը երևում է իր բոլոր ուժով։ Այն, ինչ որ Զրադաշտը ասում է միայն մէկ աստուածաւմեան, այն է Ահուրայի մասին՝ (լէգենտա «անմահների մասին էլ է խօսում Հանրապէտը) կարող է վերագրվել օրհներգիների սահմանափակ դաշնաւորութեանը և մանաւանդ նպատակին, բայց այս բանը կարելի է նման ընդունել իրրև մի ցոյցում, լիւ մարդարէն առանց պատճառի չէ խառնվել իր ժողովրդի հաւատալիքների մէջ. բաւականաչափ շատ կրօնների հիմնադիրների պէս՝ չէ բաւարարվել այնուհետև, երբ նրան և որ նրա աշխում ոչ կրօնի ուղն ու ծուռն էր՝ նա, պետի վիճեր, որովհետև կարող էր խուսափել։ Նրա վարդապետութիւնը պատրաստված էր իր հայրենակիցների մտքում և դեռ ևս պատրաստված էր իր հայրենակիցների մտքում և դեռ ևս պատրաստվող կրօնի առաջնորդող լիւն էր յետագայ շրջաններում։

Իրանի մարդարէն կոչում է անում իր հայրենակիցներին՝ ընդունելու կրօնական զարգացման գործի մէջ այդ աւրին՝ ընդունելու կրօնական զարգացման գործի մէջ այդ աւրին առաջին քայլը։ Նշանակենք այդ զարգացման գլխաւոր գծերը։

1. ՄԱՐԴԸ ՀՐԱՒԻՐՎՈՒՄ Է ԳԻՏԱԿՈՐ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՒ։ Եղիւտոյի պէս՝ Զրադաշտ առաջարկում է իր ժողովրդին ընտրելիւն անել երկու կուլտի միջև։ Բայց այս երկու դէպքերում կարող են լիւել տարբերելիւնները։ Ս. Գրքում բառը շատ ոգի չէ, այլ ուղղակի մի սուտ աստուածաւմիւն, որին Իսրայէլը չպէտք է երկրպագի։ Զրադաշտի գործում երկու կուլտի միջև հազած տարբերիւնը աւելի մեծ է։ Ուրոյն անձնաւորութիւնը պէտք է ընտրի իր համար աստուածաւմիւն, պէտք է իր սեփական դրդմամբ ընդունի, որ մէկ աստուածաւմիւնը լաւ է միւսներից. և որ այդ միւսների ոչինչ երկրպագութիւն չպէտք է տրվի։ Սա մի նոր հայեցակէտ էր հնուց. հին աշխարհը սիրում էր երևակայել շատ աստուածներ, ամենքն էլ հաւասարապէս օժտված աստուածային բնութեամբ ու երկրպագութեան արժանի, և իւրաքանչիւր ցեղ կամ կլան ունէր իր աստուածը, որին նա պաշտում էր, կամ թէ հոգի իւրաքան-

չիւր մասը բաժին էր հանւում մի առանձին աստծու։ Ոչ Յունաստանը, ոչ Հռոմը երբէք չեն մտածել այն բանի մասին, որ ուրոյն անձնաւորութիւնը միջնորդ դառարան չունեն նրան յայտնի աստուածութիւնների միջև և պահանջեն նրանից վճռել. թէ աստուածութիւններից ո՛րին է նա ընդունում իրրև ամենակարող և ո՛րին է պրկում իշխանութիւնից։ Մեր բնութեան պէսպէսութեան նոյն բանի ընդունակութիւնը տեղի է տւեցնում բարոյական հիմունքների վրայ։ Մարդիկ հրաւիրւում են դառապութիւն տալու այն էակների բնաւորութեան մասին, որոնք աստուած են կոչւում, նրանց ասում են, թէ մի անհրաժեշտ բան չէ, որ ընդունեն այնպիսիներին, որոնց իրանք չեն հաւատում, նրանք էլ չեն վախենում շար ու վնասակար էակներից։ Երկնքում պատերազմ է տեղի ունենում, մարդիկ հրաւիրւում են մասնակցելու այդ պատերազմին և հրաժարւելու այն ուժերի հաւատարիմ լինելուց, որոնք չեն ծառայում բարութեանը։ Թէ ինչպէս է ծագել աստուածների միջև մի այսպիսի պայքար, և ինչպէս է նրանց դառապանն անելու պէտք պատրւել՝ դրա համար մենք պարզ ցուցումներ չունենք. անկասկած է միայն այն, որ այդ նշանաւոր քայլն արւած էր։

Սակայն վճռելուց յետոյ էլ այն համոզումն է մնում, թէ կան անհերքելի շար դործութիւններ, որոնք ապացուցւում են ունենալ աշխարհի կազմակերպութեան վրայ և դեռ ապրում են նրա կառավարութեան վրայ։ Մենք այսեղ միաստուածութիւն չենք տեսնում. Բարի աստուածութիւնը միակ աստուածութիւն չէ, աշխարհի միակ կառավարիչը չէ, այլ՝ մի առանձնաշնորհեալ էակ. Տէրը սկզբում նա մասամբ միայն կարող էր դնալ իր ճանապարհով, որովհետև նա հակառակորդներ ունի, որոնցից չի կարող անջատւել։ Պարսկաստանի միաբը երկդիմի է. շար արարչի ու կառավարչի նկատմամբ սիրով հատկացութիւնը՝ միացած բարի աստուածութեան հատկացութեանը՝ որոշում է այս միաբը Հնդկաստանի այն մարդից, որ միշտ պէսպէս միութեան սկզբունքն է ձգտում։

2. Երկրորդ՝ *այս կրօնը իր էութեամբ հատկապէս չէ* և հալածանքներ է պահանջում։ Ընդհակառակը սիրեցողը մեծ պատերազմի ընդունակութիւնը՝ մարդը պէտք է չարունակի այդ պատերազմը, տպատեղով նրա վրայ իր բոլոր ուժը. դեռ ևս ու նրանց հետևողներին նա պէտք է նայի իբրև իր թշնամիների, աշխատի սիարացնել ու ջնջել նրանց։ Հին աշխարհում կրօնի տարբերացմանը համբերողութեամբ էին վերաբերւում, ընդունելով, բոլոր կրօնները հաւասարապէս օրինական են՝ իւրաքանչիւրը իր սեփական տզի վրայ։ Շատ անհամբերութեամբ կիրպով էին ջարդում հարւածում յայնների ու հաստատում էին միայն այդ բանը և մայեցիներին հրէաները, որոնք հերքում էին այդ բանը և յայտարարում, թէ կայ մէկ ճշմարիտ կրօն, այն է՝ իրանց սեփական կրօնը, և թէ միւս բոլոր կրօնները սուտ և ունայն աստուածների երկրապագութիւն են։ Բայց այս կողմից պարսիկները նախապատրաստեցին հրէաներին. հաւատը բարդում են հալածանք, և վերջերը պարսից թագաւորների՝ Եգիպտոսի ու Յունաստանի կրօններին հասցրած վիրաւորանքները, անտարբերութիւնը, արդարանում էին նրանց համոզումներով։ Պարսկաստանում, ինչպէս և Իսրայէլի մէջ, կրօնը սկսեց պաշտպանել ուռ աստուածների մասին սիրով հասկացողութիւնը։ Իսկ մի այդպիսի հասկացողութիւն պաշտպանող կրօն պէտք է մի բացառական կրօն լինի։ Այն մարդիկ, որոնք հրաժարւեցին երկրպագել այնպիսի էակների, որոնց վրայ մինչև այն ժամանակ նայում էին իրրև աստուածների՝ և հրաժարւել էին այն պատճառով, որ այդ էակներին պէտք չէր երկրպագել, որ նրանք ճշմարիտ աստուած չեն,—կարող են ցանկութիւն յայտնել վերջացնելու իրանց հաշիւը այդպիսի էակների կուտի հետ և դրա փոխանակ սիրագնաց կուտ չունել ճշմարիտ աստծու կուտը, գոյ դնելով մի և նոյն ժամանակ այն կոչնամ հակուղ միջոցները, որոնք պայմանաւորված են իւրաքանչիւր առանձին դէպքում բազաբակրթական յայտնի պրութիւնով։

ՄԱՋԴԵՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ։ Բայի հատկիչ բան մտքով մենք ունենք և այլ, հատկան բարբառով գրված օրհներգներ, և նրանցից որ և է ստիճան կարող է բացվել կրոնի պատմությունը նրա ծագումից յետոյ։ Այս օրհներգները վկայում են, որ Զրադաշտի կրոնը, նրա հիմնադրի մահից յետոյ սկսել էր համարվել աստուածային մի մեծ հիմնարկությունն և մշակվում էր այն ուղղությամբ, որ նա ստիպել էր նրան։ Նրա ձևերը, իսօր չկայ, աւելի որոշվեցին։ Այն աստուածությունը, որին նա ծառայում է, այժմ «Ահուրա Մազդա» է կոչվում, այսինքն՝ ամենագէտ տէր (այս անունի վերջը կրճատությամբ յաճախ գրում Օրմազդ, պարսկերէնում՝ Որմիզդ իսկ կրոնը այսուհետև սկսում մազդէզականություն անունը)։ Նրան դեռ ևս դիմում են հոգևոր օրհնություն ստանալու թէ այս ու թէ ապագայ կեանքի համար, այլ և երկրպագություններ ժամանակներում։ Կայ սակայն մի ձգտում՝ աղօթքով դիմելու ոչ միայն յոկ Ահուրային, այլ և նրա հետ կապ ունեցող էակներին։ Ոմին, ասես թէ, յայնելով մի ծայրագոյն էակի վրայ կենտրոնանալով՝ միացնում է նրան բարի անմահներին, կոչում է անուն նրա սուրբ արարածների մի մասին, այն է՝ հրեշտին, որ ամենից սերտ կերպով է մտնում նրան, աստղերին, որոնք նրա մարմինն են, ջրերին, երկրին, բոլոր օգտակար կենդանիներին, բոլոր օգտակար բույսերին։ Զոհ է բերվում, կինայի հոգուն, և ոչ միայն Կինայի, այլ և «արդար մարդկանց ու սուրբ կանանց» հոգիներին, միջնորդներին, այսինքն՝ ոչ միայն մեռելներին, այլ և կենդանիների հոգիներին, որոնց երկրպագությունը այդ ժամանակից շարունակվում է և ստանում պարսկական կրոնի մեջ։ Դրանք հնարավոր աստուածություններ են՝ գոյություն ունենալու համար, նայն իսկ օրհնությունները պաշտվում են. նրանից է գալիս գոյական մատուցումը, Ահուրայի հետ յաճախ կապվում է Միհր, որ դարձել առաջ է մղում ուրիշ հին աստուածներ և յիշատակվում են այն բարոյական վերացականությունների հետ, որոնց Միհրը միշտ մեծանում է մի կերպ. ասում են, թէ երկրպագության առարկաները երեսուն երեք հատ են, և այս թիվը հանդիպում է նաև Հնդկաստանում։

ԵՐԿՆԱՅԻՆ ԷԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ։ Այսքան չատ պաշտվող աստվածայ լինելու հետ միասին՝ ինչպէս կտեսնենք, Ահուրայի ծայրագոյնության իրաւունքը չէ խախտվում։ Մի բանի օրհներգների մէջ որբազան բնույթ ունեցող բոլոր էակների, բոլոր աստղերի ու բոլոր ժամանակները անխախտ կատարվում են իրար վրայ անմերջանալի կերպով։ Բայց այս տեսակի անկարգությունը վերանում է կազմակերպվելու մեծ ձգտումով։ Պարսից կրոնը վերջ ի վերջոյ յանգեց մի շատ պարզ ու նշանաւոր աստուածաբանության, որ կազմվել էր այն բանի շնորհիւ, թէ այն վերացականությունները, որոնց հետ գործ ունէր հիմնադիրը, անձերի էին վերածված ու համախմբված արևելեան հասարակության օրինակով։ Յետագայ ենթանկերում (արարողություններ) երևան է գալիս մի դէմք, որի մասին յիշատակություն չէ լինում հատկերի մէջ. դա Անգրա Մայնիւ է՝ վերջը Արհմն (Արիման), այսինքն՝ չար ոգին։ Ի դէմս այդ ոգու, որ համապատասխան է Սպէնտա Մայնիւի, այսինքն՝ բարի ոգուն (որ սկզբում չէ նայնանում Ահուրայի հետ, այլ առաջ է գալիս նրանից) գիտությունը ձևաք են բերում մի անձնաւոր առաջնորդ (դրուխ) և գուտբիամբ, որ երևան է գալիս ողջ բնության ու մարդկային բոլոր հասարակության մէջ՝ այսպիսով արտայայտում է անձնի մէջ։ Ահուրա ու Արհմն հակադրվում են միմեանց, իրրև բարի ու չար գործություններ երկուսն էլ հաւասարապէս մասնակից են աշխարհի ստեղծագործության, ինչպէս որ նա կայ։ Աշխարհի իւրաքանչիւր մասում, ամէն բանի մէջ, ինչ որ գոյություն է ու անվում՝ նրանք պատերազմում են մի-

մեանց գէմ։ Խօսելով Գարմոսէտի խօսքով՝ Անուրա ամբողջովին լոյս է, ճշմարտութիւն, բարութիւն ու խաղաղութիւն. Անգրա Մայնիւ ամբողջապէս խաւար, սուտութիւն, չարութիւն ու ապիտութիւն է։ Ի՛նչ որ անում է բարի ոգին, այն բոլորը խեղում է չարը. Անուրայի ամէն արածին նա դիմադրում է, ինչպէս խոցը՝ ինքն իրան. նա է թոյնը խառնում բոյսի, ծուխը կրակի, մեղքը մարդու և մահը կեանքի մէջ։

ԸՀՈՒԹՅԱՆ ՍՏՈՐՈԳԵԼԻՔՆԵՐԸ։ Այս էակներից իրաքանչիւրը ունի իր չբախումբը։ Անուրայի չբախումբը առաջ է կազմակերպվել. նա բաղկացած է իր սատրապներից։ Մինչ անգամ օրէնսդրների մէջ սատրապները անձնաւորութիւններ, Անուրայի անբաժան արբանեակներն են համարվում. հրաւիրվում է նրանցից երբեմն մէկը, երբեմն միւսը, նայելով թէ երկրպագուն սատուածային էակի ո՛ր կողմից է օգնութեան սպասում։ Այն պրօցէսի օգնութեամբ, որ յաճախ հանդիպում է կրօնական մտքում, նրանք վերջը կարգի են բերվում ու որոշվում աւելի ձեւական կերպով. նրանք վեցն են, և նրանցից իւրաքանչիւրին յանձնարարված է սատուածային անտեսութեան մի յայտնի մասը։ Դրանք հետեւեալներն են.

Վօհու Մանօ՝ (Բաման) բարի բանականութիւն. դա Անուրայի կենդանի գործի գլխաւորն ու պահապանն է։

Աշա Վայիստա՝ (Արդիբէհէշտ) մեծ արդարութիւնն է. դա կրակի պահապան հրեշտակն է։

Ֆշատրա Վայրեա՝ (Շահրէվար) կատարեալ իշխանութիւնը. դա մետաղների Աստուածն է։

Սպէնտա Արմաի՝ (Սպանդարամէտ-Սպէնդարմա) աստուածային բարեպաշտութիւն, որ հատարված է իգական աստուածութեան, երկրի աստուածուհի։

Հաուրվատատ՝ (Հօրդատ) առողջութիւններ։

Ամէրէտատ՝ (Ամէրդատ) անմահութիւն։ Վերջին երկուսը կազմում են գետան և միասին ինամարկում են ջրերն ու ծառերը։

Ինքը Անուրա այս ոգիների, մէկն է. այսպիսով սատանում են եօթ ծայրագոյն ոգի։

ԸՐՀՄՆԻ ՉՔԱԽՈՒՄԸ։ Անգրա Մանիւ իր կողմից ունի մի դիւց բաղկացած մի չբախումբ. որոնցից իւրաքանչիւրը բարի ոգիներից իւրաքանչիւրի չար համապատասխանութիւնն է հանդիսանում։ Չար բանականութիւն, հիւանդութիւն ու աւերմունք,—ահա նրանցից մի քանիսի անունները։ Ողջ հաւերմունք աշխարհը բաժանվում է բարի ու չար սատուածութիւնների միջև։ *Դաւանները* (Իզէդները) կամ հրեշտակները այնպիսի սատուածութիւններ են, որոնք երկրպագութիւն են վայելում Իրանում շատ հին ժամանակներից, և նրանցից մի քանիսը հէնց նոյնն են, ինչ որ և՛ Հնդկաստանում. բայց այս անունը յարմար է համարվում նաև աւելի հին կազմութիւն ունեցող երկնաւոր ու երկրաւոր սատուածներին, այնպէս որ այս դասը շատ ընդարձակ է ու տարածվող։ Նա ամփոփում է իր մէջ մի քանի էակ, որոնք նոր գաղափարների ազդեցութեան տակ սատուածութիւնների առաջին շարքից փոխադրված են երկրորդը՝ ինչպէս օր. Վէրէթրաղնա, որ համապատասխանում է Վէդական Ինդրային, և Միհր՝ արեւի սատուած։ Այս վերջիններիս այժմ նոյն դիրքն ունեն, ինչ որ աւելի նոր տեսակի սատուածները, օր. Սարօշա՝ հնազանդութիւնը, և հին սնապաշտութեան մնացորդները, ինչպէս օր. «Իմաստունի նզովքը» շատ հզօր են Իզէդներից։ Ինքը Զրադաշտ պատկանում է սատուածութիւնների այս դասին, որ իրօք շատ բազմազան է։ Երրորդ էակների մեծ դասը, որոնք սատրածված են ողջ աշխարհով՝ Ֆրավաշներն են, որոնց մասին խօսվել է վերեւը։ Եթէ բարի ոգիները բազմաթիւ են ու պէտք՝ ապա մի և նոյնը կարելի է ասել և՛ չար ոգիների վերաբերմամբ։ Նրանց են վերաբերում Ազգի (Азги) դի-օձը, որ մեծ դեր է կատարում պարսկական առասպելաբանութեան մէջ, ինչպէս Վրիտրա՝ հնդկականում։ Կարելի է յիշել նաև Էշմա՝ վերջը Ամօղէնա. սա Երմանաներից կամ մրրկի թշնամինե-

րից մկին է։ Գագի՝ անհաւատարիմ ատտուածուհին, զրաձա անպարկեշտութեան դի. Պայրկինները (Պէրի) իգական սեռի դայմակիկացուցիչներ են. Եատու՝ կախարդութեան հետ կապ ունեցող դևերը։

Հոգևոր էակների այս մեծ խումբների հիմնաւոր կազմը և այն մեծ պատերազմի պատակցութիւնը, որի մէջ նրանք խառնված են առաջնից մինչև վերջինը՝ պաշտպանում են մաղդէպականութիւնը այն լուսութիւնից ու անհեթեթութիւնից, որներ հեչա կարող են իշխել կրօնի վրայ, եթէ չափազանց է ածում երկների ու երկրի բնակչութիւնը։ Հատատարիմները երբէք չեն մոռանում Ահուրայի փոքր ատտուածութիւնների պատճառով, չեն մոռանում նաև, որ բարոյականութիւնն ու աշխատանքը կրօնի պլխաւոր նպատակներն են, և որ, ծառայելով նրանց՝ նրանք չատպեհնում են բարութեան յաղթանակութեան գալուստը։ Եկում ենք «Սրբութեան փառաբանութեան» բանաձևը, որով Եատաների (Իզէդների ապարոկութեան) մէջ սկսում է երկրպագութեան իւրաքանչիւր գործողութիւնը։

Թոզ ուրախանայ Ահուրա Մազդա,

Սրբութիւնը բոլոր բարիքներից լաւն է։

Ես հռչակում եմ ինձ երրի Մազդայի երկրպագու, Զրադաշտի հետևող, դևերին ատող և Ահուրայի օրէնքները կատարող։

ՀԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԷՐՍԻՑ ԿՐՕՆԻ ՄԱՍԻՆ։ Այս առաքանի վրայ, քանի որ պարսից կրօնը երևում է իր բոլոր ուժով, մենք նրա մասին տեղեկութիւններ ենք գտնում այլ և այլ հին արձանագրութիւնների մէջ։ Եոայու վերջին մասի գրքերը, որներ այնպէս խիտ են յանդիմանում հեթանոսութիւնը՝ օգտնում են Դիւրոսի մոռնալը, յայտ գնելով նրա ու կայանալիք կրօնի միութեան վրայ հրէից միջև (Եսայ. XLIV, 28)։ Նա այն հովիւն է, որ Եհովայի ժողովուրդը վերադարձնելու է իր երկիրը և նորոգելու է տաճարը։

Եւ այս յայտարարութիւնը, թէ հրէից ու պարսից կրօնը մի և նոյնն է, թէ հրէաները ու պարսիկները հաւատարիմ են միակ ճշմարիտ Աստծուն, մինչդեռ բոլոր շրջապատող ժողովուրդները բազմաստուածեան էին ու կռապաշտ,—այս յայտարարութիւնը պարսից կողմից էլ էր ընդունելի։ Նուաճելով Բաբելոնը՝ Կիւրոս խոկոյն և նմի թոյլ տվից հրէայ գերիներին՝ հայրենիք վերադառնալ։ Հետևեալ դարի պարսից ինքնակալները, Դարէհ ու Երտաշէս, դեռ բարեհաճ կարեկցութեամբ էին վերաբերվում Եհովայի կուլտին, որի վրայ ըստ երևոյթին նայում էին, իբրև իրանց սեփական աստուած Որմզդի՝ «երկնքի աստծու» մի տեսակի (Եզր. VII, 21)։ Այս պատճառով նրանք միջոցներ ձեռք առան Երուսաղէմի տաճարի վերանորոգութեան ու այնտեղ կրօնական նոր կարգադրութիւնն մտցնելու համար, որ պատրաստված էր Բաբելոնում։ Այս չէր կարող պահպանել, եթէ պարսից թագաւորների կրօնը մէկ մարդու աստուածութեան*) պաշտամունք չիներ, այս առարկայի մասին մեր ունեցած միւս տեղեկութիւնն էլ ցոյց են տալիս մեզ, որ այս էպոխա պարսկական մազդէպականութիւնը կրօնի մի շատ վսեմ ձևն էր։ Դարեհի արձանագրութիւնները չեն յիշում Միհրի ու Անահիտի կուլտերի տարածումը, որներ երևում են Երտաշէսի յետագայ արձանագրութեան մէջ. նրանցից ոչ մէկի մէջ չէ խօսվում Ահրմնի մասին։ Այս բանը, իհարկէ, չէ ապացուցում թէ նրան չէին հաւատում. երբ հրէից մարդարէն հռչակում է թէ Եհովա լոյսն էլ է առեղծում, խաւարն էլ, թէ նա վիրաւորվում էլ է, բժշկում էլ՝ ապա դրանում կարելի է տեսնել պարսից դուալիզմի հետ ունեցած կապը։ Եւ այսուամենայնիւ մազդէպականութիւնը կարող էր թվալ, և թվում էլ էր օտարականին իբրև լոյսի ու բարութեան աստծու մի վսեմ կուլտ։ Չէնց այսպիսի տպաւորութիւն են գործում և յունաց

*) Պինդնի անկումը՝ այս երկու կրօնների առնչի էին նման միմեանց, քան հին Յունաստանի որ և է երկու ուրիշ կրօն։

նկարագրությունները։ Հերոդոտոս՝ (I, 131, 132) Եգրի ժամանակակիցը, այսպես է գրում. «Պարսից բարքերի ու սովորույթների մասին իմ պատկածը հետևյալն է. արձաններ չեն կանգնեցնում, տաճարներ չեն կառուցանում և նրանց մեջ սկզաններ չեն իոյլատրվում. սովորությանը հակառակ գնացողներին մահ են անուանում, որովհետև, ինձ թվում է, թե նրանք աստուածներին մարդակերպ չեն երևակայում, ինչպես անում են հելլեները։ Նրանց մեջ սովորության կայ բարձր լեռների վրայ զոհեր մատուցանել Զևսին, այն էլ նրբանք ողջ երկնակամարն են Զևս անուանում։ Նրանք զոհ են բերում նաև արևին, լուսնին, երկրին, կրակին, ջրին ու քամիներին։ Այս միակ աստուածությունները նրանք էն սկզբից են զոհեր բերում. բացի դրանից՝ աստրհատանոցներից ու արարներից առնված է երկնքի Աֆրոդիտէի կամ Ուրանիայի յարգությունը։ Ասորեստանցիք Աֆրոդիտէին անուանում են Մ'իլիտտա, արաբները՝ Ալիլաթ, պարսիկները՝ Անահիտ։ Ձիշտ աստուածությունների անվերի զոհաբերությունը պարսից մեջ կատարվում է հետևյալ կերպով. զոհ բերելու համար նրանք սեղաններ չեն կանգնեցնում ու կրակներ վառում. չեն անում սրսկումներ, չեն սրնգահարում, չեն գործ ածում ոչ պսակներ, ոչ գարի. ով ցանկանում է զոհ բերել որ և է աստուածության՝ գարգարվում է թագով (լանկապին բաներով զարդարված գլխարկ) տանում է կենդանին մի մարուր տեղ ու այնտեղ պաղատում աստուածությանը։ Զոհ բերողը իրատունք չունի միմիայն իր համար պաղատելու. նա պաղատում է բոլոր պարսիկների ու թագաւորի համար և բոլոր պարսիկների թվում ինքն էլ է մտնում։ Նա մաս-մաս կտրատում է զոհի կենդանին, եփում է միսը, սիրում է ամենամակուլ խոտը, շատ յաճախ՝ առոյտը և նրա վրայ գարսում բոլոր միսը. նախքան նրա մոգը նրպում է սրբազան երգը, որ ասում է աստուածների ծագումը։ Նրանցում առանց մոգի զոհ բերելու սովորություն չկայ։ Փորը

ժամանակից յետոյ զոհ բերողը տանում է իր հետ միսը և այն գործ ածում իր հայեցողության համար։

Ուրիշ տեղերում Հերոդոտոս խոսում է մեղ հետ այն սրբությունների մասին, որ պարսիկները վերագրում են ջրերին, կրակին ու արևին։ Նա մեզ հետ խոսում է նաև այն բանի մասին, որ նրանք սուտը ամենաոտնակալի յանցանք էին համարում, իսկ ապից յետոյ՝ պարտքերը, քանի որ պարտապանը հեշտ կարող է բանը ապին էլ հասցնել։

Պլուտարքոս գրում է հետևեալը, յենվելով Ք. Ծ. առաջ, երրորդ դարում ապրած մի աւելի հին յոյն մատենագրի խոսքերի վրայ. «Զրադաշտ մոգը, որ ապրում էր Տրովադական պատերազմից 5000 տարի առաջ, բարի աստծուն անուանում էր Օրոմազ, իսկ միւսին՝ Արիմանի... Օրոմազ ծագել է ամենապարզ ու զուտ լոյսից, Արիմանի՝ խաւարից. և դրանք պատերազմ են մղում միմեանց դէմ։ Դրանցից առաջինը ստեղծել է միւս վեց աստուածները (այսոեղ անուն-ածքները նաև յիշվում են Ամշասպանդէրները), իսկ վերջինը արտադրում է ուրիշ վեցը, որոնք գործում են առաջիններին հակառակ... Պատ ժամանակ, երբ այդ Արիմանի, որ աչխարհ է բերում սովն ու ժանտախտը, անխուսափելի կերպով կջնջվի և բոլորովին ու ընդ միշտ կոչնչանայ... Այն ժամանակ բոլոր մարդիկ կունենան մի երջանիկ վիճակ, նրանք էլ կերակրի կարիք չեն ունենայ, չեն պղի իրանց հաւից ոչինչ ստուեր. և այն աստուածությունը, որ առաջ է բերել այս բոլորը՝ կհանգստանայ աւժամապէս ու կհանգչի խաղաղությամբ»։

ՎԷՆԴԻԴԱԴ։ ՄԱՔՐՈՒԹԵՍՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ։ Այս բաղուածքները մատնացոյց են անում այն յայտնի գաղափարների պարզացումը, որոնց վրայ մենք առաջ ուշք չէինք դարձնում։ Արքան մանրամասնօրէն է մշակվում գուալիամը, այնքան նոր աստուածներ են երևան գալիս, այլ և տարրների սրբությանը վարդապետությունը։ Այս վարդապետությունը հանգուցությունների ու ծէսերի մի նոր համբ հիմքն է, որոնց

մենք այժմ ծանօթանալու ենք և պարտնակված են Վէնդիդատում, որ պարսից կանոնի վերջին երկերից մէկն է։ Վէնդիդատը ունի այն օրէնքներից ու կանոններից է կազմուած, որոնք սահմանված են հրահանգ լինելու հաւատացողներին իրանց ծէսերի մաքրութիւնը պահպանելու մեծ դերծում։ Այս երկի մէջ մարդու ողջ կեանքի վրայ իշխում են մաքրութեան ու պղծութեան հասկացողութիւնները. ողջ կեանքի մեծ պատուարութիւնը անմաքրութիւնից խոյս տալն է, և թէ նա ամենայ երևացել է՝ ասա նրան հեռացնելն է, ինչպէս հարկն է, այն է՝ սրբան կարելի է, շուտ։ Մաքրութիւնը, որի մասին խօսւում է այստեղ՝ բիչ կապ ունի այն պատկերացումների հետ, որոնք վերաբերում են առողջութեանը կամ բարեկեցութեանը։ Շատ սրտի պատկանած ամէն բան պիղծ է, ոչն պատճառով արդեօք, որ նրա առեղծածն է, ինչպէս առեղծել է մի քանի վնասակար կենդանիներ, թէ այն՝ որ յափշտակիչ է այն, ինչպէս յափշտակում է մարդուն նրա մեռած ժամանակը։ Մարդը պիղծ է ոչ թէ այն պատճառով որ վարակիչ կամ հիւանդացիչ է, ոչ թէ այն պատճառով որ բիծ է դրված նրա խղճի վրայ, այլ այն, որ նա դիպել է դևի իշխանութեան տակ եղած որ և է բանի, և այսպիսով ընկել է վերջինի ազդեցութեան տակ։ Այս պատճառով մաքրութիւնն ու բժշկութիւնը բաղկացած են սէսպէս երդուեցումներից։ Մաքրութեան մասին սիրով այսպիսի հասկացողութիւնը նշանաւոր դեր է կատարում ուրիշ կրօնների մէջ էլ. իսկ այստեղ մենք ամենից պարզ ենք տեսնում այս հասկացողութեան սկզբնական նշանակութիւնը։ Վէնդիդատի մէջ մաքրութեան վարդապետութեան միւս նշանաւոր կողմը այն հասկացողութիւնն է, թէ տարրերը՝ կրակը, հողն ու ջուրը սուրբ են և որ նրանց որ և է կերպով պղծելը՝ ամենածանր մեղքերից մէկն է։ Որովհետև մարմնից հեռացող ամէն բան պիղծ է, այս պատճառով մարդը չպէտք է փչի կրակին իր շնչով և մաքրելու նպատակով լողանալը բոլորովին մի անհեթեթ գործ է։ Ամենից դժուարութիւն էր պատճառում մեռելների թաղումը, որովհետև մարմինները, լինելով անմաքուր, չէին կարող յանձնվել ոչ կրակին, ոչ հողին։ Նրանք պէտք է մերկացրած դրվէին այն շինութեան գլխին, որ յատկապէս կառուցված էր այս նպատակի համար մի բարձր տեղում, որպէս զի դիշատող թռչունները կարողանային յափշտակել նրանց. և Վէնդիդատի մի նշանաւոր մասը լի է այնպիսի ցուցումներով, որոնք սովորեցնում են թէ ինչպիսի մաքրութեան պէտք է ձեռնարկեն որ և է մեկի մահից յետոյ տանը գտնված անձերը, ինչպէս պէտք է մաքրել այն մարդերի նոյն իսկ տունը, ովքեր դուրս են տարել մարմինը, այն ճանապարհը, որ կողմը որ տարել են և այլն։

ԻՆՉՊԻՍ Է ՄՏԵԼ ԱՅՍ ՎԸՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՄԱԶԴԷՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՋՄԸ։ Այս ինստէմը մեծ ուժ չէ ունեցել Դարեհի ու Քսերքսէսի ժամանակները, թէպէտ այս հասկացողութիւնները արդէն սկսել էին երևան գալ կրօնի հիմնադրութեան շրջանում. պարզ է սակայն, որ այս սիստէմը մի անհատի կամ կենսական կապ չունի Զրադաշտի կրօնի հետ։ Բայց յետագայ մազդէզականութեան մէջ մենք տեսնում ենք դրսից ներս բերած նմանօրինակ շատ հասկացողութիւններ։ Այս կրօնը, տարածվելով արևելքից արևմուտք, շփվել է հաւատալիքների ու սովորոյթների հետ և, թէպէտ նրանք խորթ էին իր սեփական բնութեանը, այսուամենայնիւ նրանցից շատ բան է իրացրել։ Մազդէզականութիւնը սկզբում մի աշխարհական կրօն չէ եղել. նա ընդհակառակն ձգտում է կրօն դարձել Մէդացոց երկիրը փոխադրվելուց յետոյ։ Տակաւին չկայ, որ Իրանի նախնական կրօնի մէջ քրմական սիստէմի սպառիչ կայնի։ Ինքը Զրադաշտ քուրմ էր և կրօնական ծէսերը պատշաճապէս կատարելու կոչմնակից։ Բայց նրա ոգուն բոլորովին հակառակ է, որ կեանքը կառավարվի ծիսական օրէնքներով։ Այս ուղղութիւնը սկիզբն է առել Մադայների երկրում։ «Մոգ» անունը, որ սկզբում գուցէ որ և

է ցնդի անուն է եղել՝ Մէդացիների երկրում բուրմերի անուն էր դարձել և մի նոր մականուն ստեղծել մադդէպականութեան համար։ Կրօնի այս բնաոտիճանին է վերապրվելու Վէնդիդադի օրէնսդրութիւնը իր կեանքի պարզակրօնական կանոններով. մոգերն են այսպիսի մի լուծ դրել Ահուրայի յարգողների ուսին։ (Թիակները պիշտոով ծուչունների յօշոտել տալու համար դուրս գնելու սովորութիւնը հատուկ սկիւթական ծագումն ունի։) Այս իսկ չրջանում, որ հետու է կրօնի հիմնադրութեան էպօխից՝ մենք հանդիպում ենք Զրադաշտի ու նրա յայտնագործութեան վրայ դրած մի նոր հայեացքի։ Նայելով հնագոյն աղբիւրներին՝ Զրադաշտ մի անկախ օրէնսդիր չէ, այլ իր հայեացքները պլուկ բերելու համար կախումն ունի պիտերից (մեծերից)։ Ցետագայ երկերի մէջ յայտնութիւնը տեղի է ունենում Ահուրայի ու Զրադաշտի միմեանց հետ ունեցած մի ամբողջ շարք մանուկան տեսակցութիւնների մէջ. մարգարէն հարցեր է տալիս աստուածութեանը, և աստուածութիւնը ի պատասխան՝ ներչնչում է այն իմաստալից խօսքերը, որոնք անյապաղ հաշուի են առնում արբազան օրէնքների կողմից։ Մադդէպականութիւնը, ուրիշ կրօնների պէս, ունի իր բանաւոր նպատակը, իր բարոյական օրէնքադիրքը։

Քիչ աշխատանք չէր հարկաւորվի ձեռնարկելու համար, մի ինչպէս է հրաժարել պարսից կրօնի ապրելութիւնը մնացած աշխարհում. մենք այստեղ մի քանի տուցում միայն կարող ենք անել։ Այս կրօնը անշուշտ մի մեծ ծառայութիւն է արել աշխարհին նրանով, որ կարեկցել է հրէութեանը և հրաւորութիւն է տվել հրէական միաստուածութեանը՝ մարդկութեան կրօն դառնալու համար մեծ ուժեղ ձեռք բերելու։ Ինչը մադդէպականութիւնը տիեզերականութեան նրբութիւն ունէր. Զրադաշտ յոյս ունէր որ իր կրօնը կտարածվի իր սեփական երկրի սահմաններից դուրս, և իրաւ տարածվեց Իրանի բոլոր գաւառներում։ Նա երբէք մի համաշխարհային կրօն չէ դարձել, բայց կարող էր դառնալ, եթէ խեղդված ու ճնշված չլինէր մոգականութեան մէջ, կամ եթէ առաջ գար նրա մէջ մի այ և է նոր շարժում, որ ոստակցնէր նրա դուռ մարդկային տարրերը ի միաս արհեստական տարրերի։ Բայց ինքն Ահուրա այնքան վերացական ու փիլիսոփայական աստուածութիւն էր, որ դժուար կարող էր ներշնչել իրան քարոզելու ձգտում. համաշխարհային օրէնք հաստատելու համար՝ անհրաժեշտ էր պատմութեան մէջ մի աւետարանել հաստատ հիմնարկված էակ՝ մի աստուածութիւն, որ իր բնութեան ուժն ու էնէրգիան ապացուցելու համար կատարէր մի փառք աւելի բան, հարկաւոր էր մի աստուած, որ աչքի ընկնէր աւելի անկասկածելի ամենակարողութեամբ։

Մնում է վճռել այն շահագրգիռ հարցը, թէ արդեօք փոխվել հրէաների կրօնը պարսիկների հետ շփվելու շնորհիւ։ Հրէաների բանաւոր օրէնքագրքի մէջ մտած մաքրութեան օրէնքները իրանց համար մօտաւոր նմանութիւն են գտնում Վէնդիդադի մէջ. բայց իսրայէլացիների մէջ կրօնական մաքրութեան տակացողութիւնը պոյութիւն է ունեցել և բաւական մշակված եղել դեռ ես Բաբիլոնեան գերութիւնից առաջ, ինչպէս երեում է Երկրորդ օրինաց գրքից, հետևաբար՝ Վէնդիդադի էպօխից առաջ։ Ցարութեան հատատը, որ հրէաների մէջ պատահում է դերութիւնից յետոյ, բայց ոչ առաջ՝ չատերը առնված էին համարում Պարսկաստանից, որտեղ դերեզմանից յետոյ պատժի ու վարձատրութեան հատատը որ բոլորովին ընդունված էր Զրադաշտի ժամանակից։ Բայց հրէաները ըստ երևոյթին մի անգամից չէին իրագործել այս հատատը կամ միանգամից չէին բոլորովին ձեռնարկել։ Հին Ուխտի շատ պիտակ անձեր հաստատում են թէ հրէաները աստիճանաբար են ձեռք բերել այդ հասկացողութիւնը՝ առաջ երկչոտ դատումներով ու հիմք ունենալով իրանց սեփական կրօնական գիտակցութիւնը։ Այն հատատը, որ հրէաների կրօնը ինքը կարող էր ստեղծել՝ կարիք չունի ուրիշից առ-

նման համարվելու առանց մեր ունեցածից ավելի ծանրակշիռ ապացույցների։ Մենք չենք կանգնում մի ավելի հաստատ հողի վրայ, հարց տալով մեզ, թէ արդեօք հրէաքրիստոնեաները ու դևերը կապ ունեն Պարսկաստանի հրեշտակների ու դևերի հետ։ Այս հաւատալիքն էլ բնական կերպով է առաջ եկել հրէաքրիստոնեական մէջ, որտեղ Սատանան սկսել էր չափազանց բարձր ու անհասանելի համարվել, այս պատճառով պահանջվում էին միջնորդ էակներ։ Հրէից հոգևոր աշխարհի գէմքերից մի քանիսը իրանց յայտնվելովը անշուշտ Պարսկաստանին են պարտական. Տօբիթի գրքում Ռաֆայէլ պարսկական դէմք է։ Յետագայ հրէաքրիստոնեական էակներից բահանայապետաքրիստոնեան է կազմում և գլխաւոր հրեշտակներին մասնագիտական պաշտօններ է վերագրում աստծու արքայութեան ադմինիստրացիայի մէջ, մանաւանդ այն պատճառով որ վերնագոյն բահանայապետաքրիստոնեաները հակադրվում է սատանայական, գլուխ ունենալով մեծ Ախրիմանն ու սատանաների հայրը։ Բայց այս տեղի է ունենում պարսից հետ շփվելուց շատ առաջ։

Պարսիկների աստուածաբանութիւնները սովորաբար այնքան աղբատ էին աստղապաշտների կողմից, որ դժուար թէ կարողանային ընդունակ ուրիշ երկրներում։ Աստուածաբանութիւններ չէ անում։ Կարծում են թէ Անահիտ (Անայիտիս) անցել է Յունաստան, իր անունը Աֆրոդիտէ փոխելով, այլ և դաժանաբարոյ Արեէմիդա, բայց այս աստուածուհին գուցէ պարսկական ծագումից էլ չէ։ Ուրիշ երկրներում ավելի յայտնին պարսիկների Միհր աստուածութիւնն էր, այն է՝ արևի ու իմաստութեան աստուածը։ Նա հռոմէական դօրքերի սիրելին էր կայսրութեան առաջին ժամանակները, և շատ երկրներում պահվել են նրա շատ պատկերները մի հերոսի պէս, որ եղն է սպանում բարձանձաւում։ Նրա հետ կապված էին նաև բնական-գիտութիւններ, որոնց մէջ ընտրեալները անցնելու էին փորձութեանց ու ծանր աշխատանքների երկար շարքերովը։ Մի և

նոյն ժամանակաշրջանում Պարսկաստանը ապրում էր Եւրոպայի ու արևմտեան Ասիայի վրայ ուրիշ կողմով։ Մանրէբանութիւնը, որ այն ժամանակ համաշխարհային երեք մեծ կրօնների մէկին էր և ունէր իր սեփական կուլտը, իր բահանայութիւնն ու սրբազան գրականութիւնը՝ հիմնել էր Պարսկաստանից գաղթած մի մարդ։ Նա գործում էր իր հայրենիքից հեռու, և նրա բարոզած վարդապետութիւնները ավելի հաստատ էին դուրս գալիս, քան Պարսկաստանից, և գնոստիկ-ներն*) պատմածների պէս՝ բազկացած էին տիեզերական և ուրիշ անձնաւորութիւնների գործերի ու շարչարանքների երկար պատմութիւններից. այս կրօնի գլխաւոր յատկութիւններից մէկը լուսաւոր ու խաւար ուժերի միջև տեղի ունեցած մեծ պատերազմն էր։ Այս եկեղեցու կուլտը հազիւ էր. նրա բարոյականութիւնը տեսական կողմից աչքի էր ընկնում մաքրութեամբ ու անապատականութեամբ, հիմնվելով նիւթական աշխարհում դուալիսմի սկզբունքի վրայ և պահանջելով շատ անձնուրացութիւն ու երկար պահքեր։ Ավելի բարձրը առաքինութիւնները, որ հրամայում էր այս վարդապետութիւնը, սովորական անդամից չէին պահանջվում։ Յետագայ պարսիկը թէ Իրանում ու թէ Հնդկաստանում, փորձում էր ապատիկ դուալիսմից ու գտնել մօնիսատիրական**) մտքով։

*) Երկրորդ դարի փիլիսոփայա-կրօնական ազանդ, մի վարդապետութիւն է, որ հաստատում էր թէ մեսիների յարութիւն լինելու չէ, և թէ Յիսուս մարմնացած չէր, այլ լոկ թվում էր մարդու մարմին առած։

**) Իրականի ու իդէալականի նոյնութեան վարդապետութիւնը (монизмъ). Փիլիսոփայութեան մէջ այսպէս է կոչվում այն վարդապետութիւնը, որ ընդունում է մէկ բարձր սկզբունք և գոյութեան մէկ բարձր պատճառ, որպիսին՝ Աստուած աշխարհն ստեղծող ճանաչելը։

Հ. Թ.

Ե. Մ Ա Մ.

ԽԽԻ ԳԼՈՒԽ

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՆԸ

Հեղինակը խոստովանում է որ, իբրև այս պրուածքի վերջաբանություն, տալով քրիստոնէության մասին խօսող պրուխը՝ ինքը մի ծանր պարտ է յանձն առնում։ Եթէ հանրապէտ խօսելու լինինք քրիստոնէության մասին՝ ապա նրա մասին էլ պէտք կլինի խօսել այնպէս, ինչպէս խօսվել է միւս կրօնների մասին, և կարելի չէ այնպիսի ենթադրութիւններ անել նրա նկատմամբ, որպիսիք արված չեն նրանց նկատմամբ։ Այն ինչ՝ մեր սեփական կրօնի տեսութիւնը՝ ոչ թէ հատուկ ու սիրոյ տեսակէտից, որ մենք տածում ենք դէպի նրան՝ այլ պիտական ճշտութեան տեսակէտից, շատ բարեպաշտ քրիստոնեաների կարող է տան ու պակասաւոր թվալ։ Միւս կողմից, քրիստոնէութիւնը մեր կառուցած կամարի հիմքն է, զարգացման վերջնական աստիճանը, որ մենք փորձեցինք ձեռնկերպել, և մեր երկր շատ թերի կլինէր, եթէ զրկվեր մեզ քրիստոնէութեան, բնոյթը պնահատելուց։ Այս պատճառով դուդ աւելի լաւ լինի, եթէ գոնէ մի քանի նկատում անենք մեր ընտրած նիւթի այս կողմի մասին։ Քրիստոն էութեան վերաբերմամբ մենք չենք կարող նոյնքան հանգամանօրէն խօսել, որքան խօսել ենք միւս կրօնների վերաբերմամբ. իսկ հանգամանօրէն խօսելու համար տեղ էլ չենք ունենայ. Սակայն մենք մի քանի հայեացք ենք առաջարկում, որոնք նրա էական բնոյթին

են վերաբերում, և հեղինակը այդ հայեացքները այնքան աւելի է հիմնված համարում փաստերի վրայ, որ մինչ անգամ ոչ-քրիստոնեաները չեն կարող հերքել նրանց, այս պատճառով էլ յոյս ունի տալու մի ճանապարհ չափ՝ (կրիտերիում— առարկայի էությիւնը որոշող նշան) քրիստոնէութիւնը միւս կրօնների հետ համեմատելու համար։

Այն պլուսում, որ խօսում է Իսրայելի կրօնի մասին՝ մենք տեսանք, թէ ինչպէս մարգարէները բարկանան պերսեցեան ժամանակ և նրանից առաջ սկսել էին փայփայել Աստծու և մարդու միջև տեղի ունենալիք նոր յարաբերութեան միտքը, այն յարաբերութեան, որ կախում չէր ունենալու զոհարերութիւններից և սոսկ Իսրայելով չէր սահմանափակվելու։ Աստուած, նրանց ասելով՝ պատրաստում էր մի նոր դար, երբ նա առաջվանից աւելի մերձաւոր յարաբերութեան մէջ է լինելու մարդու հետ. և մարդը պնալու է ոչ թէ ճանապարհով, որ անցնում է միայն Աստուածութեան մշտական ներշնչութեամբ։ Նոր կրօնը մի այնպիսի կրօն է լինելու, որ բոլոր ժամանակներում կարողանան ընդունել։ Երուսաղէմը, ճշմարիտ հատատի կենտրոնը, իր կողմն է դդելու բոլոր հայեացքները. ամենքը, նրա Տէր-Աստծու պատճառով, պատնալու են դէպի նրան։

Բայց, ափսոս, Իսրայելի կրօնը վոխանակ աւելի ընդարձակվելու և իր հատաչխարհային նշանակութիւնը իրագործելու՝ դերութիւնից յետոյ աւելի սեղմվեց, նեղացաւ և քան եւ բնոյթին մոռացել էր իր առջեը բացված հեռանկարները։ Հրէութիւնը, որ լինելու էր նրա ներքին պիտակութեան մէջ անասելի կերպով հարստացել էր մարգարէների վարդապետութեամբ՝ սակայն պահպանել էր կուլտի՝ իր հնադոյն կիրճութեամբ, շրջապատելով նրանց լոկ նոր ճահիճանոսական ձևերը. շրջապատելով նրանց լոկ նոր ճոխութեամբ և տալով մի նոր նշանակութիւն. նա տպել էր հատարակական աստուածպաշտութեան և ծէսերի անձնական պահպանման ամուր ըրտնը։ Հրէաները խիստ էին անջատվել

ամբողջ աշխարհից և իրանց մի բացառական հպարտության մեջ էին պահում, ասես թէ նրանց կրօնը միմիայն իրանց համար էր տրված իրանց, և ոչ թէ ամբողջ մարդկության: Մակարայեցիների ժամանակ նրանք ամենահերոսական քաջութիւնն ու վճռակամութիւնն ցոյց տվին, պաշտպանելով իրանց սեփական հաստատութիւնն ու ծէսերը հելլենականութեան հեղեղի դէմ, որ մի ժամանակ սպառնում էր ջնջել նրանց իր հետ: Այն հանգամանքը, որ հրէաները այս շրջանի ահռելութեան միջոցին անշարժ պահեցին իրանց ազգայնականութիւնը՝ հրէից ցեղի ամենանշանաւոր ձեռնարկութիւններից մէկն է: Բայց յաջորդ էպոխում շատ նշաններից երևնում որ հրէից կրօնը թուլանում էր: Քահանաների ու պսիների հրամանները քիչ-քիչ տարածվել էին մարդու ամբողջ կեանքի վրայ, ատենդութիւնները ու ծէսերը սկսել էին աւելի մեծ տեղ բռնել և բարոյական դաստիարակութիւնը կորցնում էր իր ճկունութիւնը: Աստուածութեան ներկայութեան գիտակցութիւնը լճանում էր, իսկ նրա փոխանակ օդը լցվել էր բազմաթիւ սպիներով, որոնք ճնշում էին մարդու կեանքը ամենուի մի անորոշ զգայութեամբ: Որովհետև բարոյական ինքնուրոյնութիւն չկար. այս պատճառով ժողովուրդը աւելի թշուառացել ու դիւրագրգիռ էր դարձել: Եւ այն ժամանակ, երբ ձեռականութիւնը հետզհետէ մեծ ապստամբութիւն էր ձեռք բերում հրէից զօրութիւնների մէջ՝ նրանց երևակայութիւնը ազատ էր և ամենաուժեղ գարկերով գարգարում էր, Իսրայէլի լճ անցեալ պատմութիւնը և լճ նրա ապագայ յաղթանակը:

Այս դրութեան մէջ էր գտնվում էանների կրօնը, երբ Քրիստոս երևնցաւ Պալէստինէում և ստեղծեց իրերի մի նոր կարգ: Քրիստոնէութիւնը սկզբում մի շարժում էր հրէութեան մէջ: Ուրոյն անձնաւորութիւնների հիմնած բոլոր կրօնների պէս՝ նրա սկիզբը շատ համեստ էր. բայց նրա վարդապետութիւնը մի այնպիսի բնոյթ ունէր, որ աջող հանգամանքներում անխուսափելի կերպով տարածվելու էր հրէութեան սահմաններից դուրս՝ ուրիշ երկրների և ուրիշ լեզուներով խոսող մարդկերի մէջն:

Քրիստոսի վարդապետութիւնը նախ և առաջ այն միտքը բարսպելն էր, թէ արդէն հասել է կրօնի այս մեծ լրումը, Աստծու արքայութիւնը, որ դուշակել էին մարգարէները, բայց որ Յիսուս Քրիստոսի հայրենակիցները համարում էին մի հեռաւոր յոյս, և որի մասին նոր ասա, իբրև մի բան որ շատ մօտալուտ բանի մասին՝ խոսում էր Յովհաննէս Մկրտիչ: Յայտարարվում էր, թէ հասել է կատարեալ դրութիւնը, թէ ասա ոչ թէ ապագայի, այլ ներկայի գործ է: Աստծու և մարդու միջև կատարեալ համաձայնութեան ու համակրութեան շատ վաղուց անկասկած նոր յարաբերութիւններն արդէն սկսվել էին. և ամէն ցանկացող կարող էր համոզվել սրանում: Այն բնագիրը (характеристокъ), որ Աստծու հետ ունենալիք յարաբերութեամբ Քրիստոս տալիս է մարդուն՝ բաւական որոշում է այս յարաբերութիւնները: Աստուած երկնաւոր Հայր է. մարդիկ նրա որդիքն են, և մարդու բոլոր ձգտումները պէտք է ուղղվեն մանել այս շրջանը և ապրել Աստծու հետ այսպիսի յարաբերութիւնների մէջ: Ամենակարող Աստուած կամենում է, որ ամէն մարդ ապրի նրա հետ, ինչպէս Նրա որդի, և կրօնը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մի այդպիսի հաղորդակցութիւն: Հայր ու որդի ապրում են միմեանց հետ կատարեալ սիրով ու հաւատարմութեամբ. նրանց յարաբերութիւնների մէջ ոչ արտաքին կանոններ են պահանջվում, ոչ պայմանագրեր, ոչ աւանդութիւններ, ոչ ծէսեր, ոչ ուխտադրութիւններ և ոչ զոհաբերութիւններ: Այսպիսի հաղորդակցութեան մէջ կարող է մանել ոմն էլ լինի, ուր էլ լինի: Սա ոչ թէ մի արտաքին, այլ զուտ բարոյական գործ է, սիրոյ գործ: Հայրը իր զաւակի մասին գիտէ ամէն բան, կարող է բաւարարութիւն տալ նրա բոլոր պէտքերին՝ մինչ անգամ նրա խնդրելուց էլ առաջ. նա պատրաստ է ներելու որդու մեղքերը, եթէ միայն նա զղջում է, և նախ և առաջ կա-

մինում է խրախուսել նրա ձգտումը դէպի բարին։ Որովհետև Հայրը միշտ մօտ է իրան, յայտնում է Հօրը ազօթքի մէջ իր ամէն կարիքը, ամէն ցանկութիւնը, թէպէտ յայտնի է որ Հայրը առաջուց գիտէ նրա կարիքները. ամէն կատարված բանի վրայ, թէ բարի լինի, թէ չար՝ որպէս նայում է իրեն բարի նպատակներով Աստծուց ուղարկված բանների վրայ, և ամէն դէպքում աշխատում է իմանալ նրա կամքը, խոնարհաբար ենթարկուելու համար։

Ոչինչ բան չէր կարող այս վարդապետութիւնից պարզ, խոր ու ընդարձակ լինել։ Դրօնը երեան է գալիս այստեղ՝ գաղտ ամէն տեսական, պատահական մտքի տարրերից, այստեղ մենք տեսնում ենք դրօնի ամենամաքուր արտայայտութիւնը։ Ընդունած լինելով այդ ձևով՝ նա անում է մարդու համար ամէն բան, ինչ որ հնարաւոր է։ Աստծու և մարդու միջև եղած յարաբերութիւնը դառնում է զուտ բարոյական յարաբերութիւն. այս կապը արդէն ցեղային կապ չէ, և չի կայանում ոչինչ արտաքին բանի մէջ։ Ուրոյն անձը,—ամէն մարդ, որ կամենում է լսել,—հռոմեցած է որ Աստծու և մարդու միջև մի բնական համակրութիւն կայ, և պէտք է ազատութիւն տալ այդ համակրութեանը։ Հերքում է նախատեսելը, թէ ինչ ազդեցութիւն կարող է ունենալ մի այսպիսի հաւատ։ Ուրոյն անձնաւորութիւնը, որին հրամայվում է Աստծու հետ մէկ լինելու սկզբունքը՝ ոչ թէ ար և է արտաքին հանգամանքների կամ պայմանների մէջ որոնել, այլ իր սեփական սրտումը. դալիս է այն գիտակցութեան, որ ինքը նեղրին կերպով ազատ է բոլոր արտաքսական ձնշումներից։ Մարդը իր սեփական սրտում գտնում է երջանկութեան գաղտնիքը և բարձր է կանգնում ամէն երկիւղից ու դրդումից. այս պատճառով նրա բնական ուժերը խրախուսվում են ազատ գործադրելու։ Նա պարզ տեսնում է, թէ ինչ է լինելու ինքը և ինչ պէտք է անի իրեն մարդ, և նոր եռանդ է զգում իր իդէալները

իրագործելու համար։ Որովհետև Աստուած իջել է նրա մօտ, այս պատճառով նա ինքը բարձրացել ու մօտեցել է Աստծուն. նրա կեանքի մէջ մտել է մի աստուածային զօրութիւն, որ ընդունակ է ամէն բան անելու թէ՛ նրանում ու թէ՛ նրա համար։

Պարելի է ասել որ մենք պատկերացրինք կրօնական ուսուցման ազդեցութիւնը հանրապէս, որ կարող է տեղ ունենալ ամէն կրօնի մէջ։ Բայց այն գործը, որ տալիս է մարդկութեանը քրիստոնէութիւնը՝ երկու էական կէտում է տարբերվում այն գործից, որ կարող է առացվել որ և է ուրիշ կրօնից։ Առաջին՝ Աստուած, որ այս դէպքում յարաբերութեան մէջ է մտնում մարդու հետ՝ բոլորովին իրական է և աշքի է ընկնում շափազանց եռանդուն բնոյթով։ Մենք այստեղ զգած ունենք մի և նոյն, թէպէտ և կերպարանափոխված, Եհովայի հետ, բայց այստեղ ինքնայինը նախկին Եհովայի հետ, այն Աստծու, որ աշքի է ընկնում իրական ու անդիմադրելի ուժով, որի վրայ մտաւոր ձիզը չէ գրել իր արտայայտող ձևերը։ Մարդու՝ Աստծու հետ ունեցած կապը չէ ամրանում նրանով, որ Աստծուն չինում են վերացական ու անորոշ, և անսահման բարութիւնն ու ամէն բան ներելը վերագրվում է նրան ոչ թէ վնաս նրա զօրութեան ու յարգանքի։ Քրիստոնէութեան մէջ Աստուած մնում է իրեն մի այնպիսի զօրութիւն, որ հետևում է ամէն բանի, ինչ որ կատարվում է, և որ կարող է անել մինչ անգամ այն, ինչ որ ամենաանկարելի է թվում։ Սա մի խիստ արդարութեան ու սրբութեան Աստուած է. թէպէտ և բարի է, բայց իր զաւակները չէ վերջացիկ, այլ պեռ ևս սպառնում է յանցաւոր մարդկերին ու յանցաւոր ժողովրդին։ Նա կարող է զժոխք իջեցնել թէ՛ հոգին ու թէ՛ մարմինը։ Այս աստուածութիւնը թէպէտ շատ սիրելի է ու նախանձաւոր, սակայն զոհ է բերում իրան, իրեն յօժարակամ բարերար, պաշտպան ու սիրող առաջնորդ և իր մարդ-արարածներից ամենաշնչին օգնական։ Երկրորդ՝ Աստծու և մարդու միջև կապվող յարաբերութեան պայման-

ները այսուհետ տարբերվում են ուրիշ տեղերի պայմաններից։ Աստուածաւթիւնը ներշնչում է մարդուն ոչ թէ որ և է առանձին տեսակ գործի, զոհաբերութեան կամ աշխարհից հեռանալու՝ այլ ուղղակի Ինքն Իրան ցոյց տալու համար։ Մարդը հաւատացած է որ այս ամենակարող Աստուած համակրում է իրան, և մարդուց է կախված, թէ ինչպէս կծառայի Աստծուն։ Ոչինչ կանոններ չկան։ Մարդկային կեանքը չէ նեղվում արուեստական կերպով, ինչպէս միւս մեծ կրօնների մէջ. պործոպութեան ոչ մի եղանակի առաւելութիւն չէ տրւում մեւանների։ Այս կրօնը ոչ թէ մարդերին, որ և է բան անել ստիպող ու նրանց հաւատացնող լուծ է, այլ ներշնչող պարտութիւն, որ ընդունակ է թափանցելու ամէն տեսակ կեանք և բարձրացնելու ու լաւացնելու մարդերին, ինչպիսի պարտաւորութիւններ էլ ունենան նրանք։ Մինչ անգամ կրօնական պարտաւորութիւններին վերաբերվում է կազմակերպվել բնական կերպով. միակ պահանջը՝ որպէս կենդանի ու իրական հարաբերակցութիւն ունենալն է Հօր հետ։ Անհրաժեշտ է աղօթքը, անհրաժեշտ է բարեգործութիւնը. որպէս բարեկամական յարաբերութիւն պէտք է պահպանի Հօր հետ, վարվելով այնպէս, ինչպէս նա է վարվում։ Պրօնական կեանքի ձևերի պատուէրն էլ սրանից հետու չէ գնում։ Բարոյական աշխարհում մի և նոյնն է։ Բարոյական կեանքը ներքուստ պէտք է աղաւ գարդանայ. բարութիւնը կանոնների գործ չէ, այլ այն սկզբունքի անմիջական զարգացումը, որ խորը արմատացած է սրտի նոյն իսկ կենտրոնում։ Քրիստոսի սահմանած օրէնքը կայանում է միայն նրանում, ինչ որ ամէն մարդ կարող է գտնել իր սեփական հոգու մէջ, երբ դէն կդցի ամէն արուեստականութիւն։

Քրիստոնէութեան բնորոշ գիծը օրինազրութեան բացակայութիւնն է։ Յիսուս Քրիստոս նայում էր իր վրայ ոչ իբրև նոր կրօնի հիմնադրի, այլ իբրև Իր հայրենիքի հին կրօնի մէջ ջերմեռանդ հաւատացողների մի փոքրիկ շրջան ստեղծելու. այս պատճառով Նա՝ նոր հաւատի համար օրէնքներ ստեղծելու կոչված չէր զգում իրան, և սրա հետևանքն այն էր, որ կրօնի միբանիմը ուշ կարգի ընկաւ։ Հիմնադրի հեղինակութիւնը կարելի է դիմել՝ Աստծու հետ ուղղակի ու մշտական յարաբերութիւն ունենալու համար, իսկ այդ յարաբերութիւնը իսկապէս այն յարաբերութիւնն է, որ որդիր ուներն իրանց հօր հետ, այլ և նրա համար, որ մարդիկ կարողանան հաստատել իրար հետ այնպիսի յարաբերութիւն, որ անհրաժեշտ է Աստծու հետ այսպիսի հաղորդակցութիւն ունենալու միջոցին,—բայց դժուար թէ այս հեղինակութիւնը կարողանայ պիտանի լինել որ և է ուրիշ բանի։ Այստեղ մարդը ազատ է, մի բան, որ մենք չենք տեսնում ուրիշ ոչ մի պատմական կրօնի մէջ։

Այսպիսով բրիստոնէութիւնը լոկ սիրոյ կրօն է։ Աստծու թագաւորութիւնը սիրուց է կազմված, և այն պրդումը, որ առաջ է գալիս կրօնից՝ ուղղակի սիրելու և սիրվելու մի ձգտում է։ Եւ սիրոյ կրօնը, միւս կրօնների հակառակ՝ հնարաւոր է համարում որ մարդը ազատ լինի, թոյլ է տալիս որ զարգանան նրա ուժերը և ուղղում է նրան դէպի մի աւելի բարձր կեանք։ Մի այսպիսի կրօնի երևան գալը՝ մարդկութեան պատմութեան մէջ ամենակարևոր էպօխաներից մէկն է։ Այս կրօնը բոլորը պէտք է ստանայ մի բացառական երկրպագութիւն։ Սրա վարդապետութիւնը երբէք ոչնչանալու չէ։

Անշուշտ, բրիստոնէական վարդապետութիւնը նոր վարդապետութիւն չէր ամէն մասամբ։ Նրանում նորից կենդանանում են մարգարէների պաղպաղանքները. նրա հետևողները միշտ բոլորովին յարմար էին գտնում իրանց համար հրէական շատ առդմաններ։ Քրիստոս Իսրայէլի կրօնի կոմն էր բռնում և սովորեցնում, թէ միայն այն բանի համար է եկել, որ աւելի լաւ պարզի այդ հաւատը և կրօնը ազատի սուտ յաւելումներից։ Նորը՝ Նրա սեփական աստուածային անձնաւորութիւնն էր։ Նրա մեծ գործը այն էր որ Նա իր վարդապետութեան մարմնացրեց մի այնպիսի կեանքի մէջ, որ այդ վարդապետութիւնը մարմնացրեց մի այնպիսի կեանքի մէջ, որ այդ վար-

դատաւորինը լիովին արտայայտում էր։ Ջնա հետև կլինէր ճշմարտութիւնից, եթէ մտածէինք, թէ կար որ և է հակասութիւն Իր սովորեցրածի ու արածի միջև։ Նրա կեանքը ամենայն մանրամասնութեամբ Իր կրօնի գործի առաջադրանն էր։ Ամէն բան անասելի պարզութեամբ և մինչ անգամ անխուսափելի կերպով բխում է նրա սովորեցրած ճշմարտութիւնից։ Իսկապէս Նա հէնց Իրան էր բարոզում. Նա Ինքը Աստծու արքայութեան մէջն էր ապրում, ուրիշներին էլ այնտեղ գնալ էր հրաւիրում, պատասխանելով որ ապրելն երկնաւոր Հօր հայրապետութեան մէջ, ինչպէս մի զաւակ, և բոլոր մարդերի, բոլոր իրերի, ու բոլոր պարտաւորութեանց վրայ նայելն այս հայրապետութեան տեսակէտից։ Նրա բոլոր դատողութիւնն ու խօսքերը բխում էին այն մի և նոյն աղբիւրից, որ ամփոփած էր Իր սեփական ներքին կեանքում։ Նրա կեանքը, ինչպէս կազմակերպվել էր, հէնց այնպէս էլ պէտք է կազմակերպվէր, և ոչ այլապէս. որովհետև Նա գիտէր, թէ ինչ են լինելու մարդիկ և ինչ նրանց՝ միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները, երբ Աստուած լինելու էր նրանց Հայրը, իսկ իրանք՝ Նրա որդիքը։ Նա իր սովորեցրածը դրոշմում էր և՛ կեանքի մէջ, այնպէս որ, ասես թէ, բացի Աստծու արքայութեան օրէնքներից՝ Նրա համար ուրիշ օրէնք նշանակութիւն չունէր, և այսպիսով Նա աշխարհ մտցրեց ճշմարիտ կրօնի այս կենդանի մարմնացումը, որի մէջ էր կայանում և քրիստոնէութեան գլխաւոր ուժը։ Յիսուս Քրիստոս բարոզում է Աստծու մի նոր կապը մարդու հետ, մի կապ, որ Նա Ինքն է, որ ամենից առաջ է վայելում, բայց որ ուրիշներին էլ է մատչելի. այս պատճառով ասելի Նրա անձնաւորութիւնը մեծ նշանակութիւն ունի Իր կրօնի մէջ, քան ուրիշների անձնաւորութիւնը իրանց հիմնած կրօնի մէջ. ուստի Նա երկրպագութեան առարկայ է դառնում համայնքը մանավանդ ամեն մարդու համար։ Վարպետութիւնը չէ անում իր բուժիչ (спецификъ.) ազդեցութիւնը Քրիստոսի անձնաւորութիւնից անջատ։ Նրա հետևողները, որոնք միմիայն Նրանում են ճանաչում այն ճշմարտութիւնը, որ աշխարհն է տալիս նրանից՝ Նրա վրայ հայում են իրրև իրանց Փրկչի, մի հանգամանք, որին մենք չենք հանդիպում ուրիշ ոչ մի կրօնի մէջ։

Բայց Փրկիչ անունը տալիս են Նրան Իր հետևողները, Ինքն էլ Իր իրաւունքների է յայտարարում դրա մասին դարձեալ մի ուրիշ պատճառով։ Յիսուս Քրիստոս ուսուցիչ լինելուց աւելի բան էր։ Նա զգում էր Իր մէջ այն զօրութեան ներկայութիւնը, որ կարող էր օգնութեան հասնել ամեն պէտերի, մինչև բոլոր նեղութիւնների մէջ. Նա առանց տատանվելու՝ բոլոր վատասիրտներին ու ծանրաբեռնածներին հրաւիրում էր գնալ Իր մօտ և խոստանում էր հանգստութիւն տալ նրանց։ Ըրպարտէս կարեկցելով ուրիշների իրանց չարչարանքների մէջ, հասկանալով մինչ անգամ այն չարչարանքները, որ իրանք չէին զգում՝ Նա զգում էր որ Իր կոչումն է զօրէն աւնենալ մարդկային կեանքի յաւտա կողմի հետ. Նա հիւանդների մօտ ուղարկված բժիշկն էր, կարած աշխարհ որոնող հովիւն էր։ Ընտանեների ու հիւանդների, աշխարհ մինչ անգամ հասարակութիւնից մերժվածների միջև, որոնց մէջ մանաւանդ զօրեղ է անօգնականութեան զգացումը՝ Նա ամենից աւելի էր զգում Իրան Իր տեղում և ամենից աւելի ընդունակ՝ Իր կոչումը կատարելու։ Նրա բոլոր խօսքերն ու գործերը լի են կարեկցութեամբ. բայց այս կարեկցութիւնը Դատաւորի կարեկցութեան պէս անյայտ չէ, և մարդկութեան հիւանդութիւնները բժշկելու մտքով չէ առաջարկում հեռանալ մարդերից ու մոռացութեան տալ։ Այստեղ կայ հաստատ դէպի Աստուած։ Այն կարեկցութիւնը, որից բխում է կրօնը՝ Դատաւորի կարեկցութեան պէս չէ, որ զգալուց որ և է երկնային զօրութեան ազատվելուց. նա բարոզվում է իրրև ամենից առաջ Իրան Աստծու որոնումը զոյութիւն ունեցող։ Աստուած ամեն բան կարող է անել և դէպի Իր որդիքն անհնազանդութիւնից ուղարկեց Իր Նեռկայացու-

յիշը, որպէսզի համոզի նրանց, որ ինքը կարեկցող է և մխիթարի իրանց վշտերի մէջ: Նայելով Քրիստոսի վարդապետութեանը՝ դրական բժշկութիւնն չպարծանրելուց էլ մեծ չարիք չկայ. Նա Իր սնափառ պատճառ պիտի է որ օգնութիւնն պէտք է հասցնել մարդկային բոլոր չարչարանքների դէմ, և այսպիսով Մէսիա է հանդիսանում,—ոչ թէ այնպիսի Մէսիա, ինչպիսին Նրանում սպասում էին տեսնել իր հայրենակիցները, այլ ճշմարիտ Մէսիա, որ հասկանում է մարդկային բոլոր կարիքները և որի մէջ կատարումն են ստացել մարդկային բոլոր ակնկալութիւնները: Այն բժշկութիւնը, որ նա առաջարկում է բոլոր ջհաւատութիւնների դէմ՝ կայանում է երկնաւոր Հօր կամքին հնազանդելու մէջ: Ամբողջապէս նուիրվել երկնաւոր Հօր մտադրութիւնների իրագործմանը, ինչպէս Իր սնափառ պատճառում, այնպէս էլ աշխարհում՝ նշանակում է բարձր կանգնել բոլոր հոգսերից ու վշտերից. հոգևոր յարիշտակութեամբ Հօրը ծառայելը՝ ամենալաւ բուժիչ միջոցն է: Այն մարդու համար, ով հաւատում է Հօրը և կամենում է ապրել իրրև նրա որդի՝ յուսահատութիւնը անկարելի բան է: Նրա գործը կատարելը ամէն ժամանակ մեծ բարդաւորութիւն է, և նրա արքայութիւնը, անտարակոյս, պակաս է,—թէպէտ մարդը դեռ ևս այն առաւելութիւնն ունի, որ կարող է գործել նրա (արքայութեան) համար,—այն արքայութիւնը, որտեղ փարատվում է ամէն խաւար ու ամէն չարութիւն:

Ցոյց տալով այն դիմաւոր կէտերը, որոնք քրիստոնէութիւնը միւս կրօնների հետ դիտականապէս համեմատելու միջոցին բուն երևոյթին նրա բնորոշ բնոյթն են ներկայացնում՝ մենք աշխատում էինք գործը այնպէս ներկայացնել, որ միւս կրօնների բանիմաց կատակիցը կարողանար խօստովանիլ մեր խօսքերի ճշմարտութիւնը: Այդ կէտերը հետևեալներն են: Քրիստոնէութիւնը ազատ կրօն է, ունի ներքին ներշնշման մի սխտեմ, բան արտաքին օրէնքի, մարմնացած է իր առաջնային հիմնադրի կենդանի անձնաւորութեան մէջ, որի

մէջ և եղականապէս յայտնվել է ճշմարտապէս. Ինքը Հիմնադիրը ապրում է Հօր հետ, որի մօտ նա հրաւիրում է և մարդկերին, քանի որ Իրան կոչված և ուղարկված է համարում՝ նրանց Փրկիչը լինելու:

Այս պատճառով հնարաւորութիւն չկայ քրիստոնէութեան մասին էլ այնպէս հանդամանօրէն խօսելու, ինչպէս ուրիշ կրօնների, սակայն չի կարելի լռութեան տալ նրա համաշխարհային լինելու հարցը. Ինքը Քրիստոս որոշակի չէ ասել, թէ իր կրօնը ատեմանվում է բոլոր մարդերի համար: Նրա անմիջական նպատակն էր իր հայրենակիցների կրօնի վերանորոգումը և նրան ամեն հոգևոր բնոյթ տալը. նրա հետևողները մի ամանք միևնոյն անգամ կարծում էին, թէ նա ուրիշ աշխարհից էլ չունէր նկատի: Բայց Նա դարձել է այնպիսի աշակերտների ու մտերիմների մի փոքրիկ շրջան, որոնք վերջը կազմակերպել են քրիստոնէական եկեղեցին, և այդ եկեղեցու անդամների վրայ աշխարհ ծիսական տպաւորութիւններ չէին արվում: Միևնոյն անգամ դրանից էլ ամենին. մեր ժամանակ հրէաների ատանդական սխտեմը՝ նա ցոյց տվեց որ հրէաների ծիսական սրբութեան օրէնքները պարտաւորական չէին իր աշակերտների համար, իսկ որանից հետո կարելի էր եզրակացնել, որ Աստծու արքայութիւնը միմիայն հրէաներին չէ, որ մատչելի է: Նորածին կրօնի՝ ուրիշներին գարձնելու մեծ ձգտումը շատ վաղ ընդհարում առաջացրեց իր և հեթանոսական կեանքի միջև, և շուտով հարց ծագեց, թէ կարող էին արդեօք Մեսիային ընդունել նրանք, ովքեր առաջուց հրէայ չէին գարձել: Պօղոս առաքեալին էր վիճակվել քրիստոնէութեան համաշխարհայնութեան տեսութիւնը մշակելու խնդիրը, և մի վտանգում անհետանում են գեղային բոլոր տարրերութիւնները. «Ձիր խաչը ոչ հրէի, և ոչ հեթանոսի»: Երբ արդէն վերջացել էր մի այսպիսի տարաձայնութիւն—իսկ դրա համար բաւական էր մի բանի տարի—նոր կրօնը կարող էր ազատ տարածվել

ամենայն ուղղությամբ: Նա արագ էր տարածվում. լինելով իր բովանդակությամբ չափազանց պարզ՝ Աետառանը ծանր պարտաւորություններ չէր դնում մարդու վրայ, և շուտով բանից երևեցաւ որ նա ընդունակ է խոր արմատներ գցելու ամէն երկրում: Պօղոս առաքեալը եկեղեցու առաջին մեծ աստուածաբանն էր: Պօղոսի աստուածաբանությունը հանդէս է գալիս իբրև մի փորձ՝ քրիստոնէության փաստերը և մանաւանդ հրէից այդ գայլմակության վէմը—Մէսիայի մահը—հրէական մարմին համաձայնեցնելու: Փոխանակ պլուտար առաքեալների պէս՝ Քրիստոսի մեռնելու մէջ մի անլուծելի հանելուկ տեսնելու՝ Պօղոս տեսնում էր նրանում Փրկչի չարչարանքի պլուտար յայտնությունը և այն մեծ նպատակը, որի համար Նա աշխարհ էր եկել: Պօղոս իր ուշադրությունը կենտրոնացրել էր Քրիստոսի մահի վրայ և Մէսիայի վարդապետությունից աւելի՝ նաչն էր տվել Նրա կրօնի ծանրության կենտրոնը: Պօղոսին հասկանալու համար մենք նրա կրօնը պէտք է դատենք իր աստուածաբանությունից: Նրա կրօնական դրությունը խիստ նման է Իրան Քրիստոսի դրությանը. նրա համար էլ նոր կրօնը՝ որպիսը Հօրը հայտարակից աննին է, և նա այս կրօնից դուրս է բերում բոլոր անխուսափելի հետևանքները: Հայց մարի այն շարժումը, որ ոգեվել էր նաչելության ամէնից, քրիստոնէական հաւատն ու սէրը Փրկչի անձնաւորության վրայ կենտրոնացնելը այժմ կատարվեց: Հաւատի կենտրոնը Պօղոսի ժամանակներից դարձել էր Նաչելի պատկերը՝ Նրա աղերսական հզօր իշխելության և Նրա՝ անձնաւորության համար յաղթանակելու և մահով ապրելու մեծ գաղափով:

Քրիստոնէության առաջին դարերում աշխարհը կրօնի մեծ կարիք ունէր, և քրիստոնէությունը բանից բաց մնացած տեղը: Հռոմէական կայսրության մեծ ոլիկանության,—որտեղ ընդհարվում էին ամէն հոսանքներ,—հանդիպելով ամենատարասակ փիլիսոփայությունների ու կրօնների՝ բանից երևեցաւ

որ քրիստոնէությունը աւելի էր յարմարում այն բանին որ կանչին Հռոմէական տրվի, միացնելով իրար հետ մարդկերի դանազան դասակարգերը և դանազան փիլիսոփայական դրոյցներ: Կայսրության յայնաժամանակ ասպարէզում նա ոչ միայն ամենից էր իրանը, այլ և ընդունել էր շատ բան, և ստացել շատ օտարոտի ձևեր, շփվելով իր համար խորթ ժէսերի ու հաւատալիքների հետ: Նա դարձել էր հարիւրաւոր լեզուների մարերի ու յոյների ժառանգը, երկրի բոլոր ծայրերից հաւաքված կրօնական բոլոր զգացմունքները նպաստում էին նրա վարդապետության փարվամանալուն և շինել էին նրան այն բոլոր՝ ինչ էին նրան այն բոլոր՝ ինչ էին նրան այն բոլոր՝ ինչ

նէութիւնը նախապատրաստուած էր յանուց աշխարհում յայտնվելու համար, առանց որի (նախապ.) նրա տարածումը աւելի կասկածելի էր լինելու։ Ցոյն-հռոմէական կրօնի մէջ արդէն նախագծված էր այն, ինչ որ իրագործել էր քրիստոնէութիւնը։ Միաբն արդէն աշխատում էր Աստծու մեծ վարպետութիւնը առեղծելու վրայ, այնպիսի Աստծու, որին կարող է հմբռնել մարդկային բանականութիւնը, մի անհուն կերպով իմաստուն ու բարի էակի, որ ամէն բանի նախապատճառն ու ծածկված հիմքն է, ամէն գիտութեան, գեղեցկութեան ու բարութեան գումարն է, և որին կարող են հաւատարապէս հաւատ ընծայել բոլոր մարդիկ։ Յունական միաբը շատ է աշխատել նաև մարդու բարոյական բնութեան ու նշանակութեան կանոնաւոր բացատրութեան վրայ։ Թէ տեսականութեան ու թէ իրականութեան մէջ շատ փորձեր են արվել մարդու կեանքի իդէալը կատարելու համար, և այս պատճառով շատ մտքեր պատրաստված էին ընդունելու այն կրօնը, որ ներքին կեանքի գանձը բարձր է դասում միւս բոլոր գանձերից։ Յունաց փիլիսոփայական դպրոցը մի կենսակրօնական կապ էր, որի կենտրոնական կէտը, ինչպէս և քրիստոնէութեան մէջ, հոգևոր գործունէութիւնն էր, ոչ թէ արտաքին ձևը։ Այս պատճառով չնչին զարմանալի բան չկայ նրանում, որ քրիստոնէական հիմնարկութիւնները մի յայտնի աստիճան նմանվել էին յունական դպրոցներին։ Մօտ ժամանակներս ապացուցված էր, որ շատ ձևերի կատարումը շատ վաղ էր սկսել խիստ նմանվել յունական միստերիաների գործածութեանը և որ քրիստոնէական քարոզը ուղիղ գծով առաջ է գալիս յոյն փիլիսոփայի մի ըրոյցից։ Մի քանի յոյն դպրոցներում սովորական էր դարձել հովի այցելութիւնը, և քարոզիչը հետամուտ էր լինում իր աշակերտների բարոյական կեանքին։ Թէպէտ քրիստոնէութիւնը անկասկածելի կերպով իր սեփական հիմնարկութիւններին մի ձև տալու շատ բանական ուժ ունէր՝ բայց այսուամենայնիւ յունական ու քրիստոնէական ձևերի միջև եղած նմանութիւնը հարկ է լինում ընդունել լուկ զուգադիպութեամբ։

Քրիստոնէութեան ու յունական աշխարհի միջև եղած կապը վերջնապէս հաստատվեց երկրորդ դարի վերջերը։ Մինչև այն ժամանակ հաւատն ու ձէռը դիտաւորապէս առանձին էին պահվում. իսկ այժմ վարութեամբ ու աւանդութեամբ էլին այդպէս. իսկ այժմ նրանք պէտք է տեսի տային որոշ օրէնքների ու հիմնարկութիւնների։ Մեր յիշած ժամանակը բոլորովին զարգացել էր եկեղեցական վարչութեան սիստեմը, երևան էր եկել քրիստոնէական ծագում ունեցող որբական գրքերի կանոնը (канонъ) և հաւատի հանդանակը, որի մէջ հաւաքված ու դասաւորված էին քրիստոնէաների բոլոր հաւատալիքները։ Զի կարելի ժամել, որ այն արտաքին ձևերը, որ այսպիսով ստացան Քրիստոսի կրօնը՝ զգալի կերպով այս կրօնի բնոյթն էլ էլին փոխել։ Բայց այս բանը պատահում է ամէն կրօնի, որ կազմակերպվում է մարդկային մտածութեան և մարդկային հասարակութեան վրայ հիմնելու նպատակով։ Ինչպէս արտաքին ձևեր չեն կարողանում, ինչպէս հարկն է, արտայայտել կրօնական կենդանի իդէաներ. բայց արտաքին ձևերը այսուամենայնիւ պէտք է զգալիքն ունենան, որ կարողանան զգալիքն ունենալ կրօնական իդէաները։ Նոր ճշմարտութեան բարոզիչները անխուսափելի կերպով բարձրանում էլին իրանց նշանակութեամբ, մինչև որ քահանայապետութիւնն (հերարխիա) գարձան։ Այս ճշմարտութիւնը ձգտում էր հաստատել իրրև պետական ճշմարտութիւն և այն ժամանակ սիրտ ունեցող փիլիսոփայական ուղղութեան չնորհիւ գարձել էր՝ տիեզերքի մասին մի յայտնի հայեցակէտ՝ իր յայտնի վարդապետութիւնով։ Այսպիսով քրիստոնէութեան էութիւնը սկսել էր կայանալ ոչ թէ գլխի ուսուցիչը տածած սիրոյ և նրան հաւատով ու սիրով հետևելու մէջ, այլ եկեղեցու հետևելու մէջ, նրա խորհուրդները ընդունելու պինակութիւնը պահպանելու, և գանազան բնազանցական ու վերացական գրութիւնների

հաւատալու մէջ: Այսօրէն էլ է մի զատուկ զգացում կրօնի հոգեոր միջուկի շուրջը, և այս զգացումը, թէպէտ և կարող է պահպանել միջուկը ծանր ու սպառնալից ժամանակներում՝ ընդունակ է նաև պղտորելու նրան և մինչ անգամ բոլորովին գաղելու:

Ամէն երկրում, որ մուտք էր գործում քրիստոնէութիւնը՝ այնտեղ առաջուց գոյութիւն ունեցող կրօնից նա առնում էր, ինչ որ կարողանում էր: Այս երկրների հին կրօնները նման չէին միմեանց, այս պատճառով էլ ինչպէս հռոմայեցոց լեզուն զանազան ձևեր էր ստացել և տրտնջել ռոմանական ժողովուրդների՝ զանազան, թէպէտև համայնք բարբառների, այնպէս էլ կայսրութեան կրօնը, միանալով հնէմանութեան այլ և այլ ձևերի հետ՝ տրտնջել էր մի քանի ազգային կրօնների, որոնց միջև եղած տարբերացումները զոնէ նոյնքան անկների են, որքան և նրանց նմանութիւնը: Իտալիայում քրիստոնէութիւնը յայտնվեց իբրև տեղական աստուածութիւնների սխտեմ, քանի որ իւրաքանչիւր պիտ յարգում է իր Մադոնան կամ իր սուրբը: Հոլլանդիայում կուլտը Տամարեայ բացառապէս մի քարոզութիւն է: Ուրիշ երկրներում կրօնի ծիսական ու հոգեոր տարրերը միացած են զանազանակերպ համեմատութիւնների մէջ. և իւրաքանչիւր երկրի նախկին հնէմանութիւնը կարող է արտայայտվել ժողովրդական շատ ծէսերի ու հաւատալիքների մէջ: Եւրոպայի կրօնների պէսպիսութիւնը այնքան մեծ է, մի կողմ լռացնելով նէգրների կամ ամերիկեան հնդկերների կրօնը, որ շատերը կասկածում էլն, արդեօք այդ բոլորը պէտք է մէկ հաւատի ճիւղեր համարել, և եւրի ճիշտ չի լինի, եթէ նրանց վրայ նայենք, ինչպէս ազգայնական կրօնների, որոնք ձուլվել են քրիստոնէութեան հետ: Սրա դէմ ամենից առաջ պէտք է առարկել, որ դրանք պատմաբանօրէն հանդիսանում են գալիս իբրև Քրիստոսի կրօնի շառաւիղներ: Կարելի է ասել նաև, որ ուր և յիշվի Յիսուս Քրիստոսի անունը, այնտեղ պէտք է լինեն և նրա

պատգամները, որքան էլ նրանք նսեմացած ու խեղդված լինեն աւելի ստոր հայեցուածքներից: Ո՛չ և է երկրի քրիստոնէութեան մասին չի կարելի պատկերացնել նրա ամենաբացարձակ վարդապետի կատակիչների կամ մինչ անգամ նրա՝ միջակ հասկացողութեան տէր դաստիարակների մտածումների հետևանքով. և այն բոլոր երկրներում, որտեղ քրիստոնէութիւնը պերճաշուք է՝ կրօնի հետ միասին ներդրծում է մի յայտնի պղծկութիւն, որ նպաստում է մարդու անձնաւորութեան ազատութեանն ու բարձրանալուն և մարդկային բնութեան սկզբունքների զրկման: Սա, ինչպէս մենք տեսանք, Քրիստոսի կրօնի անմիջական գործումն է. այս կրօնը բայ է անում կալանաւորների համար բանտի գները. քահանան ներքուստ, տալիս է նրան էնէրգիա, որ ջալերում է մարդուն ներքուստ, տալիս է նրան էնէրգիա, որ տկարներին ոտքի է մղում իրանց թուլութիւնները, լցնում է սիրտը յոյսով և նոր հայեացքներ է գցել տալիս այն բանի վրայ, ինչ որ մարդը կարող է անել և ինչ որ նա կարող է լինել: Ահա թէ ինչն է քրիստոնէութիւնը իրօք միակ ազդեցիկ կրօն շինում: Ուղիղ է, Իսլամն էլ է ազդում իր շատ երկրներում տարածելու ընդունակութիւնը, և բուդդայականութիւնը տարածվել է Ասիայի կիսում: Բայց բուդդհիմը մի լրիւ կրօն չէ, նա ոչ թէ գեղի գործունէութիւնն է ձգտում, այլ կրաւորականութիւնը, և չէ նպաստում առաջադիմութեանը: Այն ինչ Իսլամը աւելի իրեն մի լուծ է հանդէս գալիս, բան իրեն ներշնչող ուժ. նա իր էութեամբ թշնամի է ազատութեանը և ընդունակ չէ աջակցելու բարոյական բարձր զարգացմանը: Քրիստոնէութիւնը այն է քարոզում, ինչի մասին որ մարդիկ աւելի սիրով են խօսում, որքան բարձր են կանգնած քաղաքակրթութեան տեսանկիւնի վրայ. նա ազատուցիկ է, որ ինքն ընդունակ է մտնելու պէսպէս ժողովուրդների կեանքը, յարմարվելու նրանց հանգամանքներին և առաջնորդելու նրանց յոյսերը, չտատրացնելով այդ ժողովուրդներին: Այն կրօնը, որ քրիստոնէութեան պէս

իրան նոյնացնում է բոլոր երկրներում ապաստանման գործի հետ և ձգտում է բոլոր մարդկանց միացնել ի մի մեծ եղբայրութեան՝ սիրոյ Աստծու սկզբունքով, որ ամենքի Հայրն է անխտիր,—այդպիսի կրօնը անկասկած երեան է գալիս իբրև մի ցանկալի կրօն բոլոր ժողովուրդների համար և նախատեսուած է ամբողջ մարդկութեան կրօնը լինելու։

XXIII ԳԼՈՒԽ

ՎԵՐՋԱԲԱՆ

Չի կարելի ասասել, որ այս գրուածքի մէջ նկարագրուած մեծ շարժման արդիւնքը մի քանի խօսքով լինի արտայայտած։ Մենք սկսեցինք մեր գրուածքի նիւթը որոշելուց, որ միմիայն այն ժամանակ կարող է առաջդիմել, երբ կրօնը կը լցնէ իր պարպացումը և բոլորովին կպարզի իր էութիւնը։ Մենք դուրս եկանք նաև այն ենթադրութիւնից, թէ աշխարհի բոլոր կրօնները քամ ինքնան մէկ կրօն են ներկայացնում, և թէ այս կրօնը պէսսուր կոպերով մէկ անընդհատ շարժում է հանդէս բերում, սկսելով ամենասկզբնական բնաստիճաններից և բարձրանալով մինչև ամենակատարեալները։ Այժմ մենք չենք փորձի դատողութիւններով արդարացնել այս որոշումը կամ ենթադրութիւնը։ Սրանց հաստատութիւնը ինքը պատմութիւնը պէտք է լինի, որը մենք աշխատեցինք նկարագրել կարպացողի առջև։ Ի լրումն այս գրուածքի մնում է միայն մատնացոյց անել այս զարգացման մի նշանաւոր կողմը, որ կարող է ամէն-պակաս պարզ արտայայտել իւրաքանչիւր կրօնի զարգացման մէջ, ուստի և հանրագէտ կրօնի բնորոշ նշանը պէտք է համարվի։ Անտարակոյս, կրօնի, ինչպէս և մարդկային կեանքի որոշ կողմերի զարգացումը՝ ունի իր հերթին այլ և այլ շատ կողմեր ու դրութիւններ, սակայն դուք հնարաւոր լինի որոշել զարգացման կենսաբանական դիծը, որը և բացատրէր բոլոր դուգահեռական ու օժանդակիչ առաջադրութիւնները։

Առաջին դիտումը այն դրույթն էր արտայայտված, թե կրոնը մարդկային անօգականության արտայայտությունն է՝ միացած բարձրագոյն էակներին անկիր դիմումներին, էակներին որոնք ընդունակ են ենթադրվում մարդերի ցանկությունները կատարելու գործում. որանից այն եզրակացությունն էր արված, որ մարդկային պահանջների զարգացումը կրոնական փոփոխությունների ու կրոնական առաջադիմության պատճառն է: Եթե այս այսպէս է, ապա կրոնի գարգացման բացատրությունը կարող է գտնվել մարդու կեանքի ամեն բարձր պահանջների հետևյալ առաջ դրու մէջ: Եթե մեզ յաջողվի յայտնագործել այն կարգը, որի մէջ ամեն բարձր ձգտումները առաջ են գալիս մարդկության զարգացման միջոցին, այն ժամանակ կհասկանանք, թե ինչ ուղղությամբ է տեսի ունենում կրոնական առաջադիմությունը: Թէպէտ մարդերի պահանջների ու ցանկությանց մէջ անվերջ պէսպիսություն կայ, և իւրաքանչիւր երկիր, իւրաքանչիւր ժողովուրդ իր սեփական իդէալներն ունի՝ սակայն այսու ամենայնիւ, մարդկության առաջադիմության յայնաժամակ ասպարէզում մենք կարող ենք նկատել մի փոխանցում ստոր պահանջներից դէպի բարձրերը, փոխանցում, որ ընդհանուր է բոլոր մարդերին և որ տեղի է ունենում ամեն ժողովրդի պատմության մէջ: Մեր առջեւ պարզապէս հանդէս են գալիս մարդկային կեանքի երեք յաջորդական դրույթները, որոնք հանդիպում են այն ամեն տեղում, ուր առաջ է գնում բազաբակրթությունը: Առաջինը այն դրույթն է, երբ մարդուն ամբողջապէս կառնում են նիւթական կարիքները, երկրորդը՝ այն, երբ այդ նիւթական կարիքներից մի յայտնի աստիճան աղատությունն է ձեռք բերված, և բարձրագոյն ձգտումները ուղղված են դէպի այն ազգության ապահովությունն ու զարգացումը, որ միացնում ու պաշտպանում է մարդկերին. իսկ երրորդը՝ այն, երբ ուրոյն անձնաւորությունը գիտակցում է իր սեփական նշանակությունը պետությունից անկախ և առկոծում է անձնական իդէալ, որ այդ ժամանակից նրա գլխաւոր նպատակն է դառնում: Մարդկային զոյության այս երեք բնաստիճանները համապատասխանում են կրոնի երեք տիպը, և կրոնի զարգացումը մի փոխանցում է նրա այս բնաստիճաններից առաջինից դէպի բարձրը:

Տոհմային կրոնը մարդու զոյության այն բնաստիճանին է վերաբերում, որի մէջ մարդու ուժերը ամբողջովին գործ են դրվում բնության ու միւս յեղերի դէմ մղված պատերազմում: Նրա կեանքի պայմանները թոյլ չեն տալիս որ իր ուշի բարձր ընդունակությունները զարգանան, և, թէպէտ նա զուրկ չէ բարձրագոյն առարկաներին վերաբերվող շատ ենթադրություններից ու նախազգացումներից՝ սակայն նրա կրոնը, հանուր բարգավճամբ, մանկական բազմաթիւ գիտություններ ու անզգուշալի աւանդություններ մի կոյտ է, որ նա ուշ բննադատել է վտանգում, ուշ փոփոխել: Նրա աստուածությունները մանր ու բմասլաշ էակներ են և այն միջոցները, որանցով նա ազդում է նրանց վրայ՝ որքան էլ անկեղծ ու ջերմ լինեն, բուշ վերաբերմունք ունեն դէպի բանականության, գիտակցի զգացումը կամ բարոյականությունը: Ըստպիսի կրոնի մէջ հանդիպում է ամենաստոյակ կախարդության հասարակ:

Տոհմային կրոնից դէպի ազգայնականն անցնելը համաստոտակի նկատվում էր վերը: Պետության բարձր գաղափարները, գտնել նրանցից այնպիսիները մէջ, որոնք հասել են մի յայտնի աստիճան ազատության ու հանդուրժության՝ ծագում են ունել ամենից յատկություն ունեցող գաղափարներ: Պետության մեծ աստուածներին սպասաւորելը պայմանավորվում է պատշաճաւոր ճոխությամբ ու արժանաւորությամբ. լաւ մարդերը նպատակ են այս բանին արտեսով, բանաստեղծությամբ, լեգենդների մշակությամբ և շքեղ արարողությամբ: Հայրենասիրությունն ու կրոնը միախառնվում են, կուլտը կատարողները պաշտպանություն են վայելում պետա-

կան իշխանության կողմից, և աստուածները նոր հեղինակություն են ձեռք բերում յարգողի աչքում: Այն ժամանակ սկսա ասաջ են գալիս կրօնական մեծ սիասէմներ, որոնք այնքան հզօր, լաւ կազմակերպված ու ճոխ են սարքված արտաքուստ և այնքան յարկի աւանդութիւններով շրջապատված, որ կարող է լել նախապատրաստված են յաւիտեան գոյութիւն ունենալու համար: Քաւութիւնը գանւում են մի շատ գօրեղ պատնէշ և ձեռք են բերում անձնական սրբութիւն, որ նրանց գատում է ուրիշ մարդկից. գոհաբերութիւնները աստուածային խորհուրդների բնոյթ են ստանում, որոնց իւրաքանչիւր մանրամասնութիւնը, մինչ անգամ ամենափորրը՝ սրբազան նշանակութիւն ունի. կազմում կամ գրւում են սրբազան գրքեր, որոնք քիչ-քիչ սկսում են վերաստա նորշնչված համարվել, այն էլ՝ անսպասման հեղինակութիւն ունեցող: Պէտք է նկատել որ կրօնի նախկին ձեր յանկարծ չէ վտարվում նորից, այլ շարունակ ծագկում է նրա հետ միասին և նրա պաշտպանութեան տակ: Այն գեղերը, որոնցից բարկանում է ապրը, գեռես յարգում ու սիրում են իրանց աստանձին աստուածները: Յաճախ կարծում են լել այդ վախճի կուլտը պետական նոր կրօնի կուլտի ճշմարիտն է, և շատ հին կախարդութիւններ ու ծէսեր, որոնք կապ չունեն պետական կրօնի հետ՝ գեռես գոյութիւն ունեն, մանաւանդ նրանց միջև, ովքեր այնքան չեն բազաքակրթուած, որ գրնահատեն նոր ու աւելի վսեմ հասարը:

Այս բանը սակայն չէ խանգարում ապագային հաստատին՝ բազմազանութիւնը իր պահանջները և զարգանալու իր բնավորութիւնը. և որքան ասաջ է գնում այս զարգացումը, այնքան կրօնը բուն երևոյթին վերին աստիճանի կարողութիւն ու հեղինակութիւն է ձեռք բերում: Ունենալով իր տրամադրութեան տակ ապագային բոլոր գանձերը, հարստանալով բոլոր նիւթական կամ հոգևոր գանձերով, որոնք կարող են մտցնվել նրանում, գրված լինելով մի անսպասման

բարձր ու անձնանմանելի պրոբլեմի մէջ՝ էլ այնուհետև ինչ յաղթութիւնների յոյս պէտք է ունենայ կրօնը: Եւ այստանմենայնիւ, երբ կրվում է լել ապագայական կրօնը ամենից ամենայն, որ չունի հաստատ կարգաւորված՝ այն ժամանակ անտարակոյսելի հաստատ կարգաւորված՝ այն ժամանակ անտարակոյս այն ուժերն են ներգործում, որոնք շատով ահագին փոփոխութիւն են ասաջ բերելու: Այն միջոցին, երբ ապագայական կուլտը իր բարձր գարգացմանն էր հասել՝ բազաքացիների կեանքն էլ աւելի հարստանում ու խորանանում էր, և ուրոյն անձնաւորութիւնը ունեցաւ այնպիսի պահանջներ ու ձգտումներ, որոնք չէին կարող բաւականութիւն գտնել ապագայական տաճարում: Դրանի ապագայ գարգացումը կարող է միայն բողոր լինել այն սիասէմի դէմ, որ այսշափ ուժասրվել էր: Ուրոյն անձնաւորութիւնը սկսում է ձգտել դէպի մի բարեկամ աշխարհայեցողութեան և հանդէս է գալիս իրրև սկէպտիկ: Նա սրտնում է բոմական սիասէմի օրէնքից մի աւելի բարոյական օրէնք, և նրան մեզադրում են հասարակական բարոյականութեան հիմքը փորելու մէջ: Նա մի նոր հրաւէր է ղրում դէպի անձնական կատարելագործութիւնը, նա անձնական ազատութեան մի նոր պահանջ է ղրում, սովորելով դնել իր առաջը սրբութեան իդէալը. և որովհետև հասարակական կուլտը բաւարարութեան չէ տալիս այս պահանջներին, այս պատճառով նա կրօնական նոր կապեր է որոնում և ըստ երևոյթին հայրենասիրութիւնը հակասող մի վարդապետութիւն է բարոզում. հակառակ իր երկրի կարգաւորված կրօնին՝ նա, ասես լել է, նախապատրաստել կերպով խանգարում է վախճի կապերն ու պարտաւորութիւնները: Այսպիսով կրօնի անձնական բնաւորիճանը հետևում է ապագայականին: Բայց անձնական բնաւորիճանը, գոնէ մասամբ, մի և նոյն ժամանակ է ընդհանուր և համաշխարհային բնաւորիճան: Մտածող ոգին ու բարեպաշտ սիրտը որոնում ու չեն կարողանում գտնել ապագայական կրօնի մէջ ամէն անհրաժեշտութիւնից ու արտաքսականութիւնից զերծ մի կրօն, այսինքն՝

մի այնպիսի կրօն, որ կարող է ընդունել ամէն մտածող ա-
րդի, ամէն բարեպաշտ սիրտ։ Այս պատճառով այն, ինչ որ
ուրայն անձնաւորութիւնները նուաճում են այս ուղղութեամբ՝
ընդունակ է բարեյաջող հանգամանքներում հանդէս գալու իբ-
րև ոչ միայն մի առանձին վերանորոգչի կամ նրա աղդի, այլ
և բոլոր մարդկերի համար մի ատացուածք։ Սակայն ինչպէս
որ աղգայնական կրօնի առաջ գալը չէ վերջացնում ցեղային
աւելի կոչտ կուլտերը, որոնք շարունակ ապրում են նրա հետ՝
այնպէս էլ անհատականութիւնը, մինչ անգամ իր ամենամա-
րտաձեւ, չէ ոչնչացնում աղգայնական կուլտը։ Ժամանակի
ընթացքում դա կարող է պատահել, բայց յանկարծ չէ լի-
նում։ Կրօնի բոլոր երեք ձևերն էլ շարունակ ապրում են իրար կողքի. կախարդութիւնը, հատարակական ճոխ
զոհարերութիւնների ու հանդէսների կրօնը և բնականութիւնը,
բարեպաշտ մտածողութիւնը ու ապօթքի կրօնը։ Նրանցից
իւրաքանչիւրը անտարակոյս, մի առանձին ազդում է մարդու-
րի վրայ և իր հերթին ենթարկվում նրանց ազդեցութիւնը։

Մտանդոյց արած փոխանցումը տոհմային կրօնից դէ-
պի ազգայնականը և ազգայնականից դէպի անձնականն ու
համաշխարհայինը՝ կրօնի կենսաբանական զարգացումն է, և
նրա երկրորդական կողմերի ամէն զարգացումը, ինչպէս օր.
զոհարերութիւնը՝ կոպիտ ձևերից դէպի հոգևոր ձևերի փո-
խանցումը, բարքերի պատակարգի զարգանալութեան զարգա-
ցումը, կրօնի պատուիրած բարոյականութեան զարգացումը և
բարեպաշտութեան հետ կապված պրակտիկութեան զարգացու-
մը,—այս բոլորը կարող է բացատրվել՝ կապակցված զար-
գացման այս կենսաբանական ընթացքի հետ։ Այս շարժումը տեղի
է ունեցել ամէն ազգութեան մէջ. մենք տեսանք նրա մասնիկը
մեր պրոտածքի պլմներից իրաքանչիւրի մէջ։ Մի քանի ժողո-
վուրդների մէջ այդ շարժումը վաղ է եղել կանգ առած, այն-
պէս որ նրանք մի էական տուրք չեն մացրել մարդկութեան
հանուր կրօնը, միտքների մէջ նա յայտնվել է լրիւ չափով, և

մեծ դեմ պէտ՝ վերջապէս հասել է ավիկամոսին ու իր ջրերը
խառնել է աւելի գօրեղ հերնիների ջրերի հետ։

Համաշխարհային կրօնի գարգացման պատմութիւնը այս
պատճառով պէտք է նկարագրվի այն գաղափարական պատ-
մուածքների շարքում, որոնցից իւրաքանչիւրը առանձին ազ-
գութեան կեանքին է վերաբերում։ Առանց այդ մանրամասն
պատմուածքների դժուար թէ կարողանայ գոյութիւն ունե-
նալ համաշխարհային կրօնի որ և է հանուր պատմութիւն։
Ուրիշ է, մի քանի էպօխներ վկայ են եղել շատ երկրներում
կրօնական միաժամանակեայ շարժումների, առնս թէ, բոլոր
մարդկութեան ապին մի յայտնի ժամանակաշրջանում մարդ
միատեսակ ձգնաժամ է ունեցել։ Վեցերորդ դարը Ք. Ծ. ա-
ռաջ Կոնֆուցիոսի և Լաո-Ցուէի դարն է, Զրադաշտի, Գաու-
տամայի դարը Հնդկաստանում, Երեմիայի, Եզեկիէլի և բարի-
լոնեան գերութեան անցյալ մարգարէի դարը, այլ և յունական
միտքերի ղարգացման դարը։ Ընդհակառակն որ այս երկրներում
միաժամանակ տեղի ունեցող շարժումները տարբերվում են մի-
մեանցից, այնու ամենայնիւ մենք ամէն տեղ կարող ենք նշմա-
րել կրօնը մարի ու սրտի մէջ անկելու և աստուածների հետ
աւելի սերտ կապ ստեղծելու ձգտումը, բան վաղեմի արատա-
բերն կապը,—մի կողմ, հիմնված հանուր մտատարածման և
պատման և հոգևոր համակրութեան վրայ։ Այն էպօխը, որ
անմիջապէս նախընթաց է եղել քրիստոնէութեան գարգացմանն
ու յաջորդել նրան՝ կարող է նոյնպէս այնպիսիներից մէկը
համարվել, երբ բոլոր մարդկութեան բանականութիւնը ղգալի
կերպով առաջ է եկել գնացած։ Բազմաթիւ ժողովուրդներ
հասկական իշխանութեան տակ միացնելը և յոյն լեզուի հա-
մաշխարհային տարածումը, ինչպէս յարաբերութիւնների մի
հանուր միջոց, ստիպել էր մարդկերին, որ և է, ուրիշ ժամա-
նակից աւելի զօրեղ կերպով զիտակցել մարդկութեան միաս-
նութիւնը, շնայելով ցեղերի ու բարքաւանների բոլոր տարբեր-
ութիւններին։ Այն ժամանակ տարածված էր նաև իր բնոյթով

մի համաշխարհային (կոսմոպոլիտ) փիլիսոփայութիւն, նա պրպտում էր մեծ խնդիրներ լուծելով, որոնք միատեսակ են ամենքի համար,—խնդիրներ, որոնք վերաբերում էին մարդու՝ աստուածների հետ ունեցած յարաբերութիւններին ու նրա բարոյական պարտաւորութիւններին։ Եթէ սրան աւելացնենք Հռոմում ու ամէնուրեք տեղի ունեցող պէսպէս ծէսերի ու հաւատալիքների իրար հետ ձուլումը, այն տեղերում, ուր չփոխում էին դանազան ժողովուրդները՝ այն ժամանակ կըհասկանանք որ այս էպոխը առանձնապէս հակուած էր մարդերի միջև եղած պատուարները բանդելու և աջակցելու այն հաւատի երևան գալուն, որ հաւանաբար կարող էր միացնել բոլոր ժողովուրդները և ստիպել նրանց՝ իրար եղբայրներ դդալ։

Այս երկու ժամանակաշրջանների ընթացքում դդալի կերպով առաջ էր գնացել մարդկային ցեղի այն մեծ զարգացումը, որ յիշատակում է Պօղոս առաքեալը իր պատմութեան համարձակ փիլիսոփայութեան մէջ (Գործ. IV), որ հանգամանօրէն մշակել էին յետագայ մատենագիրները։ Երկար ժամանակ մարդկութիւնը անհասկանալի ծէսերի ու աստուածների ծառայութեան յետոյ, որոնք աստուած չէին՝ նախ գալիս է այն շրջանը, երբ մարդիկ լսանում են, որ ճշմարիտ Աստուածը գոնէում է ոչ միայն իրանցից դուրսը, այլ և իրանց սեփական սրտերում, իսկ յետոյ՝ այն շրջանը, երբ նրանք գալիս են այն եզրակացութեան, թէ ճշմարիտ Աստուածը բոլոր մարդերի համար մէկն է միայն, որ նրանք ամենքը մէկ հօր որդիք են։ Բայց այն ժամանակը, երբ մենք որոշում ենք մարդկային ոգու այս հանուր շարժումները՝ ժողովուրդների միջ, ծաւանութիւնը դեռ ևս շարունակ զարգանում է։ Ի՛նչպէս ամէն ազգութիւն մշակում է իր սեփական արուեստը, իր սեփական գրականութիւնը, իր սեփական օրէնսդրութիւնը՝ այնպէս էլ ամէն ազգութիւն կարիք է զգում կատարելագործելու իր սեփական կրօնը։ Մինչ անգամ միեղերական հաւատի եղ-

բևան գալուց յետոյ էլ՝ կրօնը չէ դադարում ազգայնական գործ լինելուց։ Ամէն ժողովուրդ իր կնիքն է դնում համաշխարհային կրօնի վրայ, որ ընդունել է մի յայտնի ձևով, շրջանակ պահպանելով անցեալի ծէսերն ու աւանդութիւնները և արտայայտելով նրա մէջ իր ազգային բնոյթն ու իր ձգտումները։ Ամէն ազգութիւն, ինչպէս և ամէն ուրոյն անձնաւորութիւն պէտք է ունենայ իր սեփական կրօնը. որ բղխում է իր բնաւորութիւնից ու իր անցեալից և որ չատ կէտերում չի կարող փոխանցվել ուրիշների։ Երկու ազգութիւն երբէք չէին կարող փոխանակել իրանց կրօնները։

Բայց միւս կողմից՝ ամէն ազգութեան մէջ էլ մենք կրօնի այնպիսի ձևեր ենք գտնում, որոնք տարբերվում են միմեանցից ոչ պակաս, քան ինչպէս որ տարբերվում են միմեանցից երկու ուրոյն ազգութեան կրօններ։ Ասված է, որ երբէք չեն կարող անհետանալ սրպիսի և է կրօնական հաւատալիքներ կամ սովորոյթներ, որոնք մի ժամանակ գոյութիւն են ունեցել, և սրա ապացոյցը կարելի է տեսնել բոլոր ժողովուրդների մէջ։ Մինչ անգամ այն կրօնի երևան գալուց յետոյ, որի գլխաւոր կենտրոնը սիրտն ու հոգին են՝ շարունակ գոյութիւն ունեն բարեպաշտութեան աւելի էլ կոշտ ձևեր, և ժամանակ առ ժամանակ մինչ անգամ սուր կերպով յայտ են տալիս իրանց։ Եթէ գոյութիւն ունեն այնպիսի պահարզներ, որոնց համար դեռ ևս պատերազմ է շարունակվում նրանց հաշտութիւնների դէմ, ապա ոչ մի վսեմ կրօն չի կարող մատչելի լինել նրանց, ինչպէս և վայրենի ցեղերին։ Քանի որ նրանց կեանքի պայմանները հնարաւոր չեն կացուցանում աւելի բարձր ընդունակութիւնների զարգացումը՝ նրանց կրօնը չի կարող լաւ մտածված ու մշակված կրօն լինել, այլ պէտք է շօշափելի բաներ կամ մօտաւոր վտանգներից փրկվել խոստացող մի հաւատ լինի։ Մի փոքր աւելի բարձր աստիճանի վրայ է գտնվում նրանց դասակարգը, որոնք, մասամբ նոյն ազգի կարիքի դէմ պա-

աներազմ մղելուց՝ դեռ ևս լիովին չէին գիտակցում իրանց իրական մասնաց ու հոգևոր էակներ, և որոնց համար կրօնի բարերարութիւնները դեռ ևս ամուլի արտաքին կեանքի մէջ են գտնում, քան ներքին։ Եթէ այսպիսով հասկացվում են կրօնի բարիքները, ապա կրօնական կեանքի յայտնութիւնները մեքենական յատկութիւն պէտք է ունենան։ Այստեղից առաջ է գալիս այն, որ ծէսերի ամենաառեսակ սիսեմները ոգորմութեան աջակցութեան պէտքն են զգում, որպէս զի երկրպագուն միանայ իրանից ժամանակով կամ առաջանալիքեան հետացած բարիքների ապրիւրին և այդ բարիքները ասես լինուրիչ աշխարհից ձեռք բերի։

Մի այսպիսի խառը համոյնքի մէջ կրօնի յաջորդ զարգացումը պէտք է ժողովուրդների առանձնաւորաբար կրթվելուց ու բարձրանալուց կախված լինի։ Ինչքան հետզհետէ ամուլի մեծ լուսով մարդիկ են ազատվում ծանր կարիքներից ու հոգսերից և ապա սուր ու նիւթապաշտական հայեացքներից՝ այնքան նրանց հոգևոր բնոյթը պարզվում ու բացվում է։ Իրան Աստծու, և ոչ թէ լոկ նրա շնորհների պահանջը առաջ է գալիս ու առանձնանում նրանց սրտերում, և նրանք ընդունակ են դառնում այն բարձրագոյն կրօնի համար, որ կարող է կոչվել Աստծու հետ միասին անցկացնելու հոգու կեանք, նրանք սկսում են զգալ այս կեանքի հրապոյրը և գտնել իրանց հոգևոր ծարաւը նրանում պարունակված գոհութեան ու խաղաղութեան խոր ակրիւրներից։

Այս ճշմարիտ կրօնը ձեռք բերելու համար մարդկութիւնը դեռ երկար ճանապարհ է անցնելու և հանդիպելու շատ փորձութիւնների։ Շատ տաճարներ են կառուցվել ու կործանվել մինչև մարդիկ հասել են հոգու այն տաճարին, որի մէջ ամէն մարդ գտնում է անձնատուր իրան անհրաժեշտ, և որի մէջ այս պատճառով կարող է միանալ ամբողջ մարդկութիւնը։ Մինչ անգամ այն ժամանակից, երբ մարդիկ հասկացան այս բարձրագոյն կրօնը՝ նա յաճախ մթագնում ու կորչում էր, և յաճախ նրա իրաւունքները պաշտպանելու և նրան պատկանող տեղը պահպանելու համար՝ պատերազմ էր պահանջվում։ Բայց սրբազան փորձառութիւնները կուտակվում են, այնքան աշխարհը ամուլի է համոզվում, որ այն ամենաբարձր ու ամենաճշմարիտ կրօնը, որ երբ և է բարոզվել է մեր աշխարհում՝ հանդիսանում է ամենապարզ ու ամենապատկառելի կրօնը, և որ մարդկութեան ապագան ամփոփված է այն բանի մէջ, որ քրիստոնէութիւնը պաշտպանվի իր այն ձևով, ինչ ձևով որ առաջին անգամը բարոզվել է, այլ և որ նա գործադրվի կեանքի մէջ։ Այս եղրակացութեանը համաձայնողների համար համաշխարհային կրօնի պատմութիւնը, որ լի է մեր նկատած մոլորութիւններով ու սխալ անաջողութիւններով՝ չի կարող լինել առանձին աշխարհում տեղի ունեցած մի պատարի ու աննպատակ ուղեկցութիւն։ Առանց Աստծու հրաւէրի ու առանց Աստծու առաջնորդութեան չէր, որ մարդը այնպէս կանուխ էր դուրս եկել՝ Աստուած գտնելու և այնպէս հատուած էր գնում այդ ճանապարհորդը, ուշ չդարձնելով իր բոլոր հիասթափումներին։

ՎԵՐՋ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Սխալ	Ուղիղ
7	մէթօտը	մէթօդը
10	ծէնները	ծէները
12	տեսակէտի	տեսակէտը
»	մարդասիրութիւնը	հարցասիրութիւնը
15	խնդուած	խնդրված
16	տարբերութիւնները	տարբերութիւնները
18	ծագուտը	ծագումը
22	պաշտպանում	պահպանում
23	առաուո	առաւօտ
25	կայարութեան	կայութեան
»	որոնց	որոնց
26	մի, փորձ,	մի փորձ, որով
»	ո	ձ
»	փոխարկվիլ	չեվարկվել
27	ուղեորների	ուղեորների
»	կօնը	կրօնը
28	հակասութիւն	հակասութիւն
»	կատարել	կատարել
»	գաւառում	գաւառում
29	եւ էլ	եւ նոյն
30	Գերլանդի	Գերլանդի
»	օտարօտի են թրվում	օտարոտի է թրվում
32	Ութվիլ	Ութվիլ
»	Վեստէնների	Նոյէնների
»	նոյէնների	մարդու
33	մանդու	մարտ
35	մարդը	իրան են գերադանցում
37	իրան գերազանցում	երեսկայութիւնը
»	երեսկայութեանը	գաբի
38	տաբի	Կօնա
»	Կօնա	կարող է իջնել
41	կարող իջնել	Հէնց
42	Հէնց	նկրտացրել է
46	նկրտացել է	տեսութիւնները
»	տեսութիւնները	թէօրիա
47	թէօրիա	

Էջ	Սխալ	Ուղիղ
48	ունենալ	ունեցեալ
»	unuerbe	unuerbe
49	տատրկութիւններից	տատրկանիներից
»	Կում է	Կում է
51	դղայման	դղայման
»	դղայական	դղայական
52	կեատրներ	կենտրներ
53	չի կարելի կատաման	չի կարելի լսել կատաման
57	գնալ ու նրանց	գնալ նրանց
59	երեսիքի սը տեա	երեսիքի տեա
»	մատատակերն	մատատակերնեն
64	տօտալտօտների	տօտալիտօտների
65	ֆէքտաները	ֆէքտաները
66	Մանտատ	Մանտատ
»	տարեր ուժեր	ուժեր
67	տրձաններ	տրձաններ
71	երանկլինների	երանկլինների
73	ընդունակութիւնէ	ընդունակութիւն,
74	պարզ լինի հին	պարզ լինի էլ
76	ննիմատվում է	ննիմատվում է
77	լինի	լիննն
78	Иаада	Иаада
79	արտայայտում էր	արտայայտվում էր
80	մադատէր	մարդատէր
81	են ունենում	է ունենում
82	վայերը	վայրերը
»	Պօլինէզիա	Պօլինեզիա
»	կուշվում է	կուշվում են
85	վերագրում է	վերագրում են
89	լուտուր,	լուտուր
91	սիֆիլիսատիօննների	կլասֆիլիսատիօննների
93	խոստացող	խոստացող
95	նրանից	նրանցից
»	տրման	տրման
»		
97	ցեղական խոյլ և նպատակների	ցեղական, այլ և հպատակների

97	հարցնում է	դարձնում է
98	անցորդ	անյայտ
100	նրանց, արիւնով	նրանց արիւնով
»	յայտարարիչ են	յայտարարելին
101	հնարաւոր է նոր	հնարաւոր է, որ նոր
102	բերինք	բերինք
105	կրօնը	կրօն
109	յայնի	յայտնի
111	տարերին	տարբերին
117	ուղիղ	ապեղ
119	Նրանից	Նրանից
120	չրարձրացան	չրարձրացաւ
121	այլատերուել է	այլատերվել է
124	հեղինակ	հեղինակի
»	Ին-կլինդ	Ին-Կլինդ
»	արված	արված
127	նրկիր	նրկրի
128	մէջ է,	մէջ է,
»	չյարմաւէլին	չյարմարվէլին
»	տեսակին	տեսակի
»	տատատածունն է,	տատատածութիւնն է,
131	միանալ	իմանալ
132	անիմատատական	անիմատատական
134	տատատպանք	տատատպանքի
139	կարդատորութիւն է,	կարգատարութիւն է,
»	ատում է	ատում է
140	տաղիտով	տաօյիտով
»	ժամանակակից	ժամանակակցի
141	հայեացքով	հայեացք
»	հատուտա	հարատա
»	իրանց	իրանց
142	այն տատանձին	տատանձին
146	հնդկան	հնդկան
147	Այս՝ ոչ աշխատ-	Այո՝ ոչ աշխատ-
	հր	հի
150	չրջուտին	չրջանին
151	Բրիտանի	Բրիտանիայում
»	փիկուրները	փիդուրները
152	գարձնալ	գարձնալ
»	ու հերոց նկատվում	ու նկատվում
153	Պերատում	Պլրատում

153	Այսէս չունը	Այսպէս, չունը
155	Գիօգօրայի	Գիօգօրայի
156	կուլտից	կուլտից
»	ակդերագրիայի	գէգրադացիայի
161	բեմ է	բեմ է
162	Տարդիկ	մարտիկ
»	Գարօր	Գաթօր
163	Ամբուատով	«Ամ-Դուատ»ով
164	տուալիսմ	դուալիսմ
»	ակրուիեամբ	գերբուիեամբ
169	Խէպատան	Խէպատան
»	որ առաջ	առաջ
»	չեզվից	չեզվից
171	Չերմնատնդու-	Չերմնատնդու-
	թեան	թեամբ
176	3. Անդրգեներա-	III. Անդրգեներա-
	նային	մանային
178	new-spang-	new-spang-
	ledore	led ore
»	forelead	forchead
	sholl	slall
179	կածանէ	կածան է
»		
180	բանակատութիւն-	բատակատութիւն-
	նի բով	ներով
183	Ապագայ այս վար-	Ապագայ կեանքի
	դապետութիւնը	այս վարդապե-
		տութիւնը
»	հօբօսնիալները	հօբօսկօպները
184	ունեն	ունի
»	Նեկայացնում	Նեկայանում
»	որի ծագկելը	որոնց չաղկելը
185	առորաժանման	առորաժանման
187	Նեկայացնում	Նեկայանում
188	Վէլհաուզենի	Վէլլհաուզենի
189	(կլինէա)	(կլինէա)
190	«Ատան՝»	«Ադոն՝»
»	«Ատատած»	«ատատած՝»
191	առինեքով	ոդինեքով
»	Ճայքինի	Ճայքինի
192	ածների	ծէսերի
195	Հակում է	Համակում է
»	աէմիոնի մի յա-	աէմիոնների յա-
	տուկ	տուկ

195	է արհամարհվում	է պատճառվում
»	չէ փոխվում	չէ փոփոխվում
198	(зассеба)	(зассеба)
201	պատկերացնում է	պատկերացվում է
»	բարոյական	անբարոյական
»	Ահաէմիտա	Ահաէմիտա
206	(բրօնձի)	(բրօնզի)
207	նոտագայ	յետագայ
212	ախայն	մխաին
214	բարբարոսու-	բարբարոսութիւ-
	թիւններից	նից
216	առին	առին
»	վերապահված	վերապահված.
219	մի է	մի պէտք է
»	միմիայն	միայն
»	մխամայն	միմիայն
220	եհովային	եհովայինն
»	կուլտին	կուլտին.
222	գործերի	գործերին
223	շաաները	շահները
229	յարգանքով,	յարգանքով
»	բնութեան	բնութիւն
231	կուլտը	կուլտերը
»	անխմանալի մաքի	անխմանալի ա-
		մաքի
233	աշխատցվի	աշխատցվի
235	խվելով	խելով
244	նա այդ	նա, այդ
245	գծեր	գծեր
248	և կանքի	և ապագայ կեան-
		քին
249	չվերածեց	չվերածվեց
»	յանկարծակա-	յանկարծակի-
	թեամբ	ութեամբ
251	նորութիներ	նորոյթներ
»	կեանքը,	կեանքը.
»	կեանքի	կեանքին
»	այն ձեր	այս ձեր
252	ունին	ունի
254	այն համաոա	այս համաոա
257	«անուանութեան	«անուանութե-
		թեան
261	հետաքր՝	հետաքր.
»	ապաւորվել	ապաւորվող

274	բնգում է	բնդունում է
282	միմանի	միմեանց,
284	այլ այն թէ	այլ միայն թէ
»	Արալեան	Արալեան
291	բնաանեկութեան	բնաանեկանու-
		թեան
296	ցոյացումն է	ցոյացումն է
300	Փայլած ունին	Փայլածուին
»	նրանց	նրան
»	արատայայտու-	արտայայտութիւ-
	թիւնը	նը
302	ֆէբա	ֆէբա
304	երկրի	երկի
311	մարդիկների	մարդկների
»	լինելու պիշեր	լինելու, պիշեր
312	նօրների	նօրների
»	էին	են
313	վայրի	վայրերի
314	պատկերացնում)	պատկերացնում
315	վերաբ	վերաբ
318	որսվհեան նրանց	որսվհեան մեղքն
	անկց մեղքն	
320	խոյ	խոյ
323	այդիների	այդիների,
324	հովանաորվել	հովանաորվել
»	համատատասխան	համապատասխան
326	ներկայացնում	ներկայանում
332	և երբ	և
333	Քէօթենան	Քէօթենան
336	Խոսլիայում	Խալանդիայում
337	բաժնված	բաժանված
340	էրխանների	էրխնիանների
341	նրանից այդ	նրանից, այդ
342	մէլլինները	սէլլինները
347	բանձ	բաձր
»	բանդակագործու-	քանդակագործու-
	թիւնն	թեան
353	հաղորդակցու-	հաղորդակցու-
	թիւնը	թեանը
»	արտահշտակու-	արտահնտակա-
	թիւնը	նութիւնը
355	նշանաւոր և	նշանաւոր է
370	Ցնծրխ	Ցանսրի
372	վհատականները	վհատակականները

379	կապիտօլիանից	կապիտօլիանից
381	երևոյթի	երևոյթի
383	տայ տեղ	տայ այստեղ
»	religiolicita	religio licita
388	Բայց	Բայց
389	բնութիւնը	բնութիւնը
»	մարդը	մարդ
391	ինչպէս	քնպէս
394	չչուշով	չչունչով
»	անուններ	անուններ
399	պատմուածքնների	պատմուածքնե-
	չէ վերաբերում	րից մի քանիսը
		չէ չօշափում
400	կրկնում	կրկնվում
405	կամ	կամ այս
»	ծէսը	ծէսը
408	յարգում	յարգվում
409	սօմսի	սօմս
413	գոյութիւնը միայն	գոյութիւնը
		միայն)
414	մանուններին	մանկերին
417	«Ուսանչէտա-	«Ուսանչէտա-
	ններ»	նները»
»	գրութիւններին	գրութիւններն
418	բացատական	բացատական
420	բացատական	բացատական
»	աշնչացնում է	աշնչացնում է
	յանկութիւնը	յանկութիւնը և
421	օրէնքի	օրէնքից
423	մանրամասնու-	մարմնաութեան
	թեան	
»	այսպիսի	այնպիսի
436	Iniё	Indiё
429	յաթված	յաղթված
431	Դևադատատա	Դէվադատատա
435	(canniaciенъ)	(canniacинъ)
»	կանոնների	կանոնները
436	Սամգիային	Սամգիայինն
439	կրօնի,	կրօնի
441	ոգրաց	ոգրաւ,
442	տեսակներ	դիակներ
445	Խոզ գատարկ	Խոզ գոտարկ
457	էակ, որ և է	էակ, որ որ և է
458	արձակվում	արձակվում է

460	կոմպէտէ	կոմպէտէնտ
462	(գիրքը) նա	վէնդիդադը
»	վէնդիդադը	այն է՝
463	որ է՝	Քրիստոսի
»	Քրիստոսի	Geschichte
»	Geshichet	տարածելու
464	տարածվելու	գտաուորել
465	գտաուորել	էր համարում
»	է համարում	Ջոնաթերութիւն-
	Ջոնաթերութիւն-	ները, որոնց
	ներ, որի	բառերի
466	բառերի	անանում, առիթ,
»	անանում,	բնական
467	բնական	հակադրութեան
»	հակադրութեան	հասկացվել
468	հասկացնել	բացակայութի-
470	բացակայութի-	նից
	նից	ամէչօսպէնդներ
»	ամէչօսպէնդներ	գործունէութեամբ՝
473	գործունէութեան՝	
474	կերպանաորված	կերպարանաոր-
		ված
»	հատերում	հատերում
477	«անմահների	«անմահների»
479	ընդունելով.	ընդունելով, որ
480	(այս անունի	(այս անունը
481	եանանեերում	եանանեերում
482	Սպէնդարմա	Սպէնդարմատ
484	պայքակցնող-	պայքակցնող-
	ուղներ	ներ
485	պատանել	պատահել
»	վիրաորվում	վիրաորում
»	էպօխի	էպօխի
488	և կրկ	և կրկ
497	характеристокъ	характеристика
»	մանել	մանելու
»	ապրել	ապրելու
498	ընդուած	ընդունված
499	նրանգով	նրանով
500	մարգերին,	մարդկերին
501	մկրանիմբ	մկրանիմբ
505	ծիսական տպաւո-	պատաուական
	րութիւններ	ծէսեր

505.	տրվում	դրվում.	515.	ունի հատուած	ունի է հատուած
506.	համաձայնելու	համաձայնեցնելու	517.	չանունակ	չարունակ
508.	հնչռնել	լսրռնել		բնականու-	բռնականու-
510.	ար	ուր		թեան	թեան
516.	գուլպի ճշմարիտ	կուլպից ճշմարիտ	522.	գանում	գանում

ՀԱՅԿ-ՍՈՓ.

Թարգմանողի ղրաստր վաստակները

Ը.) ԳԸՍԸԳԹՔԵԲԸ

1. ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒՑՆԵՐ, Ա. մասն—տրձակ. չորրորդ տիպ։ Գինը՝ 1 ռ.
2. ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒՑՆԵՐ, Բ. մասն—բանաստեղծութիւններ։ Գինը՝ . . . . . 1 ռ. 25 կոպ.
3. ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ. Գ. տարի, չորրորդ տիպ։ Գինը՝ 60 կ.
4. ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ. Գ. տարի, չորրորդ տիպ։ Գինը՝ 40 կ.
5. ՀԱՑՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ. Բ. տարի, երկրորդ տիպ։ Գինը՝ 35 կ.
6. ՀԱՄԱՌՕՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Ա. մասն—նախապատրաստութիւններ և Մաասունք բանի։ Գինը՝ . . . . . 20 կ.

Բ.) ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԿԵՐ

7. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ, գինը՝ . . . 8 կ.
8. ՀԱՐՀԱՐԱՆՔԻ ՀԱՐՔԸ. գինը՝ . . . . . 15 կ.
9. ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, ա. գրքոյկ. գինը՝ . . . . . 15 կ.
10. ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, բ. գրքոյկ, երկրորդ տիպ, գինը՝ . 15 կ.
11. ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, գ. գրքոյկ, գինը՝ . . . . . 20 կ.
12. ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐ, դ. գրքոյկ, գինը՝ . . . . . 20 կ.

Գ.) ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

13. ԿՐՕՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, գինը՝ . . . . 1 ռ. 25 կ.
14. ԵՐԿՈՒ ՏՕՆԱՆԱՒ, գինը՝ . . . . . 20 կ.
15. ՊՕԼՈՒԻՄՊԻՐԻԱՆ, գինը՝ . . . . . 20 կ.

Դ.) ՄԻՒՍ ԵՐԿԵՐ

16. ՀԱՑՈՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, գինը՝ . . . . . 50 կ.
17. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ, գինը՝ . . . . . 50 կ.
18. ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, I հատոր, գինը՝ . . . . . 50 կ.
19. ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, II հատոր, գինը՝ . . . . . 50 կ.
20. ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, III հատոր, գինը՝ . . . . . 50 կ.
21. ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ (երեխաների համար) գինը՝ . . . 50 կ.
22. ՕՐԱՑՈՑՑ 1894 թ., է.-րդ տարի, գինը՝ . . . . 20 կ.

ԿԱՐԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

«ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ» (կամ Բլթլհէմից մինչև Զիթենեաց լեռը) խորագրով ռուսերէնից թարգմանած մի ձեռագիր ունէի։ Ռուս թարգմանութիւնը արված է գնդման բնագրից, որի հեղինակն է Բիբլիի աստուածաբանութեան պրօֆ. Ֆիաէ։ Այդ թարգմանութիւնս, որը ամփոփված է 13 տետրի մէջ և բաղկացած 1685 երեսից, 1895 թ. ուղարկել էի Ս. Էջմիածին, որտեղ նա հիմա կորած է համարվում։

Յայտնելով սրա մասին ամենքին, խնդրում եմ, ում ձեռքին պատահում է այդ թարգմանութիւնս, նեղութիւն կրի ուղարկելու ինձ։

Հասցէս՝ MOCKBA, Свящ. Э. Назарьянцъ.

40n

ՀՀ Ազգային գրադարան
NL0145911